ՍՏԵՆԴԱԼ

ՆԱՊՈԼԵՈՆ

8(092)
Ս-88

ՍՏԵՆԴԱԼ

ՆԱՊՈԼԵՈՆ

2186

N

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1985

ԳԱԴ 84.4 ֆր
Ս 883

Ռուսերենից թարգմանեց
ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Ստենդալ.
Ս 883 Նապոլեոն (Ռուս. թարգմանեց Ա. Սարգսյանը)— Եր.։ Հայաստան, 1985— 472 էջ, 10 թ. նկ.։

Նապոլեոն Բոնապարտին նվիրված ծով գրականության մեջ ուրույն տեղ ունեն Ստենդալի «Նապոլեոնի կյանքը» և «Հուշեր Նապոլեոնի մասին» ստեղծագործությունները։ Դրանք հատկապես նշանակալից են այն առումով, որ հեղինակը եղել է Նապոլեոնի ժամանակակիցը, ծառայել է նրա բանակում, մանակցել նրա արշավանքներին, ականատես եղել նրա վերելքին ու անկումին։

Թարգմանությունը կատարված է 1959 թ. «Պրավդա» հրատարակչության լույս ընծայած Ստենդալի երկերի ժողովածուի 15 հատորյակից։ Հավելվածը թարգմանված է գրողի երկերի ժողովածուի նախորդ հրատարակությունից, որ 1933—1950 թթ. լույս է ընծայել «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչությունը։

Թարգմանությունը համեմատված է ֆրանսերեն բնագրի հետ, որը հնարավորություն է տվել ճշտելու տառադարձություններն ու անվանումները, ինչպես նաև խուսափել փաստական առանձին անճշտություններից։

Ս $\frac{4703000000}{701(01)85}$ 84—85

Издательство «Правда», Москва. 1959

© Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1985

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԿՅԱՆՔԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Nam neque te regni summa ad fastigia vexit
Lucinae favor et nascendi inglorius ordo, Vivida
sed bello virtus tutataque ferro Libertas*.

Aldrich, 1669, 50, 497[1].

In-octavo երեք հարյուր էջանոց այս վարքագրությունը երկու կամ երեք հարյուր հեղինակների ստեղծագործություն է։ Խմբագիրը լոկ հավաքել է այն դարձվածները, որոնք նրան հավաստի են թվացել։

Քանի որ ամեն ոք որոշակի կարծիք ունի Նապոլեոնի մասին, այս վարքագրությունը ոչ ոքի չի կարողանա լիովին գոհացնել։ Հավասարապես դժվար է բավարարել ընթերցողներին, երբ գրում ես կա՛մ նվազ հետաքրքիր, կա՛մ էլ խիստ հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին։

Ամեն մի գալիք տարի մեզ կհարստացնի նոր տեղեկություններով։ Կմեռնեն անվանի մարդիկ, կհրատարակվեն նրանց հուշագրությունները։ Այս գիրքն այն ամենի շարադրանքն է, ինչ մեզ հայտնի է առ 1-ը փետրվարի 1818 թվականի։

Հիսուն տարի անց, Ֆուշեի*, Լյուսիենի*, Ռեալի*, Ռենֆաջի*, Կոլենկուրի, Սիեյեսի*, Լեբրենի* և շատ ու շատ ուրիշների հուշագրությունների լույս տեսնելուն զուգընթաց, հարկ կլինի ամեն տարի նորովի գրել Նապոլեոնի պատմությունը։

1 Քանզի պետությունում քեզ բարձրագույն և հաստատ իշխանության է հասցրել ոչ թե Լուցինեսի բարեհաճությունը (և ծնունդն էլ քո անփառունակ է), այլ պատերազմում գործած կենդանի սխրանքը և երկաթով պաշտպանած ազատությունը։

Օլդրիչ, 1669, 50, 497 (լատ.)։

ԳԼՈՒԽ I

Quelle partie du monde habitable n'a pas oui
les victoires de ce grand homme et les merveilles
de sa vie? On les raconte partout; le Français qui
les vante n'apprend rien à l'étranger et quoi que je
puisse aujourd'hui vous en rapporter, toujours
prévenu par vos pensées, j'aurai encore à repondre
au secret reproche d'être demeuré beaucoup en
dessous.

Bossuet: Oraison funèbre du prince de Condé[1].

Ես գրում եմ Նապոլեոնի պատմությունը՝ ի պատասխան պարսավագրի*։ Անխոհե՜մ մի ձեռնարկ, քանի որ այդ պարսավագիրը գրված է մեր դարի ամենատաղանդավոր գրչով և ուղղված է մի մարդու դեմ, որն արդեն չորս տարի է, ինչ ենթարկվում է աշխարհի բոլոր տերությունների վրեժխնդրությանը։ Ես կաշկանդված եմ իմ մտքերն արտահայտելու մեջ, զուրկ տաղանդից, իսկ իմ ազնվազարմ հակառակորդն օգտվում է ուղղիչ ոստիկանության բոլոր դատարանների պաշտպանությունից։ Ի լրումն դրա, բացի ինդացող փառքից, այդ հակառակորդը մեծ կարողության տեր էր, քաջ հայտնի էր եվրոպական սալոններում և վայելում էր բարձրաշխարհիկ հասարակության բոլոր արտոնությունները։ Նա մեծարել է նույնիսկ անհայտ մարդկանց, և նրա հետմահու փառքը, անկասկած, կոգեշնչի բոլոր այն վեհանձն գրողներին, որոնք միշտ պատրաստ են կարեկցելու իշխանության դժբախտությանը, ինչպիսին էլ լինի այդ իշխանության էությունը։ Ներքոհիշյալ ակնարկը պատմություն չէ բառիս բուն իմաստով. դա պատմու-

1 Մարդարնակ աշխարհի ո՞ր մասում չեն լսել այս մեծ մարդու հաղթանակների ու նրա զարմանահրաշ սխրանքների մասին։ Դրանց մասին պատմում են ամենուր. դրանք փառաբանող ֆրանսիացին ոչ մի նոր բան չի հաղորդում օտարերկրացուն, և ինչ էլ որ ասեմ այսօր դրանց մասին՝ միշտ կանխելով ձեր մտքերը, ես դեռ պետք է որ ընդունեմ ձեր թաքուն կշտամբանքն այն առթիվ, որ ամենևին էլ չեմ հասել իսկության։

Բոսսյուե. Արքայազն Կոնդեի դամբանականը։

թյուն է ժամանակակիցների, իրադարձությունների ականատեսների համար։

Նապոլեոնը ծնվել է 1769 թվականի օգոստոսի 15-ին Այաչչոյում, Կառլ Բոնապարտեի և Լեթիցիա Ռամոլինիի ընտանիքում։ Հայրը, ամենևին ոչ ապաշնորհ մի մարդ, ծառայել է Պաոլիի* հրամանատարության ներքո, իսկ երբ Ֆրանսիան նվաճեց Կորսիկա կղզին, մի քանի անգամ դեպուտատ ընտրվեց ազնվականության կողմից։ Այս գերդաստանը ծագումով Տոսկանայից էր, ավելի ճիշտ՝ Սան-Մինյատո փոքրիկ քաղաքից, որտեղ ապրում էր մի քանի դար շարունակ։ Պատմաբան Մաձուկելլին հիշատակում է այդ գերդաստանի մի քանի անդամների, որոնք իրենց անունն են թողել գրականության մեջ։ 1796 թվականին Սան-Մինյատոյում դեռևս ապրում էր այս տոհմի ներկայացուցիչը. նա ս. Ստեֆանի շքանշանի ասպետ էր, հարուստ և շատ հարգելի մի մարդ, որը պարծենում էր Իտալիան նվաճած պատանի զորավարի հետ ունեցած իր ազգակցությամբ։ Երբ Նապոլեոնն ամենազոր էր, շողոքորթները փնտրեցին ու գտան կամ թխեցին փաստաթղթեր, որոնք ապացուցում էին, որ նա սերում է միջնադարում Տրեվիզոյում տիրող բոնակալներից, մի պնդում, որն, ամենայն հավանականությամբ, նույնքան քիչ է հիմնավոր, որքան և ներքնախավերից նրա սերած լինելուն հետամուտ վտարանդիների վարկածները։ Նրա ավագ քույրը դաստիարակվել է Սեն-Սիրում*։ Հենց միայն դա ապացուցում է, որ Բոնապարտները պատկանել են հին ազնվականությանը։

Նապոլեոն անունը շատ տարածված է Իտալիայում. դա Օրսինի գերդաստանում ընդունված անուններից է. Բոնապարտների մեջ այն սկսեց հանդիպել այն բանից հետո, երբ նրանք XVI դարում ազգակցական կապեր հաստատեցին Լոմելլինի[1] գերդաստանի հետ։

1 Սանսովինոյի հեղինակած՝ Օրսինի տոհմի պատմության հետևյալ քաղվածքը կարող է հեաաքրքրել ընթերցողին.

„Ma molti piú furono i Napoleoni, perche in tutti i tempi gli orechi italiani, o nella pace, o nella guerra udirono questa nobilissima voce in uomini segnalati". Lib. II, p. 202.

2 Բայց անհամեմատ ավելի շատ Նապոլեոններ են եղել, քանի որ բոլոր ժամանակներում իտալացիների ականջները՝ թե՛ խաղաղ ժամանակ, թե՛ պատերազմի ժամանակ, այդ ազնվազուն անունը լսել են ականավոր մարդկանց անունների մեջ։ Գիրք II, էջ 20 (իտալ.)։

Կորսիկայի կառավարիչ կոմս դը Մարբյոֆը տիկին Լեթիցիա Բոնապարտեի երկրպագուներից էր. նրա միջնորդությամբ Նապոլեոնին ընդունեցին Բրիենի կոլեջը։ Նա այնտեղ մնաց շատ ջահել հասակում։ Աչքի ընկնելով մաթեմատիկական ընդունակություններով և արտակարգ ընթերցասիրությամբ, նա, սակայն, դաստիարակներին ջղայնացնում էր սովորական մեթոդով լատիներենը սովորելու իր համառ չկամությամբ։ Նրան լատիներեն ոտանավորներ և քերականության հիմունքներ սերտել տալու բոլոր փորձերն ապարդյուն էին անցնում. նա շարունակ հրաժարվում էր շարադրություն գրելուց ու լատիներեն խոսելուց։ Ի պատիժ այդ կամակորության՝ նրան ստիպեցին մեկ թե երկու տարի ավելի նստել կոլեջում։ Այդ տարիները նա մենության, մռայլ լռության մեջ է անցկացրել. երբեք չէր մասնակցում ընկերների խաղերին, երբեք չէր խոսում նրանց հետ։ Երազկոտ, լռակյաց, ինքնամփոփ՝ նա ընկերների շրջապատում հայտնի էր հին ժամանակների մեծ մարդկանց շարժուձևերը և նույնիսկ ճառերը նմանակելու իր կրքով։ Մասնավորապես, աշխատում էր իր մտքերին լակեդեմոնացիների նման հակիրճ ու խրատական ձև տալ։ Եվրոպայի համար դժբախտություն եղավ այն հանգամանքը, որ Նապոլեոնը դաստիարակվեց թագավորական կոլեջում, այլ կերպ ասած՝ այն դպրոցում, որտեղ հոգևոր անձինք սովորաբար երիտասարդությանը կրթություն են տալիս սուբյեկտական ոգով, մի կրթություն, որը, ընդսմին, միշտ հիսուն տարով ետ էր մնում դարից։ Եթե նա դաստիարակվեր կառավարության տնօրինության տակ չգտնվող ուսումնական հաստատությունում, թերևս, ուսումնասիրեր Ցումին ու Մոնտեսքիոյին*, թերևս, հասկանար, թե կառավարությանն ինչպիսի ուժ է տալիս հասարակական կարծիքը։

Նապոլեոնն ընդունվեց ռազմական դպրոց։ Այն տարիների լրագրերը հաղորդում էին, որ Մարսյան դաշտում, Բլանշարի* առաջին թռիչքներից մեկի ժամանակ, ինչ-որ մի երիտասարդ, ռազմական դպրոցի սան, ամեն կերպ փորձել է մտնել օդապարիկի զամբյուղը. դա եղել է Բոնապարտը։

Մինչև հիմա Նապոլեոնի այդ շրջանի կյանքին վերաբերող շատ քիչ դեպքեր են հայտնի մեզ։ Մի անգամ, երբ խոսակցություն է եղել Տյուրենի մասին, ինչ-որ տիկին ասել է. «Աչնուա-

մենայնիվ ինձ հաճելի կլիներ, եթե նա հրի չմատներ Պֆալցի մարզը»։ «Ի՞նչ մի կարևոր բան է,— կրքոտ առարկել էր Նապոլեոնը,— եթե դա անհրաժեշտ է եղել նրա մտահղացումների համար»։ Այդ ժամանակ Նապոլեոնն ընդամենը տասնչորս տարեկան էր։

1785 թվականին նա քննություն հանձնեց հրետազորում ընդունվելու համար։ Երեսունվեց սպայական թափուր տեղերից տասներկուերորդը բաժին ընկավ նրան։ Նա նշանակվեց Լա-Ֆերում տեղավորված գնդի ենթալեյտենանտ։ Դասատուների գնահատականների ցուցակում նրա անվան դիմաց գրված է. «Բնավորությամբ ու ազգությամբ կորսիկացի այս երիտասարդը հեռուն կգնա, եթե հանգամանքները դրան նպաստեն»։

Նույն թվականին Նապոլեոնը զրկվեց հորից, որը մահացել էր Մոնպելիեում։ Այդ կորուստը որոշ չափով փոխհատուցվեց այն գորովալից մտերմությամբ, որ նրա հանդեպ տածում էր նրա պապեղբայր, Այաչչոյի ավագերեց Լյուսիենը։ Այդ հարգարժան ծերունու մեջ մարդկանց խոր ճանաչողությունը զուգակցվում էր բացառիկ բարության հետ։ Ասում են, որ նա առաջինն է նկատել իր եղբոր թոռան արտակարգ ընդունակությունները և վաղօրոք կանխագուշակել պատանու ապագա փառքը։

Ինչպես պատմում են, Նապոլեոնը ծառայության առաջին տարիներին իր ժամանակը բաշխում էր լեյտենանտի պարտականությունների և հարազատներին հաճախակի այցելություններ տալու միջև։ Նա գրեց Կորսիկայի պատմությունը և ուղարկեց Մարսել՝ արբա Ռեյնալին։ Նշանավոր պատմաբանը հավանություն տվեց երիտասարդ սպայի աշխատությանը և նրան խորհուրդ տվեց տպագրել այդ գիրքը՝ ավելացնելով, որ այն դարեր կպրի։ Պատմում են նաև, որ Նապոլեոնն իր աշխատությունը գրել է կառավարությանը հասցեագրված դեկուցագրի ձևով, ներկայացրել է ըստ պատկանելույն, և, ըստ երևույթին, այն անհետ կորել է* (1790)։

Սկսվեց հեղափոխությունը։ Սեն-Սիրի ինստիտուտը փակվեց։ Նապոլեոնը գնաց քրոջ հետևից, որպեսզի նրան տանի Կորսիկա. երբ Տուլոնում անցնում էին ծովափով, «Կորչե՛ն արիստոկրատները», «Կորչի՛ սև կոկարդը» բացականչություններով հետապնդող ամբոխը քիչ մնաց ծովը նետեր նրանց։ Կռահելով, որ հարգարժան հայրենասերները կոկարդի տեղ էին ընդունել իր քրոջ գլխարկի սև ժապավենը, Նապոլեոնը կանգ առավ, պոկեց ժապավենը և նետեց ծովը։ 1791 թվականին նա չորրորդ հրետանային գնդի շտաբսկապիտանի աստիճան ստացավ։ Նույն տարվա ձմռանը նորից այցելեց Կորսիկա, որտեղ կամավորների գունդ կազմավորեց. նրան թույլատրեցին գլխավորել այդ գունդը՝ մնալով ֆրանսիական ծառայության կապիտան։ Մի ընդհարման ժամանակ, որը տեղի ունեցավ նրա գնդի և Այաչչոյի ազգային գվարդիայի միջև, նա առիթ ունեցավ դրսևորելու ինչպես իր քաջությունը, այնպես էլ սառնասրտությունը։ Այդ ընդհարման ժամանակ մի քանի մարդ սպանվեց, և քաղաքում մեծ հուզում առաջացավ։ Ֆրանսիան պատերազմ հայտարարեց Սարդինիայի թագավորին։ Կորսիկայի և Սարդինիայի մեջև ընկած կղզիների գրավումով երիտասարդ կապիտանն առաջին անգամ ապացուցեց իր մարտական խիզախությունը։

ԳԼՈՒԽ II

Նապոլեոնը մտերմացավ նշանավոր Պաոլիի և Պոցցո դի Բորգոյի*՝ շնորհաշատ և շատ փառամոլ մի երիտասարդ կորսիկացու հետ։ Հետագայում նրանք մահու չափ ատեցին միմյանց։ Նապոլեոնի բարեկամների ասելով, նա, իբր, Պաոլիի արձակած հրամաններից կռահելով, որ ծերուկ գեներալը մտադիր է ապստամբել Ֆրանսիայի դեմ, հանդգնել է այնպես վճռականորեն առարկել այդ մտադրությանը, որ բանտարկվել է։ Նա փախել է, թաքնվել լեռներում. բայց այնտեղ հանդիպել է իրեն թշնամի կուսակցության համախոհ գյուղացիների, որոնք նրան տարել են Պոցցո դի Բորգոյի մոտ։ Վտանգավոր հակառակորդից ազատվելու համար սա որոշեց նրան հանձնել անգլիացիներին։ Եթե այդ հրամանը կատարվեր, Բոնապարտը, հավանաբար, ստիպված կլիներ բանտում անցկացնել իր երիտասարդության մի քանի տարիները, բայց գյուղացիները, որոնց հանձնարարված էր հսկել նրան, կարեկցանքից դրդված կամ էլ նրանից կաշառված լինելով, հնարավորություն տվեցին փախչելու։ Այս երկրորդ փախուստը տեղի ունեցավ գիշերը, հենց նույն օրվա նախօրյակին. երբ նրան պետք է հասցնեին ափի երկայնությամբ պարեկող անգլիական նավը։ Այս անգամ նրան հաջողվեց հասնել Կալվի քաղաքը։ Այստեղ նա գտավ ֆրանսիական երկու կոմիսարների, որոնց առջև բաց-

հայտնեց Պաոլիի ու Պոցցո դի Բորգոյի մտադրությունները։ Դրանից անմիջապես հետո նա թողեց Կորսիկան և ուղևորվեց Նիցցա, որտեղ գտնվում էր այն բանակը, որի կազմի մեջ էր մտնում իր գունդը։

ԳԼՈՒԽ III

Նրան հանձնարարվեց Սան-Ռեմոյի և Նիցցայի միջև գտնվող առափնյա մարտկոցների հսկողությունը։ Շուտով նրան ուղարկեցին Մարսել և մոտակա քաղաքները. նա բանակի համար հայթայթեց զանազան ռազմամթերքներ։ Նույնպիսի հանձնարարությամբ նրան ուղարկեցին Օքսոն, Լա-Ֆեր և Փարիզ։ Հարավային Ֆրանսիայում նրա ուղևորությունները համընկան 1793 թվականին դեպարտամենտների և Կոնվենտի միջև տեղի ունեցող քաղաքացիական պատերազմին։ Կառավարության դեմ ապստամբած քաղաքներից այդ նույն կառավարության զորքի համար ռազմամթերք ձեռք բերելն այնքան էլ հեշտ գործ չէր։ Նապոլեոնը կարողացավ գլուխ հանել դրանից՝ մե՛րթ հայրենասիրության կոչելով ապստամբներին, մե՛րթ հմտորեն օգտագործելով նրանց երկյուղները։ Ավինիոնում մի քանի ֆեդերատներ փորձեցին նրան համոզել միանալու իրենց։ Նա պատասխանեց. որ երբեք չի համաձայնվի մասնակցել քաղաքացիական պատերազմին։ Այն ժամանակահատվածում, որն իր վրա դրված խնդրի կատարման համար հարկ եղավ անցկացնել Ավինիոնում, նա առիթ ունեցավ համոզվելու երկու թշնամի կողմերի՝ ինչպես ռոյալիստների, այնպես էլ հանրապետականների գեներալների լիակատար ապաշնորհության մեջ։ Հայտնի է, որ Ավինիոնն անձնատուր եղավ Կարտոյին, որը վատ նկարչից դարձել էր է՛լ ավելի վատ գեներալ։ Երիտասարդ կապիտանը պամֆլետ գրեց, որտեղ ծաղրեց այդ պաշարման պատմությունը. այն վերնագրեց «Երեք զինվորականների նախաճաշը Ավինիոնում*» (1793)։

Փարիզից Իտալական բանակ վերադառնալուց հետո Նապոլեոնը հրաման ստացավ մասնակցելու Տուլոնի պաշարմանը։ Պաշարումը դարձյալ ղեկավարում էր Կարտոն՝ ծիծաղելի այդ գեներալը, որը բոլորին նայում էր իբրև ախոյանների և նույնքան ապաշնորհ էր, որքան և կամակոր։

Դյուգոմիեի* և որոշ օգնական ուժերի ժամանումով դրությունը

խիստ փոխվեց։ Իր զեկուցագրերից մեկում Կոնվենտի այս տաղանդավոր զորավարը գովասանքով է արտահայտվում քաղաքացի Բոնապարտեի[1] պաշարման հրետանու պետի մասին՝ գեներալ ՄՀարային* գերելու գործում ցուցաբերած խիզախության համար։

Տուլոնը գրավվեց, իսկ Բոնապարտին գումարտակի հրամանատարի աստիճան շնորհվեց։ Մի անգամ, դրանից անմիջապես հետո, նա իր եղբայր Լուիին ցույց էր տալիս պաշարողական կառույցները. նա եղբոր ուշադրությունը հրավիրեց այն տեղամասի վրա, որտեղ Կարտոն իր ապաշնորհ գրոհով հանրապետական բանակին նույնքան զգալի, որքան և անտեղի կորուստներ էր պատճառել։ Գետինը ռումբերից դեռ քարուքանդ էր. թարմ գերեզմանաթմբերի երկար շարքը վկայում էր այն մասին, թե ինչքան շատ դիակներ էին թաղված այստեղ. ամենուր, երթևեկությունը դժվարացնելով, թափված էին գլխարկների կտորտանքներ, համազգեստների ծվեններ, զենքի մնացորդներ և արկերի բեկորներ։ «Երիտասարդ,— ասաց Նապոլեոնը եղբորը,— նայեք սրան և հիշեք, որ զինվորականի համար իր արհեստի հիմնավոր ուսումնասիրությունը նույնչափ խղճի, որքան և ողջամտության գործ է։ Եթե այս քաջերին գրոհի ուղարկող սրիկան իմանար իր արհեստը, սրանցից շատերն այժմ ողջ կլինեին և կծառայեին հանրապետությանը։ Նրա տգիտության պատճառով սրանք ու հազարավոր ուրիշներ զոհվել են ծաղիկ հասակում և հենց այն պահին, երբ կարող էին փառք ու երջանկություն նվաճել»։

Նա այս խոսքերն արտասանեց հուզմունքով, գրեթե արցունքոտ աչքերով։ Տարօրինակ է, որ այս մարդը, որի մեջ բնականից այդպես ուժեղ էր մարդասիրության զգացումը, հետագայում իր մեջ մշակեց նվաճողի հոգեկան հատկություններ։

Բոնապարտը գումարտակի հրամանատար էր և Իտալիայում գործող զորքերի հրետանու պետ։ Նա այդ պաշտոնում իրականացրեց Օնելի պաշարումը (1794)։ Նա հրամանատար գեներալ Դյուգոմիեին ներկայացրեց Իտալիան նվաճելու պլանը. ճակատագրին հաճելի էր, որ ինքն իրականացներ այդ պլանը։

Նրան շնորհեցին բրիգադային գեներալի աստիճան, բայց

[1] «Moniteur» 7 դեկտեմբերի 1793 թ.։ Նապոլեոնի մասին եղած այս առաջին հիշատակության մեջ նա կոչվում է «քաղաքացի Բոնա-Պարտե»։

շուտով Իտալական բանակի մյուս գեներալները, որոնց գրգռում էր թե՛ նրա վարվելակերպը և թե՛ շնորհքը, Փարիզում հասան այն բանին, որ նրան ուղարկեցին Վանդեա։ Նապոլեոնն ատում էր քաղաքացիական պատերազմը, որտեղ եռանդի դրսևորումը միշտ նման է բարբարոսության։ Նա սլացավ Փարիզ. այնտեղ պարզվեց, որ նրան ոչ միայն մի բանակից մյուսն են փոխադրել, այլև հրետաձգորի փոխարեն նշանակել են հետևակում։ Ռազմական կոմիտեի նախագահ Օրրին նույնիսկ չցանկացավ լսել նրա փաստարկները։ Արևելք մեկնելու թույլտվությունը նույնպես մերժվեց։ Մի քանի ամիս շարունակ նա մնաց Փարիզում առանց ծառայության և առանց միջոցների։ Նա մտերմացավ նշանավոր Տալմայի* հետ, որը նույնպես այդ ժամանակ էր սկսում կարիերան և թատրոնի ձրի տոմսեր էր տալիս իրեն, երբ հաջողվում էր դրանք ձեռք բերել։

Նապոլեոնն իրեն անսահման դժբախտ էր զգում։ Նրա խառնվածքին այդքան անհարիր ձանձրալի անգործությունից փրկողը եղավ Բարրասը*, որը նրան բարձր էր գնահատել Տուլոնի պաշարման ժամանակ։ Որպես Դիրեկտորիայի անդամ, նա Նապոլեոնին հանձնարարեց այն զորքերի հրամանատարությունը, որոնք պետք է Կոնվենտը պաշտպանեին փարիզյան սեկցիաներից։ Երիտասարդ գեներալի ձեռնարկած միջոցառումները Կոնվենտի համար հեշտ հաղթանակ ապահովեցին։

Նա նպատակադրվեց ահաբեկել Փարիզի քաղաքացիներին՝ խուսափելով, սակայն, նրանց կոտորելուց (1795 թ. հոկտեմբերի 5, 13 վանդեմիերի)։ Այդ կարևոր ծառայության համար նրան շնորհեցին ներքին բանակի դիվիզիոնի գեներալի պաշտոն[1]։ Բարրասի մոտ նա ծանոթացավ տիկին դը Բոհառնեի* հետ։ Սա գովաբանեց նրա գործողությունները։ Նապոլեոնը խենթանալու չափ սիրահարվեց նրան։ Դա Փարիզի ամենահրապուրիչ կանանցից էր, որոնցից միայն եղակիներն էին ավելի շատ հմայքով օժտված, իսկ Նապոլեոնը շփացած չէր կանանց մեջ ունեցած հաջողությամբ։ Նա ամուսնացավ Ժոզեֆինայի հետ (1796), և շուտով, գարնանամուտին, Բարրասն ու Կառնոն հաջողեցրին, որ նա նշանակվի Իտալիայում գործող բանակի հրամանատար։

1 Տե՛ս «Moniteur»-ում Բարրասի զեկուցագիրը Կոնվենտին։

ԳԼՈՒԽ IV

Ջափազանց երկար կլիներ նկարագրել գեներալ Բոնապարտի սխրանքները մարտադաշտերում՝ Մոնտենոտտեի* տակ, Արկոլեում*, Ռիվոլիի* մոտ։ Այդ անմահ հաղթանակների մասին հարկավոր է պատմել ամենայն մանրամասնությամբ, որոնք էլ պատկերացում են տալիս, թե ինչքան գերբնական են այդ հաղթանակները[1]։ Ջառամյալ բռնակալության դեմ պատանի հանրապետության տարած այդ հաղթանակների ժամանակը մեծ, գեղեցիկ դարաշրջան է Եվրոպայի համար. Նապոլեոնի համար դա իր կյանքի ամենաջինջ, ամենափայլուն պահն է։ Մի տարում, ամեն ինչի կարիք զգացող իր փոքրիկ բանակով, նա գերմանացիներին ետ մղեց միջերկրածովյան ափերից մինչև Կարինտիայի լեռները, ցրեց ու ոչնչացրեց այն բոլոր բանակները, որ Ավստրիայի թագավորող տունը մեկը մյուսի ետևից ուղարկում էր Իտալիա, և եվրոպական մայրցամաքին խաղաղություն պարգևեց։ Հին կամ նոր աշխարհի ոչ մի զորավար այդքան մեծագործ հաղթանակներ չի տարել այդպիսի կարճ ժամանակում, այդպիսի սահմանափակ միջոցներով և այդպիսի հզոր հակառակորդների դեմ[2]։ Մեկ տարում քսանվեց տարեկան երիտասարդը նսեմացրեց այնպիսի զորավարների, ինչպիսիք են Ալեքսանդր Մակեդոնացին, Կեսարը, Հաննիբալը, Ֆրիդրիխ Մեծը։ Եվ ասես ի հատուցումն մարդկության այդ արյունոտ հաջողությունների՝ նա Մարսի դափնիներին միացրեց քաղաքակրթության ձիթենու ճյուղը։ Լոմբարդիան անարգվել ու խոշտանգվել էր կաթոլիկության և բռնապետության դարավոր տիրապետությունից[3]։ Այն լոկ մի մարտադաշտ էր, որը գերմանացիները հավակնում էին ֆրանսիացիներից։ Գեներալ Բոնապարտը Հռոմեական կայսրության այդ գեղեցկագույն մարզին կյանք վերադարձրեց և, կարծես, մի ակնթարթում վերականգնեց նաև նրա հին արիությունը։ Նա Լոմբարդիան դարձրեց

1 Սպասելով ավելի լավ աշխատությունների երևան գալուն՝ տե՛ս այդ մասին գեներալ Դյումայի «Պատերազմների պատմությունը», գեներալ Նեռվանի «Իտալական արշավանքների պատմությունը» գրքերը, հատկապես «Moniteur»*-ը և «Annual Register»*-ը։

2 Տե՛ս Տիտոս Լիվիոս, գիրք IX, էջ 242 (ֆրանս. թարգմանությունը՝ Դյուբո դը Լա-Մալի, հ. IV, հրատ. Միշո, 1810)։

3 Այդ մասին մանրամասն տե՛ս Սիսմոնդի*, երկ. հ. XVI, էջ 414։

Ֆրանսիայի ամենահավատարիմ դաշնակիցը։ Այնտեղ հանրապետություն ստեղծեց և, իր պատանի ձեռքով նոր կարգուկանոն մտցնելով, դրանով իսկ այնպիսի գործ կատարեց, որն առավել անհրաժեշտ էր Ֆրանսիայի, միաժամանակ նաև ամբողջ աշխարհի երջանկության համար։

Բոլոր դեպքերում նա իրեն դրսևորում էր իբրև խաղաղության ջերմ ու համոզված կողմնակից։ Նա գովասանքի է արժանի (որը երբեք չի հատուցվել նրան) այն բանի համար, որ եղել է ֆրանսիական հանրապետության առաջին ականավոր գործիչը, որը վերջ դրեց նրա ընդարձակմանը և անկեղծորեն ձգտում էր հանգրստություն վերադարձնել աշխարհին։ Անտարակույս, դա սխալմունք էր, բայց դրանում մեղավոր էր չափազանց դյուրահավատ, մարդկության շահերի նկատմամբ չափազանց զգայուն նրա սիրտը։ Այդ է նրա ամենախոշոր սխալների պատճառը։ Գալիք սերունդը, որի առջև այդ ճշմարտությունը կհառնի ամբողջ լույսով, հանուն մարդկային ցեղի պատվի չի ցանկանա հավատալ, որ ժամանակակիցների նախանձը կարող էր ամենաանողորմ հիվաղ պատկերել մեծ մարդուն[1]։

Ֆրանսիական երիտասարդ հանրապետությունը կարող էր գոյություն ունենալ միայն ամեն կողմից հանրապետություններով շրջապատելով իրեն։ Գեներալ Բոնապարտը Փարիզում շատ թշնամիներ վաստակեց այն ներողամտությամբ, որ նա դրսևորեց պապի նկատմամբ՝ բավարարվելով (այն պահին, երբ Հռոմն ամբողջովին նրա իշխանության տակ էր) Տոլենտինոյում* կընքված հաշտությամբ, ինչպես նաև հարյուրավոր նկարների ու մի քանի արձանների հանձնումով։ Այն, ինչ նա կարող էր այն ժամանակ անել վեց հազար զինվորով, հարկադրված եղավ կատարել ինը տարի անց՝ նաև մեծ վտանգի ենթարկելով իրեն։ Իտալիկյան հանրապետության փոխպրեզիդենտ Լոդիի (Մելցի)* դուքսը, աղնվագույն և հիրավի աղատասեր մի մարդ, պնդում է, որ Նապոլեոնը Կոմպոֆորմի* հաշտությունը կնքել է հակառակ Դիրեկտորիայի գաղտնի հրամանների։ Հավատալ պատանի

1 Տե՛ս 1800—1810 թվականների անգլիական բոլոր գրքերը, նույնիսկ նրանք, որոնք համարվում են լավագույնները, և տիկին դը Ստալի՝ նրանի ոպանությունների հետ գրված է՛լ ավելի ճիշտ աղնիվ «ներհրդածությունները»։

հանրապետության և Եվրոպայի հին արիստոկրատների միջև երկարատև խաղաղության հնարավորությանը, նշանակում էր տարվել անիրականանալի երազանքներով։

ԳԼՈՒԽ V

Արժե՞ արդյոք վերապատմել այն անձանց հարձակումների մասին, որոնք իրենց նրբազգաց են երևակայում, իսկ իրականում լոկ փոքրոգիներ են։ Նրանք պնդում են, որ, իբր, Նապոլեոնն Իտալիայում ազատություն էր տարածում նույն եղանակներով, ինչ եղանակով որ գործել է Մահմեդը, որը զուրանը քարոզել է թուրը ձեռքին։ Նորահավատներին գովաբանում էին, նրանց հովանավորում, ողորմածություններ շռայլում, իսկ անհավատներին անգթորեն ենթարկում պատերազմի բոլոր սարսափներին՝ կողոպուտի, ուժից վեր տուրքերի... Դրանում հանդիմանել Նապոլեոնին, նշանակում է հանդիմանել, որ նա իր թնդանոթների համար վառոդ է օգտագործել։ Նրան մեղադրում են Վենետիկի անկախությունը ոչնչացնելու համար։ Բայց մի՞թե այն, ինչ նա կործանել է, հանրապետություն է եղել։ Դա ամոթալի ու այլասերված կառավարում էր, թույլ մարդու գլխավորած արիստոկրատիա՝ ճիշտ այնպես, ինչպես եվրոպական մյուս կառավարություններն իրենցից ներկայացնում են ուժեղ մարդկանց գլխավորող արիստոկրատիաներ։ Այդ հաճելի ժողովրդի համար սովորական կենսաձևը խախտված էր. բայց հաջորդ սերունդը հազար անգամ ավելի երջանիկ կլիներ Իտալիայի թագավորի իշխանության ներքո։ Շատ հայտնական է, որ Վենետիկի պետությունն ավստրիական տանը զիջելը եղել է լեոբենյան նախնական համաձայնությունների* գաղտնի հոդվածը, և որ հանրապետության դեմ ուղղված պատերազմն արդարացնելու համար հետագայում բերված պատճառները լոկ պատրվակ էին։ Ֆրանսիական գեներալը հարաբերությունների մեջ մտավ դժգոհների հետ, որպեսզի հնարավորություն ունենա քաղաքն առանց կռվի գրավելու։ Նա կարծում էր, որ Ֆրանսիային օգտակար է հաշտություն կնքել Ավստրիայի հետ։ Նա Վենետիկի տերն էր, որովհետև գրավել էր։ Վենետիկին երջանկություն պարգևելը նրա պարտականությունների մեջ չէր մտնում։ Առաջին հերթին՝ հայրենիք։ Տվյալ դեպքում գեներալ Բոնապարտին կարելի է միայն մի հանդիմանու-

թյուն անել՝ նրա հայացքները նվազ վսեմ էին, քան Դիրեկտորիայի հայացքները[1]։

ԳԼՈՒԽ VI

Նապոլեոնին հանդիմանում են այն բանում, որ նա Իտալական արշավանքի ժամանակ թուլացրել է ոչ թե կարգապահությունը (ամենևին էլ ո՛չ), այլ իր զորքերի բարոյական տոկունությունը։ Նա խրախուսում էր իր գեներալների կատարած ամենախայտառակ կողոպուտը[2]։ Արհամարհելով հանրապետական զորքերին բնորոշ անշահախնդրությունը, նրանք իրենց ագահությամբ շուտով հավասարվեցին Կոնվենտի կոմիսարներին։ Տիկին Բոնապարտը հաճախ էր Ջենովա գնում և, ըստ լուրերի, հուսալի տեղում պարտակել էր հինգ-վեց միլիոն ֆրանկ։ Դրանով Բոնապարտը հանցանք է գործել Ֆրանսիայի դեմ։ Ինչ վերաբերում է Իտալիային, ապա հարյուրապատիկ ավելի զայրացուցիչ գիշատիչ կողոպուտն էլ չէր հատուցի չափազանց թանկ գինը նրան ցուցաբերված անսահման բարերարության՝ այնտեղ վերականգնված բոլոր առաքինությունների։ Արիստոկրատները հաճախ են վկայակոչում այն հանցագործությունները, որ իր հետ բերում է հեղափոխությունը։ Նրանք մոռանում են այն հանցագործությունները, որ նախքան հեղափոխությունը կատարվում էին գաղտնի։

Իտալիայում գործող բանակը պետության կառավարման գործին զինվորների միջամտության առաջին օրինակը տվեց։ Մինչ այդ հանրապետության բանակները բավարարվում էին նրանով, որ հաղթում էին թշնամիներին։ Ինչպես հայտնի է, 1797

1 Նապոլեոնի գործողություններն Իտալիայում ճիշտ հասկանալու համար հարկավոր է նախապատրաստվել Տիտոս Լիվիոսի ընթերցանությամբ։ Այդ միջոցով հոգին մաքրվում է մեր ժամանակի բոլոր ողորմելի ու կեղծ գաղափարներից։

2 Օրինակ՝ Մասսենայի, Օժերոյի և շատ ու շատ ուրիշների հարստությունը։ Ավենիներ արշավի ուղարկված գոմարտակային մի հրամանատար ճանապարհին իջևանում է Բոլոնիայում. նա նույնիսկ ձի չուներ. երկու շաբաթ անց վերադարձին նա նորից է մտնում Բոլոնիա. նրան հետևում էր ավարով բարձած տասնյոթ սայլ, երեք ծածկակառք և երկու սիրուհի։ Կողոպտված փողի երեք քառորդը ծախսվում էր տեղում՝ Իտալիայում։

թվականին Հինգ հարյուրի խորհրդում առաջացավ մի կուսակցություն, որն օպոզիցիա կազմեց Դիրեկտորիայի դեմ[1]։ Նրա պարագլուխների մտահղացումներում, թերևս, հանցավոր ոչինչ չի եղել, բայց նրանց գործողությունները, անտարակույս, կարող էին կասկածներ հարուցել։ Նրանցից ոմանք, անշուշտ, ռոյալիստներ էին. մեծամասնությունը, հավանաբար, այլ մտադրություն չուներ, քան վերջ տալ կամայականությանը և Դիրեկտորիայի խայտառակ կողոպուտներին։ Այդ նպատակով նրանք կառավարության տնօրինությունից հանեցին հարկերը և նրա ծախսումները խիստ վերահսկողության ենթարկեցին։ Դիրեկտորիան իր կողմից չհապաղեց օգտագործել այդ միջոցառումների հետևանքները. նա բանակներում լուրեր տարածեց, թե իրենց կրած բոլոր զրկանքների պատճառը երկու պալատների դավաճանությունն է, որոնք, իբր թե, ձգտում են կործանել հայրենիքի պաշտպաններին, որպեսզի այնուհետև հնարավորություն ունենան անարգել կանչելու Բուրբոններին։ Իտալական բանակի հրամանատարն իր զորքերին ուղղած կոչի մեջ բացահայտ հաստատեց այդ լուրերը։ Այդ բանակը հանդգնում էր կառավարությանն ուղարկել իր առաջարկները։ Նա իրեն թույլ էր տալիս նույնքան խիստ, որքան և սահմանադրությանը հակադիր հարձակումներ գործել պալատների նկատմամբ։ Բոնապարտի գաղտնի մտադրությունն այն էր, որ առաջարկներն ուղարկելուց հետո իր բանակի մի մասի հետ անձամբ շարժվի դեպի Փարիզ՝ իբր Դիրեկտորիային և Հանրապետությանը պաշտպանելու, իսկ իրականում կառավարության մեջ ղեկավար դիրք նվաճելու համար։ Նրա պլանները խափանվեցին ֆրյուկտիդորի 18-ի հեղաշրջումով, որը կատարվեց ավելի վաղ ու ավելի հեշտ, քան ինքը ենթադրում էր (1797 թվականի սեպտեմբերի 4-ին հանրապետության V տարվա ֆրյուկտիդորի 18-ին)։ Այդ օրը, որը նշանավորվեց իրեն Դիրեկտորիային հակադրող կուսակցության լիակատար ջախջախմամբ, նրան զրկեց Ալպերն անցնելու ամեն մի պատրվակից։ Նա շարունակում էր մեծագույն արհամարհանքով արտահայտվել Դիրեկտորիայի անդամների մասին։ Այդ կառավարության անբանությունը, ծախվածությունը, կոպիտ սխալները նրա խոսակցությունների մշտական թեման էին։ Սովորաբար նման զրույցների վերջում նա իրեն

1 Տե՛ս Կառնոյի «Նոթերը»։

2186
ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ՍՍՀՄ

շրջապատող գեներալներին հայտարարում էր, որ նրան, ով կկարողանա Ֆրանսիայի նոր հասարակարգը զուգակցել զինվորականների տիրապետության հետ, դժվար չի լինի հանրապետության համար ապահովել Հին Հռոմի դերը։

ԳԼՈՒԽ VII

Թեպետ Նապոլեոնն Էլբա կղզում ասում էր, որ նախքան եգիպտական արշավանքն ինքը շարունակել է ազնիվ հանրապետական լինել, այնուամենայնիվ, կոմս ֆոն Մերֆելդտի բերած միջադեպերն ապացուցում են, որ խնդրո առարկա շրջանում նրա հանրապետական համոզմունքներն արդեն խիստ խախտված էին։ Մերֆելդտն ավստրիական այն լիազորներից մեկն էր, որոնք հաշտության բանակցություններ էին վարում Լեոբենում, իսկ ավելի ուշ՝ Կամպո-Ֆորմիոյում։ Քանի որ նրա համար ամենակարևորը հանրապետության տապալումն էր, ապա նա ակնարկել էր այն մասին, որ գեներալ Բոնապարտը հեշտությամբ կարող է Ֆրանսիայի կամ Իտալիայի գլուխ կանգնել։ Գեներալը դրան ոչինչ չէր պատասխանել, բայց և վրդովմունք չէր արտահայտել. նա նույնիսկ այն միտքն էր հայտնել, որ Ֆրանսիան ներկայացուցչական մարմինների և հանրապետական հաստատությունների միջոցով կառավարելը ոչ այլ ինչ է, քան փորձ։ Մերֆելդտը, որին այդ խոսակցությունը համարձակություն էր տվել, որոշել էր ավստրիական արքունիքի գիտությամբ ու համաձայնությամբ Նապոլեոնին տիրույթային իշխանություն առաջարկել Գերմանիայում։ Գեներալը պատասխանել էր, որ ինքը չափազանց շոյված է այդ առաջարկությունից և չի կասկածում, որ դրա պատճառն իր ընդունակությունների ու դերի բարձր գնահատանքն է, բայց ինքն անխոհեմ կվարվեր, եթե ընդուներ։ Նման տիրապետությունն անխուսափելիորեն պետք է որ փլվի Ավստրիայի ու Ֆրանսիայի միջև ծագած առաջին իսկ պատերազմի դեպքում։ Ավստրիայի համար դա անօգուտ բեռ կլիներ, իսկ Ֆրանսիան, հաղթելու դեպքում, անշուշտ, կաքսորեր իր ուխտադրուժ քաղաքացուն, որը համաձայնվել էր ընդունել օտար տերության օգնությունը։ Նա անկեղծորեն ավելացրել էր, որ նպատակադրվել է տեղ գրավել իր երկրի կառավարության մեջ և վստահ է, որ հեռու կգնա, եթե միայն իրեն հաջողվի ոտքն ասպանդակին դնել։

ԳԼՈՒԽ VIII

Եթե Նապոլեոնը չկնքեր Կամպո-Ֆորմիոյի հաշտությունը՝ կարող էր ոչնչացնել Ավստրիան և Ֆրանսիան փրկել 1805 և 1809 թվականների արշավանքներից[1]։ Ըստ երևույթին, մեծ մարդն այդ շրջանում սոսկ ձեռներեց զինվոր էր, որը զարմանալիորեն տաղանդավոր էր, բայց քաղաքականության մեջ ոչ մի կայուն սկզբունքի չէր հետևում։ Գտնվելով բազմաթիվ փառասիրական մտքերի իշխանության տակ, նա ոչ մի որոշակի պլան չէր կազմել իր փառամոլությունը բավարարելու համար։ «Սակայն,— պատմում է պ-ն ֆոն Մերֆելդտը,— անհնար էր տասը րոպե զրուցելուց հետո ի դեմս նրա չճանաչել լայն մտահորիզոնի և բացառիկ ընդունակությունների տեր մարդուն»։

«Լեզուն, մտքերը, շարժուձևերը,— ասում է Մելցին,— ամեն ինչ նրա մեջ ապշեցուցիչ էր, ամեն ինչ յուրահատուկ։ Խոսակցության ժամանակ, ինչպես և պատերազմում, նա չափազանց հնարամիտ էր, հնարագետ, արագ կռահում էր հակառակորդի թույլ կողմը և անմիջապես դրան ուղղում իր հարվածները։ Արտակարգ աշխույժ մտքի տեր լինելով, նա իր մտքերից լոկ շատ քչերի համար էր պարտական գրքերին և, բացառությամբ մաթեմատիկայի, մեծ հաջողություններ չի դրսևորել գիտություններում։ Նրա բոլոր ընդունակություններից,— շարունակում է Մելցին,— ամենաբացառիկը այն զարմանալի թեթևությունն է, որով նա սեփական կամքով իր ուշադրությունը կենտրոնացնում էր այս կամ այն առարկայի վրա և մի քանի ժամ շարունակ իր միտքը ասես գամված պահում դրան, անընդհատ լարված, մինչև որ գտնում էր տվյալ հանգամանքների համար լավագույն լուծումը։ Նրա մտահղացումները լայնահուն էին, բայց արտասովոր, հանճարեղորեն մտածված, սակայն երբեմն անիրագործելի։ Հաճախ նա հպանցիկ ջղայնության ազդեցության տակ դրանցից հրաժարվում էր կամ էլ իր շտապողականությամբ անհնար դարձնում դրանց կատարումը։ Ի ծնե լինելով դյուրագրգիռ, վճռական, պոռթկուն, կտրուկ, նա կատարելապես կարողանում էր համայիլ լինել և հմտորեն կանխամտածված ակնածանքի ու մարդկանց համար գովասանական մտերմավարության միջոցով հմայել նրանց, ում ուզում էր իր կողմը գրավել։ Սովորաբար ինքնամփոփ

[1] Զգո՞ւշ։

և զուսպ, նա երբեմն, զայրույթի բռնկման պահին, որին դրդում էր հպարտությունը, բացահայտում էր մտահղացումներ, որոնք հատկապես պետք է որ գաղտնի պահեր։ Ամենայն հավանականությամբ, նա երբեք առիթ չի ունեցել իր սիրտը բանալ քնքուշ զգացմունքների ազդեցության տակ։ Ընդհանրապես, միակ էակը, որին նա սիրել է իր ողջ կյանքում, եղել է Ժոզեֆինան, իսկ վերջինս երբեք նրան չի դավաճանել։ Ես չեմ հավատում, թե Նապոլեոնն իր մտքերից շատ քչերի համար է պարտական գրքերին։ Նա հազվադեպ է արտահայտվել գրականության հարցերի վերաբերյալ. հենց դա էլ, ամենայն հավանականությամբ, թյուրիմացության մեջ է գցել Լոդիի դքսին՝ գրականությանը լավատեղյակ և այդ պատճառով էլ մի քիչ թուլակամ այդ մարդուն։

«Այն գնդակի վրա, որն ինձ կսպանի, գրված կլինի իմ անունը»,— այս խոսքերը նա հաճախ էր կրկնում։ Խոստովանում եմ, ես դրանք չեմ հասկանում։ Ես դրանց մեջ սոսկ ֆատալիզմի պարզ արտահայտություն եմ տեսնում, որն այնքան բնական է այն մարդկանց համար, ովքեր ամեն օր ենթակա են թնդանոթի արկով սպանվելու կամ էլ ծովում խեղդվելու վտանգին։

Այս անվեհեր հոգին ապրում էր աննշան, նիհար, գրեթե թուլակազմ մարմնի մեջ։ Այս մարդու եռանդը, տոկունությունը, որով նա, իր այդպիսի տկար կազմվածքով հանդերձ, տանում էր բոլոր դժվարությունները, նրա զինվորներին անհնարին մի բան էր թվում։ Այստեղ է թաքնված այն աննկարագրելի ոգևորության պատճառներից մեկը, որ նա առաջացնում էր զորքերի մեջ[1]։

[1] Գրենոբլի գրադարանի R. 292 թղթապանակում հետևյալ հետաքրքիր նշումը կա Նապոլեոն Բոնապարտի դիմանկարների մասին.

«Նապոլեոնի գրեթե բոլոր դիմանկարները, որ ես առիթ եմ ունեցել տեսնելու, ծաղրանկարներ են։ Շատ նկարիչներ նրան վերագրել են բանաստեղծի ոգեշունչ հայացք։ Այդ հայացքը չի կապվում ուշադրությունը կենտրոնացնելու այն ապշեցուցիչ ընդունակության հետ, որը նրա հանճարեղ խառնվածքի բնորոշ գիծն է։ Ինձ թվում է, որ այդ հայացքում արտահայտված է իր մտքի թելը կորցրած կամ էլ հենց նոր վեհասքանչ տեսարանի նայող մարդու վիճակը։ Նրա դեմքը գեղեցիկ էր. երբեմն վսեմ արտահայտություն ուներ, և դա այն պատճառով, որ անվրդով էր։ Միմիայն աչքերն էին շատ շարժուն և աշխույժ։ Նա հաճախ էր ժպտում, բայց երբեք չէր ծիծաղում։ Միայն մի անգամ եմ ես նրան տեսել հիացմունքից խենթացած. դա այն ժամանակ էր, երբ նա Կրեշենտինի կատարմամբ լսում էր «Ombra adorata, aspetta» մենուետը։ Նվազ վատ են Ռոբեր Լեֆեվրի և Շոդեի պատկերամները, ամենավատը Դավիդի և Կանովայի գործերն են»։

ԳԼՈՒԽ IX

Այդպիսին էր գլխավոր հրամանատար գեներալ Բոնապարտը, երբ նա Իտալիան նվաճելուց հետո վերադարձավ Ֆրանսիա՝ Ֆրանսիայի հիացմունքի, ողջ Եվրոպայի զարմանքի և այն կառավարության նախանձի առարկան, որին մինչ այդ նա ծառայում էր։ Նա իր նկատմամբ կասկածանքով վերաբերվող այդ կառավարության կողմից ընդունվեց վստահության ու մեծարանքի ամեն տեսակ արտահայտություններով և դեռ նախքան Փարիզ ժամանելը նշանակվեց Եվրոպայի համընդհանուր խաղաղեցման համար Ռաշտադտում հրավիրված Կոնգրեսի լիազոր կոմիսարներից մեկը։ Նա շուտով հրաժարվեց իր համար բոլորովին ոչ հարմար այդ պաշտոնից։ Թուլացած, բայց անհաշտ թշնամիներով շրջապատված, երիտասարդ և ուժեղ հանրապետության գլուխ կանգնած Դիրեկտորիան չափազանց շրջահայաց էր, որպեսզի խաղաղություն ցանկանար։ Բոնապարտը հրաժարվեց նաև Անգլիայի դեմ գործելու համար նախատեսված բանակի հրամանատարությունից։ Դիրեկտորիան այնքան ուժեղ չէր, որ հաջողությամբ իրականացներ նման մտահղացումը։ Մինչ այդ և՛ երիտասարդ գեներալին, և՛ առհասարակ բոլորին պարզ դարձավ, որ Ֆրանսիայում այնպիսի պոստ չկա, որը հարմար լիներ նրա համար։ Նույնիսկ անձնական կյանքը նրա համար լի էր վտանգներով. նրան շրջապատող փառքի և իրեն պահելու նրա ձևի մեջ ինչ-որ արտակարգ ռոմանտիկ, արտակարգ հրապուրիչ բան կար։ Դիրեկտորիայի անդամների վարքագիծը այդ պատմական պահին պատիվ է բերում նրանց և ցույց է տալիս, թե որքան առաջ ենք մենք գնացել Մարի Մեդիչիի ժամանակներից ի վեր։

Հաճախ այդ ժամանակաշրջանում, ինչպես և հետագայում, երբ նա համակվում էր վհատությամբ, Բոնապարտը կրքոտ ձգտում էր հանգստի, խաղաղ, անձնական կյանքի։ Նրան թվում էր, թե բնության գրկում ինքը երջանկություն կգտնի։

ԳԼՈՒԽ X

1796 թվականին Բոնապարտին հանձնարարվեց քննարկել Եգիպտոս ներխուժելու պլանը, որը նա ուսումնասիրեց և իր եզրակացության հետ վերադարձրեց Դիրեկտորիային։ Այժմ, խիստ

դժվարին կացության մեջ ընկնելով, Դիրեկտորիան հիշեց այդ պլանի մասին և Բոնապարտին առաջարկեց գլխավորել արշավանքը։ Երրորդ անգամ մերժել գործադիր իշխանությունից ելնող առաջարկությունը՝ նշանակում էր առիթ տալ մտածելու, որ Ֆրանսիայում ինչ-որ բան է ձեռնարկվում, և դրանով իսկ, ամենայն հավանականությամբ, իրեն կործանել։ Ընդ որում Եգիպտոսի նվաճումը որքան կարելի է ավելի շատ կարող էր խանդավառել ռոմանտիկ մտահղացումներով տոգորված և արտակարգ ձեռնարկումների ձգտող վսեմ հոգուն։ «Հիշեցեք, որ երեսուն դար է նայում մեզ այս բուրգերի բարձունքից*»,— մի քանի ամիս անց ասում էր նա իր զորքերին։

Այդ հարձակման, ինչպես նաև բոլոր այն պատերազմների համար, որ մղվել են Եվրոպայում, հազիվ թե կարելի էր օրինական հիմնավորումներ գտնել։ Ֆրանսիացիները հաշտ էին Թուրքական սուլթանի՝ Եգիպտոսի անվանական տիրակալի հետ, իսկ բեյերը՝ երկրի իսկական տերերը, բարբարոսներ էին, որոնք, պատկերացում չունենալով միջազգային իրավունքի մասին, ոչ մի կերպ չէին կարող այն խախտել։ Սակայն նման նկատառումները չէին կարող նշանակալից ներգործություն ունենալ երիտասարդ զորավարի որոշման վրա, որը, թերևս, նաև գտնում էր, որ, քաղաքակրթություն արմատավորելով Եգիպտոսում, ինքը նրա բարերարը կդառնա։ Նավատորմը զորքերի հետ դուրս եկավ բայց ծով և երշանիկ պատահականությամբ, որ առիթ է տալիս տարբեր մտքերի, Մալթան գրավելուց հետո հասավ Ալեքսանդրիա՝ իր ճանապարհին չհանդիպելով Նելսոնին։

ԳԼՈՒԽ XI

Ինձնից մի սպասեք պատերազմական այն մեծ սխրագործությունների նկարագրությունը, որոնց հետևանքով Նապոլեոնը նվաճեց Եգիպտոսը։ Կահիրեի տակ, բուրգերի, Աբուկիրի մոտ տեղի ունեցած ճակատամարտերը հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ կլիներ պատմությունը լրացնել Եգիպտոսի նկարագրությամբ և գեթ որոշ պատկերացում տալ մամլուքների զարմանահրաշ քաջության մասին։ Ամենադժվարը մեր զորքերին նրանց դիմադրել սովորեցնելն էր[1]։

1 Եգիպտոսի նկարագրությունը կարելի է գտնել Վոլնեյի մոտ, ռազմական պատմությունը՝ խիստ միշտ ընդունակությունների տեր Մարտենի, ինչպես

Եգիպտոսում Նապոլեոնը պատերազմում էր նույն կանոններով, ինչ որ Իտալիայում, բայց ավելի արևելյան և ավելի բռնակալական ոգով։ Այստեղ նա նորից առիթ ունեցավ գործ ունենալ արտակարգ հպարտ և վայրագ մարդկանց հետ, մի ժողովրդի հետ, որին միայն արիստոկրատիան էր պակասում հռոմեացիներին նմանվելու համար։ Նա նրանց նենգությունը պատժում էր իրենցից իսկ փոխ առած դաժանությամբ։ Կահիրեի բնակիչներն ապստամբություն են բարձրացնում կայազորի դեմ. Նապոլեոնը չի բավարարվում նրանով, որ կարգադրում է մահապատժի ենթարկել նրանց, ում բռնել էին զենքը ձեռքին։ Նա կասկածի տակ է առնում հոգևորականությանն այն բանում, որ թաքուն խռովության է դրդել նրանց, և կարգադրում է ձերբակալել երկու հարյուր հոգևորականների. նրանք գատապարտվում են գնդակահարության։

Բարի բուրժուաները, որոնք պատմություն են գրում՝ խոսելով նմանօրինակ գործողությունների մասին, ճոճռան արտահայտություններ են գործի դնում։ Կիսահիմարները դրանք արդարացնում են՝ վկայակոչելով թուրքերի վայրագությունն ու վայրենությունը, որոնք, չբավարարվելով հոսպիտալներում գտնվող հիվանդներին և փոքրաթիվ գերիներին կոտորելով (այդ իրադարձությունների մանրամասնությունները չափազանց նողկալի են մեջբերելու համար), միաժամանակ ամենագազանային ձևով այլանդակում էին նրանց դիակները։

Այդ տխուր, բայց անհրաժեշտ գործողությունների պատճառը հարկավոր է փնտրել salus populi suprema lex esto[1] սկզբունքի հետևողական կիրառման մեջ։ Ամեն մի երևակայություն գերազանցող դեսպոտիզմն այն աստիճան փչացրել է Արևելքի բնակիչներին, որ միայն սարսափը կարող էր նրանց ստիպել հնազանդվելու։ Կահիրեի կոտորածը նրանց ահաբեկեց[2]։ «Այդ պահից ի վեր,— ասում էր Նապոլեոնը, —նրանք սկսեցին նվիրվածու-

նաև Բերտիեի, Դենոնի և Ռիլսոնի աշխատություններում. վերջինս այն ժամանակ միանգամայն արժանի էր իշխանության պատմաբաններից մեկը լինելու։

1 Ժողովրդի բարօրությունը թող գերագույն օրենք լինի (լատ.)։

2 Տե՛ս Լյեժի Մեկնությունը սույն արտահայտությունը ճշտելու համար։ 14 դեկտեմբերի 1817 թ.։

թյուն ցուցաբերել ինձ, քանի որ համոզվեցին, որ մեղմությունը խորթ է իմ կառավարմանը»։

ԳԼՈՒԽ XII

Երկու հարյուրամյակի ընթացքում մեր հոգիներն ուժասպառող կաթոլիկության և արիստոկրատիայի խառնուրդը մեզ անկարող է դարձնում գնահատելու այն սկզբունքի կիրառման հետևանքները, որի մասին քիչ առաջ հիշատակեցի։ Չհաշված Նապոլեոնին ուղղված թեթև կշտամբանքները Եգիպտոսում կատարած նրա արարքների առթիվ, սովորաբար, իբրև ծանրագույն հանցագործություններ, նրան մեղսագրում են՝

1) Գերիների կոտորածը Յաֆֆայում.

2) Նրա հրամանով իր իսկ զորքերի հիվանդ զինվորների թունավորումը Սեն-Ժան-դ'Ակրի մոտ.

3) Նրա՝ առերես մահմեդականություն ընդունելը.

4) Բանակից նրա մեկնելը։

Յաֆֆայի իրադարձությունների մասին Նապոլեոնը հետևյալն է պատմել էլբա կղզում իրեն այցելած ամենալուսավորյալ և վստահելի ճանապարհորդներից մեկին՝ լորդ Էբրինգտոնին. «Յաֆֆայում ես իրոք հրամայել եմ գնդակահարել մոտ երկու հազար թուրքերի[1]։ Դուք գտնում եք, որ դա չափազանց կտրո՞ւկ միջոցառում է։ Բայց էլ-Արիշում ես համաձայնվել էի նրանց կապիտուլյացիային այն պայմանով, որ նրանք կվերադառնան Բաղդադ։ Նրանք խախտեցին այդ պայմանը և առանձնացան Յաֆֆայում. ես գրոհով գրավեցի այդ քաղաքը։ Չէի կարող նրանց հետս տանել իբրև գերիների, որովհետև շատ քիչ հաց ունեի, իսկ այդ կարիճները չափազանց վտանգավոր էին, որպեսզի կարելի լիներ երկրորդ անգամ նրանց ազատ թողնել անապատ։ Ես այլ միջոց չունեի, քան նրանց կոտորելը»։

Անշուշտ, պատերազմական օրենքներով գերին, որը դրժել է իր խոսքը, արդեն չի կարող գթություն հուսալ[2], բայց հաղթողի այդ անողոք իրավունքը հազվադեպ է իրականացվել, իսկ մեր ժամանակներում, ես կարծում եմ, երբեք չի կիրառվել միանգամից այդքան բազմաթիվ մարդկանց նկատմամբ։ Եթե ֆրանսիացիները գրոհի ժամանակ տաքանալով թշնամուն չխնայեին, ոչ մեկի մտքով չէր անցնի դրա համար դատապարտել նրանց. չէ որ սպանվածները ուխտադրուժ էին եղել. եթե հաղթանակ տարած զորավարն իմանար, որ կայազորը մեծ մասամբ բաղկացած է էլ-Արիշում ազնիվ խոսքի դիմաց ազատ արձակված գերիներից, նա, ամենայն հավանականությամբ, կհրամայեր կոտորել նրանց։ Ես կարծում եմ, որ պատմությունը չգիտի այնպիսի մի դեպք, որ կայազորին խնայեն գրոհի ժամանակ, իսկ հետո նրան մահվան մատնեն։ Ընդ որում, պետք է ենթադրել, որ էլ-Արիշում վերցված գերիները կազմել են Յաֆֆայի կայազորի մեկ երրորդից ոչ ավելին։

Զորավարն արդյոք իրավունք ունի՞ իր զորքերի փրկության համար կոտորել գերիներին, կամ նրանց դնել այնպիսի պայմանների մեջ, որտեղ անխուսափելիորեն պետք է կործանվեն, կամ էլ հանձնել քոչվորների ձեռքը, որոնք նրանց չեն խնայի։ Հռոմեացիները նման հարց չէին էլ տա իրենց[1]։ Նկատի առեք, սակայն, որ այդ հարցին տրված պատասխանից է կախված ոչ միայն Յաֆֆայում Նապոլեոնի արարքի, այլ նաև Աղենկուրում Հենրիխ V*-ի, Օվկիանիայի կղզիներում լորդ Էնսոնի, Կորոմանդելյան ափում Սյուֆրենի* արարքների արդարացումը։ Կասկածից վեր է, որ նման գործողությունների անհրաժեշտությունը պետք է ակնհայտ ու ստիպողական լինի, իսկ տվյալ դեպքում այդ անհրաժեշտությունը չի կարելի ժխտել։ Անխոհեմ բան կլիներ ազնիվ խոսք առնելով բաց թողնել գերիներին։ Փորձն արդեն ցույց է տվել, որ այդ բարբարոսներն առանց խղճի խայթի կգրավեին իրենց ճանապարհին պատահած առաջին խսկ ամրոցը, կամ էլ, աննահանջ հետևելով Պաղեստինի խորքերը շարժվող բանակին, անընդհատ կանհանգստացնեին նրա թևերին ու վերջապահ ուժերին։

Այդ ահավոր արարքի պատասխանատվությունը չի կարելի ամբողջովին գլխավոր հրամանատարի վրա բարդել։ Որոշումն ընդունվել է ռազմական խորհրդում, որին մասնակցել են Բեր-

1 Տե՛ս Լասկազին։

2 Մարտենս։ Միջազգային իրավունք, էջ 291։

1 Տիտոս Լիվիոսը, որն արդարացիորեն կշտամբում էր սամնիթներին այն բանի համար, որ նրանք հռոմեացիներին չոչնչացրին Կավդինյան կիրճերում։ Գիրք IX, հ. IV, էջ 221, թարգմանությունը դը լա Մալի։

տիեն, Կլեբերը, Լանը, Բոնը, Կաֆարելլին և էլի մի քանի գեներալներ։

ԳԼՈՒԽ XIII

Նապոլեոնն ինքն է մի շարք մարդկանց պատմել, որ ցանկացել է հրամայել բժիշկներին՝ ափիոնով թունավորելու իր բանակի որոշ թվով հիվանդներին։ Նրան անձամբ ճանաչողների համար միանգամայն պարզ էր, որ այդ մտադրությունը եղել է մոլորության և ամենևին ո՛չ անգթության կամ անտարբերության հետևանք՝ իր զինվորների ճակատագրի նկատմամբ։ Բոլոր նրանք, ովքեր նկարագրում են այդ իրադարձությունները[1], միահամուռ խոստովանում են, որ սիրիական արշավանքի ժամանակ Նապոլեոնը հոգատարություն է ցուցաբերել հիվանդ ու վիրավոր զինվորների նկատմամբ։ Նա ասել է այն, ինչ իրենից առաջ չի ասել ոչ մի զորավար՝ այցելել է լազարեթները, որտեղ պառկած էին ժանտախտավոր հիվանդները, զրուցել նրանց հետ, ունկնդրել նրանց բողոքները, անձամբ ստուգել, թե բժիշկները որքանով են իրենց պարտքը կատարում[2]։ Իր բանակի ամեն մի տեղաշարժի, հատկապես Սեն-Ժան-դ'Ակրից նահանջելու ժամանակ նա մեծագույն ուշադրություն էր դարձնում լազարեթներին։ Հիվանդներին ու վիրավորներին փրկելու նպատակով իր ձեռնարկած խելացի միջոցառումներով, ինչպես նաև լավ խնամքով, որից նրանք օգտվում էին, նա արժանացել է անգլիացիների գովասանքին։ Սիրիական բանակի նախկին գլխավոր բժիշկ Դեժենետն* այժմ դարձել է մոլի միապետական, սակայն, նույնիսկ Բուրբոնների վերադարձից հետո, հիվանդ զինվորների նկատմամբ Նապոլեոնի վերաբերմունքի մասին նա միայն մեծագույն գովասանքով էր խոսում։

Մյունխենցի բժիշկ նշանավոր Ասսալինին*, որը նույնպես եղել է Սիրիայում, թեպետ Նապոլեոնին չի սիրում, սակայն նրա մասին արտահայտվում է այնպես, ինչպես Դեժենետը։

Սեն-Ժան-դ'Ակրից նահանջելու ժամանակ Ասսալինին, որը գլխավոր հրամանատարին զեկույց էր ներկայացրել հիվանդների համար փոխադրական միջոցների անբավարարության վերաբերյալ, հրաման ստացավ դուրս գալ ճանապարհ, հավաքել բոլոր գումակային ձիերը և նույնիսկ խլել սպաների ձիերը։ Այդ խիստ միջոցառումն իրագործվեց լիովին, և այն հիվանդներից ոչ մեկը, որոնց ապաքինման համար բժիշկների կարծիքով թեկուզ ինչ-որ հույս էր մնացել, չլքվեց։ Էլբա կղզում կայսրը, գիտակցելով, որ անգլիական ազգն իր քաղաքացիների մեջ ունի Եվրոպայի ամենառաջամիտ մարդկանց, լորդ Էբրինգտոնին բազմիցս առաջարկել է առանց քաշվելու իրեն հարցեր տալ իր կյանքի իրադարձությունների մասին։ Երբ Էբրինգտոնը, օգտվելով այդ թույլտվությունից, հասավ թունավորման մասին եղած լուրերին, Նապոլեոնը, բնավ չշփոթվելով, անմիջապես պատասխանեց. «Դրանում ճշմարտության մասնիկ կա։ Իմ բանակի մի քանի զինվորներ հիվանդացան ժանտախտով. նրանք մեկ օրվա կյանք էլ չունեին. հարկավոր էր անհապաղ արշավի ելնել. ես հարցրի Դեժենետին, թե կարելի՞ է արդյոք նրանց վերցնել մեզ հետ. նա պատասխանեց, որ դա կապված է բանակում ժանտախտը տարածելու ռիսկի հետ, ընդ որում ոչ մի օգուտ չի բերի այն մարդկանց, որոնց անհնար է բուժել։ Ես հանձնարարեցի նրան ափիոնի ուժեղ դոզա նշանակել և ավելացրի, որ դա ավելի լավ է, քան նրանց հանձնել թուրքերի ձեռքը։ Նա մեծ արժանապատվությամբ առարկեց ինձ, որ իր գործը մարդկանց բուժելն է և ոչ թե նրանց սպանելը։ Թերևս նա իրավացի էր, թեև ես խնդրեցի նրանց համար անել այն ամենը, ինչ կխնդրեի իմ լավագույն բարեկամներին, եթե ինքս նման վիճակի մեջ լինեի։ Հետագայում ես բարոյականության տեսակետից հաճախ էի մտորում այդ դեպքի մասին, այդ առթիվ հարցնում շատ մարդկանց կարծիքը, և կարծում եմ, որ, բառ էության, այնուամենայնիվ, ավելի լավ է մարդուն հնարավորություն տալ ավարտելու ճակատագրի կողմից իրեն նախասահմանված ճանապարհը՝ ինչպիսին էլ որ այն լինի։ Ես այդ եզրակացությանը հանգեցի ավելի ուշ՝ տեսնելով իմ խեղճ բարեկամ Դյուրոկի* մահը, որը, երբ իմ աչքի առջև նրա փորոտիքը թափվեց գետնին, քանիցս ջերմագին խնդրում էր ինձ վերջ տալ իր տառապանքներին. ես նրան ասացի. «Խղճում եմ ձեզ, բարեկամս, բայց ի՞նչ արած, հարկավոր է տառապել մինչև վերջ»։

Ինչ վերաբերում է Նապոլեոնի հավատուրացությանը Եգիպ-

---

1 Նույնիսկ գեներալ Ռոբերտ Ուիլսոնն իր զրպարտչական պատմության մեջ։

2 Նա համոզում էր Դեժենետին հրապարակորեն հայտարարել, որ ժանտախտը վարակիչ չէ։ Բայց սա փատմությունից դրդված հրաժարվեց դա անել։

տոսում, ապա իր բոլոր կոչերը նա սկսում էր հետևյալ խոսքերով. «Չկա աստված՝ բացի աստծուց, և Մահմեդը նրա մարգարեն է»։ Այս կարծեցյալ մեղանչումը տպավորություն է գործել միայն Անգլիայում։ Մնացած բոլոր ժողովուրդները հասկացան, որ այն պետք է դնել կողք կողքի մայոր Գոռնեմանի և մյուս այն ճանապարհորդների մահմեդականություն ընդունելու հետ, որոնց «Աֆրիկյան ընկերությունը» ուղարկում է հետազոտելու անապատի գաղտնիքները։ Նապոլեոնն ուզում էր շահել Եգիպտոսի բնակիչների համակրանքը[1]։ Նա միանգամայն հիմնովին հույս ուներ, որ բարեպաշտ ու մարգարեական արտահայտությունները սարսափահար կանեն դեռևս սնահավատ եգիպտական ժողովրդի զգալի մասին, իսկ իր սեփական անձը կօծվի անհաղթելի ճակատագրի լուսապսակով։ Այն միտքը, թե նա իրոք մտադիր է եղել իրեն իբրև երկրորդ Մահմեդ ներկայացնել, պատկանում է վտարանդիներին[2]։ Նման գործելակերպը լիակատար հաջողությամբ պսակվեց։ «Դուք չեք կարող պատկերացնել,— ասել է նա լորդ էբրինգտոնին,— թե ինչքան շատ բանի եմ հասել Եգիպտոսում, որ ձևացրել եմ, թե իբր անցել եմ նրանց հավատին»։ Միշտ իրենց պուրիտանական նախապաշարմունքների իշխանության տակ գտնվող անգլիացիները, որոնք, սակայն, լավագույն ձևով են հարմարվում ամենագայրացուցիչ դաժանությանը, կարծում են, որ դա անազնիվ խորամանկություն է։ Պատմությունը դրան կառարկի՝ այն դարաշրջանում, երբ ծնվել է Նապոլեոնը, կաթոլիկական գաղափարներն արդեն ծիծաղելի էին դարձել։

ԳԼՈՒԽ XIV

Ինչ վերաբերում է նրա մյուս, շատ ավելի լուրջ արարքին՝ Եգիպտոսում իր բանակը բախտի քմահաճույքին թողնելուն*, ապա դրանով նա ամենից առաջ հանցագործություն է կատարել կառավարության դեմ, որի համար այդ կառավարությունը կարող էր նրան օրինական պատժի ենթարկել։ Բայց նա դրանով հանցանք չի կատարել իր բանակի դեմ, որին թողել է հիանալի վիճակում, մի բան, որ երևում է անգլիացիներին ցույց տված այդ բանակի դիմադրությունից։ Նապոլեոնին կարելի է մեղադրել միայն թեքամտության մեջ. նա չի նախատեսել, որ Կլեբերը* կարող էր սպանվել, որի հետևանքով հրամանատարությունն անցավ ապաշնորհ գեներալ Մենուին։

Ապագան ցույց կտա, թե արդյոք Նապոլեոնը Ֆրանսիա է վերադարձել որոշ հեռատես հայրենասերների խորհրդո՞վ, ինչպես ես եմ հակված ենթադրելու, թե նա այդ վճռական քայլին է դիմել՝ ղեկավարվելով բացառապես սեփական նկատառումներով։ Ուժեղ հոգու տեր մարդկանց հաճելի է պատկերացնել, թե ինչպիսի զգացումներ են հուզել նրան այն ժամանակ. մի կողմից՝ փառասիրությունը, սերը հայրենիքի նկատմամբ, իր մասին սերունդներին անթաքսիր հիշատակ թողնելու հույսը, մյուս կողմից՝ անգլիացիների ձեռքն ընկնելու կամ գնդակահարվելու հնարավորությունը։ Ինչպիսի՜ հաստատակամություն էր պետք նման կարևոր քայլի դիմելու համար՝ միմիայն ենթադրություններից ելնելով։ Այդ մարդու կյանքը հոգու վեհության հիմն է։

ԳԼՈՒԽ XV

Լուր ստանալով ֆրանսիական զորքերի պարտության, Իտալիայի կորստի, երկրի ներսում տիրող անիշխանության ու դժգոհության մասին, Նապոլեոնն այդ տխուր պատկերից եզրակացրեց, որ Դիրեկտորիան չի կարող դիմանալ։ Նա հայտնվեց Փարիզում, որպեսզի Ֆրանսիան փրկի և իր համար տեղ ապահովի նոր կառավարության մեջ։ Եգիպտոսից իր վերադարձով նա օգուտ բերեց թե՛ հայրենիքին, թե՛ ինքն իրեն. ավելին չի կարելի պահանջել թույլ մահկանացուներից։

Անտարակույս, երբ Նապոլեոնն ափ իջավ Ֆրանսիայում, չգիտեր, թե ինչպես կվերաբերվեն իրեն, և քանի դեռ լիոնցիները նրան ցույց չէին տվել խանդավառ ընդունելություն, կարելի էր կասկածել, թե ի՞նչը հատուցում կլինի նրա խիզախությանը՝ գա՞հը թե կառափնարանը։ Հենց որ հայտնի դարձավ, որ նա վերադարձել է, Դիրեկտորիան հրաման տվեց Ֆուշեին՝ այն ժամանակվա ոստիկանության մինիստրին, կալանավորել նրան։ Հռչակավոր մատնիչը պատասխանեց. «Նա այնպիսի մարդ չէ, որ թույլ տա իրեն կալանավորել, և ես էլ այն մարդը չեմ լինի, որը նրան կկալանավորի»[1]։

---

1 Տե՛ս Լասկաղի հուշերը։

2 Տե՛ս նրանց խոսքերը։

1 Ամեն օր Լյուքսեմբուրգյան պալատի դարպասների մոտ նոր պլակատ-

ԳԼՈՒԽ XVI

Այն պահին, երբ գեներալ Բոնապարտը շտապ վերադարձավ Եգիպտոսից, որպեսզի փրկի հայրենիքը, Դիրեկտորիայի անդամ Բարրասը՝ հանդուգն ձեռնարկումների ընդունակ այդ մարդը, զբաղված էր նրանով, որ Ֆրանսիան տասներկու միլիոն ֆրանկով վաճառում էր այնտեղից արտաքսված թագավորական տանը։ Արդեն պատրաստված էր համապատասխան հրովարտակ։ Շուրջ երկու տարի Բարրասը նախապատրաստել էր այդ պլանի իրականացումը։ Սիեյեսն իմացավ այդ մասին, երբ դեսպանորդ էր Բեռլինում[1]։ Այդ օրինակը, ինչպես նաև Միրաբոյի օրինակը, պարզորեն ցույց է տալիս, որ հանրապետությունը երբեք չպետք է վստահվի ազնվականներին։ Բարրասը, որը միշտ անձնատուր էր լինում տիտղոսների հմայքին, որոշեց իր դիտավորությունները վստահել այն մարդուն, որն առաջ օգտվում էր իր հովանավորությունից։

Նապոլեոնը Փարիզում հանդիպեց իր եղբայր Լյուսիենին. նրանք միասին քննարկեցին առաջիկա հնարավորությունները. պարզ էր, որ մեկնումեկը գահ կբարձրանա՝ Նապոլեոնը կամ Բուրբոնները, կամ էլ հարկավոր է վերափոխել հանրապետությունը։

Բուրբոններին գահ վերադարձնելու պլանը ծիծաղելի էր. ժողովուրդը դեռ չափազանց շատ էր ատում ազնվականներին և, չնայած տեռորի դաժանություններին, առաջվա պես սիրում էր հանրապետությունը։ Բուրբոններին Փարիզում կարող էր վերահաստատել միայն օտարերկրյա բանակը։ Վերափոխել հանրապետությունը, այլ կերպ ասած՝ բավականաչափ կենսունակ սահմանադրություն մշակել. նման խնդիր լուծելու համար Նապոլեոնն իրեն անկարող էր զգում։ Այն մարդիկ, որոնց հարկ կլիներ ներգրավել այդ գործին, նրան թվում էին արգահատելի, ամբողջովին տարված սեփական շահերով։ Ընդ որում, նա իր համար միանգամայն հուսալի տեղ չէր տեսնում և հասկանում էր, որ եթե նորից մի դավաճան գտնվեր, որը Ֆրանսիան վաճառեր Բուրբոններին կամ Անգլիային, իրեն՝ Նապոլեոնին առաջին հերթին կդատապարտեին մահվան։ Բնական է, որ այս բոլոր վարանումների մեջ հաղթեց իշխանության ձգտումը, իսկ ինչ վերաբերում է պատվին, Նապոլեոնն ինքն իրեն ասաց. «Ֆրանսիայի համար ավելի լավ է, որ ես լինեմ, և ոչ թե Բուրբոնները»։ Ինչ վերաբերում է սահմանադրական միապետությանը, որի պաշտպանն էր Սիեյեսը, ապա նա հնարավորություն չուներ այն հաստատելու, և, բացի այդ, այն անձնավորությունը, որին նա նկատի ուներ իբրև թագավոր, չափազանց քիչ էր հայտնի։ Հարկավոր էր ուժեղ և արագ ներգործող միջոց գտնել։

Դժբախտ Ֆրանսիան, որտեղ լիակատար անիշխանություն էր տիրում, տեսնում էր, թե ինչպես իր բանակները մեկը մյուսի ետևից պարտություններ էին կրում, իսկ նրա թշնամիները թագավորներն էին, որոնք անխուսափելիորեն պետք է նրա նկատմամբ անողոք վարվեին, քանի որ նրանց հպատակներին ճանաչել տալով երջանկությունը, հանրապետությունը դրանով իսկ այդ հպատակներին դրդում էր տապալելու թագավորներին։ Եթե զայրացած թագավորները, հաղթելով Ֆրանսիային, բարեհաճեին այն վերադարձնել արտաքսված թագավորական տանը, ապա այն ամենը, ինչ արել կամ թույլ է տվել այդ տունը 1815 թվականին[1], կարող է լոկ աղոտ պատկերացում տալ, թե ինչ կարելի էր նրանից սպասել 1800 թվականին։ Ծայրահեղ հուսահատության և բարոյական անկման հասած Ֆրանսիան դժբախտացած այն կառավարության մեղքով, որ այնպիսի հպարտությամբ ընտրել էր իր համար, է՛լ ավելի դժբախտ՝ իր զորքերի ջախջախման հետևանքով, Բուրբոնների մեջ նվազագույն իսկ երկյուղ չէր առաջացնի, և այն խարուսիկ լիբերալիզմը, որ պահպանում էր կառավարությունը, կարելի է բացատրել միմիայն կայսեր հանդեպ ունեցած վախով։

Բայց ավելի հավանական է, որ, հաղթելով Ֆրանսիային, թագավորներն այն բաժան-բաժան կանեին իրար մեջ։ Ողջամիտ

ներ էին երևում։ Այսպես, օրինակ, մի անգամ այնտեղ կարելի էր տեսնել մի մեծ պլակատ՝ նշտարի, հազարի և առնետի հիանալի պատկերումով (L'an sept les tuera):

[1] Բարրասի միջնորդներն էին՝ Դավիդը, Մունիեն, Տրոպես-դը-Դերեները, Ֆլերիի դուքսը։ Տե՛ս Միշոյի «Ժամանակակիցների կենսագրությունները»՝ մի խրոխտ բանաքաղություն, որի ողջ արժեքն այդ խոստովանությունների մեջ է։ Բարոյալքումը, անիշխանությունը հիանալի են պատկերված «Moniteur»-ում։

[1] Մարկիզ դը Ռիվիերի՝ առաքելությունը Ֆրանսիայի հարավը, Նիմի կոտորածը՝, Տրեստայիոնի՝ աբարքները։

կլիներ ոչնչացնել յակոբինությունն այդ օջախը։ Բրաունշվայգի դքսի մանիֆեստը կկենսագործվեր, և բոլոր այն ազնիվ գրողները, որոնցով լիքն են Ակադեմիաները, կհռչակեին ազատության անհնարինությունը։ 1793 թվականից սկսած նոր գաղափարները դեռ երբեք այդքան մեծ վտանգի չէին ենթարկվել։ Համաշխարհային քաղաքակրթությունը քիչ էր մնացել մի քանի դարով ետ շպրտվեր։ Դժբախտ պերուացին կշարունակեր տնքալ իսպանացու երկաթե լծի տակ, իսկ հաղթանակած թագավորները կարբենային դաժանությամբ՝ ինչպես Նեապոլում։

Ֆրանսիային ամեն կողմից կործանում էր սպառնում՝ անէացում այն անհուն անդունդում, որը մեր օրերում, մեր աչքի առջև կլանեց Լեհաստանը։

Եթե երբեիցե յուրաքանչյուր մարդու ամենաանսահմանափակ ազատության մշտնջենական իրավունքի վերացումը կարող է որևէ հանգամանքով արդարացվել, գեներալ Բոնապարտը կարող էր ասել ամեն մի ֆրանսիացու. «Իմ շնորհիվ առաջվա պես դու ֆրանսիացի ես. իմ շնորհիվ դու ենթակա չես ո՛չ պրուսացի դատավորին, ո՛չ էլ պիեմոնտցի նահանգապետին. իմ շնորհիվ դու զայրացած տիրակալի ստրուկը չես, տիրակալ, որը քեզնից վրեժխնդիր կլինի իր կրած երկյուղի համար։ Այդ իսկ պատճառով հաշտվիր այն մտքի հետ, որ ե՛ս կլինեմ քո կայսրը»։

Հիմնականում այսպիսիք էին այն մտքերը, որոնք հուզում էին գեներալ Բոնապարտին և նրա եղբորը 1799 թվականի բրյումերի 18-ի (նոյեմբերի 9-ի) նախօրեին. մնացած բոլորը վերաբերում էր լոկ մտահղացման իրականացման եղանակներին։

ԳԼՈՒԽ XVII

Այն ժամանակ, երբ Նապոլեոնը որոշում էր ընդունում և խորհրդածում անհրաժեշտ միջոցառումների մասին, իրարից խլխլելով, աշխատում էին նրան իրենց կողմը գրավել բոլոր այն կուսակցությունները, որոնք քրքրում էին վերջին շնչում գտնվող հանրապետությանը։ Կառավարությունը կործանվում էր այն պատճառով, որ գոյություն չուներ պաշտպանական սենատ, որը հավասարակշռություն կպահպաներ ստորին պալատի և Դիրեկտորիայի միջև ու կնշանակեր վերջինիս անդամներին, և ամենևին ոչ այն պատճառով, որ հանրապետությունն անհնարին էր Ֆրանսիայում։ Տվյալ իրավիճակում հարկավոր էր դիկտատոր, բայց օրինականորեն հաստատված կառավարությունը երբեք չէր հանդգնի նրան նշանակել։ Դիրեկտորիայի կազմի մեջ մտնող կեղտոտ հոգիները՝ խարխլված միապետության ժամանակներում ձևավորված մարդիկ, ձգտում էին հայրենիքի բոլոր դժբախտությունները ծառայեցնել իրենց մանր եսամոլությանը և հետաքրքրություններին։ Շատ թե քիչ վեհանձն ամեն բան նրանց անմտություն էր թվում։

Իմաստուն և առաքինի Սիեյեսը միշտ այն տեսակետին էր, որ հեղափոխության նվաճած կարգերն ամրապնդելու համար անհրաժեշտ է հեղափոխության կողմից կյանքի կոչված դինաստիա։ Նա օգնեց Բոնապարտին իրականացնելու բրյումերի 18-ի հեղաշրջումը։ Եթե Նապոլեոնը չլիներ, նա այդ նպատակի համար կօգտագործեր որևէ մի այլ գեներալի։ Հետագայում Սիեյեսն ասել է. «Ես արեցի բրյումերի 18-ը, բայց ոչ 19-ը»։ Պատմում են, որ իբր գեներալ Մորոն* հրաժարվել է համագործակցել Սիեյեսին. իսկ գեներալ Ժուբերը*, որը հակված էր խաղալու այդ դերը, սպանվել է իր առաջին ճակատամարտի հենց սկզբում՝ Նովիի մոտ։

Սիեյեսը և Բարրասը կառավարության առավել ազդեցիկ անդամներն էին։ Բարրասը պատրաստվում էր հանրապետությունը վաճառել Բուրբոններին՝ չանհանգստանալով հետևանքների համար, և առաջարկում էր գեներալ Բոնապարտին գլխավորել այդ դավադրությունը։ Սիեյեսն ուզում էր ստեղծել սահմանադրական միապետություն. նա մշակեց սահմանադրություն, որի առաջին հոդվածի համաձայն թագավոր կհռչակվեր Օռլեանի դուքսը, և առաջարկում էր գեներալ Բոնապարտին գլխավորել այդ դավադրությունը։ Գեներալը, որի կարիքն ունեին երկու կուսակցությունն էլ, մտերմացավ Լեֆեվրի՝ մի զորապետի հետ, որն ավելի շատ իր քաջությամբ էր հայտնի, քան խելքով, և որն այն ժամանակ Փարիզի կայազորի ու 17-րդ դիվիզիայի հրամանատարն էր։ Նապոլեոնը գործում էր Բարրասի և Սիեյեսի համաձայնությամբ, բայց շուտով սեփական կողմնակիցների շարքում հավաքագրեց Լեֆեվրին։ Այդ պահից սկսած Փարիզում և նրա շրջակայքում տեղավորված զորքերն անցան Բոնապարտի տնօրինության տակ, և հարցը մնում էր միայն այն, թե ինչ ձև տալ հեղաշրջմանը։

Բոնապարտի համառ պահանջով 1799 թվականի բրյումերի 18-ի (նոյեմբերի 9-ի) գիշերը անսպասելիորեն, անձնական գրավոր հրավերներով նիստի կանչվեցին Ավագների խորհրդի այն անդամները, որոնց վրա նա կարող էր հենվել։ Սահմանադրության այն հոդվածի հիման վրա, որն Ավագների խորհրդին իրավունք էր տալիս երկու պալատներն էլ փոխադրել Փարիզի սահմաններից դուրս, դեկրետ հրապարակվեց, որն ազդարարում էր, որ բրյումերի 19-ին Ավագների խորհրդի և Հինգ հարյուրի խորհրդի նիստը կայանալու է Սեն-Կլուում. ժողովրդական ներկայացուցչության պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը հանձնարարվում էր գեներալ Բոնապարտին, որը նշանակված էր կանոնավոր զորամասերի և ազգային գվարդիայի պետ։ Բոնապարտը, որին գիշերը կանչեցին նիստի, որպեսզի նրան հայտնեն այդ դեկրետը, ճառ արտասանեց։ Քանի որ նա բացահայտ չէր կարող խոսել այն երկու դավադրությունների մասին, որոնք մտադիր էր խափանել, ճառը բաղկացած էր միայն ընդհանուր դարձվածքներից։ Բրյումերի 19-ին Դիրեկտորիան, գեներալները և հետաքրքրասերների բազմությունները ուղևորվեցին Սեն-Կլու։ Զինվորները գրավել էին բոլոր անցումները։ Ավագների խորհուրդը հավաքվել էր պալատի վերնասրահում։ Հինգ հարյուրի խորհուրդը, որի նախագահ դրանից քիչ առաջ նշանակվել էր Լյուսիեն Բոնապարտը, հավաքվել էր, այսպես կոչված, Օրանժերեայում։

Բոնապարտը մտավ Ավագների խորհրդի դահլիճ և ճառ արտասանեց, որը շարունակ ընդհատվում էր այն դեպուտատների բացականչություններով ու ճիչերով, որոնք հավատարիմ էին սահմանադրությանը կամ, ավելի ճիշտ, ցանկանում էին արգելք դառնալ այն ձեռնարկի հաջողությանը, որին իրենք չէին մասնակցում։ Այդ վճռական րոպեներին Հինգ հարյուրի խորհրդում է՛լ ավելի փոթորկոտ տեսարան էր տեղի ունենում։ Դրա անդամներից ոմանք պահանջում էին հետաքննել երկու պալատներն էլ Սեն-Կլու տեղափոխելու պատճառները։ Լյուսիենը զուր էր փորձում հանգստացնել այդ առաջարկությունից բորբոքված մտքերը. չէ որ երբ ֆրանսիացիները նման վիճակի մեջ են ընկնում, անձնական շահագրգռություններ ձգտումը դադարում է նրանց վրա

ներգործելուց կամ, ավելի ճիշտ, միայն այն ուղղությամբ է ներգործում, որ նրանք անափառությունից ձգտում են հերոսներ դառնալ։ Բոլորը միաձայն բղավում էին. «Դիկտատոր պե՛տք չէ։ Կորչի՛ դիկտատորը»։

Այդ պահին գեներալ Բոնապարտը չորս գրենադերների ուղեկցությամբ մտավ դահլիճ։ Դեպուտատների մեջ լսվեցին բացականչություններ. «Սա ի՞նչ է նշանակում։ Այստեղ սրերի տեղը չէ։ Զինվորների տեղը չէ»։ Մյուսները՝ դրությունն ավելի լրջորեն գնահատողները, նեռվեցին դահլիճի մեջտեղը, շրջապատեցին գեներալին, բռնեցին նրա օձիքից և սկսեցին թափահարել՝ աղաղակելով. «Սրան հայտարարե՛լ օրենքից դուրս։ Կորչի՛ դիկտատորը»։ Քանի որ ներկայացուցչական ժողովներում արիության դրսևորումը Ֆրանսիայում հույժ բացառիկ բան է, ապա պատմությունը պետք է պահպանի Բիգոննեի՝ Մակոն քաղաքի դեպուտատի անունը։ Այդ քաջ դեպուտատը պետք է սպաներ Բոնապարտին։

Այդ տեսարանի վախճանի մասին եղած պատմությունները նվազ հավաստի են։ Ասում են, որ իբր Բոնապարտը, լսելով «Սրան հայտարարե՛լ օրենքից դուրս» ահեղ ճիչը, սփրթնեց և չկարողացավ ի պաշտպանություն իրեն ոչ մի խոսք արտասանել։ Գեներալ Լեֆեվրը նրան օգնության հասավ և օգնեց դուրս գալու դահլիճից։ Ավելացնում են, որ Բոնապարտը ձի է հեծել և, կարծելով, որ Սեն-Կլուում գործը տանուլ է տրված, սլացել է Փարիզ։ Բայց նա դեռ չէր հասցրել անցնել կամուրջը, երբ ետևից սլացող Մյուրատը հասավ նրան և դիմեց հետևյալ խոսքերով. «Հեռանալ՝ նշանակում է ամեն ինչ կորցնել»։ Նապոլեոնը, որին այս խոսքերն ստիպեցին ուշքի գալ, վերադառնում է Սեն-Կլու, գլխավոր փողոց, զենքի կոչում զինվորներին և գրենադերների մի ոչ մեծ ջոկատ ուղարկում Օրանժերեա։ Գրենադերները Մյուրատի ուղեկցությամբ մտնում են դահլիճ։ Լյուսիենը, ամբիոնի վրա մեծ տոկունություն ցուցաբերելով, նորից զրաղեցնում է նախագահի բազկաթոռը և հայտարարում, որ այն դեպուտատները, որոնք փորձեցին սպանել իր եղբորը, Անգլիայից կաշառված լպիրշ ավազակներ են։ Նրա համառ պահանջով հրապարակվում է դեկրետ, որով Դիրեկտորիան վերացվում է, իսկ գործադիր իշխանությունը հանձնվում է ժամանակավոր նշանակված երեք կոնսուլներին՝ Բոնապարտին, Սիեյեսին և Ռոժեր-Դյուկոյին։ Ապա որոշվում է երկու պալատների անդամների

թվից կազմել օրենսդիր հանձնաժողով՝ կոնսուլների հետ համատեղ նոր սահմանադրություն մշակելու համար։

Բրյումերի 18-ի իրադարձությունների մանրամասնությունները չի հաջողվի լիովին պարզել, քանի դեռ լույս չեն տեսնի Լյուսիեն Բոնապարտի «Նոթերը»[1]։ Մինչ այդ, այս մեծ հեղաշրջման կատարման փառքը կվերագրվի Հինգ հարյուրի խորհրդի նախագահին, որն ամբիոնի վրա հաստատակամություն և արիություն դրսևորեց այն պահին, երբ եղբայրը տատանվում էր։ Նա շատ նշանակալից դեր խաղաց այնպես հապճեպորեն մշակված սահմանադրության ստեղծման գործում։ Համաձայն ամենևին ոչ վատ այդ սահմանադրության, նշանակվեցին երեք կոնսուլներ՝ Բոնապարտը, Կամբասերեսը և Լեբրենը։

Հիմնվեց Սենատ՝ բաղկացած այն մարդկանցից, որոնք չէին կարող հավակնել տեղ գրավելու կառավարության մեջ։ Սենատը նշանակում էր Օրենսդրական կորպուս, որի դերը հանգում էր այն բանին, որ քվեարկում էր օրենքների համար, բայց իրավունք չուներ դրանք քննարկելու։ Այդ գործով զբաղվում էր մի այլ մարմին, որը կոչվում էր Տրիբունատ. սա քննարկում էր օրենքները, բայց դրանց համար քվեարկելու իրավունք չուներ։

Տրիբունատը և գործադիր իշխանությունն իրենց օրինագծերը ներկայացնում էին ձայն չունեցող օրենսդրական կորպուսին։

Այդ սահմանադրությունը կարող էր շատ հաջող լինել, եթե, հանուն Ֆրանսիայի երջանկության, ճակատագրին հաճելի լիներ, որպեսզի առաջին կոնսուլի երկամյա կառավարումից հետո թընդանոթի արկը սպաներ նրան։ Միապետության այդ նմանակը կստիպեր, որ ֆրանսիացիները վերջնականապես երես դարձնեին միապետությունից։ Հեշտ է համոզվել, որ VIII տարվա սահմանադրության հիմնական թերությունն այն էր, որ Օրենսդրական կորպուսին նշանակում էր Սենատը։ Օրենսդրական կորպուսին պետք է անմիջականորեն ժողովուրդն ընտրեր, իսկ Սենատն իրավունք ունենար ամեն տարի նոր կոնսուլ նշանակելու։

ԳԼՈՒԽ XIX

Տասնյակ վախկոտ գանձագողերի ու դավաճանների կառավարումը փոխարինվեց ռազմական բռնապետությամբ, բայց

1 Այդ նոթերը պահվում են Կոլբեռնի մոտ՝ Լոնդոնում։ Ինչպես և Կառնոյի՝ ու Տալիեռանի՝ նոթերը, դրանք կարող են ցանկացած պահին լույս տեսնել

եթե չլիներ այդ բռնապետությունը, Ֆրանսիան 1800 թվականին ստիպված կլիներ վերապրելու 1814 թվականի իրադարձությունները կամ էլ տեսորը։

Այժմ Նապոլեոնը «ոտքն ասպանդակին դրեց», ինչպես նա իր իտալական արշավանքների ժամանակ էր ասում, և պետք է խոստովանել, որ զորավարներից, միապետներից ոչ մեկը չի իմացել այնպիսի փայլուն տարի, ինչպիսին Ֆրանսիայի ու նրա համար եղավ XVIII դարի վերջին տարին։

Այն ժամանակ, երբ Նապոլեոնը կառավարության գլուխ անցավ, ֆրանսիական բանակը, մի շաքր պարտություններ կրելով, խիստ քայքայվել էր։ Նապոլեոնի իտալական նվաճումները կորըստյան մատնվեցին՝ բացառությամբ լեռնային մարզերի ու ջենովական ափի։ Շվեյցարիայի մեծ մասը դրանից քիչ առաջ դուրս էր եկել Ֆրանսիայի ազդեցությունից։ Հանրապետության գործակալների[1] կամայականությունն ու թալանն առաջացրել էր շվեյցարացիների զայրույթը. այդ ժամանակվանից արիստոկրատիան հաղթեց երկրում. շվեյցարացիները վերածվեցին Ֆրանսիայի ամենակատաղի թշնամիների. նրանց չեզոքությունը դատարկ խոսք դարձավ, և ֆրանսիական սահմաններից ամենախոցելին լրիվ բաց էր։

Ֆրանսիայի բոլոր տեսակի ռեսուրսները վերջնականապես սպառվեցին, և ամենավատն այն էր, որ սպառվեց ֆրանսիացիների խանդավառությունը։ Ազատության վրա հիմնված սահմանադրության ստեղծման բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին։ Յակոբինյաններին արհամարհում և ատում էին նրանց դաժանության և հին ժամանակների օրինակով հանրապետություն հաստատելու հանդուգն մտահղացման համար։ Զափավորներին արհամարհում էին նրանց ապաշնորհության ու ծախվածության համար։ Միապետականները, որոնք բացահայտորեն խռովություն էին բարձրացնում արևմտյան մարզերում, Փարիզում ըստ սովորության անվճռականություն, բանսարկության կիրք և ամենից շատ՝ վախկոտություն էին դրսևորում[2]։

1 Տարօրինակ պատահականությամբ այդ սրիկաներից ամենահայտնին կրում էր Դապին (Rapine—ավար) ազգանունը։

2 Զգո՞ւյշ։ Գլխավորն այն է, որ քիչ ձեռներեց են։ For me (ինձ համար) նրանց ամենահիանալի արարքը 1817 թվականի լիոնյան ապստամբությունն է։

Եթե Մորոյին չհաշվենք, Եգիպտոսից վերադարձած գեներալից բացի, ուրիշ ոչ ոք չէր վայելում ո՛չ հեղինակություն, ո՛չ էլ ժողովրդականություն։ Իսկ Մորոն այն ժամանակ մտադիր էր լողալ հոսանքին համընթաց. դեկավարել որևէ շարժում նա երբեք չի կարողացել։

ԳԼՈՒԽ XX

Վաշինգտոնն ինքն էլ կդժվարանար որոշել ազատության այն աստիճանը, որը, առանց վտանգ հարուցելու, հարկ կլիներ տրամադրել ժողովրդին՝ ծայրահեղորեն մանկամիտ ժողովրդին, որն այնպես քիչ էր օգտագործել իր փորձը, և հոգու խորքում դեռ հին միապետությունից ժառանգած անմիտ նախապաշարմունքներ ուներ[1]։ Բայց ոչ մեկը այն գաղափարներից, որոնք կարող էին զրաղեցնել Վաշինգտոնի միտքը, իր վրա չբևեռեց առաջին կոնսուլի ուշադրությունը, կամ, համենայն դեպս, նա չափազանց հեշտությամբ դրանք անիրականանալի ցնորքներ համարեց Եվրոպայի համար (1800)։ Գեներալ Բոնապարտն արտակարգ տգետ էր կառավարման արվեստում։ Զինվորական ոգով տոգորված, նա քննարկումը միշտ անհնազանդության տեղ էր ընդունում։ Փորձն օրեցօր նրան վերստին ապացուցում էր իր հսկայական գերազանցությունը, և նա չափազանց արհամարհում էր մարդկանց՝ նրանց օգտավետ թվացող միջոցառումների քննարկում թույլ տալու համար։ Յուրացնելով Հին Հռոմի գաղափարները, նա միշտ շարիքներից վատթարը համարում էր ոչ թե վատ կառավարվողի ու իր անձնական կյանքում հալածվողի վիճակը, այլ հնազանդվողի՛ վիճակը։

Եթե նա ավելի լուսավորյալ մտքի տեր լիներ, եթե նրան հայտնի լիներ հասարակական կարծիքի անհաղթահարելի ուժը, ես համոզված եմ, որնա մեջ չէր հաղթի բնությունը, և չէր հայտնվի բռնակալը։ Մեկ մարդուն չի տրված իր մեջ միավորելու բոլոր ձիրքերը, իսկ նա չափազանց հրաշալի զորավար էր, որպեսզի լիներ նաև լավ քաղաքագետ ու օրենսդիր։

Իր կոնսուլության առաջին ամիսներին նա հաստատում էր իսկական դիկտատուրա, որ հանգամանքների բերումով դարձել էր անհրաժեշտ։ Այն մարդը, որին երկրի ներսում անհանգստացնում էին յակոբինյանները և միապետականները, ինչպես նաև Բարրասի ու Սիեյեսի՝ մոտ անցյալի դավադրությունների հիշողությունը, որին դրսից սպառնում էին հանրապետության սահմանները ներխուժելու պատրաստ թագավորների բանակները, ինչ գնով էլ լինի, պետք է դիմանար։ Այդ անհրաժեշտությունը, իմ կարծիքով, արդարացնում է այն բոլոր կամայական միջոցառումները, որ ձեռնարկել է նա կոնսուլության առաջին տարում։

Մանրազնին դիտումների վրա հիմնված մտորումը շրջապատողներին աստիճանաբար հանգեցրեց այն եզրակացության, որ նա բացառապես անձնական նպատակներ է հետապնդում։ Անմիջապես նրան իր ազդեցության տակ գցեց քծնողների ոհմակը. ինչպես դա լինում է սովորաբար, նրանք սկսեցին ծայրահեղության հասցնել այն ամենը, ինչ համարում էին իրենց տիրակալի կարծիքը[1]։ Այդպիսի խառնվածքի տեր մարդկանց, ինչպես օրինակ Մարեին կամ Ռենիոյին, աջակցություն էր ցույց տալիս ազգը, որը սովոր է ստրկության և իրեն լավ է զգում միայն այն ժամանակ, երբ հրամայում են։

Նախ ֆրանսիական ժողովրդին այնքան ազատություն տալ, որքան նա կարող է յուրացնել, և հետո աստիճանաբար, մինչ կուսակցությունները կկորցնեին իրենց խանդավառությունը, իսկ հասարակական կարծիքն ավելի ու ավելի հանգիստ և լուսավորյալ կդառնար՝ ընդլայնել ազատությունը. Նապոլեոնը երբեք իր առջև նման խնդիր չէր դնում։ Նա չէր մտածում այն մասին, թե իշխանության որ մասը, առանց դրանով իսկ անզգուշություն թույլ տալու, կարելի է վստահել ժողովրդին, այլ աշխատում էր կռահել, թե իշխանության ինչպիսի փշրանքով կբավարարվի ժողովուրդը։ Եթե սահմանադրությունը, որն ինքը տվել է Ֆրանսիային, կազմված է եղել ինչ-որ հաշվով, դա այն էր, որ այդ գեղեցիկ երկիրը աննկատելիորեն նորից հասցվի բացարձակ միապետության, և ամենևին ոչ այն, որ ավարտին հասցվի նրա հաղորդակցվելը ազատությանը[2]։

---

1 1814 թվականին գեներալները «գեներալ-լեյտենանտ» և «դաշտային մարշալ» անունները գերադասում են այնքան հաղթանակներով պայծառացած՝ «գիվիզիոնի գեներալ» և «բրիգադային գեներալ» անուններից։

1 Կարիոն-Նիզա՞ն* 1801 թվականին կամ Ֆերանը* 1815 թվականին։

2 Կոնսուլի գործողությունները նույնպիսի նշանակություն ունեն Եվրոպայի պատմության համար, ինչ որ Ֆրանսիայի։

Նապոլեոնը մտովի իր առջև թագ էր տեսնում. նրան շլացնում էր իր դարն ապրած այդ խաղալիքի փայլը։ Նա կարող էր հանրապետություն կամ էլ գոնե կառավարման երկպալատ սիստեմ հաստատել[1]. դրա փոխարեն նա իր բոլոր մտադրություններն ուղղեց թագավորների դինաստիային սկիզբ դնելու նպատակին։

ԳԼՈՒԽ XXI

Դիկտատորի առաջին միջոցառումները հոյակապ էին, խելացի և օգտակար։ Յուրաքանչյուրի համար պարզ էր ուժեղ իշխանության անհրաժեշտությունը. նման ուժեղ իշխանություն ստեղծված էր։ Բոլորին զայրացնում էին վերջին կառավարությունների ծախվածությունն ու կամայականությունը. առաջին կոնսուլն անհնար դարձրեց կողոպուտը և ամեն կերպ նպաստեց, որ արդարադատությունը լավագույն ձևով գործի։ Բոլորը ողբում էին, որ բազմաթիվ կուսակցությունների գոյությունը խանգարում է միաբանությանը և թուլացնում Ֆրանսիան. Նապոլեոնը գործերի ղեկավարմանը հրավիրեց բոլոր կուսակցությունների տաղանդավոր մարդկանց։ Յուրաքանչյուրին ահաբեկում էր ռեակցիայի միտքը. Նապոլեոնը երկաթե ձեռքով խափանեց հետադիմական հեղաշրջման բոլոր փորձերը։ Նապոլեոնի կառավարությունը հավասարապես պաշտպանում էր բոլոր նրանց, ովքեր հնազանդվում էին օրենքներին, և անողոքաբար պատժում նրանց, ովքեր հանդգնում էին դրանք խախտել։ Հետապնդումների ազդեցությամբ կաթոլիկության վերջին կայծերը նորից սկսեցին բորբոքվել. Նապոլեոնը կրոնն առավ իր հովանավորության տակ և քահանաներին եկեղեցական բեմ վերադարձրեց։ Արևմտյան դեպարտամենտները տուժում էին քաղաքացիական պատերազմից, որը նորից էր բռնկվել պատանդների վերաբերյալ օրենքի հետևանքով. Նապոլեոնը վերացրեց այդ օրենքը, դադարեցրեց վտարանդիների

[1] Օրենքը պահպանող Սենատի կողմից նշանակվող Դիրեկտորիա՝ հինգ հոգուց բաղկացած, որի կազմը թարմացվում է տարեկան մեկ մարդով. անմիջապես ժողովրդի կողմից ընտրվող երկու պալատ. առաջինը՝ հազար ֆրանկ հարկ վճարող մարդկանց թվից, երկրորդը՝ նրանցից, ովքեր վճարում են տասը հազար, և որը նույնպես ամեն տարի թարմացվում է անդամների ընդհանուր թվի մեկ հինգերորդով։ Նման կառավարությունն ամենահուսալի պաշտպանությունն է իշխանությունը զավթելու վտանգից։

ցուցակների կազմումը* և հեղության ու հաստատակամության խելացի զուգակցումով Արևմուտքում լիակատար անդորրություն հաստատեց։ Ֆրանսիան միահամուռ խաղաղություն էր ցանկանում. Նապոլեոնը թշնամիներին հաշտության առաջարկություններ արեց։ Երբ Անգլիան և Ավստրիան արհամարհանքով դրանք մերժեցին, նա Մարենգոյում տարած իր փայլուն հաղթանակով* հասավ Ավստրիայի հնազանդությանը, իսկ այնուհետև անխոհեմ մեծահոգությամբ ամեն ինչ ներեց նրան։ Անգլիական կաբինետը՝ այդ չարաղետ օլիգարխիան, որն ամբողջ աշխարհի տառապանքների և մարդկանց ստրկացման համար կիրառում էր այն նույն ուժերն ու գիտելիքները, որոնցով նա պարտական է ազատությանը[1], այդ կաբինետը՝ առաջին կոնսուլի բոլոր թշնամիներից ամենաողորեղն ու ամենափորձվածը, իրեն լքված տեսնելով իր բոլոր դաշնակիցներից, վերջիվերջո ստիպված էր հաշտություն կնքել և ճանաչել հանրապետությունը։

ԳԼՈՒԽ XXII

Նապոլեոնը նոր ժամանակի մեծ մարդկանց մեջ արդեն ախոյաններ չուներ. նա հասել էր փառքի գագաթնակետին և եթե ցանկանար ազատություն պարգևել հայրենիքին, արդեն խոչընդոտների չէր հանդիպի։

Նրան հատկապես գովաբանում էին այն բանի համար, որ իր կոնկորդատով խաղաղություն և հանգստություն է վերադարձրել եկեղեցուն։ Այդ կոնկորդատը մեծագույն սխալ է, որը մի ամբողջ հարյուրամյակով կուշացնի Ֆրանսիայի ազատագրումը. Նապոլեոնին հարկավոր էր սահմանափակվել ամեն տեսակ հետապնդումները դադարեցնելով[2]։ Մասնավոր մարդիկ պետք է իրենց

[1] Երկար է։ Մթագնում է գլխավոր միտքը։ Տեղափոխել այլ տեղ, ինչպես նաև այն, որ Լամանշի մյուս կողմում ազատություն ահ է ազդում անգլիական արիստոկրատիային։ Անգլիացիները, որոնք Նապոլեոնի օրոք վախենում էին մեր զենքից, այժմ վախենում են մեր ազատությունից։

[2] Կրոնի նկատմամբ արտակարգ անտարբեր ժողովրդին տիրելու համար կոնկորդատ չէր պահանջվում, և Նապոլեոնի ճանապարհին կանգնած միակ արգելքը պապն էր Սավոնայում։ Եթե նա կոնկորդատը չկնքեր, պապը, միևնույն է, ընկած կլիներ նրա ոտքերը։ Այդ մասին Նապոլեոնին շատ ճիշտ ասաց երրորդ կոնսուլ Լեբրենը։

քահանային վճարեն այնպես, ինչպես վճարում են իրենց հացավաճառին։

Նապոլեոնը միշտ ամենալայն հանդուրժողականության կողմնակից է եղել ֆրանսիական բողոքականների նկատմամբ. նրա կառավարման տարիներին յուրաքանչյուրին, ով կհամարձակվեր խոսել մարդու այդ հիմնական իրավունքի խախտման հնարավորության մասին, խելագար կհամարեին։ Անսխալ որոշելով, թե որն է չարիքը, որ խանգարում է կաթոլիկության մաքրագործմանը, նա պապին խնդրեց շեղյալ հայտարարել քահանաների կուսակրոնությունը, բայց համակրանք չգտավ հռոմեական կուրիայում։ Ինչպես նա ասել է Ֆոքսին*՝ եթե ինքը մտադրվեր պնդել իր առաջարկությունը, բոլորն անբավականությամբ դա զուտ բողոքականություն կհամարեին։

Նապոլեոնն արագացրեց դատավարության ընթացքը և այն ավելի արդար դարձրեց։ Նա աշխատում էր իր ամենաազնիվ ստեղծագործության՝ Նապոլեոնի օրենսգրքի վրա։ Այսպիսով (պատմության մեջ եզակի՝ օրինակ), Ֆրանսիան իր զորավարներից մեծագույնին է պարտական խառնաշփոթությունների ու հակասությունների վերացման համար այն անթիվ-անհամար օրենքներում, որոնցով ինքը կառավարում էր։ Վերջապես, ժանդարմների (որոնց Նապոլեոնը հավաքագրել էր իր լավագույն զինվորների թվից) միայն տեսքն ահաբեկող ներգործություն էր թողնում հանցագործների վրա։

ԳԼՈՒԽ XXIII

Բայց եթե Նապոլեոնի կառավարման եղանակներից անցնենք նրա բուն հաստատություններին, պատկերը կտրուկ կփոխվի։ Այնտեղ ամեն ինչ պարզությամբ է տոգորված, ամեն ինչ նպաստում է բարօրությանը, ամեն ինչ շիտակություն է ներկայացնում, այստեղ ամեն ինչ անորոշ է, մանրախնդիր, երեսպաշտությամբ ներթափանցված։

Նրա քաղաքականության սխալները կարող են բացատրվել երկու խոսքով՝ նա միշտ վախեցել է ժողովրդից և երբեք որոշակի պլան չի ունեցել։ Սակայն նրա հաստատությունները լիբերալ էին, քանի որ, ինքն էլ դա չնկատելով, ղեկավարում էր իր բնական խելքով, որը նրան ճիշտ որոշումներ էր հուշում, և հարգանքով, որ միշտ տածում էր Սահմանադիր ժողովի նկատմամբ։ Ճիշտ է, լռության դատապարտված Օրենսդրական կորպուսը, խոսելու, բայց քվեարկելու իրավունք չունեցող Տրիբունատը, փակ դռների ետևում նիստեր գումարող Սենատը ծիծաղելի էին, քանի որ կառավարումը չի կարող ներկայացուցչական լինել միայն կիսով չափ։ «Բայց,— կրկնում ենք ինքներս մեզ — պետություններ հիմնելու համար հարկավոր են Հռոմուլոսներ*, իսկ Նումաները* հետո են հայտնվում»։ Այդ հաստատությունները Նապոլեոնի մահից հետո դժվար չէր կատարելագործել և դարձնել ազատության ակունք։ Ընդ որում ֆրանսիացիների համար դրանք ունեին այն հսկայական առավելությունը, որ նրանց օգնում էին մոռանալու ամբողջ հինը։ Ֆրանսիացիները կարիք են զգում, որ իրենց բուժեն հնոտու նկատմամբ ունեցած հարգանքից, և եթե Նապոլեոնն ավելի խելացի խորհրդատուներ ունենար, կվերականգներ պալամենտը։ Իր հանճարով կատարված բոլոր հրաշալի գործերի մեջ առաջին կոնսուլը միշտ իր առջև տեսնում էր թափուր գահը, և, պետք է նրան արժանին հատուցել՝ ո՛չ իր ռազմական սովորություններով, ո՛չ էլ իր խառնվածքով նա ընդունակ չէր հաշտվել իշխանության սահմանափակումների հետ։ Մամուլը, որը հանդգնում էր նրա համար անցանկալի ձևով լուսաբանել դեպքերը, հետապնդումների ենթարկվեց և ստրկացվեց։ Այն անձինք, որոնք որևէ բանով հարուցել էին նրա դժգոհությունը, ենթարկվում էին սպառնալիքների, կալանքի, առանց դատի աքսորի։ Անձի ազատության միակ ապահովումն ընդդեմ իր ոստիկանության մինիստրի ապօրինի հրամանների, նրա մեծ խելքի խորաթափանցությունն էր, որի շնորհիվ նա հասկանում էր, որ ամեն մի ավելորդ ճնշում թուլացնում է ազգը և դրանով իսկ՝ նաև նրա տիրակալին։ Եվ այնպես ուժեղ էր այդ զսպող սկզբունքի ուժը, որ քառասուն միլիոն հպատակների վրա իշխող թագավորի օրոք և այն կառավարություններից հետո, որոնք, կարելի է ասել, խրախուսում էին ամեն տեսակ հանցագործություն, պետական բանտերն այնպես լեփ-լեցուն չէին, ինչպես բարի Լյուդովիկոս XVI-ի օրոք։ Բռնակալ էր կառավարում, բայց կամայականությունը քիչ էր։ Իսկ չէ որ քաղաքակրթության իսկական լոզունգն էր՝ «Կորչի՝ կամայականությունը»։

Գործելով առանց որոշակի պլանի և իր փոփոխական բնավորության բուռն պոռթկումներին համապատասխան՝ ընդդեմ

ներկայացուցչական հաստատությունների, քանզի միայն նրանք էին ահ ներշնչում այդ համարձակ հոգուն, մի գեղեցիկ օր, երբ Տրիբունատն իրեն թույլ տվեց արդարացի առարկություններ անելու իր մինիստրների մշակած օրինագծերի դեմ, նա այդ ժողովից վտարեց բոլոր նրանց, ովքեր գեթ որևէ բան արժեին, իսկ դրանից քիչ անց բոլորովին վերացրեց այն։ Սենատը ոչ միայն օրենքի պահապան չէր, այլև ինքն էր շարունակ փոփոխվում կազմի իմաստով և ավելի ու ավելի էր ստորաքարշ դառնում, քանի որ Նապոլեոնը չէր ուզում, որ որևէ մի քաղաքական մարմին հաստատուն տեղ գրավի հասարակական կարծիքում։ Հարկավոր էր, որպեսզի շատ խելացի ժողովուրդը, ճոճոան արտահայտություններ լսելով կայունության, գալիք սերունդների մասին, զգար, որ ոչինչ կայուն չէ՝ բացի Նապոլեոնի իշխանությունից, որ ոչինչ չի զորանում, բացի նրա հզորությունից։ «Ֆրանսիացիները,— մի անգամ ասել է նա այդ տարիներին,— անտարբեր են ազատության նկատմամբ, որը նրանք չեն հասկանում և չեն սիրում. նրանց միակ կիրքը սնափառությունն է, և միակ քաղաքական իրավունքը, որը նրանք թանկ են գնահատում, քաղաքական հավասարությունն է, որը բոլորին և յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ցանկացած տեղը գրավելու հույս ունենալ»։

Երբեք ֆրանսիական ժողովրդին չի տրվել ավելի ճիշտ բնութագիր[1]։

Կայսեր ժամանակ ֆրանսիացիները տեսությունների նկատմամբ իրենց նվիրվածության պատճառով ավելի շատ էին «Ազատությո՞ւն» բղավում, քան զգում էին դրա իսկական պահանջը։ Ահա թե ինչու մամուլի ազատության վերացումը հիմնված է եղել շատ ճիշտ հաշվի վրա։ Ազգը լիակատար անտարբերություն դրսևորեց, երբ առաջին կոնսուլը նրանից խլեց մամուլի ազատությունը և անձի ազատությունը։ Այժմ ազգը շարաշար տառապում է դրանց բացակայությունից։ Բայց, արդարացի լինելու համար, նա չպետք է այն ժամանակվա իրադարձությունների

[1] For me (ինձ համար)։ Մի բան, որ ապացուցում է Բուրբոնների տրխմարությունը, դա այն է, որ, բացարձակ իշխանության ձգտելով, նրանք չեն գնում այդ ճանապարհով։

համար չափանիշ դարձնի իր ներկայիս զգացումները։ Այն ժամանակ Ֆրիդրիխի (Բոսբախում՝ հաղթողի) սրի տեղափոխությունն Ինվալիդների տուն՝ ազգին փոխհատուցում էր նրա կորցրած իրավունքների համար։ Շատ հաճախ բռնապետությունն իրականացվել է հանուն ընդհանուր բարօրության. բավական է հիշել կուսակցությունների միավորումը, ֆինանսների կարգավորումը, օրենսգրքերի կազմումը, ճանապարհների շինարարությունը։ Եվ, ընդհակառակը, կարելի է պատկերացնել մի կառավարություն, որն իր թուլությամբ առանձին անհատի լոկ շատ աննշան սահմանափակումների կենթարկեր, բայց իր բոլոր չնչին ուժերը կգործադրեր ի վնաս ընդհանուր շահերի։

Առաջին կոնսուլն արագ տոգորվեց այն համոզմունքով, որ սնափառությունը Ֆրանսիայում ազգային կիրք է։ Բոլորի մեջ ապրող այդ կիրքը և իր սեփական փառամոլությունը միաժամանակ բավարարելու համար նա ձգտում էր ընդլայնել Ֆրանսիայի սահմանները և ուժեղացնել իր ազդեցությունը Եվրոպայում։ Փարիզեցին, առավոտյան «Moniteur»-ում դեկրետ գտնելով, որն սկսվում էր «Հոլանդիան միացված է կայսրությանը» խոսքերով, հիանում էր Ֆրանսիայի հզորությամբ, գտնում, որ Նապոլեոնը մեծապես գերազանցում է Լյուդովիկոս XIV-ին, պատիվ էր համարում այդպիսի տիրակալին հնազանդվելը, մոռանում այն մասին, որ նախօրեին տուժել է զորակոչից կամ անուղղակի հարկերից, և մտածում էր, թե ինչպես իր որդու համար որևէ պաշտոն հաջողեցնի Հոլանդիայում։

Այն ժամանակաշրջանում, որի մասին է խոսքը, Պիեմոնտը, Պարմի դքսությունը և Էլբա կղզին հաջորդաբար միացվեցին հանրապետությանը։ Այդ մասնակի նվաճումները աղնիվ թեմա էին խոսակցությունների համար։ Երբ Մելցին Պիեմոնտի միացման առթիվ իր տարակուսանքներն արտահայտեց Նապոլեոնին, առաջին կոնսուլը ժպտալով պատասխանեց դրան՝ «Ձեռքս ուժեղ է, ծանր բեռն իմ սրտով է»։ Իսպանիան նրան զիջեց Լուիզիանան։ Իրենց մանրամասնություններով քիչ հայտնի, բայց, ըստ երևույթին, դաժանությամբ և ուխտադրժությամբ Ֆիլիպ II*-ին միանգամայն արժանի գործողությունների միջոցով նա վերադարձրեց Ֆրանսիայի տիրապետությունը Սան-Դոմինգոյի նկատմամբ։ Նա լիուն հրավիրեց Այսրալպյան հանրապետության՝ նրա քաղաքական տաղանդի միակ հիրավի գեղեցիկ ստեղծագործու-

թյան, ամենանշանավոր քաղաքացիներին։ Նա խորտակեց ազատության մասին նրանց երազանքները՝ ստիպելով իրեն պրեզիդենտ ընտրել։ Ջենովայի արիստոկրատիային, որն ավելի արգահատելի էր, քան վենետիկյանը, մի որոշ ժամանակ փրկեց նրա ներկայացուցիչներից մեկի ճարպկությունը, որն սկզբից բարեկամացավ Նապոլեոնի հետ, իսկ այնուհետև այդ հայրենասիրական արարքների պատճառով մի քանի տարի շարունակ հալածանքների ենթարկվեց։ Հելվետիան ստիպված էր ընդունել նրա միջնորդությունը։ Բայց խանգարելով ազատության հաստատմանն Իտալիայում, Նապոլեոնը միաժամանակ ցանկանում էր այն վերականգնել Շվեյցարիայում։ Նա կազմեց Վո կանտոնը և այդ սքանչելի երկրամասը, որտեղ ազատությունը պահպանվել է մինչև այժմ, ազատագրեց Բեռնի արիստոկրատիայի նվաստացուցիչ բռնատիրությունից։ Գերմանիան բազմիցս վերաբաժանման ենթարկվեց իր մանր տերերի միջև՝ նայած Նապոլեոնի շահերին, Ռուսաստանի հետաքրքրություններին և Նապոլեոնի մինիստրների ծախվածությանը։

Այդպիսիք էին այդ մեծ մարդու գործողությունները միայն մեկ տարում։

Պարսավագրեր հորինողները և տիկին դը Ստալը այդ գործողությունների մեջ դժբախտություն են տեսնում մարդկային ցեղի համար. արդարացին հակառակն է։ Արդեն մի ամբողջ հարյուրամյակ Եվրոպան կարիք է զգում ոչ այնքան բարի մտադրությունների, որքան եռանդի, որն անհրաժեշտ է հին սովորույթների կույտը տեղից շարժելու համար։ Այսուհետև մեծ հեղաշրջումները հնարավոր կլինեն, եթե միայն դրանք ուղղված լինեն բարքերի բարելավմանը, այլ կերպ ասած՝ մարդկության երջանկության նպատակին։ Յուրաքանչյուր ցնցում, որին ենթարկվում են բոլոր այդ խարխլված կարգերը, դրանց մոտեցնում է իսկական հավասարակշռության[1]։

Պնդում են, որ իբր Լիոնի Կոմիցիաներից վերադառնալուց հետո առաջին կոնսուլը մտադրություն է ունեցել իրեն Գաղիայի

1 Նայենք Նապոլեոնի տապալումից հետո վերականգնված պետություններին. դրանք համեմատեցեք այն բանի հետ, թե նրանք ինչ են եղել նախքան նվաճումը՝ օրինակ՝ Ժենը, Ֆրանկֆուրտը և այլն։ Ժողովրդի իսկական հարստությունը նրա սովորույթների մեջ է։

կայսր հռչակելու։ Այդ մտադրությունը պատշաճ կերպով ծաղրի է ենթարկվել։ Բուլվարներում ծաղրանկար երևաց, որը պատկերում էր ճիպոտով հնդկահավեր քշող մի երեխայի. մակագրությունն ազդարարում էր՝ «L'Empire des Gaules»*։ Կոնսուլական գվարդիան իր քրթմնջոցով նրան հասկացնել տվեց, որ ինքը դեռ չի մոռացել «Կեցցե՛ հանրապետությունը» կոչը, որն այնպես հաճախ նրան հաղթանակի է տարել։ Լանը*՝ նրա գեներալներից ամենաքաջը, որն Իտալիայում երկու անգամ փրկել է Նապոլեոնի կյանքը և կրքոտության հասնող համակրանք էր տածում նրա նկատմամբ, մոլի մի հանրապետական, բուռն տեսարան սարքեց։

Բայց ստրկամիտ Սենատը և անհոգությամբ համակված ժողովուրդը Նապոլեոնին հռչակեցին ցմահ կոնսուլ՝ իրեն փոխանորդ նշանակելու իրավունքով։ Այժմ նրան արդեն ոչինչ չէր մնում ցանկալ՝ բացի փքուն տիտղոսից։ Այն արտասովոր իրադարձությունները, որ մենք կշարադրենք, շուտով նրան կայսերական ծիրանի հագցրին[1]։

ԳԼՈՒԽ XXIV

Առաջին կոնսուլի չափավորությունը, որն այնպես խիստ տարբերվում էր նախորդ կառավարությունների բռնություններից, միապետականներին անխոհեմ ու անսասան հույսեր ներշնչեց։ Հեղափոխությունը գտել էր իր Կրոմվելին. նրանք այնքան հիմար էին, որ նրա մեջ տեսնում էին գեներալ Մոնկին*։ Համոզվելով, որ սխալվել են, նրանք սկսեցին միջոց փնտրել վրեժ լուծելու* իրենց խաբված հույսերի համար և նույնիսկ մտքներով անցկացրին դժոխային մեքենան։ Մի անգամ ինչ-որ մի անծանոթ իրեն հանդիպած պատանուն խնդրեց տանել սայլակը, որի մեջ տակառիկ կար։ Դեպքը տեղի էր ունենում ուշ երեկոյան, Սեն-Նիկեզ փողոցի անկյունում. տեսնելով, որ առաջին կոնսուլի կառքը Տյուիլրիից դուրս գալով ուղևորվեց դեպի Օպերա, անծանոթն արագ հեռացավ։ Կոնսուլի կառապանը, փոխանակ կանգ առնելու անցումին խանգարող սայլակի առջև, առանց երկար մտածելու, ձիերին խթանեց՝ ոիսկի ենթարկելով շրջել այն[2]։ Երկու վայրկյան անց տա-

1 Թերևս, «շուտով»-ը ջնջել։

2 Տե՛ս Լասկազին։

կառիկը պայթեց խլացուցիչ դղրդյունով։ Դժբախտ պատանին և մոտ երեսուն պատահական անցորդներ կտոր-կտոր եղան։ Առաջին կոնսուլի կառքը, ընդամենը մոտ քսան ոտնաչափ հեռանալով սայլակից, փրկվեց, որովհետև հասցրել էր շրջվել Մալթիական փողոցի անկյունը։ Նապոլեոնը միշտ կարծում էր, որ այդ գործում խառն է եղել անգլիական մինիստր Ուինդհեմը։ Նա այդ մասին ասել է Ֆոքսին այն հայտնի խոսակցության ժամանակ, որ տեղի է ունեցել Տյուիլրիի պալատում այդ երկու մեծ մարդկանց միջև։ Ֆոքսն սկզբում համառորեն ժխտում էր Ուինդհեմի մասնակցությունը, իսկ հետո սկսեց գովաբանել անգլիական կառավարության հանրահայտ ազնվությունը։ Նապոլեոնը, որը բարձր էր գնահատում Ֆոքսին, քաղաքավարությունից ծիծաղը զսպեց[1]։

Հաշտությունն Անգլիայի հետ, որը կնքվեց այս իրադարձություններից անմիջապես հետո, վերջ դրեց միապետականների դավերին, բայց որոշ ժամանակ անց, երբ նորից բռնկվեց պատերազմը, դավադրությունները վերսկսվեցին։ Ժորժ Կադուդալը[2]*, Պիշեգրյուն և մյուս վտարանդիները թաքուն ժամանեցին Փարիզ։ Սկզբում մի կողմ կանգնած Մորոն, իր շտաբի սպաների ազդեցության տակ, որոնք նպատակադրվել էին նրա մեջ պատվախնդրություն բորբոքել, ինքն իրեն հավատացրեց, որ առաջին կոնսուլի թշնամին է, և դարձավ նրանց հանցակիցը։ Փարիզում տեղի էին ունենում խորհրդակցություններ, որտեղ քննարկվում էին Նապոլեոնի սպանության և պետական նոր կարգի հաստատման պլաններ*։

ԳԼՈՒԽ XXV[3]

Պիշեգրյուն և Ժորժը կալանավորվեցին։ Պիշեգրյուն խեղդամահ եղավ Տամպլ բանտում, Ժորժը գլխատվեց, Մորոն դատվեց

1 Ճշմարտությունն այս գործի մասին պարզ կդառնա հետագայում։ Դրան սպասելով, կարող եք կարդալ կոմս դը Բոբանի «Նոթերը» (Բոբանը վտարանդիների համար նույնն էր, ինչ որ գեներալ (անը՝ հանրապետականների համար), ինչպես նաև պ-ն դը Մոնգալյարի պամֆլետները։

2 Կադուդալի ընտանիքը նորին մեծություն Լյուդովիկոս XVIII թագավորի ազգականությամբ վերջերս ազնվական կոչում ստացավ։

3 Այն ամենը, ինչ հետևելու է սրան՝ միացնել Լասկազի հետ։ 30 հունիսի 1812։

ու դատապարտվեց բանտարկության։ Այն փոխարինվեց արտաքսումով, և նա մեկնեց Ամերիկա։ Էնգիենի դուքսը՝ արքայազն Կոնդեի թոռը, որն ապրում էր Բադենի դքսության տարածքում, Ֆրանսիայից մի քանի մղոն հեռավորության վրա, բանտարկվեց ֆրանսիական ժանդարմների կողմից, տարվեց Վենսեն, դատի տրվեց, դատապարտվեց և, որպես վտարանդի ու դավադիր, գնդակահարվեց։ Ինչ վերաբերում է դավադրության ավելի մանր մասնակիցներին, ապա դրանցից ոմանք մահապատժի ենթարկվեցին, իսկ մեծամասնությանը ներում շնորհվեց։ Մահապատիժները փոխարինվեցին բանտարկությամբ։ Կապիտան Ռայտը, որն ափ էր իջեցրել խռովարարներին և, ըստ ամենայնի դատելով, տեղյակ էր նրանց մտադրություններին, բռնվեց Ֆրանսիայի ափերի մոտ։ Նա ավելի քան մեկ տարի նստեց Տամպլի աշտարակում, և նրա հետ այնպես դաժան վարվեցին, որ ինքնասպան եղավ։

Այդ դավադրության բացահայտումը Նապոլեոնին հնարավորություն տվեց իրականացնել իր փառասիրական մտահղացումներից վերջինը՝ մեծագույնը. նա հռչակվեց Ֆրանսիայի կայսր, և նրա իշխանությունը ժառանգական հայտարարվեց։ «Այս խորամանկը,— ասաց նրա դեսպանորդներից մեկը,— ամեն ինչից կարողանում է օգուտ քաղել»։

Այդպիսին էր, ինչպես ինձ թվում է, այդ մեծ իրադարձությունների իսկական ընթացքը[1]։ Եվ այնուամենայնիվ ասեմ, որ ճշմարտությունը Բոնապարտի մասին կարող է լիովին հայտնի դառնալ հարյուր տարուց ոչ շուտ։ Որևէ հավաստի ապացույցի՝ թե Պիշեգրյուի կամ կապիտան Ռայտի մահն իրենց սեփական ձեռքի գործը չի եղել, ես ոչ մի տեղ չեմ հանդիպել[2]։

1 Մի այլ տեղ. Նապոլեոնը պետք է խիստ զգար Լյուսիենի բացակայությունը, որին ինքը հեռացրել էր շատ բնական նախանձի և Բոհառնեի կուսակցության մեքենայությունների ազդեցության տակ։ Լյուսիենն ուներ այն հատկություններից մի քանիսը, որ լուներ Նապոլեոնը, և կխանգարեր նրան ենթարկվել ճակատագրական կուրացումին, որն ասիճանաբար նրան վերածեց շարքային բռնակալի (Ժամանակակիցների կենսագրությունները, I, 543)։

2 Թվում է, թե երբեք ավելի շատ բարերարություններն ավելի շատ իրավունքներ չեն հաստատել Ֆրանսիայի երջանկության համար Նապոլեոնը պետք է մեռներ այն ժամանակ, երբ նա Բուլոնյան ճամբարում զբաղվում էր իր հիանալի բանակի միապետականացմամբ (Դոմինիկ)։

Ի՞նչը կարող էր Նապոլեոնին հարկադրել հրամայելու թաքուն մեռցնել գեներալ Պիշեգրյուին։ Առաջին կոնսուլը, որի անսասան բնավորությունը սարսափեցնում էր ողջ Եվրոպան ու Ֆրանսիան, քաղաքական մեծագույն սխալ գործած կլիներ, եթե իր թշնամիներին առիթ տար իրեն մեղադրելու հանցագործության մեջ։ Բանակի սերը Պիշեգրյուի հանդեպ խախտվել էր նրա երկարատև բացակայությամբ և վերջնականապես խորտակվել այն չարագործությամբ, որը Ֆրանսիայում երբեք չեն ներում՝ բացահայտ, անվիճելի կապը հայրենիքի թշնամիների հետ։ Ամեն մի զինվորական դատարան, ամենաանաչառը, անտարակույս, գեներալ Պիշեգրյուին կդատապարտեր մահվան՝ որպես հայրենիքի թշնամիների հետ կապերի մեջ մտած դավաճանի, կամ որպես դավադրի, որը մտադրվել է տապալել օրինական կառավարությունը, կամ էլ, վերջապես, որպես հանրապետության տարածքը ինքնակամ վերադարձած աքսորյալի։ Ճիշտ է, ասում են, որ իբր Պիշեգրյուն խոշտանգվել է, իբր հրացանի հրահանգով ճզմել են նրա երկու ձեռքի բութ մատները, և Նապոլեոնը, իբր, վախենում էր, որ հանկարծ այդ դաժանությունները հայտնի կդառնան։ Ի դեպ նշեմ, որ խոշտանգումների անմարդկային սովորությունը Ֆրանսիայում վերացվել է միայն հեղափոխության ժամանակներից, և որ եվրոպական տիրակալների մեծամասնությունն իր դեմ ուղղված դավադրությունների հետաքննությունների ժամանակ դեռևս օգտվում է դրանից։ Վերջապես, ավելի լավ է ռիսկի ենթարկվել՝ մեղադրվելու դաժանության, քան սպանության մեջ. դաժանությունը հեշտությամբ կարելի էր գցել ստորին աստիճանավորներից որևէ մեկի վրա, որը հետո պատիժ կկրեր։ Դատարանը կարող էր մահվան դատապարտել Պիշեգրյուին, մի պատիժ, որը միանգամայն օրինական է ժողովրդի աչքին, իսկ այնուհետև կարելի էր մահապատիժը ցմահ բանտարկությամբ փոխարինել։ Հարկավոր է ասել, որ խոշտանգումների միջոցով կարևոր խոստովանություններ ձեռք բերելու հաշիվներն իրենց չեն արդարացնում, երբ խոսքն այնպիսի կոփվածքի տեր մարդկանց մասին է, ինչպիսին Պիշեգրյուն է։ Այդ նողկալի միջոցի կիրառումը միայն կկրկնապատկեր գեներալի տոկունությունը, ինչպես դա պատահում է պատանի խիզախ վայրենիների հետ։ Տամպլում պահվող անգլիացիներն ու ֆրանսիացիները տեսել են Պիշեգրյուի դիակը, և

վստահության արժանի ոչ մեկը չհայտնեց, որ դրա վրա խոշտանգումների հետքեր է նկատել։

Ինչ վերաբերում է կապիտան Ռայտի գործին, ապա դրան պետք է քիչ ավելի հանգամանորեն անդրադառնալ։ Ռայտը ո՞չ դավաճան է եղել, ո՞չ էլ լրտես. նա բացահայտ ծառայել է իր կառավարությանը, որը Ֆրանսիայի հետ պատերազմական վիճակում էր։ Անգլիացիները պնդում են, որ այն ժամանակ, երբ Բուրբոնները Ստյուարտների տան հավակնորդներին աջակցություն էին ցույց տալիս Անգլիայի սահմանադրության և կրոնի դեմ ուղղված հաճախակի հանցափորձերում, իրենց կառավարությունը երբեք չափից դուրս դաժանություն չի դրսևորել Ստյուարտներին ծառայող գերված ֆրանսիացիների նկատմամբ։ Երբ Կելլոդենի* ճակատամարտի երջանիկ ելքը, ի հակադրություն Վաթերլոոյի ճակատամարտի ելքի, վերջ դրեց անգլիական վտարանդիների վերջին հույսերին, հավակնորդի մոտ ծառայության մեջ գտնվող ֆրանսիացիները համարվեցին ռազմագերիներ և նրանց համար ճիշտ նույնպիսի ռեժիմ սահմանվեց, ինչպես որ Ֆլանդրիայում կամ Գերմանիայում գերվածների համար։ Դրան ես կպատասխանեմ, որ հազիվ թե այդ ֆրանսիացի սպաներից որևէ մեկը գերված լինի այն պահին, երբ մասնակցում էր Անգլիայի ապօրինի թագավորի դեմ ուղղված մահափորձին։ Կարելի է խոսել այն մասին, որ Նապոլեոնը հրամայել է խիստ դաժան վարվել բանտարկված Ռայտի հետ, բայց, դատելով նրանից, թե վերջին երկու տարում ինչ է արվել Իսպանիայում ու Ֆրանսիայում, հարկ չկա կասկածելու, որ օրինական թագավորները դժբախտ կապիտանի նկատմամբ էլ ավելի զայրացուցիչ դաժանություն կդրսևորեին։ Ոչ մի ապացույց չկա, որ Նապոլեոնն է կարգադրել նրան սպանել։ Նա ի՞նչ կարող էր շահել այդ չարագործությունից, որը (նա բավականաչափ լավ գիտեր անգլիական մամուլը) անխուսափելիորեն պետք է թնդար Եվրոպայով մեկ։

Հաջորդ, շատ պարզ նկատառումը վճռական է. եթե այդ հանցագործությունը իրոք կատարված լիներ, մի՞թե մենք 1818 թվականին ստիպված կլինեինք փնտրել դրա ապացույցը։ Մի՞թե Պիշեգրյուին կամ կապիտան Ռայտին պահպանող բանտապանները բոլորն էլ առանց բացառության մեռել են։ Ֆրանսիական ոստիկանությունը ղեկավարում է ականավոր մի մարդ*, սակայն այդ մարդկանցից և ոչ մեկը հրապարակորեն չի հարցաքննվել։

Այսպես է նաև նրանց հարցը, ում իբր թե հանձնարարված է եղել մեռցնել Պիշեգրյուին և կապիտան Ռայտին։ Մի՞թե Բուրբոնների կառավարությունն այն պատճառով չի դիմում այդքան հասարակ միջոցի, որ խնայում է Նապոլեոնի բարի անունը։ Ինչպես հայտնի է, դժբախտ գեներալ Բոնների* դատավարության ժամանակ զինվորներն առանց որևէ հարկադրանքի ցուցմունք տվեցին, որ շատ լավ են հիշում Գորդոնի գնդակահարությունը, նրանք այդ մասին ցուցմունք տվեցին այն դատավորներին, որոնք իրենց կարող էին գնդակահարության դատապարտել։

ԳԼՈՒԽ XXVI

Ս. Հելինեի կղզում բժիշկ Ուորդենը, ըստ ամենայնի դատելով, մի իսկական անգլիացի, այլ կերպ ասած՝ սառնասիրտ, սահմանափակ, օրինավոր և Նապոլեոնին ատող մի մարդ, մի առիթով վերջինիս ասել է, որ ոչինչ, նույնիսկ սուրբ ավետարանում ամփոփված ճշմարտություններն իրեն այնքան ակնառու չեն թվում, որքան նրա՝ Նապոլեոնի, շարագործությունները։ Ուորդենը, իր կամքին հակառակ, իր զրուցակցի հոգու վեհությամբ և վարվեցողության պարզությամբ հիացած, այնքան տարվեց, որ սկսեց ավելի հանգամանորեն զարգացնել իր միտքը[1]։ Նապոլեոնին դա, ըստ երևույթին, դուր եկավ, և նա իբրև պարգև անկեղծության համար, ի մեծ զարմանս Ուորդենի, նրան հարցրեց, թե հիշո՞ւմ է արդյոք կապիտան Ռայտի գործը։ «Ես պատասխանեցի. շատ լավ եմ հիշում, և Անգլիայում չկա որևէ մեկը, որը համոզված չլիներ, որ նրան Տամպլում ձեր հրամանով են մեռցրել»։ Նապոլեոնն աշխուժորեն առարկեց. «Հանուն ինչի՞։ Նրա կյանքն ինձ ավելի շատ էր հարկավոր, քան ուրիշ որևէ մեկինը։ Էլ որտեղի՞ց կարող էի ավելի արժանահավատ վկա գտնել դավադրության դատավարության համար, որի շուրջն այն ժամանակ հետաքննություն էր կատարվում։ Ոչ այլ ոք, քան նա է Ֆրանսիայի ափը հասցրել դավադրության պարագլուխներին։ — Լսեք ինձ,— շարունակեց Նապոլեոնը,— և դուք ամեն ինչ կիմանաք։ Ձեր կառավարությունը բրիգ է ուղարկել կապիտան Ռայտի հրամանատարությամբ. նա մարդասպանների ու լրտես-

[1] 6-րդ հրատ., Ակկերմանի մոտ, էջ 128։

ների հրոսակախումբ է իջեցրել Ֆրանսիայի արևմտյան ափին։ Դրանցից յոթանասուն հոգի կարողացան թափանցել Փարիզ, և ամեն ինչ այնպես ճարպկորեն կատարվեց, որ, թեև կոմս Ռեալը, որը ղեկավարում էր ոստիկանությունը, ինձ հայտնել էր նրանց ժամանման մասին, անհնար էր պարզել, թե նրանք որտեղ են թաքնվում։ Ամեն օր ես իմ մինիստրներից զեկուցագրեր էի ստանում, որոնց մեջ նրանք ինձ հայտնում էին, թե իմ դեմ մահափորձ է պատրաստվում, և, թեպետ դա ինձ ավելի քիչ էր հավանական թվում, քան նրանց, ես, այնուամենայնիվ, միջոցներ ձեռնարկեցի իմ անվտանգությունն ապահովելու համար։ Այնպես պատահեց, որ այն բրիգը, որի հրամանատարն էր կապիտան Ռայտը, բռնվեց Լորիանի մոտակայքում։ Հրամանատարը տարվեց Վանն, Մորբիգանի պրեֆեկտի մոտ։ Պրեֆեկտը՝ գեներալ Ժյուլիենը, որն ինձ ուղեկցել էր Եգիպտոսի արշավանքի ժամանակ, հանձին նրա անմիջապես ճանաչեց կապիտան Ռայտին։ Գեներալ Ժյուլիենին կարգադրված էր առանձին-առանձին հարցաքննել անգլիական անձնակազմի յուրաքանչյուր նավաստու և յուրաքանչյուր սպայի ու նրանց ցուցմունքները ներկայացնել ոստիկանության մինիստրին։ Սկզբում նրանց հայտարարությունները կարևոր չթվացին, սակայն վերջում նավաստիներից մեկի վկայությունը տվեց այն, ինչ փնտրվում էր։ Նա ցուցում տվեց, որ բրիգն ափ է իջեցրել մի քանի ֆրանսիացու, որոնցից նա հատկապես հիշում էր մեկին՝ մարդամոտ, ուրախ մի մարդու, որի անունը Պիշեգրյու էր։ Այդ անունը հնարավորություն տվեց բացահայտել դավադրությունը, որը, եթե հաջողվեր, ֆրանսիական ժողովրդին կրկին կմատներ հեղափոխության բոլոր անակնկալներին։ Կապիտան Ռայտն ուղարկվեց Տամպլ. այնտեղ նա պետք է պահվեր այնքան ժամանակ, մինչև որ տեղին համարեին դավադիրների դատավարության նշանակումը։ Ֆրանսիական օրենքներով Ռայտը պետք է կառափնարան բարձրանար։ Բայց այդ մանրամասնությունը ոչ մի նշանակություն չուներ։ Կարևորը դավադրության պարագլուխներին բռնելն էր»։ Վերջում կայսրը մի քանի անգամ կրկնեց Ուորդենին, որ կապիտան Ռայտն ինքն է վերջ տվել իր կյանքին, ինչպես այդ մասին ասվել է «Moniteur»-ում, ընդ որում շատ ավելի վաղ, քան ընդհանրապես կարծում են։

Երբ Էլբա կղզում լորդ Էբրինգտոնը կայսեր հետ ունեցած

զրույցում հիշատակեց կապիտան Ռայտի մահվան մասին, Նապոլեոնն սկզբում չէր կարողանում մտաբերել, թե ով է եղել այդ անգլիացին, բայց երբ նրան հայտնեցին, որ Ռայտը եղել է սըր Սիդնեյ Սմիթի* օգնականներից մեկը, նա ասաց. «Ինչպե՞ս Մի՞թե նա բանտում է մեռել։ Ես բոլորովին մոռացել եմ այդ ողջ պատմությունը»։ Նա կտրականապես մերժեց ամեն մի ենթադրություն այն մասին, որ բռնություն է գործադրվել, և ավելացրեց, որ իր հրամանով երբեք ոչ ոք չի սպանվել թաքուն և առանց դատավճռի։ «Այդ տեսակետից խիղճս մաքուր է. եթե ես այդպիսի զզվանք չզգայի արյունահեղության նկատմամբ, հնարավոր է, որ այժմ այստեղ չլինեի»։

Պ-ն դը Մոբրեյլի* ցուցմունքները կարող էին հանգեցնել այն մտքին, որ սպանության նկատմամբ զզվանքն այնքան էլ տարածված չէ, ինչպես դա ընդունված է կարծել[1]։

ԳԼՈՒԽ XXVII

Բժիշկ Ուորդենը հայտնում է, որ, պատմելով կապիտան Ռայտի մասին, Նապոլեոնը, ի մեծ զարմանս իրեն, սկսեց խոսել Էնգիենի դքսի մահվան մասին։ Նա խոսում էր կրքոտ՝ հաճախակի վեր կենալով օթոցից, որի վրա պառկած էր։ «Իրադարձություններով այնքան հարուստ իմ կյանքի այդ շրջանում[2] ինձ հաջողվեց նորից կարգուկանոն և հանգստություն մտցնել կուսակցությունների պայքարից մինչև հիմքերը խարխլված և արյունով ողողված պետության մեջ։ Մեծ ժողովրդի կամքով ես նրա գլուխ կանգնեցի։ Նկատի առեք, ես գահին հասա ոչ այնպես, ինչպես ձեր Կրոմվելը կամ Ռիչարդ III-ը։ Ոչ մի նմանություն. ես թագը գտա կեղտաջրի առվում, մաքրեցի կեղտից, որով այն ծածկված էր, և դրեցի գլխիս։ Իմ կյանքն անհրաժեշտ էր լոկ վերջերս վերականգնված կարգուկանոնը պահպանելու համար, որը ես (նրանք, ովքեր Ֆրանսիայում գլխավորում էին հասարակական կարծիքը, դա խոստովանում էին) այնքան հաջողությամբ ամրապնդեցի։ Այդ ժամանակ ամեն երեկո ինձ ներկայացնում էին զեկուցագրեր, որոնց մեջ հայտնում էին, որ իմ դեմ դավեր են

1 Տե՛ս պ-ն դը Մոբրեյլի՝ մարկիզ դ'Օլեի ցուցմունքները, որոնք սղագիր և ձեռագիր վիճակում շրջանառության մեջ են դրվել Փարիզում։

Զգո՞ւշ. գերզգո՞ւշ։

2 Ուորդեն, էջ 144։

նյութվում, որ Փարիզում մասնավոր տներում խորհրդակցություններ են տեղի ունենում։ Եվ, սակայն, ոչ մի կերպ չէր հաջողվում դրա համար բավարար ապացույցներ ձեռք բերել։ Անխոնջ ոստիկանության բոլոր ջանքերը ոչ մի արդյունքի չէին հանգեցնում։ Իմ մինիստրներն այնքան հեռուն գնացին, որ սկսեցին կասկածել գեներալ Մորոյին։ Նրանք բազմիցս ինձ համոզում էին ստորագրել նրա ձերբակալման հրամանը։ Բայց այդ գեներալն այն ժամանակ Ֆրանսիայում մեծ փառք էր վայելում, և, ինձ թվում էր, իմ դեմ ուղղված դավադրությանը մասնակցելը կարող էր նրան զրկել ամեն ինչից և ոչինչ չտալ։ Ես հրաժարվեցի ստորագրել նրա ձերբակալման հրամանը. ոստիկանության մինիստրին ասացի. «Դուք տվեցիք Պիշեգրյուի, Ժորժի և Մորոյի անունները. ինձ ապացույցներ ներկայացրեք, որ նրանցից առաջինը գտնվում է Փարիզում՝ և ես անհապաղ կկարգադրեմ ձերբակալել երրորդին»։ Դավադրությունը բացահայտվեց մի արտասովոր հանգամանքի շնորհիվ։ Մի անգամ գիշերը ես ինչ-որ տագնապ էի զգում և չէի կարողանում քնել. վեր կացա անկողնուց և սկսեցի աչքի անցկացնել դավադիրների ցուցակը։ Պատահականությանը, որ վերջին հաշվով կառավարում է աշխարհը, հաճելի էր, որ հայացքս կանգ առներ գնդի մի բժշկի անվան վրա, որը բոլորովին վերջերս էր վերադարձել Անգլիայից, որտեղ նա բանտարկված է եղել։ Այդ մարդու տարիքը, նրա դաստիարակությունը, կենսափորձը, այս ամենն ինձ հանգեցրեց այն մտքին, որ նրա վարքագիծը բացատրվում է այնպիսի պատճառներով, որոնք ընդհանուր ոչինչ չունեն Բուրբոնների հանդեպ տածած պատանեկան ակնածության հետ։ Որքան հանգամանքներն ինձ թույլ տվեցին դատելու նրա մասին, նրա գործողությունների նպատակը պետք է փողը լիներ։ Այդ մարդուն ձերբակալեցին։ Նրան դատեց այն դատարանը, որտեղ նիստեր էին անում ոստիկանական գործակալները, որոնց դատավորների հանդերձ էին հագցրել. նրանք մահապատժի դատապարտեցին նրան և հայտնեցին, որ դատավճիռն ի կատար կածվի վեց ժամից հետո։ Այդ խորամանկությունը հաջողություն ունեցավ. նա խոստովանեց։

Հայտնի էր, որ Պիշեգրյուն Փարիզում նրբայր ունի՝ բոլորովին մենակյաց մի ծեր վանական։ Այդ վանականը ձերբակալվեց, և այն պահին, երբ ժանդարմները նրան տանում էին, նա բերանից բողոք թոցրեց, որը վերջապես բացահայտեց այն, ինչ ինձ հա-

մար այնքան կարևոր էր իմանալ. «Ահա թե ինչպես են վարվում ինձ հետ այն պատճառով, որ ես ապաստան եմ տվել հարազատ եղբորս»։

Առաջին զեկույցն այն մասին, որ Պիշեգրյուն Փարիզ է ժամանել, ստացվեց ոստիկանական լրտեսից, որը տեղեկացրեց Թաքուն լսած այն զրույցի մասին, որ տեղի էր ունեցել բուլվարներից մեկում գտնվող մի մասնավոր տանը՝ Մորոյի, Պիշեգրյուի և Ժորժ Կադուդալի միջև։ Այդ զրույցի ժամանակ որոշվել է, որ Ժորժը վերջ կտա Բոնապարտին, Մորոն կլինի առաջին կոնսուլը, իսկ Պիշեգրյուն՝ երկրորդը։ Ժորժը պնդում էր, որ իրեն երրորդ կոնսուլ նշանակեն, բայց մյուս երկուսն առարկեցին, ասելով, թե, քանի որ նա հայտնի է որպես միապետական, նրան կառավարության մեջ մտցնելու ամեն մի փորձ իրենց բոլորին կհեղինակազրկի հասարակական կարծիքի առջև։ Այդ ժամանակ տաքարյուն Ժորժը բղավեց. «Դե եթե պիտի ջանամ ոչ ինձ համար, ապա ես Բուրբոնների կողմն եմ։ Իսկ եթե ո՛չ նրանց և ո՛չ էլ ինձ համար, այլ հանուն այն բանի, որ կապույտների մի խումբ փոխարինվի մյուսով, այդ դեպքում ավելի լավ է Բոնապարտը լինի, քան դուք»։ Երբ Մորոն ձերբակալվեց ու հարցաքննվեց, սկզբում ամբարտավանորեն էր պատասխանում, բայց երբ ներկայացրին այդ զրույցի գրառումը, նա ուշաթափվեց։

«Դավադրության նպատակը,— շարունակեց Նապոլեոնը,— իմ կործանումն էր, և, եթե չբացահայտեին, կպսակվեր հաջողությամբ։ Այդ դավադրությունը սկիզբ էր առնում ձեր պետության մայրաքաղաքից։ Դրա գլուխ էր կանգնած կոմս Անգումուան[1]*։ Նա արևմուտք ուղարկեց Բուրգունդիայի դքսին*, իսկ արևելք՝ Էնգիենի դքսին։ Ձեր նավերը Ֆրանսիա ափհանեցին դավադրության նվազ ականավոր մասնակիցներին։ Պահն ինձ համար կարող էր ճակատագրական դառնալ. զգացի, որ իմ գահը երերվեց։ Ես որոշեցի Բարմակների՝ ինձ համար նախատեսած հարվածը ուղղել իրենց դեմ՝ թեկուզև դա լիներ Բրիտանական կայսրության մետրոպոլիայում։

Մինիստրները պնդում էին, որ ես հրամայեմ ձերբակալելու Էնգիենի դքսին, թեև նա ապրում էր չեզոք տարածքում։ Ես, այնուամենայնիվ, տատանվում էի։ Բենեվենտի իշխանը* երկու

1 Ուորդեն, էջ 147։

անգամ ինձ բերեց հրամանը և իրեն հատուկ ոգջ եռանդով ինձ համոզում էր ստորագրել։ Ես շրջապատված էի մարդասպաններով, որոնց չէի կարողանում հայտնաբերել։ Միայն այն ժամանակ զիջեցի, երբ համոզվեցի, որ դա անհրաժեշտ է։

Ես կարող էի հեշտությամբ հարթել այդ գործը Բադենի դքսի հետ։ Հանուն ինչի՞ պետք է հանդուրժեի, որ իմ կայսրության սահմանի վրա ապրող անձնավորությունը կարողանա անարգել հանցագործություն կատարել, որը, եթե նա մեկ մղոնով ավելի մոտ ապրեր ինձ, նրան կառափնարան կտաներ։ Մի՞թե այս գործում ես չեմ կիրառել այն նույն սկզբունքը, որն իրականացրել է ձեր կառավարությունը՝ երբ հրամայեց գրավել դանիական նավատորմիղը։ Իմ ականջները տարան հավաստիացումներով, թե նոր դինաստիան չի կարող ամրապնդվել, քանի դեռ գեթ մի Բուրբոն կմնա։ Թալեյրանը մշտապես հետևում էր այս սկզբունքին, որը նրա քաղաքական համոզմունքների հիմքն էր, անկյունաքարը։ Ես ամենայն ուշադրությամբ կշռադատեցի այս հարցը և մտորումներից հետո լիովին միացա Թալեյրանի կարծիքին։ Ինքնապաշտպանության իմ օրինական իրավունքը, արդարացի հոգատարությունը հասարակության հանգստության համար՝ ինձ ստիպեցին վճռական միջոցներ ձեռնարկել Էնգիենի դքսի դեմ։ Ես հրամայեցի ձերբակալել նրան ու դատ նշանակել։ Նա մահվան դատապարտվեց ու գնդակահարվեց. ճիշտ այդպես կվարվեին նրա հետ, եթե նա նույնիսկ Լյուդովիկոս IX*-ը լիներ[2]։ Լոնդոնից ինձ մոտ ուղարկեցին մարդասպաններ՝ կոմս Անգումուայի գլխավորությամբ։ Մի՞թե մարդասպանության դեմ ուղղված բոլոր միջոցներն օրինական չեն»։

ԳԼՈՒԽ XXVIII

Այս սպանությունը որևէ կերպ կարելի էր արդարացնել, եթե հաջողվեր ապացուցել, որ Էնգիենի դուքսը մասնակից է եղել Նապոլեոնի դեմ ուղղված դավադրությանը։ Դատավճռում, որը կայացվել էր Վենսենի դղյակում, այդ ապացույցները հիշատակ-

1 Հիշեցեք Նիմի կոտորածը։ Դրա լավագույն նկարագրությունը տվել է Լոնդոնի մի ոմն... բողոքական պաստոր։ Տե՛ս գեղապետ Ֆավիեի երկը՝ «Լիոնը 1817 թվականին»։

2 Ուորդեն, 6-րդ հրատ., էջ 149։

վում են, բայց դրանք երբեք չեն հրապարակվել։ Մեկ ուրիշ անգամ այս գործի մասին Նապոլեոնն ասել է լորդ Էբրինգտոնին. «Էնգիենի դուքսը մասնակցել է իմ դեմ ուղղված դավադրությանը։ Նա երկու անգամ շորերը փոխած ծպտյալ ժամանել է Ստրասբուրգ։ Այդ պատճառով էլ ես հրամայել եմ ձերբակալել նրան և հանձնել ռազմական դատարանին, որը նրան դատապարտեց մահապատժի։ Ինձ հայտնել են, որ նա տեսակցություն է խնդրել ինձ հետ. դա ինձ վրա տպավորություն գործեց, քանի որ գիտեի, որ նա արժանավոր և քաջարի մարդ է։ Ես նույնիսկ կարծում եմ, որ, հնարավոր է, կհամաձայնվեի տեսակցել նրա հետ, բայց պարոն Թալեյրանն արգելք հանդիսացավ՝ հայտարարելով. «Չի կարելի, որ դուք ձեզ արատավորեք Բուրբոնների տան անդամի հետ հանդիպելով։ Դուք չգիտեք, թե ինչպիսի հետևանքներ կարող է դա ունենալ։ Երբ գինին լցված է՝ պետք է խմել»։ Լորդ Էբրինգտոնը հարցրեց, թե ճիշտ է արդյոք, որ դուքսը գլխակահարվել է օրը ցերեկով։ Կայսրն աշխուժորեն առարկեց. «Ո՛չ, ո՛չ։ Դա օրենքի խախտում կլիներ. մահապատիժն ի կատար է ածվել ընդունված ժամին, ես հրամայել էի, որ մահապատժի վերաբերյալ հաղորդագրությունն ու դատավճիռն անհապաղ փակցվի Ֆրանսիայի բոլոր քաղաքներում»։ Հարկավոր է նշել հետևյալ հանգամանքը. այդ, ինչպես և մի շարք այլ զրույցներում, որոնք վերաբերում էին նույն նյութին, Նապոլեոնը կարծես անկեղծորեն համոզված էր, որ Էնգիենի դքսի հետ հանդիպելը հավասարազոր կլիներ նրան ներելուն։ Խիստ բարեպաշտ թագավոր Հակոբ II-ը այլ կերպ էր դատում, երբ համաձայնվում էր ունկընդրություն տալ իր եղբոր սիրելի որդուն՝ նախապես հաստատ որոշելով, որ կկարգադրի նրան գլխատել, հենց որ նա դուրս գա իր առանձնասենյակից։ Բանն այն է, որ գթասրտությունը կարող է զուգակցվել միայն վսեմ արիության հետ։

ԳԼՈՒԽ XXIX

«Ձեր հայրենիքում,— շարունակեց կայսրը,— ինձ մեղադրում են նաև Պիշեգրյուի մահվան համար»։ «Անգլիացիների ճնշող մեծամասնությունը հաստատ համոզված է, որ նրան խեղդել են Տամպլում ձեր հրամանով»։ Նապոլեոնը եռանդով պատասխանեց. «Ինչպիսի՞ հիմար հերյուրանք։ Ահա ձեզ լավագույն ապացույցն այն բանի, թե կրքերն ինչ աստիճան կարող են մթագնել դատողությունների ճշտությունը, որով այնպե՞ս հպարտանում են անգլիացիները։ Ինչո՞ւ պետք է ես շարամտորեն սպանեի մի մարդու, որն իր երկրի բոլոր օրենքներով անխուսափելիորեն պետք է կառափնարան բարձրանար։ Ձեր հայրենակիցների մոլորությունը ներելի կլիներ, եթե խոսքը Մորոյին վերաբերեր։ Եթե այդ գեներալը բանտում մահանար, հիմքեր կլիներին կասկածելու ինքնասպանության մեջ։ Մորոն սիրված էր ժողովրդի ու բանակի կողմից, և ինձ երբեք չէին ների, եթե նա մեռներ բանտի խավարում, թեև ես բոլորովին մեղավոր չէի լինի դրա համար»։

«Նապոլեոնը,— իր պատմությունը շարունակում է Ուորդենը,— լռեց, և ես առարկեցի նրան. «Կարելի է ձեզ հետ համաձայնել, գեներալ, որ ձեր գործունեության այդ շրջանում անողոք միջոցառումներ էին պահանջվում, բայց ոչ ոք, կարծում եմ, չի փորձի արդարացնել այն շտապողականությունը, որով Էնգիենի երիտասարդ դուքսը բռնվեց, դատվեց ու մահապատժի ենթարկվեց»։ Նա կրքոտ պատասխանեց. «Ես համոզված եմ իմ իրավացիության մեջ և նորից եմ կրկնում արդեն արտահայտած իմ այն պնդումը, որ ես նույնպիսի սառնասրտությամբ կկարգադրեի մահապատժի ենթարկել Լյուդովիկոս IX-ին։ Հանուն ինչի՞ էին նրանք մտադրվել սպանել ինձ։ Այդ երբվանի՞ց չի կարելի կրակել մարդասպանի վրա, որը մահափորձ է կատարում ձեր կյանքի դեմ։ Նույնպիսի վճռականությամբ ես պնդում եմ, որ Էնգիենի դքսի դատապարտումից հետո նրանից ո՛չ մի դիմում, ո՛չ մի նամակ չեմ ստացել»։

Ուորդենն ավելացնում է. «Ասում են, թե իբր Թալեյրանի մոտ է գտնվում այն նամակը, որ դուքսը հասցեագրել է Նապոլեոնին, բայց որը մինիստրը, պատասխանատվությունից չվախենալով, կայսրին է հանձնել միայն այն ժամանակ, երբ այն գրող ձեռքն արդեն փայտացել էր։ Ես այդ նամակի պատճենը տեսել եմ կոմս Լասկազի ձեռքին։ Նա այն ինձ ցույց տվեց անվրդով տեսքով՝ որպես մեկն այն բազմաթիվ գաղտնի փաստաթղթերից, որոնք կարող էին պարզաբանել այն պատմության որոշ մանվածապատ տեղերը, որ ինքը գրում է Նապոլեոնի թելադրանքով։

Երիտասարդ դուքսը խնդրել է իր կյանքը պահպանել։ Նա գրում էր, որ Բուրբոնների դինաստիան վերջացած է համարում, դա իր հաստատ համոզմունքն է. որ ինքը Ֆրանսիային նայում

է միայն իրև իր հայրենիքի և, որպես այդպիսին, սիրում է նրան ամենաանկեղծ հայրենասերի իր ողջ ավյունով. որ իրեն ոգեշնչող զգացումները նույնն են, ինչ որ ֆրանսիական ամեն մի քաղաքացու զգացումները. որ ինքը ոչ մի մտադրություն չունի թագին տիրանալու, քանի որ նախկին դինաստիայի համար այն կորսված է առհավետ։ Այդ պատճառով էլ, ելնելով միայն այն բանից, որ ինքը ֆրանսիացի է, և որ Ֆրանսիան իր հայրենիքն է, թույլտվություն է խնդրում նրան նվիրաբերելու իր կյանքը և իր ուժերը։ Ինքը պատրաստ է ցանկացած պաշտոնը գրավելու ֆրանսիական բանակում, դառնալու քաջ, հավատարիմ զինվոր, որն անվերապահորեն հպատակվում է իշխանության հրամաններին՝ ում ձեռքին էլ որ դա գտնվելիս լինի։ Ինքը պատրաստ է հավատարմության երդում տալ։ Վերջում նա հայտարարում էր, որ եթե իր կյանքը պահպանվի, ինքը, անսասան հավատարմություն պահպանելով, արիաբար իրեն կնվիրի Ֆրանսիայի պաշտպանությանը նրա թշնամիներից»։

ԳԼՈՒԽ XXX

Նապոլեոնը նորից սկսեց խոսել Բուրմակների ընտանիքի մասին։ «Եթե ես ցանկություն ունենայի իմ ձեռքին պահել բոլոր Բուրմակներին կամ նրանց տոհմից որևէ մեկին, կարող էի հեշտությամբ դա անել։ Ձեր ծովային մաքսանենգները (smugglers) Բուրմակի համար քառասուն հազար ֆրանկ էին ուզում ինձանից, բայց երբ բանը հասնում էր մանրամասնություններին, նրանք չէին երաշխավորում, որ նրան ողջ տեղ կհասցնեն։ Սակայն, բաց թողնելով այն հարցը, թե Բուրմակը մեռած կլինի թե ողջ, նրանք ոչ մի կասկած չունեին, որ կկարողանան կատարել իրենց պարտավորությունները։ Բայց ես ամենևին էլ չէի նպատակադրվել անպայման նրանց կյանքից զրկել։ Ինձ համար հանգամանքները դասավորվում էին այնպես, որ ես իմ գահը միանգամայն ամրապնդված էի համարում։ Վստահ էի իմ հանգստության մեջ և համաձայն էի հանգիստ թողնել Բուրմակներին։ Ինչ էլ որ ասեն անգլիացիներն իմ մասին, հանուն սպանության սպանությունը երբեք չի եղել իմ սկզբունքը։ Հանուն ինչի՞ ես պետք է հետևեի այդ սոսկալի մտածելակերպին։ Երբ բռնվեցին սըր Ջորջ Ռամբոլդը և միստր Դրայկը, որոնք փարիզյան դավադիրների հետ եղած նամակագրության միջնորդներն էին, նրանց մահապատժի չենթարկեցին»։

ԳԼՈՒԽ XXXI

Ես մեջ բերեցի Նապոլեոնի պատմությունը՝ ոչ մի անգամ չընդհատելով նրան։ Իմ գլխով երկու միտք անցավ։ Պիշեգրյուի առթիվ կարելի է հետևյալն ասել. Նապոլեոնն իր բոլոր արդարացումները հիմնում է հին սկզբունքի վրա՝ «Հանցագործությունը կատարում է նա, ում այն օգտակար է»[1]։ Բայց մի՞թե բռնակալները անբացատրելի տարօրինակություններ չեն ունենում։ Այդ նույն դատողություններով կարելի կլիներ ապացուցել, որ Նապոլեոնը երբեք չի սպառնացել գնդակահարել Լենեին, Ֆլոժերգին և Ռենուարին։

Էնգիենի դքսի մահվան առթիվ տասը տարի հետո կարելի կլինի հարց տալ. արդյո՞ք այն ավելի անարդարացի է, քան Էլխինգենի դքսի մահը։ Էնգիենի դքսի մահապատժից հետո արքունիքում խոսում էին այն մասին, որ նրա կյանքը զոհաբերվել է այն մարդկանց երկյուղներին, որոնք ազգային ունեցվածք էին ձեռք բերել։ Գեներալ Դյուրոկից ես լսել եմ, որ կայսրուհի Ժոզեֆինան Նապոլեոնի ոտքերն է ընկել՝ նրան աղաչելով ներում շնորհել երիտասարդ դքսին. Նապոլեոնը տհաճությամբ մի կողմ է հրել նրան, դուրս եկել սենյակից. Ժոզեֆինան նրա ետևից ծնկաչոք սողացել է մինչև դուռը։ Գիշերը նա երկու անգամ նամակ է գրել ամուսնուն. շատ բարի լինելով, Ժոզեֆինան իրոք խիստ տառապել է։ Արքունիքում լուրեր էին պտտվում, որ մարշալ Մոնսեի համհարզը, որը հայտնել էր, թե իբր Էնգիենի դուքսը շորերը փոխած ծպտյալ գնացել է Ստրասբուրգ, մոլորության մեջ է եղել։ Բադենում դուքսը կապի մեջ էր մի տիկնոջ հետ. չուզենալով նրան արատավորել, դուքսը, որպեսզի հնարավորություն ունենա նրան հանդիպելու, ժամանակ առ ժամանակ անհետանում էր մի քանի օրով և բնակվում այն տան նկուղում, որտեղ ապրում էր իր սիրուհին։ Նման բացակայությունները միտք էին հղացրել, որ նա գնում է Ստրասբուրգ դավադիրների հետ խորհրդակցելու համար։ Այս հանգամանքն ամենից շատ էր դրդել կայսրին որոշում ընդունելու։ Կոմս Ռեալի, կոմս Լավալետի*, Ռովիգոյի դքսի* և Վիչենցայի դքսի* նոթերը լույս կսփռեն այս գործի վրա։

Համենայն դեպս, Նապոլեոնը կազատվեր սերունդների առջև արդարանալու տանջալից անհրաժեշտությունից, եթե նախքան

[1] Ձգո՞ւյշ։

Էնգիենի դքսի ձերբակալման կարգադրություն անելը սպասեր նրա երրորդ ուղևորությանը Ստրասբուրգ։

Կարելի է նման հարց տալ. կարո՞ղ էր արդյոք մամուլի ամենալայն ազատությունն առաջին կոնսուլին այնպիսի հսկայական վնաս հասցնել, ինչպիսին որ դավադրության գործի առնչությամբ 1804 թվականին նրան պատճառել է այդ մամուլի ստրկական հնազանդությունը։ Ոչ ոք նվազագույն հավատ չէր տածում դավադրության պատմությունների։ բոլորն այն կարծիքին էին, որ առաջին կոնսուլը կարգադրել է սպանել Էնգիենի դքսին առանց որևէ ապիթի, և որ, ըստ երևույթին, նա իր դրությունը բավականին խախուտ էր համարում, եթե վախեցել էր Մորոյի ազդեցությունից։ Չնայած այս անբարենպաստ դատողություններին, ես կարծում եմ, որ բոնապետություն իրականացնող Նապոլեոնը ճիշտ է վարվել՝ կապանքներ դնելով մամուլի վրա։ Ֆրանսիական ժողովուրդը երջանիկ հատկություն ունի. Ֆրանսիայում մտածող մարդկանց հսկայական մեծամասնությունը տարեկան քսան լուիդոր եկամուտ ունեցող մանր սեփականատերեր են։ Ներկայումս դա միակ դասակարգն է, որն ունի այն եռանդը, որը աշխարհիկ դաստիարակությունը ոչնչացրել է հասարակության բարձր շրջաններում։ Բայց այդ դասակարգը հասկանում է միայն այն և հավատում միայն այն բանին, ինչ տպագրված է տեսնում. ազնվակիրթ հասարակությանը հուզող ասեկոսեներն ու լուրերը նախքան նրան հասնելը նսեմանում են կամ էլ արագ ջնջվում նրա հիշողությունից։ Գոյություն ուներ միայն մի միջոց նրան շահագրգռելու այն բանով, ինչ նրան չէր պատկերանում տպագիր ձևով՝ նրա մեջ տագնապ առաջացնել ազգային ունեցվածքի ճակատագրի համար։ Ինչ վերաբերում է Մորոյին, ապա հարկավոր էր այդ գեներալին որևէ պաշտոն տալ՝ նրան այնպիսի պայմանների մեջ դնելով, որտեղ դրսևորվեր նրա ողջ անկարողությունը. օրինակ, նրան ուղարկել որևէ արշավանքի, որտեղ նա կկորցներ իր ամբողջ փառքը, ինչպես գեներալ Մասսենան*, երբ նրան Պորտուգալիա ուղարկեցին։

ԳԼՈՒԽ XXXII

Անգլիա ներխուժելու պլանները մի կողմ թողնվեցին, որովհետև կայսրը նավատորմում չգտավ այն հավերժ փառաբանված տաղանդներին, որոնց հեղափոխությունը ծնել էր ցամաքային

զորքերում։ Տարօրինակ բան. ֆրանսիական ծովային սպաներին, ըստ երևույթին, պակասում էր թափը։ Զինակոչիկների հավաքը կայսրին տվեց տարեկան ութսուն հազար զինվորի ռենտա[1]։ Հիվանդությունների պատճառով եղած կորուստները չհաշված, դա բավական էր, որպեսզի տարեկան չորս խոշոր ճակատամարտ տրվի։ Չորս տարում կարելի էր ութ անգամ փորձել դեսանտ իջեցնել Անգլիայում, և, եթե նկատի առնվեն ծովի բոլոր քմահաճույքները, հարկավոր է խոստովանել, որ այդ փորձերից մեկը կարող էր լիովին պսակվել հաղթանակով։ Հիշեցեք, թե ինչպես ֆրանսիական նավատորմիղը, դուրս գալով Տուլոնից, նվաճեց Մալթան և հասավ Եգիպտոս։ Կարող էր նաև պատահել, որ Իռլանդիան, որը կեղեքվում էր ամենանողկալի, ամենադաժան բռնակալության կողմից, ինչպիսին միայն կարելի է երևակայել[2], հուսահատության պոռթկումի մեջ սիրալիր ընդունելություն ցույց տար օտարերկրացիներին։

Հարկավոր էր Անգլիայում ափ իջնելուց անմիջապես հետո աղքատներին բաժանել երեք հարյուր պերերի հողերը, մտցնել Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, կազմակերպել երկրի կառավարումը, աջակցել յակոբինությանը, հայտարարել, որ ֆրանսիացիներին կանչել է ազգի այն մասը, որը տառապում էր կեղեքումից, որ ֆրանսիացիները ոչ մի այլ նպատակ չեն հետապնդում, քան տապալել կառավարությունը (որը հավասարապես վնասակար է Ֆրանսիայի և բուն Անգլիայի համար), որից հետո իրենք պատրաստ են հեռանալու երկրից։ Եթե (ինչը շատ դժվար է ենթադրել) ազգը, որի մեկ երրորդն ապրում է ողորմությունով, խուլ մնար կիսով չափ անկեղծ այդ ճառերի հանդեպ, հարկ կլիներ հրկիզել քառասուն ամենախոշոր քաղաքներ։ Շատ հավանական է, որ տասնհինգ միլիոն մարդ, որոնցից մեկ հինգերորդին կառավարությունը ծայրահեղ զայրույթի է հասցրել, և որոնք, եթե նույնիսկ քաջությամբ են օժտ-

---

1 1788 թվականին Ֆրանսիայի բնակչությունը քսանհինգ միլիոն էր. 1818 թվականին այն անցավ քսանինը միլիոնից։ Դա բացատրվում է նրանով, որ բնակչության թիվն ուղիղ համեմատական է հացահատիկի քանակին։ Տե՛ս Ֆրանսիայի մասին պ-ն Լեյբուրի՝ երկի հավելվածը (Փարիզ, 1817 թ. վերջին)։ Այդ հավելվածը կազմված է մինիստրություններից ստացված տվյալների հիման վրա։

2 Տե՛ս «Edinburgh Review, № 56 կամ 55։

ված, բայց ռազմական գործի ոչ մի փորձ չունեն, չէին կարողանա երկու-երեք տարուց ավելի մարտնչել տաղանդավոր բռնակալին ցավական սիրով հնազանդվող երեսուն միլիոնի դեմ։

Այս ամենը չիրականացավ, որովհետև մեր նավատորմում Նելսոն[1] չգտնվեց։ Ֆրանսիական բանակը հեռացավ Բուլոնյան ճամբարից մայրցամաքային պատերազմի համար, որը նոր փայլ տվեց կայսեր ռազմական փառքին և նրան այնպիսի բարձրության հասցրեց, որին չի հասել Եվրոպայի ոչ մի տիրակալ Կառլոս Մեծի ժամանակներից ի վեր։ Նապոլեոնը երկրորդ անգամ հաղթեց ավստրիական տանը և խնայեց նրան, մի բան, որը սխալ էր. սակայն նրանից խլեց Վենետիկի մարզը և կայսր Ֆրանցին ստիպեց հրաժարվել հին կայսերական տիտղոսից, դրանով իսկ նրան զրկելով այն ազդեցությունից, որից նա մինչ այդ դեռ օգտվում էր Գերմանիայում։ Աուստերլիցի ճակատամարտը*, թերևս, ռազմական արվեստի պսակ է։ Ժողովուրդը զարմանքով նշեց, որ այդ հաղթությունը տարվել է դեկտեմբերի 2-ին՝ թագադրության տարեդարձին։ Այդ ժամանակից սկսած Ֆրանսիայում այդ անմիտ արարողությունն արդեն ոչ ոքի չէր զայրացնում.

ԳԼՈՒԽ XXXIII

Հաջորդ տարի կայսրը հաղթեց Պրուսիային, որը քաջություն չէր ունեցել հարելու Ավստրիային և Ռուսաստանին։ Պատմության մեջ անօրինակ մի դեպք. միայն մեկ ճակատամարտը ոչնչացրեց երկու հարյուր հազարանոց բանակը և հաղթողի ձեռքը տվեց մի ամբողջ թագավորություն։ Դա բացատրվում է նրանով, որ Նապոլեոնը շատ ավելի հմտորեն օգուտ էր քաղում իր հաղթանակներից, քան դրանք շահում։ Հոկտեմբերի 16-ին Նապոլեոնը ոչ առանց երկյուղի Ենայի մոտ գրոհեց* այդ բանակը, որին կարծես թե հովանի էր Ֆրիդրիխ Մեծի ստվերը. 26-ին նա մտավ Բեռլին։ Ի մեծ զարմանս մեր, երաժիշտները նվագում էին «Հառա՜ջ, հայրենիքի զավակներ» հանրապետական երգը։ Նապոլեոնը, առաջին անգամ գեներալական համազգեստ հագած և ոսկեթելով նախշակարված գլխարկ դրած՝ ձիով գնում էր իր զորքերի առջևից քսան քայլի վրա՝ բազմությամբ շրջապատված։ Ավելի հեշտ բան

[1] Ո՛չ Նելսոն, ո՛չ էլ լորդ Կոլրեն։ Տե՛ս ծովակալ Վիլնյովի* գործողությունները։

չկար, քան Ուենտերդեն-Լինդենի ցանկացած լուսամուտից կրակել նրա վրա։

Հարկավոր է ավելացնել, որքան էլ դա ցավալի լինի, որ բազմությունը լռություն էր պահպանում և նրան չէր ողջունում ոչ մի բացականչությամբ։

Կայսրը նվաճված երկրներից առաջին անգամ փող բերեց։ Բանակի պահպանման ու հանդերձավորման ծախսերից բացի, Ավստրիան և Պրուսիան յուրաքանչյուրը մոտ հարյուր միլիոն վճարեց։ Կայսրը դաժանություն դրսևորեց Պրուսիայի նկատմամբ։ Նա տեսավ, որ գերմանացիներն ավելի հոժարակամ են հնազանդվում նվաճողին, քան մյուս ժողովուրդները։ Հարյուր գերմանացի միշտ պատրաստ է ծնկի գալու համազգեստ հագած մի մարդու առջև։ Ահա թե չորս հարյուր տիրակալ իշխանների մանրախնդիր դեսպոտիզմն ինչ է արել Արմինիուսի* և Վիդուկինդի* հետնորդների հետ։

Հենց այդ ժամանակ Նապոլեոնը կատարեց այն սխալը, որի հետևանքը եղավ նրա տապալումը։ Նա հեշտությամբ կարող էր պրուսական և ավստրիական գահերին նստեցնել ում որ ցանկանար. նա նաև կարող էր այդ երկրներին երկպալատ սիստեմ և կիսալիբերալ սահմանադրություն տալ։ Նա հրաժարվեց յակոբինյան հին սկզբունքից՝ միապետների դեմ դաշնակիցներ փնտրել նրանց հպատակների սրտերում։ Իբրև նորընտիր միապետ, նա ժողովուրդների սրտերում արդեն պահպանում էր հարգանքը գահի նկատմամբ[1]։

Նրան շրջապատող անձինք գիտեն, որ հասարակական կարծիքը նրան մատնանշել էր, թե տիրակալ իշխաններից հատկապես ով է առժանի թագ կրելու. դա արդեն քիչ չէր։ Գերմանական ժողովուրդը, ազատություն ճաշակելով, իր բոլոր ուժերը կներդրներ իսկական լիբերալ սահմանադրություն ձեռք բերելու, և երեք-չորս տարի անց երախտագիտության խոր զգացումով կհամակվեր Նապոլեոնի նկատմամբ։ Այդ դեպքում վերջ կտրվեր Տուգենդբունդին*, լանդվերին*, ազգային խանդավառությանը։ Իսկ մյուս կողմից, գերմանական նոր տիրակալներն արդեն ո՛չ հնարավորություն, ո՛չ էլ ցանկություն կունենային փող վերցնելու անգլիացիներից՝ Ֆրանսիայի դեմ կոալիցիա կազմելու համար։

[1] 1809 թ. «Moniteur»-ում տե՛ս այն պատճառները, որ նա բերում է որպես բացատրություն, թե ինչու ինքը չի մտել Վիեննա։

ԳԼՈՒԽ XXXIV

Տիլզիտում Նապոլեոնը Ռուսաստանից միայն մի բան պահանջեց՝ Անգլիայի առջև փակել իր նավահանգիստները։ Ռուսական բանակն ամբողջովին նրա իշխանության տակ էր. Ալեքսանդր կայսրն ինքը խոստովանեց, որ պատերազմը դադարեցրեց այն պատճառով, որ հրացանները չէին բավականացնում։ Այդ բանակը, որը մեր օրերում այնքան տպավորիչ է, այն ժամանակ ողբալի վիճակում էր[1]։ Ցարին փրկեց այն հանգամանքը, որ կայսրը Բեռլինում եղած ժամանակ մայրցամաքային շրջափակում* հռչակեց։ Ալեքսանդրն ու Նապոլեոնը մտերմաբար զրուցում էին և մտնում այնպիսի վիճաբանության մեջ, որոնք շատ կզարմացնեին նրանց հպատակներին, եթե վերջիններս հնարավորություն ունենային դրանք ունկնդրելու։ «Այն երկու շաբաթվա ընթացքում, որ մենք անցկացրինք Տիլզիտում,— պատմում էր Նապոլեոնը,— գրեթե ամեն օր միասին էինք ճաշում. մենք շուտ էինք վեր կենում սեղանից, որպեսզի գլուխներս ազատենք պրուսական թագավորից, որը մեզ ձանձրացնում էր։ Ժամը իններին կայսրը քաղաքացիական հագուստով գալիս էր ինձ մոտ թեյ խմելու։ Մենք չէինք բաժանվում մինչև առավոտվա երկուսը-երեքը՝ զրուցելով ամենատարբեր հարցերի մասին. սովորաբար մենք խոսում էինք քաղաքականությունից և փիլիսոփայությունից։ Նա շատ կրթված մարդ է և լիբերալ հայացքներ ունի. այդ ամենի համար նա պարտական է գնդապետ Լահարպին՝ իր դաստիարակին։ Երբեմն ես դժվարանում էի որոշել, թե ինչ է դրսևորվում նրա արտահայտած զգացումներում՝ արդյոք նրա անկեղծ կարծի՞քը, թե՞ Ֆրանսիայում այնքան սովորական այն վատասիրության ազդեցությունը, որը մարդկանց ստիպում է արտահայտել իրենց դիրքին խիստ հակասող հայացքներ»։

Երես առ երես տեղի ունեցած այդ զրույցներից մեկի ժամանակ կայսրերը երկար քննարկում էին ժառանգական միապետության և ընտրական միապետության համեմատական առավելությունների հարցը։ Ժառանգական բռնապետը ջերմորեն պաշտպանում էր ընտրական միապետությունը, իսկ հաջողության հասած ռազմիկը պաշտպանում էր ժառանգական իրավունքները։

[1] Տե՛ս գեներալ Ուիլսոնի՝ 1806 թ. լույս տեսած գրքույրը։

«Շատ քիչ հավանական է, որ պատահաբար, սոսկ ծնունդով իշխանության կոչված մարդը պետության կառավարման համար անհրաժեշտ ընդունակություններ դրսևորի»։ «Որքա՞ն քիչ մարդիկ էին օժտված,— առարկում էր Նապոլեոնը,— այն հատկություններով, որոնք իրավունք են տալիս այդ բարձր կոչման համար։ Կեսար կամ Ալեքսանդր պատահում են հարյուր տարին մի անգամ, եթե ոչ ավելի սակավադեպ. ահա թե ինչու ընտրելը, ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ, պատահականության գործ է, և ժառանգական կարգը, անշուշտ, ավելի լավ է, քան զույգ ու կենտ խաղալը»։

Նապոլեոնը Տիլզիտից հեռացավ՝ լիովին վստահ, որ շահել է Ալեքսանդր կայսեր բարեկամությունը. բավականաչափ անմիտ մի վստահություն, բայց այդ մոլորությունը հիանալի է, դա վսեմ է այնքանով, որ նշավակում է նրանց, ովքեր զրպարտում են կայսրին։ Միաժամանակ այն ցույց է տալիս, որ Նապոլեոնը ծնված չէր քաղաքականության համար։ Նրա գրիչը միշտ վնաս էր հասցնում այն բանին, ինչի նա հասնում էր սրով։ Լինելով Միլանում, նա Մելցիի հետ զրուցեց մայրցամաքային շրջափակման մասին, որն այն ժամանակ, շատ բնականորեն, նրա խոսակցությունների սիրած նյութն էր։ Այդ մտահղացումն ավելի մեծ արժեք ունի, քան կարդինալ Ռիշելյոյի* ողջ կյանքը։ Այն քիչ մնաց հաջողությամբ պսակվեր, և ամբողջ Եվրոպան նորից վերադառնում է դրան[1]։

Մելցին Նապոլեոնին ասաց, որ Ռուսաստանը հումք ունի, բայց արդյունաբերություն չունի, և քիչ հավանական է, որ ցարը երկար պահպանի իր պարտավորությունը, որն ակնհայտորեն խախտում էր ազնվականների շահերը, ազնվականներ, որոնք այս երկրում այնքա՞ն վտանգավոր էին տիրակալների համար։ Նապոլեոնը պատասխանեց, թե հույսը դնում է անձնական բարեկամական այն համակրանքի վրա, որ ինքը ներշնչել է Ալեքսանդրին[2]։ Իտալացին զարմանքից վեր թռավ։ Դրանից անմիջապես առաջ Նապոլեոնը նրան պատմել էր մի դեպք, որը ցույց էր տալիս, թե որքան քիչ էր կարելի հույս դնել Ալեքսանդրի հզո-

[1] «Եվս մեկ տարվա հաստատակամություն, և այն կհաջողվեր»։

[2] Այս տեղեկությունները, որոնք բառացիորեն վերցված են «Edinburgh Review» № 54-ից, բերվում են առանց դրանց հավաստիության երաշխավորության։

ության վրա, եթե նույնիսկ նրա անձնական համակրանքները Ֆրանսիայի կողմը լինեին։ Տիլզիտում Նապոլեոնը հատկապես հարգալիր էր գեներալ Բենիգսենի նկատմամբ։ Ալեքսանդրը դա նկատեց և Նապոլեոնին հարցրեց նման ուշադրության պատճառը։ «Անկեղծորեն ասած,— պատասխանեց Նապոլեոնը,— ես այդ ձևով ուզում եմ շահել ձեր բարյացակամությունը։ Դուք նրան եք վստահել ձեր բանակը, և այն, որ նա վայելում է ձեր վստահությունը, բավական է, որպեսզի ինձ ներշնչի հարգանքի ու բարեկամության զգացմունք»[1]։

ԳԼՈՒԽ XXXV

ՎԱԳՐԱՄԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Երկու կայսր՝ Հարավի տիրակալը և Հյուսիսի տիրակալը, հանդիպեցին Էրֆուրտում[2]։ Ավստրիան հասկացավ, թե ինչպիսի վտանգի է ինքը ենթարկվում և պատերազմ սկսեց Ֆրանսիայի դեմ։ Նապոլեոնը Փարիզից հեռացավ 1809 թվականի ապրիլի 13-ին։ 18-ին նա Ինգոլշտադտում էր։ Հինգ օրում նա վեց ճակատամարտ տվեց և վեց հաղթանակ տարավ։ Մայիսի 10-ին նա Վիեննայի դարպասների մոտ էր։ Սակայն բռնակալությամբ արդեն բարոյալքված բանակը չէր դրսևորում այն արիությունը, ինչ Աուստերլիցում։

Եթե ավստրիական բանակի գլխավոր հրամանատարն օգտագործեր այն հրահանգները, որոնք, ինչպես ասում են, գաղտնի նրան էր հանձնել գեներալ Բելգարդը*, կարող էր գերի վերցնել Նապոլեոնին, որն անզգուշաբար անցել էր Դանուբի ձախ ափը՝ Էսլինգ։ Կայսրին փրկեց մարշալ Մասսենան։ Նապոլեոնը մարշալին իշխանական տիտղոս շնորհեց, բայց միաժամանակ աշխատեց նրան նսեմացնել այն բանով, որ անվանեց Էսլինգի իշխան՝ դրանով իսկ հիշեցնելով տանուլ տրված ճակատամարտի մասին։ Դրանում արդեն դրսևորվեց պալատական մանրախնդրությունը։ Ժողովուրդներն ի՞նչ պետք է մտածեին նմանօրինակ կոչման մասին։

[1] Շարունակությունը տե՛ս «Edinburgh Review» № 54, էջ 486։

[2] Ներկայումս մենք գեռևս հավաստի տվյալներ չունենք Էրֆուրտյան տեսակցության մանրամասնությունների մասին։

Ավստրիան մի ակնթարթում կանգնեց խելամիտ քաղաքականության ուղու վրա։ Նա սկսեց հենարան փնտրել հասարակական կարծիքի մեջ և խրախուսում էր Տիրոլի ապստամբությունը։ Գեներալ Շաստելերն* այնքան աչքի ընկավ, որ բռնապետը նրան արժանացրեց իր անզոր ցասումին։ «Moniteur»-ը նրան անվանում է «արհամարհելի Շաստելեր»։ 1809 թվականին այդ գեներալը Տիրոլյան լեռներում նախապատրաստեց այն, ինչ 1813 թվականին «առաքինության դաշնակցությունները» պետք է կատարեին Լայպցիգի մոտ գտնվող դաշտերում։

Էսլինգի ճակատամարտից մինչև Վագրամի հաղթանակը ֆրանսիական բանակը կենտրոնացված էր Վիեննայում[1]։ Տիրոլյան ապստամբությունը նրան զրկում էր անհրաժեշտ պաշարներից։ Նա յոթանասուն հազար հիվանդ ու վիրավոր ուներ։ Կոմս Դարյուն* ապշեցուցիչ հմտություն դրսևորեց նման դժվարին պայմաններում բանակի մատակարարման գործում, բայց նրա սխրագործությունները լույսի էին մատնվում, քանի որ դրանց մասին խոսել՝ նշանակում էր ընդունել վտանգի առկայությունը։ Այդ ժամանակաընթացքում, որը կարող էր ճակատագրական դառնալ, Պրուսիան չհամարձակվեց հուզումներ բարձրացնել։

Մեկն այն փաստերից, որոնք բոլորից շատ էին ընդունակ արդարացում ծառայելու այն բանին, ինչ տեղի է ունենում ս. Հելենե կղզում (եթե որևէ անարդարություն առհասարակ կարող է երբևիցե արդարացում գտնել), գրավաճառ Պալմի* մահն է։ Կայսրը Ենայի շրջակայքում գտնվող ռազմադաշտային դատարանին կարգադրեց մահապատժի ենթարկել նրան, բայց որքան էլ բռնապետությունը ջանար՝ չէր կարող գրատպությունը ոչընչացնել։ Եթե նրան հնարավորություն տային այդ անելու, գահն ու զոհասեղանը կարող էին հուսալ միջնադարի երանելի օրերի վերադարձը։

Ենացի մի ուսանող, որը մտադրվել էր սպանել Նապոլեոնին, ուղևորվեց Շենբրուն՝ Շիլլերի ստեղծագործությունների հատորը գրպանում։ Նա համազգեստով էր, աջ ձեռքը՝ վիրակապով. այդ ձեռքում նա թաքցրել էր դաշույնը։ Ուսանողն առանց որևէ դժվարության անցավ պարգևատրման խնդրանքով հավաքված վիրավոր սպաների բազմության միջով, բայց այն մոայլ համա-

[1] 1809 թ. մայիսի 22-ից մինչև հուլիսի 6-ը։

ությունը, որով նա ձգտում էր թույլտվություն ստանալ անձամբ խոսելու կայսեր հետ և հրաժարվում էր իր պահանջը շարադրել իրեն հարցաքննող նեշատելի իշխանին՝, ուշադրություն գրավեց։ Իշխանը կարգադրեց նրան բռնել։ Ուսանողն ամեն ինչ խոստովանեց։ Նապոլեոնն ուզեց նրան փրկել և հանձնարարեց հարցնել. «Ի՞նչ կանեք, եթե ձեզ ազատ արձակենք»։ «Կկրկնեմ իմ փորձը»։

Վադրամի ճակատամարտն ապշեցուցիչ էր. 400.000 մարդ ամբողջ օրը մարտնչում էին։ Հունգարացիների քաջությունից ապշած և հիշելով, որ նրանց մեջ ուժեղ է ազգային ոգին, Նապոլեոնի մտքովն անցավ Հունգարիան անկախ թագավորություն դարձնել, բայց նա վախեցավ ուշադրությունը շեղել Իսպանիայից և ընդ որում երբեք որոշակի չէր պատկերացնում այդ գաղափարի իսկական նշանակությունը։

Նրան շրջապատող շողոքորթներն արդեն վաղուց էին համոզում, որ հանուն դինաստիայի շարունակության նա պարտավոր է Եվրոպայի թագավորող տներից կին ընտրել, որից կարող էր որդի ունենալ։ Շերբրունում միաք հղացավ նրան ամուսնացնել էրցհերցոգուհու հետ։ Նապոլեոնը չափազանց շոյված էր դրանից։ 1810 թվականի ապրիլի 2-ին նրան տրվեց կեսարների դստեր ձեռքը։ Այդ օրը՝ իր կյանքի ամենագեղեցիկ օրը, Նապոլեոնը Ներոնի նման մոայլ էր։ Նրան հուսահատեցնում էին փարիզցիների թունոտ սրախոսությունները («էրցհերցոգուհին դեռ երբեք այդպես խայտառակ չէր ամուսնացել»*) և կարդինալների դիմադրությունը։ 1811 թվականի մարտի 20-ին նա որդի ունեցավ՝ Նապոլեոն-Ֆրանսուա-Շառլ-Ժոզեֆը։ Այդ իրադարձությունն ընդմիշտ ապահովեց ազգի սերը նրա հանդեպ։ Թնդանոթային քսանմեկերորդ կրակոցի վրա փարիզցիների հիացմունքը ծայր առտիճանի հասավ։ Այդ մարդիկ, վախենալով սառը ձևանալուց ծիծաղելի լինել, բուռն ծափահարում էին փողոցներում։ Գյուղերում ավելի շատ, քան երբեք, խոսում էին կայսեր բախտավոր ատղի մասին։ Նա շրջապատված էր ճակատագրի ողջ հմայքով։

Հրաժարվելով լինել այն, ինչ առաջ էր, այսինքն՝ հեղափոխության զավակ, մտադրվելով հետագայում բոլոր մյուսների նման միապետ լինել՝ մերժելով ժողովրդի աջակցությունը, նա հիշտ վարվեց՝ կանխապես ապահովելով եվրոպական դինաստիաներից ամենափառապանծի հենարանը[1]։ Նրա համար ամեն ինչ ինչքա՞ն տարբեր կդասավորվեր, եթե նա բարեկամանար Ռուսաստանի հետ։

ԳԼՈՒԽ XXXVI

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Այն օրվա երեկոյան, երբ տեղի ունեցավ Ենայի ճակատամարտը, դեռևս մարտադաշտում գտնվող Նապոլեոնին հանձնեցին իշխան Միրայի հրովարտակը, որը բոլոր իսպանացիներին զենքի էր կոչում։ Նապոլեոնը պարզ հասկացավ, թե որքան մեծ է այն վտանգը, որից իրեն հաջողվել էր խուսափել. նա տեսավ, թե ինչպիսի տագնապ կապրի Ֆրանսիայի հարավը դեպի հյուսիսային երկրներ կատարվող իր յուրաքանչյուր նոր արշավանքի դեպքում։ Նա հաստատապես որոշեց իր թիկունքում չթողնել ամեն մի դժվարին դրության դեպքում իր վրա հարձակվելու պատրաստ ուխտադրուժ բարեկամին։ Նա հիշեց՝ Աուստերլիցի տակ իր հակառակորդների թվում էր Նեապոլի թագավորը, որի հետ դրանից երկու շաբաթ առաջ հաշտություն էր կնքել։ Այն գործողությունները, որ իշխան Միրան մտադիր էր ձեռնարկել Ֆրանսիայի վրա հարձակվելու համար, հակասում էր միջազգային իրավունքին այն ձևով, ինչ ձևով մեր օրերում, ըստ երևույթին, այն ընդունված է ժողովուրդների կողմից։ Թալեյրանը շարունակ պնդում էր Նապոլեոնին, որ նա իր դինաստիայի համար կարող է հանգիստ լինել միայն այն դեպքում, երբ ոչնչացնի Բուրբոններին։ Նրանց գահընկեց անելը բավական չէր. սակայն նախ հարկավոր էր հասնել նրանց տապալմանը։

Տիլզիտում Ռուսաստանը հավանություն տվեց Իսպանիայի նկատմամբ կայսեր պլաններին, որոնց նպատակն էր դոն Մանուել Գոդոյին, որը հայտնի էր իշխան Միրա անունով, իշխանություն շնորհել Ալգարվիայում, որի փոխարեն իշխանը՝ Իսպանիան կործանած հրովարտակի միակ ստեղծողը, պետք է Նապոլեոնի ձեռքը տար իր տիրակալին ու բարերարին։ Ֆոնտենբլյոում իշխան Միրայի կնքած պայմանագրի հիման վրա կայսերական զորքերը հեզեղել էին Իսպանիան։ Վերջիվերջո հովանավորյալը՝ նույնքան զորավոր, որքան և ծիծաղելի, կռահեց, որ Նապոլեոնն իրեն հիմարի տեղ է դնում և մտածեց Մեքսիկա փախչել. ժողովուրդն

1 Հեղեմաք 1814 թվականին։

ուզում էր պահել իր թագավորին. այստեղից էլ՝ Արանխուեսի իրադարձությունները, որոնց հետևանքով գահը գրավեց թագաժառանգ Ֆերդինանդը, և Նապոլեոնի պլանները խորտակվեցին։ 1808 թվականի մարտի 18-ին այնքա՞ն բարեհոգի և այնքա՞ն քաջ իսպանական ժողովուրդն ապստամբեց։ Իշխան Միրան, որի նկատմամբ բնակչությունն այնպիսի ատելություն էր տածում, որին նա արժանի էր, գերագույն միապետից դարձավ կալանավոր։ Երկրորդ ժողովրդական ապստամբությունը Կառլոս IV թագավորին ստիպեց հրաժարվել գահից՝ հօգուտ Ֆերդինանդ VII-ի։ Նապոլեոնն ապշել էր. նա կարծում էր, թե գործ ունի այնպիսի խառնվածքի տեր մարդկանց հետ, ինչպիսիք պրուսացիները կամ ավստրիացիներն են, և որ տնօրինել արքունիքը՝ նշանակում է տնօրինել ժողովրդին։ Դրա փոխարեն նրա առջև մի համախմբված ազգ էր՝ երիտասարդ թագավորի գլխավորությամբ, որը համբողջանուր սեր էր վայելում և, ըստ ամենայնի դատելով, ոչ մի մասնակցություն չէր ունեցել վերջին տասնհինգ տարում կատարված խայտառակ արարքներին։ Այդ թագավորը կարող էր ունենալ այն առաքինությունները, որոնք դժվար չէր ունենալ նրա դրության մեջ. նա հնարավորություն ուներ իրեն շրջապատել չափազանց աղնիվ, հայրենիքին նվիրված, գայթակղությունից հեռու և ժողովրդի աջակցությունը վայելող, վախ չիմացող մարդկանցով։ Աստուրիայի թագաժառանգի մասին Նապոլեոնին միայն մի բան էր հայտնի, այն, որ թագաժառանգը 1807 թվականին հանդգնել է իրեն դիմել մի նամակով, որով խընդրում էր իր եղբոր՝ Լյուսիեն Բոնապարտի դստեր ձեռքը։

Արանխուեսում տեղի ունեցած իրադարձություններից հետո իսպանական ժողովրդի բոլոր խավերը համակված էին խանդավառությամբ։ Սակայն պետության մեջ բնակություն հաստատած օտարականները մայրաքաղաքում տնօրինում էին ամեն ինչ, դավթում ամրոցները և հավակնում այն բանին, որ լուծեն Ֆերդինանդ VII-ի և թագավոր Կառլոս IV-ի վեճը, որն արդեն նա էր վերցրել իր հրաժարագիրը և օգնության էր կանչում Նապոլեոնին։

Այս բացառիկ իրադրության մեջ Ֆերդինանդ VII-ը (այստեղ նորից դրսևորվեց եվրոպական ամեն տեսակ առաջադիմությունից մեկուսացած ժողովրդին կառավարող մինիստրներին բնորոշ խորին բթամտությունը) որոշեց մտերմանալ Նապոլեոնի հետ։ Գեներալ Սավարին երկու անգամ գնաց Իսպանիա՝ Ֆերդինանդին

համոզելու ներկայանալ Բայոնա, բայց ոչ մի անգամ չառաջարկեց ճանաչել գահի նկատմամբ նրա իրավունքը։ Երիտասարդ թագավորի խորհրդատուները, վախենալով Կառլոս IV-ի վրեժխնդրությունից, որի դեմ իրենք դավադրություններ էին կազմակերպում, հանձին Նապոլեոնի տեսնում էին միակ հենարանին և առչորվում որքան կարելի է շուտ իրենց թագավորի հետ նրան ներկայանալու ցանկությամբ։

Այդ շատ կարևոր իրադարձությունները հետաքրքրական են թվում, եթե հեռվից դիտենք, բայց եթե մոտենանք, դրանք լոկ նողկանք են նեղշնչում։ Իսպանական մինիստրները չափազանց հիմար են, Ֆրանսիայի գործակալները՝ չափազանց ճարպիկ։ Դա Ֆիլիպ II-ի նույն հին, բթամտորեն ուխտադրուժ քաղաքականությունն է Նապոլեոնի հիրավի այժմեական հանճարի դեմ ուղղված պայքարում[1]։ Երկու մարդ բերկրանք են պատճառում իրենց վարքագծով։ Ֆրուլիի դքսուհու եղբայր պ-ն Գերվասը, վտանգի ենթարկելով ավելին, քան իր կյանքն է, եկավ Վալլադոլիդ և հնարավոր ամեն ինչ արեց, որպեսզի բանա Ֆերդինանդ VII-ի բթամիտ ինքնագոհությամբ համակված մինիստրների աչքերը։ Էրրո գետի ափին գտնվող բոլոր մաքսատների գլխավոր պետը՝ պարզասիրտ ու քաջարի մի մարդ, Ֆերդինանդին առաջարկեց իր տրամադրության տակ եղած երկու հազար զինված մարդկանցով ներկայանալ Բայոնա և ազատել իրեն։ Նրան խիստ նկատողություն արեցին։ Այստեղ Իսպանիան մեզ պատկերանում է այնպիսին, ինչպիսին նա այնուհետև դրսևորել է իրեն վեց տարի շարունակ՝ կառավարողների բթամտություն, ստորություն և վախկոտություն, ժողովրդի ռոմանտիկ ու հերոսական անձնազոհություն։

Ֆերդինանդ VII-ը Բայոնա ժամանեց ապրիլի 20-ի առավոտյան և ընդունվեց թագավորական մեծարանքով։ Նույն օրվա երեկոյան գեներալ Սավարին նրան հայտարարեց, որ Նապոլեոնը որոշել է իսպանական գահին նստեցնել իր սեփական դինաստիայի անդամներից մեկին։ Այս նկատառումով Նապոլեոնը պահանջեց, որ Ֆերդինանդը գահից հրաժարվի հօգուտ իրեն։ Միաժամանակ Նապոլեոնի և իսպանական մինիստր Էսքոիկիսի* միջև շատ հետաքրքիր գրույց տեղի ունեցավ, որը որոշակիորեն

1 Տե՛ս պ-ն Էսքոիկիսի սահմանադրությունը։

ցույց է տալիս թե՛ Նապոլեոնի բնավորությունը և թե՛ Իսպանիայի նկատմամբ նրա ողջ քաղաքականությունը[1]։

Նապոլեոնի պլանն այն թերությունն ուներ, որ տապալված դինաստիայի անդամներին, որոնք արտաքսված էին Իսպանիայից, ենթադրվում էր տալ Էտրուրիան և Պորտուգալիան. դա նշանակում էր թշնամիներին թողնել իշխանության մի մասնիկը։

Ֆերդինանդ VII-ը՝ արհամարհելի հովանավորյալի, կուրությամբ տառապող հոր, աղքատամիտ խորհրդականների և հղոր հարեանի զոհը, Բայոնայում կալանավորի վիճակի մեջ ընկավ։ Ինչպե՞ս դուրս պրծնել ծուղակից։ Ամեն ինչ այնպես լավ էր կանխատեսված , որ միայն թուլուն դառնալով կարելի էր փախչել։ Ամեն օր նախաշգուշական նոր միջոցառումներ էին մտցվում։ Քաղաքը շրջապատող պատնեշն օր ու գիշեր հսկում էին զինվորները, քաղաքամուտքերն աչալրջորեն պահպանվում էին, բոլոր եկումուտ անողներին մանրազնին ստուգում էին։ Լուր տարածվեց, թե իբր Ֆերդինանդը փորձել է փախչել. հսկողությունն ավելի ուժեղացվեց։ Նա գերության մեջ էր։ Սակայն Ֆերդինանդի խորհրդականները զարձյալ համառորեն մերժում էին Էտրուրիայի փոխարեն Իսպանիան զիջելու առաջարկը։

Կայսրը խիստ անհանգստացած էր, իսկ երբեմն էլ խղճի խայթ էր զգում։ Նա տեսնում էր, թե Եվրոպան ինչպես անբավականությամբ էր վերաբերվում այն բանին, որ ինքն ազատությունից զրկել է իր հետ բանակցություններ վարելու եկած թագավորական տան անդամին։ Ֆերդինանդին գերության մեջ պահելը Նապոլեոնի համար նույնքան դժվարին էր, որքան նրան ազատություն վերադարձնելը։ Պարզվեց, որ Նապոլեոնը հանցանք է կատարել և չի կարող օգտվել դրա պտուղներից։ Նա միանգամայն անկեղծ, եռանդագին ասաց իսպանական մինիստրներին. «Հարկավոր է, որ դուք ձեր մտածելակերպն ավելի ազատամիտ դարձնեք, ավելի նվաղ բծախնդիր լինեք պատվի հարցում և Իսպանիայի բարօրությունը չզոհարերեք հանուն Բուրբոնների ընտանիքի շահերի»։

Բայց մինիստրները, որոնց խորհրդով էր Ֆերդինանդը ժամանել Բայոնա, ընդունակ չէին մարսելու նման հայացքներ։

[1] Տե՛ս պ-ն Էսքոիկիսի և պ-ն Պրադտի՝ երկերը, որոնցից փոխառված են այստեղ բերվող բոլոր ավյալները։

Համեմատեցեք Իսպանիան, ինչպիսին մենք նրան տեսնում ենք վերջին չորս տարում, իր ամոթալի վիճակից զոհ և մյուս ժողովուրդների համար արհամարհանքի կամ սարսափի առարկա հանդիսացող Իսպանիան, երկպալատ սիստեմ և ի դեմս Ժոզեֆ Բոնապարտի սահմանադրական թագավոր ունեցող Իսպանիայի հետ, մի թագավոր, որն ուներ այն առավելությունը, որ, Բեռնադոտի նման, հենվում էր միայն իր արժանիքների վրա, և իր կատարած առաջին իսկ անարդարության կամ հիմարության դեպքում նրան կարելի է վռնդել ու նորից կանչել օրինական միապետին։

Դեռ երբեք Նապոլեոնի միտքն այդպես ուժգնորեն չէր աշխատել։ Ամեն րոպե նա որևէ նոր առաջարկ էր մտածում, որն անհապաղ հրամայում էր հայտնել իսպանական մինիստրներին։ Նման տագնապալի վիճակում մարդ չի կարող կեղծավորություն անել. կարելի էր կարդալ այն ամենը, ինչ տեղի էր ունենում կայսեր հոգում և մտքերում։ Նա քաջարի մարտիկի հոգի ուներ, բայց օժտված չէր քաղաքական տաղանդով։ Իսպանական մինիստրները, որ վեհանձն զայրույթով մերժում էին նրա բոլոր առաջարկությունները, շահեկան դեր էին խաղում։ Նրանք շարունակ ելնում էին այն նկատառումից, որ Ֆերդինանդն իրավունք չունի առանց ժողովրդի համաձայնության տնօրինելու Իսպանիան[1]։ Նրանց անդրդվելիությունը Նապոլեոնին հուսահատության էր հասցնում։ Նա առաջին անգամ ստիպված եղավ լուրջ դիմադրության հանդիպելու. և ի՜նչ հանգամանքներում։ Պարզվում է, որ իսպանական թագավորի աղքատամիտ խորհրդականներն իրենց կուրության մեջ գործում էին առավել լուսավորյալ և միևնույն ժամանակ հակառակորդի համար առավել դժվարին եղանակով։ Այս մահացու տագնապի մեջ Նապոլեոնը միաժամանակ ձեռք էր դցում ամենատարբեր մտքերի, ամենատարբեր նախագծերի։ Նա օրը մի քանի անգամ կանչում էր այն անձանց, որոնց հանձնարարված էր բանակցություններ վարել, և նրանց ուղարկում իսպանական ներկայացուցիչների մոտ. պատասխանը միշտ նույնն էր՝ զանգատներ ու մերժումներ։ Իր պատգամավորների վերադարձից հետո Նապոլեոնն իր համար սովորական՝ մտքի ու դրա բանավոր արտահայտության արագությամբ բազմակողմանի քննե-

[1] Ցակոբինյան սկզբունք, որ մերժել է Վիեննայի կոնգրեսը։

նարկում էր հարցը։ Երբ նրան ասում էին, որ ոչ մի հնարավորություն չկա Աստուրիայի թագաժառանգին համոզելու իր իսպանական ու ամերիկյան տերությունը փոխելու էտրուրիայի փոքրիկ թագավորության հետ, որ այն բանից հետո, երբ նրան զրկել են մի գահից, մյուսին տիրելը նրան պետք է շատ անհուսալի թվա, Նապոլեոնը պատասխանում էր. «Այդ դեպքում թող նա պատերազմ հայտարարի ինձ»։

Մի մարդ, որն ընդունակ է նման տարօրինակ հարձակման, որքան էլ աշխատեն մեզ հավատացնել, ամենևին էլ չի հանդիսանում Ֆիլիպ II-ի ինչ-որ նմանակը։ Այդ բացականչության մեջ հնչում է վեհանձնություն, և նույնիսկ՝ ոչ քիչ։ Դրանում նաև իրեն դրսևորեց բանականությունը։

Նույն բնույթն ունի նաև պ-ն Էսքորիկիսի հրապարակած գրությունը. «Սակայն, եթե ձեր թագաժառանգն իմ առաջարկությունները անընդունելի է համարում, ցանկության դեպքում կարող է վերադառնալ իր պետություն, բայց նախօրոք մենք համատեղ կորոշենք այդ վերադարձի ժամկետը. իսկ այնուհետև մեր միջև կսկսվեն պատերազմական գործողություններ»։

Ֆրանսիական միջնորդներից մեկը պնդում է, որ ինքը Նապոլեոնին ապացուցում էր նրա ձեռնարկի ողջ անվայելչությունը։ «Այո,— պատասխանել է կայսրը,— ես հասկանում եմ, որ այն, ինչ անում եմ, լավ չէ։ Դե ինչ, թող նրանք պատերազմ հայտարարեն ինձ»։

Նա հայտարարում էր իր մինիստրներին. «Ես հիմքեր ունեմ այդ հարցն արտակարգ կարևոր համարելու իմ հանգստության համար. ինձ խիստ անհրաժեշտ նավատորմիղը, իսկ չէ որ այդ պատճառով ես կկորցնեմ այն վեց նավերը, որ գտնվում են Կադիքսում»։

Մի այլ անգամ նա ասաց. «Եթե այդ պատմությունն ինձ վրա ութսուն հազար մարդ նստեր, ես այն չէի սկսի, բայց կպահանջվի տասներկու հազարից ոչ ավելի, իսկ դա դատարկ բան է։ Այդ մարդիկ չգիտեն, թե ինչ է ֆրանսիական զորքը։ Պրուսացիները նույն կերպ էին իրենց պահում, իսկ չէ՞ որ հայտնի է, թե դա նրանց համար ինչով վերջացավ»։

Սակայն մահացու տագնապի մի ամբողջ շաբաթվա ընթացքում բանակցությունները ոչ մի քայլ առաջ չգնացին։ Հարկավոր էր գրությունից ելք գտնել. Նապոլեոնը սովոր չէր, որ իրեն դիմադրեն, նա երես էր առել իր մշտական շլված-չտեսնված հաջողություններից և բոնակալական տիրակալությունից. դժվարությունները կարող էին նրան դրդել դաժան արարքների։ Ասում են, որ իրը այդ օրերին նա բերնից նույնիսկ խոսք է դուրս թռցրել ամբոցում բանտարկելու մասին։ Հաջորդ օրը նա ներողություն խնդրեց Ֆերդինանդի լիազորից. «Դուք չպետք է վիրավորվեք այն բանից, ինչ երեկ լսեցիք ինձնից։ Անշուշտ, ես դա չէի անի»։

ԳԼՈՒԽ XXXVII

Համոզվելով, որ Աստուրիայի թագաժառանգը ոչ մի զիջման չի համաձայնվի, Նապոլեոնի գլխում հաջող միտք ծագեց մանրախնդրություն անել Կարլոս IV-ի հրաժարագրի նկատմամբ և պահանջել, որ այն անվավեր ճանաչվի։ Այդ հրաժարագիրը, ըստ երևույթին, ստիպողական է եղել և հետո այն ետ է վերցվել։

Իշխան Միրան ազատվեց Մադրիդի բանտից և ապրիլի 26-ին տարվեց Բայոնա։ Մայիսի 1-ին այնտեղ ժամանեցին «հին տիրակալները», ինչպես նրանց անվանում էին իսպանացիները։ Նրանց արտաքինն ուժեղ տպավորություն գործեց։ Նրանք դրժբախտ էին, իսկ երկար տարիներ պահպանվող պալատական վարվելակարգն ամբոխն ընդունում էր որպես ոգու կայունություն։

Հենց որ թագավորն ու թագուհին առանձնացան իրենց սենյակները, Բայոնայում գտնվող բոլոր իսպանացիները թագաժառանգ Ֆերդինանդի գլխավորությամբ ֆրանսիացիների ներկայությամբ կատարեցին ձեռք համբուրելու արարողությունը. բոլորը հերթով ծունկի են գալիս և համբուրում թագավորի ու թագուհու ձեռքը։ Հանդիսականները, որոնք առավոտյան «Gasette de Bayonne»-ում կարդացել էին Արանխուեսի իրադարձության նկարագրությունը և թագավորի բողոքը, իսկ այժմ տեսնում էին, թե ինչպես այն նույն մարդիկ, որոնք մասնակցել էին մարտ ամսվա դավադրությանը, իրենց նվիրվածությունն են արտահայտում տարաբախտ թագավորին, զայրացած էին նման երկերեսանիությունից և զուր էին կաստիլյան հպարտության դրսևորումներ փնտրում։ Ֆրանսիացիները միամտություն ունեին իսպանական ժողովրդի մասին դատելու ըստ հասարակության

բարձր դասակարգերի, որոնք ամենուր միանման էին զգացմունքների հարցում։

Երբ արարողությունն ավարտվեց, Աստուրիայի թագաժառանգը ցանկացավ ծերունիների ետևից գնալ նրանց ներքին սենյակները գնալ։ Թագավորը կանգնեցրեց նրան՝ իսպաներեն ասելով. «Արքայազն, մի՞թե դուք դեռ քիչ եք անարգել իմ ճերմակ մազերը»։ Այս խոսքերն անհնազանդ որդու վրա շանթ ու որոտի նման աղդեցին[1]։

ԳԼՈՒԽ XXXVIII

Թագավորն ու թագուհին Նապոլեոնին պատմեցին այն անարգանքների մասին, որ իրենք ստիպված են եղել կրելու։ «Դուք չգիտեք,— ասում էին նրանք,— թե ինչ է նշանակում վիրավորանք կրել հարազատ որդուց»։ Նրանք ասում էին նաև այն արհամարհանքի մասին, որ իրենց ներշնչել է լեյթ-գվարդիան՝ վախկոտների այդ խառնամբոխը, որը դավաճանել է իրենց։

Ֆրանսիական միջնորդներն առանց որևէ դժվարության համոզեցին իշխան Միրային, որ Իսպանիայում նրա հետագա կառավարման մասին խոսք անգամ լինել չի կարող։

Դեռևս թագավոր Կառլոս IV-ի ժամանման նախօրյակին Նապոլեոնն իր մոտ կանչեց պ-ն Էսքորիկիսին և նրան հանձնարարեց հայտնել Աստուրիայի թագաժառանգին, որ բոլոր տեսակ բանակցությունները նրա հետ ընդհատված են, և որ այսուհետ բանակցությունները միայն Իսպանիայի թագավորի հետ են վարվելու։ Իսկ Նապոլեոնը, գործելով իշխան Միրայի միջոցով, կարող էր թագավորից ստանալ այն ամենը, ինչ ցանկանում էր։ Անգլիացիները համառորեն լուրեր էին տարածում, թե բռնություն է գործադրվել, դավադրություններ են եղել, իսկ իրականում այստեղ ո՛չ բանտարկուներ են եղել, ո՛չ էլ դավադիրներ, այլ, ինչպես սովորաբար, եղել են միայն տխմարներ, որոնց հիմարացրել ու քթից բռնած ման են ածել արքաները։ Եվ դարձյալ, ինչպես սովորաբար, այդ ամենից օգուտ քաղեց օտարերկրյա տիրակալը, որի միջամտությունը թելադրված էր միջազգային իրավունքին խիստ հակասող գործողություններով։

[1] «Moniteur», 1808 թվականի մայիսի 6։

ԳԼՈՒԽ XXXIX

Այն ժամանակ, երբ Կառլոս IV թագավորը, Բայոնայում գտնվելով, իր որդի Ֆերդինանդ VII-ից պահանջում էր, որ նա իրեն վերադարձնի թագը, Մադրիդի բնակիչներն այս բոլոր արտակարգ իրադարձություններից անհանդստացած և իրենց տիրակալների կրած նվաստացումն իբրև ողջ ազգի անպատվություն ընդունելով, մայիսի 2-ին ապստամբեցին*։ Այն մոտավորապես հարյուր հիսուն քաղաքացիների և հինգ հարյուր ֆրանսիական զինվորների կյանք խլեց։ Այդ դեպքերի վերաբերյալ խիստ չափազանցված լուրերը Ֆրանսիայում ստացվեցին մայիսի 5-ին։ Կառլոս IV-ն իր մոտ կանչեց որդուն։ Թագավորը, թագուհին և Նապոլեոնը նստած էին։ Նրանց առջև կանգնած Աստուրիայի թագաժառանգի վրա կարկտի նման փողոցային հայհոյանքներ էին թափվում։ «Ես ներկա էի բեռնակիրների վեճին»,— հետո նոզկանքով ասել էր Նապոլեոնը։ Վախեցած թագաժառանգը համաձայնվեց անվերապահորեն ու վերջնականապես հրաժարվել գահից։

Այդ նույն օրը, 1808 թվականի մայիսի 5-ին, Կառլոս թագավորը Նապոլեոնին զիջեց Իսպանիայի նկատմամբ ունեցած իր բոլոր իրավունքները։

Աստուրիայի թագաժառանգը նույնպես հրաժարվեց իր բոլոր իրավունքներից՝ հօգուտ Նապոլեոնի, բայց, ըստ լուրերի, այդ քայլին դիմեց միայն այն բանից հետո, երբ զառամյալ թագավորը՝ նրա հայրը, մի քանի անգամ մահապատժով սպառնաց նրան։ Թագաժառանգը հիշում էր դոն Կառլոսի օրինակը, իսկ, բացի այդ, նույնիսկ աշխարհի ամենաանկողմնակալ դատարանը նրան մահվան կդատապարտեր՝ որպես հարազատ հոր և օրինական թագավորի դեմ ուղղված դավադրությունների անվիճելի մասնակցի։

Նապոլեոնին մեղադրում են այն բանում, որ նա իբր իբրև նույնիսկ թույլ է տվել նրան ասելու. «Արքայազն, ընտրություն արեք ձեր իրավունքներից հրաժարվելու և մահվան միջև»[1]։ Հետաքրքիր է, թե ինչպես կկարողանան սերունդներին ապացուցել, որ այդ խոսքերն արտասանվել են։

[1] Մեվալիոս*, էջ 52։

Իսպանական Բուրբոնները բնակություն հաստատեցին տարբեր քաղաքներում. Կառլոս թագավորն ամենուր և ամեն առիթով բոլորին հավատացնում էր իր նվիրվածությունն ու հավատարմությունն իր օգոստափառ դաշնակցին։ Ոչ ոք դեռևս չէր մեղադրում Նապոլեոնին, որ նա Կառլոսի վրա ներազդել է սպառնալիքներով։ Ինչ վերաբերում է Ֆերդինանդ VII-ին, ապա նա բնակություն հաստատեց Վալանսե գեղեցիկ կալվածքում։

Սրանով վերջանում է այն, ինչ ընդունված է Նապոլեոնի «ուխտադրժություն» անվանել։ Ի վիճակի չլինելով հասկանալու նրա հակառակորդների փոքրոգությունը, Եվրոպան որպես ծանր հանցագործություն Նապոլեոնին մեղսագրեց նրա իսկ հակառակորդների ցուցաբերած հիմարությունը։

Նապոլեոնը գեներալ Սավարիին ուղարկեց Աստուրիայի թագաժառանգի մոտ՝ նրան համոզելու՝ Բայոնա գալ, բայց երբեք չխոստացավ նրան թագավոր ճանաչել[1]։ Թագաժառանգը Բայոնա եկավ, որովհետև այդ ուղևորությունն օգտակար էր համարում իր շահերի համար։ Նա ենթադրում էր, թերևս իրավացիորեն, որ միայն Նապոլեոնն է ի վիճակի իրեն փրկել ծերունի հորից ու իշխան Միրայից։

Իսպանական իշխանավոր պ-ն դը Ուրկիխոն 1808 թվականի ապրիլի 13-ին Վիտորիայում հանդիպել է իր շքախմբով Բայոնա ուղևորվող երիտասարդ թագավորին։ Նույն օրը նա գրել է փոխարքա Լա-Կուեստային. «... Ես նրանց (Ֆերդինանդ VII-ի մինիստրներին) ասացի, որ Նապոլեոնը միայն մի նպատակ է հետապնդում՝ Լյուդովիկոս XIV-ի օրինակով տապալել Բուրբոնների դինաստիան Իսպանիայում և գահ բարձրացնել ֆրանսիական դինաստիան։ Ընդունելով իմ փաստարկների ծանրակշռությունը, դուքս Ինֆանտադոն ինձ հարցրեց. «Հնարավո՞ր է արդյոք, որ Նապոլեոնի պես հերոսն ընդունակ լինի իրեն նման արարքով արատավորելու, երբ թագավորը մեծագույն վստահությամբ իրեն հանձնում է նրա ձեռքը»։ «Նայեցեք Պլուտարքոսը,— պատասխանեցի ես,— և դուք կտեսնեք, որ բոլոր այդ հունական ու հռոմեական հերոսներն իրենց հռչակը վաստակել են միայն հազարավոր դիակների վրայից անցնելով, բայց այդ ամենի մասին մոռանում են և հարգալից զարմանքով նայում այդ գործողությունների արդյունքներին»։ Ես ավելացրի, որ նա, հավանորեն, հիշում է, թե Կառլոս V°-ը ինչպես էր տիրանում թագերին, այն դաժանությունների մասին, որ այդ միապետը կատարում էր տիրակալների ու ժողովուրդների հանդեպ, իսկ մինչդեռ, չնայած այդ ամենին, նա հերոս է համարվում. որ, այնուհետև, նա պետք է հիշի, որ մենք ճիշտ նույն կերպ էինք վարվում հնդկացիների կայսրերի ու թագավորների հետ... որ դրա վրա է հիմնված աշխարհի բոլոր դինաստիաների տիրապետությունը. որ մեր Իսպանիայում հնում թագավորների սպանության դեպքեր են եղել բռնատիրողների կողմից, որոնք այնուհետև հաստատվել են գահին. որ ավելի ուշ ժամանակների համար կարելի է նշել այն սպանությունը, որ կատարել է պոռնկորդի Էնրիկե II°-ը, և Հենրիխ IV°-ի ընտանիքի վերացումը, ինչպես նաև այն, որ ավստրիական դինաստիան և Բուրբոնների դինաստիան առաջացել են նման արյունապղծությունից ու նման ոճրագործություններից... Ես նրան ասացի, որ դատելով, թե «Moniteur»-ը ինչպես է շարադրում իրադարձությունների ընթացքը, ինձ համար պարզ է, որ Նապոլեոնը Ֆերդինանդին թագավոր չի ճանաչում և գտնում է, որ նրա հոր գահընկեցությունը, որ կատարվել է զինված պայքարի ու ժողովրդական խռովության ժամանակ, օրինական ուժ չունի. որ ինքը՝ Կառլոս IV-ը պատրաստ է իր հրաժարումն անվավեր ճանաչել. որ, էլ չխոսելով այն մասին, թե ինչ է տեղի ունեցել Կաստիլիայի թագավոր Խուան I°-ի հետ, մենք ավելի ուշ դինաստիաներում (ավստրիական ու Բուրբոնների) երկու օրինակ ունենք, երբ միապետները՝ Կառլոս V-ը առաջին և Ֆիլիպ V-ը երկրորդ դեպքում, հրաժարվել են գահից, և որ այդ երկու հրաժարումն էլ մեծագույն հանդարտությամբ են կատարվել, խելամիտ քննարկումից հետո և նույնիսկ ազգի ներկայացուցիչների ներկայությամբ[1]»։

Պ-ն Էսքորիկիսի հետ ունեցած զրույցում, որը մինչև այժմ ամենահետաքրքիր և ամենահավաստի վկայությունն է սույն

[1] «Թեև ձեր ներկայացուցիչները շարունակ հրաժարվում էին օրինական թագավոր ճանաչել նրան» (Էսքորիկիսի հրապարակած զրույցը)։

[1] Այս բոլորը բառացի առնված է պ-ն Էսքորիկիսի գրքից։ Մենք այստեղ վկայակոչում ենք բացառապես այն երկերը, որոնք լույս են ընծայել կայսեր հակառակորդները։

գործի վերաբերյալ, քանի որ այն հրապարակել է հակառակ կողմը, Նապոլեոնը շատ իրավացիորեն հայտարարեց. «Դե՛, վերջապես միապետների գործողությունները կառավարող գերագույն օրենքը, նրանց պետությունների առավելագույն բարօրության օրենքն ինձ պարտավորեցնում է այն բանին, ինչ ես ձեռնարկում եմ»։

Ի մեծ զարմանս հիմարների, անհրաժեշտ է նկատել, որ այն միապետը, որը հանդիսանում է ժողովրդի լոկ լիազորը, երբեք իրավունք չունի ինքնակամ մեծահոգություն դրսևորելու և ապարդյուն զիջումներ անելու։ Այս հարցին մենք նորից կհանդիպենք Իտալիայում, որտեղ շատերն են Նապոլեոնին կշտամբում այն բանի համար, որ նա լիակատար անկախություն չի պարգևել իտալացիներին, թեև, նրա համոզմունքով, դա կհակասեր Ֆրանսիայի շահերին։

Նապոլեոնը, որի վրա Իսպանիան առանց զգուշացնելու հարձակվեց այն պահին, երբ նրան ամբողջովին կլանված էր համարում Պրուսիայի դեմ մղվող կռվով, պետք է Բայոնայում Իսպանիայի հետ վարվեր այնպես, ինչպես առավել օգտակար էր համարում Ֆրանսիայի համար։ Մի՞թե իսպանացիները չէին կարող այնպիսի մարդկանց առաջնորդությամբ, ինչպիսին են Լասսին* ու Գոդոյենն*, Ենայի տակ Նապոլեոնի պարտվելու դեպքում, Բորդո և Տուլուզ ներխուժել հենց այն ժամանակ, երբ պրուսացիները կգրավեին Ստրասբուրգը և Մեցը։

Գալիք սերունդները կորոշեն, թե ժողովրդի լիազորը հանցագործությո՞ւն է կատարում արդյոք, երբ օգուտ է քաղում իր հակառակորդների արտակարգ հիմարությունից։ Ինձ թվում է, որ, ի հակադրություն մեր ժամանակների, գալիք սերունդներն ավելի շատ գայրանալու են Իսպանիային, քան նրա կարծեցյալ տիրակալներին պատճառած վնասի համար։ Մեր աչքի առջև Նորվեգիայի օրինակն է։

Պարսավագրեր հորինողները Նապոլեոնին մեղադրում են այն բանում, որ նա չափազանց շատ էր արհամարհում մարդկանց։ Տվյալ դեպքում նա, ինչպես տեսնում ենք, խոշոր սխալ է թույլ տվել այն պատճառով, որ չափազանց շատ է հարգել իսպանացիներին։ Նա մոռացել էր, որ հպարտ կաստիլիացիները, որոնց առաջին անգամ նվաստացրել էր Կառլոս V-ը, այդ փառաբանված կայսեր ժամանակներից ի վեր ենթակա են ամենանողկալի բռնապետության՝ որպիսին միայն կարելի է երևակայել։

Գեներալ Լա-Կուեստային գրած նամակում պ-ն դը Ուրկիխոն ասում է. «Դժբախտաբար, Կառլոս V-ի ժամանակներից ի վեր ազգն այլևս գոյություն չունի, քանզի ո՛չ քաղաքական օրգան կա, որն իրոք ներկայացնի նրան, ո՛չ էլ ընդհանուր հետաքրքրություններ կան, որոնք նրան համախմբեին միասնական նպատակի ձգման մեջ։ Մեր Իսպանիան զոթական շենք է, որը բաղկացած է բազմաթիվ առանձին մասերից և կից կառույցներից, որոնք իրենց արտոնությունների, օրենքների, սովորույթների և հետաքրքրությունների բազմազանությամբ հիշեցնում են մեր գավառները։ Հասարակական կարծիք գոյություն չունի»։

Տասնհինգ տարվա ընթացքում իսպանական միապետությունն իրեն այնպիսի խայտառակությամբ էր պահել, որպիսին չի կարելի հանդիպել նույնիսկ այն արքունիքների տարեգրերում, որոնք, կարծես, ծայրահեղ անկման էին հասել։ Ազնվականությունից և հոգևորականությունից բաղկացած այդ արիստոկրատիան, որը միայն ինքն էր ի վիճակի փայլ տալ միապետությանը, ասես բավականություն էր զգում, երբ իրեն ծաղրում էին։ Ամուսինն ու թագավորը հաջորդաբար զիջում է իր կնոջ սիրեկանին՝

1) ծովային ու ցամաքային բոլոր ուժերի հրամանատարությունը.

2) պետության գրեթե բոլոր պաշտոնական անձանց նշանակումը.

3) պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու իրավունքը[1]։

Եթե այդ սիրեցյալն այնպիսի խառնվածքի տեր մարդ լիներ, ինչպես Ռիշելյոն, Պոմբալը* կամ Հիմենեսը*, այսինքն՝ հմուտ շարագործ, իսպանացիներին, թերևս, դեռ կարելի էր հասկանալ, բայց պարզվեց, որ նա Եվրոպայի ամենաապաշնորհ սրիկան է։ Իսպանական ժողովուրդը, որը շատ հպարտ ժողովրդի համբավ ունի, ստիպված էր երբեմն հանդուրժել բռնապետական կառավարումը մի մարդու, որին մեծագույն արհամարհանքով էր վերաբերվում։ Բայց մի կողմ թողնելով հպարտության հարցը, ինչպես հասարակության, այնպես էլ առանձին մարդկանց համար ինչպիսի՜ անսպառ դժբախտություն պետք է լիներ նման ամո-

[1] Էսքորիկիսի հրատարակած գրությը։

թալի տիրապետության հետևանքը։ Իսպանիայի համեմատությամբ մինչև 1789 թվականի Ֆրանսիայի արիստոկրատական կարգերը համարյա հանրապետական են թվում։ Եվ այնուամենայնիվ, Իսպանիան մերժեց լիբերալ սահմանադրությունը և, որ շատ ավելի կարևոր է, այն սահմանադրությունը, որի երաշխիքն այն էր, որ գահընկեց արված օրինական միապետը մոտիկ գտնվեր։

Միայն արդեն շատ չափահաս տարիքի հասած և ուրիշների հանդեպ արհամարհանք տածող մարդը, գրեթե հավասար այն արհամարհանքին, որին նրանք արժանի են, կարող է պատկերացնել նման գործողությունների հնարավորությունը։ Նապոլեոնը Կորսիկայում և Ֆրանսիայում ապրելով եռանդով ու խելքով աչքի ընկնող ժողովուրդների մեջ, իսպանացիների հարցում խաբվեց իր պարզասրտությամբ։

Իսպանիան իր կողմից ձեռքից բաց թողեց այն առիթը, որ հետագա դարերում այլևս չի ներկայանա նրան։ Յուրաքանչյուր հզոր տերություն իր շահը տեսնում է (ճիշտ է, սխալմամբ) նրանում, որ իր հարևաններն անզոր և անկման վիճակում լինեն։ Այստեղ (միանգամայն բացառիկ մի դեպք) Ֆրանսիայի շահերը կարճ ժամանակով համընկան Իբերիական թերակղզու շահերին։ Իսպանիան իր առջև ուներ Նապոլեոնի կողմից փառավորված Իտալիայի օրինակը։ Թեև իսպանական ազգը գոհ է այն զզվելի վիճակից, որի մեջ ինքը գտնվում է, այնուամենայնիվ, թերևս երկու հարյուր տարի հետո, նա կկարողանա իր համար սահմանադրություն ձեռք բերել, բայց մի սահմանադրություն, որը ոչ մի երաշխիք չի ներկայացնում՝ բացի երդում կոչվող հնացած անհեթեթությունից, և այն էլ միայն աստված գիտե, թե արյան ինչպիսի հեղեղներ կնստի նրա վրա։ Այնինչ, համաձայնվելով թագավոր ճանաչել Ժոզեֆին, իսպանացիները կստանային հեզահամբույր, լուսավորյալ, իշխանասիրությանը խորթ մի տիրակալ, որն ասես սահմանադրական միապետ լինելու համար էր ստեղծված, և ամբողջ երեք դարով կարագացնեին երջանիկ օրերի գալն իրենց երկրի համար։

ԳԼՈՒԽ XL

Ենթադրենք, թե Ֆերդինանդ VII-ն իր բախտը վստահեց կայսրին, ինչպես Նապոլեոնը Ռոշֆորում իր բախտը վստահեց անգլիացիներին։ Իսպանական թագաժառանգը հրաժարվում է Էտրուրիայի թագավորությունից. նրան տեղավորում են Վալանսեում՝ հաճելի, առողջարար մի վայրում, իսկ անգլիական ժողովրդի զովական մեծահոգությանը դիմած Նապոլեոնին մեկուսացնում են ժայռոտ մի կղզում, որտեղ զարտուղի ճանապարհներով, թույնի չդիմելով, քանի որ դա զայրույթ կառաջացներ, աշխատում են նրան հասցնել կործանման։ Ես չեմ ուզում ասել, թե անգլիական ազգը մյուսներից ավելի անազնիվ է. ասեմ միայն, որ նախախնամությունը նրան շարաբախտ առիթ տվեց ցույց տալու, որ նա անազնիվ է։ Իրոք, ինչպիսի՞ բողոքով անգլիացիներն արձագանքեցին այդ շարագործությանը։ Ինչպիսի՞ մեծահոգի, համաժողովրդական պոռթկումով նրանք, լսելով այդ ստորության մասին, ամբողջ աշխարհի առջև նշավակեցին իրենց կառավարությանը։ Օ՜, սուրբ Հելենեի ապառաժ՝ այսուհետև այնքա՜ն հռչակավոր, դու անգլիական ազգի փառքը կործանող ստորջրյա խութ դարձար։ Անգլիան, որ իր կեղծ երեսպաշտության օգնությամբ վեր էր բարձրացել մյուս ժողովուրդների նկատմամբ, հանդգնում էր խոսել իր առաքինությունների մասին։ Այդ ամոթալի քայլը նրան դիմակազերծ արեց. այսուհետև թող նա միայն իր հաղթանակների մասին խոսի, քանի դեռ դրանք կտանի։ Եվ, սակայն, Եվրոպան ձայն չի հանում ու մեղադրում է Նապոլեոնին կամ, համենայն դեպս, ականջ դնում նրան մեղադրողներին։ Ես խոսքեր չեմ գտնում, որպեսզի մտքերս արտահայտեմ։ Օ՜, վախկոտ ու նախանձոտ մարդիկ, չա՞փ ունի արդյոք այն արհամարհանքը, որ դուք ընդունակ եք հարուցել ձեր հանդեպ։ Եվ եթե չի հաջողվում ձեզ հպատակվել ձեր կամքին, ապա ավելի ճիշտ չէ՞ արդյոք ձեզ ողորմելի որսի տեղ դնելով, զվարճանալ ձեզանով[1]։

[1] Տե՛ս դներալ Բերտրանի նամակը սրբ Հելենն Լուսին։ (Փաստաթղթեր ս. Հելենեի կղզում տանջվող կայսրի վերաբերյալ, Լոնդոն, 1818)։ Ապա տե՛ս լորդ Բնտհերստի կեղծավոր ճառը և գոկտոր Օ'Միրայի նամակները։

ԳԼՈՒԽ XLI

Մի քանի խոսքով վերջացնենք այս իսպանական գարշելի գործերը։

Բայոնայում տեղի ունեցած տխրահռչակ զրույցի ժամանակ Էսքոիկիսն ասել է Նապոլեոնին. «Անգեն ժողովուրդը Մադրիդում իրեն բավականաչափ ուժեղ էր երևակայում՝ ֆրանսիական բանակը ջախջախելու և Ֆերդինանդին պաշտպանելու համար։ Արդյունքը եղավ այն, որ անհաղթահարելի արգելքներ կառաջանային, եթե ցանկանային դիմել Ֆերդինանդին ազատություն վերադարձնելու միակ միջոցին։

Ն ա պ ո լ ե ո ն. Ո՞րն է այդ միջոցը, պարոն կանոնիկոս։

Է ս ք ո ի կ ի ս. Այն, որպեսզի նրան փախչելու հնարավորություն տրվի։

Ն ա պ ո լ ե ո ն. Ո՞ր աշխարհամասն էիք դուք մտադիր նրան ուղարկել։

Է ս ք ո ի կ ի ս. Ալիսեիրաս, որտեղ մենք արդեն որոշ զորքեր ունեինք, և որտեղ մենք Ջիբրալթարին մոտ կգտնվեինք։

Ն ա պ ո լ ե ո ն. Հետո՞ ինչ կանեիք։

Է ս ք ո ի կ ի ս. Մշտապես հետևելով Ձերդ մեծության հետքերը, բայց միաժամանակ մեզ չնվաստացնող դաշինքի մեջ լինելու մեր սկզբունքին, մենք Ձերդ մեծությանն ուլտիմատիվ կերպով կառաջարկեինք առաջիկայում ևս պահպանել այդ սկզբունքը, այն պայմանով, որ անհապաղ մեզ վերադարձվեին սահմանամերձ ամրոցները, իսկ ֆրանսիական զորքերը դուրս բերվեին Իսպանիայից։ Եթե Ձերդ մեծությունը հրաժարվեր ընդունել այդ առաջարկությունները, մենք կսկսեինք պատերազմել մեր բոլոր ուժերի լարումով՝ մինչև վերջին ծայրահեղությունը։ Այդպիսին կլիներ, Ձերդ մեծությո՛ւն, իմ կարծիքը, եթե մենք այս կամ այն կերպ ծանոթանայինք ձեր իսկական մտադրությունների հետ։

Ն ա պ ո լ ե ո ն. Դուք շատ ճիշտ եք դատում. դա լավագույնը կլիներ, ինչ դուք կարող էիք անել։

Սակավ լուսավորյալ մարդիկ կրացականչեն. «Դուք Նապոլեոնի գործելակերպն Իսպանիայի հանդեպ այնպես եք գովաբանում, որ կարծես թե նա երկրորդ Վաշինգտոնն է»։

Դրան ես կպատասխանեմ. «Իսպանիային ամենաերջանիկ առիթ էր պատահել, ինչպիսին կարող է ներկայանալ բարոյազրկված և, հետևաբար, իր սեփական ուժերով ազատության հասնելու անընդունակ երկրին։ Եթե Իսպանիային, այնպիսին, ինչպիսին նա 1808 թվականին էր, տային Միացյալ Նահանգների վարչաձևը, իսպանացիները՝ աշխարհի այդ ամենաանհոգ մարդիկ, այն կընկալեին որպես ամենաազատ ու կեղեքող բռնապետություն։ Նեապոլում Ժոզեֆի և Իոախիմի կատարած փորձը կարող է պարզաբանել այս դրությունը. նրանք թագավորներ են եղել՝ այս զբաղմունքին հատուկ գրեթե բոլոր ծիծաղելի առանձնահատկություններով հանդերձ, բայց նրանք իրենց չափավոր ու խելացի էին պահում։ Դա բավական եղավ, որպեսզի արագ բարձրանա այդ մարդերի բարեկեցությունը, և բարելավվեն գատարանները, որպեսզի այնտեղ հարգանք արմատավորվի աշխատանքի նկատմամբ։ Նկատի առեք, որ այն տանջալից զգացումը, որ ապրում է անհատը՝ հրաժարվելով վատ սովորություններից, հատուկ է նաև ժողովրդին՝ ամբողջությամբ առած։ Ազատությունը կարիք է զգում, որ առաջին տարիներին իրեն պաշտպանեն։ Հիմարների աչքում այդ սահմանափակումները ծածկում են նոր հիմնարկների կողմից անխուսափելիորեն ստեղծված բարօրությունը»։

Այսպիսով, Իսպանիայի համար Նապոլեոնը Վաշինգտոնից ավելի լավ էր. լիբերալիզմի պակասը նրա մեջ փոխհատուցվում էր եռանդով։ Բերեմ մի փաստ, որը համոզիչ է նույնիսկ նրանց համար, ովքեր կույր են բարոյական վերափոխությունների նկատմամբ։ Իսպանիայի բնակչությունը, որի թիվը Ֆիլիպ II-ի դահ բարձրանալու պահին* ութ միլիոնից ավելի չէր, հասավ տասներկու միլիոնի ֆրանսիացիներին հատուկ առողջ դատողության այն աննշան մասի շնորհիվ, որ ֆրանսիական ծագում ունեցող թագավորները մտցրին երկրի կառավարման մեջ։ Իսկ չէ՞ որ Իսպանիան, որն ավելի ընդարձակ երկիր է, քան Ֆրանսիան, արևի առատության պատճառով պետք է ավելի բերրի լինի. նա օժտված է գրեթե բոլոր այն առավելություններով, որոնք սովորաբար հատուկ են կղզիների տարածքներին։ Իսկ ո՞րն է այն գաղտնի պատճառը, որ խոշընդոտում է տասնչորս միլիոն մարդու լրջաշխարհ գալուն։ Ինձ կպատասխանեն. «Այնտեղ վատ են մշակում հողը»։ Ես դրան կառարկեմ. «Ո՞րն է այն թաքնված չարիքը, որը խանգարում է լավ մշակել հողը»։

Այն բանից հետո, երբ դրանից ինսնսուն տարի առաջ կավով դահ բարձրացած դինաստիայի թագավորները հրաժարվեցին Իսպանիայի նկատմամբ ունեցած իրենց իրավունքներից, Նապոլեոնը որոշեց հրավիրել երկրի ներկայացուցիչներին, որոնք ճանաչեին իր իրավունքները, մտցնել սահմանադրություն և, հենվելով իր հեղինակության ու հզորության վրա, գործի դնել նոր ապարատը։ Եվրոպայի բոլոր երկրներից Իսպանիան, թերևս, այն միակ երկիրն էր, որտեղ Նապոլեոնն առավել հիացմունք էր առաջացնում՝։ Համեմատեցեք նրա գործելակերպն այն գործելակերպի հետ, որին 1713 թվականին հետևում էր Լյուդովիկոս XIV-ը. ծանոթացեք, մասնավորապես, այն և այս դարաշրջանի միապետին հպատակ անձանց՝ մինիստրների, մարշալների, գեներալների և այլոց[1] գրագրություններին, և դուք կհամոզվեք, որ տիկին դը Ստալի ու պարսավագրերի ժամանակակից հեղինակների հաջողության, ինչպես նաև ս. Հեղինե կղզում տառապող կայսրավորի պաշտպանների հասցեին ամբոխի շռայլած հարձակումների ու ծաղրանքի գլխավոր աղբյուրը նախանձն է։

Ապացուցելու համար, որ նոր թագավորի իրավունքների աղբյուրը ժողովրդի իրավունքներն են, Նապոլեոնը մտադրվեց Բայոնայում հրավիրել իսպանական միապետության տարբեր հաստատությունների հարյուր հիսուն ներկայացուցիչներից բաղկացած ժողով։ Դեպուտատների մեծամասնությունն ուղարկել էին գավառները, քաղաքները և կորպորացիաները. մնացածներին նշանակել էր Մադրիդում կառավարող ֆրանսիական գեներալը (Բերգի մեծ դուքս Մյուրատը)։ Ինչպես և առհասարակ հեղափոխությունների ժամանակ, այս ամենում ոչինչ լիովին օրինական չէր, քանզի ինչպե՞ս կարող էր տվյալ ժողովրդի քաղաքական կացութաձևը, այլ կերպ կոչված, նրա պետական կարգը, սկզբունքներ նշել այդ կարգի փոփոխման համար։ Դա ներքին հակասություն կլիներ։ Ամեն ինչում երևում էր խուճապ և իրադարձությունների արագ ընթացք, բայց ընդհանուր առմամբ խելացի սկզբունքներն անխախտ էին մնում։ Այսպես, օրինակ, ո՞ւմ կարելի էր իրավունք տալ դեպուտատներ նշանակելու Ամերիկայի կողմից։ Ներգրավվեցին առավել նշանավոր մարդիկ՝ իսպանական Ամերիկայում ծնվածների թվից, որոնք այն ժամանակ ապրում էին Մադրիդում, և ընտրությունը հաջող եղավ։ Այդ մարդիկ նախապաշարմունքներով ավելի քիչ էին ստրկացած, քան իսպանացիները։

Խունտայի նիստերը բացվեցին 1808 թվականի հունիսի 15-ին. սկզբում այն յոթանասունհինգ անդամ ուներ, ապա դրանց թիվը հասավ ինսնսունի։ Խունտայի հրավիրումից առաջ Նապոլեոնը հրապարակեց մի դեկրետ, որի մեջ հայտարարեց, որ Իսպանիայի գլխավոր հաստատությունների միջնորդությամբ ինքը որոշել է գահաթափությանը վերջ տալու նպատակով իր եղբայր Ժոզեֆին հռչակել Իսպանիայի և երկու Հնդկաստանների թագավոր՝ երաշխավորելով միապետության անկախությունը և նրա անբաժանելիությունն աշխարհի չորս մասում[1]։ Ժոզեֆը Բայոնա ժամանեց հունիսի 7-ին. նա դժգոհությամբ բաժանվեց այն զվարճալի կյանքից, որ վարում էր Նեապոլում։ Քաջությամբ հավասար լինելով Ֆիլիպ V-ին, նա նույնպես քիչ էր ընդունակ գլխավորելու բանակը։

Բայոնայում հավաքված դեպուտատները հունիսի 17-ի երեկոյան Ժոզեֆին թագավոր ճանաչեցին։ Լսելով դուքս Ինֆանտադոյի ճառը, որն իր մեջ չէր պարունակում տեղի ունեցածի ձևական ընդունումը, Նապոլեոնը բացականչեց. «Պարոն, բոլոր խուսանավումներն այստեղ անտեղի են. կա՛մ լիակատար համաձայնություն, կա՛մ էլ վճռական մերժում։ Հարկավոր է մեծ լինել թե՛ հանցագործության, թե՛ առաքինության մեջ։ Դուք ցանկանում եք վերադառնալ Իսպանիա և կանգնել ապստամբների գլո՞ւխ։ Խոսք եմ տալիս, որ կհրամայեմ ձեզ ողջ ու առողջ հասցնել այնտեղ, բայց նախազգուշացնում եմ. դուք կհասնեք այն բանին, որ մի շաբաթ հետո կդնդակահարվեք... Ո՛չ, քսանչորս ժամ հետո»[2]։

Նապոլեոնը չափազանց խելոք էր և չափազանց մեծահոգի, որպեսզի ի կատար ածեր այդ սպառնալիքը։ Ֆրանսիական բանակի լեզվով դա կոչվում է «թշնամուն գրոհել խոսքերով», այլ կերպ ասած՝ շլացնել անվճռական միտքը։

---

1 Սեն-Սիմոն, մարկիզ դը Սեն-Ֆիլիպ, Մարշալ դը...-ի նոթերը։

1 «Moniteur», 18 հունիսի 1808 թ.։

2 Տե՛ս դուքս Ինֆանտադոյի ճառը «Moniteur»-ի հունիսի 18-ի համարում։ Կաստիլիայի հերոսներին՝ պ-ն դքսի նախնիներին, հեշտ չէր լինի իրենց ճանաչել գրառում...

Տասներկու նիստից հետո ժողովը հուլիսի 7-ին ավարտեց իր աշխատանքը։ Այն Իսպանիայի համար սահմանադրություն մշակեց։ Այդ սահմանադրության նախագիծը Բայոնայից ուղարկվեց Մադրիդի կառավարության խունտային։ Նախագիծը Բայոնա վերադարձվելուց հետո դրա հոդվածների թիվը զգալիորեն ավելացվեց. Մադրիդում եղած ութսուն հոդվածից այն հասավ հարյուր հիսունի։

Ինչպես տեսնում ենք, խելացի սկզբունքներին համապատասխան, ժողովին հանձնարարվել էր սահմանադրություն կազմել՝ առանց այդ գործում գործադիր իշխանության որևէ մասնակցության։ Այդ նախաձեռնության անտեսումը 1792 թվականին կործանեց Ֆրանսիան։

Բայոնայի ժողովի անդամները, ինչպես երևում է թագավոր Ժոզեֆին ուղղված նրանց ճառերից, նվազագույն ցանկություն չունեին նահատակվելու, սակայն նրանք տակտ դրսևորեցին, որն ակնհայտորեն վկայում էր այն մասին, որ իրենց խորհրդակցություններում նրանք օգտվել էին զգալի ազատությունից։ Արդեն իրենց լիազորված չհամարելով որոշելու նախկին դինաստիայի տապալումը և մյուսի հրավիրումը, նրանք չսկսեցին շոշափել այդ կարևորագույն հարցը։

Դեպուտատները միաձայն ընդունեցին, որ սահմանադրության քննարկման իրենց ազատությունը ոչ մի սահմանափակման չի ենթարկվել։ Այն համառությունը, որով իսպանական գրանդները պաշտպանում էին խոշոր մայորատներ ստեղծելու այնքան սակավազատամիտ իրավունքը, ցույց է տալիս, թե նրանք ինչպես հաստատապես համոզված էին նոր իրակարգի ամրության մեջ։ Աշխույժ վեճերը հարց հարուցեցին կրոնի հանդուրժողականության (մի բան, որն այնպես տարօրինակ է հնչում Իսպանիայում) և երդվյալների դատարան հիմնելու մասին։

Ինչպե՞ս էր այն ժամանակ իրեն պահում բոնապարտը, ինչպե՞ս էր նիստեր գումարում ժողովը։ Ըստ երևույթին, նա ոչ մի բոպե իրեն չէր խաբում այն առթիվ, որ այդ ներկայացուցչությունն իրավաղոր չէ հավանություն տալու այդքան մեծ փոփոխությանը։ Նա մշտապես ելնում էր այն սկզբունքից, որ ազգի նամանայնությունն ավելորդ է դարձնում այն ձևականությունները, որոնց հանգամանքները թույլ չեն տալիս կատարելու։

Սահմանադրության այն հատվածը, որ վերաբերում է Ամնիրիկային, բավական ազատամիտ էր և ընդունակ դեռ մի որոշ ժամանակ պահելու անկախության այն ձգտումը, որը հետագայում այնպես ուժգին ծավալվեց այս հիանալի երկրում։ Սահմանադրության այդ հոդվածները մշակել էր էլ-Մորալ անունով մեքսիկացի մի երիտասարդ կանոնիկոս, որն աչքի էր ընկնում խելքով, գիտելիքներով և հայրենիքի նկատմամբ տածած սիրով։ Ընդհանրապես, այն, ինչ լավ է Իսպանիայում, հիանալիորեն լավ է, բայց չկա մի այլ ժողովուրդ, որի մեջ լուսավորյալ մարդկանց թիվն այդքան աննշան լինի։ Ինչքան այդ ժողովուրդը, ամբողջությամբ առած, ավելի շատ է ետ մնում դարից, այնքան ավելի վառ է խաժամուժի մեջ դրսևորվում այն տասնհինգ-քսան հազար միայնակ հայրենասերների գերազանցությունն ու իսկական վեհությունը, որոնց փառքն ու դժբախտությունն արձագանք է գտնում ամբողջ Եվրոպայում։ Ամեն անգամ, երբ հանդիպում եմ այդ վեհանձն զոհերից որևէ մեկին, ես զարմանք եմ զգում այն հրաշակայական ջանքի մասին մտածելուց, որ այդ մարդու միտքը ստիպված էր կատարել, որպեսզի վեր բարձրանա անհոգության ու կեղծ առաքինության նկատմամբ[1], որոնք ժողովրդի մնացած մասի աննկուն խիզախությունն ուղղել են ի վնաս իր սեփական շահերի։ Այնպիսի խառնվածքի տեր մարդիկ, ինչպիսիք են Աուգուստո Արգելիեսը*, էլ-Մորալը*, Պուլիեն, Լիորենտեն*, ակնառու կերպով ցույց են տալիս Եվրոպային, թե ինչ կգառնա Իսպանիան տասը տարի անց այն բանից հետո, երբ իր թագավորներից կկորզի երկպալատ սիստեմ և ինկվիզիցիայի ոչնչացում։

Ժոզեֆն ու Ժողովը Բայոնայից հեռացան հուլիսի 7-ին։ Նա, ում մտքով անցներ Ժոզեֆին ուղեկցող շքախմբով դատել, թե ինչ է կատարվել, երբեք չէր կռահի հենց նոր տեղի ունեցած ապշեցուցիչ փոփոխության մասին։ Ժոզեֆն իսպանացիներին ներկայացավ այն նույն մինիստրներով ու ռազմական պաշտոնյաներով շրջապատված, որոնք ծառայել էին երկրի նախկին տիրակալներին։ Այն ամենը, ինչ գոյություն էր ունեցել Բուրբոնների արքունիքում, մնացել էր անփոփոխ, միայն թագավորին էին փոխել։ Դրանից հետո թող մեզ չասեն, թե ազնվականությունը թագա-

[1] Այս կեղծ բարոյականության պապականության արդասիքի, էությունը հիանալի պարզաբանված է պ-ն Սիսմոնդիի՝ Իտալիայի պատմության XVI հատորում։

վորների պատվարն է։ Ընդհակառակը, հենց աղնվականությունն է ատելի դարձնում թագավորական իշխանությունը։

Ժողեֆը ժամանեց տասներկու միլիոնից պակաս բնակչություն ունեցող երկիրը, մի երկիր, որտեղ ամեն կերպ աշխատում էին բանակին զրկել ժողովրդի հարգանքից, որտեղ բանակին պետական գործերից հեռացնելու նպատակով, նրան պահում էին միապետության հեռավոր մասերում։ Հարյուր հիսուն տարվա ընթացքում այս երկիրը տառապել է տիրակալների իշխանության ներքո, որոնց նկատմամբ արհամարհանքն ավելի ուժեղ էր, քան ատելությունը։ Ֆինանսները, որոնց կառավարման գործում նույնպիսի ապաշնորհություն էր դրսևորվում, ինչպես և մնացած ամեն ինչում, և որոնք բացի դրանից ծախսվում էին աննպատակ, ծայրահեղ քայքայման էին հասել։ Իսկ դրանք ինչպե՞ս կարելի էր վերականգնել այն երկրում, որտեղ աշխատանքն անպատվություն է համարվում։ Առավել առաջավոր գավառներում բնակչությունն ինքն էլ զգում էր, որ թագավորին հարկավոր է փոխել, և իր հայացքն ուղղեց դեպի էրցհերցոգ Կառլոսը[1]։ Որքա՞ն երջանիկ կլիներ Իսպանիան, եթե այդ մտահղացումն իրականանար։ Այժմ նա կվայելեր այն երջանկությունը, որը միշտ հանդիսանում է խելացի, աղնիվ կառավարման և ամեն տեսակ արկածախնդրությունից զերծ արտաքին քաղաքականության արդյունքը։ Որքա՞ն տարբեր է նրա վիճակն ավստրիական տան հպատակների վիճակից։

Ժողեֆը բաժանում էր իր եղբոր մոլորությունը. նա բավականաչափ չէր արհամարհում մարդիկ կոչվող խուժանին։ Նա ենթադրում էր, որ իսպանացիներին այնքան հավասարություն և ազատություն տալ, որքան նրանք ի վիճակի են յուրացնել, նշանակում է շահել նրանց համակրանքը։ Իրականում այլ կերպ ստացվեց. իսպանացիներն իրենց վիրավորված զգացին այն բանի համար, որ Իսպանիա մտցված ութսուն հազար զինվորները չէին պատկանում ընտրովի զորքերին. նրանք դրանում արհամարհանք էին տեսնում։ Այդ պահից ամեն ինչ կորած էր։ Իրոք, ինչպե՞ս իր կողմը գրավել տգետ, մոլեռանդ, լիության մեջ ժուժկալ ժողովրդին, որը նույնքան է հպարտանում իր զրկանքներով, որքան

1 «Moniteur», 22 հունիսի 1808 թ.։

որ ուրիշները հպարտանում են իրենց հարստություններով. Իսպանացին բոլորովին շահամոլ չէ, նույնիսկ գործունեության այդ խթանը նրա մեջ բացակայում է. նա խնայող է, թեև ամենևին ժլատ չէ. նա չի ձգտում ժլատի նման ոսկու տեր դառնալ, բայց չգիտի, թե ինչի վրա ծախսի իր ունեցվածքը. իր շքեղ բնակարանում նա օրերն անց է կացնում տխուր ու պարապ՝ անձնատուր լինելով հպարտ մտքերի։ Բարքերը, արյունը, լեզուն, ապրելակերպը և պատերազմ վարելու ձևերը՝ այս ամենն Իսպանիայում հիշեցնում է Աֆրիկան։ Եթե իսպանացին մահմեդական լիներ, նա լրիվ աֆրիկացի կլիներ։ Նրա մեջ բորբոքվում են նույն կրքերը, նա հակված է նույն մենությանը, նույն շափավորությանը, նույնքան սիրում է լռությունն ու մտորումները. նա միաժամանակ դաժան է ու մեծահոգի, հյուրասեր ու անողոք։ Լինելով ալարկոտ, բայց անխոնջ, եթե արդեն որևէ բան է ձեռնարկել՝ իսպանացին, արևից ու մոլեռանդությունից վառված, դրսևորում է մաղձոտ խառնվածքի բոլոր գծերը՝ դրա ծայրահեղ դրսևորումներով։ Ընդ որում իսպանական ժողովուրդը հրեականի նման համառորեն ներփակվում է իր մեջ և իր ազգային նախապաշարմունքների պատճառով օտար է մնում այն ժողովուրդներին, որոնցով շրջապատված է։ Իսպանացիների բոլոր ճանապարհորդությունները սահմանափակվել են Ամերիկայով, որտեղ նրանք գտել են ավելի կեղեքիչ բռնակալություն, քան այն, որ տիրում է իրենց թերակղզում։ Նրանք չեն երևում Եվրոպայում. երբեք չես հանդիպի դասալիք-իսպանացու, նկարիչ-իսպանացու, վաճառական-իսպանացու։ Իսպանացիներին քիչ են ճանաչում, և նրանք էլ, իրենց հերթին, չեն ձգտում ճանաչելու մյուս ժողովուրդներին։ Բայց իսպանացին օժտված է մի արժեքավոր հատկությամբ՝ նա կարողանում է հիանալ։

Բայոնայում բոլորն ապշած էին գիտելիքների այն բացակայությունից, որ դրսևորում էին իսպանական արքունիքին պատկանող անձինք. նրանց ոչինչ հայտնի չէր ո՛չ իրենց՝ ֆրանսիացիների, ո՛չ էլ ֆրանսիական զորքերի մասին։ Ֆրանսիական բանակի ամենափառաբանված գեներալների նկատմամբ դրսևորած իրենց հետաքրքրությամբ նրանք հիշեցնում էին վայրենիների։

Ինչպես թուրքը, որին նա այնպես նման է իր կրոնով, իսպանացին ամենևին էլ հակված չէ լքելու իր երկիրը, որպեսզի պատերազմի գնա ուրիշ ժողովուրդների դեմ, բայց հենց որ օտար-

երկրացին ոտք է դնում իսպանական հողին, բոլորը կռվի են ելնում նրա դեմ։ Այստեղ ժողովուրդը չի համարում, ինչպես Գերմանիայում, որ հայրենի երկրի պաշտպանությունը բանակի գործն է։

Իսպանիայում այնպես մեծ է ազգային հպարտությունը, այնպես ուժեղ է հայրենասիրությունը, որ նույնիսկ քահանաները համակված են դրանցով։ Այն զորավարների ամբողջ կեսը, որոնք ներկայումս հանուն ազատության մարտնչում են Ամերիկայում, քահանաներից են սերվել։ Սրանում նույնպես նմանություն կա թուրքերի հետ։

Ոչ մի բանում, թերևս, Իսպանիայի և մնացած ողջ Եվրոպայի միջև եղած տարբերությունն այնպես սուր չի դրսևորվում, ինչպես հոգևորականության բարքերում։

Իսպանական հոգևորականությունը շարունակ գտնվում է իր ծխական համայնքներում։ Ավելացնենք, որ հոգևորականները միակ խոշոր կալվածատերերն են, որոնք ապրում են ժողովրդի մեջ։ Մնացածներն ապրում են կա՛մ Մադրիդում, կա՛մ էլ մարզերի գլխավոր քաղաքներում. այստեղից էլ անիրականալի երազանքներ նշանակող տարօրինակ արտահայտությունը՝ «Ամրոցներ կառուցել Իսպանիայում»։ Միշտ գործ ունենալով ժողովրդի հետ, անընդհատ շփվելով նրան, իսպանական հոգևորականությունն այնպիսի ազդեցություն է ձեռք բերել, որը չէր կարող ունենալ միշտ բացակայության մեջ գտնվող ազնվականությունը։ Իսպանացին լսում է իր քահանային՝ կարծելով, որ նա մտավորապես ավելի բարձր է կանգնած, քան ինքը, և միևնույն ժամանակ սիրում է նրան, քանի որ հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո հարցում համարում է իրեն հավասար։ Վանականներն ատում են ազատամիտ գաղափարները։ Դժվար է կռահել, թե Իսպանիան ինչպես դուրս կգա այս դրությունից։ Սա կախարդական շրջան է. թերևս նրան վիճակված է ամենակատարյալ միապետության օգտակար ու անհրաժեշտ տեսարան ներկայացնել գալիք սերունդներին[1]։

[1] Ազնվականությունից և հոգևորականությունից բաղկացած արիստոկրատիայի կողմից շրջափակվող բռնակալություն, այլ կերպ ասած՝ օգտակար արտադրողական աշխատանքով զբաղված քաղաքացու դեմ միավորված և նրան հերթով կոգուպատ եղած ուժ։

Իսպանիան արդեն կես տարի էր բռնկված էր կրակով, իսկ Նապոլեոնը դեռևս մտածում էր, որ ներկայացուցչական կարգերի բարեմասնություններն իրենց կողմը կգրավեն բոլոր սրտերը։ Նա գիտեր, որ իսպանացիներն ավելի, քան Եվրոպայի որևէ այլ ժողովուրդ, հիանում են իրենց սխրագործություններով։ Իրենց բնածին խառնվածքով ամեն տեսակ թեթևամտությանը խորթ, կրքերից ու անվստահությունից ստեղծված իտալացիներն ու իսպանացիները մյուսներից ավելի լավ են ընդունակ գտնելու նրանց վեհության մասին, ովքեր գլխավորում են ժողովուրդներին։

Եթե Բոնապարտը հրամայեր կախել իշխան Միրային, իսկ Ֆերդինանդ VII-ին ետ ուղարկեր Իսպանիա՝ նրան տալով Բայոնայի սահմանադրությունը և ութսուն հազար զինվոր, ամուսնացնելով իր ազգականուհիներից մեկի հետ և Ֆրանսիայի դեսպան նշանակելով մի խելոք մարդու, նա, անտարակույս, Իսպանիայից կստանար այն բոլոր նավերն ու զորքերը, որ սա ի վիճակի էր իրեն տալու։ Ո՞վ կարող էր որոշել, թե մինչև ուր կհասներ այն ժողովրդի երկրպագությունը, որի մեջ գովասանքը դառնում է փառաբանություն, իսկ հիացմունքը՝ զմայլանք։

Կասկածի ենթակա չէ, որ Նապոլեոնին գայթակղել է Լյուդովիկոս XIV-ի օրինակը։ Երբ Ենայի մոտ գտնվող մարտադաշտում նրան մարտահրավեր նետվեց, նա որոշեց ետ չմնալ մեծ միապետից։ Նա փոխեց այն միակ ժողովրդի թագավորին, որի նկատմամբ այդ միջոցը չէր կարելի կիրառել։ Այն նախազգուշացումները, որ շարունակ նրան անում էր պ-ն դը Թալեյրանը, նույնպես քիչ դեր չխաղացին դրանում։

Այն օրերին, երբ Ժոզեֆը ոտք էր դնում Իսպանիա, իսկ Նապոլեոնը որպես հաղթող վերադառնում էր Փարիզ՝ խղճի խայթ զգալով և հավատարիմ իր կեղծ գաղափարներին, Իսպանիան արդեն բռնկված էր ապստամբությամբ։ Այն նույն պահին, երբ Կաստիլիայի խորհուրդը հայտարարեց երեք հարյուր հազարանոց աշխարհազորի հավաք, շատ համայնքներ արդեն ապստամբել էին սեփական նախաձեռնությամբ։ Դյուղ չկար, որն իր խունտան չկազմեր։ Իսպանիան հանկարծակի նմանվեց 1793 թվականի Ֆրանսիային, երբ ամբողջ երկիրը պատած էր ներկայացուցչական մարմիններով, որոնք քննարկում էին հայրենիքին սպառնացող վտանգը։ Սևիլիայում, Բադախոսում, Օվիեդոյում ապստամբությունը բռնկվեց մայիսի 2-ին Մադրիդում տեղի

ունեցած իրադարձությունների մասին եղած լուրերից հետո։ Ամբողջ Աստուրիան ընդվզեց, հենց որ իմացավ դինաստիայի փոփոխման մասին։ Ժողովուրդն սկսեց դաժան հաշվեհարդար տեսնել բոլոր նրանց հետ, որոնց նա իր կատաղության պահին համարում էր ֆրանսիացիների կողմնակիցներ, կամ էլ՝ հայրենիքի նվազ խանդավառ պաշտպաններ։ Բարձրաստիճան անձինք մահապատժի ենթարկվեցին. դրա հետևանքը եղավ համընդհանուր տեռորը և իշխանության գլուխ կանգնածների համար ժողովրդի կամքն անվերապահորեն կատարելու անհրաժեշտությունը։ Տեռորն Իսպանիային բանակ տվեց։

Հենց որ որևէ ապստամբ բանակ պարտվում էր՝ կախում էր իր պետին։ Իսպանացիները բարեպաշտ և քաջ ժողովուրդ էին, բայց օժտված չէին ռազմական ոգով։ Կանոնավոր զորքերին նրանք վաղուց անբարյացակամությամբ կամ արհամարհանքով էին վերաբերվում։ Դրանում նրանք գերմանացիների կատարյալ հակապատկերն էին։ Նրանք պատերազմին նայում էին իբրև կրոնական պատերազմի, իբրև ֆրանսիացիների դեմ ուղղված մի խաչակրաց արշավանքի։ Զինվորների մեծամասնության համար միակ տարբերիչ նշանը «Vincer o morir pro patria et pro Ferdinando VII»[1] մակագրությամբ կարմիր ժապավենն էր։

Այս մոլեռանդների ու ֆրանսիացիների միջև Ռիո-Սեկկոյի դաշտերում տեղի ունեցած առաջին ճակատամարտից հետո քսանյոթ հազար դիակ մնաց։ Կանայք վայրի ոռնոցով նետվում էին վիրավորների վրա և նրանց իրար ձեռքից խլում, որպեսզի ամենագազանային միջոցներով մեռցնեն։ Նրանց աչքերի մեջ նրանք մկրատներ կամ դանակներ էին խրում և դաժան ցնծությամբ հրճվում արյան ու հոգեվարքի չզսպվող ցնցումների տեսարանից[2]։

Նապոլեոնը Բորդոյում լուր ստացավ Բայլենի ճակատամարտի մասին, որտեղ Կաստանոսը և Ռեդինգը գեներալ Դյուպոնին ստիպել էին ղենքը վայր դնել։ Դա Նապոլեոնի առաջին անհաջողությունն էր, որը նրան հուսահատության հասցրեց։ Ո՛չ Ռուսաստանի արշավանքը, ո՛չ էլ Վաթերլոոն նրա հպարտ հոգու վրա այն ազդեցությունը չգործեցին, որը գեթ հեռավոր կերպով հիշեցներ այդ պարտության թողած ազդեցությունը։ Նա ցասումնալից բացականչեց. «Այն, որ թույլ կարգապահ բանակը նկուղեցական իրեր է գողանում, դա դեռ կարելի է պատկերացնել, բայց ինչպե՞ս կարելի է դա խոստովանել»։ Մեկ րոպե անց նա ավելացրեց. «Ես ճանաչում եմ իմ ֆրանսիացիներին. հարկավոր էր նրանց բացականչել. «Փրկվի՛ր՝ ով կարող է»։ Երեք շաբաթ հետո նրանք բոլորը նորից կհամախմբվեին»։ Նա հարցրեց ներկաներին. «Մի՞թե օրենքներում հոդված չկա, որի հիման վրա կարելի լիներ գնդակահարել բոլոր այդ ստոր գեներալներին»։

ԳԼՈՒԽ XLII

Նապոլեոնը վերադարձավ Փարիզ, բայց շուտով ստիպված եղավ նորից մեկնելու Իսպանիա։ Մենք ըստ սովորության չենք շարադրի այս պատերազմի ընդհանուր պատմությունը, քանի որ դրա համար հարկ կլինի շոշափել բազմաթիվ մանրամասնություններ։ Մադրիդի դարպասների մոտ Նապոլեոնը մի քանի զորատես անցկացրեց։ Ինչպես սովորաբար, նրա շուրջը հսկայական բազմություն էր հավաքվել, իսկ մի անգամ նա նույնիսկ հայտնվեց իսպանացի գերիների մի մեծ ջոկատի մեջտեղում։ Այդ պարտված, քրջոտ, արևից խանձված մոլեռանդների դեմքերը սոսկալի էին։

Իսպանական գրանդ, Սահմանադիր ժողովի նախկին անդամ պ-ն դը Սեն-Սիմոնը Մադրիդում մարտնչել է ֆրանսիացիների դեմ։ Այն ֆրանսիացիների նկատմամբ, որոնք զենքը շրջել էին իրենց հայրենիքի դեմ, Նապոլեոնը շատ որոշակի քաղաքականություն էր վարում։ Պ-ն դը Սեն-Սիմոնը բռնվեց, և ռազմական դատարանը նրան մահվան դատապարտեց։ Կայսրը չէր կարող թշնամանք տածել մի մարդու նկատմամբ, որին ինքն անձամբ չէր ճանաչում, և որը վտանգավոր մարդկանց թվին չէր պատկանում։ Նա նրան կորստյան մատնեց զուտ քաղաքական նկատառումներով։

Պ-ն դը Սեն-Սիմոնը մի աղջիկ ուներ, որն իր գորովալից հոգատարությամբ տանելի դարձրեց նրա աքսորը և թեթևացրեց ծերության բեռը։ Հորն սպառնացող վտանգը նրան ստիպեց Նապոլեոնի ոտքերն ընկնել։ Ամեն ինչ արդեն պատրաստ էր մահապատժի համար. սիրող աղջկա նվիրվածությունը հաղթում է, կարծես, անդառնալիորեն վճռված որոշմանը, քանի որ դրա

[1] Հաղթել կամ մեռնել հանուն հայրենիքի և հանուն Ֆերդինանդ VII-ի։
[2] Ռոկկի «Նոթերը», էջ 190։

հիմքում ընկած էին ոչ թե կրքերը, այլ բանականությունը և հիշողությունը Սեն-Ժան-դ'Ակրի տակ տեղի ունեցած իրադարձությունների մասին։

Գթասրտության այդ գեղեցիկ ակտին նպաստեցին գլխավոր շտաբի պետը, ինչպես նաև գեներալներ Սեբաստիանին ու Լոբարդիները։ Ամբողջ բանակը գտնում էր, որ պատերազմը Իսպանիայի դեմ անարդար գործ է։ Այն ժամանակ բանակը դեռ չէր դաժանացել ուխտադրժության բազմաթիվ դրսևորումներով[1], 1809 թվականին Օպորտոն թողնելուց հետո ֆրանսիական հոսպիտալի բազմաթիվ վիրավորներ սոսկալի ձևով կոտորվեցին։ Ինչպես և Կոիմբրայում, մի քանի հազար հիվանդներ ու վիրավորներ այնքան անլուր գազանությամբ մեռցվեցին, որ դժվար է դրա մասին պատմել։ Մի այլ անգամ իսպանացիները մեծագույն սառնասրտությամբ Մինիո գետում ջրահեղձ արեցին յոթ հազար ֆրանսիացի գերիների։ Նման դեպքերը հարյուրներով են եղել, և դրանց մասնակցել են մարդիկ, որոնց դրա համար մինչև օրս էլ բարեհաճում են փառաբանել։ Երբ այդ բոլոր գազանությունները բավականաչափ գազազեցրին ֆրանսիական բանակին, նա սկսեց դաժանություն դրսևորել, որը, սակայն, երբեք չի արտահայտվել օրենքի ձևական խախտման մեջ։ Նրանց, ում անվանում էին խողովարներ, գնդակահարում էին կամ էլ կախաղան հանում։

Իր իսպանական արշավանքի եռուն շրջանում Նապոլեոնն իմացավ, որ Ավստրիան, որն արդեն վաղուց էր զինվում, մտադիր էր հանդես գալ։ Պետք էր Իսպանիան կամ էլ Ֆրանսիան Իտալիայի հետ վստահել զորավարներից որևէ մեկին։ Վարանումների տեղ չկար. Նապոլեոնի սխալը բխում էր անհրաժեշտությունից, բայց այս պահից Իսպանիան կորսված էր։ Այն բանակին, որը դադարել էր իր իսկ բոնապետի ներկայությամբ փառաբանված Մեծ բանակը լինելուց, սկսեցին ավելի ու ավելի քիչ ուշադրություն նվիրել։ Ինչպիսի հերոսական գործեր էլ որ նա կատարեր, այսուհետև Իսպանիայում գործող զորքերին արդեն բաժին չէին ընկնում ո՛չ պարգևներ, ո՛չ էլ նոր կոչումներ։

[1] «Մենք այն կարծիքին էինք, որ հմտորեն, առանց ճշմարտությունը լիովին թաքցնելու խարել այնպիսի մի երկրի մարդու, ինչպիսին Նապոլեոնն է, նշանակում էր ոչ միայն անդատապարտելի, այլ, ընդհակառակը, գովասանքի արժանի արարք կատարել։» Էսքոիկիս, էջ 124։

Դրությունը վերջնականապես անտանելի դարձավ այն պատճառով, որ Ժոզեֆի ու Նապոլեոնի միջև առաջներում էլ արդեն բավական նկատելի երկպառակությունը շարունակում էր սրվել։ Սկզբում դա երկու պատճառ ուներ. նախ՝ Նապոլեոնը Ժոզեֆին ցույց չէր տալիս ոչ մի օգնություն, իսկ մարշալները նրա հանդեպ հանդուգն էին պահում իրենց. երկրորդ՝ Նապոլեոնն Իսպանիայի վերաբերյալ նոր պլաններ ուներ։

Ժոզեֆը կարծում էր, թե քանի որ իրեն թագավոր են դարձրել, ապա ինքը պետք է թագավորի տեսք ունենա, որ բանակի պոչից հարկադրական քարշ գալը հաղիվ թե ի վիճակի է նախապատրաստել իր հայտնությունն իբրև ժողովրդի գլխի, և որ այն ժողովուրդը, որի մեջ այդպես ուժեղ է արտահայտված հպարտությունը, պետք է հատկապես ցանկանա, որ իր տիրակալին հարգանք հավաստեն։ Փառամոլությամբ արբեցած Լյուդովիկոս XIV-ը նման սխալի մեջ չէր ընկնի։

Պրուսիայից բերված զրամը՝ մոտ հարյուր միլիոն, ամենևին չէր ենթադրվում ծախսել այդ արշավանքի համար։ Նապոլեոնը, որը միշտ կարծում էր, թե պատերազմը պետք է ինքն իրեն կերակրի, մտադիր չէր խոշոր գումարներ ծախսել իսպանացիների դեմ մղվող պայքարում։ Նա ուզում էր, որ Ժոզեֆն ինքը միջոցներ գտնի պատերազմ մղելու համար, սակայն Իսպանիան նույնիսկ խաղաղ ժամանակ հաղիվ թե ի վիճակի էր այդպիսի ծախսերի դիմանալու։ Նման պահանջ ներկայացնել այն պահին, երբ ֆրանսիական զորքերը գերիշխում էին միայն այն տարածքում, որն օկուպացրել էին և որը նրանք վերջնականապես հյուծել էին, նշանակում էր մեծագույն անհեթեթության հասնել։

Բայց բանը դրանով չսահմանափակվեց։ Գալով Իսպանիա, Նապոլեոնն անմիջապես սկսեց ուշադրությամբ զննել երկիրը. Իսպանիան նրան դուր եկավ, և նա որոշեց մի կտոր գավթել։ Այդ մտադրությունն արմատապես հակասում էր Բայոնայում ընդունված որոշումներին։ Նապոլեոնի անհանգիստ ու բորբոքուն հոգին, որը միայն ստեղծագործության մեջ էր վաղանցիկ հանգստություն գտնում, անդուլ կերպով գործերի մեջ նոր հնարավորություններ էր բացահայտում։ Այսօր հղացած միտքը կլանում էր այն, ինչ նրան հրապուրել էր նախօրյակին, և, իր մեջ ամեն մի արգելք հաղթահարելու ուժ զգալով, այդ մարդը, որի խելքի առջև հնարավորի սահմանն անընդհատ ետ էր քաշվում՝

ինչպես հորիզոնը Համփորդի առջև, ոչ մի բան անսասան չէր ընդունում։ Նապոլեոնին հաճախ ուխտադրուժ էին համարում. նա լոկ փոփոխամիտ էր։ Իր բնավորության այդ գծի պատճառով նա եվրոպական ամեն մի այլ միապետից քիչ էր ընդունակ հետևելու կառավարման սահմանադրական եղանակին։

Նախ, նա միանգամայն անկեղծորեն որոշեց Իսպանիան զիջել Ժոզեֆին։ Անտարակույս, Բայոնայում նա չէր էլ մտածում այն մասին, որ տիրի երկրի մարզերից որևէ մեկին։ Բենավենտեից վերադարձի ճանապարհին, որտեղ նա, չնայած բոլոր խոշընդոտներին, որ կարող էին ստեղծել ձյունը, դաժան ձմեռը և լեռնային տեղանքը, կրնկակոխ հետապնդելով անգլիացիներին, մտավ Վալյադոլիդ և անհամբերությամբ սպասում էր Մադրիդ քաղաքի ներկայացուցիչների ժամանմանը։ Նա կանչեց այդ ներկայացուցիչներին ուղեկցող իր պալատականներից մեկին։ Նա շտապում էր շուտ վերադառնալ Ֆրանսիա։ Գիշերվա պահ էր, եղանակը՝ սոսկալի։ Նապոլեոնը ոտքին մեկ բանում էր լուսամուտը, որպեսզի երկնքին նայի ու որոշի, թե կարելի՞ է արդյոք ճանապարհ ընկնել։ Դիմելով իրեն շրջապատած պալատականներին, նա, իր սովորության համաձայն, նրանց հարցակոխ էր անում՝ գլխավորապես հարցնելով այն մասին, թե Մադրիդում ինչ են մտադիր ձեռնարկել, և թե, ըստ էության, ինչ են ուզում իսպանացիները։ Նրան ասացին, որ իսպանացիները դժգոհ են։ Ի պատասխան, նա սկսեց ապացուցել, որ նրանք իրավացի չեն, որ նրանց դժգոհությունը հնարավոր չէ, որ ժողովուրդները միշտ ողջամտորեն են դատում, երբ խոսքն իրենց կենսական շահերի մասին է, որ իսպանացիներին հնարավորություն է տրվում ազատվելու տասանորդից, անհավասարությունից, ֆեոդալական պարհակներից, դեն նետելու հոգևորականության լուծը։ Նրան առարկում էին, թե, նախ, իսպանացին, ոչինչ չիմանալով Եվրոպայում տիրող իրավիճակի մասին, անկարող է գնահատել այդ առավելությունները, բայց որ դրա փոխարեն նա իր հպարտությամբ չի ուզում ոչ ոքի ոչնչով պարտավորված լինել, և թե առհասարակ այդ ժողովուրդը նման է Սգանարելի կնոջը, որն ուզում էր, որ ամուսինն իրեն քոթակի։ Նապոլեոնը հոհոաց և, մեծ-մեծ քայլերով անցուդարձ անելով սենյակում, տիրաբար հայտարարեց. «Ես Իսպանիան չգիտեի. այն ավելի գեղեցիկ է, քան ես կարծում էի։ Ես եղբորս փառահեղ նվեր եմ տվել, բայց

կտեսնեք, իսպանացիները հիմարություններ կանեն, և այն բաժին կընկնի ինձ։ Ես այն կրաժանեմ հինգ մեծ փոխարքայությունների»։ Նա զարմացած էր Անգլիայի հետ դաշնակցելու՝ Իսպանիայի ձգտումից։ Նապոլեոնյան դինաստիայի իսպանական թագավորների վրա նա ավելի քիչ էր հույս դնում, քան Բուրբոնների տնից սերած նրա թագավորների։ Նա գիտակցում էր, որ թե՛ մեկ և թե՛ մյուս դինաստիայի թագավորներն էլ առաջին իսկ պատեհ առիթի դեպքում իրենց անկախ կհայտարարեն, ինչպես դա արդեն փորձել են անել Հոլանդիայի և Նեապոլի թագավորները։

Նապոլեոնը Վալյադոլիդից հեռացավ հաջորդ օրն այն բանից հետո, երբ այդպիսի ապշեցուցիչ անկեղծությամբ բացահայտեց իր մտահղացումները, և մի քանի ժամում քառատրոփ սլացավ այդ քաղաքը Բուրգոսից բաժանող երեսուն մղոնը։ Չորս օր հետո նա Փարիզում էր։ Այն զարմանալի արագությունը, որով նա ճանապարհորդում էր, ամեն տեսակ հոգնածությանը դիմանալու ընդունակությունը նրա խորհրդավոր հմայքի մի մասն էին կազմում։ Բոլորը՝ ընդհուպ մինչև վերջին ֆորեյտորը, զգում էին, որ այս մարդու մեջ գերմարդկային ինչ-որ ուժ կա։

ԳԼՈՒԽ XLIII

Մի պահ նայենք Տյուիլրիի պալատի հարկաբաժինները, որտեղ որոշվում էր Եվրոպայի ճակատագիրը։

Իսպանական պատերազմն իրենով նշանավորում է Նապոլեոնի հզորության թուլացման սկիզբը և միաժամանակ՝ նրա հանճարի մայրամուտի սկիզբը։ Բարեբախտությունը կամաց-կամաց փոխեց ու փչացրեց նրա բնավորությունը։ Նա այն սխալմունքի մեջ ընկավ, որ շափից դուրս հիանում էր իր հաջողություններով և բավականաչափ չէր արհամարհում իր եղբայրակից թագավորներին։ Նա արբենում էր շողոքորթության թույնով։ Հանգել էր այն մտքին, որ իր համար անհաղթահարելի խոչընդոտներ չկան։ Արդեն չէր կարողանում տանել հակաճառությունը. շուտով անշմար առարկությունը նա սկսեց ընկալել որպես հանդգնություն և ընդ որում՝ նաև հիմարություն։ Քանի որ նա անհաջող օգնականներ էր ընտրում, ապա սովորաբար հաջողությամբ էին պսակվում նրա միայն այն ձեռնարկումները, որոնք անձամբ ինքն էր ղեկավա-

բում։ Շուտով նրա մինիստրները ստիպված եղան ձևացնել, թե իրենք լոկ ստրկամտորեն շարադրում են նրա մտքերը։ Հիրավի շնորհալի մարդիկ հրաժարվում էին իրենց պաշտոններից կամ էլ, թաքուն նրա վրա ծիծաղելով[1], սկսեցին ձևացնել, թե մտածելը մոռացել են։ Մեր դարում իսկական ձիրքը չի կարող չզուգակցվել գոնե մի քիչ լիբերալ հայացքների հետ. Նապոլեոնն ինքը դրա օրինակն է, և դա համարվում է նրա հանցանքներից ամենածանրը։

ԳԼՈՒԽ XLIV

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կայսրը տասներկու մինիստր ուներ[2] և Պետական խորհրդի ավելի քան քառասուն անդամներ, որոնք նրան զեկուցում էին այն գործերի մասին, որ նա նրանց հանձնարարում էր քննարկել։ Մինիստրներին և հատուկ գերատեսչությունների պետերին ենթարկվում էին հարյուր քսան պրեֆեկտներ։ Ամեն մի մինիստր շաբաթը չորս կամ հինգ անգամ Նապոլեոնին ներկայացնում էր զեկրետների վաթսունից մինչև ութսուն նախագիծ. այդ նախագծերից յուրաքանչյուրը հանգամանորեն շարադրվում էր այն զեկուցագրում, որը մինիստրը կարդում էր կայսրին։ Նվազ կարևոր գործերի առթիվ կայսրն իր հավանությունն էր տալիս՝ զեկուցագրերի լուսանցքներում նշումներ անելու։

Կայսրի ստորագրած բոլոր զեկրետները մինիստրները հանձնում էին Բասսանի դքսին, որը բնագրերը թողնում էր իր մոտ, իսկ մինիստրներին ուղարկում իր ստորագրությամբ պատճենները։

Երբ կայսրը գտնվում էր արշավանքում կամ ճանապարհորդում էր, այն մինիստրները, ովքեր նրան չէին ուղեկցում, իրենց թղթապանակներն ուղարկում էին Բասսանի դքսին, իսկ սա նորին մեծությանն էր ներկայացնում զեկրետները և նրան կարդում

1 Օրինակ, կոմս Ռեալը։

2 1810 թվականին դրանք էին՝ Մասսի, Կադորի, Ֆելտրի, Դանտի, Օտրանտի դքսերը, Մոնտալիվեն, Մոլիենը, Սեսսակը, Դեկրեսը, Բիգո-Պրեամենյոն և Բասսանի դուքը։ Հետագայում դրանց ավելացավ նաև առևտրի մինիստր Սյուսին։

զեկուցագրերը։ Դժվար չէ որոշել այս դքսի ազդեցության պատճառը, որն սկզբում հասարակ քարտուղար էր, իսկ այնուհետև կամաց-կամաց հասավ այն բանին, որ սկսեց նշվել կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների ցուցակում՝ մինիստրներից անմիջապես հետո, թեև սեփական գերատեսչություն չուներ։

Բասսանի դուքսն ամենազորն էր մինիստրների և պրեֆեկտների մեջ, որոնք երկյուղում էին նրանից։ Ոչ ոք չէր կարող ազդել Նապոլեոնի վրա այն գործերում, որոնցից նա գլուխ էր հանում։ Այդ պատճառով էլ կազմակերպական բնույթի նրա բոլոր զեկրետները, այն ամենը, ինչ, եթե կարելի է այսպես արտահայտվել, վերաբերում էր զուտ բանականության ոլորտին, վկայում էր երևելի ձիրքի մասին։ Բայց այն դեպքերում, երբ հարկավոր էր ստույգ տեղեկություններ ունենալ (եթե այն գերատեսչության մինիստրը, որին վերաբերում էր տվյալ հարցը, գործում էր պետական քարտուղարի համաձայնությամբ), Նապոլեոնին խաբում էին այդ հարցի վերաբերյալ առաջին իսկ զեկուցման ժամանակ, իսկ սա հպարտությունից ու ծուլությունից՝ հետո չէր փոխում իր որոշումը։

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց նշանակելուն, ապա Նապոլեոնն այստեղ ելնում էր մարդկության նկատմամբ արտակարգ արհամարհանքի վրա հենված ընդհանուր կանոններից։ Կարծես նա ասում էր ինքն իրեն. «Երբ խոսքն այն մարդկանց մասին է, որոնց անձամբ չեմ ճանաչում, ապա ես շատ ավելի քիչ կխաբվեմ, եթե նրանց մասին դատեմ ըստ համազգեստի, որն ինձ հնարավորություն է տալիս որոշակի կատեգորիայի դասել նրանց, քան եթե սկսեմ ապավինել մինիստրների գնահատականներին»։ Ամենաանհեթեթ նշանակումները միանգամայն սովորական էին։ Ցանկանալով հարգանքի վարժեցնել բնականից ծաղրասեր ու սրամիտ ժողովրդին, նա վերացրեց ազնվակիրթ խոսակցությունը։ Այսուհետև իր մոտ ծառայության մեջ գտնվող մարդկանց նա կարող էր ճանաչել միայն որևէ հատուկ հաջողության դիպվածով կամ էլ մինիստրների զեկուցումներով։ Հոլանդիայում ճանապարհորդելուց հետո մեկնելով այդ երկրից, նա զավեշտական պարզասրտությամբ ասաց. «Պրեֆեկտների հարցում այստեղ մեր գործը վատ է»։

ԳԼՈՒԽ XLV

Տասներեքուկես տարվա անընդհատ հաջողությունները Ալեքսանդր Մեծին դրեթե խելագարության հասցրին։ Ճիշտ նույնքան տևած հաջողությունը նույնպիսի խենթություն առաջացրեց Նապոլեոնի մեջ։ Միակ տարբերությունն այն է, որ մակեդոնացի հերոսը բախտ ունեցավ ճիշտ ժամանակին մեռնելու։ Ի՞նչ մեծ փառք կպահպաներ Նապոլեոն-նվաճողը, եթե թնդանոթային ռումբը նրան սպաներ Մոսկվայի տակ տեղի ունեցած ճակատամարտի երեկոյան։

Անգլիան և այն, ինչ գրվում էր այս երկրում, կարող էին կանխել մեր ժամանակների հերոսի խենթությունը։ Ի դժբախտություն նրա, այն միջոցառումները, որոնք ինքը ձեռնարկել էր անգլիական մամուլի վրա զայրանալով, չափազանց եռանդագին էին իրագործվում։ Ներկայումս նրան այնքան ատելի այդ մամուլն իր միակ սփոփանքն է։

1808 թվականին, այն փոփոխությունների հետևանքով, որ ութ տարվա ընթացքում դիմադրության չհանդիպած հպարտությունը և բազամոլությունը կատարեցին Նապոլեոնի հանճարեղ իսանվածքում, պարզվեց, որ նրա տասներկու մինիստրներից առնվազն ութը ամենամիջակ ընդունակությունների տեր մարդիկ էին, որոնց միակ ծառայությունն այն էր, որ իրենց ուժասպառ էին անում աշխատանքով։

Բասսանի դուքսը, որը հսկայական ազդեցություն ուներ բոլոր գործերում՝ բացի ռազմականից, աշխարհիկ սալոններում քաղաքավարի ու սիրալիր այդ մարդը, աշխատասենյակում դրսևորում էր իր լիակատար ոչնչությունը։ Նա ինքը ոչ միայն մեծ մտահղացումներ չուներ, այլև չէր հասկանում ուրիշներինը։ Ամեն ինչ անխուսափելիորեն մանրանում էր նրա մտածողության մեջ։ Նա ճիշտ այնքան տաղանդ ուներ, որքան պահանջվում է ժուռնալիստիկայի համար. այս զբաղմունքով է նա Փարիզում սկսել իր կարիերան։ Ճիշտ է, զբաղեցրած պաշտոնը նրան պարտավորեցնում էր գիշեր-ցերեկ գտնվել տիրակալի մոտ։ Անհողդողդ կամքի տեր մարդը չէր կարող համբերատարությամբ տանել կայսեր փոփոխական բնավորությունն ու զայրալից պոռթկումները, և, որքան էլ որ հմտորեն պահպաներ վարվելակարգը, նրա դեմքի արտահայտությունը կշղայնացներ միապետին։

Բասսանի դուքսն էր նշանակում Ֆրանսիայի բոլոր պրեֆեկտներին։ Նա նրանցից միայն մի ծիրք էր պահանջում՝ կարողանալ առանց բարձրաձայն տրտունջ հարուցելու բնակչությունից կորզել պահանջվող գումարները։ Խեղճ պրեֆեկտները, փառամոլությամբ համակված, աշխատանքից ուժասպառ, իրենց ամբողջ ոռճիկը ներկայացուցչության վրա ծախսելով, որը հսկայական միջոցներ էր կլանում, ամեն առավոտ, բացելով «Moniteur»-ը, վախից դողդողում էին, մտածելով, որ այնտեղ կգտնեն իրենց հանելու հրամանը։ Նրանց համար պետերին հաճոյանալու փորձված միջոցներից մեկը հասարակական կարծիքի վերջին կայծերի ոչնչացումն էր, որն այն ժամանակներում, ինչպես և ներկայումս, կոչվում էր յակոբինություն։

ԳԼՈՒԽ XLVI

ԴԱՐՁՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1811 թվականին գյուղական մի փոքրիկ համայնք որոշեց օգտագործել խճուղու շինարարության ինժեների խոտանած որոշ քանակի սալաքար՝ վաթսուն ֆրանկի արժողությամբ։ Գեաք եկավ պրեֆեկտի, փոխպրեֆեկտի, ինժեների և մինիստրի տասնչորս եզրակացություն։ Մեծագույն ջանքերի և ամենահամառ միջնորդությունների շնորհիվ խնդրագիրը տալուց տասնմեկ ամիս հետո պահանջվող թույլտվությունն ստացվեց։ Բայց մինչ այդ ճանապարհաշինարարներն այդ սալաքարն արդեն օգտագործել էին ինչ-որ փոսեր լցնելու համար։ Անխուսափելիորեն տգետ ինչ-որ մի ստորին պաշտոնյա, որը կառավարությունից ոռճիկ էր ստանում և մինիստրական գրասենյակի մի անկյունում տքնում թղթերի վրա, Փարիզում, գյուղական համայնքից երկու հարյուր լյո հեռավորության վրա, վճռում է մի գործ, որը գյուղական երեք ընտրյալներ երկու ժամում լավագույն ձևով կկարգավորեին։ Այդքան ակնհայտ և տարեկան հինգ հարյուր անգամ կրկնվող փաստերը չէին կարող աննկատելի մնալ։

Բայց գլխավոր խնդիրն էր նվաստացնել քաղաքացուն, հատկապես թույլ շտալ ֆրանսիացիներին յակոբինյան ժամանակներում յուրացրած նողկալի սովորությամբ որևէ բանի համատեղ

քանարկումը[1]։ Եթե չլինեին այս մանրախնդիր նախազգուշությունները, թերևս, նորից կհայտնվեր այն հրեշը, որի նկատմամբ հաջորդաբար մեկը մյուսին փոխարինած և Ֆրանսիան շահագործող բոլոր կառավարությունները միատեսակ ատելություն էին տածում և որի մասին արդեն ասել եմ. ես նկատի ունեմ հասարակական կարծիքը։

Հեշտ է ըմբռնել, թե որն էր Նապոլեոնի մինիստրներին ուժասպառող հսկայական աշխատանքը։ Փարիզը հավակնում էր Ֆրանսիայում տնօրինելու ամեն ինչ՝ առանց բացառության։ Երկրում կատարվող բոլոր գործերը հարկ էր լինում հանձնարարել այնպիսի մարդկանց, որոնք, եթե նույնիսկ արժիվներ լինեին, անխուսափելիորեն դրանց անտեղյակ կլինեին[2]։

Չի կարելի չնշել, որ աստիճանավորի ապրելակերպը բնականաբար հանդեցնում է նրա լիակատար բթացմանը։ Ծառայության մտնելով գրասենյակում, նա իր ջանքերը գերազանցապես ուղղում է այն նպատակին, որպեսզի գեղեցիկ ձեռագիր և ջնարակի օգտագործման հմտություն մշակի։ Հետագայում գործունեության ողջ բնույթը նրան շարունակ ստիպում է բովանդակությունը փոխարինել երևութականությամբ։ Եթե նրան հաջողվում է մշտապես պատկառելի կեցվածք ընդունել, ապա այլևս անհանգստանալու բան չունի։ Անձնական շահերը միշտ դրդում են նրան նախապատվություն տալ այն մարդուն, որը խոսում է չտեսնված բաների մասին։ Միաժամանակ լինելով ամենանողկալի բանսարկությունների վկան ու զոհը, պաշտոնյան պալատական բարքերի արատները զուգակցում է բոլոր այն վատ հատկությունների հետ, որոնք հատուկ են աղքատությանը, որի մեջ նա քարշ է տալիս իր կյանքի երկու երրորդը։ Այդպիսիք էին այն մարդիկ, որոնց կայսրը հանձնել էր Ֆրանսիան. բայց նա կարող էր արհամարհել նրանց։ Կայսրն ուզում էր, որպեսզի Ֆրանսիան կառավարեն տարեկան հազար երկու հարյուր ֆրանկի ռոճիկ ստացող մանր աստիճանավորները։ Աստիճանավորը նախագիծ էր կազ-

[1] Այժմյան կառավարությունն ըստ հեղաշրջման ռոնապետական է։ 31 դեկտեմբերի 1817 թ.։

[2] Ամենայն հավանականությամբ որոշ օտարերկրացիների համար շատ հաճելի կլիներ վերհիշել, թե օրենքները կամ դեկրետներն ինչպես են կենսագործվել։

մում, իսկ մինիստրը սնափառությունից դրդված անցկացնում էր այն։

Այդ դարաշրջանի մասին մեզ կարող են պատկերացում տալ մինիստրություններին թողթ մատակարարողների հաշիվները. դրանք վիթխարի թվերի էին հասնում։ Նույնքան, եթե ոչ ավելի, բնորոշ է հսկայական քանակության ավելորդ և անխուսափելիորեն վատ աշխատանքը, որ կատարում էին թշվառ մինիստրներն ու խեղճ պրեֆեկտները։ Այսպես օրինակ, պրեֆեկտների գլխավոր պարտականություններից մեկն այն էր, որ նրանք անձամբ էին գրում բոլոր զեկույցները, նույնիսկ Փարիզ՝ տարբեր մինիստրություններ ուղարկվող միևնույն զեկույցի բոլոր պատճենները։ Նրանք ինչքան շատ էին ժամանակ վատնում նման աշխատանքի վրա, այնքան ավելի վատ էին ընթանում նրանց վստահված դեպարտամենտի գործերը։ Գործի դրվածքն ամենից լավ էր Մայնցի դեպարտամենտում, որի պրեֆեկտ Ժան Դեբրին* բացահայտորեն ծաղրում էր մինիստրություններում նստած բյուրոկրատներին։

ԳԼՈՒԽ XLVII

Որո՞նք էին կառավարման կայսերական սիստեմի արժանիքները, որ ստիպում են այժմ այնպե՞ս ափսոսալ դրա համար ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Բելգիայում, Պիեմոնտում, Հռոմի մարզում և Ֆլորենցիայում։

Դրանք արտակարգ զգաստ ու պայծառ խելքով թելադրված ընդհանուր դրույթներում և հիմնական դեկրետներում էին, այն բանում, որ այդ երկրների կառավարման մեջ լիովին ոչնչացվեին անօրինականության հետամուտ արիստոկրատիայի և իշխանության երկու-երեք հարյուրամյակ տևած տիրապետությամբ արմատացած բոլոր շարաշահումները։ Այն ընդհանուր սկզբունքները, որոնցով զեկավարվում էր ֆրանսիական ադմինիստրացիան, միայն երկու բան էին պաշտպանում՝ աշխատանք և սեփականություն։ Դա բավական էր, որպեսզի բնակչությունը բուռն սեր տածեր նոր կարգի նկատմամբ։ Բացի դրանից, Փարիզից կես տարում տեղ հասնող՝ մինիստրության որոշումները եթե շատ հաճախ ծիծաղելի էլ էին թվում պարունակած փաստերի անգիտությամբ, փոխարենը դրանք առնվազն միշտ անաչառ էին։ Իսկ չէ՞ որ կա մի երկիր (այն չեմ անվանի), որտեղ ամենա-

անձնական հաշտարար դատավորը չի կարող ծանուցագիր ուղարկել՝ առանց աղաղակող անարդարություն կատարելու ի շահ հարբսոսի՝ ընդդեմ աղքատի[1]։ Այդ կարգը խախտվեց միայն ֆրանսիական տիրապետության ժամանակ։ Ամեն ոք, ով ուզում էր աշխատել, կարող էր վստահ լինել, որ բարեկեցության կհասնի։ Բոլոր ապրանքների վիթխարի պահանջարկ երևաց։ Այն հովանավորությունը, որ ցույց էր տրվում արդարադատությանն ու աշխատանքին, ստիպում էր հաշտվել զորավարի և բարձր անուղղակի հարկերի հետ։

Կայսեր առընթեր գործող Պետական խորհուրդը հիանալի հասկանում էր, որ միակ խելացի սիստեմն այն կլիներ, որի օրոք յուրաքանչյուր դեպարտամենտ ինքը կճարեր իր պրեֆեկտին, իր հոգևորակա՛նությանը, իր դատավորներին, իր խճուղիներն ու գյուղամիջյան ճանապարհները պահպանելու համար, իսկ Փարիզում ստացվեին միայն այն գումարները, որոնք անհրաժեշտ էին կայսրին, զորքին, մինիստրներին պահելու և ընդհանուր ծախսերի համար։

Այդ անշափ պարզ սիստեմի վերաբերյալ միտքը սարսափեցնում էր մինիստրներին։ Կայսրն այդ դեպքում արդեն չէր կարողանա կողոպտել համայնքները, իսկ չէ որ Ֆրանսիայում միապետները չափազանց շատ են սիրում դրանով զբաղվել[2]։ Երբ ժողովուրդը դադարի թույլ տալ իրեն հիմարացնել ճոճռան արտահայտություններով[3], այդ սիստեմը կմտցվի, և թագավորը ստիպված կլինի նույ՛նիսկ մեծ քաղաքների պրեֆեկտներին ու քաղաքագլուխներին ընտրել այդ քաղաքների առաջարկած թեկնածուների թվից[1], իսկ փոքր քաղաքներն իրենք կնշանակեն իրենց քաղաքագլուխներին՝ մեկ տարի ժամանակով։ Քանի դեռ դա տեղի չի ունենա, իսկական ազատություն չի լինի, և պառլամենտի անդամները տեղ չեն ունենա անհրաժեշտ պատրաստություն ստանալու։ Բոլոր նրանք, ովքեր իրենց արժանավոր ձևով են դրսևորել մեր օրենսդրական ժողովներում, իր ժամանակին ժողովրդի նշանակմամբ մասնակցել են դեպարտամենտների կառավարմանը։ Փոխանակ գործերի լուծումը հանձնարարելու մանր աստիճանավորներին, այդ աշխատանքը հարուստ քաղաքացիների վրա կդնեն, ընդ որում դրա հատուցումը կլինի բավարարված սնափառությունը՝ ինչպես այժմ հիվանդանոցների խնամակալների համար։ Բայց այդ բոլորը հակասում է ճոռոմ արտահայտությունների վրա հիմնված կառավարմանը և գրասենյակներում նստած մարդկանց շահերին, այլ կերպ ասած՝ եսակենտրոն Փարիզի ճակատագրական ազդեցությանը[2]։

ԳԼՈՒԽ XLVIII

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նապոլեոնի մեծ դժբախտությունն այն է, որ գահի վրա դրսևորեց Լյուդովիկոս XIV-ին ընորոշ երեք թուլությունը։

Նա երեխայաբար տարվեց պալատական կյանքի պերճությամբ. նա մինիստրներ էր նշանակում տխմարների և, եթե չէր հայտարարում, ինչպես Լյուդովիկոս XIV-ը Շամիլյարի* ասիթով, որ ինքը դաստիարակում է նրանց, ապա, համենայն դեպս, իրեն ի վիճակի էր համարում գլուխ հանելու ցանկացած գործից, որքան էլ որ անհեթեթ լինեին այն սեկուցագրերը, որ նրանք ներկայացնում էին իրեն։ Մի խոսքով, Լյուդովիկոս XIV-ը սիրում էր տաղանդավոր մարդկանց, իսկ Նապոլեոնը նրանց չէր սիրում։

1 Պ-ն Դալպոցցոյի ծանոթագրությունները, Իտալիա, 1817 թ.։

2 Բոլորը զարմանում էին, որ դուքս դը Շուազելը՝, չնայած տիկին Դյուբարրիի՝ մեքենայություններին, այդքան երկար է պահել իր իշխանությունը։ Այն դեպքերում, երբ նրա գրությունը հատկապես խախտուտ էր դառնում, նա անհնազանդելի գործերի պատրվակով ներկայանում էր Լյուդովիկոս XV-ին և հարցնում, թե ինչպես վարվել այն հինգ-վեց միլիոն ավելցուկի հետ, որն ստացվել է ռազմական գերատեսչությունում իր կողմից արված խստագույն խնայողության շնորհիվ, ընդ որում նա պնդում էր, որ անհարմար կլիներ դրանք թագավորական գանձարան մուծելը։ Թագավորը հասկանում էր, թե դա ինչ է նշանակում և ասում էր Շուազելին. «Խորհրդակցեք Բերտենի հետ. երեք միլիոնը նրան տվեք, իսկ մնացորդը ես նվիրում եմ ձեզ»։ Թագավորը համոզված չէր, որ Շուազելի փոխարինողի հետ նույնպես այդքան հեշտ կլինի համաձայնության գալ։

3 Այլ կերպ ասած, երբ ժողովուրդը մամուլի ազատություն ստանա։

1 Հարյուր ֆրանկից ոչ պակաս հարկ վճարող մարդկանցից։

2 Բոլոր այն գրչակները, որոնք խայտառակում են գրականությունը և շողոքորթում հաղթողներին՝ զովաբանելով նրանց ամբարտավանությունը և վիրավորանքներ թափելով պարտվածների վրա, ապրուստի միջոցներ են ստանում որևէ գրասենյակից։ Տե՛ս Միշոյի կենսագրությունները (Վիրմեն, Օժե, Ռոժե)։

Նա այն կարծիքին էր, որ Ֆրանսիայում երբեք չի լինի ուժեղ կուսակցություն՝ բացի յակոբինյաններից։

Նա զորքից հեռացրեց Լյուսիենին և Կառնոյին՝ ականավոր մարդկանց, որոնք օժտված էին հենց այն հատկություններով, որ ինքը չուներ։ Նա սիրում, կամ էլ իր կողքին հանդուրժում էր Դյուրոկին, Նեշատելի իշխանին, Մասսի դքսին*, Ֆելտրի դքսին*, Բասսանի դքսին*, Աբրանտեսի դքսին*, Մարմոնին*, կոմս դը Մոնտեսքյուին*, կոմս Սեսսակին* և շա տու շատ ուրիշների. դրանք բոլորն էլ միանգամայն օրինավոր և հարգարժան մարդիկ էին, բայց ծաղրի հակված հասարակությունը նրանց միշտ բթամիտներ էր համարում։

Երբ պալատի թունավորված օդը վերջնականապես այլասերեց Նապոլեոնին և նրա ինքնասիրությունը հիվանդագին չափերի հասցրեց, նա հեռացրեց Թալեյրանին և Ֆուշեին՝ դրանց փոխարինելով իր բոլոր շողոքորթներից ամենասահմանափակներով (Սավարի և Բասսանի դուքս)։

Կայսրն այնտեղ հասավ, որ իրեն ի վիճակի էր համարում քսան րոպեում գլուխ հանել ցանկացած ամենարարդ հարցից։ Անհավատալի, ամեն մի այլ մարդու համար անմատչելի՝ ուշադրության գերլարումով նա աշխատում էր ըմբռնել վերին աստիճանի երկար ու բարակ և անկանոն զեկուցագրի, մի խոսքով՝ տվյալ նյութի մասին պատկերացում չունեցող հիմարի կազմած զեկուցագրի էությունը։

Կոմս դը Ս[եսսակին]՝ իր մինիստրներից մեկին, Նապոլեոնը «պառավ կնիկ» էր անվանում և, սակայն, նրան չէր հեռացնում։ Մի ինչ-որ ուղևորությունից վերադառնալուց հետո, հրավիրելով իր մինիստրներին, նրանց ասաց. «Ես Լյուդովիկոս XV-ը չեմ, ես կես տարին մեկ մինիստրներ չեմ փոխում»։ Այդ ներածականից հետո նա թվարկեց այն բոլոր թերությունները, որ վերագրվում էին նրանց։ Նրան թվում էր, թե ինքն ամեն ինչ գիտե ու ամեն ինչին լավատեղյակ է և իրեն միայն քարտուղարներ են հարկավոր, որոնք շարադրեին իր մտքերը։ Դա, թերևս, արդարացի է հանրապետության զեկավարի համար, քանի որ այնտեղ պետությունն օգուտ է քաղում նույնիսկ ամենասովորական քաղաքացու ընդունակություններից, բայց ոչ բռնապետությունը կառավարողի համար, որը չի հանդուրժում ոչ մի ներկայացուցչական հաստատություն, ոչ մի անխախտ օրենք։

Ամենամեծ հաջողությունները Բասսանի դուքսը քաղում էր այն դեպքերում, երբ նրան հաջողվում էր կոտրել կայսեր դեռ չարտահայտած կարծիքն այս կամ այն հարցի վերաբերյալ։ Նման դեր չի խաղացել Սյուլլին* Հենրիխ IV-ի օրոք. և նման դեր չէր ստանձնի ոչ մի օրինավոր մարդ, որը կոչված է ծառայելու միապետին, հատկապես եթե այդ միապետը, գործունեության ահռելի ծարավից ալեկոծված, ամեն մի հիսուն ֆրանկի հատկացմանը կուզենար հատուկ զեկրետի ձև տալ։

ԳԼՈՒԽ XLIX

ԴԱՐՁՅԱԼ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ահա արդեն երկու հարյուր տարի է, ինչ Ֆրանսիայում մինիստրներ են անվանում այն մարդկանց, որոնք օրական չորս հարյուր պաշտոնական փաստաթուղթ են ստորագրում և հրավերք-ճաշկերույթներ տալիս. ի՜նչ անմիտ գոյություն։

Նապոլեոնի օրոք այդ խեղճերն իրենց ուժասպառ էին անում աշխատանքով, ընդ որում այնպիսի աշխատանքով, որտեղ մի՛տքը չէր մասնակցում, այսինքն՝ ամենաանմիտ աշխատանքով։ Կայսրին հաճոյանալու համար հարկավոր էր միշտ կարողանալ պատասխանել այն հարցին, որը ներկայանալու պահին հետաքրքրում էր նրան։ Օրինակ՝ նշել զինվորական բոլոր հոսպիտալների զույգի ընդհանուր արժեքը։ Այն մինիստրին, որը չէր կարողանում նման հարցի պատասխանել առանց կ.Ի.Կմալու և այնպիսի տեսքով, որ կարծես ամբողջ օրը միայն դրա մասին է մտածել, ցեխին էին հավասարեցնում, անգամ եթե իր շնորհներով հավասար լիներ Օտրանտի դքսին։

Երբ Նապոլեոնն իմացավ, որ Կրետեն*՝ երբևիցե իրեն ծառայած լավագույն ներքին գործերի մինիստրը, մահացու հիվանդ է, ասաց. «Այդպես էլ պետք է լինի։ Նա, ում ես մինիստր եմ նշանակում, չորս տարի հետո արդեն չպետք է կարողանա միզել։ Դա մեծ պատիվ է նրա ընտանիքի համար, որի ապագան ընդմիշտ ապահովված է»։

Նման գործելակերպը դժբախտ մինիստրներին լիակատար հիմարության էր հասցնում։ Պատվարժան կոմս Գեժանը* մի անգամ ստիպված եղավ գթություն աղերսել։ Նա կայսեր թելա-

դրանքով հաշվարկում էր ռազմական ծախսերը և այն աստիճան արբեցավ թվերից ու հաշվարկներից, որ ստիպված եղավ աշխատանքը դադարեցնել և Նապոլեոնին ասել, որ այլևս ոչինչ չի հասկանում։

Մի այլ մինիստր ննջել էր իր թղթերի վրա այն ժամանակ, երբ Նապոլեոնը խոսելիս է եղել նրա հետ, և արթնացել է միայն քառորդ ժամ հետո, ընդ որում քնի մեջ շարունակել էր խոսել կայսեր հետ ու պատասխանել նրան. իսկ դա Նապոլեոնի ամենաշնորհալի մինիստրներից մեկն էր։

Մինիստրները ժամանակ առ ժամանակ ողորմածություն էին վայելում, որը տևում էր մեկից մինչև մեկուկես ամիս։ Երբ այդ դժբախտներից որևէ մեկը նկատում էր, որ ինքն արդեն չի օգտվում իր տիրակալի բարեհաճությունից, ստիպված էր կրկնապատկված եռանդով աշխատել, նրա դեմքը դառնում էր դեղին, և նա է՛լ ավելի էր շողոքորթում Բասսանի դքսին։ Հանկարծ, բոլորի համար միանգամայն անսպասելիորեն, շնորհազուրկ պաշտոնյաները նորից հարգանքի էին արժանանում. նրանց կանայք նորից պալատական մտերմիկ երեկույթների հրավերներ էին ստանում, և մինիստրներն ուրախությունից իրենց կորցնում էին։ Նման կյանքը սպանում էր մարդուն, բայց ձանձրանալու ժամանակ չկար։ Ամիսները թռչում էին օրերի նման։

Երբ կայսրը գոհ էր լինում մինիստրներից, նրանց տարեկան տասը հազար լիվր հավելավճար էր նշանակում։ Մի անգամ համոզվելով, որ Մասսի դքսի մեղքով ինքն ինչ-որ խոշոր վրիպում է թույլ տվել, Նապոլեոնը կարմիր պատմուճան հագած դքսին վայր գլորեց բազմոցին և նրան մի քանի անգամ հարվածեց բռունցքով։ Հաջորդ օրը, ամաչելով այդ արարմունքից, նա վաթսուն հազար ֆրանկ ուղարկեց դքսին։ Ես լսել եմ, թե ինչպես նրա ամենաքաջ գեներալներից մեկը (կոմս Կյուրիալը*) ապացուցում էր, որ կայսրից ստացած ապտակն անպատվություն չէ, այլ Ֆրանսիայի զեկավարի դժգոհության սոսկ արտահայտություն։ Դա ճիշտ է, բայց այդպես կարելի է դատել շատ նախապաշարմունքներից հրաժարվելով միայն։ Մի ուրիշ անգամ կայսրը բուխարու ունելիով ծեծ տվեց Նեշատելի իշխանին։

Օտրանտի դուքսը՝ Նապոլեոնի մինիստրներից միակը, որն իրոք օժտված էր բացառիկ խելքով, ինքնակամ իրեն ազատեց գրասենյակային այն հսկայական աշխատանքից, որի միջոցով մյուս մինիստրները ջանում էին շահել միապետի բարեհաճությունը։ Բենևենտի իշխանը լոկ primus inter pares[1] էր, իսկ նրա pares-ը՝ մյուս արքունիքների մինիստրները, ոչ ավելի քան հիմարներ էին։ Նրան երբեք չէր վիճակվել լուրջ դժվարություններ հաղթահարել։ Օտրանտի դուքսը կարողացավ փրկել թշնամիներով շրջապատված կառավարությունը, իսկ նրա սա՛մանած անխոնջ ու անդադար հսկողությունը հարմարվեց ազատության որոշ խարուսիկության հետ և բնավ նեղություն չէր պատճառում ֆրանսիական ժողովրդի հսկայական մեծամասնությանը։ Մասսի և Ֆելտրի դքսերն անընդունակ էին նույնիսկ գրասենյակային մեխանիկական աշխատանքով զբաղվելու։ Կայսրը, որին գրգռում էր Ֆելտրի դքսի ազատությունը, հանձնարարեց կոմս Լոբոյին* աչքի անցկացնել այն ամենը, ինչ նա գրում էր. ծովային մինիստր կոմս Դեկրեն* և ներքին գործերի մինիստր Մոնտալիվեն*, խելոք մարդիկ լինելով, այնուամենայնիվ, լոկ հիմարություններ էին անում. առաջինը չէր կռահել իրրև ծովահենների նավեր՝ երկու հարյուր ֆրեգատ ուղարկել և դրանով իսկ կործանել անգլիական առևտուրը. նա չէր կարողացել բավականաչափ արագ սովորեցնել նավաստիներին Զեյդերզեում և էլի հազարավոր այլ հիմարություններ էր արել։ Երկրորդի ողորմածությամբ «պատվավոր պահապանները», որոնք պետք է սրճարաններում կառավարությանը հայհոյող ընդամենը հինգ-վեց հարյուր բերանբացների բռնեին, փոխարենը ամենաանարդարացի և վրդովեցուցիչ կերպով սուգ պատճառեցին հազարավոր ընտանիքների։ Բայց կոմս Մոնտալիվեն ուզում էր դուքս դառնալ։ Մինչդեռ նա կարկառուն դեմք էր։

1810 թվականին հանրության ձայնը մի ամբողջ շարք նշանակումներ հուշեց կայսրին։ Արդարադատության մինիստրի համար անվանում էին Թալեյրանին, Ֆուշեին կամ Մելենին, գլխավոր շտաբի պետի համար՝ Սուլտին*, ռազմական մինիստրի համար՝ Կառնոյին կամ մարշալ Դավուին*. առաջարկում էին գլխավոր ինտենդանտ նշանակել Դարյուին, ներքին գործերի մինիստր՝ Շապտալին*, ֆինանսների մինիստր՝ Մոլիենին* կամ Գոդենին*, պետական քարտուղար՝ Ռեալին. հատուկ գերատեսչությունների պետեր էին նախատեսում Բերանժեին, Ֆրանսեին,

---

1 Առաջինը հավասարների մեջ (լատ.)։

Մոնտալիվեին, Տիբոդոյին*, Պետական խորհրդի անդամներ՝ Լեվուայե դ'Արժանսոնին*, Լեղե-Մառնեզիային*, կոմս Լոբոյին, Լաֆայետին*, Սեյին*, Մեռլեն դը Տիոնվիլին*։ Ինչպես հայտնի է, Նապոլեոնը մասամբ հետեւել է այդ ցուցումներին։ Այնուամենայնիվ նրա մինիստրների թվում գտնվեցին շորս-հինգ ողորմելի մարդիկ, որոնց նշանակումը, անշուշտ, վկայում է տաղանդավոր մարդկանց նկատմամբ Նապոլեոնի ունեցած ատելության մասին։ Մի քանի տարի հետո նրա մինիստրների կազմը, անտարակույս, զգալիորեն ավելի կվատանա։ Այն մարդիկ, որոնք հեղափոխության տարիներին պետական գործերում իսկական փորձ էին ձեռք բերել, այդ ընթացքում վերջնականապես զզվանքով կտրվեին քաղաքականության նկատմամբ կամ էլ կմահանային, իսկ նրանց փոխարինած երիտասարդները միայն կձգտեին ստորաքարշությամբ իրար գերազանցել։ Բասսանի դքսին սիրաշահելը բոլորի համար մեծագույն երջանկություն էր։ Այդ դքսի արքունիքում մտածելու ընդունակություն դրսևորել՝ նշանակում էր ընդմիշտ իրեն կործանել նրա աչքում։ Նրա սիրեցյալները նրանք էին, որոնց մասին լուրերն ասում էին, որ կարդալ չգիտեն։

ԳԼՈՒԽ L

Ինչպե՞ս կարող էր Ֆրանսիան ապրել այնպիսի մինիստրների օրոք, որոնք այդքան անմիտ ուղի էին բռնել։ Ֆրանսիան ապրում էր ուժեղ մրցակցության շնորհիվ, որ Նապոլեոնը հրահրել էր հասարակության բոլոր խավերում։ Ֆրանսիացիների համար իսկական օրենսդրությունը փառքի կոչն էր։ Ամենուրեք, որտեղ հայտնվում էր կայսրը, իսկ նա շարունակ շրջում էր իր հսկայական կայսրությունում, իրոք վաստակ ունեցող մարդը, միայն եթե նրան հաջողվում էր ճեղքել-անցնել կայսրական մինիստրների և պալատական ատիճանավորների շարքի միջով, կարող էր վստահ լինել, որ շուտ պարգև կստանա։ Իր տիրոջ կրպակում աշխատող դեղատան ամենահետին աշակերտը ոգևորված էր այն մտքով, որ հենց որ ինքը մեծ հայտնագործություն անի, Պատվո լեգիոնի խաչ կստանա և ի հավելումն դրա՝ կոմսի տիտղոս։

Պատվո լեգիոնի շքանշանի ստացողները Ֆրանսիացիների միակ կրոնն էին. դրանք հավասարապես հարգում էին ինչպես

ինքը՝ միապետը, այնպես էլ նրա հպատակները։ Հին հռոմեական կաղնեստերև պսակների ժամանակներից սկսած դեռ երբեք շքանշանը չի շնորհվել այդպիսի իմաստուն ընտրությամբ, դեռ երբեք դրանով պարգևատրվածների մեջ այդքան մեծ թվով իրոք արժանի մարդիկ չեն եղել։ Բոլոր նրանք, ովքեր օգուտ բերեցին հայրենիքին, ստացան այդ շքանշանը։ Սկզբում այն բաժանում էին մի քիչ անխտրաբար, բայց հետագայում վաստակ չունեցող մարդկանց թիվը պարգևատրվածների ընդհանուր թվի մեկ տասներորդ մասից էլ պակաս էր[1]։

ԳԼՈՒԽ LI

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Նշանակումներին չվերաբերող հիմնական դեկրետների մեծ մասը Պետական խորհուրդ էր ուղարկվում։ Կանցնի շատ ժամանակ, մինչև որ միապետներից որևէ մեկը կկարողանա իր մոտ նապոլեոնյան խորհրդի նման մի բան հաստատել։ Նապոլեոնը հեղափոխությունից ժառանգել է դրա աղդեցությամբ ձևավորված բոլոր տաղանդավոր մարդկանց։ Բացառություն էին կազմում միայն շատ աննշան թվով մարդիկ, որոնք չափազանց աչքի էին ընկնում իբրև այս կամ այն կուսակցության անդամ։ Մարդկանց հանդեպ իր արհամարհանքի, նրանց այս կամ այն պաշտոնի նշանակման նկատմամբ անտարբերության և հանգամանքներին հակառակվել չկամենալու հետևանքով Նապոլեոնը Սենատի ընդերքում ողջ-ողջ թաղեց բազմաթիվ մարդկանց, որոնք, ոմանք իրենց ազնվությամբ, մյուսներն իրենց ձիրքով, շատ ավելի մեծ օգուտ կբերեին Պետական խորհրդին։ Դրանց թվին էին պատկանում գեներալ Կանկլոն, Բուասսի դ'Անգլան, կոմս Լապարանը, Ռեդերերը, Գառնիեն, Շապտալը, Ֆրանսուա դը Նեֆշատոն, Սեմոնվիլը։ Կոմս Սիեյեսը, Վոլնեյը, Լանժյուինեն չափազանց հայտնի էին իրենց աղատամիտ և վտանգավոր հայացքներով։ Վոլնեյը

1 Ներկայումս հակառակ երևույթն է նկատվում։ Եթե դուք ուզում եք ունենալ Ֆրանսիայի ամենալավին, ամենատխմար, ամենաստոր մարդկանց թվարկումը, վերցրեք նրանց ցուցակը, ովքեր վերջին երեք տարում պարգևատրվել են Պատվո լեգիոնի շքանշանով։

կոնկորդատի կնքման օրը Նապոլեոնին կանխագուշակեց այն բոլոր անախորժությունները, որոնք պապը հետագայում պատճառեց նրան։

Այդ մարդկանցից բացի Պետական խորհուրդ մտավ այն ամենը, ինչ լավագույնն էր տվյալ պայմաններում։

Այն բաժանված էր հինգ սեկցիաների՝

Օրենսդրական,

Ներքին գործերի,

Ֆինանսական,

Ռազմական,

Ծովային։

Երբ ռազմական մինիստրը ներկայացնում էր որևէ դեկրետ, օրինակ՝ ինվալիդների տան կանոնադրության մասին, կայսրն այն ուղարկում էր ռազմական սեկցիա, որտեղ ուրախ էին մինիստրին դատափետելու առիթի համար։

Այնուհետև դեկրետները համապատասխան սեկցիայում քննարկվում էին Պետական խորհրդի վեց անդամների և շորս զեկուցողների կողմից։ Կային նաև յոթ-ութ աուդիտորներ։ Սեկցիան մշակում էր նախագիծ, որը տպագրվում էր մինիստրի նախագծին զուգահեռ. շորս զեկուցողներից յուրաքանչյուրն ստանում էր մեկական օրինակ, և երկու նախագիծն էլ քննարկվում էին կայսեր կամ մեծ կանցլեր Կամբասերեսի* նախագահությամբ տեղի ունեցող նիստում։ Շատ հաճախ դեկրետը նորից ուղարկում էին սեկցիա, շորս թե հինգ անգամ ի նորո վերամշակում և նույնքան անգամ տպագիր վիճակում բաժանում խորհրդի անդամներին՝ մինչև որ կայսրը որոշում էր այն ստորագրել։

Ահա այն հիանալի կատարելագործումը, որ Նապոլեոնը մտցրեց բռնապետության մեջ։ Ահա մի արժանավոր իշխանություն, որ իր գործն իմացող մինիստրն անխուսափելիորեն ձեռք է բերում թույլ թագավորի, կամ էլ առնվազն այնպիսի մեկի օրոք, որը լոկ կիսով շափ է գլուխ հանում գործերից։

Պետական խորհրդի նիստերում կայսրը փայլուն էր դրսևորում իրեն։ Ավելի սուր միտք անհնար է պատկերացնել։ Նա միշտ բոլորին ապշեցնում էր նույնիսկ այնպիսի գործերում, որոնք, կարծես թե, մեծապես խորթ էին նրա ռազմական մասնագիտությանը, օրինակ՝ քաղաքացիական օրենսգիրքը քննարկելիս։ Շնորհիվ իր զարմանալի, անսահման, փայլուն խորաթափանցու-

թյան, նա անխտիր բոլոր հարցերում որսում էր կա՛մ բոլորովին նոր, կա՛մ էլ քիչ նկատելի կողմեր։ Նա իր մտքերը մարմնավորում էր կենդանի, պատկերավոր ձևի մեջ, դրանց համար գտնում հաջող, դիպուկ արտահայտություններ, որոնց միշտ մի քիչ տարօրինակ հնչող իր անճիշտ արտասանությամբ (քանզի չէր կարողանում կատարյալ ճիշտ խոսել ո՛չ ֆրանսերեն, ո՛չ էլ իտալերեն) է՛լ ավելի արտահայտչականություն էր տալիս։

Նա հմայում էր իր շիտակությամբ ու բարեհոգությամբ։ Մի անգամ, երբ պապի միջև ծագած ինչ-որ մի տարաձայնություն քննարկելիս, նա ասաց. «Այո՛, ձեզ համար դա հեշտ է ասել, բայց եթե պապն ինձ ասի. «Այսօր գիշերն ինձ երևացել է Գաբրիել հրեշտակապետը և ավետել այսինչ ու այսինչ բաները», ես պարտավոր եմ նրան հավատալ»։

Պետական խորհրդի անդամների մեջ կային հարավցիներ՝ հեշտությամբ հրապուրվող, իրենց տաքարյունությամբ շափն անցկացնող և հաճախ, ինչպես, օրինակ, կոմս Բերանժեն, նվազ համոզիչ փաստարկներով շրավարարվող։ Կայսրը դրա համար նրանց չէր մեղադրում. ընդհակառակը, նա հաճախ էր դիմում նրանց և կարծիքներ հարցնում. «Դե՛հ, բարոն Լուի, ի՞նչ կասեք այդ մասին»։ Ղեկավարվելով իր բնածին առողջ դատողությամբ, նա հաճախ էր շեղյալ հայտարարում Պատժական օրենսգրքում պահպանված հնացած անհեթեթությունները։ Նա հիանալի էր դատում, երբ իրավական հարցերի շուրջը վիճում էր ծեր կոմս Տրեյլարի հետ։ Քաղաքացիական օրենսգրքի, հատկապես ամուսնությանը վերաբերող գլխի որոշ ամենախելացի հոդվածները կազմել է Նապոլեոնը[1]։ Խորհրդի նիստերն իսկապես բավականություն էին պատճառում։

Ինչպես Նապոլեոնի ներկայությամբ, այնպես էլ նրա բացակայությամբ նախագահում էր Կամբասերեսը։ Այս դերում նա դրսևորում էր արտակարգ արվեստ ու խորամտություն։ Նա հիանալի էր ամփոփում բանավեճերը։ Չափավորելով խորհրդի առանձին անդամների ինքնասիրությունը, նշելով բոլոր սխալները և արտահայտվելով հօգուտ առավել խելամիտ որոշման, նա ըստ հնարավորին նպաստում էր յուրաքանչյուր հարցի պարզաբանմանը։ Պետական խորհրդին ենք պարտական ֆրանսիական աղ-

---

1 Տե՛ս Լոկրեի հաշվետվությունները, թեև դրանք շատ ոժգույն են։

մինիստրացիայի այն հիանալի սիստեմի համար, որի մասին, չնայած նրա կողմից բռնությամբ խախտված հին սովորություններին, մինչև հիմա էլ ափսոսանքով են հիշում Բելգիան, Իտալիան և Հռենոսյան նահանգները։

Կայսրը չէր ցանկանում քաղաքացիների մեջ ո՛չ վտանգավոր հակումներ խրախուսել, որոնք հանրապետության օրոք առաքինությունների համբավ էին վայելում, ո՛չ էլ հիմնել Պոլիտեխնիկականի նման հատուկ դպրոցներ՝ դատավորներ ու կրթված պաշտոնյաներ պատրաստելու համար։ Նա այնքան հեռու էր այդ բոլորից, որ ոչ մի անգամ չայցելեց կարևորագույն ռազմական ուսումնական հաստատությունը՝ Պոլիտեխնիկական դպրոցը, որը ոչ միայն արգարացրել, այլ նաև գերազանցել էր այն հիմնած փիլիսոփաների հույսերը և որը բանակը համալրել էր գումարտակային հիանալի հրամանատարներով ու կապիտաններով։

Չնայած այս երկու հանգամանքին, որոնք որոշ չափով խաթարում էին ադմինիստրացիան Ֆրանսիայում, այն լավագույնն էր, ինչ կարելի էր ստեղծել։ Ամեն ինչ նրանում որոշակի էր, խելացի, անհեթեթություններից զերծ։ Կարծում են, որ նրանում չափազանց շատ թղթի քաշքշուկ և բյուրոկրատիզմ է եղել։ Նրանք, ովքեր անում են այս առարկությունը, մոռանում են, որ կայսրը որոշել էր ոչինչ, բացարձակապես ոչինչ չպահպանել հանրապետության օրոք գոյություն ունեցած, իր համար կաշկանդիչ կարգուկանոնից։ Բոնապարտն ասում էր իր հպատակներին. «Դուք կարող եք ձեռքներդ ծալած նստել, իմ պրեֆեկտները ձեր փոխարեն ամեն ինչ կանեն։ Այդ հաճելի հանգստի փոխարեն դուք ինձ կտաք միայն ձեր զավակներին ու ձեր փողերը»։ Քանի որ գեներալների մեծամասնությունը հարստացել է գանձարանը կողոպտելով, ապա անհրաժեշտ էր վերահսկողության ու վերստուգման միջոցով անհնար դարձնել հափշտակությունները։ Երբեք ոչ մի բռնակալ այնպիսի ծառաներ չի ունենա, ինչպես կոմս Ֆրանսուա դը Նանտը, որը կառավարում էր տարեկան հարյուր ութսուն միլիոն ավող անուղղակի հարկերի գերատեսչությունը, և կոմս Մոնտալիվեն, որը վարում էր երեսուն-քառասուն միլիոն արժեցող հաղորդակցության ճանապարհները։ Պետական ունեցվածքի գերատեսչության անողոք կառավարիչ կոմս Դյուշատելը թեև իր նշանակումն ստացել էր կնոջ շնորհիվ, սակայն հիանալի էր կատարում իր պարտականությունները։ Փոստային գերատեսչության պետ կոմս Լավալետը, Սաբանտի դքսի նման, կարող էր վարկաբեկել Ֆրանսիայի կեսը, սակայն նա այդ տեսակետից միայն խիստ անհրաժեշտն էր անում։ Դրա համար հարկավոր է նրան գովաբանել, դա վկայում է նրա խիստ օրինավոր մարդ լինելու մասին։ Կոմս Դարյուն՝ աշխարհի ամենավատ մարդը, բոլորից լավ էր կարողանում մատակարարել բանակը։ Կոմս Սյուսսին մաքսային գերատեսչության հիանալի պետ էր։ Կայսրն առևտրի երդվյալ թշնամի էր, որը մարդկանց դարձնում էր անկախ, և մինչև իր ուղնուծուծը պալատական կոմս Սյուսսին հանդես չէր գալիս առևտրի պաշտպանությամբ՝ հակառակ իր տիրակալի կամքին։ Վճռարեկ ատյանի նախագահ Մեռլենը և ոստիկանության տնօրեն Պելե դը Լա-Լոզերը հիանալի էին կատարում իրենց պարտականությունները։ Մամուլը կայսեր ձեռքում հլու-հնազանդ միջոց էր, որը նա օգտագործում էր բոլոր նրանց նվաստացնելու և անարգելու համար, ովքեր հարուցում էին նրա դժգոհությունը։ Թեև նա դյուրաբորբոք բնավորություն ուներ և ցասման պահին չափ չէր ճանաչում, բայց դաժանությունն ու ոխակալությունը նրան խորթ էին։ «Նա մարդկանց ավելի շատ անպատվում էր, քան պատժում»,— նրա մասին ասել է մեկը նրանցից, ում վրա նրա ցասումը թափվել էր բացառիկ ուժով։ Իսկ չէ որ կոմս Ռեալը, թերևս, մյուսներից ավելի նշանավոր էր, մեկը նրանցից, որոնց բռնակալը հա՛րկ էր որ մերձեցներ իրեն։

Այն ամենը, ինչ շատ թե քիչ նշանավոր էր Պետական խորհրդում, պատկանում էր յակոբինյանների անուն ունեցող և տիտղոսների ու տարեկան քսանհինգ հազար ֆրանկի համար կայսրին ծախված հին լիբերալների թվին։ Այդ տաղանդավոր մարդկանց մեծ մասը բերանքսիվայր փովում էր շքանշանի ժապավենի առջև՝ և իր շողոքորթությամբ գրեթե չէր զիջում Լապլաս* ու Ֆոնտան* կոմսերին։

Պետական խորհուրդը գերազանց էր մինչև այն պահը, երբ կայսրն իրեն շրջապատեց արքունիքով, այսինքն՝ մինչև 1810 թվականը։

Այդ ժամանակ մինիստրներն սկսեցին բացահայտորեն ձգտել դառնալու այն, ինչ Լյուդովիկոս XIV-ի օրոք էին։ Առարկել

1 Օրինակ՝ կոմս Ֆրանսեն։

մինիստրներից որևէ մեկի մտցրած դեկրետի նախագծին, այժմ նշանակում էր հիմարություն գործել և դրանով իսկ իրեն ծիծաղելի դրության մեջ դնել։ Եվս մի քանի տարի, և սեկցիա ներկայացված զեկուցագրի մեջ մինիստրի կարծիքին հակասող կարծիք արտահայտելը հանդուգն արարք կհամարվի։ Մտքերի արտահայտման մեջ ամեն մի ուղղամտություն պարսավելի էր։ Կայսրը Պետական խորհուրդ էր հրավիրել մի քանի անձանց, որոնք ոչ միայն դաստիարակված չէին հեղափոխության գաղափարներով, այլև իրենց պրեֆեկտուրաներում յուրացրել էին մինիստրների առջև հաճկատարության և կույր ակնածանքի սովորությունը[1]։ Պրեֆեկտի գերագույն արժանիքը համարվում էր նվաճված մարզում գործող զորապետի նման իրեն պահելու հմտությունը։ Կոմս Ռենիո դը Սեն-Ժան-դ'Անժելին՝ աշխարհի ամենաանիրազ մարդը, Պետական խորհրդում աստիճանաբար բոնապարտական իշխանություն ձեռք բերեց։ Օրինավոր մարդկանց բացակայությունը զգալի էր դառնում. բանը ծախվածությունը չէր (կասկածելի էր միայն Ռենիոյի ազնվությունը), բայց չկային այն օրինավոր, թեկուզև կոպտավուն մարդիկ, որոնց ոչինչ չի կարող խանգարել ասելու ճշմարտությունը, նույնիսկ եթե դա հաճելի չէ մինիստրներին։

Կաֆարելլի եղբայրները հենց այդպիսի խառնվածքի տեր մարդիկ էին։ Բայց այդ հիանալի գիծն օրավուր ավելի էր ծաղրվում, ավելի «միջնադարյան» դառնում։ Միայն Դեֆորմոն* և Անդրեոսսի* կոմսերն իրենց առանձնահատուկ տաքարյունությամբ համարձակվում էին շխոնարհվել մինիստրների նախագծերի առջև։ Քանի որ մինիստրները սնափառությունից դրդված անշեղորեն անցկացնում էին իրենց գրասենյակներում մշակված նախագծերը, ապա Պետական խորհրդի անդամների տեղը կամաց-կամաց բռնում էին պաշտոնյաները, և դեկրետների նախագծերը կայսեր կողմից քննարկվում էին միայն այն պահին, երբ հարկավոր էր դրանք ստորագրել։

Կայսրության տապալման ժամանակ Պետական խորհուրդը, որն ստեղծել էր քաղաքացիական օրենսգիրքը և ֆրանսիական ադմինիստրացիան, կորցրել էր գրեթե ամեն մի նշանակություն,

1 Մոլե, Շովլեն*, Ֆրեվիլ և Նեվիլ։

և նրանք, ովքեր կարողանում էին կռահել մինիստրների մտահղացումները, ասում էին, որ այն հարկավոր է վերացնել։

Իր թագավորության վերջին տարիներին կայսրը հաճախ էր մինիստրների կաբինետի նիստեր հրավիրում, որոնց մասնակից էր դարձնում սենատորներից և Պետական խորհրդի անդամներից ոմանց։ Այնտեղ քննարկվում էին գործեր, որոնց չէր կարելի հաղորդակից դարձնել մի հիանալի մարդկանց։ Դա էլ հենց իսկական Պետական խորհուրդ էր։ Այդ նիստերը հսկայական նշանակություն կունենային, եթե կարելի լիներ դրանց անկախության ոգի ներշնչել գոնե աղդեցիկ մինիստրների վերաբերմամբ, քանզի միապետի վերաբերմամբ անկախություն ապահովելու մասին խոսելու հարկ էլ չկա։ Բայց ո՞վ կհամարձակվեր կոմս Մոնտալիվեի ներկայությամբ ասել, որ ներքին գործերի կառավարումը շարունակ վատանում է, որ յուրաքանչյուր օրը նշանավորվում է հեղափոխության այս կամ այն նվաճումի կորստով։

Վերացնելով աշխարհիկ խոսքն ու զրույցը, Նապոլեոնը երբեմն, հատկապես գիշերները, այնուամենայնիվ, մարդկանց հետ շփվելու պահանջ էր զգում։ Նա սնունդ էր փնտրում իր մտքերի համար։ Զրույցի ժամանակ նրա մեջ ծագում էին մտքեր, որ նա չէր ունենա, եթե մենության մեջ խորհրդածեր։ Այդ հակումը բավարարելով, նա միաժամանակ փորձում էր նրան, ում հետ որ խոսում էր, կամ, ավելի ճիշտ՝ հաջորդ օրը քաղաքագետը մտաբերում էր այն, ինչ նախօրյակին լսել էր մտածողը։ Այսպես, մի անգամ գիշերվա ժամը երկուսին նա հարցրեց իր մտերիմ մի զինվորականի. «Ի՞նչ կլինի Ֆրանսիայում ինձնից հետո»։ «Ձերդ մեծություն, ձեր հետնորդը, որն իրավացիորեն վախենալու է, որ չլինի թե հանկարծ ձեր փառքի լույսի տակ ինքը ողորմելի երևա, կաշխատի ընդգծել ձեր կառավարման թերությունները։ Աղմուկ կբարձրացնեն այն տասնհինգ կամ քսան միլիոնի համար, որ դուք ձեր ռազմական մատակարարման մինիստրին թույլ չեք տալիս վճարել Լոդի դժբախտ վաճառականներին և այլն և այլն»։ Կայսրն սկսեց նրա հետ իմաստասիրաբար, լիակատար շիտակությամբ, մեծագույն պարզությամբ և, կարելի է ասել, ամենալրջախոհ ու հարգալից կերպով քննարկել այդ բոլոր հարցերը։ Երկու ամիս անց մինիստրների կաբինետի նիստում ինչ-որ մի մատակարարի բողոք էր քննարկվում։ Այն զինվորականը, որի հետ դրանից առաջ կայսրը զրուցել էր,

սկսեց խոսել։ «Դե,— ընդհատեց նրան կայսրը,— ես լավ գիտեմ, որ դուք մատակարարների կողմն եք։ Դա ամենևին չէր համապատասխանում իրականությանը։

ԳԼՈՒԽ LII

ԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՍԻՆ

1785 թվականին գոյություն ուներ հասարակություն, այլ կերպ ասած՝ իրար նկատմամբ անտարբեր մարդիկ հավաքվում էին սալոններում և այդպիսով իրենց պատճառում էին ոչ բուռն հաճույքներ, ապա, առնվազն, շատ նրբին ու շարունակ կրկնվող բավականություն։ Հասարակության պատճառած բավականությունն այնքան անհրաժեշտ դարձավ, որ վերջիվերջո խլացրեց մեծ հաճույքների պահանջը՝ կապված մարդու խառնվածքի բուն էության հետ, բուռն կրքերի և վեհ առաքինությունների հետ։ Վսեմ և ուժեղ ամեն ինչ անհետացավ ֆրանսիացիների սրտերից։ Հաղվագյուտ դեպքերում բացառություն էր կազմում սերը[1]։ Բայց քանի որ ուժեղ զգացմունքների դրսևորումները սովորաբար բաժանված են լինում բավական զգալի ընդմիջումներով, իսկ սալոնների հաճույքները միշտ էլ մատչելի են, Ֆրանսիայի հասարակությունը աշխարհիկ լեզվի ու շարժուձևերի բռնապետական գերիշխանության շնորհիվ Եվրոպայում արտակարգ գրավչություն էր ձեռք բերել։

Այդ նրբին քաղաքավարությունը ֆրանսիական ազգի հարուստ դասակարգերում աննկատելիորեն խպառ ոչնչացրեց ամեն մի եռանդ։ Պահպանվել էր անձնական համարձակությունը, որի աղբյուրը քաղաքավարության կողմից խրախուսված և սրտերում անընդհատ զորացված անսահման սնափառությունն է։

Ահա թե ինչպիսին էր Ֆրանսիան այն պահին, երբ գեղեցկուհի Մարի-Անտուանետը, ցանկանալով իրեն այնպիսի հաճույքներ պատճառել, որոնց կարող է հավակնել սիրունիկ կինը, արքունիքը մի հասարակություն դարձրեց։ Այսուհետև Վերսալում այս կամ այն մարդուն բարեհաճ ընդունելություն էին ցույց տա-

1 Մենք այստեղ չենք խոսում հասարակության այն ինն տասներորդի մասին, որը չունի ո՛չ քաղաքավարություն, ո՛չ էլ ազդեցություն։

լիս ոչ թե այն պատճառով, որ նա դքսի կամ պերի տիտղոս էր կրում, այլ որովհետև տիկին դը Պոլինյակը* բարեհաճել էր նրան դուրեկան համարել[1]։ Պարզվեց, որ թագավորն ու թագուհին այնքան էլ խելոք չեն։ Թագավորը, բացի դրանից, կամազուրկ մարդ էր. այդ իսկ պատճառով, մատչելի լինելով բոլոր նրանց ազդեցությանը, ովքեր նրան պարտադրում էին իրենց խորհուրդները[2], նա չէր կարողանում ո՛չ ամբողջովին վստահել պրեմիեր-մինիստրին, ո՛չ էլ բաղմել հասարակական կարծիքի կառքին[3]։ Արքունիքում գտնվելը վաղուց արդեն նվազ շահութաբեր գործ էր դարձել, իսկ երբ պ-ն դը Նեկկերի* առաջին բարեփոխությունները վնասեցին թագուհու բարեկամներին[4], այդ ճշմարտությունն ակնհայտ դարձավ բոլորին։ Այդ պահից արքունիքը դադարեց գոյություն ունենալուց[5]։

Հեղափոխությունն սկսվեց բոլոր դասակարգերի մարդկանց վսեմ հոգիները համակած խանդավառությունից։ Սահմանադիր ժողովի աջ թևն անտեղի դիմադրություն ցույց տվեց, որը հաշտեցնելու համար հարկավոր էր եռանդ դրսևորել. դա նշանակում էր մարտադաշտ կանչել միջին դասակարգի բոլոր երիտասարդներին, որոնց մեջ չափից դուրս քաղաքավարությունը չէր թուլացրել կամքը[6]։ Եվրոպայի բոլոր թագավորները միավորվեցին յակոբինության դեմ։ Այդ ժամանակ Ֆրանսիային համակել էր 1792 թվականի ազնիվ պոռթկումը։ Պահանջվեց եռանդի նոր հորդում, և բոլոր գործերի գլուխ կանգնեցին է՛լ ավելի ցածր դասում ունեցող մարդիկ կամ էլ բոլորովին պատանյակներ[7]։ Մեր ամենանշանավոր գեներալները դարձան այն հասարակ զինվորները, որոնք հեշտությամբ ստանձնեցին հարյուր հազարանոց

1 Դը Բեզանվալի «Հուշագրությունները»։

2 Նույնիսկ Պեզեն, որը նրան խորհուրդ էր տալիս քիթը մաքրել։

3 Աչակցություն ցույց տալով խմաստուն Տյուրգոյին*։

4 Պ-ն դը Կուանյի*։

5 Կասկածից վեր է, որ այդ բոլորը փայլուն կերպով շարադրվելու է տիկին դը Ստալի հետմահու ստեղծագործությունում, որն իր տաղանդով կոչված էր գրելու հասարակության «Օրենքների ոգին»։

6 Պարոնայք Բառնավը*, Մունիեն*, Տիրոդոն, Բերանժեն, Բուասսի դ'Անգլան*, Մեոլեն եղբայրները և այլն և այլն։

7 Դանտոնը, Սեն-Ժյուստը*, Կոլլո դ'Էրբուան*, դ'Էգլանտինը* և Կոնվենտի ու յակոբինյան կուսակցության այն բոլոր անդամները, որոնք այդպիսի եռանդ դրսևորեցին։

բանակների հրամանատարությունը[1]։ Ֆրանսիայի տարեդրության այդ ամենամեծ ժամանակաշրջանում քաղաքավարությունն արգիլվեց օրենքով։ Բոլոր նրանք, ովքեր քաղաքավարություն էին դրսևորում, լիակատար հիմունքով հրահրում էին դավաճաններով ու դավադիրներով շրջապատված ժողովրդի կասկածանքը, և մենք տեսնում ենք, որ այդ ժողովուրդն այնքան էլ իրավացի չէր, երբ երկյուղ էր կրում հակահեղափոխությունից[2]։

Սակայն ո՛չ օրենքները, ո՛չ խանդավառ պոռթկումները չէին կարող արմատախիլ անել ողջ ժողովրդի կամ էլ առանձին անհատների վաղուց արդեն յուրացրած սովորությունները։ Երբ տեռորը վերջացավ, ֆրանսիացիները հափշտակությամբ նորից անձնատուր եղան աշխարհիկ կյանքի վայելքներին[3]։ Բարրասի սալոնում Բոնապարտն առաջին անգամ ճաշակեց այն նրբին, զգլխիչ հաճույքները, որ կարող է պատճառել ընտիր հասարակությունը։ Սակայն այն սորկի նման, որն Աթենքի շուկա էր եկել ոսկեզրամներով բեռնավորված, բայց առանց մանր դրամի, Բոնապարտը չափազանց վսեմ խելքի, չափազանց վառ ու կրքոտ երևակայության տեր էր, որպեսզի երբևիցե հաջողություն ունենար սալոններում։ Ընդ որում, նա սկսեց այնտեղ երևալ, երբ լրացել էր իր քսանվեց տարին, և նրա աննկուն բնավորությունն արդեն միանգամայն կազմավորվել էր։

Եգիպտոսից Նապոլեոնի վերադառնալուց հետո սկզբնական շրջանում Տյուիլրիի արքունիքը բացօթյա երեկույթ էր հիշեցնում։ Նույն պարզությունը, անկաշկանդությունը, սրամտության բացակայությունը։ Լոկ տիկին Բոնապարտն էր ժամանակ առ ժամանակ, ասես թաքուն, հարություն տալիս երբեմնի նրբաճաշակությանը։ Նրա ազդեցությունը և աղջկա՝ Հորտենզիայի, ընկերակցությունը կամաց-կամաց մի քիչ մեղմացնում էին առաջին կոնսուլի երկաթե բնավորությունը։ Նա սկսեց հիանալ պ-ն դը Թալեյրանի քաղաքավարությամբ և բարձրաշխարհիկ հասարակության մեջ իրեն պահելու նրա հմտությամբ։ Շարժուձևերի

1 Գեներալ Գոշը՝ մրգավաճառի որդի էր, Մորոն՝ ուսանող-իրավաբան։

2 Տե՛ս այդ տարիների դավադրությունների ցուցակը Միշոյի՝ «Ժամանակակիցների կենսագրություններում»։

3 «Զոհերի պարահանդեսներ», տիկին Տալիենի սալոն։

կատարելությունը պ-ն Թալեյրանին հնարավորություն տվեց իրեն արտակարգ ազատ պահելու[1]։

Բոնապարտը համոզվեց երկու բանում՝ նախ, եթե ուզում է միապետ լինել, պետք է արքունիք ստեղծի, որպեսզի հմայի դյուրաթեք ֆրանսիական ժողովրդին, որի վրա «արքունիք» բառն անդիմադրելի ազդեցություն է գործում, և, երկրորդ, որ ինքը զինվորականների իշխանության տակ է։ Պրետորականների առաջին իսկ դավադրությունը կարող էր իրեն գահընկեց անել և իր կյանքին վերջ տալ[2]։ Ավագ հոֆմարշալից, սենեկապետներից, ախոռապետներից, մինիստրներից, պալատական տիկիններից բաղկացած շքախումբը չէր կարող տպավորություն չգործել գվարդիայի գեներալների վրա, որոնք նույնպես ֆրանսիացիներ էին և բնածին հարգանք էին տածում այն բանի հանդեպ, ինչ արքունիք է կոչվում։

Բայց բոնապարտը կասկածամիտ էր. նրա մինիստր Ֆուշեն նույնիսկ մարշալների կանանց մեջ իր լրտեսներն ուներ։ Կայսրը մեկը մյուսին հետևող ամբողջ հինգ ոստիկանություն ուներ[3]։ Մի խոսքը, որն անբավարար հիացմունք էր արտահայտում բոնապարտության, առավել ևս՝ բոնապարտի անձի հանդեպ, կարող էր ընդմիշտ կործանել մարդուն։

Նապոլեոնը ծայրաստիճան զրգռեց բոլորի և յուրաքանչյուրի փառասիրությունը։ Այնպիսի միապետի օրոք, որը մի ժամանակ հրետանու լեյտենանտ է եղել, և մարշալների օրոք, որոնք սկսել են գյուղական երաժիշտների կամ սուսերամարտի ուսուցիչների մասնագիտություններից[4], յուրաքանչյուր աուդիտոր ձգտում էր

1 Անեկդոտ բալենիների մասին՝ «Ձերդ մեծության բալենիները լավագույնն են ողջ կայսրությունում»։

2 Հիշեցնեմ գեներալ Մալլեի՝ փայլուն կերպով մտահղացված դավադրությունը 1813 թվականի հոկտեմբերին։

3 Իր իսկ՝ Ֆուշեի ոստիկանությունը, ժանդարմերիայի գլխավոր տեսչի, ոստիկանության պրեֆեկտի, փոստային գերատեսչության պետի գործակալները և, վերջապես, անմիջականորեն կայսեր ենթակա գաղտնի ոստիկանությունը։

4 Բելլյուսի դուքս Վիկտորը՝ երաժիշտ է եղել Վալանսում։ Օժերոն՝ սուսերամարտի ուսուցիչ Նեապոլում. գրանում մասնակցություն է ունեցել Թալեյրանը, որն այն ժամանակ Ֆրանսիայի դեսպանն էր. երբ Նեապոլում ապստամբություն բռնկվեց, նա Օժերոյին քանհիթզ լուիզոր տվեց, որպեսզի սա բախտը փորձի Ֆրանսիայում։

դառնալ մինիստր[1], յուրաքանչյուր ենթալեյտենանտ երազում էր կոնետաբլի սուսերի մասին։ Վերջապես, կայսրը մտածեց երկու տարում ամուսնացնել իր բոլոր պալատականներին։ Ոչինչ այնպես չի ստրկացնում մարդուն, ինչպես ամուսնությունը[2], իսկ իրագործելով իր մտադրությունը, նա սկսեց բարի բարքեր պահանջել։ Ոստիկանությունն ամենակոպիտ ձևով խառնվեց մի դժբախտ տիկնոջ գործին, որի ամուսինն արքունիքից էր[3]։ Գեներալները և երիտասարդները, որոնցից բաղկացած էր այդ արքունիքը, ամենևին չգիտեին, թե ինչ է քաղաքավարությունը, որի թագավորությունն ավարտվել էր 1789 թվականին[4]։

Դա ավելի քան բավական էր, որպեսզի խանգարեր հասարակության հանգիստ սիրո վերածննդին։ Հասարակությունը դադարել էր գոյություն ունենալուց։ Ամեն մեկը պարփակվել էր իր ընտանիքում. եկել էր ամուսնական հավատարմության ժամանակաշրջանը։

Ինձ մտերիմ մի գեներալ ցանկացավ հրավերք ճաշկերույթ տալ քսան հոգու համար։ Նա այն պատվիրելու գնաց Պալե-Ռուայալ՝ Վերիի մոտ։ Նրան լսելով, Վերին ասաց. «Դուք, գեներալ, անշուշտ, գիտեք, որ ես պարտավոր եմ ձեր ճաշկերույթի մասին հայտնել ոստիկանությանը, որպեսզի նա ուղարկի իր գործակալին»։ Գեներալը շատ զարմացավ և առավել քան բարկացավ։ Երեկոյան կայսեր մոտ կայացած խորհրդակցությունում հանդիպելով Օտրանտի դքսին, նրան ասում է. «Սատանան տանի։ Սա չլսված բան է. ես չեմ կարող քսան մարդու ճաշի հրավիրել՝ առանց ձեր գործակալի մասնակցության»։ Մինիստրը ներողություն է խնդրում, բայց չի համաձայնվում փոխել այդ պայմանը. գեներալը զայրացած է։ Վերջապես Ֆուշեն, խորա-

1 Պ-ն Մալեի՝ օրինակով։

2 1808-ից մինչև 1810 թվականը։ Նա պատվիրեց հեռակայը հաղորդել փարիզյան մի հարուստ ոսկերչի, որը երեք աղջիկ ուներ. «Գեներալ N-ը կամենանա ձեր աղջիկներից մեծի հետ, որին դուք կտաք հիսուն հազար էքյու օժիտ։ Հայրը հուսահատության մեջ ընկնելով, շտապում է Տյուիլրի, որտեղ մտաք ուներ, և գթություն աղերսում կայսրից. սա կրկնում է նույն խոսքերը և ավելացնում. «Գեներալ N-ը վաղն առաջարկություն կանի, իսկ վաղը չէ մյուս օրը տեղի կունենա հարսանիքը»։ Ամուսնությունը շատ երջանիկ դուրս եկավ։

3 Տիկին Ռապպի։

4 Մինիստր Ռոլանը՝, որը թագավորին էր ներկայացել առանց ճարմանդի կոշիկներով։

թափանցություն ցուցաբերելով, ասում է գեներալին. «Ցույց տվեք հրավիրյալների ցուցակը»։ Նա տալիս է ցուցակը։ Այնտեղ նշված անունների մեկ երրորդն էլ չկարդալով, մինիստրը ժպտաց և գեներալին վերադարձրեց ցուցակը՝ հայտարարելով. «Հարկ չկա հրավիրել ձեզ անծանոթ անձանց»։ Մինչդեռ բոլոր քսան հրավիրյալներն էլ բարձրաստիճան պաշտոնյաներ էին։

Հասարակական կարծիքից բացի, կայսրը ոչինչ այնպես չէր ատում, ինչպես աշխարհիկ հասարակության ոգին։ Նա դադարեցրեց իշխանությանը ծախված հեղինակի[1] «Բանսարկուհին» պիեսը, բայց դրա մեջ հանդգնում էին ծաղրել սենեկապետներին, ծանակում պալատական տիկնանց, որոնց քմահաճույքից էր կախված Էյուդովիկոս XV-ի օրոք գնդապետի աստիճան ստանալը։ Այդքան հեռավոր ժամանակաշրջանի բարքերի դիպուկ պատկերումը խորապես զայրացրեց Նապոլեոնին. հեղինակը համարձակվել է ծաղրել արքունիքը։

Բնականից ծաղրանքի հակված և հանուն դիպուկ սուր խոսքի իրենց բարեբախտությունը սիրով վտանգի ենթարկող մարդկանց մեջ ամեն ամիս նոր կծու սրախոսություններ էին հայտնվում. դա Նապոլեոնին հուսահատեցնում էր։ Երբեմն համարձակությունը հասնում էր այն աստիճանի, որ երգեր էին հորինվում. նման դեպքերում նա մի ամբողջ շարաթ մռայլ էր և զայրույթը թափում էր իր հինգ ոստիկանությունների պետերի վրա[2]։ Նրա սրանեղությունն է՛լ ավելի էր սաստկանում այն հանգամանքով, որ նա մեծապես զգում էր արքունիք ունենալու բավականությունը։

Նապոլեոնի երկրորդ ամուսնությունն ի հայտ բերեց նրա բնավորության ևս մի թուլությունը։ Նրան շոյում էր այն միտքը, որ ինքը՝ հրեատնու լեյտենանտը, կարողացավ ամուսնանալ Մարի-Թերեզի թոռան հետ։ Արքունիքի ունայն պերճությունն ու

1 Էտիենի։

2 Միլոյի երգը.

Թեկուզ այժմ հերոսը մեր
Ոսկու քաշ ունի մեզ համար,
Բայց թեթև անգամ եթե լիներ,
Կրկնապատիկ թանկ կլիներ։

Գահակալիա Մարտենվիլի երգը, որի համար Թուիլերիի դքսի հատուկ խնամատարությամբ նրան հոգեբուժում է նշանակվել Շարանտոնում։

հանդիսակարգը, կարծես, նրան նույնքան բավականություն էին պատճառում, որքան կպատճառեին, եթե ինքը արքայազն ծնված լիներ։ Նա այնպիսի խենթության հասավ, որ մոռացավ հեղափոխության զավակի իր նախնական կոչումը։ Վյուրտեմբերգի թագավոր Ֆրիդրիխը, մի իսկական միապետ, այն հավաքույթներից մեկում, որ Նապոլեոնը հրավիրում էր Փարիզում, որպեսզի ֆրանսիացիների աչքում արդարացնի իր կայսերական տիտղոսը, նրան ասաց. «Ես ձեր արքունիքում պատմական անուններ չեմ տեսնում. ես կհրամայեի կախաղան հանել բոլոր այդ մարդկանց կամ էլ նրանցով կլցնեի իմ նախասենյակը»։ Դա, թերևս, միակ էական խորհուրդն էր, որին Նապոլեոնը երբևէ հետևել է, ընդ որում՝ բավականաչափ ծիծաղելի ջանասիրությամբ։ Դրանից անմիջապես հետո Ֆրանսիայի հարյուր ամենատարեալի ընտանիքներ սկսեցին խնդրել պ-ն դը Թալեյրանին, որ նա իրենց տեղավորի պալատական պաշտոններում։ Կայսրը զարմացած նկատեց. «Երբ ուզում էի երիտասարդ ազնվականներ ունենալ իմ զորքերում, չէի կարողանում ցանկացողներ գտնել»։

Նապոլեոնը տոհմիկ տներին հիշեցրեց, որ նրանք տոհմիկ են եղել առանց իրեն. նրանք մոռացել են այդ մասին։ Բայց զիջել այդ թուլությանը ինքը, իր իսկ խոստովանությամբ, կարող էր անել միայն մեծագույն զգուշությամբ պահպանելով. «Որովհետև ամեն անգամ, երբ դիպչում էի այդ լարին, նրանց սրտերը թպրտում էին՝ ինչպես ձին, որի սանձը խիստ ձգված է»։ Սա բռնադատում էր ֆրանսիացիների միակ կիրքը՝ փառամոլությունը։ Քանի դեռ նա բռնադատում էր միայն ազատությունը, բոլորը հիանում էին նրանով։

Նապոլեոնը, որը երիտասարդ տարիներին խիստ կարիքավոր էր և ամբողջովին կլանված լուրջ զբաղմունքներով, այնուամենայնիվ, ամենևին էլ անտարբեր չէր կանանց նկատմամբ։ Նրա անշուք արտաքինը, ցածր հասակը, աղքատությունը չէին կարող նրան համարձակություն նեղնչել և հաջողություն ապահովել։ Այստեղ հարկավոր էր փոքր դոզաներով քաջություն ունենալ։ Ես լիովին ենթադրում եմ, որ նա վախենում էր կանանցից։ Նա սարսափում էր նրանց ծաղրանքից. և այդ մարդը, որը վախ չուներ, իր վեհության տարիներին կանանցից վրեժ լուծեց նրանով, որ շարունակ, և ընդ որում ցինիկորեն, նրանց նկատմամբ արտահայտում էր իր արհամարհանքը, որը չէր դրսևորի, եթե հիրավի

ունենար այդ զգացումը։ Երբ նա դեռ չէր հասել հզորության, իր եղբայր Լյուսիենի մի կրքոտ սիրահարության առթիվ գրել է իր բարեկամին՝ գնդի գանձապահ Ռեին. «Կանայք ցեխոտ ձեռնափայտեր են, հենց որ ձեռք տաս, անպայման կկեղտոտվես»։ Այս անվայելուչ համեմատությամբ նա ակնարկում էր այն դատապարտելի արարքները, որ կանայք երբեմն մեզ ստիպում են գործել։ Այս խոսքերը մարգարեական դուրս եկան։

Նապոլեոնն ատում էր կանանց, որովհետև վախենում էր ծաղրանքից, որի մեջ նրանք այնպե՞ս վարպետ են. մի հրավերքճաշկերույթում հանդիպելով տիկին դը Ստալին, որին, եթե ցանկանար, կարող էր հեշտությամբ իր կողմը գրավել, նա կոպտորեն հայտարարեց, որ իրեն դուր են գալիս միայն այն կանայք, որոնք զբաղվում են իրենց երեխաներով։ Ասում են, որ իբր նա ցանկացել է տիրանալ և իր սպասավոր Կանստանի[1] միջոցով իրոք տիրացել է իր արքունիքի գրեթե բոլոր կանանց։ Այդ կանացից մեկը, որը նոր էր ամուսնացել, Տյուիլրիում հայտնվելու երկրորդ օրն իր ընկերուհիներին ասել էր. «Աստվա՞ծ իմ, չեմ հասկանում, թե կայսրն ինչ է ուզում ինձանից, ես հրավեր եմ ստացել ժամը ութի կողմերը ներկայանալ նրա առանձնասենյակը»։ Երբ հաջորդ օրը տիկինները նրան հարցրին, թե տեսա՞վ արդյոք կայսրին, նա խիստ կարմրատակեց։

Կայսրը մի փոքրիկ սեղանի մոտ նստած, սուրը կապած, դեկրետներ է ստորագրում։ Ներս է մտնում մի տիկին. առանց տեղից վեր կենալու, կայսրը նրան առաջարկում է պառկել անկողնում։ Դրանից շատ չանցած, նա մոմակալը ձեռքին ուղեկցում է տիկնոջը և նորից նստում դեկրետներ կարդալու, ուղղելու, ստորագրելու։ Ժամադրության մեջ ամենաէականը երեք րոպեից ավելի չէր տևում։ Հաճախ նրա մամլուքն այդտեղ՝ վարագույրի ետևում էր լինում[2]։ Մադմուազել Ժորժի* հետ նա տասնվեց այդպիսի ժամադրություն է ունեցել, և դրանցից մեկի ժամանակ նրան բանկային տոմսերի մի փաթեթ է տվել։ Դրանք

---

1 Նույնությամբ թարգմանված է Գոլդսմիտի ստեղծագործություններից։

2 Այդ մամլուքը և Կոնստանը, որոնք իրենց տիրակալից ստանում էին տարեկան քսան հազար լիվր ռենտա, մեծագույն ապերախտություն դրսևորեցին. նույնիսկ նրա հետից լքեցին էլբա կղզի։ Նրանք այժմ կատարյալ վայելչության մեջ ապրում են Փարիզում։

ինտունվեց հատ էին։ Այդ բոլոր գործերը վարում էր սպասավոր Կոնստանը։ Երբեմն Նապոլեոնը տիկնոջն առաջարկում էր հանել շապիկը և, առանց տեղից շարժվելու, նրան ճամփու դնում։

Կայսեր նման վարմունքը զայրացնում էր Փարիզի կանանց։ Երկու-երեք բոպեից հետո, հաճախ նույնիսկ սուրը վրայից շարձակելով, նրանց ճամփու դնելու նրա վարվելաձևը և նորից իր դեկրետներով զբաղվելն անտանելի էր թվում։ Նա դրանով ընդգծում էր իր արհամարհանքը նրանց նկատմամբ։ Եթե որևէ մեկին թեկուզ մի քիչ տարբերեր այնպես, որ կարելի լիներ նրան կայսեր սիրուհին համարել, և հրամցներ նրան երկու պրեֆեկտություն, կապիտանի կոչման բան դիպլոմ և աուդիտորի տասը պաշտոն, որոնք այդ սիրուհին կարողանար տնօրինել ըստ իր հայեցողության, բոլորը միաձայն կհայտարարեին, որ նա Լյուդովիկոս XIV-ից սիրալիր է։ Նրա համար ի՞նչ մի դժվար բան էր դա անել։ Մի՞թե նա չգիտեր, որ իր մինիստրների միջնորդությամբ ինքը երբեմն նշանակումներ է տվել մարդկանց, որոնց հովանավորում էին նրանց սիրուհիները։

Նա իր թուլությունը դրսևորելու վախի զոհն էր։ Իսկ չէ որ այստեղ բանը ճիշտ այնպես էր, ինչպես կրոնի հարցում։ Մի՞թե փորձված քաղաքագետը պետք է թուլություն համարեր այն, ինչը դեպի իրեն կգրավեր բոլոր կանանց։ Նրանք այդպես հիացական չէին թափահարի թաշկինակները Բուրբոնների վերադարձի ժամանակ։

Բայց նա ատում էր նրանց, իսկ վախը դատողություններ չի անում։ Նրա մինիստրներից մեկի կինը մեղանչել էր միայն մի անգամ. կայսրը դժգոհություն ունեցավ այդ մասին ասել ամուսնուն։ Խեղճ մարդը, որը պաշտում էր կնոջը, ուշաթափ եղավ։ «Եվ դուք, Մարե, երևակայում եք, թե եղջերակի՞ր չեք։ Ձեր կինն անցյալ շորեքշաբթի ձեզ դավաճանել է գեներալ Պիրի հետ...»։

Չի կարելի ավելի զոհեհիկ, թերևս, ավելի հիմար բան երևակայել, քան այն հարցերը, որ նա տալիս էր կանանց Փարիզի քաղաքապետարանի պարահանդեսներում։ Այդ հմայիչ մարդը մոայլ ու ձանձրալի տոնով հարցնում էր. «Ձեր անունն ի՞նչ է։ Ի՞նչ է անում ձեր ամուսինը։ Քանի՞ երեխա ունեք»։ Երբ ցանկանում էր հատուկ ուշադրություն նվիրել տիկնոջը, նրան տալիս էր նաև չորրորդ հարցը. «Քանի՞ որդի ունեք»։

Արքունիքում մուտք ունեցող տիկինների համար դերազույն

ողորմածություն էր համարվում մտերմիկ ընդունելության հրավերը կայսրուհու մոտ։ Իշխան Շվարցենբերգի պալատում տեղի ունեցած հրդեհից հետո կայսրը ցանկացավ շնորհներ անել մի քանի տիկնանց, որոնք փայլուն պարահանդեսում հանկարծակի ծագած այդ մեծ վտանգի պահին ոգու արիություն էին դրսևորել։

Սեն-Կլուում նշանակված ընդունելությունն սկսվեց ժամը ութին։ Բացի կայսրից ու կայսրուհուց, ներկա էին յոթ տիկիններ ու պարոնայք՝ դը Սեգյուրը*, դը Մոնտեսքյուն և դը Բոհառնեն։ Մի բավականին նեղ սենյակում պալատական պճնազարդ յոթ տիկիններ նստել էին պատերի երկայնքով, իսկ կայսրը փոքրիկ սեղանի մոտ նստած աչքի էր անցկացնում թղթերը։ Տասնհինգ րոպեանոց խոր լռությունից հետո նա վեր կացավ ու հայտարարեց. «Ես հոգնել եմ աշխատելուց, կանչեք Կոստային, ես կնայեմ պալատների հատակագծերը»։

Բարոն Կոստան՝ արտակարգ գոռոզ դեմքով մի մարդ, ներկայանում է հատակագծերի սև փաթեթը թևատակին։ Կայսրը ցանկանում է իմանալ, թե հաջորդ տարի ինչպիսի ծախսեր են ենթադրվում Ֆոնտենբլոյում, որտեղ հինգ տարում պետք է ավարտվեն բոլոր կառուցումները։ Նա սկսում է անձամբ ծանոթանալ նախահաշվին՝ ժամանակ առ ժամանակ ընդհատելով, որպեսզի դիտողություններ անի պ-ն Կոստային։ Վերջինիս արած հաշիվներն ինչ-որ լճակի լցման համար պահանջվող հողի քանակի վերաբերյալ նրան ճիշտ չեն թվում. նա ինքն է սկսում հաշվարկներ անել զեկուցագրի լուսանցքներում։ Մոռանալով թվերի վրա ավազ ցանել, դրանք ջնջում է և ձեռքերը կեղտոտում։ Նա սխալվում է հաշվարկներում. պ-ն Կոստան անգիր է ասում թվերը։ Այդ ընթացքում երկու թե երեք անգամ դիմում է կայսրուհուն. «Իսկ ինչո՞ւ տիկնայք անընդհատ լռում են»։ Այդ ժամանակ հրավիրվածները շշուկով, երկու-երեք խոսքով իրենց հիացմունքն են արտահայտում նորին մեծության համակողմանի շնորհների նկատմամբ։ Ապա նորից մեռելային լռություն է տիրում։ Անցնում է ևս երեք քառորդ ժամ. կայսրը նորից է դիմում կայսրուհուն. «Տիկնայք անընդհատ լռում են։ Բարեկամս, կարգադրիր թող լոտո բերեն»։ Զանգահարում են. բերում են լոտո. կայսրը շարունակում է իր հաշվարկումները։ Նա կարգադրում է թուղթ տալ իրեն և ամեն ինչ նորից է հաշվարկում։ Ժամանակ

ա՛ռ ժամանակ նա իր շտապողականության պատճառով սխալ է անում ու ջղայնանում։ Այդ տհաճ պահերին լոտոյի թվեր հայտարարողն ավելի է իջեցնում ձայնը. նա գրեթե անաղմուկ շարժում է շրթունքները։ Նրան շրջապատող տիկնայք հազիվ են կռահում այն թվերը, որ հայտարարում է։ Վերջապես խփում է ժամը տասը, լոտոյի տխուր խաղը դադարեցվում է։ Երեկոն ավարտված է։ Առաջներում, Փարիզ վերադառնալով, մարդիկ ամենուր կպատմեին Սեն-Կլուի ընդունելության մասին։ Այժմ դա արդեն բավական չէ. արքունիք ստեղծելը հեշտ գործ չի։

Կայսրի բախտը չտեսնված բերեց. երջանիկ աստղը նրան հանդիպեցրեց մի մարդու հետ, որն ասես ստեղծված էր արքունիք գլխավորելու համար։ Դա կոմս դը Նարբոնն* էր Լյուդովիկոս XV-ի խորթ որդիներից մեկը[1]։ Նա ուզում էր կոմսին նշանակել կայսրուհի Մարի-Լուիզի հոֆմեյստեր, բայց կայսրուհին, որքան էլ զարմանալի է, արիություն ունեցավ ընդդիմանալ այդ որոշմանը։ «Ես պատճառներ չունեմ զժգոհելու իմ այժմյան հոֆմեյստեր կոմս դը Բոհառնեից»։ «Բայց չէ որ նա հիմարի մեկն է»։ «Այդ մասին Ձերդ մեծությունը պետք է մտածեր նրա նշանակման ժամանակ։ Բայց քանի որ նա արդեն իմ շքախմբում է, անհնար է առանց որևէ հիմքի, իսկ հատկապես՝ առանց իմ համաձայնության, ազատել նրան»։

Կայսրը չկռահեց կոմս դը Նարբոնին ասել. «Ահա ձեզ հինգ միլիոն մեկ տարվա համար և անսահմանափակ լիազորություններ բոլոր այդ մանր-մունր բաների համար. ստեղծեք ինձ հաճելի արքունիք»։ Այդ հմայիչ մարդու լոկ ներկայությունը բավական կլիներ։ Հարկավոր էր, որ կայսրը կոմսին գոնե հանձնարարեր աշխարհիկ սիրալիր արտահայտությունների մի որոշ պաշար պատրաստել իր համար։ Ոստիկանության մինիստրը չէր հապաղի դրանցից յուրաքանչյուրը կատարելության գագաթնակետ հայտարարել։ Դրա փոխարեն կայսրը ասես գիտավորյալ արքունիք կազմեց ամենաձանձրալի մարդկանցից։ Նեղատելի իշխանը՝ ավագ շտալմեյստերն ամենևին չէր նպաստում հասարակության աշխուժացմանը,

[1] Այն նույն կոմս դը Նարբոնը, որը հեղափոխության սկզբում լինելով ռազմական մինիստր, պատերազմ հայտարարեց բոլոր տերություններին և իր զինվորական շրջագայությունները կատարում էր տիկին դը Ստալի ուղեկցությամբ։

որտեղ ինքը գրեթե միշտ մռայլ տեսք ուներ։ Պ-ն դը Սեգյուրը ժամանակին շատ սիրալիր մարդ էր[1], ինչ բնավ չի կարելի ասել պարոնայք դը Մոնտեսքյուի, դը Բոհառնեի, դը Տյուրենների և նույնիսկ խեղճ Դյուրոկի մասին, որը, ըստ լուրերի, կայսեր հետ «դու»-ով էր խոսում, երբ նրանք մենակ էին մնում։ Չի կարելի ավելի դժգույն բան պատկերացնել, քան բոլոր այդ շտալմեյստերների և սենեկապետների հավաքույթը։ Ինչ վերաբերում է վերջիններիս, ապա պալատական ընդունարաններում դրանց թիվը տասներկուսից չէր անցնում. բացի դրանից, միշտ միևնույն կազմն էր, և նրանց մեջ չկար որևէ մեկը, որն ընդունակ լիներ ցրելու արքունիքում տիրող ձանձրույթը։ Ես հակված եմ մտածելու, որ կայսրը, որը բոլորովին չէր կարողանում զրաղեցնել հասարակությանը, չէր սիրում այդ ձիրքով օժտված մարդկանց, ձիրք, որն այնպես անհրաժեշտ է արքունիքում, եթե ուզում են, որ արքունիքը մրցակցի բուրժուազիայի հետ։ Սեն-Կլուում բոլոր պալատականները շատ օրինավոր մարդիկ էին։ Փառասիրությունից տառապող այդ արքունիքում բոլորովին չկար մանր ստորություն, բայց դրա փոխարեն այնտեղ ճնշող ձանձրույթ էր տիրում։ Կայսրը ոչ մի րոպե չէր դադարում հանճար լինելուց։ Իր բնավորությամբ նա զվարճանալու անընդունակ էր։ Թատրոնում կա՛մ ձանձրանում էր, կա՛մ էլ այն աստիճան հրապուրվում, որ հետևում էր ներկայացմանը և դրա հաճույքը վայելում այնպիսի լարված ուշադրությամբ, ինչպես որ աշխատում էր։ Այսպես, օրինակ, լսելով «Ռոմեո և Ջուլիետը» ու «Ombra adorata aspetta» մեներգը Կրեշենտինիի կատարմամբ, նա հիացմունքից խենթացավ, իսկ ուշքի գալով, անմիջապես երկաթե թագի շքանշան ուղարկեց երգչին։ Նույն բանն է տեղի ունեցել նրա հետ, երբ դիտում էր Տալմային Կոռնելի պիեսներում, կա՛մ կարդում Օսիանին, կա՛մ էլ երբ նրա կարգադրությամբ արքայադուստր Պոլինի ու թագուհի Հորտենզիայի մոտ տեղի

[1] Միապետը նրան հանձնարարեց մշակել կայսերական արքունիքի հանդիսակարգը (396 էջանոց մեծածավալ մի հատոր՝ հրատարակված 1803 թվականին Գալանի կողմից) և Ակադեմիայում հաշվեհարգար տեսնել փիլիսոփայության հետ՝ կոմս Տրասիի* Ակադեմիայի անդամ ընտրվելու օրը։ Զվարճալի էր լսել, թե ինչպիսի վերամբարձ արտահայտություններով էր ավագ սենեկապետը գատափետում խեղճ փիլիսոփայությունը։ 1817 թվականին, առանց պաշտոնի մնալով, ավագ սենեկապետը հարեց լիբերալներին։

ունեցող երեկույթներում հին կադրիլներ էին նվագում, և նա սկսում էր ոգևորությամբ պարել։ Նա երբեք սառնասրտություն չէր ունենում, որն անհրաժեշտ էր սիրալիր լինելու համար. մի խոսքով, Նապոլեոնը չէր կարող Լյուդովիկոս XV լինել։

Քանի որ արվեստները հեղափոխության ժամանակ և կեղծ քաղաքավարության անկման պահից ի վեր հսկայական հաջողությունների էին հասել, իսկ կայսրը հիանալի ճաշակ ուներ և պահանջում էր, որ այն բոլոր փողերը, որ ինքն առատորեն բաժանում էր իբրև ոճիկ ու պարգև, ծախսվեին՝ Տյուիլրիի ու Սեն-Կլուի տոնախմբությունները սքանչելի էին։ Միայն զվարճանալու ընդունակ մարդիկ էին պակասում։ Հնարավորություն չկար իրեն անկաշկանդ պահելու, զվարճության տրվելու. ոմանց տանջում էր փառասիրությունը, մյուսներին՝ վախը, երրորդներին հուզում էր հաջողության հույսը։ Լյուդովիկոս XV-ի ժամանակներում պալատականի կարիերան կանխորոշված էր, միայն արտակարգ հանգամանքներն էին կարող որևէ բան փոխել դրանում։ Բասանի սիրունիկ դքսուհին պարահանդեսներ էր տալիս, որոնք մեծ հաջողություն ունեին։ Առաջին երկուսը հաճելի էին, երրորդը՝ սքանչելի։ Կայսրը դքսուհուն տեսնելով Սեն-Կլուում, նրան հայտարարում է, որ մինիստրին վայել չէ հյուրեր ընդունել ֆրակով, և վերջիվերջո նրան լացացնում է։

Ըստ երևույթին բարձրաստիճան պաշտոնյաների մոտ բարձր հասարակությունը կարող էր հավաքվել միայն այնքանով, որքանով որ այն զսպվածության, բռնազբոսիկության ու ձանձրույթի վիճակում էր։ Ոխերիմ թշնամիները հանդիպում էին միմյանց։ Մտերմիկ խմբակներ գոյություն չունեին։

Պալատականների ստորությունը չէր արտահայտվում սիրալիրություններով, ինչպես Լյուդովիկոս XV-ի օրոք էր։

Սենատի կանցլեր կոմս Լապլասը կռիվ է սարքում կնոջ հետ, որովհետև նա բավականաչափ գեղեցիկ չի հագնված կայսրուհու ընդունելություններում։ Խեղճը, որը շատ պշրաբարո կին էր, գնում է սքանչելի մի շրջազգեստ, այնքան սքանչելի, որ, դժբախտաբար, գրավում է կայսեր ուշադրությունը, որը, սրահ մտնելով, անմիջապես մոտենում է նրան և երկու հարյուր մարդու ներկայությամբ ասում. «Ինչպե՞ս եք հագնված, տիկին Լապլաս։ Չէ՞ որ դուք արդեն պառավ եք։ Նման զգեստները շահել

կանանց են հարմար. ձեր տարիքին դրանք արդեն անպատշաճ են»։

Դժբախտաբար, տիկին Լապլասը, որը հայտնի էր իր հավակնություններով, հենց այն դժվարին պահն էր ապրում, երբ գեղեցիկ կինը հարկ է որ ինքն իրեն խոստովանի, որ արդեն ջահել չէ։ Խեղճը տուն վերադարձավ միանգամայն հուսահատ։ Այդ արարքն այնքան դաժան էր, որ տիկին Լապլասի նկատմամբ բարեկամաբար տրամադրված սենատորները, թեև իրենք չէին էլ շոշափում այդ հիվանդագին հարցը, սակայն, եթե տիկին Լապլասն այդ մասին խոսեր իրենց հետ, պատրաստ էին ընդունելու, որ միապետն անիրավացի է։ Բայց պ-ն Լապլասը բարձրաձայն ասաց կնոջը. «Դա ի՞նչ անհեթեթ մտահղացում է, տիրուհի՛ս՝ հագնվել ջահել աղջկա պես։ Դուք ոչ մի կերպ չեք ուզում հաշտվել այն մտքի հետ, որ պառավում եք։ Իսկ չէ՞ որ դուք արդեն երիտասարդ չեք։ Կայսրն իրավացի է...»։ Մի ամբողջ շարաթ բոլորը պալատականի համար բնորոշ այդ խոսքերի մասին էին խոսում միայն։ Հարկավոր է խոստովանել, որ դրանցում քիչ վեհանձնություն կար, և որ այդ ամբողջ պատմությունը պատիվ չի բերում ո՛չ տիրոջը, ո՛չ էլ ծառային։

ԳԼՈՒԽ LIII

ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Այն նշանակումները, որ իր մշտական զորատեսերի ժամանակ անում էր Նապոլեոնը՝ զրուցելով զինվորների հետ և, հաշվի առնելով գնդի կարծիքը, շատ հաջող էին. Նեշատելի իշխանի կատարած նշանակումները բանի պետք չէին[1]։ Խելքը, իսկ առա-

1 Նեշատելի իշխանն օժտված էր օրինավոր մարդուն հատուկ բնորոշական բոլոր արժանիքներով, բայց նրա ընդունակությունների նկատմամբ կարելի էր կասկածել։

Ձեռագրի վերջում կա հետևյալ դատողությունը.

Նեշատելի իշխանը, որը Վերսալում հաջորդաբար գրաղեցրել է պալատական մի շարք ստորին պաշտոններ, մի մարդու որդի, որն իր աշխարհագրական աշխատություններով արժանացել է Լյուդովիկոս XV-ի համակրանքին, երբեք չի զգացել այն հիացմունքը հանրապետության հանդեպ, որով երիտասարդության ժամանակ տոչորվել է մեր գեներալների մեծամասնությունը։ Դա այն դասակարգության ամփոփ արդյունքն էր, որ տրվում էր Լյուդովիկոս XVI-ի

վել նա հայրենիքի հանդեպ ունեցած բուռն սիրո նվազագույն նշանները բավական էին, որպեսզի մարդուն շարունակ շրջանցեին առաջքաշման ժամանակ։ Ակնհայտ է, սակայն, որ հիմարությունն անհրաժեշտ էր համարվում միայն գվարդիայի սպաների համար, որոնցից ամենից առաջ լիակատար անվրդովություն էր պահանջվում այն ամենի մեջ, ինչ քաղաքականությանն է վերաբերում։ Նրանք պետք է Մահմեդի կամքի կույր գործիքը լիներին։

Հասարակական կարծիքը ցանկալի էր համարում գլխավոր շտաբի պետին փոխարինել Դալմացիայի դքսով կամ կոմս Լորաուսով։ Նրանցից յուրաքանչյուրի նշանակումը Նեշատելի իշխանին ավելի մեծ բավականություն կպատճառեր, քան անձամբ իրենց։ Այս պաշտոնի հետ կապված շարշարանքներն անասելի հոգնեցնում էին նրան. նա ամբողջ օրերով նստում էր՝ ոտքերը գրասեղանին դնելով, բազկաթոռի մեջ փռվելով, և փոխանակ կարգադրություններ անելու, իրեն ուղղված բոլոր հարցերին շվշվոցով էր պատասխանում։

Իրենց հատկություններով ֆրանսիական բանակում հոյակապ են ենթասպաներն ու զինվորները։ Քանի որ զինվորական ծառայության համար փոխարինող կարելի էր գտնել միայն մեծ գումարով, ապա մանր բուրժուազիայի բոլոր զավակները կամաակամա զինվոր էին դառնում, իսկ ռազմական դպրոցներում սովորելու շնորհիվ նրանք կարդում էին «էմիլը» և Հուլիոս Կեսարի «Նոթեր գաղիական պատերազմի մասին» գիրքը։ Չկար մի ենթալեյտենանտ, որը համոզված չլիներ, թե բավական է որ արիաբար մարտնչի ու պատահական արկի տակ չընկնի՝ Կայսրության մարշալ կդառնա։ Այդ երջանիկ պատրանքը պահպանվում էր մինչև բրիգադային գեներալի աստիճանի արժանանալը։ Այդ ժամանակ փոխկոնետաբլի նախասենյակում զինվորականների համար պարզ էր դառնում, որ հաջողության կարելի է հասնել (եթե առիթ չներկայանա սխրագործություն կատարելու մեծ մարդու աչքի առջև) միայն բանսարկությունների միջոցով։ Գլխավոր շտաբի պետն իրեն շրջապատեց արքունիքի նմանակով, որպեսզի ընդգծի իր գերազանցությունն այն մարշալների նկատմամբ, որոնք (ինքն այդ գիտակցում էր) իրենից տաղանդավոր էին։ Իր պաշտոնով Նեշատելի իշխանը տնօրինում էր առաջքաշումները հայրենիքի սահմաններից դուրս գտնվող բոլոր զորքերում. ռազմական մինիստրից կախված էր միայն նրա՛նց առաջքաշումը, ովքեր ծառայում էին Ֆրանսիայի ներսում, որտեղ, որպես ընդհանուր կանոն, աստիճանի բարձրացումը տրվում էր միայն մարտական ծառայությունների համար։ Մի անգամ Մինիստրների խորհրդի նիստում ներքին գործերի մինիստր պատվարժան գեներալ Դեժանը, գեներալ Գասսենդին և ուրիշներ միաձայն սկսեցին նորին մեծությանը թախանձագին խնդրել գումարտակի հրամանատար նշանակել հրետանու մի կապիտանի, որը մեծ վաստակ էր ունեցել երկրի ներսում ծառայելիս։ Ռազմական մինիստրը հիշեցրեց, որ վերջին չորս տարում կայսրն այդ սպայի աղգանունը երեք անգամ ջնջել է առաջքաշումների վերաբերյալ դեկրետներից։ Դեն Նեշատելով պաշտոնականությունը, բոլորը հորդորում էին կայսրին։ «Ո՛չ, պարոնայք, ես երբեք չեմ համաձայնվի առաջ քաշել մի մարդու, որն այդքան տասը տարի է, ինչ չի եղել մարտում։ Բայց բոլորին հայտնի է, որ իմ ռազմական մինիստրը կարողանում է խորամանկությամբ ստանալ իմ ստորագրությունը»։ Հաջորդ օրը կայսրը, առանց կարդալու, ստորագրեց այդ արժանավոր մարդուն գումարտակի հրամանատար նշանակելու դեկրետը։

Պատերազմում կայսրը այս կամ այն դիվիզիայի հաղթանակից կամ պարզապես հաջող գործողությունից հետո միշտ զորատես էր կազմակերպում։ Գնդապետի ուղեկցությամբ շրջանցելով շարքերը և զրուցելով որևէ բանով աչքի ընկած բոլոր զինվորների

արքունիքում. շատ օրինավոր մարդ էր, ասում էր այն ամենը, ինչ վեհանձնության կամ վեհության կնիք էր կրում։ Բոլոր զինվորականներից նա ամենից քիչ էր ընդունակ ըմբռնելու Նապոլեոնի իսկական հռոմեական ոգին. ահա թե ինչու նա թեպետև պալատականի իր վարքագծով զուր էր գալիս բանակային, սակայն մեծ մարդուն շարունակ ջղայնացնում էր հին վարչակարգի ոգով համակված իր հայացքներով։ Դառնալով գլխավոր շտաբի պետ և իշխան, նա երբեք մտածում էր, թե քաղաքավարական ինչպիսի արտահայտությամբ ինքը պետք է ավարտի իր նամակները։ Հայտնի է, որ նրան մտերիմ շողոքորթները մանրազնին, որոնումներ էին կատարում Ազգային գրադարանում. բայց առաջարկություններից ոչ մեկը նրան ընդունելի չթվաց. վերջիվերջո նա որոշեց իր նամակներն ավարտել առանց քաղաքավարության որևէ արտահայտության և գրանք պարզապես ստորագրել իր իշխանական Ալեքսանդր անունով։ Ասենք, մանավոր կյանքում նա բոլոր առաքինություններն ուներ. ողորմելի էր լոկ որպես կառավարիչ ու զորավար։ Չնայած որոշ կոպտությանը, նա հաճելի էր հասարակության մեջ։

հետ, նա հրամայում էր հավաք ազդարարել. սպաները խմբովին շրջապատում էին նրան։ Եթե հեծելավաշտային հրամանատարներից որևէ մեկը սպանվել էր մարտում, նա բարձրաձայն հարցնում էր. «Ո՞վ է ամենաքաջ կապիտանը»։ Հաղթանակով և մեծ զորավարի ներկայությամբ բորբոքված խանդավառության եռուն պահին մարդիկ շիտակ էին խոսում, և նրանց պատասխաններն անկեղծ էին։ Եթե ամենաքաջ կապիտանն օժտված չէր հեծելավաշտային հրամանատարի համար անհրաժեշտ ընդունակություններով, նրա աստիճանը բարձրացնում էին՝ ըստ իր ստացած Պատվո լեգիոնի շքանշանի, իսկ այնուհետև կայսրը նույն հարցն էր տալիս. «Ներանից հետո ո՞վ է ամենաքաջը»։ Նեշատելի իշխանը մատիտով նշում էր պարգևատրումները, և հենց որ կայսրն ուղևորվում էր մի այլ գունդ, այն գնդի հրամանատարը, որտեղ նա արդեն եղել էր, հաստատում էր սպաների նոր պաշտոնները։

Այդ պահերին ես հաճախ եմ առիթ ունեցել տեսնելու, թե ինչպես էին զինվորներն արտասվում մեծ մարդու հանդեպ տածած սիրուց։ Հաղթանակ տանելով, այդ զարմանալի զորավարը հրամայում էր անհապաղ կազմել երեսուն-քառասուն մարդու ցուցակ՝ Պատվո լեգիոնի շքանշանով պարգևատրելու կամ պաշտոնը բարձրացնելու համար։ Հաճախ մարտադաշտում կազմված, մատիտով խզմզված, գրեթե միշտ անձամբ Նապոլեոնի կողմից ստորագրված և, հետևաբար, մինչև օրս էլ պետական արխիվներում պահվող այդ ցուցակները նրա մահից հետո երբևիցե հուզիչ պատմական փաստաթուղթ կհանդիսանան։ Այն շատ բացառիկ դեպքերում, երբ գեներալը գլխի չէր ընկնում ցուցակ կազմելու, կայսրը կոպտորեն հայտարարում էր. «Ես այսինչ գնդին շնորհում եմ Պատվո լեգիոնի տասը սպայական և տասը զինվորական խաչ»։ Պարգևատրման նման եղանակը անհամատեղելի է փառքի հետ։

Երբ նա այցելում էր հոսպիտալները, անդամահատված և մահամերձ սպաները, որոնց գլխավերևներում գնդասեղներով ամրացված էին Պատվո լեգիոնի կարմիր խաչերը, երբեմն հանդրգնում էին խնդրել իրենց պարգևատրելու երկաթե թագի շքանշանով։ Սակայն միշտ չէ, որ նա շավարարում էր նման խնդրանքները. դա զինվորական բարձրագույն պարգևն էր։

Արիության պաշտամունքը, իրադարձությունների անակնկալությունը, փառքի ամենակուլ հակումը, որը մարդկանց ստիպում էր պարգևատրումից քառորդ ժամ հետո ուրախությամբ գնալ մահվան ընդառաջ՝ այս ամենը զինվորականներին հեռու էր պահում բանսարկություններից։

ԳԼՈՒԽ LIV

ԴԱՐՁՅԱԼ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Աստիճանաբար բանակի ոգին փոխվում էր. անողոք, հանրապետական, հերոսական բանակից, ինչպիսին Մարենգոյում էր, այն ավելի եսապաշտական ու միապետական էր դառնում։ Ինչքան համազգեստի զարդարանքն ավելի ճոխ էր դառնում, ինչքան ավելանում էին շքանշանները, այնքան դրանց տակ բաբախող սրտերն անդիանում էին։ Գեներալներից նրանք, ովքեր խանդավառությամբ էին նվիրվել ռազմական գործին (օրինակ՝ գեներալ Դեզեն), հեռացվել էին բանակից կամ էլ երկրորդ պլան մղվել։ Հաղթանակեցին բանսարկուները, և կայսրը չէր հանդրգնում զանցանքների համար պատժել նրանց։ Մի գնդապետ, որն ամեն անգամ, երբ իր գունդը զոհի էր գնում, փախուստի էր դիմում, կամ էլ մի որևէ փոսում թաքնվում, բրիգադային գեներալի կոչման արժանացավ և նշանակում ստացավ Ֆրանսիայի ներքին զորքերում։ Ռուսական արշավանքն սկսելիս բանակն արդեն այն աստիճան էր երեսպաշտությամբ համակվել ու այլասերվել, որ պատրաստ էր պայմաններ դնել իր զորավարի առջև[1]։

Բացի դրանից, գլխավոր շտաբի պետի ապաշնորհությունը[2], գվարդիայի լկտիությունը, որին ամեն ինչում նախապատվություն էր տրվում[3] և որը վաղուց արդեն, անձեռնմխելի ռեզերվի իրավունքով, չէր մասնակցում մարտերին, Նապոլեոնին երես թեքել տվեցին բազմաթիվ սրտերի։ Զինվորական արիությունը բոլորովին չէր նվազել (անափառությունից ալեկոծ ժողովրդից ծնված զինվորը միշտ պատրաստ կլինի հազար անգամ կյանքը վտանգելու ողջ

1 «Պայմաններ դնելը»-ը ինձ ճշգրիտ չի թվում. հնարավոր է, որ ես մոռացել եմ, թե ինչպես է եղել։

2 Զգո՞ւշ. «ապաշնորհության» փոխարեն՝ «սխալներ»։

3 Մոսկվայում մոտավորապես հոկտեմբերի 10-ին հրապարակված հրամանը բանակի այն ենթաստանների ու զինվորների վերաբերյալ, որոնք անկարող էին օրական տասը լյո քայլել։

վաշտի ամենաքաջ զինվորի անուն հանելու համար), բայց, կորցնելով հնազանդվելու սովորությունը, զինվորները դադարել էին ողջամիտ լինելուց և աննպատակ վատնում էին իրենց ֆիզիկական ուժերը, որոնց հետ, բնականաբար, մեռնում էր և քաջությունը։

Ինձ մտերիմ մի գնդապետ Ռուսաստանի ճանապարհին պատմեց, որ երեք տարում իր գնդով երեսունվեց հազար մարդ է անցել։ Կրթվածությունը, կարգապահությունը, տոկունությունը, հնազանդվելու պատրաստակամությունը տարեցտարի պակասում էին։ Որոշ մարշալներ, ինչպես, օրինակ, Դավուն կամ Սյուշեն*, գեռ իշխանություն ունեին իրենց կորպուսների վրա, բայց մեծամասնությունը, կարծես, ինքն էր անկարգություն տարածում։ Բանակը կորցրել էր համախմբվածությունը։ Այստեղից էլ՝ այն հաղթանակները, որ կազակները՝ այդ վատ զինված գյուղացիները, տանում էին ամբողջ աշխարհի ամենաքաջ բանակի դեմ։ Ես տեսել եմ, թե ինչպես քսաներկու կազակներ, որոնցից ամենաավագը, որ երկրորդ տարին էր ծառայում, ընդամենը քսան տարեկան կլիներ, կազմալուծել ու փախուստի են մատնել հինգ հարյուր ֆրանսիացուց բաղկացած պահակային ջոկատը։ Դա տեղի է ունեցել 1813 թվականին, Սաքսոնական արշավանքի ժամանակ[1]։ Այդ կազակներն անզոր կլինեին Մարենգոյի ժամանակվա հանրապետական բանակի դեմ։ Իսկ քանի որ նման բանակ այլևս չի լինի, ապա կազակներին տնօրինող միապետը կտնօրինի ամբողջ աշխարհը[2]։

ԳԼՈՒԽ LV

Ռուսաստանի դեմ պատերազմելու միտքը, որ իրականացրեց կայսրը, Ֆրանսիայում ժողովրդականություն էր վայելում այն ժամանակից ի վեր, երբ Լյուդովիկոս XV-ը իր կամազրկությամբ թույլ տվեց Լեհաստանի մասնատումը։ Քանի որ Ֆրանսիան,

1 Գյոլիցի մոտ, այն տեղից մի քանի բալլ հեռավորության վրա, որտեղ հենց նոր էր մահացել Ֆրիուլի դուքսը։

2 Տե՛ս պ-ն Կազ-Գասսիկուրի՝ «Ուղևորություն դեպի Վիեննա 1809 թվականին» գիրքը։ Նա ժախու գրչակ չէ։

Սույն գլուխը Գնասկան խորհրդի և արքունիքի վերաբերյալ գլուխները կապում է իրադարձությունների ընթացքին։

որտեղ բնակչության թիվը չէր փոխվում, տեղավորված է այն պետությունների կենտրոնում, որոնց բնակչությունն ավելանում էր, ապա նա վաղ թե ուշ պետք է կա՛մ նորից առաջին տեղում հաստատվեր, կա՛մ էլ ետ քաշվեր երկրորդական տեղ։ Բոլոր միապետներին հարկավոր էր հաջող պատերազմել Ռուսաստանի դեմ՝ նրան Միջին Եվրոպա ներխուժելու* հնարավորությունից զրկելու համար։ Մի՞թե բնական չէր այդ նպատակի համար օգտվել այն պահից, երբ Ֆրանսիան կառավարում էր մեծ զորավարը, որն իր արվեստով փոխհատուցում էր այդ երկրի դիրքի խիստ ակնառու անբարենպաստությունը։

Բացի ընդհանուր կարգի այդ պատճառներից, 1812 թվականի պատերազմը Տիլզիտի հաշտության բնական հետևանքն էր, և արդարությունը Նապոլեոնի կողմն էր։ Ռուսաստանը, որը խոսք էր տվել բաց չթողնել անգլիական ապրանքները, չկարողացավ կատարել իր պարտավորությունը։ Նապոլեոնը զինվեց, որպեսզի պատժի Ռուսաստանին այն պայմանագրի խախտման համար, որին նա պարտական էր իր գոյությամբ, քանի որ Տիլզիտում Նապոլեոնը հնարավորություն ուներ ջախջախելու նրան։ Այսուհետև թագավորները կիմանան, որ երբեք պետք չէ խնայել պարտված միապետին։

ԳԼՈՒԽ LVI

Հարյուր տարուց քիչ առաջ այն վայրը, որտեղ կառուցված է մայրաքաղաքներից գեղեցկագույնը՝ Պետերբուրգը, ամայի ճահիճ է եղել, իսկ շրջակա բոլոր մարզերը գտնվում էին Շվեդիայի՝ այն ժամանակներում Լեհաստանի դաշնակցի ու հարևանի տիրապետության ներքո, մի թագավորության, որն ուներ տասնյոթ միլիոն բնակչություն։ Պետրոս Մեծի ժամանակներից ի վեր Ռուսաստանը հաստատապես հավատում էր, որ 1819 թվականին, եթե միայն դրա համար իր կորովը բավականացնի, ինքը կդառնա Եվրոպայի տիրակալը, և որ իրեն դիմակայելու ընդունակ միակ տերությունը կլինի Ամերիկան։ Ինձ կարող են ասել, որ դա կնշանակեր շատ հեռուն գուշակել. տեսեք, թե ինչպիսի հսկայական հեռավորություն է մեզ բաժանում Տիլզիտի 1807 թվականի հաշտությունից։ Դրա կնքման պահից ի վեր բոլոր զինվորականները կանխագուշակում էին, որ եթե երբևիցե պատերազմ ծագի Ռու-

սաստանի ու Ֆրանսիայի միջև, այն վճռական նշանակություն կունենա այդ երկու պետություններից մեկի համար, և լավագույն հնարավորությունները Ֆրանսիայի կողմը չէին։ Նրա կարծեցյալ գերազանցությունը կախված էր մի մարդու գոյությունից։ Ռուսաստանի ուժերն արագորեն աճում էին և կախված էին բնական պայմաններից։ Բացի դրանից, Ռուսաստանն անառիկ էր։ Ռուսների համար միայն մի արգելք կա, այն է՝ տոթակեզ կլիման։ Երեք տարում նրանք իրենց մոլդավական բանակում հիվանդությունների պատճառով կորցրին երեսունվեց գեներալ և հարյուր քսան հազար զինվոր։

Այդ իսկ պատճառով Նապոլեոնը բոլոր հիմքերն ուներ ձգտելու կասեցնել Ռուսաստանին, քանի դեռ Ֆրանսիայում բացարձակ միապետը մեծ մարդ էր։ Գահի վրա ծնված Հռոմի թագավորն ամենայն հավանականությամբ մեծ մարդ չէր դառնա, իսկ առավել ևս՝ բռնակալ թագավոր։ Վաղ թե ուշ Սենատը և Օրենսդրական կորպուսը որոշ ուժի տեր կդառնային, և կասկած չկար, որ ֆրանսիական կայսեր տիրապետությունը Նապոլեոնի մահից հետո կխորտակվեր և՛ Իտալիայում, և՛ Գերմանիայում։

Ստոկհոլմի և Կոստանդնուպոլսի հետ ունեցած իր կապերի շնորհիվ, Լեհաստանը հուսալի պատվար էր Միջին Եվրոպայի համար։ Ավստրիան և Պրուսիան իրենց հիմարությամբ, իսկ Լյուդովիկոս XV-ը իր ապաշնորհությամբ նպաստեցին իրենց ապագա անվտանգության այդ միակ երաշխիքի կործանմանը։ Նապոլեոնը չէր կարող չձգտել վերականգնելու այդ պատվարը։

Թերևս պատմությունը նրան կդատապարտի այն բանի համար, որ Տիլզիտում նա հաշտություն է կնքել. իհարկե, եթե նա հնարավորություն ուներ այլ կերպ վարվելու, դա մեծ սխալ էր. ռուսական բանակը հյուծված ու թուլացած էր, և Ալեքսանդրն ինքը տեսնում էր այդ բանակի բոլոր թերությունները։

«Ես ժամանակ շահեցի»,— ասաց նա Տիլզիտից հետո, և դեռ երբեք տարկետումն առավել լավ չի օգտագործվել։ Հինգ տարում ռուսական բանակը, որ առանց այն էլ արտակարգ քաջ էր, ձեռք բերեց ֆրանսիականին մի քիչ զիջող կազմակերպվածություն՝ միաժամանակ ունենալով այն հսկայական առավելությունը, որ ռուսական չորս զինվորն իր հայրենիքին ավելի թանկ չէր նստում, քան Ֆրանսիային՝ իր մեկ զինվորը։

Ռուսական ողջ ազնվականությունն այս կամ այն չափով

շահագրգռված է առևտրական օգուտներով, որոնք պահանջում են խաղաղ հարաբերություններ Անգլիայի հետ։ Երբ տիրակալը դիմադրում է ազնվականությանը, վերջինս հեռացնում է նրան. այդ պատճառով էլ Ռուսաստանին նույնքան անհրաժեշտ էր կռվել Ֆրանսիայի դեմ, որքան Ֆրանսիային՝ Ռուսաստանի դեմ։

Եթե պատերազմն անխուսափելի էր, ապա ճի՞շտ է վարվել արդյոք Նապոլեոնը՝ այն հայտարարելով 1812 թվականին։ Նա վախենում էր, որ Ռուսաստանը հաշտություն կկնքի Թուրքիայի հետ, որ անգլիական ազդեցությունը Սանկ-Պետերբուրգի վրա կուժեղանա, և, վերջապես, որ Իսպանիայում ունեցած անհաջողությունները, որոնք արդեն չէր կարելի թաքցնել, իր դաշնակիցներին համարձակություն կտան վերադարձնելու նախկին անկախությունը։

Նրա խորհրդականներից ոմանք փորձում էին ապացուցել, որ խելացի կլինի ևս ութսուն հազար մարդ ուղարկել Իսպանիա և այնտեղ սկսած գործն ավարտել՝ նախքան «հյուսիսային բավուտները ետևվելը» (նրանց բուն արտահայտությունը)։ Նապոլեոնը պատասխանեց, որ ավելի խելացի է համարում անգլիական բանակն Իսպանիայում երկար պահելը։ «Եթե ես նրանց քշեմ այնտեղից, ափ կիջնեն Քյոնիգսբերգում»։

1812 թվականի հունիսի 24-ին Նապոլեոնը, չորս հարյուր հազարանոց բանակի գլուխ անցած, Կովնոյի մոտ անցավ Նեմանը։ Ամբողջ միջին Եվրոպան փորձեց ոչնչացնել իր ապագա տիրակալին։ Արշավանքի սկիզբը նշանավորվեց քաղաքական երկու խոշոր անհաջողությամբ։ Թուրքերը, լինելով նույնքան հիմար, որքան և օրինավոր, Ռուսաստանի հետ հաշտություն կնքեցին, իսկ Շվեդիան՝ լաջորեն գնահատելով իր դրությունը, հանդես եկավ ընդդեմ Ֆրանսիայի։

Մոսկվայի մոտ տեղի ունեցած ճակատամարտերից հետո Նապոլեոնը հնարավորություն ստացավ զորքերը տեղավորել ձմեռային բնակարաններում և վերականգնել Լեհաստանը, որը և պատերազմի բուն նպատակն էր. նա դրան հասավ զրեթե առանց կռվի։ Փառամոլությունից և իր իսպանական անհաջողությունները մեղմելու ցանկությունից դրդված՝ նա որոշեց դրավել Մոսկվան։ Այդ անզգույշ քայլը վնասակար հետևանքներ չէր ունենա, եթե կայսրը Կրեմլում մնար երեք շաբաթից ոչ ավելի,

բայց նրա քաղաքական ձիրքի միջակությունը դրսևորվեց նաև այստեղ. այն պատճառ դարձավ, որ նա կորցնի իր բանակը։

Նապոլեոնը Մոսկվան գրավեց 1812 թվականի սեպտեմբերի 14-ին. հարկ էր, որ նա այնտեղից հեռանար հոկտեմբերի 1-ին*։ Նա դարձավ հաշտություն կնքելու կեղծ հույսի զոհը. եթե նա ժամանակին էվակուացներ Մոսկվան, դրա հերոսական հրկիզումը[1] ծիծաղելի կլիներ։

Հոկտեմբերի 15-ի մոտերքը, թեև հիանալի եղանակ էր և սառնամանիքը երեք աստիճանից չէր անցնում, բոլորի համար պարզ դարձավ, որ հարկավոր է անհապաղ որևէ որոշում ընդունել. հնարավոր էր երեք պլան.

1) նահանջել դեպի Սմոլենսկ, գրավել Դնեպրի գիծը և Լեհաստանին կայուն կարգեր տալ.

2) ձմեռել Մոսկվայում՝ սնվելով մառաններում, նկուղներում հայտնաբերված պաշարներով և զոհաբերելով ձիերը, որոնց միսը կարելի էր աղ դնել, իսկ գարնանը շարժվել դեպի Պետերբուրգ.

3) և, վերջապես, երրորդը՝ օգտվելով այն բանից, որ ռուսական բանակը, սեպտեմբերի 7-ին[2] մեծ կորուստ կրելով, նահանջել էր Մոսկվայից ձախ, թևային շարժումով առաջ շարժվել դեպի աջ և գրավել անպաշտպան Պետերբուրգը, որի բնակիչներն ամենևին էլ ցանկություն չունեին հրկիզել քաղաքը։ Նման իրադրության մեջ հաշտության կնքումն ապահովված կլիներ։ Եթե ֆրանսիական բանակն ունենար այն եռանդը, որը նրան թևավորում էր 1794 թվականին, ընդունված կլիներ հենց այս պլանը, բայց այդ մասին խոսակցությունն անգամ բավական էր, որպեսզի սարսափեցներ մեր հարստացած մարշալներին և պալատական ոլորտներում պտտվող, պերճանքի ընտելացած բրիգադային գեներալներին։

Այդ պլանի անհարմարություններից մեկն այն էր, որ հարկ կլիներ հինգ ամիս շարունակ որոշ չափով մեկուսացած լինել Ֆրանսիայից, մինչդեռ Մալլեի դավադրությունը ցույց տվեց, թե միապետի բացակայության ժամանակ, որն աշխարհը հետևում էր ամեն ինչին, ինչ մարդկանց է վստահած եղել իշխանությունը։ Եթե Սենատը կամ Օրենսդրական կորպուսը թեկուզ որևէ նշանակություն ունենային, պետության ղեկավարի բացակայությունը ճակատագրական չէր լինի։ Մոսկվայից Պետերբուրգ կատարած արշավանքի ժամանակ ձախ թևն ազատ կլիներ, և Նապոլեոնը կկարողանար մի ամբողջ ամիս ամեն օր սուրհանդակներ ուղարկել Փարիզ ու կառավարել Ֆրանսիան։ Ռեգենտուհի նշանակելով Մարի-Լուիզին, քաղաքացիական վարչության պետ՝ Կամբասերեսին, իսկ ռազմական վարչության պետ՝ Էկմյուլի իշխանին, կարելի էր գործը կարգավորել։ Նեյը* կամ Դուվիոն-Սեն-Սիրը* Միտավայում և Ռիգայում կարող էին ամեն ամիս ուղարկել մեկ-երկու սուրհանդակ, և Նապոլեոնն ինքն էլ կարող էր լինել Փարիզում, քանի որ ռուսական բանակը Ռուսաստանում երեք ամիս շարունակ դատապարտված կլիներ անգործության։ Այնտեղի դաժան սառնամանիքների պայմաններում մարդ կարող է ողջ մնալ միայն այն դեպքում, եթե օրական տասը ժամ վառարանի մոտ անցկացնի. ռուսական բանակը Վիլնա է ժամանել ոչ ավելի լավ վիճակում, քան մերը։

Երեք հնարավոր պլանից ընտրեցին վատագույնը. բայց առավել վատն այն էր, որ դա իրականացրին ամենաանմիտ ձևով, որովհետև Նապոլեոնն արդեն այն զորավարը չէր, որը գլխավորում էր բանակը Եգիպտոսում։

Կարգապահությունը բանակում խախտվել էր այն կողոպուտներով, որ ակամա ստիպված եղան գինվորներին թույլատրել Մոսկվայում, քանի որ նրանց պարենամթերք չէին մատակարարում։ Ֆրանսիացիների բնավորության պայմաններում ոչինչ այնքան վտանգավոր չէ, որքան նահանջելը, իսկ վտանգի դեպքում ամենից շատ կարգապահություն, այլ կերպ ասած՝ ուժ է հարկավոր։

Հարկավոր էր մի ընդարձակ կոչով բանակին հայտարարել, որ նրան տանում են Սմոլենսկ, որ քսանհինգ օրում նա պետք է անցնի ինն սուներեք լյո, որ ամեն մի գինվոր կստանա ոչխարի երկու մորթի, մեկական պայտ, երկու տասնյակ մեխ և չորս պաքսիմատ, որ յուրաքանչյուր գնդին կարելի է տալ ոչ ավելի քան վեց սայլ և հարյուր բեռնակիր ձի, վերջապես, որ քսանհինգ օրվա ընթացքում անհնազանդության ամեն մի արարք մահապատժի է դատապարտվելու։ Բոլոր գնդապետներին և գեներալներին պետք է իրավունք տրվեր երկու սպաների մասնակցու-

1 Մոսկվայում հրդեհը սկսվեց սեպտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը։

2 Բորոդինոյի մոտ։

թյամբ կայացնել թալանի ու անհնազանդության մեջ բռնված զինվորների մահավճիռը և անհապաղ գնդակահարել մեղավորներին։

Հարկավոր էր բանակն արշավանքի նախապատրաստել մեկ շաբաթվա համար բավարար սննդով և մի քիչ գինի ու շաքար բաժանել։ Վիտեբսկից Մոսկվա գնալու ճանապարհին զինվորներին վիճակված էր սոված մնալ, քանի որ ինտենդանտությունն իր ապաշնորհության պատճառով Լեհաստանում առանց հացի էր մնացել։

Վերջապես, ձեռնարկելով այդ բոլոր միջոցառումները, հարկավոր էր վերադառնալ Սմոլենսկ՝ ըստ հնարավորին խուսափելով դեպի Մոսկվա առաջխաղացման ժամանակ ավերված այն ճանապարհից, որտեղ ռուսները հրկիզել էին բոլոր քաղաքները՝ Մոժայսկը, Գժատսկը, Դորոգոբուժը և այլն։

Բոլոր այս կետերի առնչությամբ էլ վարվեցին հենց ողջամտության թելադրանքին հակառակ։ Նապոլեոնը, որն արդեն չէր համարձակվում թեկուզ մի զինվորի գնդակահարության դատապարտել, ամեն կերպ խուսափում էր կարգապահության մասին որևէ հիշատակություն անելուց։ Մոսկվայից Սմոլենսկ վերադարձի ճանապարհին բանակի առջևից գնում էին երեսուն հազար վախկոտներ, որոնք հիվանդ էին ձևանում, իսկ իրականում իրենց հիանալի էին զգում առաջին տասը օրվա ընթացքում։ Այն ամենը, ինչ այդ մարդիկ չէին ուտում, դեն էին նետում, կամ էլ այրում։ Իր դրոշին հավատարիմ զինվորը հիմար վիճակի մեջ էր ընկնում։ Իսկ քանի որ ֆրանսիացու համար դա ամենաանտանելին էր, ապա շուտով զենքի տակ մնացին միայն հերոսական խառնվածքի տեր զինվորները կամ էլ պարզամիտները։

Նահանջի ժամանակ զինվորները բազմիցս ասել են ինձ (թեպետ ես չեմ կարող դրան հավատալ, քանի որ նման հրաման չեմ տեսել), որ Նշանատելի իշխանը Մոսկվայում հոկտեմբերի 10-ի մոտերքը բանակում հայտարարված հրամանով բոլոր այն զինվորներին, որոնք իրենց անկարող էին զգում օրական տասը լյո անցնելու, թույլատրել է թողնել Մոսկվան՝ չսպասելով բանակի մեկնելուն։ Գլուխներն անմիջապես տաքացել էին, և զինվորներն սկսել էին մոտավոր հաշիվներ անել, թե քանի օրում կկարողանան Փարիզ հասնել։

ԳԼՈՒԽ LVII

Նապոլեոնն ասում էր. «Եթե Ռուսաստանում հաջողության հասնեմ, ես աշխարհի տիրակալը կլինեմ»։ Նա պարտություն կրեց, ոչ թե մարդկանցից, այլ իր սեփական ամբարտավանությունից ու կլիմայական պայմաններից,[1] և Եվրոպան սկսեց իրեն այլ կերպ պահել։ Մանր թագավորները դադարեցին դողդողալուց, ուժեղ միապետները դեն նետեցին վարանումները. նրանք բոլորն էլ իրենց հայացքներն ուղղեցին դեպի Ռուսաստան, այն դարձավ անհաղթահարելի դիմադրության առանցքակետը։

Անգլիական մինիստրները՝ մարդիկ, որոնք ազդեցություն ունեն միայն այն պատճառով, որ կարողանում են օգուտ քաղել նույն ազատությունից, որն ատում են, հաշվի չառան այդ հնարավորությունը։ Ռուսաստանը կօգտվի այն դրությունից, որին նրանց շնորհիվ ինքը հասել է, որպեսզի վերսկսի Նապոլեոնի ձեռնարկումները, ընդ որում շատ ավելի հաջողությամբ, քանի որ նրա գործողությունները կապված չեն լինի մի մարդու կյանքի հետ. մենք դեռ կտեսնենք ռուսներին Հնդկաստանում։

Ռուսաստանում դեռ ոչ ոք չի զարմանում բռնակալության տիրապետությունից։ Այն անխզելիորեն կապված է կրոնի հետ, և քանի որ բռնակալը մի չափազանց հեզաբարո ու սիրալիր մարդ է, այնտեղ բռնապետության դեմ զայրանում են լոկ օտար երկրներում ապրած, փիլիսոփայորեն տրամադրված սակավաթիվ մարդիկ։ Ոչ թե կոչերը և պարգևներն են ռուս զինվորներին մարտի ոգեկոչում, այլ սուրբ Նիկոլայի հրամանները։ Մարշալ Մասսենան իմ ներկայությամբ պատմել է, որ ռուսը, երբ կողքին ընկնում է մահացու վիրավոր հայրենակիցը, այնքան համոզված է, որ նա հայրենիքում հարություն կառնի, որ նրան հանձնարարում է բարև տանել իր մորը։ Ռուսաստանը, Հռոմի նման[2], ունի սնահավատ զինվորներ, որոնց հրամաններ են տալիս այնպիսի լուսավորյալ պետեր, ինչպիսին մենք ենք[3]։

---

[1] Սխալ կլիներ կարծել, թե 1812 թվականին ձմեռը շուտ եկավ, ընդհակառակը, Մոսկվայում հիանալի եղանակ էր։ Երբ մենք հոկտեմբերի 19-ին հեռացանք այնտեղից, ընդամենը 3 աստիճան սառնամանիք էր, և արևը պայծառ լուսավորում էր։

[2] Մոնտեսքյոն՝ հռոմեացիների կրոնի մասին։

[3] Տե՛ս սըր Ռոբերտ Ուիլսոնի 1817 թվականի պամֆլետը։ 1810 և 1811

Երբ Նապոլեոնը Վարշավայում ասաց. «Մեծից մինչև ծիծաղելին մի քայլ է», պարզ գիտակցում էր, որ պատմության հեղեղը փոխել է իր ընթացքը։ Բայց այդ խոսքերին նա ավելացրեց. «Հաջողություններից ռուսները համարձակ են դառնում. ես նրանց երկու-երեք ճակատամարտ կտամ Էլբայի ու Օդերի միջև և կես տարուց հետո նորից կլինեմ Նեմանի մոտ»։

Լյուցենի* և Վուրցենի* ճակատամարտերը մեծ ժողովրդի ուժերի վերջին լարումն էին, որի արիությունը ոչնչացնում էր մեռնող բռնապետությունը։ Լյուցենի տակ հարյուր հիսուն հազար զինվոր այն կոհորտաներից, որոնք դեռ երբեք չէին եղել կրակի մեջ, առաջին անգամ մասնակցեցին ճակատամարտին։ Սոսկալի կոտորածի տեսարանը ջղմեցրեց այդ երիտասարդներին։ Հաղթանակն ամենևին չբարձրացրեց բանակի ոգին։ Զինադադարն անհրաժեշտ էր*։

ԳԼՈՒԽ LVIII

1813 թվականի մայիսի 26-ին Նապոլեոնը Բրեսլավլում էր։ Այնտեղ նա երեք տեսակետից անխոհեմություն դրսևորեց՝ գերագնահատեց իր բանակը, գերագնահատեց օտարերկրյա տերությունների մինիստրությունների տխմարությունը և գերագնահատեց թագավորների բարեկամական տրամադրվածությունն իր նկատմամբ։ Իր ժամանակին նա ստեղծել ու կործանումից փրկել է Բավարիան. Ավստրիայի կայսրն իր աներն էր և դրանով իսկ՝ Ռուսաստանի բնական թշնամին։ Նապոլեոնը դարձավ այս երկու ճոճոան դարձվածների զոհը։

Կարճատև դադարից հարկավոր էր օգտվել հնազանդեցված երկրները վերջնականապես հյուծելու և զինադադարի ժամկետը լրանալուց տասը օր առաջ Մայնի Ֆրանկֆուրտում հաստատվելու համար. Ռուսաստանի վրա կատարված արշավանքի բոլոր անհաջողությունները կհարթվեին, այլ կերպ ասած՝ ֆրանսիական կայսրությունն անդամատված չէր լինի. բայց Էլբայի մյուս կողմում Նապոլեոնն արդեն ազդեցություն ուներ միայն այն չափով, ինչ չափով ինքը եվրոպական թագավորներից ամենազորեղն էր։

Սիլեզյան արշավանքը, որի վարումը շատ անհաջող կերպով հանձնարարվել էր մարշալ Մակդոնալդին, որը հայտնի էր լուկ պարտություններով, ճակատամարտը Դրեզդենի մոտ, մարշալ Սեն-Սիրի կորպուսը բախտի քմահաճույքին թողնելը, Լայպցիգի ճակատամարտը, Դանաուի ճակատամարտը. այս բոլորը հրակայական սխալների մի կուտակում է[1], ինչպիսիք կարող էր կատարել միայն Հուլիոս Կեսարից հետո ապրած զորավարներից մեծագույնը[2]։

Ինչ վերաբերում է հաշտությանը, որի կնքումը շարունակ առաջարկում էին Նապոլեոնին, ապա երբևիցե մենք կիմանանք, թե այդ ամենում եղե՞լ է արդյոք թեկուզ մի քիչ անկեղծություն[3]։ Անձամբ կարծում եմ, որ օտարերկրյա կառավարություններն այն ժամանակ անկեղծորեն խաղաղություն էին ցանկանում, քանի որ ինձ թվում է, թե նրանք վախենում էին Նապոլեոնից։ Սակայն նվաճումի ոգին ինչ-որ բոլորովին այլ բան է, քան նվաճածի պահպանման ոգին։ Եթե Տիլզիտի հաշտության հաջորդ օրը Նապոլեոնի հանձարեղությունն ամբողջովին փոխարինվեր առողջ դատողությամբ, նա մինչև իսկ հիմա էլ կիշխեր Եվրոպայի ամենագեղեցիկ մասում։

Բայց դրա փոխարեն դուք, ընթերցող, չէիք ունենա այն ազատամիտ գաղափարների կեսն անգամ, որոնք ձեզ հուզում են. դուք կձգտեիք սենեկապետի պաշտոնի կամ էլ, բանակի համեստ սպա լինելով, կջանայիք, ի ցույց հանելով ձեր կույր նվիրվածությունը կայսրին, աստիճանի նոր բարձրացում ստանալ։

թվականներին ռուսական ռազմական մինիստրի հրամանով Նապոլեոնի բոլոր ռազմական կարգադրությունները թարգմանվում էին ռուսերեն և կենսագործվում։

---

1 Նապոլեոնի զայրույթը Դյուպոնի կապիտուլյացիայից հետո խորհուրդը, որին ներկա էր պ-ն դը Սեն-Վալիեն։ Տյուիլրիի լուսամուտների ապակիները զնգզնգում էին Նապոլեոնի ձայնի զայրալից որոտից։ Նա մեծ-մեծ քայլերով անցուդարձ էր անում։

2 Կա մի մարդ, որը կարող է դառնալ այդ մեծ իրադարձությունների հիանալի ռազմական պատմագիրը. դա կոմս Լավալետի ազատարար գեներալ Ռորերտ Ուիլսոնն է։ Ես կարծում եմ, որ այն ամենում, ինչ վերաբերում է գործի ռազմական կողմին, Նապոլեոնի «նոթերը» միանգամայն օտույգ կլինեն։

3 Գրաֆայում տեղի ունեցած բանակցությունների մասին տե՛ս 1813 թվականի օգոստոսի սկզբների «Moniteur»-ը և Էդինբուրգում հրատարակվող «Annaul Register»-ը։

ԳԼՈՒԽ LIX

Դրեզդենում օգոստոսի չսանվեցի ճակատամարտից հետո Նապոլեոնը, ըստ Նրուլիին, դարձավ պատվի կեղծ պատկերացման զոհը. նա չցանկացավ զիջումներ անել։ Գերագույն իշխանության սովորությունն ուժեղացրեց նրա բնածին հպարտությունը և նրա մեջ թուլացրեց ավելի վաղ տարիների այնքան հիանալի առողջ դատողությունը։

Առողջ դատողության այդ լիակատար անհետացումն է՛լ ավելի սուր է դրսևորվում ներքին գառավարմանը վերաբերող նրա գործողություններում։ Այդ տարի նա իր արգահատելի Սենատին ստիպեց փոխելու Անտվերպենի ակցիզի գործով երդվյալ ատենակալների որոշման հիման վրա Բրյուսելի վճռաբեկ դատարանի կայացրած վճիռը։ Միապետը միաժամանակ օրենսդիր, մեղադրող ու դատավոր դարձավ. այդ ամենն այն սրամեղության պատճառով, որ գտնվեցին այնպիսի ճարպիկ սրիկաներ, որոնք կարողացան շրջանցել նրա սահմանած կանոնները։

Սենատի մեկ այլ որոշում վկայում է, որ բռնակալը վերջնականապես զրկվել է բանականությունից։ Այդ որոշումը, որն անմիտ էր թեկուզ այն պատճառով, որ խախտում էր Կայսրության հիմնական օրենքներ կոչվող դրվածքները, ասում էր, որ Անգլիայի հետ ոչ մի դեպքում հաշտություն չի կնքվելու, մինչև որ նա չվերադարձնի Գվադելուպան, որն ինքը վերջերս զիջել է Շվեդիային։ Սենատի անդամները, որոնք նախքան դրան անդամակցելը գրեթե ամբողջովին պատկանում էին Ֆրանսիայի առավել երևելի մարդկանց թվին, կանչված լինելով Լյուքսեմբուրգյան պալատ, արդեն իրար հետ միայն ստորությամբ էին մրցում։ Անվեհեր օպոզիցիան զուր էր փորձում նրանց մեջ ամոթ արթնացնել. նրանք պատասխանում էին. «Լյուդովիկոս XIV-ի դարը նորից եկել է. մենք չենք ուզում կործանել մեզ և մեր ընտանիքները»։ Քանի որ նիստերը հրապարակային չէին, օպոզիցիային պատկանելը լոկ վտանգների հետ էր կապված, բայց չէր կարող փառք բերել, և գալիք սերունդները պետք է հատուկ երախտագիտությամբ հիշեն Տրասիի, Գրեգուարի*, Լանժյունեի*, Կարանիսի*, Բուասսի դ'Անգլայի, Լանուար-Լարոշի*, Կոլոյի, Շոլեի, Վոլնեյի* և մի քանի այլ արժանավոր մարդկանց անունները, որոնք մինչև հիմա էլ օպոզիցիայի մեջ են և անարգանքի են ենթարկվում այն շողոքորթների կողմից, որոնք լոկ փոխել են տերերին[1]։

Նապոլեոնն իր բոլոր պրեֆեկտներին հրաման ուղարկեց՝ շվեդական թագավոր Բեռնադոտին դատափետել հարյուրավոր, երիցս անիմաստ ուղերձներով, քանի որ Ֆրանսիայից հեռանալով, Բեռնադոտը շվեդ էր դարձել[2]։

Այդ ժամանակամիջոցում Վելինգտոնը, հանգամանքների բերումով հաղթելով իրենից ավելի հմուտ զորավարին, մոտենում էր Բայոնային։ Հոլանդիան ապստամբեց։ Ամստերդամի ողջ կայազորը կազմող քառասունչորս ժանդարմները այն օրը, երբ տեղի ունեցավ երբևիցե կայացած ապստամբություններից ամենախաղաղը, ի վիճակի չեղան այդ երկրին խանգարել անջատվելու Ֆրանսիայից։ Ամենաանարիկ ամրոցները գրավվեցին նույնքան հեշտությամբ, որքան գյուղերը։ Հոլանդիայի ներքին մարզերում կայսրը չթողեց ո՛չ մի զինվոր, ո՛չ մի արկ, իսկ ամենագլխավորը՝ ո՛չ մի գործունակ մարդ։ Այն ամենը, ինչ կարողացան անել, Բերդ-օպ-Զոոմը պահելն էր, և շուտով ֆրանսիական կայազորը, գերելով ամրոցը պաշարած անգլիական զորքերի կորպուսը, աշխարհին ցույց տվեց disjecta membra poetae։

Հոլանդիայի անջատվելուց հետո հրապարակվեց Ֆրանկֆուրտի դեկլարացիան. այն Ֆրանսիային առաջարկում էր Բելգիան և Հոլանդիայի ձախ ափը, բայց ո՞րն էր այդ խոստումի երաշխիքը։ Ի՞նչը կարող էր դաշնակիցներին խանգարել հաշտություն կնքելուց մեկ ամիս հետո վերսկսել ռազմական գործողությունները։ Գալիք սերունդները կհիշեն այն ուխտադրժությունը, որ նրանք դրսևորեցին դրեզդենյան և դանցիգյան կապիտուլյացիաներից հետո։

ԳԼՈՒԽ LX

Թվում էր, թե կայսրությունը խորտակվում է, թե նրա բոլոր մասերն իրար վրա են փլվում։ Չնայած այս մեծ աղետներին,

---

[1] To see (նայել) տիկին դը Ստալի «հեղինակությունները» for the names (անունների համար)։

[2] Տե՛ս նույն «Moniteur»-ը։ Այդ ուղերձներն ստորագրող մարդկանցից առավել ստորները նրանք էին, ովքեր երկու տարի հետո դարձան ամենաժիր-ղելի և արյունռուշտ ռոյալիստները։ Տե՛ս պ-ն Սեգիեի ճառը։

Նապոլեոնը դեռ հազար ու մի հնարավորություն ուներ կանխելու իր կործանումը։ Բայց նա արդեն այն մարդը չէր, որը հրամանատարություն էր անում Եգիպտոսում և Մարենգոյում։ Տաղանդը փոխարինվեց համառությամբ։ Նա համարձակություն չունեցավ հրաժարվել հսկայական մտահղացումներից, որոնց իրականացումը ինքը և իր մինիստրներն այդպես երկար ժամանակ պարտադիր էին համարում։ Դժվարին պահին նա իրեն տեսավ լոկ շողոքորթներով շրջապատված։ Այդ մարդը, որին ֆեոդալները, անգլիացիները և տիկին դը Ստալը պատկերում են որպես մաքիավելիզմի անձնավորում, որպես չար ոգու մարմնացում[1], երկու անգամ դարձավ իր պարզասրտության զոհը՝ առաջին անգամ, երբ նա ենթադրեց, որ այն բարեկամական համակրանքը, որ ինքն Ալեքսանդր կայսեր մեջ հարուցել էր իր նկատմամբ, կդրդի այդ միապետին կատարելու անհնարինը, իսկ ապա, երբ երևակայեց, թե ավստրիական տունը, ի երախտագիտություն այն բանի, որ ինքը չորս անգամ խնայել է նրան՝ ջախջախելու փոխարեն, դժբախտության մեջ չի լքի իրեն։ Նա ասում էր, որ ավստրիական կայսրը կհասկանա, թե իրեն ինչպիսի անշահավետ դրության մեջ կդնի Ռուսաստանի գերազանցությունը։ Բավարիան, որ ինքն է ստեղծել 1805 թվականին, իսկ 1809 թվականին փրկել ջախջախումից, երես դարձրեց իրենից, իսկ Գանաուի մոտ փորձեց մահացու հարված հասցնել իրեն, որը և կհաջողվեր, եթե բավարական գեներալը կռահեր ճանապարհին մի երկու տասնյակ փոս փորել։ Նապոլեոնը նույն սխալը գործեց, ինչ որ բոլոր բախտագյուտները՝ նա չափազանց բարձր էր գնահատել այն դասը, ուր ինքը մուտք էր գործել։

Երբ Նապոլեոնը Գանաուից գնում էր Փարիզ, նվազագույն պատկերացում իսկ չուներ իրեն սպառնացող վտանգի մասին։ Նա վերհիշում էր 1792 թվականի խանդավառ պոռթկումը, բայց չէ՞ որ այժմ ինքն արդեն Հանրապետության առաջին կոնսուլը չէր։ Առաջին կոնսուլին հաղթելու համար հարկավոր էր երեսուն միլիոն մարդու հաղթել։ Իր կառավարման տասնչորս տարիների ընթացքում նա սրտերում ստրկամտություն էր սերմանել և հանրապետական մի քիչ միամիտ ոգևորության փոխարեն նրանց մեջ զարգացրել միապետություններին հատուկ եսամոլություն։

1 Տիկին դը Ստալի սեփական խոսքերը։ Կարծեմ, Լեհաթան, հ. II։

Միապետությունը, հետևաբար, վերականգնված էր. միապետին կարելի էր փոխել առանց իսկական հեղափոխություն անելու։ Ի՞նչ տարբերություն ժողովուրդների համար[1]։

Կշեռքի մյուս նժարին այդ նույն տասնչորս տարիների ընթացքում սարսափից թալկացած թագավորներն էին։ Հենց որ նրանք հիշում էին Բուրբոնների փառապանծ տան մասին, նրանց պատկերանում էր այն վիճակը, որի մեջ իրենք ցանկացած օր կարող էին ընկնել։ Լայպցիգի ճակատամարտից հետո բանակարկությունները կարճ ժամանակով հանդարտվեցին, և իսկական արժանիքների տեր մարդիկ[2] եվրոպական թագավորների արքունիքը մուտք գործելու հնարավորություն ստացան։ Այսպիսով, աշխարհազորի և լանդվեների փոխարեն դաշնակիցների բանակում թագավորում էին հայրենասիրությունն ու ոգևորությունը, և նրանց ծառայության մեջ հայտնվեցին բացառիկ վաստակի տեր մարդիկ։ Նապոլեոնը չափավորեց ոգևորությունը, և Կառնոյի տեղը, որը Մարենգոյի ճակատամարտի ժամանակ ռազմական մինիստր էր, այժմ զբաղեցնում էր Ֆելտրի դուքսը։

ԳԼՈՒԽ LXI

Ֆրանկֆուրտում հավաքված դաշնակիցները, ըստ երևույթին, իրենք էլ զարմացած էին իրենց հաջողությունից։ Սկզբում նրանց մեջ առաջացավ պատերազմը Իտալիա տեղափոխելու պլան։ Նրանք վախենում էին Ֆրանսիայի սահմանները մտնելուց։ Անընդհատ նրանց աչքին երևում էր նահանջը Շամպանից։ Վերջապես նրանք վճռեցին գետանցել Հռենոսը (1814 թվականի հունվարի 4-ին)։

Նապոլեոնն արդեն վաղուց էր վերադարձել Փարիզ։ Ես կարծում եմ, որ նա գլխավորապես աշխատում էր ազատվել այն վախից, որը նրան ներշնչում էր ֆրանսիական ժողովուրդը։ Նրա բոլոր դեկրետները միայն վերաբերում էին զինվորներին հագուստ, հրացան, կոշիկ մատակարարելուն. բանակի ոգու հարցը կարծես առհասարակ գոյություն չուներ։ Նա նպատակադրվել էր

1 Եթե հեղափոխությունը տեղի ունեցավ, ապա միայն 1815 թվականին իշխանության գլուխ կանգնած մինիստրների ապաշնորհության պատճառով։

2 Պարոնայք Շտեյնը՝ և Գնեյզենաուն՝։

զուրս գալ դժվարին դրությունից՝ ամենևին չզոհաբերելով իր վեհությունը։ Իր ողջ կյանքում նա առաջին անգամ գրսևորեց իրեն իբրև փոքր մարդ։ Մինիստրներ կոչվող, բայց իրականում սոսկ նրա մտքերը շարադրող, թուղթ մրոտող ողորմելի քարտուղարները վախենում էին, թե չլինի հանկարծ նա իրենց դնգստի բուխարու ունելիով, և չէին համարձակվում բերան բանալ։

Կայսրը ստեղծեց ազգային գվարդիա։ Եթե Ֆրանսիայում նորից տեռոր սկսվի, որը շատ հավանական է այն դեպքում, եթե հոգևորականությանն ու ազնվականությանը գործողությունների լիակատար ազատություն տրվի, ապա ազգային գվարդիայի շնորհիվ դա այնքան սոսկալի չի լինի, որքան առաջինը։ Նրանք, ովքեր միայն կիսով չափ են պատկանում ամբոխին, կհայտնվեն այդ գվարդիայի շարքերում, և մանր խանութպանները, վախենալով, որ չլինի թե հանկարծ իրենց կողոպտեն, կահարեկեն իսկական ամբոխին։ Եթե ճակատագիրը Ֆրանսիայի համար այլ կարգի իրադարձություններ է նախապատրաստում, ազգային գվարդիան օգտակար կլինի նաև նրանով, որ կհաստատի դրամական արիստոկրատիա։ Նա կկարողանա նվազ արյունալի դարձնել իրավունքների դեմ արտոնությունների պայքարի որոշ շատ հավանական դրվագները։ Այդ տեսակետից բոլոր անհրաժեշտ երաշխիքներն ազգային գվարդիան կտա այն պայմանով, որ զինվորներն ամեն տարի իրենք ընտրեն կապիտանից ցածր աստիճան ունեցող իրենց սպաներին, իսկ բարձր պաշտոնների համար առաջարկեն իրենց թեկնածուներին։ Հարկավոր էր նաև որոշել, թե հարկի որ չափն է իրավունք տալիս այդ պաշտոններից յուրաքանչյուրը գրավելու համար։

1814 թվականի հունվարին եվրոպական ժողովուրդներից ամենաեռանդունը, եթե նա դիտվի որպես ազգ, իրենից մեռյալ մարմին էր ներկայացնում։ Զուր էին երեք տասնյակ սենատորների հանձնարարել քնից թեթևակի արթնացնել ժողովրդին, որն այնպես սեղ էր Կառնոյի օրոք։ Մենք բոլորս համոզված էինք, որ բավական է միայն ֆրանսիացիներին կարմիր գդակ ցույց տալ՝ և վեց շաբաթ էլ չի անցնի, երբ այն ալ կգտնա բոլոր օտարերկրացիների արյունից, որոնք կհանդգնեին պղծել ազատության սրբազան հողը։ Բայց տիրակալը մեզ հայտարարեց. «Ավելի լավ է ես մի քանի պարտություն, քան դարձյալ ժողովրդի իշխանություն»։ Եվ եթե նա նորից տիրանար կայսրությանը, վա՜յ նրան, ով կհանդգներ չենթարկվել այդ հրամանին։ Այդ պահին Նապոլեոնը, անշուշտ, զգաց իր բարձր դիրքի լուծը։ Ի՞նչ գործողություն կարելի էր սպասել ժողովուրդների սրտերին ուղղված և ֆեոդալական տիտղոսներից սկսվող կոչերից։ Հերոսության պատկերնե՞ր։ Հայրենիքի հանդեպ անձնազոհ սիրո հորդո՞ւմ։

Այդ օրերի համար (1814 թվականի հունվար) բնորոշ է մինիստրների, հատկապես մինիստր Մ[ոնտալիվեի] հայտարարությունների տոնը։ Երբ սենատորներից մեկը նրան հայտնեց, որ ինքը նույնիսկ հինգ հարյուր սարքին հրացան չունի, ի պատասխան նա գոռաց. «Զինեք լիցեյների սաներին. Ֆրանսիական երիտասարդությունը լսել է իր կայսեր ձայնը», և նման ճոճուն դարձվածներ, որոնք ամենաանամոթ ժուռնալիստը չափազանց վերամբարձ կհամարեր կոչի մեջ զետեղելու համար։ Դա այնքան էր աչքի զարնում, որ հաճախ ինքներս մեզ հարցնում էինք. «Նա դավաճան չէ՞ արդյոք»։

Վերջապես՝ կամայականության և անհնտեղողականության ծայրահեղ արտահայտությունը, որը Ֆրանսիայի հոգին հանել էր և այնքան նման էր խենթության, որ հետագա սերունդներին դժվար կլինի հավատալ, թե դա տեղի է ունեցել. այն նույն պահին, երբ կայսրին ամենից շատ էր հարկավոր շահել ժողովրդի համակրանքը, նա գժտվեց Օրենսդրական կորպուսի հետ։ Նա ազնվագույն մարդկանց մեղադրեց այն բանում, որ նրանք ծախվել են օտարերկրյա տերություններին։ Նա ընդհատեց Օրենսդրական կորպուսի նստաշրջանը։

Ահա թե ինչ արեց բոնապետությունը երբևիցե ապրած մեծագույն հանճարներից մեկի հետ։

ԳԼՈՒԽ LXII

Հունվարի 24-ի առավոտյան Նապոլեոնը Փարիզում իրեն դրսևորեց որպես մեծագույն ողբերգակ։ Ֆրանսիայի ճակատագրի վրա աստիճանաբար ամպեր էին կուտակվում։ Պայքարի հաջողության նկատմամբ տիրակալի վստահությունը նույնպիսի վստահություն էր ծնում ժողովրդի մեջ։ Հենց որ վախը ներս էր սողոսկում սրտերը, բոլորի հայացքները դառնում էին դեպի նա։

Նա Փարիզի ազգային գվարդիայի զորատես էր անում այն

նույն Կարուսելի բակում, որտեղ ամբողջ Եվրոպան ներկա է եղել իր գվարդիայի զորահանդեսներին. նա կանգնած էր հաղթակամարի մոտ, որը զարդարված էր աղնիվ ռազմավարներով, և որոնցից շատ շուտով իրեն վիճակված էր զրկվել։ Ամենայն հավանականությամբ, այս վայրի հետ կապված երջանիկ հիշողություններն ազդեցին նրա վրա. նա հուզված էր. հանձնարարեց հայտնել ազգային գվարդիայի սպաներին, որ բարձրանան Մարշալական դահլիճ։ Մի պահ բոլորը համոզված էին, որ նա իրենց կառաջարկի դուրս գալ Փարիզից և շարժվել Թշնամու վրա։ Հանկարծ նա դուրս է գալիս խաղաղության վերնասրահից և հայտնվում նրանց առջև՝ որդուն ձեռքերին բռնած. նա ցույց է տալիս Հռոմի մանկահասակ թագավորին. «Ես ձեզ վստահում եմ այս երեխային՝ Ֆրանսիայի հույսին, իսկ ինքս մարտի եմ մեկնում, և իմ բոլոր մտքերն ուղղված կլինեն այն նպատակին, որ փրկեմ հայրենիքը»։ Վայրկենապես բոլոր ներկաների աչքերին արցունքներ եռևացին։ Ողջ կյանքումս չեմ մոռանա այդ սրտաճմլիկ տեսարանը։ Ես ջղայնացել էի ինքս ինձ վրա, որ չկարողացա զսպել արցունքներս։ Բանականությունը շարունակ ինձ ասում էր. «Դանտոնների և կառնոների ժամանակներում կառավարությունն այնքան ահեղ վտանգի դեմ հանդիման չէր փորձի ներգործել փոքրոգի և սխրանքի անընդունակ մարդկանց վրա, այլ բոլորովին ուրիշ գործով կզբաղվեր»։

Իրոք, այն նույն մարդիկ, որոնք հունվարի 24-ին արտասվում էին Տյուիլրիում, մարտի 31-ին, երբ կայսր Ալեքսանդրն անցնում էր բուլվարով, խռնվել էին լուսամուտների մոտ և սպիտակ թաշկինակներ էին թափահարում. թվում էր, թե նրանք հիացմունքից խենթացել էին։ Հարկ է նշել, որ մարտի 31-ին դեռ խոսք անգամ չկար Բուրբոնների հոչակավոր տան մասին, և փարիզցիներն այդպիսի ուրախություն էին արտահայտում բացառապես այն բանի համար, որ իրենց նվաճել էին։

ԳԼՈՒԽ LXIII

Նման հանգամանքներում Կոնվենտը որոշում էր կայացնում, որ այսինչ օրը երկիրը, որտեղ թագավորեց ազատությունը, պետք է մաքրվի թշնամուց, և նշված օրը հանրապետության զորքերը կատարում են այդ որոշումը։

1814 թվականի հունվարի 25-ին, կայսրի բանակ մեկնելու օրը, ողջ Ֆրանսիային վերաբերող գործը կարծես դարձել էր միայն մի մարդու գործ։ Ամբարտավանությունը, որ բնորոշ էր այս մարդու ճառերին և երջանիկ տարիներին դեպի նրան էր գրավում բոլոր նրանց, ովքեր չունեին ոգու արիություն, այժմ պատճառ էր դարձել, որ բոլորը թաքուն բավականություն զգան նրա նվաստացումը տեսնելուց։

Շատերի համար Փարիզի գրավումը ցանկալի էր որպես հետաքրքիր տեսարան։ Երբ ես զզվանքով արտահայտվեցի այդ առթիվ, նման ձևով դատող մարդկանցից մեկը շատ իմաստաբար ինձ ասաց. «Փարիզը, որպես մայրաքաղաք, այլևս չի համապատասխանում Ֆրանսիայի պահանջմունքներին։ Սովորության պատճառով յոթ հարյուր հազար եսամոլներ, Ֆրանսիայում եղած ամենավախկոտ, ամենակամազուրկ մարդիկ, բոլոր մեծ ցնցումների ժամանակ դառնում են նրա ներկայացուցիչները։ Վստահ եղեք, կարմիր փայտից պատրաստված իրենց կահույքից զրկվելու վախը նրանց միշտ կստիպի համաձայնվել բոլոր այն ստորություններին, որ նրանց կառաջարկեն։ Նրանք դրա համար մեղավոր չեն. մանր հայածանքները նրանց սրտերում հանգցրել են հետաքրքրությունն այն ամենի նկատմամբ, ինչ իրենց անձնականին չի վերաբերում։ Ֆրանսիայի մայրաքաղաքը պետք է դառնա Լուարից այն կողմ, Սոմյուրի մոտերքում գտնվող ամրացված մի քաղաք»։

ԳԼՈՒԽ LXIV

Շատիլիոնի կոնգրեսը* բացվեց փետրվարի 4-ին և ավարտվեց մարտի 18-ին։ Մեծ տերություններից մեկը դեմ էր Նապոլեոնի տապալմանը։ Այդ մեծ տերության պաշտպանությամբ նա կարող էր որոշակի երաշխիքներով համեմված հաշտություն կնքել։ Բայց նա իրեն անարդված կհամարեր, եթե համաձայնվեր Ֆրանսիան թեկուզ մի գյուղով պակաս ընդունել նրա համեմատությամբ, ինչ կար, երբ ինքն այն ստացավ բրյումերի 18-ին։ Հիրավի, դա հոգու վեհության մասին վկայող սխալ էր, հերոսին արժանի մոլորություն։ Դրանում է նրա վարքագծի բանալին։ Որոշ այլ տիրակալներ նման ավելորդ փափկանկատություն չցուցաբերեցին։

ԳԼՈՒԽ LXV

Նապոլեոնի կողմից Փարիզի պաշտպանությունը ռոմանտիկ բնույթ էր կրում և, սակայն, քիչ մնաց, որ հաջողությամբ պսակվեր։ Ֆրանսիական զորքերը ցրված էին իրարից վիթխարի հեռավորության վրա՝ Դանցիգում, Համբուրգում, Կորֆու կղզում, Իտալիայում։ Ֆրանսիայի արևմուտքում և Վանդեայում անհանգիստ էր։ Երբ այդ բոնկումները մոտիկից ես տեսնում, դրանք նվազագույն անգամ նշանակություն չունեն, բայց հեռվից ահավոր են թվում։ Ֆրանսիայի հարավում տագնապալի էր. վախենում էին, որ չլինի թե հանկարծ այնտեղ կոտորած սկսվի. Բորդո քաղաքն արտահայտվեց Թագավորի օգտին, որը պետք է վերջապես մեզ սահմանադրական կառավարման օրինակ տար։ Հյուսիսն իրադրությունը քննարկում էր այն հանգստությամբ, որը բնորոշ էր նրան Հեղափոխության ամբողջ ժամանակի ընթացքում։ Արևելքը, ամենաազնիվ զգացմունքներից դրդված, միայն մի բան էր ուզում՝ զենք, որպեսզի Ֆրանսիան թշնամուց մաքրի։

Նապոլեոնը՝ խուլ բանականության ձայնի հանդեպ, որը նրան համոզում էր ընկնել Ավստրիայի գիրկը, կարծես ամբողջովին կլանված էր դաշնակիցների դեմ ուղղված իր ապշեցուցիչ կամպանիայով։ Յոթանասուն հազար զինվորով նա կռվում էր երկու հարյուր հազարի դեմ և նրանց պարտություն պարտության ետևից մատնում։ Բանակը մարտնչում էր անձնուրաց քաջությամբ, և, հարկավոր է նրան արդարը հատուցել, այդ անում էր պատվի զգացումից։ Նա նույնիսկ հեռավոր կերպով չէր կանխատեսում այն ճակատագիրը, որ սպասում էր իրեն։ Պատմում են, որ գեներալներն իրենց շատ ավելի վատ էին պահում, քան զինվորներն ու կրտսերագույն սպաները. նրանք հարուստ էին։ Դաշնակիցների զորքերը նույնպես արիություն ցուցաբերեցին։ Տասը դաշնակցային զինվորին մեկ ֆրանսիացի էր ընկնում։ Լանդվերը և Տուգենդրունդը[1] նրանց շարքերին կրակոտ սեր ներշնչեցին հայրենիքի հանդեպ, սակայն այն պատճառով, որ դրանց հրամանատարները ոչ թե ըստ արժանվույն առաջ քաշված գեներալներ էին, այլ ծննդյան իրավունքով հրամանատար դարձած իշխաններ, մարտերը փոփոխական հաջողությամբ էին ընթանում։ Նապոլեոնը, որն այնքան միջակ էր միապետի դերում, այդ կամպանիայում նորից բազմիցս դրսևորեց իր անցած տարիների ռազմական հանճարը։ Նա երկու ամիս անընդհատ անցկացրեց արագ անցումներ անելով Սենից դեպի Մառն և Մառնից դեպի Սեն։

Թերևս, այդ մեծ մարդու ռազմական բոլոր սխրագործություններից գալիք սերունդների ամենամեծ հիացմունքը կառաջացնեն Շամպոբերի, Մոնմիրայլի, Վոշանի, Մորմանի, Մոնտերոյի, Կրանի, Ռեյմսի, Արսի-սյուր-Օբի և Սեն-Դիզիեի ճակատամարտերը։ Նապոլեոնն իր հանճարեղ ընդունակությունները ծայրահեղ լարում էր այնպիսի զգացումով, որն զրում է շարքային մարտիկը սուսերամարտի ուսուցչի հետ ունեցած գոտեմարտում։ Սակայն նա խելագարի նման վարվեց. նա հրաժարվեց հարյուր հազարանոց Իտալական բանակից*, որը պ-ն դը Տոռնների միջնորդությամբ նրան էր առաջարկում արքայազն Էժենը։ Մի քանի օր անց բեկոտող արկն ընկավ Նապոլեոնի ձիուց տասը քայլ հեռավորության վրա. փոխանակ հեռու փախչելու, նա գնաց ուղիղ դեպի արկը. այն պայթեց Նապոլեոնից չորս ոտնաչափ հեռավորության վրա՝ շղթայելով նրան։ Ես հակված եմ մտածելու, որ Նապոլեոնն ուզում էր մարտահրավեր նետել ճակատագրին։

Մարտի 13-ին Լանի շրջակայքի մարտադաշտում գտնվող կայսրին ներկայացավ արքայազն Բեռնադոտի բժիշկը։ Նրան նորից հաշտություն էին առաջարկում։ Ճակատագիրը մի վերջին անգամ փորձեց ստիպել Նապոլեոնին անսալ իր նախազգուշացնող ձայնին։

ԳԼՈՒԽ LXVI

Նապոլեոնը վաղուց էր արդեն մտադրվել դիվերսիա կատարել Էլզասում։ Նրա պլանն այն էր, որ իր ուժերը համալրի Արևելքում գտնվող բոլոր կայազորներով և թիկունքից հարվածի դաշնակիցներին։ Նա ենթադրում էր, որ թշնամու զորքերը, որոնք հյուծվել էին հիվանդություններից և գտնվում էին լոթարինգյան ու էլզասյան գյուղացիների բացահայտ ապստամբության սպառնալիքի ներքո, որոնք արդեն սկսել էին սպանել ետ ընկնող զինվորներին, զորքեր, որոնք, ընդ որում, գրեթե լիովին սպառել

[1] Ընկերություն, որ ստեղծվել է տաղանդավոր Առնդտի՝ գործուն մասնակցությամբ։

էին ռազմամթերքն ու պարենը, ստիպված կլինեն նահանջել ամբողջ գծով։

Կայսեր պլանը հաջողությամբ կպսակվեր, եթե Փարիզն այնպիսի արիություն ցուցաբերեր, ինչպիսին ցուցաբերել էր Մադրիդը։ Այդ համարձակ պլանը հաջողությամբ կպսակվեր, եթե չլիներ մի նողկալի դավաճանություն։ Մի ոմն օտարերկրացի, որին Նապոլեոնն առատորեն ոչ արժանի նվիրատվություններ էր արել՝ (Դալ[մացիայի] դուքսը), բանբեր ուղարկեց կայսր Ալեքսանդրի մոտ։ Բանբերը միապետին հայտնեց, որ Նապոլեոնը դաշնակցային բանակը նահանջի ժամանակ ոչնչացնելու նպատակով ուղևորվել է Լոթարինգիա և Փարիզն անպաշտպան է թողել։ Այդ լուրը փոխեց դաշնակիցների բոլոր պլանները։ Բանբերի գալուց մի օր առաջ նրանք ուզում էին նահանջել Հռենոսի և Դիժոնի ուղղությամբ։ Ռուս զորավարները պնդում էին, որ ժամանակն է վերջ տալ այդ ռոմանտիկ արշավանքին և նորից գրավել իրենց կողմից անզգուշաբար թողնված առավել հեռավոր դիրքերը։

Երբ, բանբերին ընդունելով, Ալեքսանդր կայսրը մտադրություն հայտնեց անմիջապես առաջ շարժվել, ավստրիական գլխավոր հրամանատարն ամենավճռական ձևով արտահայտվեց այդ մտադրության դեմ և ընդդիմացավ, մինչև որ Ալեքսանդրը հայտարարեց, թե ողջ պատասխանատվությունը վերցնում է իր վրա[1]։

Կգտնվի՞ արդյոք թեկուզ մի ընթերցող, որին չզարմացնի ինքնաբերաբար թելադրվող միտքը։ Մենք տեսնում ենք, որ Նապոլեոնի ոստիկանությունը, որը թիրախ է ծառայել տիկին դը Ստալի և պարսավագրեր հորինողների համար, որ գթություն չիմացող մարդու այդ մաքիավելիական ոստիկանությունը վճռական պահին մեղավոր գտնվեց ավելորդ մարդասիրության մեջ։ Զզվանքը, որ այդ ոստիկանությունն զգում էր արյունահեղության նկատմամբ, պատճառ դարձավ, որ Նապոլեոնը զրկվի գահից։ Արդեն շորս-հինգ ամիս շարունակ Փարիզում զբաղվում էին դավադրություններով, բայց դավադիրներին ոստիկանությունն այնքան էր արհամարհում, որ ոչ մի ուշադրություն չէր դարձնում նրանց վրա։

Այդպիսին էր վիճակը նաև գավառում։ Սենատորները գիտեին, որ որոշ մարդիկ նամակագրություն ունեն Թշնամու հետ։ Կասկած չկա, որ երդվյալների դատարանը խիստ դատավճիռ կկայացներ նրանց նկատմամբ. նրանց հանձնումը քրեական դատարանին առնվազն դավերին վերջ կտար։ Բայց արյունահեղությունն անցանկալի համարվեց։ Ես կարող եմ երաշխավորել այդ պնդումի հավաստիությունը։

Ես կարծում եմ, որ գալիք սերունդները կհիանան Նապոլեոնի ոստիկանությամբ, որը, այդքան քիչ արյուն թափելով, կարողացավ կանխել բազմաթիվ դավադրություններ։ Մեր հեղափոխությանը հաջորդած առաջին տարիներին, քաղաքացիական պատերազմից հետո, նույնքան հարուստ, որքան և այլասերված փոքրամասնության[1] և Անգլիայի պաշտպանությունից օգտվող հավակնորդի առկայության դեպքում ոստիկանությունը, թերևս, անխուսափելի չարիք էր հանդիսանում[2]։ Վերհիշեցեք Անգլիայի վարքագիծը 1715 և 1746 թվականներին։

Կայսերական ոստիկանությունը երբեք առիթ չէր ունեցել ինքն իրեն հանդիմանելու Լիոնի մտացածին դավադրության կամ Նիմի կոտորածի նման արարքների համար[3]։

---

1 Հորհաուզ, էջ 86։

1 Նիվոզի 3-ի զժոխային մեքենան՝։

2 Ամեն մի կառավարության համար՝ ստեղծված ոչ միայն համընդհանուր օգուտի հասնելու՝ բանականությանն ու արդարությանը համապատասխան, ամեն մի կառավարության համար, որի հպատակներն այլասերված են և միայն ուրախ կլինեն իրավունքները փոխարկելու արտոնությունների, այդպիսի ամեն մի կառավարության համար, վախենում եմ, որ ոստիկանությունն անհրաժեշտ է։

3 Հռչակավոր կին գրողը, որին ես աշխատում եմ հերքել, արդյոք անկե՞ղծ է եղել իր պնդումներում։ Եթե այո, ապա պետք է խոստովանել, որ այդ նշանավոր կինն ամենևին էլ չի փայլում խելքով։ Ճիշտ է, մտածողության թուլությունը խղճուկ արդարացում է զրպարտանքի համար։ Ո՞վ էր ձեզ սարսափում խոսելու։ Իսկ եթե դուք ձեր ձայնը բարձրացրել եք լոկ նրա համար, որպեսզի զրպարտեք դժբախտներին և վերջին հարվածը հասցնեք ընկածներին, ապա ո՞րն է այն սահմանագիծը, որը ձեզ բաժանում է ամենաստոր մարդկանցից։

Տողերիս հեղինակն անկեղծորեն ուրախ կլիներ, եթե այս գաղտնությունը հնարավոր լիներ հերքել։ Նա պահանջ է զգում հարգել այն, ինչով ինքը հիանում է և ինչ այնպե՞ս երկար գնահատել է։

Թերևս ներողամտության առիթ կարող է ծառայել այն հանգամանքը, որ արտասովոր արիություն է պահանջվում մեր օրերում կայսերական ոստիկանությունը պաշտպանելու համար։ Նրան արդարացնելու համար պերճախոսություն կպահանջվի, որը հեղինակը չունի։ Pauca intelligenti։ Ինչ վերաբերում

Բանբերի ժամանումից հետո դաշնակիցները շարժվեցին դեպի Փարիզ։ Նրանց առաջխաղացման մասին իմանալով մեկ օր աֆելի ուշ, քան պետք էր, Նապոլեոնը որոշեց հասնել նրանց։ Բայց նրանք ընտրել էին Մոյով անցնող ճանապարհը, այն դեպքում, երբ կայսրը արագացրած երթով իր զորքերը տարավ դեպի Ֆոնտենբլո։

ԳԼՈՒԽ LXVII

Մարտի 29-ին դաշնակիցների հարյուր վաթսուն հազարանոց բանակը մոտեցավ Փարիզը հյուսիս-արևելքից պաշտպանող բարձունքներին։ Թիկունքում դաշնակիցները Նապոլեոնին հետևելու համար թողեցին իրենց հիանալի հեծելազորի զգալի ուժերը։ Մարտի 30-ին, առավոտյան ժամը վեցին հրաձգություն սկսվեց Վենսենից մինչև Մոնմարտր ձգվող տարածության վրա։ Ռագուզի և Տրեվիզի դքսերն ընդամենը մոտ վաթսուն հազար զինվոր ունեին, բայց նրանց դիմադրությունը տևեց մի ամբողջ օր։ Նրանք շարքից հանեցին մոտ յոթ հազար մարդ։ Փարիզի ազգային գվարդիան, որի թիվը հասնում էր երեսունհինգ հազարի, կորցրեց միայն Ֆից-Ջեմս ազգանունով մի մարդու՝ Պալե-Ռուայալում գտնվող սրճարանի տիրոջը[2]։

Ժամը հինգին դաշնակիցները գրավեցին Մոնմարտրի և Բելվիլի բարձունքները։ Երբ մութն ընկավ, այդ բարձունքներում բոցավառվեցին նրանց խարույկները։ Կապիտուլյացիան տեղի ունեցավ երեկոյան. բանակը ստիպված էր նահանջել Էսսոն։ Փաստորեն արդեն գրավված Փարիզն իրենից լիակատար ու գարշելի անդորը էր ներկայացնում։ Ամբողջ գիշեր քաղաքով անցնող հին գվարդիայի զինվորներն արտասվում էին։

է այն մարդկանց, որոնք միայն անձնական շահեր ունեն և զուրկ են սեփական հայացքներից, ապա նրանք կարող են հարգանքի արժանի լինել մասնավոր կյանքում, բայց գրիչ վերցնելիս միշտ արժանի են արհամարհանքի[1]։

Հարկավո՞ր է արդյոք ավելացնել, թե քանի որ Բոնապարտի ոստիկանությունը ձգտում էր հեռացնել օրինական միապետին, անտարակույս, գործում էր հանցավոր նպատակներով։ Բայց արդյո՞ք այդ սխալ ճանապարհով ընթանալով, նա դժգոհություն է դրսևորել, արդյո՞ք հանցագործություններ է կատարել և արդյո՞ք խրախուսել է դրանք։

1 For me (ինձ համար)։ Գավառացիները խոսում են զատավորների նման, իսկ մեծ մասամբ նրանք ընդամենը փաստաբաններ են։

2 Ըստ այլ տեղեկությունների սպանվել է քառասուն մարդ։

ԳԼՈՒԽ LXVIII

Մարտի 30-ի ամբողջ օրվա ընթացքում, քանի դեռ ճակատամարտը շարունակվում էր, բուլվարներում արտակարգ աշխուժություն էր տիրում։

31-ին, առավոտյան մոտ ժամը իններին, այնտեղ արդեն խոնարվել էին մարդիկ, ինչպես այն օրերին, երբ լավ եղանակը գրավում է բազմաթիվ զբոսնողների։ Շարունակ սրախոսություններ էին լսվում ժողեֆ թագավորի և կոմս Ռենիոյի հասցեին։ Անցան սպիտակ կոկարդավոր և սպիտակ թաշկինակներ թափահարող մի խումբ հեծյալներ։ Նրանք բղավում էին. «Կեցցե՛ թագավորը»։ «Ո՞ր թագավորը»,— հարցրեց կողքիս կանգնած ինչ-որ մեկը։ Բուրբոնների մասին ավելի շատ չէին մտածում, քան Կայսր Մեծի։ Այդ խմբի մեջ, որն այսօրվա պես տեսնում եմ իմ առջև, մոտ քսան մարդ կար։ Նրանց տեսքը բավական շփոթված էր։ Նրանք ավելի շատ չէին ուշադրություն գրավում, քան մյուս զբոսնողները։ Նրանց մոլորվածության վրա ծիծաղող իմ բարեկամներից մեկն ինձ հայտնեց, որ այդ խումբը կազմվել է Լյուդովիկոս XV-ի հրապարակում և Ռիշելյո փողոցի պուրակից այն կողմ չի անցել։

Ժամը տասի կողմերը մոտ քսան թագավորներ ու տիրակալ իշխաններ իրենց զորքերի գլուխն անցած քաղաք մտան Սեն-Դենի դարպասով։ Բոլոր պատշգամբները լեփ-լեցուն էին մարդկանցով. տիկնայք զմայլված էին այդ տեսարանից։ Թագավորների անցնելու ժամանակ նրանք հիացած թափահարում էին թաշկինակները. նրանցից ամեն մեկն ուզում էր տեսնել, իսկ թերևս նաև համբուրել Ալեքսանդր կայսրին։ Ես բարձրացա Նիկոլ ռեստորանի լայն պատշգամբը։ Տիկնայք հիանում էին դաշնակիցների քաջակորով տեսքով. նրանց ուրախությունն անսահման էր։

Համազգեստների խիստ բազմազանությամբ հանդերձ, դաշնակցային բոլոր զինվորները յուրայիններին ֆրանսիացիներից տարբերելու համար ձախ թևքին սպիտակ ժապավեն էին կրում։ Փարիզցիները որոշեցին, որ դա Բուրբոնների խորհրդանիշն է և անմիջապես իրենց ռոյալիստներ զգացին։

Այդ փայլուն զորքերի երթը տևեց չորս ժամից ավելի։ Սակայն ռոյալիզմի նշաններն առայժմ բուլվարով, Ռիշելյո, Սենտ-Օնորե

և Ֆոբուր-Սենտ-Օնորե փողոցներով կազմվող մեծ եռանկյունում էր երևում միայն։

Երեկոյան ժամը հինգին պ-ն դը Մորբեյլը, որն այժմ գտնվում է Անգլիայում, ժամանակին իրեն շնորհված Պատվո լեգիոնի շքանշանը կախեց իր ձիու ականջից և փորձեց պարանով գետին տապալել Վանդոմի հուշասյան վեր խոյացող արձանը*։ Շուրջը բավական շատ խուժան էր հավաքվել։ Այդ մարդկանցից մեկը մագրլցեց սյան վրա և սկսեց փայտով հարվածներ հասցնել վիթխարի արձանին։

ԳԼՈՒԽ LXIX

Ալեքսանդր կայսրը իջևանեց պ-ն դը Թալեյրանի մոտ։ Այդ աննշան հանգամանքը որոշեց Ֆրանսիայի ճակատագիրը[1]։ Դա վճռական եղավ։ Պ-ն ...-ը փողոցում դիմեց ռուսական կայսրին՝ խնդրելով Ֆրանսիային վերադարձնել նրա օրինական տիրակալներին. նա ստացավ բավական անորոշ պատասխան։ Նույն անձնավորությունը, դարձյալ փողոցում, այդ նույն խնդրանքով դիմեց մի քանի գեներալների. նրանց պատասխաններն ավելի մշուշոտ էին։ Ոչ ոք չէր մտածում Բուրբոնների մասին, ոչ ոք չէր ցանկանում նրանց գահակալումը. նրանք անծանոթներ էին։ Հարկ է հիշատակել մի փոքրիկ խարդավանքի մասին։ Համարձակությունից ոչ զուրկ մի քանի հնարամիտ մարդիկ որոշեցին, որ այդ իրարանցման ժամանակ կարելի է, թերևս, մինիստրություն կամ դրամական առատ պարգև վաստակել։ Նրանք կախագան չհանվեցին. հաջողության հասան, բայց չստացան ո՛չ մինիստրություն, ո՛չ էլ պարգև։

Շարժվելով դեպի Ֆրանսիայի խորքերը, դաշնակիցներն իրենց բավական մոլորված էին զգում. նրանց գրեթե շարունակ թվում էր, թե ծուղակի մեջ են ընկել։ Քանի որ, ի դժբախտություն Եվրոպայի, դաշնակիցների խորաթափանցությունը չէր համապատասխանում նրանց հաջողությանը, նրանք ընկան առաջին բանսարկուների ձեռքը, որոնց գլխովն անցավ ծածկակառք նստել և գնալ նրանց գլխավոր բնակատեղին։ Պ-ն [դը Վիտրոլը]* առաջինն էր, որ այնտեղ ներկայացավ աբբա Սկապենի* հավատարմագրերով։ Դրանք աղդարարում էին, որ խոսում են Ֆրանսիայի անունից, և որ Ֆրանսիան ցանկանում է Բուրբոնների վերադարձը։ Այդ անձանց լկտիությունը բավական շատ զվարճացրեց դաշնակից զորքերի գեներալներին։ Դաշնակիցները, որքան էլ որ պարզամիտ լինեին, այնուամենայնիվ, որոշ չափով զգացին նման հավակնության ծիծաղելիությունը։

Պ-ն դը Թալեյրանն ատում էր Նապոլեոնին, որն իրենից խլել էր մինիստրությունը, որին ինքն ընտելացել էր։ Նրան բախտ վիճակվեց հյուրընկալություն ցույց տալ միապետին, որը մի ամբողջ ամիս Ֆրանսիայի տիրակալն էր ու օրենսդիրը։ Նրան իր կողմը գրավելու համար, միջոցների մեջ ոչ մի խտրություն չդնելով, նա ասպարեզ հանեց աբբա Սկապենին և մյուս բանսարկուներին, որոնք հանդես էին գալիս որպես ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչներ։

Հարկ է ասել, որ այն բոլոր միջոցները, որ գործադրում էին այդ բանսարկուները, չափազանց խղճուկ էին։ Դրանք գերազանց դարձան երկու օր առաջ կատարված հրեշավոր սխալի հետևանքով։ Կայսրուհի Մարի-Լուիզին և նրա որդուն տարան Փարիզից։ Եթե Նապոլեոնի կինը մայրաքաղաքում մնար, Ալեքսանդր կայսրին կառաջարկեր զբաղեցնել Տյուիլրի պալատի հարկաբաժինները, և իշխան Շ[վարցենբերգի]* կարծիքն անխուսափելիորեն կհաղթեր։

ԳԼՈՒԽ LXX

Մարտի 30-ին, այն ժամանակ, երբ Փարիզի բնակչության կեսը գլուխը կորցրել էր թնդանոթների որոտից, Նապոլեոնի ողորմելի մինիստրները Ժոզեֆ թագավորի գլխավորությամբ լիակատար մոլորության մեջ ընկան։

Ժոզեֆն իրեն անշնչելի խայտառակությամբ պատեց՝ իր փախուստից անմիջապես առաջ ամենուր փակցված կոչերում հայտարարելով, որ ինքը չի հեռանա Փարիզից։ Կոմս Ռենիո դը Սեն-Ժան-դ'Անժելին է՛լ ավելի սաստկացրեց այդ խայտառակությունը։ Ինչ վերաբերում է մինիստրներին, ապա նրանք, անտարակույս, կկարողանային որոշ եռանդ դրսևորել, քանի որ բոլորի հայացքները նրանց էին ուղղված, իսկ նրանք խելոք մարդիկ էին.

[1] Ամենայն հավանականությամբ՝ նաև Եվրոպայի, ընդհուպ մինչև 1838 թվականը։

բայց այն վախը, որ տիրակալն իրենց կղզի պաշտոններից ու կվոնդի, եթե իրենք վտանգի առկայությունը հաստատող գեթ մի բան արտասանեն, նրանց բոլորին Կասանդրոսներ էր դարձրել։ Նրանց բոլորի մտքերն ուղղված էին ոչ թե դեպի գործողություն, այլ դեպի վերամբարձ կոչեր կազմելը, որոնց լեզուն, որքան բռնակալը մոտենում էր իր կործանմանը, այնքան ավելի ու ավելի ամբարտավան էր դառնում։

Մարտի 30-ի առավոտյան մինիստրները հավաքվեցին Մոնմարտրում. այդ խորհրդակցության հետևանքով նրանք կարգադրեցին այնտեղ տանել տասներկուֆունտանոց թնդանոթներ՝ տասներկուֆունտանոց արկերով[1]։ Վերջիվերջո կայսեր հրամանով նրանք բոլորն ամենայն փութով մեկնեցին Բլուա։ Եթե Կառնոն, կոմս Լապարանը, Տիբոդոն, Բուասսի դ'Անգլան, կոմս Լոբոն և մարշալ Նեյը այդ մինիստրության մեջ լինեին՝ մի քիչ այլ կերպ կվարվեին։

ԳԼՈՒԽ LXXI

Բուլվարներով հաղթական երթով անցնելուց հետո, ռուսական կայսրը, պրուսական թագավորը և Շվարցենբերգի իշխանը մի քանի ժամ անցկացրին Ելիսեյան դաշտերում, որտեղով այդ ժամանակ անցնում էին դաշնակցային զորքերը։ Ապա օգոստոսափառ անձինք ուղևորվեցին պ-ն դը Թալեյրանի մոտ՝ Տյուիլրիի պալատի մոտերքում գտնվող Սեն-Ֆլորանտեն փողոցը։ Այնտեղ նրանք հյուրասրահում գտան այն մարդկանց, որոնց մասին մենք արդեն հիշատակեցինք։ Շվարցենբերգի իշխանը լիազորված էր ամեն ինչի համաձայնվել։ Երկու թագավորն էլ հասկացնել տվեցին, որ կվերականգնեն նախկին դինաստիան, եթե ֆրանսիացիների զգալի մեծամասնությունը և զորքն այդ ցանկանան։ Սկսեցին խորհրդակցել։ Պնդում են, թե իբր նորին մեծություն Ալեքսանդր կայսրը հայտարարել է, որ իր կարծիքով կա երեք հնարավորություն.

1) հաշտություն կնքել Նապոլեոնի հետ՝ ձևակերպելով պատշաճ երաշխիքներով.

2) խնամակալություն սահմանել և կայսր հռչակել Նապոլեոն II-ին.

1 Այդ փաստն ինձ այնքան էլ արժանահավատ չի թվում։

3) կանչել Բուրբոններին[1]։

Դաշնակցային միապետների հետ նիստ անելու պատիվն ունեցող մարդիկ իրենք իրենց ասացին. «Եթե մենք նպաստենք Նապոլեոնի հետ հաշտություն կնքելուն, իսկ նա չէ՞ որ արդեն որոշակի կարծիք է կազմել մեր մասին, մենք կմնանք նույնը, ինչ հիմա ենք, և, թերևս, նա մեզ նույնիսկ կկախի. իսկ եթե մենք նրանց խնդրենք վերադարձնել մի միապետի, որը բացակայել է քսան տարի և որի համար հեշտ չի լինի գործերը կառավարել, այդ միապետը մեզ առաջին մինիստրներ կդարձնի»։ Դաշնակցային թագավորները չէին կարող պատկերացնել, թե իրենց սրտերը համակած առաքինությունները որքա՜ն խորթ են այդ ֆրանսիացիներին։ Նրանք հավատացին այն հայտարարություններին, որով սրանք արտահայտում էին իրենց տածած բուռն սերն առ հայրենիքը, մի սրբազան անուն, որն այդ ողորմելի փառամոլները, այնքան հաճախ կրկնելով, ձանձրացրել էին իրենց օգոստոսափառ ունկնդիրներին։

Երկու ժամ տևած քննարկումից հետո Ալեքսանդր կայսրն ասաց. «Լա՜վ։ Ես հայտարարում եմ, որ այլևս բանակցություններ չեմ վարի Նապոլեոն կայսեր հետ»։ Տպարանատեր Միշո եղբայրները, որոնք միաժամանակ Պետական խորհրդի անդամներ էին, շտապեցին թռուցիկներ տպագրել, որոնցով այնուհետև ծածկվեցին Փարիզի բոլոր պատերը։

. . . . . .

Նրանք, որոնց զարմանքը չէր զրկել սառնասրտությունից, նշեցին, որ այդ թռուցիկը Հռոմի թագավորին չէր զրկում գահի իրավունքից[2]։

Ինչո՞ւ, իրենք իրենց հարցնում էին այդ անհանգիստ մարդիկ,

1 Այդ հայտարարության առթիվ «ժամանակակիցների կենսագրություններում» ասված է, որ Ալեքսանդրը պարտավորվեց ճանաչել այն սահմանադրությունը, որը ֆրանսիական ազգն ինքը կտա իրեն, և ապահովել դրա ընդունումը։ Այս օրինակը, ինչպես նաև դրան վերաբերող՝ փարիզյան կապիտուլյացիայի հոդվածը ցույց է տալիս, որ միապետի խոստումներին ապավինող ժողովուրդն անխոհեմ է։ Եթե Ալեքսանդր կայսրն ապահովեր Սենատի մշակած սահմանադրության ընդունումը, ապա չէր լինի այն իրարանցումը, որը պատահարար ավարտվեց Վաթերլոոյի մոտ։

2 Դը Պրատ, էջ 69։

Եղուիյուն չկրեցին հրավիրել Օրենսդրական կորպուս, որը վերջին հաշվով ամեն մի օրինական իշխանության աղբյուրն է և աղգի լավագույն մարդկանցից է բաղկացած, ինչպես նաև Սենատ, որը եթե նույնիսկ սխալվում էլ էր, ապա ոչ թե ըմբռնման պակասի, այլ եսամոլության առատության պատճառով։ Միատեղ հավաքված վաթսուն եսամոլները միշտ ավելի շատ ամոթխածություն են դրսևորում, քան վեցը։ Ասենք, Սենատում, հավանաբար, ընդամենը տասը իսկական քաղաքացի կար։ Այն, ինչ պետք է խորհրդակցության նյութ լիներ, դատարկ ձևականություն դարձրին. այստեղից էլ՝ այն կամպանիան, որն ավարտվեց Վաթերլոոյի ճակատամարտով։

Եթե Նապոլեոնը, բռնակալի քմայք դրսևորելով, չարձակեր Օրենսդրական կորպուսը, այն, ինչ պատահեց, տեղի չէր ունենա։ Եթե պարոնայք Լենի* և Ֆլոժերգի* վարմունքի շնորհիվ դրանից քիչ առաջ փառաբանված Օրենսդրական կորպուսը նիստեր գումարեր, Ֆրանսիայի բախտը որոշող իմաստուն միապետը, անտարակույս, կկամենար ծանոթանալ նրա կարծիքի հետ։

ԳԼՈՒԽ LXXII

Իմանալով հակառակորդի անսպասելի զորաշարժի մասին, Նապոլեոնը շտապեց Փարիզ։ Մարտի 30-ին, կեսգիշերի մոտերքը, նա Ֆոնտենբլոյից հետո կեսճանապարհին Էսսոնում հանդիպեց իր գվարդիայի ամենաքաջ հրամանատարներից մեկին (գեներալ Կյուրիալին), որը նրան տեղեկացրեց ճակատամարտի ճակատագրական ելքի լուրը։ «Դուք ձեզ վախկոտի նման պահեցիք»։ «Ձերդ մեծություն, այն զորքերը, որ գրոհեցին, թվով երեք անգամ գերազանցում էին մեզ, և բացի այդ, Փարիզի տեսքը ոգևորում էր նրանց։ Ձերդ մեծության զորքերը, որքան հնարավոր է, քաջաբար մարտնչեցին»։ Նապոլեոնը նրան ոչ մի խոսք չասաց և կարգադրեց կառապանին ետ դառնալ դեպի Ֆոնտենբլո։ Այնտեղ նա հավաքեց իր ուժերը։

Ապրիլի 2-ին Նապոլեոնն անցկացրեց Մարմոնի՝ Ռագուզի դքսի կորպուսի զորատեսը, որը մարտի 31-ին դուրս էր եկել Փարիզից և ճամբար դրել Էսսոնում։ Այդ կորպուսը Նապոլեոնյան բանակի ավանգարդն էր և իր թվով կազմում էր մոտավորապես նրա մեկ երրորդը։ Մարմոնը Նապոլեոնին հավաստիացրեց իր

զորքերի՝ գայթակղությանը հիրավի անմատչելի մշտական նվիրվածությունը, բայց մոռացավ երաշխավորել նրանց հրամանատարի համար։ Նապոլեոնը ցանկանում էր առաջ շարժվել դեպի Փարիզ և գրոհել դաշնակիցների վրա։ Ատիճանաբար նրան լքեց իր ծառաների մեծ մասը, մասնավորապես նշանավոր դուքսը, որի դավաճանության վերաբերյալ նա շատ ուրախ կատակում էր Բասսանի դքսի հետ։ Վերջիվերջո Նապոլեոնը հավաքեց ռազմական խորհուրդ և, առաջին անգամ ուշադիր լսելով մարշալ Նեյին, Վիշենցայի դքսին և իր ծառաներից ամենանվիրվածներին, որոնք պատմեցին այն ընդհանուր զժգոհության մասին, որ ամբողջ Ֆրանսիայում առաջացրել է հաշտության կնքման նրա մերժումը, հրաժարվեց գահից հօգուտ իր որդու, իսկ ապրիլի 4-ին Նեյին, Մակդոնալդին, Կոլենկուրին ուղարկեց այդ առաջարկը հայտնելու Ալեքսանդր կայսրին։

ԳԼՈՒԽ LXXIII

ՄԱՐՄՈՆ[1]

Հասնելով ֆրանսիական բանակի առաջավոր պոստերին, գեներալները կանգ առան, որպեսզի մարշալ Մարմոնին ներկայացնեն իրենց պահպանագրերը, որոնց վրա նա պետք է վիզա դներ, և նրան տեղեկացրին իրենց ուղևորության նպատակի մասին։ Նա, կարծես, շփոթվեց և ատամները սեղմած փնթփնթաց այն առաջարկների մասին, որ իրեն արել է Շվարցենբերգի իշխանը, և որոնք ինքը, ըստ երևույթին, անուշադիր չի թողել։ Սակայն, ավելացրեց նա՝ դիմելով իր խոսքերից ապշած պատվիրակներին, այն, ինչ ինքն այժմ իմացավ, փոխում է իրավիճակը, և ինքը կդադարեցնի իր սեպարատ բանակցությունները։ Լռություն տիրեց. շուտով մարշալներից մեկն այն ընդհատեց՝ ասելով, որ շատ ավելի հեշտ կլիներ, որ ինքը՝ Մարմոնը, միանա իրենց, և Փարիզում միասին վարեն հանձնարարված բանակցությունները։ Եվ իրոք, Մարմոնը գնաց նրանց հետ։ Բայց ի՞նչ նպատակներով։

---

[1] Այս գլուխը նույնպես բառացի թարգմանված է «Edinburgh Review»-ի № 54-ից։ Այն անձը, որին վերագրվում է այնտեղ նկարագրված արարքի գաղը, անտարակույս, ասելիք ունի իրեն արդարացնելու համար։

Դա պարզ դարձավ նրան վստահված կորպուսի հետագա տեղաշարժերից։

Մարշալները նրան մենակ թողեցին Շվարցենբերգի իշխանի հետ, իսկ իրենք գնացին Ալեքսանդր կայսեր մոտ՝ կատարելու հանձնարարությունը։ Նա նրանց ուղարկեց Սենատ։ Ալեքսանդրը դեռ վերջնական որոշում չէր ընդունել և չէր մտածում Բուրբոնների մասին։ Նա չէր հասկանում, որ ընկել է երկու բանսարկուի ձեռքը, որոնցից հատկապես մեկը՝ Թալեյրանը, մտածում էր միայն այն մասին, թե ինչպես լուծի իր վրեժը[1]։

Երբ մարշալներին մինչև բանակի առաջավոր պոստերն ուղեկցող սպան, Ֆոնտենբլո վերադառնալով, զեկուցեց, որ Մարմոնը պատվիրակների հետ ուղևորվել է Փարիզ, և որ ինքը նրան տեսել է նրանց ծածկակառքի խորքում պահ մտած, բոլորն ապշել էին, իսկ ոմանք նույնիսկ կասկածանք արտահայտեցին։ Բայց Նապոլեոնը՝ իր անփոփոխ հավատով նրանց նկատմամբ, ում ինքը բարեկամ էր համարում, պատասխանեց, որ եթե Մարմոնը գնացել է պատվիրակների հետ, ապա միայն այն նպատակով (ինքը դրանում համոզված է), որ ուժերը ներածին չափ ծառայություն մատուցի իրեն։ Պատվիրակների բացակայությամբ Ֆոնտենբլոյում ռազմական խորհուրդ գումարվեց՝ բանակի բոլոր գեներալների մասնակցությամբ։ Հարկավոր էր որոշել այն հարցը, թե ինչ էր պետք ձեռնարկել, եթե մարշալների առաջարկները մերժվեն։ Մյուսների հետ հրավիրվել էր նաև դիվիզիայի գեներալ Սուամը*, որը Մարմոնի բացակայությամբ ստանձնել էր նրա կորպուսի հրամանատարությունը։ Իմանալով Մարմոնի՝ հակառակորդի հետ ունեցած գաղտնի հարաբերությունների մասին, նա ենթադրեց, որ ամեն ինչ բացահայտվել է, և հենց որ Ֆոնտենբլոգա, ինքը կգնդակահարվի։ Այդ պատճառով էլ նա, փոխանակ Ֆոնտենբլո ներկայանալու, ինչպես հրամայված էր, ապրիլի 5-ի գիշերն իր կորպուսն առաջ շարժեց դեպի Վերսալի մերձակայքը։ Դրանով իսկ նա իրեն հանձնեց այդ քաղաքն զբաղեցնող դաշնակիցների իշխանությանը և Ֆոնտենբլոյում գտնվող զորքերը թողեց առանց առաջապահ ջոկատների։ Սուամի զինվորները, չիմանալով, թե նա ինչպիսի հրահանգներ է ստացել, դյուրահավատությամբ հնազանդվում էին նրան։ Միայն հաջորդ առավոտյան նրանք սարսափահար տեսան, թե ինչպիսի ծուղակի մեջ է նա գցել իրենց։ Նրանք ցանկացան կոտորել իրենց պետերին, և չի կարելի չխոստովանել, որ դրանով օգտակար օրինակ ցույց կտային աշխարհին։ Եթե նրանց գնդապետներից և գեներալներից որևէ մեկն օժտված լիներ ոգու արիության գեթ նվազագույն մասնիկով, որը մի ժամանակ սովորական է եղել հանրապետության զորքերում, կսպաներ Սուամին և կորպուսը ետ կբերեր Էսսոն։ Հազիվ թե հարկ կա բացատրելու, որ այդքան տագնապալի պահին Մարմոնի կորպուսի անձնատուր լինելը որոշեց մարշալներին հանձնարարված բանակցությունների բախտը։ Զրկվելով իր փոքրաթիվ ուժերի մեկ երրորդից, Նապոլեոնը զգաստ վախ ներշնչել դաշնակիցներին։ Ապրիլի 11-ին Ֆոնտենբլոյում համաձայնություն կնքվեց։

Մենք այս մանրամասնությունների վրա կանգ առանք, որովհետև մարշալ Մարմոնի դավաճանությունն իր բարեկամի ու բարերարի նկատմամբ ըստ արժանվույն չի գնահատվել։ Հատուկ ուշադրության են արժանի ոչ թե Փարիզի նրա պաշտպանությունը և ոչ էլ նրա անձնատուր լինելը Փարիզում, այլ այն հետագա գործողությունները, որոնց շնորհիվ Մարմոնի անունը հայտնի կդառնա հեռավոր սերունդներին։

[1] 1814 թվականին տեղի ունեցած իրադարձությունների ճշմարտացի նկարագրությունը տե՛ս պ-ն դը Պրադտի մոտ։

ԳԼՈՒԽ LXXIV

Երբ պ-ն դը Թ[ալեյրանին] հաջողվեց համոզել դաշնակից միապետներին, թե ամբողջ Ֆրանսիան պահանջում է Բուրբոնների վերահաստատումը, հաջորդ օրը նա ներկայացավ Սենատ, որն իր սովորական փոքրոգությամբ նշանակեց իրեն առաջարկված ժամանակավոր կառավարությունը։

Ապրիլի 2-ին Սենատը գահընկեց արեց Նապոլեոնին. 3-ին Օրլեանդրական կորպուսը միացավ Սենատի որոշմանը։

Ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը միապետները հայտարարեցին, թե իրենք չեն ընդունում կայսեր առաջին հրաժարականը, որը հրաժարվել էր գահից՝ հօգուտ իր որդու։ Ալեքսանդր կայսրը հանձնարարեց հայտնել Նապոլեոնին, որ նրան ու նրա ընտանիքին պատրաստ են կալվածք հատկացնել, ուր նրանք կարող են գնալ, և որ նրա կայսերական տիտղոսը կպահպանվի։

ԳԼՈՒԽ LXXV

Կարճ ժամանակով Նապոլեոնին թողնենք Էլբա կղզում։ Իրադարձությունները շուտով մեզ կստիպեն վերադառնալ այնտեղ։

Ժամանակավոր կառավարությունը, ես կարծում եմ, միապետների նկատմամբ տածած հարգանքից, որոնք ընտրել էին սպիտակ կոկարդը, արգելեց եռագույն կոկարդը և կարգադրեց կրել սպիտակը։ «Հիանալի՛,— ասաց այն ժամանակ դեռևս Ֆոնտենբլոյում գտնվող Նապոլեոնը,— ահա պատրաստի նշան իմ կողմնակիցների համար, եթե նրանք երբևիցե նորից ոգի առնեն»։ Բանակը չափազանց դժգոհ էր։

Այդ միջոցառումը կարող էր բնաբան ծառայել դրանից անմիջապես հետո հաստատված կառավարման համար։ Դա առավել քան անիմաստ էր, քանի որ շատ հարմար պատրվակ կար. Լյուդովիկոս XVIII-ը, որն այն տարիներին Թագավորի եղբայրներից ավագի իրավունքով կրում էր Monsieur տիտղոսը, եռագույն կոկարդ է կրել 1789 թվականի հուլիսի 11-ից մինչև 1792 թվականի մայիսի 21-ը[1]։

Սենատը սահմանադրություն մշակեց, որն իրենից ժողովրդի և մեկ անձի միջև կնքված պայմանագիր էր ներկայացնում։ Դրանով գահ կանչվեց Լյուդովիկոս-Ստանիսլավ-Քսավիեն։ Այդ տիրակալը, որն ամեն տեսակ առաքինության տիպար էր, ժամանեց Սենտ-Ուան։ Ի դժբախտություն մեզ, նա չհանդգնեց վստահել իր սեփական, այնքան խորունկ բանականությանը[2]։ Նա հարկ համարեց իրեն շրջապատել մարդկանցով, որոնք գիտեին Ֆրանսիան։ Բոլորի նման, նա բարձր էր գնահատում Օտրանտի դքսի և Բենեվենտի իշխանի ընդունակությունները։ Բայց իրեն հատուկ մեծահոգությամբ նա մոռացել էր այն մասին, որ ազնվությունն այդ մարդկանց բնավորության բնորոշ գիծը չէ։ Իսկ նրանք իրենք իրենց ասացին. «Աներևակայելի է, որ Թագավորն առանց մեզ յոլա գնա։ Թող փորձի որպես սկիզբ ինքնուրույն կառավարել. մի տարուց հետո մենք առաջին մինիստրներ կլինենք»։ Միայն մի հնարավորություն կար, թե նրանց հաշիվը չի արդարանա, և այդ հնարավորությունը ներկայացավ երկու տարի անց. Թագավորը գտավ նրանցից ավելի շնորհալի մի երիտասարդի, որին երևելի մինիստր դարձրեց։

1814 թվականին, լինելով մինչև ուղն ու ծուծը այլասերված մի մարդ՝ սա, օգտվելով Թագավորի վստահությունից, այնպիսի ծիծաղելի մինիստրներ պարգևեց Ֆրանսիային, որպիսիք նա երկար տարիներ ի վեր չէր տեսել։ Այսպես, օրինակ, ներքին գործերի մինիստրությունը վստահվեց մի մարդու, որն ավելի քաղաքավարի էր, քան Նապոլեոնի մի քիչ կոպտալուն մինիստրները միասին վերցրած, բայց որը հաստատապես համոզված էր, որ ապրել ներքին գործերի մինիստրի առանձնատանը և հրավերքճաշկերույթներ տալ, նշանակում է գլխավորել այդ մինիստրությունը։ Հեղափոխությունն իր բոլոր փուլերում չի տեսել ավելի աղքատիմաց մի բան, քան մինիստրների այդ կաբինետը[1]։ Եթե գոնե մի քիչ եռանդ ունենային, նրանք չարիք կգործեին. ըստ երևույթին նրանք կամազուրկ չէին, բայց անզոր էին[2]։ Թագավորն իր մեծ իմաստությամբ տառապում էր մինիստրների անգործությունից։ Նա այնքան լավ էր հասկանում նրանց մտավոր ողորմելիությունը, որ նրանցից մեկին հրամայեց իրեն բերել «Ժամանակակիցների կենսագրությունները» և ոչ ոքի ոչ մի պաշտոնի չէր նշանակում՝ առանց նախապես ծանոթանալու այդ տեղեկատուի համապատասխան հոդվածին[3]։

ԳԼՈՒԽ LXXVI

Մենք մեզ թույլ կտանք որոշ չափով ազատ խոսելու մինիստրների այդ կաբինետի որոշ սխալների մասին։ Համաձայն խարտիայի, ինչպես նաև մեր սրտերի կամքով, Թագավորն անձեռնմխելի է. և դա գլխավորապես այն պատճառով, որ պատասխանատվությունն ընկած է նրա մինիստրների վրա։ Թագավորը Ֆրանսիայում դեռ ո՛չ մարդկանց գիտեր, ո՛չ էլ գործերի վիճակը։ 1818 թվականի նրա կառավարումը ցույց է տալիս, թե ինչ է ի վիճակի կատարելու նրա մեծ իմաստությունը, երբ կուրությամբ

---

1 Հոբհաուզ հ. I, էջ 91։

2 Միտումնավոր պարզամիտ ոճ։

1 Ո՞վ է դա ասել։ Հորհաուզը։ Ո՛չ, չեմ հիշում, թե հատկապես ով։

2 Դը Սալ, I, 127։ Երբ ժողովուրդները որևէ դեր են խաղում հասարակական գործերում, բոլոր այդ սալոնային գլուխները չեն իշխում իրադարձություններին։ Հարկավոր են սկզբունքային մարդիկ։

3 Said by Doligny (Դոլինյիի խոսքերը)։

տառապող խորհրդականներն այն չեն ուզում կեղծ հունով։

Լյուդովիկոս XVIII-ը ժամանեց Սենտ-Ուան[1]։ Նա պետք է անվերապահորեն ընդուներ Սենատի մշակած սահմանադրությունը։ Քանի որ Բոնապարտը, բռնակալություն հաստատելով, դրանով իսկ կարծես հրաժարվել էր հեղափոխության զավակի կոչումից, Լյուդովիկոսի համար բարենպաստ առիթ ներկայացավ պճնվել այդ տիտղոսով։ Այն քայլը, որի մասին է խոսքը, այն ժամանակ կվերացներ բոլոր դժվարությունները և չէր խանգարի նրա երրորդ կամ չորրորդ փոխանորդին, հենց որ վտանգն անցներ, իրեն հորջորջելու «թագավոր՝ աստծո ողորմածությամբ» և խոսելու «օրինական» դինաստիայի մասին։ Իսկ ինչ իրեն՝ թագավորին է վերաբերում, ապա նրա թագավորությունը երջանիկ ու հանգիստ կանցներ, իսկ Բոնապարտը բոլորովին կմոռացվեր։

Արքա դը Մոնտեսքյուն նորին մեծությանը զեկուցագիր ներկայացրեց, որի մեջ, խոսելով սահմանադրության ներածական հոդվածի մասին, հայտարարում էր. «Անտարակույս, հարկավոր է ասել. Ֆրանսիայի և Նավարրայի թագավոր. ես նույնիսկ ենթադրում եմ, որ հարկավոր է այս ամենը թագավորական հրովարտակ կոչել»։

Հունիսի 14-ին սահմանադրությունը ներկայացվեց Օրենսդրական կորպուսի պալատում հավաքված երկու պալատներին։ Կանցլերը՝ մինիստրներից ամենածիծաղելին, ազգի ներկայացուցիչներին հայտարարեց, որ «անցել է մի քանի տարի այն պահից, ինչ աստվածային նախախնամությունն իրենց թագավորին բարձրացրել է իր նախնիների գահին..., որ Ֆրանսիայի թագավորության նկատմամբ իր ժառանգական իրավունքների լիակատար տերը լինելով, նա չի ուզում աստծուց և նախնիներից ստացած իշխանությունն իրականացնել այլ կերպ, քան սեփական կամքով որոշակի սահման դնելով իր հզորությանը..., որ, թեև ողջ իշխանությունը Ֆրանսիայում կենտրոնացված է թագավորի անձնավորության մեջ, նորին մեծությունը ցանկանում է հետևել Լյուդովիկոս Հաստամարմնի, Ֆիլիպ Գեղեցիկի, Լյուդովիկոս XI-ի, Հենրիխ II-ի, Կարլոս IX*-ի ու Լյուդովիկոս XIV-ի օրինակին և փոփոխություններ մտցնել այդ իշխանությունից օգտվելու կարգի մեջ»։ Չի կարելի չխոստովանել, որ Կարլոս IX-ի և Լյուդովիկոս XIV-ի վկայակոչումը բավական զվարճալի էր։ Այնուհետև ցանկություն հայտնելով Ֆրանսիայի տարեգրությունից ջնջել այն ամենը, ինչ տեղի է ունեցել իր բացակայությամբ, թագավորը խոստանում էր սրբորեն պահպանել սահմանադրական խարտիան, որն ինքը «կամավոր կերպով, թագավորական իշխանության ազատ իրականացմամբ, իր ու իր հետնորդների անունից նվիրում ու շնորհում է իր հպատակներին»[1]։

Անհրաժեշտ է նշել, որ թագավորի խորհրդականները, նրան համոզելով Սենտ-Ուանում հրապարակված մանիֆեստով մերժել Սենատի մշակած սահմանադրությունը, նրա համար հեղինակեցին մի այլ սահմանադրության նախագիծ, որը նա խոստացավ պարգևել ժողովրդին։ Թագավորի՝ Փարիզ ժամանելուց հետո Վանդոմի հրապարակում գտնվող մինիստրական առանձնատնում հրավիրվեց հանձնաժողով՝ բաղկացած երեք տասնյակ սալոնային խելոքներից, ամենահարմարվող օրենսդիրներից, որպիսիներին կարողացել էին գտնել. նրանք այդ ամփոփիչ մասը բաժանեցին կետերի և պատրաստեցին խարտիա՝ նույնիսկ չկռահելով, թե հատկապես ինչ են գրում իրենք։ Այդ ողորմելի մարդկանցից ոչ մեկի մտքով չանցավ, որ իրենք հիանալի գործառք են նախապատրաստում Ֆրանսիան բաժան-բաժան անող կուսակցությունների միջև։ Թագավորը բաղմիցս նրանց խնդրել էր ձևակերպել Սենտ-Ուանի դեկլարացիայում իր կողմից տրված բոլոր խոստումները կատարելու պարտավորությունը։ Այդ մի կերպ թխված սահմանադրությանը նախորդեց կանցլերի իմաստուն ճառը, որից մեջբերումներ արվեցին վերևում։

Առաքինի Գրեգուարին, որն այն ժամանակ, երբ Ֆրանսիայի մայրաքաղաքը համակված էր թեթևամտության այդ նոպայով, հանդգնեց առաջադրել ազատության վերաբերյալ որոշ, ամբողջ Եվրոպայի կողմից ճանաչված ընդհանուր դրույթներ, գրողները մեղադրեցին այն բանում, որ ձգտում է անիշխանություն վերածնել։ Լամբրեխտսին* և Գարային*, որոնք առարկում էին արտակարգ շտապողականության դեմ, քամահրանքով մետաֆիզիկներ անվանեցին։ Բենժամեն Կոնստանին*, որը Ֆրանսիային սովորեցնում է ճիշտ մտածել, թախանձալից խորհուրդ տրվեց լռություն

1 Մնացածը ճշգրտորեն թարգմանված է Հոբհաուզի «Հարյուր օրվա պատմությունը» գրքից։

1 «Moniteur», 15 ապրիլի 1814 թ.։

պահպանել՝ առավել քան վայել մի օտարերկրացու, որը քիչ է տեղյակ մեր բարքերին և սովորույթներին։

Վերջապես, այդքան իմաստաբար պատրաստված այդ խարտիան ընթերցվեց երկու պալատներում, և նույնիսկ չի կարելի ասել, թե նրանց կողմից ընդունվել է։ Պալատները քվե կտային այն ամենին, ինչ որ նրանցից պահանջեին, նույնիսկ զորանին, քանզի այդպիսիք են մարդիկ Ֆրանսիայում։ Նման հանգամանքներում գիմադրությունը մեծամասնության նկատմամբ գնահատվում է որպես ծիծաղելի սնափառություն։ «Ֆրանսիայում կարևոր է վարվել այնպես, ինչպես մյուս բոլորը»։ Պանուրգյան հոտի* պատկերումը լիովին կարող էր մեր գերը դառնալ։

Այդ ձևականության անխոհեմ բացթողումը թագավորի իշխանությունը կդրկեր ամեն մի իսկական օրինականությունից[1]։ Ֆրանսիայում նույնիսկ կոլեջ հաճախող երեխաները հետևյալ կերպ են դատում. «Ամեն մի մարդ լիակատար և անսահմանափակ իշխանություն ունի ինքն իր նկատմամբ. նա կարող է այդ իշխանության մի մասը հանձնել ուրիշներին։ Քսանութ միլիոն մարդ չի կարող քվեարկել, բայց այդ քսանութ միլիոնը կարող է ընտրել հազար դեպուտատ, որոնք կքվեարկեն իրենց փոխարեն. հետևաբար, առանց ժողովրդական ներկայացուցիչների ժողովի ազատորեն ընդունած որոշման, Ֆրանսիայում չի կարող գոյություն ունենալ օրինական իշխանություն, այլ կարող է գոյություն ունենալ միայն առավել ուժեղի իշխանություն[2]»։

ԳԼՈՒԽ LXXVII

Բոլոր մինիստրների վարքագիծն այդ մակարդակից բարձր չէր։ Իշխանության ներկայացուցիչները, որոնց նրանք հանդգնեցին պաշտոնանկ անել, փոխարինվեցին ողորմելի կամ պախարակված մարդկանցով։ Շուտով բոլորն սկսեցին զարմանքով նկատել, որ Բուրբոնների կողմնակիցների թիվը օրեցօր պակասում է։ Մինիստրների գործած բազմաթիվ անխոհեմ արարքները ժողովրդին համոզեցին, որ թագավորը հոգու խորքում խարտիայի երդվյալ թշնամին է։ Այդ մինիստրները շարունակ վերհիշում էին Լյուդովիկոս XVI-ի արքունիքը և Տյուրգոյի ճակատագիրը։ Համոզված լինելով, որ թագավորական իշխանությունը նորից ամբողջ լիակատարությամբ կդրսևորի իրեն և առատորեն կպարգևատրի նրանց, ովքեր, «ծանր օրերին» պատվելով իրեն, կարողացան կռահել իր մտադրությունները, այդ ողորմելի մարդիկ իրենց բոլոր մտքերն ուղղեցին այն նպատակին, որ ստրկամտության մեջ մրցակցելով, ավելի բարձր աստիճանի հասնեն։

ԳԼՈՒԽ LXXVIII

Ինչ էլ որ այդ մասին ասեն Մոնտեսքյոն և մյուսները, գոյություն ունի միայն երկու տեսակ կառավարություն՝ ժողովրդական կառավարություն և հատուկ հիմքերի վրա հենվող կառավարություն։

Առաջին խմբին են պատկանում բոլոր այն կառավարությունները, որոնց հիմքում ընկած է այն սկզբունքը, որ բոլոր իրավունքները և ամբողջ իշխանությունը միշտ պատկանում են ազգին՝ ամբողջությամբ առած, կենտրոնացված են նրա մեջ, սկիզբ են առնում նրանից և գոյություն ունեն միայն նրա շնորհիվ ու նրա համար։

Երկրորդ խմբին մենք դասում ենք բոլոր այն կառավարությունները, ինչպիսիք էլ դրանք լինեն, որոնք հիմնվում են իրավունքների և իշխանության այլ աղբյուրների, քան ժողովրդի կամքը օրինական ճանաչելու վրա, ինչպես օրինակ՝ աստվածային իրավունքի, ծննդյան իրավունքի, ձևականորեն կնքված կամ ենթադրվող հասարակական դաշինքի վրա, որի օրոք երկու կողմերը պայմաններ են մշակում միմյանց խորթ երկու տերությունների նման[1]։

Չնայած մեր խարտիան իր էությամբ եղել է արատավոր, նույնիսկ չի եղել այն, ինչ 1688 թվականի անգլիական սահմանադրությունն էր, այսինքն՝ դաշինք ժողովրդի և մեկ մարդու միջև, այդ խարտիան կարող էր բոլորին բավարարել։ Ֆրանսիական ժողովուրդն իր մանկական միամտությամբ լուրջ բանի տեղ չէր դնի այն։ Ընդ որում, այդ խարտիան այնքան էլ վատը չէ, և, եթե երբևիցե այն սկսեն պահպանել, Ֆրանսիան շատ երջանիկ կլինի, ավելի երջանիկ, քան Անգլիան։ Մեր դարում չի կարելի վատ խարտիա

---

1 Ամենշտական գունավորում բազմազանության համար. ասենք, թեման ինքն է այդ պահանջում։

2 Is that took from Jefferson?

1 «Օրենքների ոգու մեկնաբանություններ», էջ 13—14, Լեժ. 1817։

կոչվել. մեզնից յուրաքանչյուրն ի վիճակի է կես ժամում նման մի հիանալի փաստաթուղթ գրելու։ Այն, ինչ Մոնտեսքյոյի ժամանակներում հանճարի գերագույն ջանք կլիներ, մեր օրերում ընդհանուր բան է։ Վերջապես, ամեն մի խարտիա լավ է, եթե միայն կատարվում է[1]։

Թագավորներից իմաստագույնի և լավագույնի գահը փոթորիկներից փրկելու համար բավական էր ժողովրդին համոզմունք ներշնչել, որ մտադիր են խարտիան պահպանել։ Բայց հոգևորականությունը և ազնվականությունը հնարավոր ամեն ինչ արեցին, որպեսզի թագավորին տարհամոզեն այն պահպանելու անհրաժեշտության մեջ։

Հարյուր հազար քահանա և հարյուր հիսուն հազար գաղափարած ազնվականներ, ինչպես մնացած ֆրանսիացիները, ենթակա էին լոկ ութ հիմարների հսկողությանը, որոնք միայն շքանշանի երկնագույն ժապավենի մասին էին մտածում։ Ազնվականները հավակնում էին և շարունակում էին հավակնել իրենց վերադարձնել հողերը։ Ինչը կարող էր ավելի հեշտ լինել, քան իրրև այդ հողերի արժեքի հատուցում՝ ռենտա նշանակել գանձարանից։ Դրանով իսկ այդ մարդիկ, որոնք սեփական կարծիք չունեին և ղեկավարվում էին միայն անձնական շահերի թելադրանքով, սերտորեն կապված կլինեին պետական վարկի ու խարտիայի հետ, որպես՝ ինչ-որ մի անխուսափելի չարիքի հետ։

Մինիստրները, որ իրենց գրած յուրաքանչյուր տողում և տված յուրաքանչյուր ճաշկերույթում աղավաղում էին խարտիայի ոգին, շուտով սկսեցին դրա մշտական փաստական խախտումներ թույլ տալ։ Ամեն անգամ, երբ մարշալ Նեյի կինը լինում էր արքունիքում, այնտեղից վերադառնում էր արտասվաթոր աչքերով[2]։

ԳԼՈՒԽ LXXIX

1. Խարտիայի պահպանած Պատժական օրենսգրքի 260-րդ հոդվածը բանտարկության և տուգանքի սպառնալիքով արգելում է ֆրանսիացիներին ստիպել՝ պահպանելու կրոնական տոներն ու կիրակնօրյա հանգիստը և դադարեցնելու աշխատանքն այդ օրերին։ Ոստիկանական հրամանը, ընդ որում՝ կազմված անմիտ արտահայտություններով, միանգամայն հակառակ բան էր պահանջում։ Այդ հրամանը բոլոր դավանանքի ֆրանսիացիներին պարտավորեցնում էր զարդարել իրենց տների ճակատները այն բոլոր փողոցներում, որտեղով անցնում էին «աստծո մարմնի» թափորները։

Անհապաղ սկսեցին կազմակերպել այդ թափորները, որոնք շուտով դարձան բոլոր կուսակցությունների ծաղրանքի առարկան։ Կաթոլիկական կրոնը Ֆրանսիայում ծաղրվելու է այնքան ժամանակ, քանի դեռ հնարավորություն չի ստանա բաշխելու շահավետ տեղերը։ Նրան դավանողները վաղուց են արդեն կորցրել հավատը։ Կրոնը Ֆրանսիայում զրկվել է ամեն տեսակ հեղինակությունից այն ժամանակից ի վեր, երբ աբբա Մորին* փորձեց այն օգտագործել ազնվականության արտոնությունները պաշտպանելու համար։

2. Հունիսի 10-ին, խարտիայի հրապարակումից վեց օր հետո, խարտիա, որը հաստատում էր մամուլի ազատությունը (հոդված 8), ներքին գործերի մինիստրի հրամանով վերահաստատվեց գրաքննությունը։ Ամենաանհեթեթն այն է, որ այդ հրամանը վերածվեց օրենքի։ Դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև որ կառավարությունը Ֆրանսիայում կսովորի մտածել ապագայի մասին։

3. Հունիսի 15-ին և հուլիսի 15-ին երկու հրաման հրապարակվեց թագավորական գվարդիայի հավաքագրման կարգի մասին, որոնք ոչ այլ ինչ էին, քան խարտիայի 12-րդ հոդվածի խախտում՝ ի վնաս բանակի։

4. Հունիսի 21-ի և հուլիսի 6-ի հրամաններով հաստատվեց Պետական խորհուրդ, որին, հակառակ 63-րդ հոդվածի, վերապահվեցին արտակարգ դատարանի ֆունկցիաներ։

5. Մայիսի 27-ին 15-րդ հոդվածը՝ ամենակարևորը, որն ազդարարում էր, թե օրենսդրական իշխանությունը պատկանում է թագավորին, պերերին և դեպուտատներին, խախտվեց աննշան առիթով՝ այն հարկի վերացման հրամանի հրապարակմամբ, որը սահմանվել էր XII տարվա վանտոզի 22-ի օրենքով[1]։

6. Դեկտեմբերի 16-ին իսկական զինվորական ծառայության

---

1 Բ[ենժամեն] Կոնստանի միտքը։

2 Մարշալ Նեյի հարցաքննությունը։

1 Հորհատուզ, հ. 1, էջ 63։

մեջ չգտնվող սպաները փոխադրվեցին կես դրույքի, որն ուղղակի հակասում էր 63-րդ հոդվածին։ Այդ միջոցառումը, թերևս, անհրաժեշտ էր, բայց հարկավոր էր համապատասխան օրենք նախապատրաստել, նախապատրաստել հոգու թրթիռով, ակնածանքով, մտցնել մեկ տարով։ Այդ պահից սկսած բանակը կորած էր Բուրբոնների համար։ Ֆրանսիայում յուրաքանչյուր տասը մարդուց ութը այս կամ այն ժամանակաշրջանում եղել էին պատերազմում, իսկ մյուս երկուսն իրենց սնապարծությունը նրանով են բավարարում, որ բաժանում են բանակում տիրող զգացումները։ Այդ տարիներին բերներերան դժգոհություն առաջացնող պատմություններ էին անցնում։ Դքսերից մեկը՝ թագավորող տան անդամը, հարցնում է սպային, թե ինչ արշավանքների է նա մասնակցել։ «Բոլորը»։ «Ի՞նչ պաշտոնով»։ «Իբրև կայսեր համհարզ»։ Դուքսը մեջքով շուռ է գալիս դեպի նա։ Մի այլ սպա նույն հարցին պատասխանում է, թե ինքը ծառայել է քսանհինգ տարի։ «Քսանհինգ տարվա ավազակությո՞ւն»։ Զորատեսերից մեկի ժամանակ դժգոհ մնացին գվարդիայից, և այդ փորձված, բազմաթիվ հաղթանակներով հռչակված մարտիկներին ասվեց, որ նրանց հարկավոր է Անգլիա ուղարկել՝ անգլիական թագավորի գվարդիայից սովորելու համար։

Շվեյցարիայից զինվորներ են կանչում Փարիզ, իսկ ֆրանսիացիներին փոխադրում կես դրույքի։ Վեց հարյուր ազնվականների, որոնց համար փարիզցիները հորինել էին հետո այնպես հրոչակ ստացած՝ «Լյուդովիկոս XIV-ի լարախաղացներ» մականունը, և կոլեջը նոր ավարտած նույնքան պատանյակների Ռիշելյոյի* հնարած՝ ծաղրածուի համազգեստ էին հագցրել ու հանձնարարել պահպանելու թագավորի անձը, որը, ըստ երևույթին, վախենում էր գվարդիայից։ Իսկ չէ որ հենց որ Փարիզում որևէ արտոնյալ կորպորացիա է հիմնվում՝ հանդուգն արարքներն անխուսափելի են դառնում, և հարկավոր է կարողանալ դրանք կանխել, ինչպես այդ անում էր Նապոլեոնը։ Մոնտոգիե սրճարանում տեղի ունեցած ընդհարումները վիրավորել էին ազգային հպարտությունը։

Կայսերական հին գվարդիան՝ այդ քաջարի զորքը, որին այնպի՞ս հեշտությամբ կարելի էր սիրաշահել, ամենանվիրական ձևով հեռացվեց մայրաքաղաքից. ռազմական մինիստր մարշալ Սուլտը կարգադրեց այն վերադարձնել Փարիզ. նոր հրամանով,

որը հազար անգամ ավելի վիրավորական էր, քան առաջինը, այդ կարգադրությունը չեղյալ հայտարարվեց, և գվարդիային կանգնեցրին կես ճանապարհին։ Շուանների՝ օտարերկրյա տերությունների հետ կապված այդ մարդկանց վրա ողորմածություններ տեղացին[1]։

Պատվո լեգիոնի շքանշանի ասպետների երեխաների որբանոցը վերացվեց, իսկ այնուհետև, է՛լ ավելի մեծ անհեթեթություն անելով, թուլակամությամբ այն վերականգնեցին։

Բացահայտ առևտուր են անում Պատվո լեգիոնի շքանշանով. դեռ ավելին, որպեսզի այն նսեմացնեն, շնորհում են այնպիսի մարդկանց, ովքեր ոչ մի ծառայություն չունեն հասարակության հանդեպ, օրինակ՝ Պալե-Ռուայալում օծանելիք վաճառողներին։ Բուրբոնների բանակի թիվը հազիվ ութսունչորս հազարի է հասնում, իսկ հրամանատարները հինգ հազար ծեր վտարանդիներ են ու պատանի, անբեղ ազնվականներ։

ԳԼՈՒԽ LXXX

Ահա խարտիայի ևս մի քանի խախտումներ.

7. Հուլիսի 30-ին հիմնվում է ռազմական դպրոց, որպեսզի ազնվականներին հնարավորություն տրվի օգտվելու այն արտոնություններից, որ նրանց տալիս էր 1751 թվականի հրամանը։

8. Կանցլերը սեփական իշխանությամբ հարկ նշանակեց դատավորների արտոնագրերի, հպատակագրերի և լրագրերի համար։

9. Խարտիայի բուն տեքստին հակառակ, կառավարությունը, երբ նրան չհաջողվեց անցկացնել վճռաբեկ դատարանի վերակառուցման վերաբերյալ օրենքը, այն վերակազմեց հրամանի միջոցով և հեռացրեց մեծ հարգանք վայելող մի քանի դեպուտատների. այս պահից ի վեր դատավորները ծախու դարձան։ Այդ դատարանը Ֆրանսիայում ապահովում է օրենքների պահպանումը. նա իրենից ներկայացնում է ներքին կառավարման սիստեմի շատ կարևոր լծակ և մինչև այն պահը, որի մասին է խոսքը, հիանալի էր կատարում իր խնդիրը։

---

1 Հորհաուզ, հ. 1, էջ 88։

ԳԼՈՒԽ LXXXI

Խարտիան, թեև այն կազմող անձինք դրա մասին չէին ենթադրել, բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում այն իսկական սահմանադրություն է, այլ կերպ ասած՝ օրենքներ կազմելու ուղեցույց, օրենք՝ օրենքների հրապարակման կարգի մասին. երկրորդում՝ խաղաղ գործարք է Ֆրանսիան բաժան-բաժան անող կուսակցությունների միջև։

10. Այդ երկրորդ մասի ամենակարևոր հոդվածը 11-րդ հոդվածն է, որն ազդարարում է. «Արգելվում է հետապնդել Ռեստավրացիայից առաջ եղած կարծիքների և քվեարկելու համար։ Անցյալի մոռացումը պատվիրվում է ինչպես դատարաններին, այնպես էլ բոլոր քաղաքացիներին[1]։

Քանի որ խոսքը ոչ լուրջ ու փառամոլ ժողովրդի մասին է, այդ հոդվածը մեկն է նրանցից, որոնք ամենից քիչ նշանակություն ունեին թագավորական իշխանության հեղինակության համար։ Ֆրանսիայում միշտ արհամարհում են նրանց, ովքեր շնորհաղուրկ են, և այդ հոդվածի պաշտպանությունից օգտվող անձինք կդրսևորեին իրենց որպես ամենաանամոթ շողոքորթներ։ Բայց մինիստրները նույնպիսի անհասկացողություն էին ցուցաբերում, ինչ որ ամբողջ ժողովուրդը։ Նրանք ցանկանում էին ինչ գնով էլ լինի հեռացնել վճռաբեկ ատյանի որոշ անդամների։ Միապետների պալատներում մարդիկ միշտ աշխատում են նախօրոք կատարել տիրակալի ենթադրած մտադրությունները[2]։

11. Այն ժամանակվա պարագլուխներին չճանաչող մարդկանց համար է՛լ ավելի զարմանալի հիմարություն էր Ակադեմիայից տասնհինգ անդամների վտարելը։ Այդ անշափ ծիծաղելի հեղաշրջումը նշանակալի հետևանքներ թողեց։ Այն շշմեցրեց ժողովրդին. դա մինչև պռունկը լցված բաժակի նախավերջին կաթիլն էր. Ֆրանսիական ժողովուրդը հենց հաջորդ օրը կքշեր Բուրբոններին, եթե կարողանար։ Ի՞նչ նշանակություն ուներ ինչպես Բուրբոննե-

[1] Համեմատեցեք ամենասիրելի կոչվող օրենքի հետ, որի համաձայն Լյուդովիկոս XVI-ի մահապատժի օգտին քվեարկած անձինք արտաքսվեցին Ֆրանսիայից։

[2] Մամուլի ազատությունը չեն սիրում, բայց չափազանց թույլ են, որպեսզի խոչընդոտեն դրան։ Կառավարության նկատմամբ հանդուգն դիրքի երևութականությունը որոշակի սրություն է տալիս «Դեղին թղուկ» լրագրին։

րի, այնպես էլ ֆրանսիացիների համար, թե Ակադեմիայի անդամների թվում եղել են կամ չեն եղել հետևյալ անձինք՝ Դյուփոնտ-Մորվոն*, Կառնոն, Մոնժը*, Նապոլեոն Բոնապարտը, Կամբասերեսը, Մեռլենը, Ռեդերերը*, Գարան, Սիեյեսը, կարդինալ Մորին, Լյուսիեն Բոնապարտը, Լականալը*, Գրեգուարը, Ժոզեֆ Բոնապարտը և Դավիդը*։

Այս բոլորի մեջ անհավանականն այն է, որ հեռացվածներին հաջողվեց փոխարինել ուրիշներով։ Գոնվեցին մարդիկ, որոնք համաձայնվեցին հրամանի հիման վրա դառնալ այն կորպորացիայի անդամ, որի ամբողջ ուժը հիմնված է հասարակական կարծիքի վրա։ Դ'Ալամբերի* և Դյուկլոյի* ժամանակներում դա չէր պատահի։ Իսկ դեռ զարմանում են, որ Փարիզում առավելագույն բարոյական անկումը գրողների մեջ է նկատվում[1]։

ԳԼՈՒԽ LXXXII

Լավ հայտնի է, թե Նապոլեոնի օրոք ինչ եղանակով էր կազմվում Օրենսդրական կորպուսը։ Սենատորները նշանակում էին մարդկանց, որոնց հովանավորում էին այդ սենատորների խոհարարուհիները։ Եվ, սակայն, այնքան մեծ էր այն եռանդը, որը ժողովրդին փառքի պաշտամունք էր ներշնչել, այնքան մեծ էր այդ ժողովրդի արհամարհանքը մանր վեճերի նկատմամբ, որ Ռեստավրացիայի ժամանակ նշանակված պալատներից ոչ մեկն այնպիսի հարգանք չուներ, ինչպես այն, որտեղ փայլում էին պարոնայք Դյուրբակը*, Լենեն, Բեդոկը*, Ռենուարը, Սյուարը*, Ֆլոժերգը։ Այդ պատվարժան մարդկանց ճառերը մխիթարանք էին ժողովրդի համար։ Այդ ժամանակ այն ամենը, ինչ առնչվում էր կառավարությանը, համակվում էր ստորությամբ։

Մոլի ռոյալիստները, ֆանատիկոս-վտարանդիները խարտիայի և ազատամիտ զաղափարների մասին սոսկ հիշատակելիս ժպտում էին զայրացուցիչ արհամարհանքով։ Նրանք մոռանում էին, որ իրենց ոտքի կանգնեցնող մարդը՝ մեծահոգի Ալեքսանդրը, համառորեն խորհուրդ էր տալիս Սենատին՝ Ֆրանսիային տալ ճաստա-

[1] Գրանում է այն բանի պատճառը, որ իրենց հարգող մարդիկ գժկամորեն են գրողներ դառնում և չեն ուզում իրենց անունը դնել իրենց գրքերի վրա։

Ես մեջ բերեցի տասնմեկ խախտում. «Edinburgh Review»-ի հաշվումներով, եթե չեմ սխալվում, գրանք տասնչորսն են կամ տասնհինգը։

ատուն և ազատամիտ կարգեր։ Ամենուրեք ծնունդ էին առնում անհամար տագնապալի լուրեր, որոնք ժողովրդին աղդարարում էին հին կարգերի շուտափույթ վերահաստատումը։

Թագավորի սիրեցյալ մինիստրները՝ պարոնայք Դ[ոմբրեյը], Ֆ[երրանը], Մ[ոնտեսքյուն], Բ[լական] ամեն առիթով հրապարակայնորեն գովաբանում էին բացարձակ միապետության սկզբունքները։ Նրանք, ի լուր ամենքի, ափսոսում էին հին Ֆրանսիայում գոյություն ունեցած կարգերը, որտեղ, իբր թե, առանց դասերի տարբերության, բոլոր սրտերում դրոշմված էին «աստված և թագավոր» բառերը[1]։

Անշուշտ, չէին մոռացվել նաև հավատարիմ ազնվականության նույնքան սրբազան իրավունքները։ Թերևս ոչ բոլորն են հիշում, որ այդ իրավունքներն ամենատարբեր տեսակի հարյուր քառասունչորս հարկերի մեջ էին[2]։ Վերջապես, ռազմական մինիստրը՝ Ֆելտրի դուքսը, որն աչքի չէր ընկել ոչ մի մարտական ծառայությամբ, համարձակվեց ամբիոնից հայտարարել՝ «Թագավորի կամքն օրենք է», և արժանացավ մարշալի կոչման։ Վերջիվերջո (ո՞վ կարող էր դա մտածել) պ-ն դը Շատոբրիանին ոչ բավականաչափ համոզված ռոյալիստ համարեցին։ Գեներալ Կառնոյի հոդվածին նրա պատասխանը այդ տեսակետից կտրուկ հարձակումների ենթարկվեց[3]։

ԳԼՈՒԽ LXXXIII

Հունիսի 4-ին պառլամենտի անդամները հավաքվեցին պ-ն Լեպելետիե դը Մորֆոնտենի մոտ[4] և ձևական բողոքագիր կազմեցին Խարտիայի դեմ։ Եվ նրանք ենթարկվեցին ամեն մի փոքրամասնության արդարացի բախտին՝ «Կա՛մ ենթարկվեք օրենքներին, կա՛մ էլ կորե՛ք այստեղից»[5]։ Կառավարությունը ձևացրեց, թե իբր նույնիսկ չի նկատել այդ ծիծաղելի բողոքագիրը. և անմիջապես ազնվականությունը մտադրվեց նման ձևով արտահայտել իր դժգոհությունը։ Ֆրանսիայում, որտեղ ամեն մեկը ձգտում է գունդ ստեղծել, որպեսզի ինքը հրամանատար դառնա, նման գործողությունները որոշակի նշանակություն ունեն։ Դրանք գավառական դավադրություններ են։ Քաղաքական հոտառությամբ օժտված միապետը խիստ կպատժեր նրանց։

Մարտի 5-ին Սավնեում (Ներքին Լուարի դեպարտամենտ) մի նշանավոր քարոզ կարդացվեց. դրա մեջ հավատացյալներին ասվում էր, որ նրանք, ովքեր ազնվականներին և վանականության ներկայացուցիչ քահանաներին չեն վերադարձնի նրանց հողերը, Հեզաբելի ճակատագրին կարժանանան. նրանց կհոշոտեն շները։

Հանրագրերի թվում, որոնք Պալատը չցանկացավ քննարկել, կար մեկը, որի տակ գրեթե երեք հարյուր ստորագրություն էր դրված. նրանք, ովքեր այն ներկայացրել էին, բողոքում էին քահանաներից, որոնք հրաժարվում էին իրենց հաղորդություն տալ այն պատճառով, որ իրենք ազգային ունեցվածքի սեփականատերեր են։ Իսկ չէ որ ութ միլիոն ֆրանսիացիներ այդպիսի ունեցվածք ունեն, և այդ ութ միլիոնը ժողովրդի առավել եռանդուն մասն է։ Հոկտեմբեր ամսին արքունիքի առջև ստորաքարշություն անող որոշ լրագրեր հաղորդեցին, որ իբր Նեշատելի իշխանը Գրոբուայում, ի պատիվ թագավորի ու թագավորական ընտանիքի կազմակերպած տոնախմբության ժամանակ, մագաղաթի վրա գրված մի ակտ հրամցրեց մի ժամանակ ազգային ունեցվածքի կազմի մեջ մտնող այդ կալվածքի տնօրինման մասին։ Թագավորը, իբր, այդ ակտն իր մոտ էր պահել մոտ մի ժամ, իսկ հետո վերադարձրել էր մարշալին գթասիրտ խոսքերով՝ «Այս ունեցվածքը չէր կարող ավելի լավ տեր գտնել»։ Բերտիեն թագավորին անձամբ իր դժգոհությունն է արտահայտել այդ անմիտ հերյուրանքների առթիվ, բայց ասում են (թեև դժվար է դրան հավատալ), որ նա չկարողացավ թույլտվություն ստանալ դրանք մամուլում հերքելու համար։

Պ-ն Ֆերրանն առաջարկեց մի հույժ արդարացի օրենք հրապարակել չվաճառված հողերը վտարանդիներին վերադարձնելու մասին[1*]։

---

1 1814 թ. օգոստոսի 15-ին Փարիզի հոգևորականության կողմից թագավորին հանձնած ուղերձը։

2 Որոնցից մի քանիսը մարդկային ցեղի նկատմամբ ունեցած արհամարհանքը գուցակցում էին...

3 «Journal des Débats», հոկտեմբերի համարը։

4 Բառացի թարգմանված է Հորհաուպից, 2-րդ հրատ., հ. I, էջ 96։

5 Պալեյ։

1 Դեռ ավելին։ Օրենքի նախագծով նախատեսվում էր պետության կողմից ամենամյա ռենտա վճարել վտարանդիներին՝ յուրաքանչյուրին վեց հազար

Նա հանդգնեց ամբիոնից հայտարարել, որ «իրենց պարտքը կատարած անձինք պահպանել են հողի նկատմամբ ունեցած սրբազան և անկապտելի իրավունքները, որ նրանցից խլել էին հեղափոխական ցնցումները», և ս. Հոգու շքանշան ստացավ։

Այդ խոսքերն ստիպեցին բորբոքվելու ողջ Ֆրանսիային։ Մարդիկ, որոնք հանգիստ կապրեին և հնազանդություն կդրսևորեին ալժիրյան դեյի իշխանության ներքո, մոլեգնում են իրենց սեփականության դեմ լոկ անուղղակի սպառնալիք պարունակող առաջին իսկ բառից։

ԳԼՈՒԽ LXXXIV

Ժամանակն է վերադառնալ Էլբա կղզի։ Սափրվելիս՝ լրագրում կարդալով մինիստր Ֆերրանի արտասանած ճառը, Նապոլեոնը կանչեց գեներալ Բերտրանին* և նրան ասաց.

. . . . . .

ԳԼՈՒԽ LXXXV

Լեյբ-ուլանների գնդապետ բարոն Ժերմանովսկին հետևյալ կերպ է շարադրել իրադարձություններն իր պատվարժան բարեկամ գեներալ Կոստյուշկոյին[1]*։ Դա քաջի պատմածն էր, որին լսում էր հերոսը։

Պատմության սկզբում գնդապետը հայտնեց, որ իր ուլանները կանգնած էին Պորտո-Լոնգոնում, որտեղ նրանցից բացի, գտնվում էր երեք հարյուր հետևակայիններից բաղկացած կայազորը։ Մեկնելուց վեց օր առաջ կայսրը կանչեց իրեն, որպեսզի իմանա, թե ինքը որքան նավ ունի նավահանգստում։ Գնդապետին հրաման տրվեց դրանք վարձել, պարենի պաշար տեսնել և խրոտիվ հետևել, որպեսզի ամենախարխուլ մակույկն անգամ ծով դուրս չգա։ Ճանապարհ ընկնելուց մի օր առաջ նրան կարգադրվեց երեք հազար ֆրանկ վճարել այն ճանապարհի կա-

---

լիվը, որպես փոխհատուցում այն ամենի, ինչ միանգամայն իրավացիորեն խլվել է նրանցից, երբ նրանք, օտարերկրացիներին իրենց հայրենիքի դեմ հարձակման հրահրելու նպատակով լքել էին Ֆրանսիան։

1 Հոբհաուզ, էջ 115. խիստ ստույգ պատասխանները տե՛ս «Moniteur»-ում։

ռուցման համար, որ Նապոլեոնը հանձնարարել էր անցկացնել։ Նա գրեթե մոռացել էր նավահանգստից նավ բաց չթողնելու վերաբերյալ հրամանի մասին, երբ հանկարծ փետրվարի 26-ին, այն ժամանակ, երբ ինքն աշխատում էր իր պարտեզում, կայսեր համհարզներից մեկն իրեն հրաման բերեց՝ երեկոյան ժամը վեցի կողմը իր բոլոր զինվորներին նավ նստեցնել և նույն գիշերը, նշված ժամին, միանալ նավախմբին, որը կանգնած կլինի Պորտո-Ֆերրայոյի մոտ։ Արդեն այնքան ուշ էր, որ գնդապետը չկարողացավ զինվորներին նավ նստեցնելը յոթն անց կեսից շուտ ավարտել։ Նավերն անմիջապես ճանապարհ ընկան։ Նա իր փոքրիկ նավախմբով մոտեցավ մեկնելու պատրաստ կայսերական «Inconstant» երկկայմ առագաստանավին։ Տախտակամած բարձրանալով, այնտեղ տեսավ կայսրին, որը նրան դիմավորեց «Գործերն ինչպե՞ս են։ Ո՞ւր են ձեր մարդիկ» խոսքերով։

Գնդապետ Ժերմանովսկին իր ընկերներից իմացավ, որ զինվորներին նավ նստեցնելու հրամանը Պորտո-Ֆերրայոյի կայազորին տրվել է միայն ցերեկվա ժամը մեկին, որ այդ գործողությունն ավարտվել է միայն մոտ ժամը չորսին, որ կայսրը գեներալներ Բերտրանի, Դրուոյի և իր շտաբի հետ ժամանել է ժամը ութին, որ դրանից անմիջապես հետո թնդանոթային միակ կրակոցն աղդարարել է մեկնումը, և նավերը ծով են դուրս եկել։ Նավակազմի մեջ էին մտնում քսանվեց թնդանոթով զինված «Inconstant»-ը, «Etoile» և «Caroline» ռմբակիրները և չորս առագաստանավ։ «Inconstant»-ում գտնվում էին հին գվարդիայի չորս հարյուր զինվորներ։ Նրանցից ոչ ոք չգիտեր, թե ուր են տանում իրենց։ Ափից անցնելով նավերի վրա, հին գրենադերները բղավում էին՝ «Փարի՞զ կամ մա՛հ»։

Սկզբում բավական ուժեղ հարավային քամին շուտով փոխարինվեց անհողմությամբ։ Երբ լույսը բացվեց, պարզվեց, որ անցել են ընդամենը վեց մղոն և որ նավակազմը գտնվում է Էլբայի և Կապրայի միջև՝ անգլիական ու ֆրանսիական ֆրեգատների դիմաց։ Այնուամենայնիվ գիշերը զուր չանցավ. զինվորներն ու անձնակազմը հասցրին վերաներկել առագաստանավը։ Դեղին ու գորշ գույները փոխվեցին սևի ու սպիտակի։ Դա բավական անհուսալի միջոց էր Էլբա կղզուն հսկելու մեջ շահագրգռված մարդկանց զգոնությունից խուսափելու համար։

Սկսեցին խոսք դցել այն մասին, թե չվերադառնա՞ն արդյոք

Պորտո-Ֆերրայո, սակայն Նապոլեոնը հրամայեց շարունակել ճանապարհը՝ որոշելով ծայրահեղ դեպքում գրոհել ֆրանսիական նավերի վրա։ Էլբա կղզու շուրջը մշտապես երթևեկում էին երկու հետախուզանավ և մեկ երկկայմ առագաստանավ. ճիշտն ասած, ենթադրում էին, որ դրանք ավելի շուտ սիրով կմիանան կայսեր նավատորմիղին, քան կսկսեն մարտնչել նրա դեմ. բայց քիչ թե շատ վճռական որևէ ռոյալիստ սպա կարող էր կարգադրել համազարկ տալ թնդանոթներից և իր ետևից տանել անձնակազմը։ Կեսօրին մոտ քամի բարձրացավ. ժամը չորսին խումբն արդեն նկատելի էր Լիվոռնոյից։ Երևացին երեք ռազմանավեր, որոնցից մեկը՝ մի երկկայմ առագաստանավ, ուղևորվեց դեպի «Inconstant»-ը։ Անմիջապես կարգադրվեց փակել դռնակները։ Գվարդիայի զինվորները հանեցին իրենց բարձր գլխարկները և բերանքսիվայր պառկեցին տախտակամածին։ Կայսրը մտադիր էր առագաստանավը աբորդաժով գրավել։ Բայց դա ծայրահեղ միջոց էր, որին նա որոշել էր դիմել միայն այն դեպքում, եթե թագավորական նավը չհամաձայնվի առանց խուզարկելու բաց թողնել «Inconstant»-ը։ «Zéphir»-ը (այսպես էր կոչվում սպիտակ գրոշով առագաստանավը) բոլոր առագաստները պարզած սլանում էր դեպի «Inconstant»-ը։ Նավերն անցան իրար մոտով՝ գրեթե քսելով նավակողերը։ Երբ լեյտենանտ Տալլյադը «Inconstant»-ից ձայն տվեց կապիտան Անդրիյոյին[1], որի հետ բարեկամական հարաբերությունների մեջ էր, այս սահմանափակվեց նրանով, որ հարցրեց, թե ուր է ուղևորվում «Inconstant»-ը։ «Ջենովա»,— պատասխանեց Տալլյադը և ավելացրեց, որ հաճույքով կկատարի Անդրիյոյի հանձնարարությունները, եթե նա այդպիսիք ունի։ Անդրիյոն պատասխանեց, որ իրեն ոչինչ պետք չէ, և վերջում բղավեց խոսափողով. «Ինչպե՞ս է զգում իրեն կայսրը»։ Նապոլեոնն ինքը պատասխանեց. «Հիանալի՜», և նավերը բաժանվեցին։

27-ի լույս 28-ի գիշերը քամին սկսեց սաստկանալ, և փետրվարի 28-ի[2] լուսաբացին հեռվից ուրվագծվեց Պրովանսի ափը։ Երևաց մի նավ, որը, ըստ երևույթին, ուղևորվում էր դեպի Սարդինիայի ափերը։ Գնդապետ Ժերմանովսկին ասում է, որ մինչև

1 Տե՛ս «Կենսագրությունները»։

2 Ստուգել ըստ Հորհաուզի։ Ե՞րբ։ Փետրվարի 28-ի՞ն, թե մարտի 1-ին։

այդ պահը գրեթե բոլորը, ովքեր գտնվում էին նավախմբի նավերում, կարծում էին, որ այն ուղղություն է վերցրել դեպի Նեապոլ։ Զինվորներն այդ մասին բաղմիցս հարցնում էին սպաներին, իսկ սրանք էլ հարց էին տալիս կայսրին, որը, ի պատասխան, համառորեն լռում էր։ Վերջապես նա ժպտալով ասաց. «Մենք գնում ենք Ֆրանսիա»։ Այդ խոսքերի վրա բոլորը խռնվեցին նրա շուրջը, որպեսզի իմանան նրա կարգադրությունները։ Առաջին հերթին նա իր փոքրիկ զորքի երկու-երեք կոմիսարների հրամայեց թուղթ ու գրիչ պատրաստել։ Նրա թելադրանքով նրանք գրեցին բանակին ու ֆրանսիացիներին ուղղված կոչեր։ Երբ վերջացրին գրելը, կոչերն ընթերցվեցին ի լուր ամենքի։ Նապոլեոնը մի քանի ուղղում մտցրեց, ապա մի անգամ էլ հանձնարարեց բարձրաձայն կարդալ և նորից ուղղեց. վերջապես, առնվազն մի տասն անգամ ստուգելով, նա ասաց. «Լավ, այժմ հարկավոր է որքան կարելի է շատ պատճեններ պատրաստել»։ Դրանից հետո գրագետ բոլոր զինվորներն ու նավաստիները մեկնվեցին տախտակամածին։ Բոլորին թուղթ բաժանեցին, և շուտով նրանք ներկայացրին ափ իջնելու պահին տարածելու համար անհրաժեշտ քանակությամբ կոչերի պատճեններ։ Ապա ձեռնամուխ եղան եռագույն կոկարդներ պատրաստելու։ Դրա համար բավական էր կտրել այն կոկարդի արտաքին եզրը, որ նրանք կրում էին Էլբա կղզում։ Կղզի ժամանելուց հետո սկզբնական շրջանում կայսեր կոկարդն է՛լ ավելի էր հիշեցնում ֆրանսիականը։ Հետագայում նա մի քիչ փոփոխեց այն, որպեսզի կասկածներ չհարուցի։ Այդ ամենով զբաղվելիս, և առհասարակ նավարկության վերջում սպաները, զինվորները և նավաստիները շարունակ խռնվում էին Նապոլեոնի շուրջը, որը քիչ էր քնում և գրեթե շարունակ տախտակամածին էր։ Պառկում էին, նստում, կանգնում, անկաշկանդ անցուդարձ անում նրա շուրջը՝ աշխատելով խոսել հետը. նրանք հարցակոխ էին անում նրան, որոնց պատասխանում էր առանց նվազագույն ջղայնության, թեպետ այդ հարցերից մի քանիսը բավական անհամեստ էին։ Նրանք ուզում էին իմանալ նրա կարծիքը դեռևս կենդանի նշանավոր շատ անձանց, թագավորների, մարշալների, նախկին տարիների մինիստրների մասին։ Նրանք համարձակվում էին նրա հետ քննարկել նրա արշավանքների որոշ առավել նշանավոր դեպքերը և նույնիսկ ներքին քաղաքականությունը։ Նա կարողանում էր բավարարել նրանց հետաքրքրասիրությունը և բացատրել անհասկա-

նալի հարցերը. շատ անգամ նա մանրամասն շարադրում էր իր սեփական գործողությունների և իր հակառակորդների գործողությունների պատճառները։ Ինչի մասին էլ որ խոսք լիներ՝ ժամանակակիցների իսկական թե կարծեցյալ ծառայությունների մասին, հին ու նոր ժամանակների արշավանքների մասին, նրա բոլոր պատասխանները համակված էին անմիջականությամբ, անկեղծությամբ և ազնիվ պարզությամբ, որոնք հարուցում էին զինվորների հիացմունքը։ «Նրա յուրաքանչյուր խոսքը,— ասում էր գընդապետ Ժերմանովսկին,— մեզ պահպանելու արժանի էր թվում պալիք սերունդների համար։ Կայսրն անկեղծորեն խոսում էր իր նպատակադրած ձեռնարկի, դրա հետ կապված դժվարությունների, իր հույսերի մասին։ «Նման դեպքերում հարկավոր է երկար մտածել, բայց արագ գործել։ Ես հանգամանորեն ծանր ու թեթև էի անում այս պլանը, քննարկում ամբողջ ուշադրությամբ, որին ընդունակ եմ։ Ավելորդ է ձեզ ասել այն անմահ փառքի ու պարգևի մասին, որ սպասում է մեզ, եթե մեր ձեռնարկը հաջողությամբ պսակվի։ Իսկ եթե մեզ անհաջողություն պատահի, ապա ձեզնից՝ մարտիկներիցդ, որ պատանի հասակից անտարբերություն եք դրսևորել մահվան նկատմամբ՝ դրա բոլոր տեսակներով հանդերձ և բոլոր երկրներում, ես չեմ թաքցնի, թե ինչպիսի ճակատագիր է սպասվում մեզ։ Այն մեզ հայտնի է, և մենք արհամարհում ենք այն»։

Մոտավորապես այսպիսիք էին այն վերջին խոսքերը, որ նա արտասանեց՝ նախքան իր նավախմբի խարիսխ գցելը Ժուան ծովախորշում։ Դրանք որոշ մտացածինության տպավորություն էին թողնում։ Դա մի յուրատեսակ դիմում էր ուղևորներին, որոնց հետ ինքը, թերևս, առաջիկա դժվարին օրերին արդեն ժամանակ չի ունենա զրուցելու։

Փետրվարի 28-ի կեսօրին երևաց Անտիբը, իսկ մարտի 1-ին ցերեկվա ժամը երեքին նավախումբը խարիսխ գցեց ծովախորշում։ Կապիտաններից մեկը և քսանհինգ զինվոր ուղարկվեցին գրավելու այն մարտկոցները, որոնք, հնարավոր է, որ իշխում էին առաջիկա ափհանման տեղանքի վրա։ Համոզվելով, որ ոչ մի մարտկոց էլ չկա, կապիտանն իր ռիսկով ու պատասխանատվությամբ ուղևորվեց Անտիբ։ Ջոկատը քաղաք մտավ և գերեվարվեց։ Երեկոյան ժամը հինգին զորքն ափ իջավ՝ Կաննից ոչ հեռու։ Կայսրը վերջինն իջավ երկկայմ առագաստանավից։ Նա մի քիչ

հանգստացավ ծովի մոտ, ձիթենիներով շրջապատված մարգագետնի մեջտեղում գտնվող հանգստատեղում։ Այժմ գյուղացիները եկվորներին ցույց են տալիս այն տեղանը, որի վրա նրան ճաշ է մատուցվել[1]։

Կայսրն իր մոտ կանչեց Ժերմանովսկուն և նրան հարցրեց. «Հայտնի՞ է արդյոք, թե իրենց հետ քանի ձի են վերցրել մեկնելիս։ Գնդապետը պատասխանեց, որ այդ մասին ոչինչ չգիտի և որ ինքը ոչ մի ձի չի վերցրել։ «Դե ինչ կա որ,— պատասխանեց Նապոլեոնը,— ես ինձ հետ վերցրել եմ չորսը. դրանք կբաժանենք։ Կարծում եմ, որ ես ձի պետք է ունենամ։ Քանի որ դուք իմ հեծելազորի հրամանատարն եք, երկրորդ ձին ձեզ համար կլինի, իսկ մնացած երկուսը կտանան Բերտրանը, Դրուոն* և Կամբրոնը*»։

Ձիերն ափ իջեցրին քիչ ավելի ներքևում։ Նապոլեոնը թողեց հանգստատեղը և իր շտաբի ուղեկցությամբ ոտքով ուղևորվեց այնտեղ, որտեղ ձիերն էին։ Նա մենակ էր գնում՝ հարցուփորձ անելով ճանապարհին պատահած գյուղացիներին։ Նրան հետևում էին Ժերմանովսկին և մյուս գեներալները՝ թամբերը ձեռքներին։ Երբ նրանք հասան նպատակակետին, ֆելդմարշալ Բերտրանը հրաժարվեց ձի վերցնել՝ հայտարարելով, որ ոտքով կգնա. այդպես վարվեց նաև Դրուոն[2]։ Կամբրոնը և Մոլան հեծան ձիերը։ Կայսրը գնդապետ Ժերմանովսկուն մի բուռ ոսկեդրամ տվեց և հանձնարարեց գոնե մի քանի գյուղացիական ձիեր գնել։ Գնդապետը գնեց տասնհինգ ձի, որի համար նրանից եռակի թանկ վերցրին։ Դրանք լծեցին Էլբա կղզուց բերված երեք թնդանոթների հրետասայլերին և արքայադուստր Պոլինի կողմից Նապոլեոնին ընծայած չորրորդ թնդանոթին։

Կայսրին հայտնեցին Անտիբում տեղի ունեցած անհաջողության մասին։ «Մենք վատ սկսեցինք,— ասաց նա,— ամենախելացի բանը, որ կարող ենք հիմա անել՝ որքան կարելի է արագ առաջ գնալն է, որպեսզի ավելի շուտ հասնենք լեռնանցումներին, քան մեր ափ իջնելու լուրը կտարածվի»։ Լուսինը ծագեց, և Նապոլեոնն իր փոքրիկ զորքով ճամփա ընկավ։ Ամբողջ գիշերն անընդհատ քայլում էին։ Այն գյուղերի գյուղացիները, որոնցով նրանք անց-

---

1 Հորհաուզ, էջ 121։
2 Հորհաուզ, էջ 122, 123, 180։

նում էին, ոչ մի հարց չէին տալիս. երբ նրանց ասում էին, որ կայսրը վերադարձել է, նրանք ուսերը թոթվում էին և գլուխները ճոճում։ Վեց հազար բնակչություն ունեցող Գրաս փոքրիկ քաղաքում, որտեղով նրանք անցան, բնակչությունը կարծեց, թե դա ծովահենների ասպատակություն է, և խիստ անհանգստացավ։ Խանութները և լուսամուտները պինդ փակեցին, և, չնայած զինվորների եռագույն դրոշակներին, «Կեցցե՞ կայսրը» բացականչություններին, հավաքված ամբոխն իրեն անտարբեր էր պահում՝ շարտահայտելով ո՛չ հավանություն, ո՛չ էլ հակակրանք։ Քաղաքը թողնելով, Նապոլեոնի զորքը երթադադար արեց բլրի վրա։ Զինվորներն սկսեցին իրար նայել, նրանց դեմքերը տարակուսանք ու թախիծ էին արտահայտում։ Հանկարծ երևացին մի խումբ քաղաքացիներ. նրանք պարեն էին բերում և բացականչում՝ «Կեցցե՞ կայսրը»։

Այդ պահից[1] գյուղացիներն սկսեցին ուրախություն արտահայտել Նապոլեոնի վերադարձի առթիվ, և նրա հետագա ուղին ավելի շատ հաղթական երթ, քան ներխուժում էր հիշեցնում։ Կառքը և թնդանոթները թողնվեցին Գրասում, իսկ քանի որ այդ քաղաքից հետո առաջին քանհինգ մղոն տարածության վրա ճանապարհները շատ վատ վիճակում էին, ապա Նապոլեոնը հաճախ քայլում էր ոտքով, իր գրենադերների մեջտեղում։ Երբ նրանք բողոքում էին, թե հոգնել են, նրանց անվանում էր «ծեր փնթփնթաններ», իսկ նրանք, իրենց հերթին, երբ պատահում էր, որ նա գայթում էր, բարձրաձայն ծիծաղում էին նրա անճարակության վրա։ Մարտի 2-ին երեկոյան դեմ նրանք հասան Գրասից քսան լյո հեռավորության վրա գտնվող Սերանոն գյուղը։ Այդ անցումի ժամանակ զինվորներն իրար հետ խոսելիս Նապոլեոնին անվանում էին ոչ այլ կերպ, քան «մեր փոքրիկ կապրալ» կամ «սուսերավոր Ժան»։ Այդ կիսաձայն արտասանված խոսքերը շատ անգամ հասնում էին նրա ականջին, երբ, իր վետերաններով շրջապատված, մագլցում էր բարձունքները։ Մարտի 3-ին նա գիշերեց Բարեմում, իսկ 4-ին ճաշեց Դինում։ Ժերմանովսկու ասելով, Դինում թե Կաստելանում, Նապոլեոնն սկսեց համոզել իշխանատան տիրոջը, որտեղ ինքն իշխանել էր, բացականչել «Կեցցե՞ կայսրը»։ Նա վճռականապես հրաժարվեց և բացականչեց՝ «Կեցցե՞ թագավորը»։ Նապոլեոնը

1 Հորհաուզ, էջ 124։

բոլորովին չշղայնացավ, այլ գովաբանեց նրան հավատարմության համար և տիրոջը խնդրեց միայն խմել իր կենացը, որին նա սիրով համաձայնվեց։

Դիմում բանակին, ֆրանսիական ժողովրդին ուղղված կոչերը[1] տպագրվեցին և Դոֆինեով մեկ տարածվեցին այնպիսի արագությամբ, որ Նապոլեոնի հետագա ճանապարհին քաղաքներն ու գյուղերն արդեն պատրաստակամություն էին հայտնում ընդունելու նրան։ Մինչ այդ, սակայն, նրան միայն մի զինվոր էր միացել։ Գնդապետ Ժերմանովսկին, այդ զինվորին հանդիպելով ճանապարհին, ցանկացավ նրան գրավել Նապոլեոնի կողմը։ Երբ գնդապետը նրան ասաց, որ կայսրը շուտով կժամանի, զինվորը քահ-քահ ծիծաղեց ու ասաց. «Լավ, այսօր երեկոյան ես տանը պատմելու բան կունենամ»։ Գնդապետը մեծ ջանքեր թափեց զրուցակցին համոզելու համար, որ ինքն ամենևին էլ մտադիր չէ կատակելու. այն ժամանակ զինվորը հարցրեց. «Դուք այսօր որտե՞ղ եք գիշերելու», և երբ Ժերմանովսկին անվանեց գյուղը, զինվորը հայտարարեց. «Մայրս այստեղից երեք մղոն հեռավորության վրա է ապրում, գնամ նրան հրաժեշտ տամ և այսօր երեկոյան կգամ ձեզ մոտ»։ Եվ իրոք, երեկոյան գրենադերը խփեց գնդապետի ուսին ու չհանդարտվեց, մինչև որ սա չխոստացավ հայտնել կայսրին, որ գրենադեր Մելոնը որոշել է բաժանել իր նախկին տիրակալի բախտը։

Մարտի 5-ին Նապոլեոնը գիշերն անցկացրեց Գապում՝ մի քանի հեծյալների և քառասուն գրենադերների պահպանության ներքո։ Նույն օրը գեներալ Կամբրոնը քառասուն գրենադերներով գրավեց կամուրջը և Միստերոն նախկին ամրոցը[2]։ Բայց, բացի Մելոնից, ոչ ոք դեռ չէր միացել նրանց։ Սեն-Բոնեթ և մյուս գյուղերի բնակիչներն ուզում էին ահազանգ խփել և միասին ուղեկցել Նապոլեոնի փոքրիկ զորքին։ Գյուղացիները խռնվել էին ճանապարհներին և հաճախ խանգարում էին զորքերի առաջխաղացմանը, կտրում նրանց ճանապարհը՝ ձգտելով տեսնել երբեմն ոտքով գնացող կայսրին կամ էլ դիպչել նրան։

Զնհալի պատճառով ճանապարհները զզվելի վիճակում էին։ Ոսկով բարձած ջորին սայթաքեց և գլորվեց անդունդ։ Այդ պա-

1 Հորհաուզ, էջ 125։
2 Հորհաուզ, էջ 126։

տահարը, ըստ երևույթին, խիստ վշտացրեց կայսրին։ Երկու ժամ շարունակ փորձում էին ջրուն դուրս հանել։ Վերջապես կայսրը ստիպված էր նրան թողնել բախտի քմահաճույքին, որպեսզի զուր ժամանակ չվատնի. զարնանն այդ փողերից օգտվեցին գյուղացիները։

Մարտի 6-ին կայսրը գիշերեց Գապում, իսկ գեներալ Կամբրոնն իր քառասուն հոգանոց առաջապահ ջոկատով՝ Լամյուրում։ Այնտեղ Գրենոբլի կայազորի վեց հարյուր հոգանոց առաջապահ ջոկատը հրաժարվեց բանակցությունների մեջ մտնել գեներալ Կամբրոնի հետ։ Հասնելով Վիզիլից ոչ հեռու գտնվող կիրճին, գնդապետ Ժերմանովսկին, որն առաջատար ջոկատի առաջընթաց խմբի հրամանատարն էր, տեսավ, որ կիրճը գրավել է սպիտակ գրոշակակիր զինվորների ինչ-որ մի ջոկատ։ Նա ուզեց ճառով դիմել նրանց, բայց ջոկատի հրամանատարն առաջ եկավ ու բղավեց. «Հեռացե՛ք։ Ես իրավունք չունեմ ձեզ հետ որևէ հարաբերության մեջ մտնելու։ Պահպանեցեք սահմանված հեռավորությունը, այլապես իմ մարդիկ կկրակեն»։ Գնդապետը փորձեց նրա վրա ազդել այն հաղորդմամբ, որ նա հարկադրված կլինի խոսել ոչ թե իր, այլ անձամբ Նապոլեոն կայսեր հետ։ Բայց հրամանատարը շարունակում էր մոլեգնել, և Ժերմանովսկին գնաց իր անհաջողության մասին զեկուցելու կայսրին։ Նապոլեոնը ժպտալով նրան ասաց. «Դե որ այդպես է, հարկ կլինի, որ ես ինքս փորձեմ որևէ բանի հասնել»։ Նա ձիուց իջավ և կես հարյուրակի չափ իր գրենադերներին հրամայեց հետևել իրեն՝ հրացանների փողերը գետնին շրջած։ Լիակատար հանգստություն պահպանելով, նա հասավ կիրճին, որտեղ գտավ հինգերորդ կանոնավոր գնդի դումարտակը, սակրավորների վաշտը և ականորդների վաշտը՝ ընդհանուր առմամբ յոթ-ութ հարյուր հոգի։ Նրանց հրամանատար սպան շարունակում էր հայհոյանքներ թափել, որոնք հաճախ ուղղված էին անձամբ կայսրին։ Նա բղավում էր. «Սա Նապոլեոնը չէ, այլ ինչ-որ մի ինքնակոչ»։ Ժամանակ առ ժամանակ նա հարձակվում էր իր ենթակաների վրա՝ նրանց հրամայելով կրակ բացել։ Զինվորները կանգնած էին անշարժ ու լուռ։ Երբ նրանք տեսան Նապոլեոնի առաջնորդած ջոկատը, մի երկու րոպե թվում էր, թե հենց հիմա նշան կբռնեն։ Նապոլեոնն իր գրենադերներին հրամայեց կանգ առնել, իսկ ինքն անխռով հանգստությամբ բաժանվեց նրանցից և ուղևորվեց դեպի թագավորական զոր-

քերի առաջապահ դումարտակը։ Գրեթե ընդհուպ մոտենալով՝ նա կտրուկ կանգ առավ, նրանց վրա սևեռեց իր հանգիստ հայացքը և, արձակելով սերթուկը, բացականչեց. «Այդ ես եմ։ Դուք ինձ ճանաչո՞ւմ եք։ Եթե ձեզնից որևէ մեկը մտադիր է մահափորձ կատարել իր կայսեր դեմ, թող կրակի, ճիշտ ժամանակն է»։

Նրանք վայրկենապես անցան նրա կողմը և «Կեցցե՛ կայսրը» բացականչություններով սկսեցին գրկախառնվել գվարդիայի զինվորների հետ[1]։

5-րդ գնդի զինվորների իրեն միանալուց քիչ առաջ Նապոլեոնը մոտեցավ ժամապահ գրենադերին, բռնեց նրա բեղից և հարցրեց. «Իսկ դու, ծեր բեղավոր, մի՞թե Մարենգոյի տակ ինձ հետ չես եղել»։

Այսպիսին է պարզամիտ պատմությունն այն արարքների մեկի մասին, որոնք բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում ժողովրդին ցույց են տալիս, թե ում պետք է հետևել և հանուն ում պետք է մարտնչել։

Այն պոռթկումը, որ համակել էր յոթ հարյուր հոգանոց ջոկատին, Նապոլեոնի զինակիցները վճռական համարեցին հետագա ամեն ինչի համար։ Այդ դիպվածում նրանք տեսնում էին այն բանի ապացույցը, որ կայսրը չի սխալվել և որ բանակն առաջվա պես հավատարիմ է նրան[2]. նոր միացած գնդերի զինվորները հագան եռագույն կոկարդներ, շարվեցին Էլբա կղզուց ժամանած զորքերի զինանշանների տակ և նրանց հետ, բնակչության հիացական բացականչությունների ներքո, մտան Վիզիլ։ Այդ քաղաքը միշտ էլ աչքի է ընկել հայրենասիրությամբ։ Կարելի է ասել, այնտեղ է սկսվել ֆրանսիական հեղափոխությունը, այնտեղ է ծնվել ամբողջ աշխարհի ազատությունը։ Դոֆինե գավառի շտատների առաջին ժողովը կայացել է Վիզիլի ամրոցում։

Երբ զորքերը գնում էին դեպի Գրենոբլ, գնդապետ Ժերմանովսկուն սրաբորավ մոտեցավ մի զինվորական և ասաց. «Ողջունում եմ ձեզ Շառլ Լաբեդուայերի՝ անունից»։

Շուտով հայտնվեց նաև ինքը՝ երիտասարդ գնդապետը՝ 112-րդ գնդի և որոշ այլ զորամասերի մնացորդներից կազմված իր 7-րդ հետևակային գնդի մեծ մասի գլուխն անցած։ Գնդապետն իր զո-

1 Հորհաուզ, էջ 126—127։
2 Հորհաուզ, էջ 128։

բամասերով Գրենոբլից գաղանի դուրս էր եկել կեսօրից հետո, ժամը չորսին. քաղաքից որոշ հեռավորության վրա նա գրպանից հանեց արծիվը, ամրացրեց երկար ձողին և համբուրեց այն իր գնդի աչքի առջև, որը միահամուռ բացականչեց. «Կեցցե՞ կայսրը»։ Ապա դանակի հարվածով նա պատռեց եռագույն կոկարդներով լցված թմբուկը և տեղնուտեղը դրանք բաժանեց իր զինվորներին։ Բայց թագավորին հավատարիմ մնացած գեներալ Մարշանը* կարողացավ գնդի մի մասին համոզել վերադառնալու Գրենոբլ։ Քաղաքի կայազորն ուժեղացվեց 11-րդ կանոնավոր գնդով և Շամբերիից ուղարկված 7-րդ գնդի զորամասերով։ Բացի դրանից, կայազորի մեջ մտնում էին 3-րդ սակրավոր գնդի երկու հազար հոգին և 5-րդ հետևակային գնդի ու 4-րդ հրետգնդի երկու զումարտակներ, այն նույն գնդի, որտեղ Նապոլեոնը քսանհինգ տարի առաջ ստացել էր իր առաջին վաշտը։

Գրենոբլը բավական վատ ամրոց է, որը պահվում է միայն Ալպիական լեռնաշղթան հրետանիով ապահովելու նպատակով, լեռնաշղթա, որի կենտրոնում է գտնվում ամրոցը։ Նա ընդամենը մեկ, մոտ քսան ոտնաչափ բարձրությամբ մի բերդապատնեշ ունի հարթավայրի կողմից, որի առջևով հոսում է առվակը։ Եվ այդ խղճուկ ամրությունների պաշտպանության ներքո, մի քանի ամիս անց բախտի քմահաճույքին թողնված բնակիչները շարքից հանեցին ամբողջովին Նապոլեոնյան զինվորներից բաղկացած պիեմոնտական բանակի հազար երկու հարյուր հոգուն։

Երբ մարտի 7-ին այդ մեծ մարդը մոտեցավ քաղաքին, ողջ կայազորը մարտական պատրաստության մեջ կանգնած էր բերդապատնեշին, որի մեջտեղում գտնվում էին Վիզիլի ճանապարհին բացվող Բոնի դարպասները[1]։ Թնդանոթները լիցքավորված էին, պայթաքուղերը ծխում էին. ազգային գվարդիան, իրև պահեստի զորամաս, տեղավորվել էր կայազորի ետևում։

Երեկոյան, ութ և կեսին, Բոնի դարպասները փակ էին։ Նապոլեոնը մուտք գործեց Սեն-Ժոզեֆ արվարձանը, իսկ այդ ընթացքում Ժերմանովսկին ութ լեհ ուլաններ ուղեկցությամբ մոտեցավ Բոնի դարպասներին։ Նա պահանջեց բանալիները. նրան ասացին, որ դրանք գեներալ Մարշանի մոտ են։ Գնդապետը գիմեց զինվորներին, բայց նրանք լռություն էին պահպանում։ Շուտով դարպասների առջևում գտնվող կամրջակի վրա հայտնվեց Նապոլեոնը։ Այստեղ նա գրեթե մի ժամ նստած մնաց թմբի վրա։

Գեներալ Մարշանին հարկավոր էր անցնել պատնեշի այն մասը, որը կայսրից հեռու էր ոչ ավելի քան հիսուն ոտնաչափ, և անձամբ կրակել նրա վրա։ Երկու տասնյակ ազնվականներ հավատարմության համար կարող էին նույն բանն անել։ Վրիպելն անհնար էր։ Եթե կայսրը սպանվեր, նրա մտահղացումը կտապալվեր։ Եթե թագավորի համախոհները փոքրոգությունից վախենում էին, որ եթե կրակեն՝ իրենց կտոր-կտոր կանեն, կարող էին տեղավորվել ոմն էյմարի տանը, որի լուսամուտները նայում են պատնեշին, կամ էլ պատնեշի այն մասում, որը նայում է զորանոցի տարածքին։ Միանգամայն անվիճելի է, որ ընդհանուր իրարանցման այդ պահին ամեն մի հանդուգն մտահղացում հաջողությամբ կպսակվեր։ Կարելի էր նույնքան հեշտությամբ երկու տասնյակ ազնվական տեղավորել Սեն-Ժոզեֆ արվարձանի տներում, որոնց մոտով, մոտ տասնհինգ ոտնաչափ հեռավորության վրա, անցնում էր Նապոլեոնը։

Երեք քառորդ ժամ տևող բանակցություններից և անորոշությունից հետո կայազորը, փոխանակ կրակ բացելու, միահամուռ բացականչեց. «Կեցցե՞ կայսրը»։ Քանի որ դարպասները դեռևս փակ էին, արվարձանի բնակիչները քարշ տվեցին բերեցին գերաններ և քաղաքացիների օգնությամբ ջարդեցին դարպասները, թեև դրանք շատ զանգվածային էին, քանի որ մի տարի առաջ Գրենոբլը պաշարման վտանգի տակ էր եղել։ Բանալիները բերեցին այն պահին, երբ դարպասները գետին տապալվեցին։ Քաղաք մտնելով, ութ ուլաններն իրենց առջև տեսան վառված ջահերը ձեռքներին մարդկանց բազմություն, մարդիկ, որոնք շտապում էին ողջունելու Նապոլեոնին, որը մի պահ անց այնտեղ եկավ ոտքով՝ քսան քայլ առաջ անցնելով իր զորքից։

Մի քանի սպաներ՝ լրջմիտ մարդիկ, նախապես Գրենոբլից ուղևորվել էին Նապոլեոնին ընդառաջ։ Նրանք ձեռնարկել էին բոլոր միջոցները, որպեսզի կայսրը, եթե Բոնի դարպասների մոտ նրան անհաջողություն պատահի, հնարավորություն ունենա Իզերան անցնելու այսպես կոչված Բաստիլյան լեռան ստորոտում գտնվող Սեն-Լորանի դարպասների մոտերքում, որտեղ տեղ-տեղ քանդված պատնեշը պարտեզի ցանկապատից էլ բարձր չէ։ Այդ

1 Հորհաուզ, էջ 129։

սպաները Նապոլեոնին խորհուրդ տվեցին թույլ չտալ, որ որևէ կրակոց լինի իր զորքերի կողմից, քանի որ հրաձգությունը կարող է նրան հարելու հակված մարդկանց մեջ պատվածների անուն հանելու երկյուղ առաջացնել։ Կարող էր պատահել, որ բանակի կեսը, այս նկատառումով, որը շոշափում է իր պատիվը, հրաժարվի անցնել նրա կողմը։

Ամբոխը հորդեց դեպի նա։ Մարդիկ երկար նայում էին նրան, ձեռքերով բռնում, գրկում ծնկները, համբուրում հագուստը, աշխատում գոնե դիպչել նրան. ոչինչ չէր կարող հագեցնել նրանց հիացմունքը։ Նրանց համար Նապոլեոնը մարմնավորում էր ոչ թե իր սեփական կառավարումը, այլ այն կառավարման հակապատկերը, որ հաստատել էին Բուրբոնները։ Ուզում էին նրան տեղ հատկացնել քաղաքապետարանում, բայց նա ցանկացավ դիշերել իշխանատանը, որը պատկանում էր եգիպտական արշավանքի մասնակից Լաբար անունով մի զինվորի։ Այնտեղ շտաբը նրան բոլորովին կորցրեց իր տեսադաշտից. վերջապես կես ժամ հետո Ժերմանովսկին և Բերտրանը կարողացան մեծագույն ջանքերի գնով մուտք գործել սենյակ, ուր նրան գտան խելագարների նման մարդկանցով շրջապատված. հիացմունքն ու սերը ստիպում էին նրանց արհամարհել ամենատարրական քաղաքավարությունը, որի պահպանումը սովորաբար խեղդամահ լինելու վտանգից պաշտպանում է նրանց, ում շուրջը խռնվում են։ Նապոլեոնի մերձավորներին հաջողվեց կարճ ժամանակում մաքրել սենյակը. երկրորդ ներխուժումը կանխելու համար նրանք դռան առաջը փակեցին սեղաններով ու աթոռներով։ Բայց զո՜ւր։ Ամբոխը նորից խուժեց սենյակ և երկու ժամ շարունակ կայսրն առանց որևէ պահպանության մնաց կողմնակի անձանց շրջապատում։ Նրան հազար անգամ կարող էին սպանել, եթե ռոյալիստների և քահանաների մեջ գեթ մի խիզախ մարդ գտնվեր։ Շուտով իշխանատան լուսամուտների տակ հայտնվեց մարդկանց բազմություն, որը բերել էր Բոնի դարպասների բեկորները։ Նրանք բղավում էին. «Նապոլեոն, մենք չկարողացանք հանձնել ձեզ հավատարիմ Գրենոբլի բանալիները, բայց ահա ձեզ քաղաքի դարպասները»։

Հաջորդ օրը Նապոլեոնը վարժահրապարակում զորատեսչություն անցկացրեց։ Նրան նորից անհամար բազմություն շրջապատեց. ժողովրդի հիացմունքը գագաթնակետին հասավ, բայց առաջ չբերեց այն ստորաքարշ արարքներից և ոչ մեկը, որոնք մարդիկ սովորաբար կատարում են թագավորների ներկայությամբ։ Նապոլեոնի լուսամուտների տակ և նրա շուրջը անընդհատ գոռգոռում էին. «Պետք չէ զինակոչիկների հավաքագրում, դա մենք այլևս չենք ուզում, մեզ սահմանադրություն է պետք»։ Մի ոմն երիտասարդ գրենոբլցի՝ պ-ն Ժոզեֆ Ռեյը, ժողովրդի զգացումներն արտահայտեց ուղերձով, որը ներկայացրեց Նապոլեոնին։

Պ-ն Դյումուլենը՝ ձեռնոցների մի երիտասարդ ֆաբրիկատեր, որի մոտ գրանից երկու օր առաջ ապաստանել էր կայսեր՝ Էլբա կղզուց ժամանած գրենոբլցի բժիշկը, լիովին Նապոլեոնի տնօրինությանը հանձնեց իր կյանքը և հարյուր հազար ֆրանկ։ Կայսրը նրան ասաց. «Ներկայումս ես փողի կարիք չունեմ, շնորհակալությո՛ւն, ինձ վճռական մարդիկ են պետք»։ Նա ձեռնոցների ֆաբրիկատիրոջն իրեն համհարզ նշանակեց և անմիջապես հանձնարարություն տվեց, որը սա հիանալի կատարեց։ Երիտասարդն անհապաղ բախտի քմահաճույքին թողեց իր բավական պատկառելի ձեռնարկությունը։

Քաղաքային իշխանությունները ներկայացան Նապոլեոնին. նա երկար զրուցեց նրանց հետ, բայց նրա դատողությունները չափազանց վեհ բնույթի էին՝ հասկանալի լինելու համար այն մարդկանց, որոնց տասնչորս տարի շարունակ վարժեցրել էին առանց առարկելու հնազանդվել և որևէ այլ զգացում չտածել՝ բացի պաշտոնից զրկվելու վախից։ Նրանք լսում էին բուռ դեմքով, և նա չկարողացավ նրանցից ոչ մի խոսք լսել, որն անկեղծ զգացմունք արտահայտեր։ Պարզվեց, որ նրա իսկական բարեկամները գյուղացիներն են և մանր բուրժուաները։ Այն ամենը, ինչ նրանք ասում էին, հերոսական հայրենասիրությամբ էր տոգորված։ Նապոլեոնը Դոֆինեի բնակիչներին իր շնորհակալությունը հայտնեց այն դիմումի մեջ, որը տպագրվել էր Գրենոբլում։ Գրեթե բոլոր զինվորների գլխարկներում թաքցված էին եռագույն կոկարդներ։ Նրանք անասելի ուրախությամբ նորից կրեցին դրանք։ Գեներալ Բերտրանը , որ գլխավոր շտաբի պետի պարտականություններ էր կատարում, Գրենոբլի կայազորին հրամայեց շարժվել դեպի Լիոն։

Գրենոբլից մինչև Լիոն ընկած ճանապարհի զգալի մասը կայսրն անցավ առանց որևէ պահակախմբի. նրա ծածկակառքի ձիերը հաճախ ստիպված էին դանդաղ քայլքով գնալու. գյուղացիները ողողել էին ճանապարհը. բոլորը փափագում էին խոսել նրա

հետ, դիպչել նրան, կամ էլ գոնե հայացք ձգել նրան։ Նրանք մագլցում էին ծածկակառքը, հեծնում լծված ձիերը, բոլոր կողմերից մանուշակի և գարնանածաղկի փնջեր նետում նրան։ Կարճ ասած, Նապոլեոնը շարունակ գտնվում էր իր ժողովրդի գրկում։

Երեկոյան Ռիվի մերձակայքում գյուղացիներն ավելի քան մեկ լյո տարածություն ուղեկցեցին նրան՝ ճանապարհը լուսավորելով հայճեպ պատրաստված ջահերով և երգելով վերջին երկու ամսում լայն տարածում ստացած մի երգ, որի բովանդակությունն այն էր, որ քահանաները, նախքան մեղքերին թողություն տալը, հարցնում էին խոստովանողին, թե արդյոք ինքը երգե՞լ է այդ երգը, և դրական պատասխանի դեպքում հրաժարվում էին նրան հաշտեցնել աստծու հետ[1]։

Ռիվ գյուղում նրան սկզբում չճանաչեցին։ Հետո երբ հասկացան, թե ով է, գյուղացիները լցվեցին իջևանատուն և, տեսնելով, որ նրան աղքատիկ ընթրիք են մատուցել, իրար ետևից սկսեցին հյուրասիրել՝ ով ինչով կարող էր։

Մարտի 9-ին կայսրը գիշերեց Բուրգուանում։

Երբեմն նրա ծածկակառքի առջևից արշավում էին վեց հուսարներ, բայց սովորաբար պահակախումբը բացակայում էր, և նա գրեթե միշտ գնում էր իր զորքից երեք-չորս լյո հեռավորության վրա։ Էլբա կղզուց նրա հետ եկած գրենադերները, հոգնածությունից ուժասպառ, քիչ երկար մնացին Գրենոբլում. նրանք շուտով ճանապարհ ընկան, բայց նույնիսկ ամենադիմացկունները Բուրգուան հասան Նապոլեոնի այնտեղից մեկնելուց մի ժամ հետո միայն, որն առիթ տվեց, որ նրանք միմյանց մի լավ հայհոյեն։ Նրանք գյուղացիներին մանրամասնություններ պատմեցին Էլբա կղզում անցկացրած նրա կյանքից։ Ահա գյուղացիների և զինվորների փոխհարաբերությունների համար շատ բնորոշ մի մանրամասն՝ բացի թե՛ մեկի և թե՛ մյուսի համար ընդհանուր խանդավառությունից. տեսնելով, որ զինվորների կապույտ համազգեստը և բարձրադիր գլխարկները պատառոտված են և սպիտակ թելերով մի կերպ կարկատած, գյուղացիները հարցնում էին.

[1] Այստեղ մեջ բերել վատ ֆրանսերենով, ըստ երևույթին գյուղացիների համար հորինված այդ երգը, որը գլխավորապես ատելություն և խորին արհամարհանք էր արտահայտում նրանց նկատմամբ, ովքեր դավաճանել էին Նապոլեոնին։ Երգում հիշատակվում են Օժերոն, Մարմոնը, Մարշանը։

«Ինչ է, մի՞թե կայսրն Էլբա կղզում փող չի ունեցել, որ դուք այդպես վատ եք հագնված»։ «Ինչպե՞ս չէ։ Նա առատ փող է ունեցել, չէ որ նա այնտեղ տներ է կառուցել, ճանապարհներ գցել. կղզին անճանաչելի է դարձել։ Երբ նա տխուր էր տեսնում մեզ, ասում էր. «Դու, ինչ է, փնթփնթան, երևում է շարունակ Ֆրանսիա՞ն ես հիշում»։ «Ախր տխուր է այստեղ, ձերդ մեծություն»։ «Առայժմ համազգեստդ կարկատիր, մեր պահեստներում բավականաչափ համազգեստ կա, դու միշտ չէ, որ ստիպված կլինես տխրելու»։ «Նա ինքը,— ավելացնում էին գրենադերները,— մեզ օրինակ էր տալիս. նրա գլխարկն ամբողջովին կարկատած էր։ Մենք բոլորս կռահում էինք, որ նա մտադրվել է մեզ ինչ-որ տեղ տանել, բայց նա խուսափում էր որևէ որոշակի բան ասելուց։ Մեզ շարունակ նստեցնում էին նավեր ու նորից ցած իջեցնում, որպեսզի մոլորեցնեն բնակիչներին»։ Գրենոբլում կայսրն իր համար նոր գլխարկ չգնեց, այլ հանձնարարեց հինը կարկատել. նա հագել էր գորշագույն մաշված սերթուկ՝ բոլոր կոճակները կոճկած։ Նա այնքան գեր էր ու հոգնած, որ երբ հարկավոր էր ծածկակառք նստել, հաճախ նրան նստեցնում էին։ Գյուղական իմաստակները դրանից եզրակացրին, որ նա զրահ է կրում։

Լավերպիլիերն անցնելով, ծածկակառքը կանգ առավ, թեև նրա շուրջը ո՛չ պահակախումբ կար, ո՛չ էլ գյուղացիների խմբեր. Նապոլեոնը մոտեցավ մի հարուստ վաճառականի ծածկակառքին, որը նույնպես կանգ էր առել...

ԳԼՈՒԽ LXXXVI

Դեմոկրատիա թե բռնապետություն՝ դրանք կառավարման առաջին ձևերն են, որ պատկերանում են մարդկանց՝ նախնադարյան վիճակից դուրս գալուց հետո. դրանք իբենցով նշանավորում են քաղաքակրթության առաջին աստիճանը։ Ամենուր այդ թերաճ կառավարություններին փոխարինելու եկավ արիստոկրատիան՝ անկախ նրանից, թե ինչպես է այն կոչվում, ղեկավարվում է մեկ մարդու, թե՞ մի քանի անձանց կողմից։ Այսպես, ֆրանսիական թագավորությունը մինչև 1789 թվականն իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, քան դատավորական պատմուճան ու զինվորական համազգեստ հագած մարդկանցից բաղկացած կղերական և զին-

վորական արիստոկրատիա։ Սա քաղաքակրթության երկրորդ աստիճանն է։ Մեկ կամ մի քանի անձանց կողմից գլխավորվող ներկայացուցչական կառավարումը նոր, նույնիսկ նորագույն դրրվածք է, որն իրենով նշանավորում և հաստատում է քաղաքակրթության երրորդ աստիճանը։ Այս վեհ դրվածքը՝ գրատպության գյուտի հետագա, բայց անխուսափելի հետևանքը, վերաբերում է Մոնտեսքյոյին հաջորդող դարաշրջանին։

Նապոլեոնն այն լավագույնն է, որ ստեղծվել է քաղաքակրթության երկրորդ աստիճանում։ Այդ պատճառով էլ խիստ ծիծաղելի է, երբ թագավորները, որոնք ցանկանում են կանգ առնել երկրորդ աստիճանի վրա, իրենց զզվելի գրչակներին հրամայում են հայհոյել այդ մեծ մարդուն։ Նա լիակատար անկարողություն դրսևորեց հասկանալու քաղաքակրթության երրորդ աստիճանը։ Որտե՞ղ էր կարող նա այն ուսումնասիրել։ Անշուշտ, ոչ Բրիենում. փիլիսոփայական բովանդակության գրքերը, ինչպես նաև անգլիական հեղինակների թարգմանությունները թագավորական կոլեջներում արգելված էին, իսկ կոլեջն ավարտելուց հետո նա այլևս կարդալու ժամանակ չի ունեցել. այդ պահից ի վեր նրան ժամանակը բավականացնում էր մարդկանց ուսումնասիրելու համար միայն։

Այսպիսով, Նապոլեոնը XIX դարի բռնակալ է. մարդուն բռնակալ անվանել՝ նշանակում է նրան համարել շատ շնորհալի, իսկ չի կարող պատահել, որ բացառիկ ընդունակություններով օժտված մարդը, թերևս ինքն էլ այդ չգիտակցելով, շտապորվի օգում սփրռված առողջ դատողությամբ։

Այս պնդումի իրավացիության մեջ համոզվելու համար հարկավոր է կարդալ Կաստրուչչո Կաստրականիի՝ XIV դարում Լուկկայի բռնակալի վարքագրությունը[1]։ Այդ երկու մարդկանց նմանությունն ապշեցուցիչ է։ Հետաքրքիր է հետևել Նապոլեոնի հոգում բռնակալության ոգու պայքարին՝ ընդդեմ նրա վեհության արարիչ խորունկ մտքի, հետևել, թե ինչպես ազնվականների նկատմամբ բնածին հակումը փոխվում էր նրա մեջ բորբոքվող արհամարհանքի նոպաների, հենց որ ավելի մոտիկից էր զննում նրանց։ Այն ամենը, ինչ Նապոլեոնը ձեռնարկում էր նրանց դեմ,

[1] Մաքիավելիի, իսկ ավելի լավ է՝ այդ դարաշրջանի հեղինակների մոտ. համառոտ շարադրանքը տե՛ս Պրեֆոտտիի մոտ։

պարզ ցույց էր տալիս, որ նրա զայրույթը հայրական էր։ Պարզամիտ մարդկանց, որոնք դրան կկասկածեին, հիշեցնենք նրա ատելությունն այն ամենի հանդեպ, ինչ հիրավի լիբերալ էր։ Այդ ատելությունը մոլեգնության կհասներ, եթե նա չգիտակցեր իր ուժը։ Հարկավոր էր տեսնել, թե ինչպես պալատական խորամանկ աղվեսները տիրակալի բնավորության մեջ որսացին այդ գիծը։ Այդ տեսակետից շատ հետաքրքիր են նրա մինիստրների զեկուցագրերը։ Միջանկյալ նախադասություններում, ավելի ճիշտ, ածականներում և մակբայներում արտահայտվում է ամենամանրախնդիր, ամենաստոր բռնատիրության ստանձնումն ու իրականացումը։ Նրանք դեռ չէին հանդգնում դա ուղղակի անել, քծնել առանց ակնարկների։ Համարձակ մակդիրը երբեմն տիրակալին ցույց էր տալիս իր մինիստրի իսկական միտքը։ Եվ մի քանի տարի, և նրան սրտամոտ ունկնդիրները նրան կտային այնպիսի մինիստրների մի սերունդ, որոնք հանրապետության ժամանակներում պետական գործերում փորձի չտիրանալով, կամաչեին միայն մի բանից՝ բավականաչափ պալատական մարդ չդրսևորել իրենց։ Երբ տեսնում ես այս ամենի հետևանքները, գրեթե ուրախանում ես, որ Նապոլեոնը տապալվել է։

Մեծ մարդու հանճարի և բռնակալի հոգու միջև եղած պայքարն է՛լ ավելի պարզ է դրսևորվում Հարյուր օրվա ժամանակ։ Նա հրավիրում է Բենժամեն Կոնստանին և Սիսմոնդիին։ Նրանց ունկնդրում է շինծու բավականությամբ, բայց շուտով նորից ամբողջովին ընկնում Ռենիո դը Սեն-Ժան դ'Անժելիի և Բասսանի դքսի խորհուրդների ազդեցության տակ։ Այդ մարդիկ այն բանի ապացույցն են, թե բռնակալությունն արդեն ինչքան էր հասցրել այլասերել նրան։ Մարենգոյի ժամանակներում նա նրանց արհամարհանքով կվաներ։

Այդ երկու մարդիկ շատ ավելի նպաստեցին նրա կործանմանը, քան Վաթերլոոն։ Թող չասեն, թե նա խելացի խորհրդատուներ չուներ։ Լիոնում ես տեսել եմ մի սպայի՝ նրան ուղղված դիմումը, որը խորհուրդ էր տալիս միանգամից ոչնչացնել ինչպես հին, այնպես էլ նոր ազնվականությունը։ Եթե չեմ սխալվում, հենց Ռենիոն է նրան խորհուրդ տվել իրենց տրված նոր սահմանադրությունը «վրացուցիչ ակտ» անվանելու։ Այդ առավոտ նա իրենից հեռացրեց տասը միլիոն ֆրանսիացիների սրտերը՝ այն տասը միլիոնի,

որոնք Ֆրանսիայում մարտնչում և մտածում են։ Այդ պահից ըստ կրսած մերձավորները տեսան, որ նրա կործանումն անխուսափելի է։ Ինչպե՞ս հաղթել Փարիզի վրա հարձակված մեկ միլիոն հարյուր հազար զինվորներին։ Նապոլեոնին գաղտնի քաղաքական գործարք էր պետք ավստրիական տան հետ, և հենց որ նա տաղանդավոր մարդկանց հեռացնում էր իրենից, դաշնակիցները նրանց դարձնում էին իրենց խորհրդականները։

Սուրբ Հելենե կղզում նա, ի արդարացում իրեն, վկայակոչում էր իր ընտանիքի անդամների արտակարգ ապաշնորհությունը։ Տաղանդների պակաս երբեք չի լինում. նրանք առատորեն երևան են գալիս՝ հենց որ դրանց նկատմամբ պահանջարկ է առաջանում։ Նա ամենից առաջ հեռացրեց Լյուսիենին. նա բավականաչափ չէր օգտագործում Սուլտին, Լեզե-Մառնեզիային, Լեվուայե-դ'Արժանսոնին, Տիբոդոյին, կոմս Լապարանին, Ժան դը Բրիին և հազար ուրիշների, որոնք պատրաստ էին իրեն ծառայելու։ Կայսրության ժամանակներում ո՞վ էր կասկածում կոմս Դեկազի* շնորհքների մասին։ Հետևաբար, Նապոլեոնի ընտանիքի ոչնչությունը խղճուկ պատրվակ է. նա տաղանդավոր մարդիկ չուներ, որովհետև չէր ուզում ունենալ։ Միայն Ռենիոյի ներկայությունը բավական էր, որպեսզի նրանք բոլորը, ովքեր որևէ բան արժեին, վհատության մեջ ընկնեին։

Այդ բոլոր մարդկանց երջանկությունն է, որ նրանք նման հետևորդներ ունեին[1]։

ԳԼՈՒԽ LXXXVII

Մենք այստեղ վերարտադրեցինք Նապոլեոնի այն գծերը, որոնք մեզ հավաստի են թվում՝ ամենաճշմարտացի վկայությունների հիման վրա. մենք անձամբ առիթ ենք ունեցել մի քանի տարի գտնվելու նրա արքունիքում։

Արտակարգ ընդունակություններով և վտանգավոր փառասիրությամբ օժտված այս մարդն իր շնորհալիությամբ ամենազարմանալի մարդն է Հուլիոս Կեսարի ժամանակներից ի վեր, որին, մեր կարծիքով, նա գերազանցել է։ Ավելի շուտ, նա ստեղծված

[1] Ելացի է, բայց սեր սառն է ու չոր։

էր, որպեսզի տոկունությամբ ու վեհորեն կրի դժբախտությունը, քան բարօրության մեջ գտնվի՝ անձնատուր չլինելով արբեցումին։ Ջայրույթի մեջ մոլեգնության հասնելով, երբ հակառակվում էին իր կրքերին, նա, սակայն, ավելի շատ բարեկամության էր ընդունակ, քան տևական ատելության։ Օժտված լինելով որոշ առանձին արատներով, որոնք անհրաժեշտ են նվաճողին, նա, սակայն, ավելի քիչ էր հակված արյուն թափելու և անտարբեր լինելու մարդկության նկատմամբ, քան կեսարները, ալեքսանդրները, ֆրիդրիխները՝ բոլոր նրանք, որոնց հետ նրան կհավասարեցնեն ե որոնց փառքը օրեցօր կնսեմանա։ Նապոլեոնը բազմաթիվ պատերազմներ է մղել, որոնցում արյան վտակներ են թափվել, բայց, բացառությամբ իսպանական պատերազմի, նա դրանցից ոչ մեկի նախաձեռնողը չի եղել։ Նրան գրեթե հաջողվեց եվրոպական մայրցամաքը դարձնել մի վիթխարի միապետություն։ Այդ մտահղացումը, եթե այն իրոք գոյություն է ունեցել, միակ արդարացումն է այն բանի, որ Նապոլեոնը հեղափոխություններ չի կատարել իր նվաճած պետություններում և դրանք Ֆրանսիային ոգեշնչող սկզբունքներին հաղորդակից դարձնելու միջոցով հենարաններ չի ստեղծել նրա համար։ Ապագա սերունդները կասեն, որ նրա կողմից իր կայսրության ընդարձակումը եղել է հարեվանների հարձակումները ետ մղելու անհրաժեշտության հետևանք։ «Այն հանգամանքները, որոնք ինձ ստիպել են պատերազմել,— ասում է նա,— մի շարք հնարավորություններ են տվել ընդարձակելու իմ կայսրությունը, և ես դրանից օգտվել եմ»։ Հոգու վեհությամբ և ճակատագրի հնազանդությամբ, որ նա դրսևորեց դժբախտության մեջ, լոկ քչերն են նրան հավասար, և ոչ ոք դրանում նրան չի գերազանցել։ Պ-ն Ուորդենը հաճախ պատշաճն է հատուցում այդ առաքինություններին, և մենք կարող ենք ավելացնել, որ դրանց մեջ ցուցադրվի ոչինչ չկար։ Ս. Հելենե կղզում նրա վարքագիծը բնականությամբ է տոգորված։ Թերևս դա այն է, որ մեր օրերում ամենից շատ է հիշեցնում Պլուտարքոսի հերոսներին։ Երբ ս. Հելենե կղզում նրան այցելած մարդկանցից մեկը զարմանք հայտնեց այն վեհասքանչ հանգստության առթիվ, որով նա տարել է իր ճակատագրի փոփոխությունը, Նապոլեոնը պատասխանեց. «Բանն այն է, ես այդպես եմ կարծում, որ բոլորն այդ փոփոխությունից ավելի էին զարմացած, քան ես։ Ես

այնքան էլ լավ կարծիքի չեմ մարդկանց մասին և երբեք չեմ վստահել հաշողությանը. ասենք, ես քիչ եմ օգտվել գրանից։ Եղբայրներս իրենց թագավորական ատիճանից շատ ավելի են օգուտ ունեցել, քան ես։ Նրանց բաժին են ընկել դրա հետ առընչվող հաճույքները, իսկ ինձ՝ գրեթե միայն տառապանքները։

ՈՒՇԵՐ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Խնդրում եմ ներել ինձ, պարո՛ն. այս գրքերում, որ Ձեզ առաջարկում են գնել, ոչ մի վերամբարձություն չկա։ Եթե դրանք գրված լինեին Սալվանդիի ոճով, յուրաքանչյուր հատորի համար Ձեզնից չորս հազար ֆրանկ կպահանջեին։

Ճոռոմ արտահայտությունները բոլորովին բացակայում են. ոճը երբեք չի մոխրացնում թուղթը, երբեք չեն հիշատակվում դիակներ։ Սոսկալի, աստվածային, սարսափ, նողկալի, հասարակության քայքայում և նման բառեր չեն գործածվում։

Հեղինակն անձնապաստանություն ունի պնդելու, որ ինքը ոչ ոքի չի ընդօրինակել. բայց, եթե իր աշխատությունն ավարտելով, դրա մասին պատկերացում տալու համար նա պետք է իր ոճը համեմատեր Ֆրանսիայի մեծ գրողներից մեկի ոճի հետ, նա կասեր.

Ես աշխատել եմ պատմել, ոչ թե պարոնայք Սալվանդիի* կամ դը Մարշանժիի* նման, այլ Միշել դը Մոնտենի* կամ պրեզիդենտ դը Բրոսսի* նման։

ԻՆՉՈՒ ԵՄ ԵՍ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՄՏՔԵՐԻՆ ՆՄԱՆ ԸՆԹԱՑՔ ՏՎԵԼ

(13 փետրվարի 1837 թ.)

ԱՌԱՋԱԲԱՆ ԱՆՁԱՄԲ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Սովորաբար պատմաբանը (օրինակ պ-ն Տիերոդոն) փաստերի հետաքննումը կատարում է անաչառության հավակնությամբ, ինչպես դա անում է Սալյուստին, և ընթերցողին է թողնում անձամբ կայացնելու դատավճիռը։

Ահա թե ինչու դատավճիռը կարող է միայն ընդհանուր բնույթի լինել՝ «ժակը սրիկա է» կամ էլ՝ «ժակն ազնիվ մարդ է»։ Ինչ վերաբերում է ինձ, ես ինքս եմ դատավճիռներ կայացնում, և դրանք հենված են արդարի ու անարդարի ավելի խոր, հատկապես ավելի նրբահայաց զանազանման վրա. դրանք մեծահոգի դատողություններ են։ Ես կքողարկեի qualsisia merito[1] կեսը (ընդորում չհասնելով ինչ-որ մի Լեմոնտեի* շարադրման արվեստին), եթե դատավճիռն ինքս չկարդայի. հաճախ իմ առաջին դատավճիռը հարուցած այս կամ այն հանգամանքից ես բխեցնում եմ երկրորդը։ Այսպիսով, դա վերնագրենք՝ «Հուշեր Նապոլեոնի կյանքի մասին»։

Մտքի անկաշկանդ կենսունակությամբ (հաճախ ես դիտավորյալ սքողում եմ այն) ինձ, թերևս, հաջողվի ստիպել ընթերցողին կուլ տալ վեց հատոր։ Եթե հարկադրված լինեի սահմանափակել ինձ, ես համբերություն չէի ունենա շարունակելու իմ աշխատությունը։ Եվ հանուն ինչի՞ ես պետք է ինձ սահմանափակեմ. որպեսզի Լեմոնտեի կամ Թիերի dimidiato[2]-ն դառնա՞մ։

---

[1] Որոշ վաստակի (իտալ.)։

[2] Կես (իտալ.)։

ԱՌԱՋԱԲԱՆ

1806-ից մինչև 1814 թվականը ներառյալ ես ապրել եմ մի հասարակության մեջ, որի հիմնական ուշադրությունն ուղղված էր կայսեր գործողություններին։ Հիշյալ ժամանակի մի մասը ես եղել եմ այդ մեծ մարդու աքսունիքում և շաբաթը երկուերեք անգամ տեսել նրան։

(Ա. Բ.)

Fu vera gloria
Ai posteri l'ardua sentenza[1]

(Մանձոնի. ներբող ի պատիվ Նապոլեոնի)։

Մի մարդ առիթ է ունեցել Նապոլեոնին տեսնել Սեն-Կլուում, Մարենգոյում, Մոսկվայում. հիմա նա նկարագրում է նրա կյանքը՝ ամենևին չունենալով ոճի գեղեցկության հավակնություն։ Այդ մարդն ատում է վերամբարձությունը՝ XIX դարի մոդայական արատի՝ երեսպաշտության հարազատ քրոջը։

Միայն նվազ արժանիքների տեր մարդիկ են ընդունակ սիրելու սուտը. այն նրանց համար օգտավետ է։ Ինչքան լրիվ բացահայտվի ճշմարտությունը, այնքան ավելի մեծ կերևա Նապոլեոնը։

Հեղինակը հեռու է գրական որևէ հավակնությունից։ Պատմելով ռազմական իրադարձությունների մասին, նա գրեթե միշտ մեջ է բերելու Նապոլեոնի սեփական խոսքերը։ Ով կատարել է՝ ինքն էլ պատմել է։ Ի՞նչ երջանկություն գալիք դարերի հետաքրքրասիրության համար։ Ո՞վ կհանդգնի Նապոլեոնից հետո պատմել Արկոլեի ճակատամարտի մասին։

Սակայն, ամբողջովին իր պատմությամբ տարված, այդ մեծ թեմայով համակված, և բոլոր խանդավառ մարդկանց նման ենթադրելով, որ յուրաքանչյուր ոք կես խոսքից պետք է հասկանա իրեն, նա երբեմն աղոտ է արտահայտվում։ Նման դեպքերում Նապոլեոնի հրաշալի պատմությանը կցված են անհրաժեշտ պարզաբանումներ։ Հեղինակը դրանք քաղել է իր հիշողություններից։

Իբրև միապետ, Նապոլեոնը հաճախ էր ատում իր գրվածքներում։ Մեծ մարդու հոգին երբեմն ճեղքում-անցնում էր արքայական թաղանթի միջից, բայց նա միշտ զղջացել է՝ ճշմարտությունը գրելով, իսկ երբեմն էլ նույնիսկ այն ասելով։ Ս. Հեղինե կղզու աքսորում նա նախապատրաստում էր գահն իր որդու համար կամ էլ երկրորդ վերադարձը՝ նման էլբա կղզուց իր վերադարձին։ Ես աշխատել եմ մոլորության մեջ չընկնել։

Երբ խոսքն այն մասին է, թե ինչ է տեսել հեղինակն անձամբ, կամ էլ ինչն է ճիշտ համարում, նա գերադասում է մեջ բերել մեկ ուրիշ վկայի խոսքերը, քան աշխատում անձամբ հորինել պատմությունը։

Որոշ մարդկանց վերաբերյալ ես խուսափել եմ ասել այն ողջ վատը, որ գիտեմ նրանց մասին. իմ դիտավորությունների մեջ չի մտել այդ հիշողություններից մարդկային հոգու իմացության դասընթաց ստեղծելը։

Ես իրադարձությունների պատմությունը գրում եմ այնպես, ինչպիսին կցանկանայի այն տեսնել ուրիշի կողմից գրված՝ անկախ տաղանդից։ Իմ նպատակն է հասարակությանը ծանոթացնել այս բացառիկ մարդու հետ, որին ես սիրել եմ նրա կենդանության օրոք, որին հարգում եմ այժմ՝ իմ ողջ արհամարհանքով հանդերձ այն ամենի նկատմամբ, ինչ փոխարինել է նրան։

Հույսս դնելով ընթերցողի խորաթափանցության վրա, ես ամենևին էլ չեմ փակում քննադատության բոլոր ճանապարհները. հավանաբար երեսպաշտներն ինձ կմեղադրեն անբարոյականության մեջ, բայց դա ամենևին էլ չի ուժեղացնի այն արհամարհանքը, որ ես տածում եմ այդ մարդկանց նկատմամբ։

Փարիզում գոյություն չունի հասարակական կարծիք ժամանակակից իրադարձությունների մասին. կան միայն մի շարք փոփոխվող հետաքրքրություններ. դրանք ոչնչացնում են միմյանց՝

---

1 Նա փառքի մարմնացում էր։
Թող սերունդները կայացնեն վեհ դատավճիռ։

ինչպես վրա հասնող ծովային մի ալիք սրբում տանում է մյուսը։

Ժողովուրդը, որին Նապոլեոնը հաղորդակից դարձրեց քաղաքացիականությանը՝ նրան սեփականատեր դարձնելով և ռամիկների համար սահմանելով նույն շքանշանը, ինչ որ մարշալի համար, նրա մասին դատում է իր սրտով, և, ես կարծում եմ, որ հետագա սերունդը կհաստատի ժողովրդի դատողությունը։ Ինչ վերաբերում է սալոնների դատողություններին, ապա կարծում եմ, որ դրանք տասը տարին մեկ փոխվելու են, ինչպես դա նկատել եմ Իտալիայում Դանթեի օրինակով, որին 1800 թվականին նույնքան էին արհամարհում, որքան որ հիմա մեծարում են։

Վերջին մի քանի տարում ստեղծագործությունը շատ է առաջ գնացել։ Սուտն այլևս չեն արտահայտում ուղղակի խոսքերով, ինչպես մեր հայրերի ժամանակ էր. այժմ այն ստեղծում են ընդհանուր, աղոտ դարձվածների օգնությամբ, որի համար դժվար է ստախոսին հանդիմանել և հատկապես՝ դժվար է հերքել քիչ խոսքերով։ Ինչ վերաբերում է ինձ, ես շորս կամ հինգ տարբեր հեղինակներից փոխ եմ առնում չորսական-հինգական մանր փաստեր. փոխանակ դրանք ամփոփելու մի ընդհանուր արտահայտությամբ, որի մեջ կարող էի աննկատելիորեն սուտ նրբերանգներ մտցնել, ես շարադրում եմ այդ մանր փաստերը՝ ըստ հնարավորին օգտագործելով հեղինակների բուն արտահայտությունները։

Բոլորն ընդունում են, որ նա, ով պատմում է, պետք է ճշտակ ասի ճշմարտությունը։ Բայց դրա համար հարկավոր է արիություն ունենալ դիմելու հանգամանալի մանրամասնություններին։ Դա, կարծում եմ, ընթերցողի անվստահությունը հաղթահարելու միակ միջոցն է։ Ես ոչ միայն չեմ սարսափում այդ անվստահությունից, այլև ամբողջ հոգով ցանկանում և կոչում եմ դրան։

Սուտն այժմ այնքան տարածված է, որ գալիք սերունդները կկարողանան վստահել միայն այն պատմաբաններին, ովքեր եղել են իրենց իսկ նկարագրած իրադարձությունների ժամանակակիցը։ Մենք միշտ տոնից զգում ենք, թե ճշմարտացի՞ է արդյոք մարդը։ Ընդ որում նրա մահից մոտ տաս տարի հետո նրան հովանավորող ընկերախումբը կազմալուծվում է, իսկ դրան փոխարինող խումբը այդ գրողի ասած ճշմարտությունը վերագրում է այն անտարբեր ճշմարտությունների թվին, որոնք կամա-ակամա հարկ է լինում ընդունել իր նկատմամբ վստահություն ներշնչելու

և մնացած ամեն ինչում որոշ չափով հաջող ստելու հնարավորություն ունենալու համար։

1810 թվականից առաջ գրողը, եթե ստում էր, դա անում էր կրքոտ զգացումի ազդեցության տակ, որն ինքն իրեն մատնում էր, և որը դժվար չէր նկատել։ Բայց 1812, իսկ հատկապես 1830 թվականից հետո ստում են սառնասրտորեն, շահավետ տեղ ստանալու, կամ էլ, եթե մարդը կարիքի մեջ չէ, սալոններում հաճելի դիրքի հասնելու համար։

Ինչքա՞ն սուտ է ասվել Նապոլեոնի մասին։ Շատոբրիանը չի՞ պնդել արդյոք, որ նա անձնական արիություն չի ունեցել, որ, բացի այդ, նրան Նիկոլա՛ են կոչել։ Ինչպե՞ս է վարվելու այն պատմաբանը, որ գրելու է 1860 թվականին, որպեսզի իրեն զերծ պահի բոլոր այն կեղծ «Հուշերից», որոնք ամիս առ ամիս զարդարում են 1837 թվականի հանդեսները։ Բայց այն գրողը, որը տեսել է Նապոլեոնի մուտքը Բեռլին 1806 թվականի հոկտեմբերի 27-ին, տեսել է նրան Վագրամում, տեսել, թե ինչպես Ռուսաստանից նահանջելու ժամանակ նա քայլում էր ցուպը ձեռքին, տեսել նրան Պետական խորհրդում, եթե այդ գրողն արիություն ունի ամեն ինչի մասին ճշմարտությունն ասելու, նույնիսկ ի վնաս իր հերոսի, ավելի բարենպաստ վիճակում է գտնվում։

Այն դեպքերում, երբ, ի դժբախտություն ինձ, ես այն կարծիքին կհետևեմ, որը չի մտնում 1837 թվականի հասարակության գրական կամ քաղաքական «հավատամքի» մեջ, ամենևին էլ չեմ փորձի այդ կարծիքը վարագուրել վարպետորեն, այլ, ընդհակառակը, կարտահայտեմ որքան կարելի է ավելի պարզ և կտրուկ։ Ես գիտեմ, կտրուկությունը ոճի արատ է։ Բայց երեսպաշտությունը բարքերի արատ է, որն այնքան է տարածված մեր օրերում, որ անհրաժեշտ է ամեն տեսակ նախազգուշություն ձեռնարկել՝ դրա մեջ չընկնելու համար։

Ստելու արվեստը գլխավորապես ծաղկում է ակադեմիական վերամբարձ ոճի և, ինչպես ասում են, նրբագեղությամբ պայմանավորված շրջասությունների շնորհիվ։ Ինչ վերաբերում է ինձ, ապա ես պնդում եմ, որ դրանք պայմանավորված են հեղինակի շրջահայացությամբ, որը սովորաբար ձգտում է գրականությունն օգտագործել որպես որևէ բանի ավելի լավ հասնելու միջոց։

Այսպիսով, ես ընթերցողի ներողամտությունն եմ խնդրում ծայրահեղ պարզ ու սակավ նրբագեղ ոճի համար, մի ոճ,

որը, համապատասխան տաղանդի դեպքում նման կլիներ XVII դարի ոճին՝ Պլինիուսի նամակների թարգմանիչ պ-ն դը Սասիի կամ էլ Հերոդիանոսի թարգմանիչ աբբա Մոնդոյի ոճին։ Ինձ թվում է, ես միշտ արիություն կունենամ նվազ նրբագեղ բառ ընտրելու, եթե այն իմ մտքին ես մեկ երանգ հաղորդի։

Երբ պատանի ժամանակ մենք կարդում ենք հին պատմությունը, հիացմունքի ընդունակ սրտերի մեծ մասը սիրով է տոգորվում հռոմեացիների հանդեպ և ողբում նրանց պարտությունները. և դա չնայած նրանց անարդարացիությանն ու դաշնակիցների նկատմամբ նրանց ողջ բռնակալությանը։ Նման զգացումն արդեն մեզ հնարավորություն չի տալիս Նապոլեոնի գործողությունները տեսնելուց հետո սիրել մեկ ուրիշ զորավարի։ Ուրիշ զորապետների ճառերում միշտ գտնում ես երեսպաշտական քաղցր-մեղցր շափաղանցված մի բան, որն սպանում է զգացմունքը սաղմնային վիճակում։ Սերը Նապոլեոնի հանդեպ իմ մեջ պահպանված միակ կիրքն է, բայց դա ամենևին էլ ինձ չի խանդարում տեսնելու նրա մտքի թերությունները և խղճուկ թուլությունները, որոնց համար կարելի է նրան մեղադրել։

Այժմ, երբ դու, օ՜, իմ անբարեհաճ ընթերցող, նախազգուշացված ես և գիտես, թե նրբագեղությանը խորթ ինչպիսի անտաշի կամ, ավելի ճիշտ, փառասիրությունից զուրկ ինչպիսի պարզամիտի հետ գործ ունես դու, ես ինձ թույլ կտամ, եթե դու գիրքը դեռ չես փակել, քեզ հետ մի վիճելի հարց քննարկել։

Բանիմաց մարդիկ ինձ հավատացրին, որ Նապոլեոնի խելացի պատմությունը կարելի կլինի հրապարակել քսան-երեսուն տարուց ոչ շուտ։ Մինչ այդ պ-ն դը Թալեյրանի, Բասսանի դքսի և շատ ուրիշների նոթերը* կհրապարակվեն և կարժանանան գնահատականի։ Արդեն կսկսի ձևավորվել սերունդների վերջնական կարծիքն այս մեծ մարդու մասին. արիստոկրատիայի նախանձը, եթե այն ավելին չէ, քան նախանձ, մինչ այդ կմարի։ Ներկայումս պատվարժան մարդիկ դեռ պարծենում են նրանով, որ Նապոլեոնին անվանում են պ-ն դը Բուոնապարտե։

Անշուշտ, 1860 թվականի գրողը շատ առավելություններ կունենա. նրան չեն հասնի այն հիմարությունները, որ ոչնչացնում է ժամանակը, բայց նա կզրկվի մի անգնահատելի արժանիքից՝ նա չի ճանաչել իր հերոսին, օրական երեք-չորս ժամ խոսակցություններ չի լսել նրա մասին։ Ես ծառայության մեջ եմ եղել նրա

արքունիքում, ապրել եմ այնտեղ. ես ուղեկցել եմ կայսրին նրա բոլոր արշավանքներում, մասնակցել նվաճված երկրներում նրա ստեղծած կառավարմանը, երկար ժամանակ մտերիմ եղել նրա ամենաազդեցիկ մինիստրներից մեկի հետ։ Այս բոլոր հիմունքներով համարձակվում եմ ձայն բարձրացնել և նախնական մի համառոտ ակնարկ ներկայացնել, որը կարելի կլինի կարդալ նախքան իսկական պատմության երևան գալը՝ 1860 կամ 1880 թվականին։ Այդպիսին է հետաքրքրասերի զբաղմունքը՝ կարդալ իրեն հետաքրքրող նյութը վատ շարադրող անճաշակ գրքեր։

Ես հարկ համարեցի շատ հանգամանորեն շարադրել 1796—1797 թվականների Իտալական արշավանքը։ Դա Նապոլեոնի վերելքի սկիզբն էր։ Ինձ թվում է, որ այդ արշավանքում ավելի լավ, քան մեկ ուրիշում, բացահայտվում են նրա և՛ ռազմական հանճարը, և՛ ողջ խառնվածքը։ Եթե նկատի առնվի նրա տրամադրության տակ եղած միջոցների սղությունը, Ավստրիայի զարմանալի դիմադրությունը և այն անվստահությունը, որ սկսնակը, որքան էլ նրան մեծ համարեն, միշտ տածում է ինքն իր նկատմամբ, չի կարելի չընդունել, որ դա, թերևս, Նապոլեոնի ամենափայլուն արշավանքն է։ Ընդ որում, 1797 թվականին նրան կարելի էր սիրել կրքոտ ու անձնվիրաբար. նա դեռ չէր հափշտակել իր երկրի ազատությունը. արդեն շատ դարեր ի վեր այդքան մեծ մարդ չէր եղել։

Ես հնարավորություն եմ ունեցել տեղում ուսումնասիրելու Իտալական արշավանքը։ Այն գունդը, որտեղ ես ծառայում էի 1800 թվականին, երթադագարներ է կատարել Քերասկոյում, Լոդիում, Կրեմոնայում, Կաստիլիոնեում, Գոյտոյում, Պադուայում, Վիչենցայում և այլուր։ Պատանու ոգևորությամբ ես (ճիշտ է, արդեն 1796 թվականի արշավանքից հետո) այցելեցի Նապոլեոնյան ճակատամարտերի գրեթե բոլոր մարտադաշտերը։ Ես այնտեղ շրջեցի նրա դրոշների ներքո մարտնչած զինվորների և նրա փառքով հիացած երիտասարդ իտալացիների ուղեկցությամբ։ Նրանց դիտողությունները լիուլի արտացոլում էին այն հայացքները, որ նա կարողացել էր ներշնչել ժողովուրդներին։ Նրա ճակատամարտերի հետքերը որոշակի նկատելի էին թե՛ քաղաքներում և թե՛ գյուղական վայրերում. դեռ մինչև հիմա էլ Լոդիի, Լոնատոյի, Ռիվոլիի, Արկոլեի, Վերոնայի պատերն ակոսված են ֆրանսիական գրե-

դակներով։ Ես հաճախ եմ առիթ ունեցել լսելու մի հիանալի բացականչություն. «Ինչպե՞ս մենք կարողացանք այն ժամանակ ելնել ձեր՝ մեզ կյանք վերադարձնողներիդ դեմ»։

Ես օթևանատանն ապրել եմ ամենակրակոտ հայրենասերների մոտ, օրինակ՝ Ռեջոյի՝ մի կանոնիկոսի մոտ, որն ինձ պատմել է այդ երկրամասի ողջ նորագույն պատմությունը։ Այսպես ուրեմն, թախանձագին խնդրում եմ ընթերցողին չվախենալ Իտալական արշավանքին հատկացված էջերի քանակից. ես ականատես եմ եղել նաև Գերմանիայի ու Մոսկվայի արշավանքներին, բայց դրանց մասին այդպես հանգամանորեն չեմ պատմի։

Ձեռագիրը, որ ներկայացնում եմ հասարակությանը, գրվել է 1816 թվականից։ Այն ժամանակ ես շարունակ լսում էի, որ պ-ն դը Բուոնապարտեն դաժան է, վախկոտ է, որ նրա անունը ոչ թե Նապոլեոն է, այլ Նիկոլա՛ և այլն և այլն։ Ես մի փոքրիկ գրքույկ եմ գրել, որտեղ պատմել եմ լոկ այն արշավանքների մասին, որոնց ականատեսն անձամբ ինքս եմ եղել, բայց բոլոր հրատարակիչները, որոնց հետ իմ անունից բանակցություններ են վարվել, վախենում էին։ Ես խոստովանում էի Նապոլեոնի սխալները. ահա այն գլխավոր պատճառը, որ մարդիկ, որոնք ձգտում էին հարստանալ ուրիշի մտքերը հրապարակելով, մեծագույն արհամարհանքով լցվեցին իմ նկատմամբ։ Այս պարոնների ասելով, արքայական դատախազի կողմից հետապնդման վտանգը գրեթե անխուսափելի էր. փոխհատուցման համար հարկավոր էր գոնե կանխապես ապահովել բոնապարտիստական կուսակցության պաշտպանությունը։ Սակայն, ասում էին նրանք, այդ կուսակցությունը խիստ օրինավոր, բայց գիրք կարդալու մեջ սակավ հմուտ շատ մարդիկ ունի։ Հենց որ տեսնեն, որ իրենց հերոսին պարսավում են, նրանք դրանից կեղրակացնեն, որ հեղինակը տաքուկ տեղ է ակնկալում Կոնգրեգացիայից*։

Առարկելու բան չկար։ Ես դադարեցի մտածել իմ գրքի մասին։ 1828 թվականին, երբ միայնակ ապրում էի գյուղում, և ձեռագիրը մոտս էր, ես վերընթերցեցի այն, իսկ քանի որ տասներկու տարվա ընթացքում նկատել էի, թե ինչպես էին վիճարկվում ամենահանրահայտ փաստերը, և բանը հասնում էր նրան, որ բացեիրաց ժխտում էին բուն ճակատամարտերի գոյությունը (պ-ն Բոտտան ժխտում է Լոնատոն), որոշեցի պարզորոշ, այսինքն՝ հանգամանորեն շարադրել իրադարձությունները։

Ես գրեթե բնազդական համոզմունք ունեմ, որ յուրաքանչյուր զորավոր մարդ ստում է, երբ խոսում է, իսկ առավել ևս՝ երբ գրում է։ Այնուամենայնիվ, ոգեշնչվելով ռազմական սխրագործության գեղեցիկ իդեալով, Նապոլեոնը ճակատամարտերի մասին այն փոքրաթիվ պատմություններում, որ մեզ թողել է, հաճախ ճշմարտությունն է ասում։ Դրանցից ես մեջ եմ բերել այն պատմությունները, որոնք վերաբերում են Իտալական արշավանքին՝ դրանց կցելով համառոտ ակնարկ, որը բավական է ճշմարտությունը պաշտպանելու համար, իսկ գլխավորապես՝ ճշմարտության այն մասը, որ զանց է առնում հեղինակը։ Հոժարակամ ինչպե՞ս հրաժարվել այդքան կրակոտ պատմություններից։

Ես դրանք հատկապես մեջ եմ բերել, որովհետև իմ նպատակն է՝ իսկապես ծանոթացնել ընթերցողին այդ բացառիկ մարդու հետ։ Գրել Ֆրանսիայի պատմությունը 1800 թվականից մինչև 1815 թվականը ներառյալ՝ ես դրան բոլորովին չեմ հավակնում։

1828 թվականի այդ ձեռագրում շատ բան, որ հիմա վատ է հնչում, ես ջնջել եմ։ Բայց, աշխատելով զուր տեղը չվիրավորել նրանց, ովքեր համամիտ չեն ինձ, ես, Կալպիջիի նման, ավելի մեծ դժվարության մեջ եմ ընկել՝ և՛ ուզում եմ, և՛ չեմ ուզում։ Ներկայումս լավ հասարակությունն իր մեջ համատեղում է ինչ-որ մի զգացում և ինչ-որ մի պարտականություն, որոնք անողորմ թշնամի են միմյանց. նա սոսկում է 1793 թվականի սարսափների վերադարձից, և միաժամանակ գերագույն դատավոր է գրականության գործերում։ Ճիշտ է, փոքրոգի կամ կաշառակեր դատավորի նման, ենթարկվելով իր մեջ գերակշռող կրքին՝ ինենսուներեմ թվականի հանդեպ ունեցած սարսափին, նա «վատ տոն» հայտարարեց քննադատական ամեն մի ակնարկ այն չորս-հինգ մեծ հարցերի վերաբերյալ, որոնք ինքը լուծել է յուրովի և որոնց ետևում փորձում է թաքնվել, որպեսզի չտեսնի ինենսուներեք թվականի ահեղ վերադարձը։

Լավ հասարակությունն արդեն թույլ չի տալիս այն անձանց նախորդների նվաղ գովելի գործողությունների մասին պատմելը, որոնց վրա նա ծիծաղել է 1793 թվականին, և որոնք հիմա նրա ամենամերձավոր դաշնակիցներն են։ Այդ պարոնները, որոնք, իմ կարծիքով, խիստ վարկաբեկում են նրան, նրա հետ կայացրած համաձայնությամբ իրենց բացառիկ իրավունք են վերապահել ասելու չորս-հինգ ճշմարտությունների մասին, որոնք իրեն հար-

գող ամեն մի գրողի համար պետք է կտակարանի տապանի նման սրբազան լիներ։

Հեղափոխության ժամանակ ակումբներում երևաց, որ վախով տառապող յուրաքանչյուր հասարակության մեջ իր իսկ համար աննկատելի՝ գերիշխում ու ղեկավարում են նրա ամենից պակաս լուսավորյալ և ամենից անխելք անդամները։ Մարդն ինչքան խելոք է, այնքան քիչ է համաձայն իր ֆրակցիայի հետ, հատկապես եթե նրան հարցուփորձ ես անում երես առ երես։ Բայց մարդկանց ներկայությամբ, որպեսզի չկորցնի իր կաստան, նա պետք է համաձայնվի ղեկավարների հետ։ Ի՞նչ կասեն ղեկավարներն այս պատմական ակնարկի մասին։ Ոչինչ կամ էլ շատ վատ բաներ։ Այսպիսով, ես կցանկանայի, որ լավ հասարակությունը կարծիք հայտնի իմ մասին, իսկ լավ հասարակությունը չի կարող այս գիրքը կարդալ՝ առանց վիրավորելու իր ամենամերձավոր դաշնակցին, նրան, ով խոստացել է իսպառ անհնար դարձնել իննսունհերթ թվականի կործանարար վերադարձը։

Ես զուր կկրկնեի. «Բայց, պարոնա՛յք, չէ՞ որ նման վերադարձը հնարավորության սահմաններից դուրս է. դրանում համոզվելու համար բավական է Փարիզի բնակչության մարդկայնությունն ու մեծահոգությունը 1830 թվականի երեք հիշարժան օրերի ընթացքում համեմատել այն կույր ցասումի հետ, որ ամբոխը դրսևորել է 1789 թվականին Բաստիլի գրավման ժամանակ։ Ավելի պարզ ոչինչ չկա. 1789 թվականին պետք էր գործ ունենալ մարկիզուհի Պոմպադուրի*, մադամ Դյուբարրիի և Ռիշելյոյի* տիրապետությամբ շվայտացած ժողովրդի հետ, այն դեպքում, երբ 1837 թվականին մենք համընթաց քայլում ենք բանվորների բազմության հետ, որոնք գիտեն, որ իրենցից յուրաքանչյուրը կարող է Պատվո լեգիոնի խաչ ստանալ։ Չկա մի բանվոր, որն իր ազգականների մեջ հողի սեփականատեր կամ Պատվո լեգիոնի շքանշանի ասպետ չունենա։ Նապոլեոնը վերածնել է ֆրանսիական ժողովրդի ոգին. դրանում է նրա իսկական փառքը։ Նա դրան հասել է ընտանիքի հոր ունեցվածքը երեխաների միջև հավասար բաժանելու վերաբերյալ օրենքի միջոցով (Հեղափոխության բարերարությունը) և Պատվո լեգիոնի շքանշանի՝ պարգևի մի նշանի սահմանման միջոցով, որին հանդիպում ես արհեստանոցներում ամենահասարակ բանվորի հագուստի վրա»։

Բայց ի՞նչ փույթ խելամիտ փաստարկներ բերել ընդդեմ վախի։

Ո՞վ կարող է վախին տարհամոզել։ Վախը շատ կենդանի զգացում է։ Եվ սեփական գոյության մասին բուռն հոգատարության համեմատությամբ ի՞նչ նշանակություն ունի ունայն հետաքրքրությունը գրականության ու արվեստի նկատմամբ։ Թող մի հիսուն տարի խոսք էլ չլինի գրքերի մասին, միայն թե չլինեն յակոբինյանները։

Ինչպե՞ս նկարագրել Նապոլեոնի կյանքը՝ առանց ակամա շոշափելու այս չորս-հինգ մեծ ճշմարտություններից որևէ մեկը՝ ծննդյամբ պարգևված իրավունքները, թագավորների ստվածային իրավունքը և այլն և այլն, որոնց քննարկումը որոշ մարդիկ կուզենային բացառապես իրենց թողնել։

Այս դիտողությանը բավարար պատասխան չես գտնի. այդ իսկ պատճառով, ո՛վ իմ ընթերցող, քանի որ ես ոչ մի հարցում չեմ ուզում քեզ խաբել, ստիպված եմ հայտարարել, որ չնայած լավ հասարակության նկատմամբ տածած իմ ողջ հարգանքին, ես հարկադրված էի հրաժարվել նրա հավանությունից։

Սակայն, որպեսզի ապացուցեմ, որ ես անվերապահորեն չեմ մերժում ծագումի հետ կապված արտոնությունները, կավելացնեմ հետևյալը. մեր գրական շնչին գործերի մասին կարող է դատել միայն նա, ով հայրական ժառանգության մեջ գտել է Վոլտերի երկերի ժողովածուն, մի քանի հատոր էլզեվիրյան հրատարակություններ* և «Հանրագիտարանը»։

Պատմական երկի առաջաբանը նրա անկապտելի մասն է, որը պարունակում է այն հարցի պատասխանը, թե ո՞վ է այդ մարդը, որ որոշել է ինչ-որ բան պատմել մեզ։ Ի պատասխան այդ հարցի, ես ինձ թույլ եմ տալիս հետևյալ մանրամասները բերելու։

Առաջին անգամ գեներալ Բոնապարտին տեսել եմ Սեն-Բեռնարը նրա անցնելուց երկու օր հետո։ Դա Բարդ ամրոցում էր (1800 թվականի մայիսի 22-ին, երեսունչորս տարի առաջ, ո՛վ իմ ընթերցող)։ Մարենգոյի ճակատամարտից ուր թե ինն օր անց ես մուտք ունեցա Լա-Սկալայի (մեծ թատրոն Միլանում) նրա օթյակը, Արոնայի միջնաբերդի գրավման հետ կապված գործողությունների հաշվետվության համար։ Ես տեսել եմ Նապոլեոնի մուտքը Բեռլին՝ 1806 թվականին, Մոսկվա՝ 1812 թվականին, Միլեզիա՝ 1813 թվականին։ Ես առիթ եմ ունեցել Նապոլեոնին տեսնելու բոլոր այդ ժամանակաշրջաններում։ Առաջին անգամ այդ մեծ մարդը խոսել է ինձ հետ Կրեմլի զորահանդեսի ժամա-

նակ։ Ես նրա հետ երկարատև զրուցելու պատվին եմ արժանացել Սիլեզիայում՝ 1813 թվականի արշավանքի ժամանակ։ Եվ, վերջապես, նա անձամբ հանգամանորեն հրահանգավորել է ինձ 1813 թվականի դեկտեմբերին, երբ սենատոր կոմս դը Սեն-Վալիեի հետ ուղարկվում էի Գրենոբլ։ Այդ պատճառով էլ կարող եմ հանգիստ խղճով ծիծաղել բազմաթիվ ստապատիր հերյուրանքների վրա։

Քանի որ ոչ մի ճշմարտացի մանրամասն ինձ ավելորդ չի թվում, կասեմ, որ չգիտեմ, թե գալիք սերունդներն այդ մեծ մարդուն Բոնապարտ կանվանեն, թե Նապոլեոն։ Այդ տարակուսանքների պատճառով էլ ես հաճախ օգտագործում եմ երկրորդ անունը։ Բոնապարտ անվան տակ ձեռք բերված փառքն ինձ շատ ավելի ջինջ է թվում. բայց լսում եմ, թե ինչպես մարդիկ, որոնք նրան ատում են, և որոնց արտոնություններն աշխարհում նրանից բացի ուրիշ ոչ ոք չի կարողացել պաշտպանել, նրան պ-ն Բոնապարտն են անվանում, և այդ անունը, որ այնքան մեծ էր 1797 թվականին, այժմ իմ մեջ ակամա ամենազվարճալի հիշողություններ է առաջացնում այն անձանց մասին, որոնք դիտավորյալ խեղաթյուրում են այն։

Ես վախենում եմ, թե չլինի հանկարծ սերունդների աչքում XIX դարի գրողների դերը մոտավորապես այնպիսին լինի, ինչպիսին Կլավդիանոսի կամ Սենեկայի ժամանակակիցների դերը լատինական գրականության մեջ։

Այդ անկման պատճառներից մեկը, անշուշտ, գրականության հետ ընդհանուր ոչինչ չունեցող հետաքրքրության մեջ է, որը դրդում է ընթերցողին գրքում ամենից առաջ որոնել հեղինակի քաղաքական դավանանքը։ Ինչ վերաբերում է ինձ, ես ցանկանում եմ լրիվ անձեռնմխելի պահել այն, ինչ կա։ Բայց իմ քաղաքական դավանանքն ինձ չի խանգարում հասկանալու Դանտոնի, Սիեյեսի, Միրաբոյի* և Նապոլեոնի՝ այդ մեծ մարդկանց, ժամանակակից Ֆրանսիայի իսկական հիմնադիրների քաղաքական համոզմունքները. առանց նրանցից որևէ մեկի 1837 թվականի Ֆրանսիան չէր լինի այն, ինչ կա։

Ապրիլ 1837 թվականի

ԳԼՈՒԽ I

Ես ակնածանքի նման ինչ-որ բան եմ զգում՝ սկսելով գրել Նապոլեոնի պատմության առաջին իսկ նախադասությունը։ Խոսքն ամենամեծ մարդու մասին է, որին աշխարհն իմացել է Կեսարից հետո։ Իսկ եթե ընթերցողը նեղություն քաշի ուսումնասիրել Կեսարի կյանքն ըստ Սվետոնիուսի, Ցիցերոնի, Պլուտարքոսի և «Մեկնություններիչ», ես նույնիսկ կհանդգնեմ ասել, որ մեզ սպասվում է միասին քննել Ալեքսանդրից հետո ծնված ամենազարմանահրաշ մարդու կյանքը, որի մասին մենք շատ քիչ մանրամասներ գիտենք, որպեսզի ըստ արժանվույն գնահատենք նրա ձեռնարկների դժվարությունները։

Ես հույս ունեի, որ Նապոլեոնին ճանաչողներից որևէ մեկը հանձն կառնի պատմելու նրա կյանքը։ Դրան սպասել եմ քսան տարի։ Վերջապես, տեսնելով, որ այդ մեծ մարդն ավելի ու ավելի անհայտ է դառնում, ցանկացա նախքան մեռնելս հայտնել նրա զինակիցների կարծիքը իր մասին, քանզի այն ամբողջ ստրկամտության մեջ, որ հայտնի է աշխարհին, Յուլիսյան պալատում, որն այն ժամանակ աշխարհի կենտրոնն էր, այնուամենայնիվ, հանդիպում էին ազատախոհ մարդիկ[1]։

Վաղ պատանեկության տարիներին մշակված խոր ակնածանքը հանրապետական առաքինությունների նկատմամբ, ատելության հասնող արտակարգ արհամարհանքն այն միապետների դործելակերպի նկատմամբ, որոնց դեմ մենք կռվել ենք, և նույնիսկ զին-

[1] Մի այլ ստեղծագործության մեջ (ես կարծում եմ, որ այն լույս կտեսնի մի քանի տարուց ոչ շուտ) հետաքրքրասեր ընթերցողներն այս առիթով կգտնեն տեղեկություններ, որոնք զգալիորեն տարբերվում են բոլոր այն ընդհանուր տեղերից, որոնց ներկայումս ընդունված է հավատալ։

վորական ամենահասարակ սովորությունների նկատմամբ, որոնց հետևում էին այդ միապետների զորքերը, 1794 թվականի մեր զինվորներից շատերին ներշնչել էին, որ միայն ֆրանսիացիներն են բանական էակներ։ Մեր աչքին Եվրոպայի մնացած բնակիչները, որոնք կռվում էին իրենց կապանքները պահպանելու համար, լոկ ափսոսանքի արժանի տխմարներ էին կամ էլ մեզ վրա հարձակվող բռնակալներին ծախված սրիկաներ։ Պիտը* և Կորուազը* որոնց անունները դեռ երբեմն լսվում են որպես հեղափոխության հեռավոր արձագանք, մեզ թվում էին այդ սրիկաների պարագլուխներ և աշխարհում եղած ողջ դավաճանության ու հիմարության մարմնացում։ Այն ժամանակ բոլորի վրա գերիշխում էր մի խոր զգացում, որի ոչ մի հետքը ես այլևս չեմ տեսնում։ Թող ընթերցողը, եթե նա հիսուն տարեկանից ցածր է, աշխատի գրքերով պատկերացնել, որ 1794 թվականին մենք ոչ մի կրոն չենք ունեցել. մեր նվիրական, իսկական զգացումը կենտրոնացված էր մի մտքի վրա՝ օգտակար լինել հայրենիքին։

Մնացած ամեն ինչ՝ հագուստը, սնունդը, կարիերան, մեր աչքում լոկ չնչին, խղճուկ մանրուք էր։ Քանի որ չկար հասարակություն, ապա չկային նաև հաջողություններ հասարակության մեջ, որոնք այնքա՜ն կարևոր են մեր ազգի խառնվածքի համար։

Փողոցում մեր աչքերն արցունքով էին լցվում, երբ տեսնում էինք պատին փակցված մակագրությունն ի պատիվ պատանի թմբկահար Բարայի (որը տասներեք տարեկանում զոհաբերել է իր կյանքը՝ մինչև վերջին շունչը շարունակելով թմբկահարել, որպեսզի նախազգուշացնի հակառակորդի հանկարծակի հարձակումը)։ Զանազան տոնախմբությունները, հաճախակի և հուզիչ ծիսակատարությունները մեր՝ ուրիշ ոչ մի բազմամարդ հավաք չիմացողներիս մեջ առաջացնում էին մի զգացմունք, որը մեր սրտերում իշխում էր ամեն ինչի վրա։

Այդ զգացմունքը մեր միակ կրոնն էր։ Երբ Նապոլեոնը հայտնվեց և վերջ տվեց անընդհատ պարտություններին, որ մեզ բաժին էր հասցնում Դիրեկտորիայի ապաշնորհ կառավարությունը, մենք դրա մեջ տեսանք դիկտատուրայի լոկ ռազմական օգուտը։ Նա մեզ հաղթանակներ էր տալիս, բայց մենք նրա բոլոր արարքների մասին դատում էինք այն կրոնի օրենքներով, որը վաղ մանկությունից տիպել է, որ արագ բարախեն մեր սրտերը. մենք այդ

դիկտատուրայում հարգանքի արժանի միայն մի բան էինք տեսնում՝ հայրենիքի օգուտը։

Հետագայում մենք բազմիցս դավաճանել ենք այդ կրոնին, բայց բոլոր վճռական պահերին այն, իր համախոհներին առինքնող կաթոլիկական կրոնի նման, նորից տիրում էր մեր սրտերին։

Այլ կերպ էր դասավորվում նրանց գործը, ովքեր ծնվել են շուրջ 1790 թվականին. առաջին բանը, որ նրանք տեսան տասնըհինգ տարեկան հասակում՝ 1805 թվականին, երբ դեռ նոր էին սկսում բացել աչքերը, այն անձանց փետրազարդ թավշյա գլխարկներն էին, ում Նապոլեոնը վերջերս էր գքսեր ու կոմսեր հռչակել։ Բայց մեզ՝ հայրենիքի հին ծառաներիս, այդ նոր սեբընդի մանկական փառամոլությունն ու ծիծաղելի հիացմունքը լոկ արհամարհանք էին ներշնչում։

Այսպես ասած՝ Տյուիլրիում ապրած և այժմ դոնակներին մեծաշուք գերբերով ծածկակառքեր ունեցող մարդկանցից շատերն այդ նորամուծությունները համարում էին Նապոլեոնի քմահաճույքը՝ ընդ որում կշտամբանքի արժանի. Նվազ կրակոտները դրանում իրենց համար վտանգավոր քմայք էին տեսնում. հիսունից հազիվ մեկն էր հավատում դրանց հարատևությանը։

Ի տարբերություն 1805 թվականին ծառայությամբ ուսադիրների հասած սերնդի, այդ մարդիկ 1796 թվականի Իտալական առաջին արշավանքների զվարթությունն ու ուրախությունը վերագտնում էին միայն այն ժամանակ, երբ կայսրն ուղևորվում էր բանակ։ Իր ժամանակին ես կպատմեմ, թե 1804 թվականին Բուլոնում կենտրոնացված բանակն ինչպիսի դժգոհությամբ ընդունեց Պատվո լեգիոնի շքանշանների առաջին հանձնումը. հետագայում հարկ կլինի, որ ես խոսեմ հանրապետական ոգու ու Դելմասի, Լեկուրբի և ուրիշների շնորհազրկության մասին։

Այսպիսով, նույնիսկ Տյուիլրիի ներսում, նրանց մեջ, ովքեր անկեղծորեն սիրում էին Նապոլեոնին, կային մարդիկ, որոնք, երբ իրենց յուրայինների շրջապատում էին համարում՝ Սավարիի հետախուզությանը լիովին անհասանելի, կայսեր արարքների մասին դատելու այլ հիմք չէին ընդունում, քան հայրենիքի օգուտը։ Այդպիսին էին Դյուրոկը, Լավալետը, Լանը և էլի մի քանիսը. անշուշտ, այդպիսին կլինեին Դեզեն* և Կաֆարելլի-Դյուֆալգան. և, որքան էլ դա տարօրինակ է, այդպիսին էր նա ինքը, քանզի նա սիրում էր Ֆրանսիան սիրահարի ողջ ինքնամոռացությամբ։

Մշտապես այդպիսին էր և տիկին Լեթիցիան՝ Նապոլեոնի մայրը։ Այդ բացառիկ, կարելի է ասել, իր բարոյական խառնվածքով միակ կինը Ֆրանսիայում Տյուիլրիի մյուս բոլոր բնակիչներից ամենից շատ էր համակված այն հաստատ, անկեղծ, անսասան համոզմունքով, որ ազգը վաղ թե ուշ կարթնանա, իր որդու ստեղծած հսկայական կառուցվածքը կխորտակվի և, ավերվելով, կարող է խեղանդամ դարձնել նրան։

Այս ականավոր անձնավորության հիշատակումը վերջապես ինձ վերադարձրեց իմ թեմային, որն այժմ Նապոլեոնի մանկությունն է։

Կորսիկան կուսական անտառներով պատած և խոր հովիտներով ակոսված լեռների մի կուտակում է։ Այդ հովիտներում տեղտեղ հանդիպում են բուսականությամբ ծածկված հողակտորներ. այնտեղ ապրում են փոքրաթիվ վայրի ցեղեր, որոնք սնվում են շագանակներով։ Նրանք հասարակության պատկեր չեն ներկայացնում, այլ ավելի շուտ թվում են զուտ կարիքից միավորված ճրագնավորների միություն։ Իրենց աղքատությամբ հանդերձ, կորսիկացիներն ամենևին ժլատ չեն և մտածում են միայն երկու բանի մասին՝ վրեժ լուծել իրենց թշնամուց և սիրել իրենց սիրուհուն։ Նրանք համակված են պատվի զգացումով, և այդ պատիվն ավելի բանական է, քան եղել է Փարիզինը՝ XVIII դարում։ Բայց դրա փոխարեն նրանց սնափառությունը նույնքան հեշտ խոցելի է, որքան փոքր քաղաքի բուրժուայի սնափառությունը։ Եթե այն պահին, երբ մի խումբ կորսիկացիներ գնում են ճանապարհով, նրանց թշնամիներից որևէ մեկը մոտակա բարձունքից հովվական եղջերափող փչի, տարակուսելու հարկ չի լինի. հարկավոր է սպանել այդ մարդուն։

Բարձր լեռնաշղթաներով իրարից անջատված խոր հովիտները Կորսիկայի՝ շրջանների բաժանման բնական հիմքն են. դրանք անվանում են pieve[1]։

Յուրաքանչյուր pieve կերակրում է փոխադարձ ատելությամբ համակված մի քանի ազդեցիկ ընտանիքների. երբեմն դրանք միավորվում են, բայց սովորաբար իրար թշնամի են։ Ընդհանուր վտանգի սպառնալիքի ներքո թշնամանքը մի քանի ամիս մոռացվում է։ Իսկ ընդհանրապես նրանք կրակոտ սրտեր են. կյանքն

[1] Տուխ, համայնք (իտալ.)։

Ստենդալի դիմանկարը։ Գործ՝ Սոդերմարկի

Գեներալ Բոնապարտը Արկոլեի կամրջի վրա:
Գրա. 1796—1797: Լենինգրադ, Էրմիտաժ:

Բրյումերի 18-ը: Բուշոյի նկարից: Փարիզ, Լուվր:



Ժոզեֆինայի դիմանկարը: Ժերար, 1801: Լենինգրադ, Էրմիտաժ:

Գեներալ Բոնապարտի անցումը Սեն-Բեռնար լեռնանցքով: Դավիդ, 1801: Մալմեզոն, Ազգային թանգարան:



Նապոլեոնի այցը ժանտախտով հիվանդ զինվորներին Յաֆֆայում:
Գրո, 1803—1804: Փարիզ, Լուվր:



Առաջին կոնսուլի դիմանկարը: Էնգր, 1804: Լյեժ, Գեղեցիկ արվեստների թանգարան:

Նահանջ Ռուսաստանից: Ֆիլիպոտոյի նկարից: Վերսալի թանգարան:

Նապոլեոնը թագադրության հանդերձանքով: Ժերարի նկարից:

Նապոլեոն Բոնապարտի և Ժոզեֆինայի թագադրությունը Փարիզի Աստվածամոր տաճարում 1806 թ. դեկտեմբերի 2-ին: Ֆրագմենտ: Կանգնած են՝ ձախից աջ՝ մարշալ-ներ Բասիերը, Մոնսեյը, Սերյուրիեն և Մյուրատը: Օթյակի կենտրոնում կայսեր մայրն է՝ Լետիցիա Բոնապարտեն (իրականում նա ներկա չի եղել թագադրությանը): Դավիդ, 1803—1804: Փարիզ, Լուվր:

Նապոլեոնը Ենայի ճակատամարտում 1806 թ. հոկտեմբերի 13-ին: Հորաս Վեռնեի նկարից: Վերսալի թանգարան:

Առաջին կոնսուլը Մալմեզոնում: Ժան-Բատիստ Իզաբեյի նկարից: Վերսալի թանգարան:

Նապոլեոնի այցը Էյլաուի մարտադաշտը: Գրո, 1808: Փարիզ, Լուվր:



Կայսր Բոնապարտը Տիլզիտի հաշտության պահին: Վինյոյի նկարից:

1808 թ. մայիսի 2-ի ապստամբությունը Մադրիդում:
Գոյա, 1814: Մադրիդ, Պրադո:



Ապստամբների գնդակահարությունը մայիսի 3-ի գիշերը:
Ֆրազմենտ: Գոյա, 1814: Մադրիդ, Պրադո:

Կայսերական գվարդիայի ճեծյալ եգերների սպան զրոհի պահին:
Ժերիկո, 1812: Փարիզ, Լուվր:



Նապոլեոնն իր աշխատասենյակում:
Դավիդ, 1812: Վաշինգտոն, Ազգային բանգարան:

Մարշալ Նեյը Ռուսաստանից վերադարձի ճանապարհին:
Իվոնի նկարից: Վերսալի թանգարան:

Հրաժեշտը Ֆ. Հտենբլոյում 1814 թվականին: Հորաս Վեռնեի նկարից:

◀ Վերադարձ էլբա կղզուց: Ցնծագին դիմավորում Գրենոբլի մատույցներում: Ստյոբաքի նկարից:

Նապոլեոնի դամբարանը Փարիզի Սեն-Լուի-դեզ-Ինվալիդ եկեղեցում:





Փարիզի Սեն-Լուի-դեզ-Ինվալիդ եկեղեցին։

զգալու համար նրանց հարկավոր է բուռն սեր կամ էլ կրքոտ ատելություն։

Հրացանի կրակոցի զարմանահրաշ օրենքը հանգեցնում է այն բանին, որ ամենուրեք թագավորում է մեծագույն պատկառանքը. բայց ոչ մի տեղ դուք չեք գտնի այն ստորաքարշությունը, որ գերմանական գյուղացին դրսևորում է իր գյուղի ազնվականի նկատմամբ։ Pieve-ի ամենամանր սեփականատերն ամենևին չի հաճոյանում իր հարևանին՝ խոշոր կալվածատիրոջը։ Բայց երբ նրա ինքնասիրությունը վիրավորված է նույն պատճառով, ինչ որ այդ հարևանի ինքնասիրությունը, նա, հրացանն ուսը գցելով, միանում է նրան։ Եթե Պաոլին ուժեղ էր ջենովացիների, իսկ հետագայում՝ Լյուդովիկոս XV-ի ֆրանսիացիների դեմ մղվող պայքարում, ապա միայն այն պատճառով, որ pieve-ներից շատերը նրա կողմն էին։

1755 թվականից սկսած Պասկուալե Պաոլին, որին դժգոհները կանչել էին գլխավորելու ապստամբությունը, ձգտում էր տիրել կղզու լեռնային մասերին։ Նա դրան հասավ. նրան հաջողվեց ջենովացիներին ետ մղել ծովափ։

Կորսիկայի կեղեքիչները, նրան հնազանդեցնելու հույսը կորցնելով, օգնության կանչեցին ֆրանսիացիներին, իսկ սրանք էլ վերջիվերջո սկսեցին կռվել դժգոհների դեմ՝ հանուն իրենց սեփական շահերի. այդ պատճառով էլ կորսիկացի հայրենասերներն ատեցին իրենց բռնակալների հետնորդ ֆրանսիացիներին, որոնք իրենց հերթին բռնակալներ դարձան[1]։

Այդ ժամանակ Լյուդովիկոս XV-ի ռազմական և արտաքին գործերը տնօրինում էր դուքս դը Շուազելը։

Կորսիկայի ապստամբության ամենակրակոտ առաջնորդների և Պաոլիի ամենանվիրված համախոհների մեջ աչքի էր ընկնում Կառլո Բուոնապարտեն՝ Նապոլեոնի հայրը։ Այդ ժամանակ նա քսանչորս տարեկան էր. ծնվել էր Այաչչոյում, XV դարի վերջին կղզի գաղթած ազնվականի ընտանիքում։ Կառլո Բուոնապարտեն, որը ժառանգել էր մի համեստ ունեցվածք, որի կարգադրիչներն էին նրա երկու շատ հարգարժան քահանա-քեռիները, իրավունք էր ուսումնասիրել Տոսկանայի Պիզա քաղաքում։ Հայրենիք վերադառնալով, առանց իր քեռիների համաձայնության նա ամուս-

[1] Դյումուրիեի նոթերը, հ. I — Կամբյաջի, Կորսիկայի պատմությունը։

նացավ Լեթիցիա Ռամոլինիի հետ, որն ամբողջ կղզում ամենահմայիչ աղջկա համբավ ուներ. նա ինքն էլ շատ գեղեցիկ ու շափազանց սիրալիր էր։

1768 թվականին, երբ ֆրանսիացիների ու կորսիկացիների միջև եղած գժտությունը ծայրահեղ կատաղության հասավ, և ֆրանսիացիները բավական խոշոր ուժեր ափ հանեցին, Կառլո Բուոնապարտեն մեկնեց Կորտե՝ Պասկուալե Պաոլիի մոտ. չցանկանալով իր քեռիներին և կնոջը պատանդ թողնել ֆրանսիացիներին՝ նրանց տարավ իր հետ։

Պաոլին շատ էր վստահում նրան։ Կառլո Բուոնապարտեին են վերագրում կորսիկական երիտասարդությանն ուղղված կոչը, որը հրապարակվեց Կորտեում 1768 թվականի հունիսին և հետագայում տպագրվեց Կամբյաջիի «Կորսիկայի պատմության» չորրորդ հատորում։

Պոնտե Նուովոյի մոտ տեղի ունեցած արյունահեղ պարտությունից հետո, որը ոչնչացրեց Պաոլիին ոգեշնչած և կորսիկյան ժողովրդի մեծամասնության պաշտպանած անկախության երազանքները, Կառլո Բուոնապարտեն գտնվեց այն աննկուն հայրենասերների թվում, որոնք չհուսահատվեցին և որոշեցին Կլեմանտե Պաոլիին՝ պարագլխի եղբորն ուղեկցել Նիոլո։ Նրանք հույս ունեին ոտքի հանել այդ ռազմատենչ մարդի բնակիչներին և մարտի տանել արագորեն առաջ շարժվող ֆրանսիական բանակի դեմ։ Այդ փորձն ավարտվեց անհաջողությամբ։

Կլեմենտե Պաոլին, որին այդ ամբողջ ժամանակ ուղեկցում էր Կառլո Բուոնապարտեն, Նիոլոյից փոխադրվեց Վիկո. նա ուզում էր մինչև վերջ մարտնչել։ Բայց իրադարձությունների բուռն ընթացքն այդքան վսեմ ջանքերն ապարդյուն դարձրեց։ Կլեմենտե Պաոլին, ինչպես և նրա փառապանծ եղբայրը, ստիպված եղավ փախչել հայրենիքից, որն իրենք ցանկանում էին ազատել օտարերկրյա լծից։

Նիոլոյի ու Վիկոյի շարաբաստիկ արշավանքների բոլոր աղետների ժամանակ Կառլո Բուոնապարտեի ջահել ու գեղեցիկ կինը շարունակ ուղեկցում էր նրան. նա չէր սարսափում պատերազմի վտանգներից և բախտակից էր ամայի լեռներում, ուղղաթռիչ ժայռերի մեջ գործող ապստամբների բոլոր զրկանքներին։ Ամուսնու պես մտածելով միայն այն մասին, որ իր հայրենիքն ազատի օտարերկրյա լծից, տիկին Բուոնապարտեն տոկունությամբ տա-

նում էր իր սեռին ու դիրքին ոչ հատուկ տառապանքները։ Նա համառորեն հրաժարվում էր այն ապաստանից, որ նրան առաջարկում էր կղզին նվաճած ֆրանսիական զորավարը։ Տիկին Բուոնապարտեի հղիության առիթով արված այդ առաջարկությունների միջնորդը նրա հարազատ քեռին էր՝ ֆրանսիական գեներալի հենց նոր ստեղծած՝ Կորսիկայի գերագույն խորհրդի անդամը։

Հունիսին, երբ Պաոլի եղբայրների մեկնումով հայրենասերները կորցրին ամեն մի հույս, Վիկոյից հետո Ապիետտո գյուղակում թաքնված Կառլո Բուոնապարտեն յոթ ամսական հղի ջահել կնոջ հետ վերադարձավ Այաչչոյի իր տունը։

1769 թվականի օգոստոսի 15-ին, Վերափոխման տոնին եկեղեցում պատարագի ժամանակ սկսվում են տիկին Բուոնապարտեի երկունքի ցավերը, այնքան ուժեղ, որ նա ստիպված է լինում շտապ վերադառնալ տուն. նա չհասցրեց ննջարան հասնել և ծննդաբերեց նախասենյակում, հերոսների պատկերներով զարդարված մի հին գորգի վրա։ Մանուկին կոչեցին Նապոլեոն՝ ի պատիվ Կառլո Բուոնապարտեի քեռիներից մեկի, որը մի տարի առաջ փախուստի ժամանակ զոհվել էր Կորտեի տակ։

Ընդհանուր ընկճվածության և այն բոլոր խառնաշփոթությունների մեջ, որ հաջորդում է քաղաքացիական երկարատև պատերազմի ավարտին և նոր իշխանության հաստատմանը, սուղ միջոցների տեր, ընդ որում տարեցտարի աճող ընտանիքի միջավայրում Նապոլեոնը հիմնականում ստացավ այն դաստիարակությունը, որն անհրաժեշտ էր։ Ֆրանսիացիների համար դժվար է պատկերացնել իտալական ընտանիքի կյանքի կացութաձևի ողջ դաժանությունը. ո՛չ մի աշխուժություն, ո՛չ մի ավելորդ խոսք, հաճախ՝ մեռելային լռություն։ Անտարակույս, Նապոլեոնը պատանի հասակում շրջապատված չի եղել Ֆրանսիայում ընդունված այն աֆեկտացիայով, որը մեր երեխաների մեջ այդպես վաղ է արթնացնում ու զարգացնում փառասիրությունը և վեց տարեկանի մոտերքը նրանց դարձնում զվարճալի խաղալիքներ, իսկ տասնութ տարեկանի մոտերքը՝ պատանի գռեհկամիտներ։ Նապոլեոնն ինքն իր մասին ասել է. «Ես կամակոր և հետաքրքրասեր երեխա եմ եղել»։

Պատմությունները, խոստովանում եմ՝ սակավ արժանահավատները, վաղ մանկության հասակում նրան պատկերում են որ-

պես մի աղմկարար փոքրիկ էակ՝ ճարպիկ, աշխույժ և արտա-
կարգ ժիր։ Նրա ասելով՝ ավագ եղբայր Ժոզեֆը գտնվում էր իր
լիակատար ենթակայության ներքո։ Նապոլեոնը ծեծում, կծոտում
էր նրան. նա վազում էր մորը բողոքելու, բայց խեղճը դեռ բերանը
չբացած, մայրն արդեն նախատում էր նրան։ Ժոզեֆը խիստ նա-
խանձում էր եղբորը նրա գերազանցությունների և այն նախա-
պատվության համար, որ տալիս էին նրան։

Որոշ փիլիսոփաներ ենթադրում են, որ մարդն իր բնավորու-
թյունը ժառանգում է մորից, որ այդ բնավորությունն սկսում է
ձևավորվել երկու տարեկան հասակից և չորս կամ հինգ տարեկա-
նում արդեն վերջնականապես կազմակերպվում է։ Դա առաջին
հերթին կարելի է ասել հարավցիների մասին՝ նրանց մռայլ ու
կրքոտ խառնվածքով հանդերձ։ Այդ մարդիկ մանկուց երջանկու-
թյան են ձգտում որոշակի եղանակով, որը հետագայում նրանց
կողմից կիրառվում է տարբեր բաների նկատմամբ, բայց միշտ
մնում է նույնը։

Ինչ հանգամանքներով է շրջապատված եղել Նապոլեոնի օրո-
րոցը։ Ես տեսնում եմ նրա մորը՝ բազմանդամ ընտանիքի հոգսե-
րով ծանրաբեռնված այդ կնոջը, որի պայծառ միտքը ոչ պակաս
նշանակալից է, քան նրա գեղեցկությունը։ Այդ բավական աղքատ
ընտանիքն աճում ու բարձրանում է ատելության և կատաղի գրժ-
տությունների մեջ, որոնք անխուսափելի են երեսուն տարվա
դժգոհությունից ու քաղաքացիական պատերազմից հետո։ Հե-
տագայում մենք կտեսնենք, թե ինչպիսի խոր զզվանք էր ներ-
շնչում Նապոլեոնին գնդապետ Բուտաֆոկոն*, որի միակ մեղքն
այն էր, որ մարտնչել է Պաոլիի դեմ և հարել մի կուսակցության,
որը թշնամի էր այն կուսակցությանը, որին պատկանում էր Բուո-
նապարտե ընտանիքը։

Պաոլի անունը թնդում էր Կորսիկայում։ Այդ պարտված և այ-
նուամենայնիվ հպարտությամբ տոգորված փոքրիկ կղզին պար-
ծենում էր, որ իր հերոսի անունը կրկնում և փառաբանում են
ամբողջ Եվրոպայում։ Այդ պատճառով էլ մանուկ Նապոլեոնի
ուղեղում ամեն վսեմ բան, բոլոր ձիրքերը նույնացվում էին այդ
Պասկուալե Պաոլի անվան հետ։ Եվ, տարօրինակ պատահականու-
թյամբ, Պաոլին կարծես հանդիսացել է Նապոլեոնի ողջ ապագա
կյանքի նախատիպն ու մարմնացումը։

Իր գործունեությունը նա սկսում է քսանինը տարեկանում՝
որպես գլխավոր հրամանատար։ Նրա շուրթերին շարունակ Պլու-
տարքոսի և Տիտոս Լիվիոսի անուններն ու ասույթներն են, որոնք
կդառնան Նապոլեոնի կատեխիզիսը։ Կորսիկայում Պաոլին փոքր
մասշտաբներով կատարել է այն ամենը, ինչ Նապոլեոնը հետա-
գայում պետք է կատարեր Ֆրանսիայում, երբ դարձավ Դիրեկտո-
րիայի ողորմելի կառավարության ժառանգորդը։ Նախ՝ նվաճում,
հետո՝ կազմակերպում։ Ինչպես Նապոլեոնը Մարենգոյում նվա-
ճեց Ֆրանսիայի անկախությունը, այնպես էլ Պաոլին, ջենովա-
ցիներից ետ նվաճելով Կորսիկայի լեռնազանգվածները, այնտեղ
այնուհետև կազմակերպեց վարչություն, արդարադատություն և
մնացած բոլորը՝ ընդհուպ մինչև ժողովրդական կրթությունը։

Երկար ժամանակ Պաոլին նույնքան կառավարիչ ու քաղաքա-
կան գործիչ էր, որքան մարտիկ։ Նա պետք է այնպես զգուշանար
ջենովացիների թույնից, ինչպես Նապոլեոնը՝ ռոյալիստների դժո-
խային մեքենայից կամ Ժորժ Կադուդալի դաշույնից։ Եվ, վերջա-
պես, տապալված և իրեն սիրող ժողովրդից բռնի կերպով անջատ-
ված լինելով օտարերկրացիների կողմից, որոնց ուժերն անհա-
մեմատ գերազանց էին իր սեփականից, Պաոլին ստիպված էր
հեռանալ Կորսիկայից և ապաստան որոնել հայրենիքից հեռու։

Ականավոր մարդու այս բոլոր ազնիվ ջանքերը կորսիկացի-
ների խոսակցության սովորական թեման էին։

Այսպիսով, տարօրինակ հաջողությամբ, որը չի վիճակվում
արքայական երեխաներին, ամեն մի գռեհիկ, ճղճիմ բան խորթ
էր Նապոլեոնի օրորոցը շրջապատող մարդկանց։

Նրան պատկերացնենք որպես 1769 թվականին Պիկարդիայում
կամ Լանգեդոկում ծնված, տարեկան քսանհինգ հազար լիվր եկա-
մուտի տեր մարկիզի կրտսեր որդի։ Ի՞նչ էր նա լսելու իր շուրջը։
Պատմություններ սիրային արկածների մասին, առասպելներ իր
տոհմի վաղեմության վերաբերյալ, խոսակցություններ իր հոր՝
մարկիզի, վաղուցվա գժտության մասին հարևան մանրակալված
ազնվականի հետ, որը նրանից երկու տարով շուտ էր հասել
կապիտանի աստիճանի այն պատրվակով, թե իբր երեք անգամ
վիրավորվել էր. բայց դրա փոխարեն, արքայազն Կոնտիի հովա-
նավորության շնորհիվ, մարկիզը երեք տարով շուտ է արժանա-
ցել ս. Լյուդովիկոսի շքանշանի խաչին։ Մարկիզն անդադար կար-

տահայտեր իր արհամարհանքը գործամոլների[1], հատկապես նահանգի ինտենդանտի նկատմամբ, որի կառքն ավելի շքեղ էր, քան իրենը. ճիշտ է, դա կփոխհատուցվեր այն բանով, որ մարկիզը ստացած կլիներ այն ծխի երեցփոխի պատվավոր պաշտոնը, որտեղ գտնվում էր ինտենդանտի առանձնատունը, ինչից ինտենդանտը, հավանորեն, ցասումով կլցվեր։

Այս ամբողջ դատարկաբանության փոխարեն Նապոլեոնը միայն խոսակցություններ էր լսում մի մեծ ուժի պայքարի մասին՝ մի այլ մեծ ուժի դեմ. ընդամենը հարյուր ութսուն հազար բնակիչ ունեցող փոքրիկ կղզու ազգային գվարդիան իր կողմից ընտրված երիտասարդի առաջնորդությամբ հանդգնում է պայքարել Ֆրանսիայի թագավորության դեմ. այս պետությունը, որն սկզբում խայտառակվել էր, մի շարք պարտություններ կրել, վերջապես Կորսիկա է ուղարկում քսանհինգ հազար զինվոր՝ իր լավագույն զորավար կոմս դը Վոյի գլխավորությամբ։

Այս ամենի մասին մանուկ հասակում Նապոլեոնին պատմել է նրա մայրը, որն անձամբ շատ անգամ փախուստով էր փրկվել ֆրանսիական գնդակներից. այս պայքարում ողջ փառքը բաժին է ընկնում համառ դիմադրություն ցույց տվող խաղաղ բնակչին. զինվորը լոկ իր դրույքը աշխատանքով հատուցող արհամարհելի վարձկան է։

Մեր օրերում, երբ անչափ շատերն են իրենք իրենց հակասում, որովհետև կեղծավորությունը սովորական բան է դարձել, և ոչ ոք չի համարձակվում բացահայտ հասնել փառասիրության հաճույքներին՝ XIX դարում Ֆրանսիայի հյուսիսի իրական միակ վայելքներին, շատ քիչ կյանք կգտնվի՝ երեսպաշտությամբ այնքա՜ն շարաշավորված և, իմ կարծիքով, այնքան ազնիվ, որքան տիկին Լեթիցիա Բոնապարտեի կյանքը։ Մենք տեսանք, թե ինչպես պատանի տարիներին հանուն իր կուսակցության նա խիզախորեն իրեն մեծ վտանգների է ենթարկել։ Հետագայում նա ստիպված է եղել, թերևս, ավելի ծանր փորձություններ կրել, քանի որ նրան այլևս նեցուկ չէին քաղաքացիական պատերազմին ուղեկցող զարթոնքը և ընդհանուր վերելքը։ Կորսիկայում գոյություն ունի մի դաժան սովորույթ, որը շատ է հիշեցնում ֆրան-

[1] Տե՛ս Միրաբոյի հուշերը, հրատ. Լյուկ դը Մոնտինյիի, հ. I—II։ Համեմատեք Միրաբոյի մանկությունը Նապոլեոնի մանկության հետ։

սիական հեղափոխության ժամանակների շարաբաստիկ «օրենքից դուրս հայտարարելը»։ Երբ որևէ ընտանիք ենթարկվում է այդ յուրահատուկ շնորհազրկությանը, նրա անտառները հրկիզում են, խաղողի ու ձիթենու այգիներն ամայացնում, նախիրը մորթոտում, տունը կրակի մատնում. մի աղքատ երկրում, որտեղ ոչ մի միջոց չկա նորից նյութական ապահովության հասնելու, դա լիակատար, անուղղելի սնանկացում է նշանակում։ Իբրև ֆրանսիական գեներալ Կորսիկա վերադառնալուց և այնուհետև անգլիացիների օգտին խռովություն բարձրացնելուց հետո Պասկուալե Պաոլին երեք անգամ սպառնացել է այդ ահեղ օրենքը կիրառել տիկին Բոնապարտեի՝ նեցուկ չունեցող աղքատ այրու նկատմամբ. երեք անգամ նա պատասխանել է Պաոլիին, որ ոչ մի սպառնալիք իրեն չի ստիպի հրաժարվել Ֆրանսիայի համախոհների կուսակցությունից։ Նրա համեստ ունեցվածքը ոչնչացվեց, անձնական անվտանգության սպառնալիքը ստիպեց նրան մանկահասակ երեխաների հետ փախչել Մարսել։ Նա կարծում էր, թե Ֆրանսիայում իրեն, որպես հայրենասիրության համար տառապածի, սիրալիր ընդունելություն ցույց կտան։ Նրան սկսեցին արհամարհել աղքատության և այն բանի համար, որ նրա աղջիկներն ստիպված էին իրենք շուկա գնալու։

Ոչինչ չէր կարող վրդովել այդ վեհ հոգուն՝ ո՛չ մարսելցիների արհամարհանքը 1793 թվականին, ո՛չ էլ յոթ տարի անց իր որդու արքունիքի այդքան անսպասելի փայլը։ Հասնելով խոր ծերության, ստիպված լինելով ապաստան փնտրել իր անվան ու իր հայրենիքի թշնամիների մոտ, տեսնելով այն ուրախությունը, որ նրանց պատճառում է իր որդու և իր թոռան մահը, նա նույնպիսի անբռնազբոսիկ բնական արժանապատվությամբ էր տանում այդ վիշտը, ինչպես Պաոլիի երբեմնի սպառնալիքները։ Ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի նշան խոցված ինքնասիրության այն տառապանքների, որոնք մեզ դրդում են սառնությամբ վերաբերվել մեր աչքի առջև գահընկեց արված թագավորներին ու թագուհիներին։ Այս անվեհեր հոգին իրեն նույնիսկ թույլ չէր տալիս արտասանել իր թշնամիների անունները և խոսել իր որդու մասին[1]։

[1] Տիկին Լեթիցիան մահացել է 1836 թվականի փետրվարի 1-ին Հռոմում, Վենետիկյան պալատում։ Գրիգոր XVI պապի ոստիկանությունը հասավ այն բանին, որ նրա դագաղը սուլոցներով էին ուղեկցում պալատից մինչև Վիա Լատայում գտնվող Սանտա Մարիա եկեղեցին ընկած կարճ ճանապարհին։

Նապոլեոնի մայրը մի կին էր, որը նման էր Պլուտարքոսի* հերոսուհիներին, նման էր պորցիաներին*, կոռնելիաներին*, տիկին Ռոլանին*։ Բայց իր անսասան, դաժան ու կրքոտ ամբողջ խառնվածքով նա հատկապես հիշեցնում էր իտալական միջնադարի հերոսուհիներին, որոնց ես չեմ անվանի, որովհետև նրանք անհայտ են Ֆրանսիայում[1]։ Տիկին Լեթիցիայի զուտ իտալական խառնվածքով պետք է բացատրել նրա որդու խառնվածքը։

Ըստ իս, այնպիսի մարդկանց, ինչպիսին Նապոլեոնն է, կարելի է գտնել միայն կոնդոտիերների և մանր միապետների մեջ, որոնք ապրել են Իտալիայում մոտ 1400 թվականին, ինչպես օրինակ՝ Սֆորցան*, Պիչչինինոն*, Կաստրուչչո-Կաստրականին* և ուրիշներ. արտասովոր մարդիկ, ամենևին էլ ոչ հաշվենկատ քաղաքագետներ բառիս սովորական իմաստով, այլ, ընդհակառակը՝ իրենց վերելքի համեմատ անընդհատ նոր մտահղացումներով տարվող, հմտորեն հանգամանքներից օգտվող և վստահությամբ միայն իրենց ապավինող. հերոսական հոգիներ, որոնք ծնվել են այն դարաշրջանում, երբ բոլորը ձգտում էին ոչ թե գրել, այլ գործել, աշխարհին անհայտ carent quia vate sacro[2], և միայն մասնակիորեն բացահայտված իրենց ժամանակակից Մաքիավելիի կողմից։ «Քաղաքացիների ազատությունն աննկատելիորեն առևանգելու արվեստի մասին» տրակտատի հեղինակ այդ մեծ գրողի պլանների մեջ չէր մտնում այն վայրենի կրքի դրսևորումների մասին խոսելը, որոնք հանկարծակի մթագնում էին «միապետի» ձիրքը։ Հույժ իմաստաբար նա լռությամբ է շրջանցում զգացմունքների անզուսպ պոռթկումները, որոնք անսպասելիորեն ստիպում էին արտաքուստ այնքան անխռով և ամեն ինչի վրա հույս դնող այդ մարդկանց մոռանալ ամեն մի ողջամտություն։

Երբ մշտապես մոտալուտ վտանգը փոխարինվեց նորագույն

1 Պրոֆեսոր Լեվատիի «Նշանավոր կանանց բառարանը», Միլան, 1820։

2 Նրանք ճշմարիտ են պատկերված միայն իտալական հին պատմաբանների, ինչպես օրինակ՝ Վիլլանիի* մոտ։ Նրանց մասին լավ պատկերացում է տալիս Մուրատորիի* համառոտ ակնարկը՝ մի առաջնակարգ պատմաբանի, որը նույնքան քիչ է հայտնի Ֆրանսիայում, ինչպես և նրա հերոսները։ Տե՛ս նրա «Annali d'Italia» աշխատությունը, որի յուրաքանչյուր գլուխը՝ մոտ տասներկու էջից բաղկացած, նկարագրում է տարվա իրադարձությունները՝ մեր թվարկության առաջին տարուց մինչև 1750 թվականը։

քաղաքակրթության հաճույքներով[1], մարդկանց այդ ցեղն անհետացավ աշխարհից։ Այն ժամանակ, ասես նրա համար, որ ակնառու կերպով ամրապնդվի բարոյական այդ փոփոխությունը, քաղաքները, որ առաջներում անվտանգության համար կառուցում էին բլուրների վրա, սկսեցին հարմարության համար կառուցել հարթավայրերում, իսկ իշխանությունը ֆեոդալական անվախ սենյորից անցավ խաբեբա դատավորին ու աշխատասեր արդյունաբերողին։

Եվ ահա այս կրքերի ու իրադարձությունների մեջ, որոնք այնքան հարազատ են վերարտադրում XIV դարը, որքան դա առհասարակ հնարավոր է նոր ժամանակներում, ծնվել է Նապոլեոնը։ Այդ ահեղ իրադարձությունները կարող էին կործանել նվազ շնորհալի մարդուն և պատանի կորսիկացուն դարձնել Ֆրանսիայի խղճուկ ստրուկը. բայց այդպիսին չէր Նապոլեոնը։

Մանուկ հասակից այն ուշադրությունը, որով Նապոլեոնը շրջապատված է եղել ընտանիքում, նրա ջահել սրտում զարգացնում էր սեփական գերազանցության զգացումը։ Նրա կրթության հետ կապված ծախքերը ծածկելու համար ընտանիքը դիմեց մեծագույն զոհաբերության, որին միայն կարող է դիմել կորսիկացին. նա վաճառեց հողամասը. բայց նրա մտքովն անգամ չանցավ նման զոհաբերություն անել ավագ եղբոր՝ Ժոզեֆի համար, որը նախանձից պայթում էր։

Մեռնելիս Կառլո Բուոնապարտեն ասաց Ժոզեֆին. «Դու ընտանիքի մեծն ես, բայց հիշիր, որ ընտանիքի գլխավորը Նապոլեոնն է»։ Հարկ է իմանալ, որ հարավում, որտեղ իշխում են սերն ու ատելությունը, և որտեղ մարդիկ չեն փչացել կիսաքաղաքակրթությունից, «ընտանիքի գլխավոր» հասկացողությունը հսկայական նշանակություն ունի. այն կապված է այնպիսի իրավունքների և պարտականությունների հետ, որոնց մասին արդեն խոսք անգամ լինել չի կարող մեր ողջամիտ ու հաշվենկատ հյուսիսային շրջաններում։

Պատանեկության արշալույսին, երբ լրացել էր Նապոլեոնի

1 Այստեղից էլ Նապոլեոնի խոր զզվանքը Ռեգենտության բարքերի նկատմամբ, որոնք անձամբ ես շատ ավելի գերազասում եմ մեր օրերի երեսպաշտությունից։ 1737 թվականին իրենց վաճառող մարդիկ արհամարհանք էին առաջացնում. հարգում էին ոչ թե փողը, այլ ինչ-որ մի այլ բան։

տասնչորս տարին, նրա համար ամենահեղ վտանգը ոչ թե թշնամու դաշույնից զոհվելն էր (չէ՞ որ Ֆրանսիայում այլևս թշնամիներ չկային), այլ սովամահությունը։ Նախքան անհոգ երիտասարդական շարաճճիություններով կամ կանանց մեջ հաջողություն ունենալու մասին մտածելը, նա պետք է հոգ տաներ հանապազօրյա հացի մասին։

Այդ միտքն անդադար զբաղեցնում էր նրան Բրիենում. այստեղից էլ նրա բնավորության լրջությունը և մաթեմատիկայի՝ մի կտոր հաց վաստակելու վստահելի միջոցի նկատմամբ նրա հակումը։

Այսպիսով, վաղ մանկության օրերին Պաոլիի հանդեպ տածած երկրպագությամբ սկիզբ դրված հակումները շնչեմացան պատանի տարիների զվարճությունների մեջ, որն այնքան հաճախ է պատահում։

Եվրոպայում սկսում են հասկանալ, որ ժողովուրդները միշտ հասնում են լոկ ազատության այն աստիճանին, որը նրանց խիզախությունը ետ է նվաճում վախից։ Հայրենասիրական ոգևորությունը և Կառլո Բուոնապարտեի ու նրա զինակիցների երկար դիմադրությունը Լյուդովիկոս XV-ի կառավարությանն ստիպեցին այդ փոքրիկ երկրին պարգևել այն, ինչ Ֆրանսիայի ամենագեղեցիկ մարզերն այլևս չունեին՝ «պրովինցիալ շտատներ»։

Պ-ն դը Շուազելի իմաստուն որոշմամբ, թե՞ հանգամանքների ուժին հնազանդվելով, ֆրանսիացիները հանձին Կառլո Բուոնապարտեի չէին հետապնդում խանդավառ հայրենասերին, որը մինչև վերջին րոպեն դիմադրում էր իրենց։ Անհրաժեշտ է նաև նշել, որ, հետևելով Իտալիայում ընդունված սովորույթին, կղզու նահանգապետ կոմս դը Մարբյոֆը սիրահետում էր տիկին Բուոնապարտեին։

Կղզու գերագույն խորհրդի 1771 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանագրով վերականգնվեցին Կառլո Բուոնապարտեի ազնվականական իրավունքները։

Երեք տարի անց նա կոմս դը Մարբյոֆի հանձնարարականով ստացավ թագավորական խորհրդատուի և Այաչչո քաղաքի ու նահանգի ատենակալի պաշտոն։

1779 թվականին նա նշանակվեց արքունիքին առընթեր՝ Կորսիկայի դեպուտատ և, վերջապես, 1781 թվականին դարձավ այդ կղզու տասներկու տոհմիկ ազնվականների խորհրդի անդամ։

Փարիզում Կորսիկայի դեպուտատ Կառլո Բուոնապարտեն իր հերթին ծառայություն մատուցեց կոմս դը Մարբյոֆին։ Կորսիկայի շտատների նախորդ գումարման դեպուտատներն իրենց ձանձրալի բողոքներով սասանեցին նրա դիրքը։ Այդ ժամանակ կղզին կառավարում էին ֆրանսիական երկու գեներալ, որոնք խիստ թշնամի էին իրար՝ բարեհոգի և ժողովրդականություն վայելող պ-ն դը Մարբյոֆը և ամբարտավան ու անզուսպ պ-ն դը Նարբոն-Պելլեն։ Վերջինս տոհմիկությամբ ու կապերով վեր կանգնած լինելով պ-ն դը Մարբյոֆից, նրա համար վտանգավոր ախոյան էր։ Պատմում են, որ Կառլո Բուոնապարտեն և Կորսիկայի մյուս դեպուտատները բարենպաստ կարծիք էին տվել պ-ն դը Մարբյոֆի մասին։ Այսպես թե այնպես, արքունիքը հարցը վճռեց նրա օգտին։

Մի այլ Մարբյոֆ՝ գեներալի զարմիկը, Լիոնի արքեպիսկոպոսն էր և տնօրինում էր բենեֆիցիաների բաշխումը. իր քեռուն ծառայություն մատուցած դեպուտատը նրա շնորհիվ երեք թոշակ ստացավ՝ մեկն իր ավագ որդի Ժոզեֆի համար Օտեն քաղաքի հոգևոր սեմինարիայում, երկրորդը՝ Նապոլեոնի համար Բրիենի ռազմական դպրոցում, երրորդը աղջկա՝ Մարի-Աննայի համար, Սեն-Սիրի հաստատությունում։

Կառլո Բուոնապարտեն Ֆրանսիայում մնաց մինչև 1779 թվականը։ Կորսիկա վերադառնալուց հինգ տարի հետո նա ստիպված եղավ երկու խոշոր դատավարություն սկսել կղզու վարչակազմի դեմ. դրությունն ավելի բարդացավ նրանով, որ նա յոլա չէր գնում ինտենդանտի հետ։

Կառլո Բուոնապարտեի որդին՝ Ժոզեֆը, առաջին հայցն իր վախճանին հասցրեց միայն 1786 թվականին՝ շահելով այն։ Երկրորդը Կառլո Բուոնապարտեն հասցրեց անձամբ ավարտել իր ընտանիքի համար նույնքան բարեհաջող կերպով։

1785 թվականին Կառլո Բուոնապարտեն ուղևորվեց Մոնպելիե, որպեսզի այնտեղ խորհրդակցի հռչակավոր բժշկական համալսարանի պրոֆեսորների հետ։ Նա ստամոքսի քաղցկեղ ուներ. գիտությունն անզոր գտնվեց, և նա վախճանվեց Մոնպելիեում 1785 թվականի փետրվարի 24-ին։

Դա հեզաբարո և սիրալիր մարդ էր, որն իր հայրենիքում շատ խելոք մարդու համբավ ուներ. հրապարակային ճառերը դյուրին էին նրա համար, և նա որոշ հաջողությունների էր հասել

այդ ասպարեզում։ Նա ամենևին աստվածավախ չէր, բայց մահացու հիվանդ ժամանակ հաճախ էր իր մոտ կանչում մեծ թվով քահանաների։ Այդպես է վարվում իտալացիների մեծ մասը, սակայն այդպես չվարվեց ավագ սարկավագ Լյուսիենը՝ Նապոլեոնի պապեղբայրը, որը Կառլոյի մահից հետո դարձել էր ընտանիքի գլխավորը։

Նա շատ արժանավոր հոգևորական էր։ Իր եղբոր թոռից երկար ապրեց և վախճանվեց զառամյալ տարիքում։ Մահվանից անմիջապես առաջ նա խիստ զայրացավ այն ժամանակ արդեն քահանա պ-ն Ֆեշի* վրա, որը շտապել էր ժամաշապիկով և փորուարով ներկայանալ։ Ավագ սարկավագը համառորեն խնդրեց իրեն թողնել հանգիստ մահանալու և վախճանվեց իր մերձավորներով շրջապատված, որոնց մինչև վերջին րոպեն շատ խելացի խրատներ էր տալիս։

Երբեմն մտովի վերադառնալով անցյալին, Նապոլեոնը գորովալից էր խոսում ծերունի պապեղբոր մասին, որը փոխարինել էր հորը և որն իրեն հիացնում էր իր խելքով։ Ավագ սարկավագը կզզու ամենահարգված քաղաքացիներից մեկն էր։ Նրա հաստատակամությունը և ողջամտությունը՝ զուգակցված ավագ սարկավագի աստիճանի հետ, որը հոգևոր բարձրագույն աստիճաններից էր, Այաչչոյում նրան ընդհանուր համակրանքի էին արժանացրել և դարձրել արտակարգ ազդեցիկ մի դեմք։

Իր խնայողությամբ նա կարդի բերեց ընտանիքի գույքային գործերը, որոնք խիստ խախտվել էին Կառլոյի շռայլումներով և պերճամոլությամբ։ Ավագ սարկավագի բարոյական հեղինակությունը հատկապես մեծ էր Տալավոյի իր pieve-ում և Բոկոնյանո փոքրիկ քաղաքում, որի շրջակայքում էին գտնվում Բուոնապարտե ընտանիքի հողերը։

Այրիանալով, տիկին Լեթիցիայի մայրը երկրորդ անգամ ամուսնացավ մի ոմն կապիտան Ֆեշի հետ, որը ծառայում էր շվեյցարական այն գնդերից մեկում, որ ջենովացիները պահում էին Կորսիկայում։ Այս երկրորդ ամուսնությունից ծնվել է պ-ն Ֆեշը՝ ներկայումս կարդինալ, որը տիկին Բուոնապարտեի խորթ եղբայրն է և Նապոլեոնի քեռին։ Նրա ձեռքերի վրա էլ տիկին Բուոնապարտեն 1836 թվականին մահացել է Հռոմում։

Տիկին Բուոնապարտեն ունեցել է տասներեք երեխա, դրանցից ողջ են մնացել միայն հինգ տղա և երեք աղջիկ։

Ամենաավագը՝ Ժոզեֆը, որին ցանկանում էին քահանա դարձնել, որպեսզի օգուտ քաղեն բենեֆիցիաներ բաժանող պ-ն դը Մարբյոֆի հովանավորությունից, սովորում էր հոգևոր սեմինարիայում. բայց երբ ժամանակը եկավ, նա կտրականապես հրաժարվեց քահանայական աստիճան ընդունելուց։ Հետագայում մենք նրան տեսանք իբրև Նեապոլի և Իսպանիայի թագավոր։ Նա ամեն տեսակետից բարձր էր կանգնած իր ժամանակակից թագավորներից։ Իսպանիան նրա համեմատությամբ նախապատվություն տվեց Ֆերդինանդ VII անունով մի ճիվաղի։ Ես հիանում եմ քաջարի իսպանացիներին ոգևորած պատվի անխոհեմ զգացումից, բայց նրանք որքա՜ն ավելի երջանիկ կլինեին, եթե 1808 թվականից սկսած, իր սահմանադրությամբ ղեկավարվելով, նրանց կառավարեր խելացի Ժոզեֆը։

Լուին, որը շատ օրինավոր մարդ էր, դրագունական կապիտան էր և Հոլանդիայի թագավորը։ Ժերոմը Վեստֆալիայի թագավորն էր. Էլիզան՝ Տոսկանայի մեծ դքսուհին. Կարոլինը՝ Նեապոլի թագուհին։

Պոլինը՝ իշխանուհի Բորգեզեն, իր ժամանակի ամենաերևելի գեղեցկուհին էր։ Լյուսիենը դեսպանատան էր, ներքին գործերի մինիստր, Ֆրանսիայի դեսպանորդը Պորտուգալիայում. նա չցանկացավ թագավոր լինել և վերջացրեց այն բանով, որ դարձավ Հռոմի իշխան։

Նապոլեոնի ասելով, Լյուսիենը հախուռն երիտասարդություն է ունեցել. տասնհինգ տարեկանում նրան Ֆրանսիա է բերել պ-ն դը Սեմոնվիլը*՝ նրան վաղ դարձնելով մոլի հեղափոխական և ակումբների նախանձախնդիր հաճախորդ։ Ասում են, որ նա Բրուտոս Բոնապարտե ստորագրությամբ մի քանի յակոբինյան պամֆլետներ է թողարկել։ Այդ յակոբինականությունը նրան չխանգարեց բրյումերի 18-ին դավաճանել հայրենիքին՝ հօգուտ իր եղբոր։

Նապոլեոնի համար շատ ավելի լավ կլիներ, եթե նա ընտանիք չունենար։

Բրիենի ռազմական դպրոցում Նապոլեոնի բնավորությունը կոփվեց այն բանի ազդեցության տակ, ինչ հպարտ, բորբոքուն և ամոթխած հոգիների համար մեծ փորձություն է դառնում՝ օտարերկրյա թշնամիների հետ ունեցած շփումների ազդեցության տակ։

Նապոլեոնին Բրիեն բերեցին 1779 թվականին, երբ նա տասը

տարեկան էր. այդ ժամանակ այս ուսումնական հաստատության գլուխ էին կանգնած ֆրանցիսկյան ուխտի վանականները։ Ահա մեծ հետաքրքրություն ներկայացնող մի քանի պատմություններ։ Նապոլեոնն իր անունն արտասանում էր կորսիկական առոգանությամբ՝ ավելի ֆրանսիական, քան իտալական շեշտադրությամբ. այդ անունը, որ նրա շուրթերին հնչում էր մոտավորապես Napoillione (Նապոյոնե), ընկերներն այլափոխեցին La-paille-at-nez՝ «ծղոտը քթի մեջ» վիրավորական մականվան։

Մի անգամ հերթապահ դաստիարակը, չկարողանալով հասկանալ այդ տարօրինակ տղայի խոր կենսաթրթիռ դյուրազգացությունը, նրան հրամայեց փարաջա հագնել և ճաշի ժամանակ ծունկ չոքել սեղանատան դռան մոտ։ Սովորական երեխայի համար այդ պատիժը սոսկ անցողիկ մի ահաճություն կլիներ, բայց ինքներդ դատեք, թե դա ինչ կնշանակեր պատանի կորսիկացու համար, որը համակված էր այն գիտակցությամբ, որ աղքատությունն ստիպում է իրեն ապրել իր երկրի կեղեքիչների շրջապատում։ Երբ եկավ պատժի պահը, նա սկսեց փսխել և բռնկվեց ջղային ուժեղ նոպայով։ Պատահաբար այդտեղով անցնող վերակացուն նրան ազատեց տանջանքից, որն անտանելի էր ամբողջովին հպարտությունից հյուսված էակի համար։ Մաթեմատիկայի դասատու հայր Պատրոն նույնպես բողոքեց այն նվաստացման դեմ, որին, ոչ մի բան հաշվի չառնելով, ենթարկել էին իր լավագույն աշակերտին։

Նապոլեոնի վճռական, մոայլ, ամեն մի երեխայությունից զուրկ խառնվածքն սկզբում առաջացնում էր փոքրիկ ֆրանսիացիների՝ իր դասընկերների, անբարյացակամությունը, որոնք այդ վճռականության մեջ իրենց փառամոլությանը թշնամի մեծամտություն էին տեսնում։ Նապոլեոնը, լինելով շատ կարճահասակ և հիշելով իր աղքատությունը, ընդսմին նկատի առնելով, որ ֆրանսիացիները կեղեքում են իր հայրենիքը, խուսափում էր ընկերներից։ Նա ճյուղերից հյուղակի նման ինչ-որ մի բան սարքեց և դասամիջոցներին թաքնվում էր այնտեղ ու կարդում։ Մի անգամ ընկերները փորձեցին ներխուժել այդ ապաստարանը. նա պաշտպանվում էր հերոսի, այսինքն՝ կորսիկացու նման։

Ֆրանսիական ընածին խառնվածքը՝ հիշաչարության բացակայությունը և զվարճության հակումը փայլուն դրսևորվեց այս

դեպքում. պատանի օտարերկրացու նկատմամբ եղած անբարյացակամությունն անմիջապես փոխվեց հիացմունքի, և նա դարձավ կոլեջի սաների պարագլուխներից մեկը։

Հաջորդ ձմռանը շատ ձյուն եկավ, և սաները որոշեցին դրանից ամրոց կառուցել։ Նապոլեոնն ամրությունների շինարարությունը ղեկավարող գլխավոր ինժեներն էր, իսկ երբ եկավ դրանք գրոհով գրավելու ժամանակը, նա դարձավ գրոհողների առաջնորդը. բայց երկու կողմերի համար արկերի տեղ ծառայող ձնագնդերին ավելացան քարերը, որոնցով սաներից մի քանիսը վիրավորվեցին։ Ուսուցիչներն ստիպեցին դադարեցնել այդ խաղը։

Մենք ամենևին մտադիր չենք ինչ-որ լուրջ եզրակացություններ անել այս փոքր, ընդ որում ոչ լիովին հավաստի փաստերից. մենք համոզված ենք, որ նույնպիսի պատահարներ պատահում են ամեն օր շատ դպրոցականների հետ, որոնք հետագայում դառնում են խիստ անհնազանդ մարդիկ։

ԳԼՈՒԽ II

Քսանմեկ կամ քսաներկու տարեկան հասակում Նապոլեոնը, ամենայն հավանականությամբ, բոլորովին նման չէր նրանց, ում Փարիզում հաճելի երիտասարդ են անվանում, և նրա համար մեծ երջանկություն էր, որ իրեն գնահատեց տիկին դյու Կոլոմբիեն։ Պետք է ենթադրել, որ Փարիզում նա այնքան էլ արագ չէր հասնի հաջողությունների. ինքներդ դատեցեք. նա ինքնուրույն էր մտածում, անողոք տրամաբանություն ուներ։ Նա շատ կարդացած էր և, իր իսկ ասելով՝ այդ ժամանակվանից, թերևս, ինչ-որ բան նույնիսկ մի քիչ մոռացել էր։ Նրա միտքն աշխույժ էր, արագաշարժ, խոսքը՝ արտահայտիչ։ Վալանսում նրան անմիջապես նկատեցին։ Կանանց նա դուր էր գալիս իր թարմ, յուրօրինակ մտքերով և համարձակ դատողություններով։ Տղամարդիկ վախենում էին նրա տրամաբանությունից և խուսափում վեճերից, որոնք նա, սեփական ուժի գիտակցությամբ, սիրով էր նախաձեռնում։

Ռազմական գործին լավատեղյակ, բայց հին ռեժիմի ջատագով և անբասիր դաստիարակված մի սպա Բեռլինում մեզ ասաց, որ ինքը խիստ զարմացած էր՝ տեսնելով, թե ինչպես է պ-ն Բոնապարտեն շահում ճակատամարտերը։ Սկզբնական շրջանում ինքը որոշեց, որ դա Նապոլեոնի ազգանվանակիցն է կամ նրա

Եղբայրը։ Վալանսում և ավելի ուշ Օքսոնում Նապոլեոնի հետ ունեցած իր հանդիպումներից ինքը նրա մասին հիշողություններ է պահպանել՝ որպես երիտասարդ շաղակրատի, որն ամեն առիթով անվերջ վեճեր էր սկսում և ձգտում ամեն ինչ վերափոխել պետության մեջ։ «Նման դատարկաբանների,— ավելացրեց սպան,— այն պահից ի վեր, ինչ ծառայում էի, ճանաչում էի մոտ երկու տասնյակի»։ Ինչ վերաբերում է Նապոլեոնի իրեն պահելու ձևին, ապա դրա մեջ ո՛չ նրբազգեղություն կար, ո՛չ էլ անբռնազբոսիկություն, իսկ նրա դեմքը, եթե այդքան արտակարգ չլիներ, կարող էր տգեղ թվալ։ Բայց նրան փրկում էր տիկնանց բարեհաճությունը։ «Ինձ թվում է,— Բեռլինում ասում էր նույն սպան,— որ նրանց հմայում էր Նապոլեոնի մռայլ ու սևեռուն հայացքը, որի մեջ իտալական ինչ-որ բան կար։ Նրանք, հավանորեն, երևակայում էին, որ դա մեծ կրքերի տեր մարդու հայացք է»։

Վալանսում իր գտնվելու ժամանակ Նապոլեոնն ստացավ Լիոնի ակադեմիայի պարգևն այն ժամանակ նշանավոր աբբա Ռեյնալի առաջարկած թեմայով գրված շարադրության համար՝ «Ի՞նչ օրենքներ ու կարգեր պետք է տալ մարդկանց՝ ըստ հնարավորին նրանց ավելի երջանիկ դարձնելու համար»։ Այդ շարադրությունն ուշադրություն գրավեց, բայց երիտասարդ սպան, իր ընկերների ծաղրուծանակից վախենալով, գերադասեց չբացահայտել իր անունը։ Սակայն այդ ստեղծագործությունը լիովին համապատասխանում էր այդ դարաշրջանի ոգուն և ոճին. վսեմ ու ռոմանտիկ գաղափարները դրա մեջ զուգակցվում էին գոյություն ունեցող կարգերի մակերեսային ու միակողմանի քննադատության հետ։ Հեղինակն սկսում էր հարցումով, թե ո՞րն է երջանկությունը։ Կյանքի հաճույքը լիովին վայելելը, ազդարարում էր նրա պատասխանը. այնպես վայելելը, որ ամենից շատ համապատասխանի մեր բարոյական ու ֆիզիկական կերտվածքին։ Կայսր դառնալով, Նապոլեոնը կարգադրեց կրակի ենթարկել այդ շարադրությունը, որը հետագայում հայտնաբերվել է պ-ն դը Թալեյրանի ջանքերով։

Հրետանու երիտասարդ սպան կարողացել է յուրովի զվարճալի կերպով շարադրել մի հարց, որով շատ է զբաղվել անտիկ փիլիսոփայությունը՝ միակը, որ որոշ չափով ծանոթ էր նրան։ Բայց ի զժբախտություն ինչպես նրա, այնպես էլ Ֆրանսիայի, նրա ընդհանուր կրթությունը մնացել է շատ թերի։ Բացառությամբ

մաթեմատիկայի, հրետանային գործի, ռազմական արվեստի և Պլուտարքոսի, Նապոլեոնը ոչինչ չգիտեր։ Նրան անհայտ էին մեծ ճշմարտություններից շատերը, որոնք հայտնագործվել էին վերջին հարյուրամյակում և վերաբերում էին մարդկանց ավելի երջանիկ դարձնելու հենց այն արվեստին, որով նա տվյալ դեպքում հետաքրքրվում էր։

Նրա գերազանցությունն ամբողջովին հենվում էր արտակարգ արագությամբ նոր մտքեր գտնելու, դրանց վերաբերյալ անբասիր խորաթափանցությամբ դատելու և կամքի այնպիսի ուժով իրականացնելու ընդունակության վրա, որի հետ ոչինչ չէր կարող համեմատվել։

Դժբախտաբար այդ կամքի ուժը դյուրազգացության ազդեցության տակ երբեմն դավաճանում էր նրան։ Այսպես, 1813 թվականին նա չցանկացավ ճակատամարտ տալ Բոհեմյան լեռներում։ Նախանշանը կամ ինչ-որ մի ներքին նախազգուշացում ետ պահեց մեծ մարդուն և, դժբախտաբար, հաղթանակեց ճակատամարտ տալու անհրաժեշտության գաղափարին՝ արշավանքը հաջողությամբ և ամենաբարենպաստ պայմանների բացահայտ առկայության պայմաններում ավարտելու համար։

Անտարակույս, ապրելով Վալանսում, Օքսոնում և այլուր, Նապոլեոնը շատ էր կարդում. բայց շարունակ ապագայի մասին երազող այս վառվռուն հոգու վրա ամենալուրջ ստեղծագործությունները սոսկ այն ազդեցությունն էին գործում, ինչ սովորական հոգիների վրա՝ վեպերը։ Այս գրքերը նրա մեջ արթնացնում կամ ուժեղացնում էին կրքոտ զգացումներ. բայց դրանք տալի՞ս էին արդյոք այն մեծ ճշմարտությունների իմացությունը, որոնք միանգամայն ապացուցված էին և հետագայում կարող էին հիմք ծառայել նրա վարվելակերպի համար։

Նապոլեոնը, օրինակ, այնպես չէր կարդացել Մոնտեսքյո, ինչպես հարկավոր է կարդալ, այսինքն՝ վճռականորեն ընդունելով կամ մերժելով «Օրենքների ոգուն» երեսունմեկ գրքից յուրաքանչյուրը։ Նա այդպես չի կարդացել ո՛չ Բեյլի* «Բառարանը», ո՛չ էլ Հելվեցիուսի* «Բանականությունը»։

Ես չէի ցանկանա կանխագուշակել այն, ինչի մասին խոսք կլինի հետագայում, բայց որպեսզի անհրաժեշտ պարզությամբ շարադրեմ միտքս, ստիպված եմ մի քանի օրինակ բերել։

Տարիներ անց, Պետական խորհրդում Քաղաքացիական օրենս-

գրքի քննարկման ժամանակ կարելի էր տեսնել, թե ինչպես այդ մեծ հանճարն իսկույն կռահում էր այն ճշմարտությունների բոլոր հետևանքները, որ իր ներկայությամբ արտահայտում էին պարոնայք Տրելյարը և Բուլե դը Լա-Մյորտը։ Բայց նրա համար նոր այդ ճշմարտությունները նոր չէին Պետական խորհրդի այն քառասուն անդամներից և աուդիտորներից ոչ մեկի համար, որոնք ներկա էին նիստերին։ Ճիշտ է, նա այնպիսի արագությամբ, որն աներևակայելի է նրանց համար, ովքեր դրա վկան չեն եղել, անում էր արտակարգ ճիշտ եզրակացություններ, որոնք ո՛չ Տրելյարի, ո՛չ էլ Բուլեի մտքով երբեք չէին անցնի։ Ճիշտ է նաև, որ, ուշ հաղորդակցվելով գիտությանը և ընդ որում դրսևորելով լիովին կազմակերպված մարդու առողջ դատողություն, նա տեղի չէր տալիս մանրախնդիր նախապաշարմունքներին, որոնք դեռևս վնասում են ամենակատարյալ գիտություններին։ Դա որոշակի երևում է ապահարզանի և կտակների մասին եղած դատողություններում[1]։ Իրենց կողմից Տրելյարը և Բուլեն վախենում էին նորություններով լի այդ հանճարեղ կռահումներից, և Նապոլեոնն ստիպված էր նրանց պաշտպանել հենց իրենցից։

Կայսեր զրույցներում անգիտություն սովորաբար չէր դրսևորվում. նախ՝ ինքն էր ուղղություն տալիս խոսակցությանը, իսկ երկրորդ՝ զուտ իտալական ճարպկությամբ երբեք անզգույշ հարցով կամ չմտածված դիտողությամբ չէր մատնում իր անգիտությունը[2]։

Այսպիսով, ինչ վերաբերում է պետության կառավարման գիտությանը, որը հետագայում կարող էր առավել օգտակար լինել Նապոլեոնին, այդ բնագավառում այս մեծ մարդու կրթությունը, կարելի է ասել, աննշան էր։

Նրան հասկանալի էր միայն զորավարի կառավարումը, որն ստիպում էր իր զորքերին գործել՝ ելնելով. 1) հայրենիքին նվիրվածությունից, 2) պատվի զգացումից, 3) պատժվելու վախից, 4) ինքնասիրությունից կամ փառասիրական մղումներից, 5) շահախնդրությունից։

1 Տե՛ս Լոկրենի՝, որը շարունակ մանրացնում և գոհեկացնում է կայսեր դատողությունները։ Տե՛ս Տիբոդո։

2 Նույնպիսի զարմանալի ճարպկություն է ի հայտ գալիս վայրենիների խոսակցության մեջ, որոնք միշտ ուշադիր հետևում են, թե ինչ տպավորություն են գործում զրուցակցի վրա։

Մենք տեսնում ենք, որ այս գործողության շարժառիթներից և ոչ մեկը չի հիմնված հնազանդվողի մտածելակերպի և գործելակերպի կամ էլ այն կարծիքի վրա, որ նա կարող է ունենալ հրամայողի կարգադրությունների օրինականության վերաբերյալ։

Մի խոսքով, Նապոլեոնը կարողացել է ստիպել ենթարկվել իրեն որպես զորավարի, բայց չէր կարողանում այնպես հրամայել, ինչպես հրամայում է թագավորը, և այդ բնագավառում նրա ձիրքի անկատարությունը ես ամբողջովին վերագրում եմ պատշաճ նախապատրաստության լիակատար բացակայությանը։

Երբ Նապոլեոնին պետք եկան խելոք մտքեր այն մասին, թե ինչպես կառավարի Ֆրանսիան, նա ստիպված էր անձամբ գտնել դրանք, բայց դժբախտությունը նախ այն էր, որ նա ինքը զզվանք էր զգում լիբերալ դպրոցի նկատմամբ, և երկրորդ՝ նրան հաճախ անհրաժեշտ էին նաև սեփական փորձի տվյալներ, որպեսզի ըմբռնի իրենից երեսուն տարի առաջ հայտնագործված հիմնական ճշմարտությունները[1]։

Մալլեի դավադրությունը 1813 թվականի հոկտեմբերին նրան ցույց տվեց, թերևս, առաջին անգամ, որ, մտածելով միապետություն ստեղծել Ֆրանսիայի և իր որդու բարօրության համար, ինքը լոկ իշխանություն է ստեղծել։ Նա, թերևս, ընդմիշտ չհասկացավ, որ բարոյական, ինչպես նաև ֆիզիկական տեսակետից կարող է հենարան ծառայել միայն այն, ինչ ընդունակ է դիմադրության, և որ ներկայացուցչական այն հիմնարկները, որոնք հակազդեցություն չեն ցուցաբերում, երբ անհրաժեշտ է, փաստորեն գոյություն չունեն։ Եվ նա միամիտ զարմանքով տեսավ, որ Սենատը գոյություն չունի, որ մեծ կանցլեր Կամբասերեսը գոյություն չունի և այլն և այլն։ Մալլեի դավադրությունից հետո վերադառնալով Ռուսաստանից, նա ավելի քան զարմացավ, որ Սենատն անգործության է մատնված, որ ողջամիտ մարդիկ, ինչպես օրինակ Սենի դեպարտամենտի պրեֆեկտ պ-ն Ֆրոշոն, անգործության էին մատնված, և, վերջապես, որ բոլոր հայացքները վայրկենապես շուղղվեցին դեպի Հռոմի թագավորը։

1 Դրանք հայտնագործել էին Դելոլմը՝, Մոնտեսքյոն, Բեկկարիան՝, և 1837 թվականին դրանք կարելի էր կարդալ Բենթամի՝ մոտ։ 1809 թվականին Լանդսհուտում մի ոմն միհիսար աուդիտորին նկատողություն արեց այն բանի համար, որ նա կարդացել է Դելոլմին։

Ես համարձակվում եմ պնդել, որ նրա բանակում քսան հազար սպաներ վեր էին կանգնած այն մանկական պատրանքից, որ իբր տագնապալից պահին որևէ մեկը մտածի Հռոմի թագավորի մասին։

Ինչ էլ որ նա ասեր, երբեմն, երբ նրա երևակայությունը ենթարկվում էր իր ամենասիրած զվարճալիքներից մեկին՝ «գալիքի ռոմանտիկական հեռուներում իր դեգերումներին»[1] մեծապես սխալվում էր Հռոմի թագավորի ապագա դերի հարցում։ Տեսնելով իր գերազանցությունն այն ամենի նկատմամբ, ինչ գոյություն ուներ շատ դարեր ի վեր, զգալով, որ ինքը իսկապես սիրում է Ֆրանսիան, ընդ որում մի այնպիսի սիրով, որպիսին երբեք չէին կարող տածել իր նախորդ թագավորների ճղճիմ հոգիները, նա երևակայում էր, որ մարդկային սրտի բուն էությունից բխող անխախտ օրենքները կդադարեցնեն իրենց գործողությունը, երբ իր մահից հետո որդին՝ Հռոմի թագավորը, այլ հենարան չի ունենա, բացի տիտղոսի զորությունից կամ սեփական ձիրքից։

Նրա մտքով չէր անցնում, որ պերճանքի սովոր ու հաճկատար մարդկանց կողմից վատ դաստիարակված այդ երեխան, ինչպես եղել է բոլոր ողորմելի թագաժառանգների հետ, Ֆրանսիացիների սրտերում չգտնելով իր տոհմին հնազանդվելու հին սովորությունը, լոկ գործիք կդառնա մի քանի ձեռներեց զորավարների ձեռքին։

Նրա մտքով չէր անցնում, որ եթե ինքն ուզում է հեղինակություն ստեղծել Հռոմի թագավորի համար, որը մի օր կզրկվի հորից, ինքը պետք է, քանի դեռ կենդանի է, հրաժարվի իր իշխանության մի մասից և թույլ տա ներկայացուցչական հաստատությունների կազմավորում։

Բայց նա սիրում էր իշխանություն, որովհետև դրանից կարողանում էր լավ օգտվել, և նրան դուր էր գալիս արագությամբ բարի գործեր կատարելը. բանավեճի կամ քննարկման հետևանքով թույլ տրված ամեն մի հապաղում նրան չարիք էր թվում։

Կրթության պակասի պատճառով նա երբեք չէր հիշում Կառլոս Մեծի՝ այդ նույնպես զորավոր մարդու օրինակը, որի գործերից հետք անգամ չի մնացել. նա Կառլոս Մեծի մասին գիտեր միայն պ-ն դը Ֆոնտանի[2] ակադեմիական գոհկությունններից։

[1] Զրույց կոմս Դարյուի հետ Կրեմլում՝ 1812 թվականի սեպտեմբերին։

[2] Օրենսդրական կորպուսի նախագահի, համալսարանի ռեկտորի, էլիզա Բոնապարտի քարեկամի։

Չիմանալով նույնիսկ նախորդ դարի պատմությունը՝ Ռիշելյոյի և Լյուդովիկոս XIV-ի պատմությունը, նա չէր տեսնում, որ հեղափոխությունից առաջ թագավորը Ֆրանսիան կառավարում էր միայն այն բանի շնորհիվ, որ կարողանում էր հենվել ազնվականության և պառլամենտի վրա, և հատկապես ֆրանսիացիների վաղեմի սովորության շնորհիվ՝ երբեք կասկածի տակ չառնել թագավորական իշխանության օրինականությունը։

Հնարավորություն չունենալով մի քանի տարում ստեղծել այդքան հին մի սովորություն, նա չէր տեսնում, որ 1789 թվականի հեղափոխությունից հետո ներկայացուցիչների պալատի վրա չհենվող թագավորն իր իշխանությունը պահպանում է միայն իր բանակի ներշնչած վախի կամ իր հանճարի առջև խոնարհվելու շնորհիվ։

Մի խոսքով, նախնական կրթության ցավալի բացերի հետևանքով նրա համար պատմությունը գոյություն չուներ. նա գիտեր միայն այն փաստերը, որոնք կատարվել էին իր աչքի առջև, և այն էլ զրանք տեսնում էր յակոբինյանների հանդեպ ունեցած իր վախի, Սեն-Ժերմեն արվարձանի նկատմամբ տածած իր սիրո, իր համակրանքի լույսի տակ։

Նապոլեոն կայսրին վերաբերող բոլոր այս տվյալներն ինձ պետք եկան, որ ցույց տամ, թե իրենից ինչ է ներկայացրել Նապոլեոնի այնքան գովաբանված կրթությունն այն ժամանակ, երբ նա հրետանու լեյտենանտ էր։ Նա չի իմացել ո՛չ ուղղագրություն, ո՛չ լատիներեն, ո՛չ էլ պատմություն*։ Ամեն ինչ նվազեց ու նվազեց 1785 թվականի մոտերքը՝ Լյուդովիկոս XIV-ի միապետության ծայրահեղ անկման ժամանակ, ամեն ինչ՝ ընդհուպ մինչև ժողովրդական կրթությունը։ Այս տեսակետից կարելի է ասել, որ ճիզվիտների արտաքսումը չարիք էր. անզորության ժամանակ ամեն մի փոփոխություն չարիք է։

Հարկ եղավ թողնել Վալանսը և տիկին դը Կոլոմբիեի հաճելի սալոնը՝ կայազորային ծառայության նպատակով Օքսոն մեկնելու համար։ Դրանից առաջ Նապոլեոնը պ-ն Դեմազիի հետ սենտիմենտալ ճանապարհորդության նման մի բան ձեռնարկեց դեպի Բուրգունդիա։

Արքայազն Կոնդեն* զորատեսի համար այն ժամանակ ապրելեց Օքսոնի հրետանային ուսումնարանը։ Տիտղոսավոր զորավարի ժամանումը մեծ պատիվ և կարևոր իրադարձություն էր։ Դրպ-

բոցի պետը երիտասարդ Բոնապարտին նշանակեց հրաձգարանի հրամանատար՝ շրջանցելով նրանից ավելի բարձրաստիճան սպաներին։ Ջորատեսի նախօրյակին պարզվեց, որ հրաձգարանի բոլոր թնդանոթները խցանված են։ Բայց երիտասարդ լեյտենանտը չափազանց զգույշ էր, որպեսզի չընկնի իր ընկերների սարքած ծուղակը. նույնիսկ հնարավոր է, որ դա եղել է անվանի ճանապարհորդի սարքած դավը։

Օքսոնում Նապոլեոնն առաջին անգամ իրեն հաճույք պատճառեց լույս ընծայելու սեփական ստեղծագործությունը. այն է՝ «Պ-ն Բուոնապարտեի նամակը պ-ն Մատեո Բուտաֆոկոյին»։

Դոլ քաղաքի տպարանատեր պ-ն Ժոլիի ասելով, այդ գրքույկն ինքը հրատարակել է 1790 թվականին. այդ ժամանակ Նապոլեոնը քսանմեկ տարեկան էր, Օքսոնի կայազորում Լաֆերի գնդի լեյտենանտ։ Նա պ-ն Ժոլիի մոտ Դոլ էր եկել իր եղբայր Լուի Բոնապարտի հետ, որին այն տարիներին մաթեմատիկա էր ուսուցանում։ Նապոլեոնի ստեղծագործությունը տպագրվեց իր հաշվին, հարյուր օրինակով։ Նա դրանք ուղարկեց Կորսիկա, որտեղ «Նամակը» դաժան հարված հասցրեց պ-ն Բուտաֆոկոյի համբավին։ Դա միանգամայն Պլուտարքոսի ոգով գրված երգիծական պամֆլետ էր։ Հիմնական գաղափարը սրամիտ էր և միաժամանակ՝ համոզիչ։ «Նամակը կարելի է 1630 թվականին Հոլանդիայում գրված պամֆլետի տեղ ընդունել։

Նապոլեոնն անձամբ արեց վերջին սրբագրումները։ Նա Օքսոնից հեռացավ առավոտյան ժամը չորսին. հետիոտն գալով Դոլ, նա նայում էր սրբագրված էջերը, պ-ն Ժոլիի հետ կիսում նրա աղքատիկ նախաճաշը և կեսօրից առաջ վերադառնում իր կայազորը՝ կարել-անցնելով ութ լյո։

Բոնապարտը Կորսիկայի քաղաքական, քաղաքացիական և ռազմական պատմության մասին գրել է մի աշխատություն, որը կարող էր երկու հատոր կազմել։ Նա իր մոտ՝ Օքսոն հրավիրեց պ-ն Ժոլիին՝ այդ աշխատության հրատարակության շուրջ բանակցելու համար։ Պ-ն Ժոլին այցելեց երիտասարդ սպային։ Պարզվեց, որ նա ավելի քան համեստ է ապրում։ Բոնապարտը կողաշենքում զբաղեցնում էր աղքատիկ կահավորված մի սենյակ, որի ամբողջ կահույքը բաղկացած էր առանց ծածկոցի մի մահճակալից, երկու աթոռից և լուսամուտի որմնախորշում դրված՝ գրքերով ու թղթերով ծածկված մի սեղանից։ Նրա եղբայր Լուին բնում էր

հարևան խցիկում՝ գետնաստրած ներքնակի վրա։ Նրանք համաձայնության եկան «Կորսիկայի պատմության» տպագրության գնի հարցում. բայց հեղինակը բոպե առ բոպե սպասում էր հրամանի, որը պետք է նրան կա՛մ ստիպեր անհապաղ հեռանալ Օքսոնից, կա՛մ էլ երկար ժամանակով նրան պահեր այնտեղ։ Մի քանի օր հետո ստացվեց այդ հրամանը. երիտասարդ Բոնապարտը մեկնեց, և նրա աշխատությունը չտպագրվեց։

Պ-ն Ժոլին հայտնում է, որ երիտասարդ սպային հանձնարարեցին եկեղեցական գույքի ու հանդերձանքի պահպանությունը, որոնք ընդունվել էին գնդի քահանայից, որի պաշտոնը հենց նոր էին վերացրել։ «Եթե դուք երբեք ներկա չեք եղել պատարագի, ես կարող եմ այն մատուցանել ձեզ»,— ասել է Բոնապարտը պ-ն Ժոլիին։ Իմիջիայլոց, նա շատ պարկեշտորեն է արտահայտվել կրոնական արարողությունների մասին։

Երեք տարի անց, 1793 թվականին Բոնապարտը, որն արդեն մոտ մեկուկես տարի էր կապիտանի աստիճան ուներ, եղավ Բոկերում։ Հուլիսի 29-ին նա այնտեղի իշխանատանն ընթրեց մոնպելիեցի, նիմցի և մարսելցի մի քանի վաճառականների հետ։ Վեճ բացվեց Ֆրանսիայի քաղաքական դրության մասին։ Զրուցակիցներից յուրաքանչյուրն իր կարծիքն ուներ։

Ավինիոն վերադառնալով, Բոնապարտը գրեց «Ընթրիք Բոկերում» վերնագրով մի գրքույկ, որը լույս ընծայեց «Ավինիոնի տեղեկագիր» լրագրի խմբագիր-հրատարակիչ Սաբեն Տուռնալին։ Այն ժամանակ այդ գրքույկն ուշադրություն չգրավեց։ Բայց երբ Բոնապարտը դարձավ գլխավոր հրամանատար, ոմն պ-ն Լուբե, որի մոտ պահպանվել էր դրանից մեկ օրինակ, սկսեց շատ բարձր գնահատել այն, որովհետև այդ օրինակը մակագրված էր հեղինակի կողմից։ Բրոշյուրը վերահրատարակվեց Պանկուկի մոտ[1]։

Այդ երկու գրքույկների ոճն էլ ծանրավուն է, երբեմն հանդիպում են սխալ դարձվածներ, որոշ տեղեր պատահում են իտալիզմներ. բայց չի կարելի չընդունել հեղինակի մտքերի յուրօրինակությունը։

Ես հակված եմ ընդունելու, որ կանանց հասարակությունը Կորսիկացի երիտասարդ սպայի մռայլ ու ողջամիտ բնավորու-

---

1 Նապոլեոն Բոնապարտի ստեղծագործությունները։ Ջորա հատոր in—8°, հ. 1, 1821։

թյանը թեթևամտության երանգ է հաղորդել։ Մինչև Իտալական արշավանքի ահեղ ժամանակները նրա մեջ երբեմն կարելի էր նրբակրթության գծեր, կենսուրախության նշույլներ որսալ. հետագայում՝ լոկ մռայլ մտազբաղություն։ Այդ պահից Նապոլեոնն արդեն զգում է, որ ինքը պետք է լինի ոչ այնպիսին, ինչպիսին բոլորն են։

Մանկական այս զվարճանքների տարիներին էր, որ կատարվեց հեղափոխությունը։ Հրետանավորներից շատերը տարագրվեցին, քանի որ արիստոկրատների կուսակցությունը խիստ կարևոր էր համարում այդ զորատեսակից որքան կարելի է ավելի շատ սպաներ անցկացնել Հռենոսի այն ափը։ Այդ ժամանակ աղնվականությունը կարծում էր, թե իբր սպաների կողմից լքված ֆրանսիական ժողովուրդը չի կարողանա ինքնուրույն պատերազմել։

Վտարանդիները հավաքվում էին Կոբլենցում։ Նրանք այնքան հիմար էին, իսկ հետագայում օտարերկրացիներին այնպես պատշաճորեն ցույց տվեցին, թե ֆրանսիացիներն ինչպես են կարողանում տանել դժբախտությունը, որ մենք անկարող ենք զայրանալ նրանց այն ժամանակվա մտահղացումների վրա։ Իսկ չէ որ դրանք սոսկալի մտահղացումներ էին՝ հարյուրապատիկ ավելի վատ, քան Նեյի, գնդապետ Կարոնի* կամ Ֆոշե* եղբայրների գնդակահարությունը[1]։

Այն պահին, երբ Կոբլենցում համախմբվում էին Ֆրանսիայից տարագրված աղնվականները, ծնվեց տխրահռչակ կոալիցիան, որի ուժերը վերջիվերջո ,1814 թվականի մարտին մտան Փարիզ[2]։

Այդ նշանավոր լիգայի ծնունդը դեռ բավականաչափ չի պարզաբանված։ Այն սկսեց նշանակություն ստանալ լոկ այն ժամանակ, երբ ֆրանսիական ժողովրդի խենթություններն սկսեցին ավելի ու ավելի ահարբեկել միապետներին։ Ցանկության դեպքում, կոալիցիայի առաջին սաղմերը կարելի է տեսնել Մանտուայում Լեոպոլդ կայսեր և կոմս դ'Արտուայի*, հետագայում Կարլոս X-ի միջև կայացած խորհրդակցություններում։ Սկզբում երիտասարդ թագաժառանգի հպարտությունը նրան թույլ էր տալիս օգնություն

1 Տե՛ս Ֆոշ-Բորելի*, Բերտրան դը Մոլվիլի* և ուրիշների՝ Ռեստավրացիայի ժամանակ հրապարակած հուշագրությունները։

2 Նա սխալ գործեց՝ գահին շնստեցնելով Նապոլեոն II-ին, որը թույլ չէր տա միապետների բուն սիրտը խոցող մամուլի ազատության ծնունդը։

խնդրել միայն այն միապետներից, որոնք պատիվ ունեն արյունակցական կապերով կապված լինելու իր տան հետ. դրանք էին՝ Իսպանիայի և Սարդինիայի թագավորները, ինչպես նաև Ավստրիայի կայսրը։

Լեոպոլդն ազգային ժողովին առաջարկեց կոնգրես հրավիրել, ի պատասխան որի ժողովը հայրենիքի դավաճան հայտարարեց ամեն մի ֆրանսիացու, ով կստորանա իր երկրի օրենքները քննարկել օտարերկրացիների հրավիրած կոնգրեսում։ Լեհաստանի օրինակը դեռևս բոլորի հիշողության մեջ էր։

Իր ժամանակին Լյուդովիկոս XV-ը օգնություն ցույց տվեց շվեդական թագավոր Գուստավ III-ին, որը փորձել էր վերացնել սահմանադրությունը և դառնալ բացարձակ միապետ։ Վտարանդիներն իսկական միապետական նրբանկատությամբ որոշեցին, որ ոչ այլ ոք, քան այդ թագավորը պետք է իր հերթին նման ծառայություն մատուցի Լյուդովիկոս XVI-ին։

Բայց Գուստավը սպանվեց, և, չգիտես ինչու, հակաֆրանսիական կոալիցիայի գլուխ դրվեց պրուսական թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմը։ Անգլիան և Ռուսաստանը խիստ հավանություն տվեցին այդ միջոցառմանը, առաջինը՝ Ֆրանսիայի նկատմամբ տածած ատելությունից, որը դրանից քիչ առաջ նրան խիստ անպատվել էր Ամերիկայում, երկրորդը՝ ավելի կենսական շահախնդրություններից։ Այն ժամանակ, երբ Փարիզում, որը դառնում էր ողջ աշխարհի մայրաքաղաքը, հնչեց միապետներին ահաբեկող ազատության կոչ, Պրուսիան ու Շվեդիան զինվում էին Ռուսաստանի դեմ։ Նրանց նպատակն էր փրկել Թուրքիային, ուր ներխուժել էին Իոսիֆ II-ի և Եկատերինայի միացյալ ուժերը։

Ճարպիկ Եկատերինան հիացած էր Միջին Եվրոպայի միապետներին համակած վախից։ Նա հույս ուներ դրա շնորհիվ տիրել Լեհաստանի մնացած մասերը։

Ֆրանսիական բանակները դավաճանության զոհ դարձան և 1792 թվականի ապրիլին պարտություն կրեցին մի բուռ գերմանացիներից այն նույն Բոլիեի հրամանատարությամբ, որին չորս տարի անց վիճակված էր Նապոլեոնի դեմ մղված պայքարում առաջին պարտված զորավարը դառնալու։

Այս առաջին պարտությունից երեք ամիս անց Լյուդովիկոս XVI-ի մինիստրները համաձայնություն կնքեցին Բրաունշվայգի դքսի* հետ, որը վաթսուն հազար պրուսացիների և տասը հազար

վտարանդիների գլուխ անցած, դուրս գալով Կորլենցից, ներխուժեց Շամպան։ Իր չարաբաստիկ մանիֆեստում, որի հատուցումը վրա հասավ Ենայի տակ տեղի ունեցած ճակատամարտից հետո, նա սպառնաց հրի ու սրի մատնել ողջ Ֆրանսիան։ Այն ժամանակվա ծովային մինիստր և Լյուդովիկոս XVI-ի մտերիմ Բերտրան դը Մոլվիլը Բրաունշվայգի դքսի հետ ունեցած իր կապով պարծեցավ թշնամու գլխավոր հրամանատարների առջև[1]։ Այդ դավաճանությանը ժողովուրդը պատասխանեց օգոստոսի 10-ի իրադարձություններով. գահը տապալվեց։

Շուտով Արգոնյան կիրճը դարձավ ֆրանսիական ժողովրդի հաղթանակի առաջին վկան. այդ ժամանակ սկսվեց այն մեծ դրաման, որը, առնվազն մեզ համար, ավարտվեց Վաթերլոոյի ճակատամարտով։

Արդեն շատ դարեր ի վեր տեսնված չէր, որ մի մեծ ժողովուրդ մարտնչի ոչ թե հանուն թագավորի փոփոխման, այլ հանուն իր ազատության, և այդ տեսարանն առավել վեհասքանչ է նրանով, որ ֆրանսիացիների խանդավառությունը չէր հենվում ո՛չ կրոնի, ո՛չ էլ արիստոկրատիայի վրա։

Այս դրամայի ամենահերոսական մասը, այն, որը պահանջեց Դանտոնի հանճարեղությունը և միաժամանակ այնքան անմեղ զոհերի կործանումը, մոտենում էր իր ավարտին, երբ 1794 թվականին, Տուլոնի պաշարման ժամանակ*, ասպարեզ ելավ Նապոլեոնը։

Վաղուց արդեն կոալիցիան գլխավորում էր անգլիական դիվանագիտությունը. նա ստիպել էր եվրոպական բոլոր տերություններին գրեթե անվերապահորեն կատարելու իր կամքը և, բացի դրանից, կաշառքի օգնությամբ բազմաթիվ դավաճաններ էր հավաքագրում բուն Ֆրանսիայում։

Այդ հնարամտությանը Կոնվենտը հակադրեց իր ահեղ եռանդը. նա հանդիսավոր կոչով դիմեց բոլոր ազնիվ սրտերին։

Եղավ մի պահ, երբ Ֆրանսիայի դրությունն անհուսալի էր թվում։ Ալպերից մինչև Պիրենեյ, Հռենոսից մինչև օվկիանոս, Ռոնից մինչև Լուարի ափերը եռագույն դրոշը նահանջում էր։

[1] Տուլոնի պաշարմանը նախորդած բոլոր իրադարձությունների պատմությունը տե՛ս Ռուի և Բյուշեզի* ժողովածուում, 36 հատոր. կամ էլ այն պատմական երկերում, որոնք դեռ կգաղվեն այդ նյութերից։

Վանդեան կրակի մեջ էր։ Վաթսուն հազար ռոյալիստների համար ճանապարհը դեպի Փարիզ բաց էր։ Բորդոյում, Լիոնում, Մարսելում, Կաննում ապստամբություններ են բռնկվում Կոնվենտի դեմ։ Թշնամու համեմատությամբ փոքրաթիվ և կազմալուծված, շնորհալի հրամանատարներից զուրկ հանրապետական բանակներն ամենուրեք սպասում են հարվածների, որոնք պետք է ոչնչացնեն իրենց։ Ամեն ինչ կարծես կանխագուշակում է մոտալուտ հրեշավոր ջախջախումը. թվում է, թե Եվրոպայի քաղաքակրթությունը հետու դեպի ետ է շրջվելու։

Բայց ահա մոնտանիարները հեռացնում են ժիրոնդիստներին և կրկնապատկված եռանդ դրսևորում։ Կառնոն, Պրիյորը*, Դյուբուա-Կրանսեն* ղեկավարում են ռազմական գործողությունները. Դանտոնը հրապարակում է դեկրետ, որի համաձայն շարքը լքած զինվորը ենթակա է մահապատժի։ Վալանսիենը և ամրոցները Դանտոնին ժամանակ են տալիս Ֆրանսիան խանդավառելու իր խիզախությամբ։ Սա ժամանակակից պատմության ամենագեղեցիկ պահն է։

1793 թվականի օգոստոսի 23-ին Կոնվենտը դեկրետ ընդունեց համաժողովրդական աշխարհազորի մասին։ Հինգ օր անց Կոնվենտի դեկրետով ժամանակավորապես դադարեցվեց սահմանադրությունը և հաստատվեց դիկտատուրա, որը կոչվեց Հեղափոխական կառավարություն։ Եվ, ինչը հատկապես զարմանալի է, այդ դիկտատուրան իրականացվում էր ոչ թե որպես մեկ մարդու դիկտատուրա, այլ իբրև ամենաբարձր դրսևորումն այն եռանդի, որին ի վիճակի էին բոլորը։

Այդ դեկրետի հրապարակումից անմիջապես հետո ստացվեց անգլիացիների և իսպանացիների կողմից Տուլոնը գրավելու մասին ճակատագրական լուրը։ Նապոլեոնը շուտով կհայտնվի։

Բարրերի առաջարկությամբ հիմնվեցին հեղափոխական տասներկու տրիբունալներ, որ պահանջել էր Փարիզի կոմունան՝ դավաճաններին դատելու համար։ Մեկ միլիոն ֆրանսիացիներ նետվեցին կոալիցիայի զորքերի դեմ և վերջապես ամբողջ ճակատով ետ շրջեցին նրանց։ Զինվորները սիրում են իրենց հայրենիքը, սպաները ոգեշնչված են պատվով և ամենաբազմազան մղումներով. նրանցից ոմանք նախկին ազնվականներ են։

Անհմաստ է շրջահայացություն և չափավորություն պահանջել մի մարդուց, որը խենթացել է ցասումից և քսան թշնամիների

կատաղի հարվածները ետ մղելով, ձգտում է փրկել իր կյանքը։ Իսկ չէ որ հենց դա են մոռանում մեր օրերի ողորմելի գրչակները, որոնք ծնվել են երեսպաշտության ու անդորրության դարաշրջանում և ձգտում են մի ոչ մեծ հարստություն կուտակել։

Հանուն ֆրանսիական հեղափոխության մղվող այս մեծ պատերազմի սկզբում նոր զորամասերի կազմավորման և վտարանդիության հետևանքով հին գնդերում բազմաթիվ թափուր տեղերի առկայության պայմաններում՝ զինվորական ծառայության մեջ պաշտոնի բարձրացումներն արագ էին կատարվում։ Նապոլեոնը, որը 1792 թվականի փետրվարի 6-ին կապիտանի աստիճան էր ստացել, 1793 թվականի սկզբին ուղևորվեց Կորսիկա. նա Ավինիոնում հենց նոր էր տպագրել իր «Ընթրիք Բոկերում» աշխատությունը. այժմ նա ստանձնեց կորսիկական ազգային գվարդիայի գումարտակի հրամանատարությունը, որը ենթադրվում էր օգտագործել Սարդինիայի դեմ ուղղված արշավանքում։

1793 թվականի փետրվարի 12-ին ծովակալ Տրյուգեն խարիսխ ձգեց կղզու մայրաքաղաքի՝ Կալյարիի դիմաց։ Բայց քանի որ Սարդինիայի արշավանքի մասին արդեն կես տարի էր, ինչ փողհարում էին, ֆրանսիացիներին դիմավորեցին հրացանային համազարկով։ Նրանք սխալ սխալի ետևից են անում. փոքրոգություն են դրսևորում. վերջապես կորցնում են իրենց նավերից մեկը և ստիպված են լինում վերադառնալ Տուլոն։ Դա Հանրապետության ձեռնարկած ամենաանմիտ արշավանքներից մեկն էր։

Այդ ժամանակ Կորսիկայում իշխում էր Պասկուալե Պաոլին։ Լյուդովիկոս XIV-ը նրան շնորհել էր գեներալ-լեյտենանտի աստիճան և ուղարկել այդ կղզին։ Այնտեղ նա դավաճանեց Ֆրանսիային, որին հավատարիմ լինելու մասին ամենավերամբարձ արտահայտություններով երդում էր տվել Կոնվենտին, և սկսեց գործել հօգուտ անգլիացիների։ Հավանորեն հենց այդ ժամանակ էլ, տեսնելով, թե երիտասարդ Բոնապարտն ինչպես է կազմակերպում իր գումարտակը, նրա մասին Պաոլին արտահայտեց հետևյալ կարծիքը, որը տարածվեց Կորսիկայում. «Այս երիտասարդն անտիկ ձևով է ձևված։ Նա հիշեցնում է Պլուտարքոսի հերոսներին»։

Պաոլիի մտադրված հեղաշրջումը սկզբնական շրջանում հետաքրքրեց Նապոլեոնին՝ իր թափով և այն հնարավոր ազդեցությամբ, որ կարող էր թողնել իր իսկ ճակատագրի վրա։ Նրա խելքի

հսկայական առավելություններից մեկն այն էր, որ նրան բոլորովին խորթ էր փոփոխամտությունը։ Քսանչորս տարեկան մարդը տարին երկու հարյուր անգամ փոխում է իր ցանկությունները։ Նապոլեոնը միայն մի բան էր ցանկանում՝ փառք։

Ավելի հասուն տարիքում նորից տեսնելով Կորսիկան, Նապոլեոնը վերջապես ողջամտորեն գնահատեց այդ երկրի փոխհարաբերությունը Ֆրանսիայի հետ։ Տասնհինգ տարվա բուռն ատելությունից նրա մեջ միայն խոր մտորումների սովորություն էր մնացել և վարքագիծ՝ չվստահել այն մարդկանց, որոնց միջավայրում ստիպված էր ապրելու։

Վերադառնալով Սարդինիայի արշավանքից, որի ժամանակ Նապոլեոնն ամեն տեսակ անմտությունների օրինակներ տեսավ ռազմական գործում, նա վերստին մտավ հրետանային, բայց արդեն գումարտակի հրամանատարի աստիճանով։ Կորսիկայում նա իր ընտանիքը սնանկացած գտավ։ Նա մեկնեց Ֆրանսիա իր միակ ունեցվածքի՝ զինվորական կոչման հետ. այդ ժամանակ նա քսանչորս տարեկան էր։

Այդ ժամանակ ի՞նչ էր տեղի ունենում այդ կրակոտ հոգում։ Ես դրա մեջ տեսնում եմ՝ 1) սեփական ուժի գիտակցում, 2) ցրվածությանը չտրվելու սովորություն, 3) մի քանի սրտառուչ խոսքից, մի նախանշանից կամ տպավորությունից խորապես հուզվելու ընդունակություն, 4) ատելություն օտարերկրացիների նկատմամբ։

Իր ընտանիքը գտնելով ծայրահեղ աղքատության մեջ, Նապոլեոնն ավելի քան երբևէ անհրաժեշտություն զգաց դիրքի հասնել Ֆրանսիայում կամ Արևելքում։

Փարիզ վերադառնալով իբրև հրետանային գումարտակի հրամանատար և իր շուրջը նայելով, Նապոլեոնը տեսավ ցասումնալից մի ժողով, որը կոչված էր ղեկավարելու մեծ պատերազմը և ամենուր տաղանդավոր մարդիկ էր փնտրում. հետևաբար, նա կարող էր ասել ինքն իրեն. «Ես էլ եմ հրամայելու»։ Բայց զինվորական կարիերան այդ օրերին գարշելի վտանգների հետ էր կապված։ Համոզված, որ ինքը շրջապատված է դավաճաններով, և անզոր է գլուխ հանելու գործի էությունից, Ազգային Կոնվենտը կառափնարան էր ուղարկում ամեն մի գեներալի, ով պարտվում էր կամ էլ լիակատար հաղթանակ չէր տանում։

Անսպասելիորեն լուր տարածվեց, որ Տուլոնը հանձնվել է անգլիացիներին (1793 թվականի սեպտեմբեր)։

Մարսել ժամանած և հարավին քաջածանոթ Նապոլեոնին նշանակեցին Տուլոնը ցամաքից պաշարած բանակի հրետանու պետ։

Հանրապետության բախտից կոալիցիայի տերությունները չհասկացան Տուլոնի գրավման ողջ նշանակությունը։ Նրանք դրա մեջ տեսնում էին միայն մի ամրոց, որը հարկավոր է պաշտպանել, այն դեպքում, երբ Տուլոնին տիրելը կարող էր վիթխարի ազդեցություն թողնել պատերազմի ողջ ընթացքի վրա։ Տուլոնն իրենից ներկայացնում էր ո՛չ ավելի և ո՛չ պակաս, քան գործողությունների մի բազա Ֆրանսիայի հարավում գործող թշնամու բանակների համար։

Աղատության համար երջանիկ հանգամանքներից մեկը եղավ կոալիցիայի անդամների անկարողությունը՝ միասնական, ընդհանուր նպատակի ուղղել իրենց այնքան նշանակալից ուժերը, այլ կերպ ասած, բացառությամբ Ուիլյամ Պիտի, նրանց մեջ ոչ մի ականավոր մարդ չգտնվեց։

Ֆրանսիան, որը մարդիկ էր փնտրում հասարակության բոլոր դասակարգերում, մեծ տաղանդներ էր գտնում այն խավերում, որտեղից սովորաբար միայն փաստաբաններ կամ կրտսեր սպաներ էին դուրս գալիս։ Եթե Լյուդովիկոս XVI-ը շարունակեր կառավարել, Դանտոնը և Մորոն փաստաբաններ կլինեին, Պիշեգրյուն, Մասսենան և Օժերոն՝ ենթասպաներ, Դեզեն և Կլեբերը՝ կապիտաններ, Բոնապարտը և Կաուոն՝ հրետանու փոխգնդապետներ կամ գնդապետներ, Լանը և Մյուրատը՝ գլխարկավաճառներ կամ փոստապետներ, Սիեյեսը գլխավոր փոխերեց կլիներ, իսկ Միրաբոն՝ ամենաշատը շևալիե դ'Էոնի նման մի երկրորդական արկածախնդիր։

1793 թվականի օգոստոսի վերջին, երբ Տուլոնում տնօրինություն անող՝ հին կարգի համախոհները որոշեցին կոալիցիային հանձնել նավատորմիղը և քաղաքը, Լիոնը սպիտակ դրոշ բարձրացրեց. քաղաքացիական պատերազմը դեռ լրիվ չէր հանդարտվել Լանգեդոկում և Պրովանսում. մի քանի հաղթանակ տանելով, իսպանական բանակն անցավ Պիրենեյները և ներխուժեց Ռուսիլիոն. պիեմոնտական բանակը, իր հերթին, անցավ Ալպերը և արդեն կանգնած էր Շամբերիի դարպասների մոտ՝ Լիոնից երեք օրվա հեռավորության վրա։

Եթե երեսուն հազար անգլիացիներ, սարդինացիներ, իսպանացիներ և նեապոլցիներ Տուլոնում միանային տասներկու հազար ֆեդերատների հետ, այդ քառասուն հազարանոց բանակը, այդքան կարևոր բազա ունենալով, հիանալի կկարողանար Ռոնով վեր բարձրանալ և հասնել Լիոն։ Այդ դեպքում նա իր աջ թևով կմիանար պիեմոնտական, իսկ ձախով՝ իսպանական բանակներին։ Բայց կարելի է ասել, որ այն ժամանակ նման մտքերը, որոնք կապված էին մեծ մասշտաբի պատերազմի հետ և ներշնչված էին հեղափոխության ժամանակվա արշավանքներով, անիրականանալի երազանքներ կթվային այն հին սպաներին, որոնք գլխավորում էին կոալիցիայի բանակները։ Նրանցից ամենակրթվածները գիտեին միայն Ֆրիդրիխ II-ի պատերազմների մասին, որոնց ժամանակ բանակային կորպուսի գործողությունները միշտ կախված էին հացի փոի հնարավոր տեղաշարժերից։ Ֆրանսիայի բախտից, նրանցից ոչ մեկը Ֆրիդրիխ II-ի շնորհքի նշույլն անգամ չուներ, և մարտերի ելքը գրեթե միշտ պատահականությունից էր կախված։

Քանի որ սույն ստեղծագործության նպատակը ոչ թե Նապոլեոնի կյանքի իրադարձություններն ակադեմիական ոճով շարադրելն է, այլ անձամբ նրան պատկերելը, ես որոշեցի այստեղ մեջբերել Տուլոնի պաշարման պատմությունն այնպես, ինչպես այն տվել է ինքը՝ այդ մեծ մարդը։ Ես նույն կերպ կվարվեմ նաև այն ժամանակ, երբ կխոսեմ Իտալական արշավանքի մասին, որը տևել է 1796 թվականի ապրիլի 10-ից մինչև 1797 թվականի մայիսի 12-ը։ Դա նշանակում է, որ սեղմ ձևով շարադրելով ճակատամարտերի պատմությունը ես կվերարտադրեմ դրանց վերաբերյալ այն իսկական պատմությունները, որ Նապոլեոնը թելադրել է ս. Հեղինե կղզում։ Այդպիսով, առաջին երկու հատորների բովանդակության մոտ մեկ քառորդը կկազմեն Նապոլեոնի ստեղծագործություններից արված քաղվածքները։

Առավել հեշտ կլիներ օգտագործել այդ պատմությունները՝ դրանք կրճատելով. այդպիսով ես ինձ կապահովեի քննադատական դիտողություններից, որոնք ամենևին էլ դժվար չէ անել։ Հարկավոր է, ասում են ոմանք, Նապոլեոնի պատմությունների հետ այնպես վարվել, ինչպես Ռոլլենն* իր «Հռոմեական պատմության» մեջ վարվել է Տիտոս Լիվիոսի հետ։ Բայց նման վարվելակերպն ինձ սրբապղծություն թվաց։ Ես կարծում եմ, որ Նապոլեոնի

պատմաբանը, որն ընթերցողի աչքին չի ներկայացնում Իտալական արշավանքի մասին նրա պատմություններն այն ձևով, ինչ ձևով դրանք թողել է այդ մեծ մարդը, չի կարող հավակնել այն բանին, որ ծանոթացնելու է Նապոլեոնի բնավորության, դժբախտությունն ընկալելու նրա սովորության, մարդկանց ու իրադարձությունների վերաբերյալ նրա հայացքների հետ և այլն և այլն։

Մյանգամայն այլ է 1800 թվականից մինչև 1814 թվականն ընկած ժամանակաշրջանը։ Այդ ընթացքում Նապոլեոնը նախ ցանկացել է դառնալ, իսկ ապա մնալ կայսր, և շարունակ ստելու դաժան անհրաժեշտության մեջ է գտնվել։ Այդ երկրորդ ժամանակաշրջանին վերաբերող նրա պատմություններից ես քսան էջ էլ մեջ չեմ բերի։

Եվս մի պատճառ ինձ դրդել է մեջբերել Նապոլեոնի պատմությունները իր գլխավոր ճակատամարտերի մասին։ Ես մտածեցի, որ ընթերցողը, որը Նապոլեոնի մասին գիտի լոկ այն, ինչ մինչև հիմա այդ մեծ մարդու մասին գրել է պատմաբանների մեծամասնությունը, ստիպված է լսածով հիանալ նրա ռազմական հանճարով. իսկ ինձ միանգամայն հնարավոր է թվում պատմել նրա ճակատամարտերի մասին և դրանք հասկանալի դարձնել նույնիսկ ոչ զինվորական ընթերցողին։ Մինչև 1790 թվականը նման կարգի պատմություն անմիտ կլիներ. այն ժամանակ ֆրանսիական ոճը ճակատամարտերը նկարագրելիս հանդուրժում էր միայն աբբա դը Վերտոյի* ճոռոմ արտահայտությունները կամ էլ Վոլտերի թեթևամիտ ձևերը։

Այժմ, ես կարծում եմ, գրականության հիմնական դժվարությունը մտքի պարզության հասնելն է։ Եթե գրողը բախտ ունի դրանով օժտված լինելու և բացի դրանից համաձայն է հրաժարվել վերամբարձ ոճի գեղեցկություններից, կարող է համոզված լինել, որ ընթերցողն իրեն կհասկանա։ Իսկ ավելի հեշտ ոչինչ չկա, քան պարզ պատկերացում կազմել Ռիվոլիի ճակատամարտի մասին։

Ես համարձակվում եմ հուսալ, որ Իտալիայի տասը ֆրանկանոց քարտեզի օգնությամբ յուրաքանչյուր ընթերցող կհասկանա Կաստիլիոնեի, Արկոլեի և Ռիվոլիի ճակատամարտերը, որոնք ավստրիացիներին խանգարեցին ազատագրելու Մանտուան և կարծես ֆոն դարձան Իտալական արշավանքի համար։

Ես երկար ժամանակ տատանվում էի, թե արդյո՞ք ամբողջովին մեջ բերեմ Տուլոնի պաշարման ընդարձակ պատմությունը, թե ոչ. դա հիանալի կերպով կարելի էր շարադրել վեց էջով, բայց.

1) ընթերցողն առանց որևէ բան կորցնելու կարող է բաց թողնել Նապոլեոնի պատմածը[1].

2) մեծ զորավարի առաջին հաղթանակի վերաբերյալ այդ պատմությունն ինձ արտակարգ հետաքրքիր է թվում.

3) ինչքան էլ հարցուփորձ եմ արել ժամանակակիցներին, չեմ կարողացել որևէ անճշտություն գտնել այն պատմության մեջ, որը ես հիմա մեջ կբերեմ. միայն Լոդիից հետո Նապոլեոնն ըսկըսեց մտածել ինչ-որ ավելի վեհ բանի մասին, քան հանրապետության գեներալի կոչումն է։

ԳԼՈՒԽ III

Տուլոնի պաշարումից հետո, 1794 թվականի փետրվարի 6-ին Նապոլեոնին շնորհվեց բրիգադային գեներալի աստիճան* և նա նշանակվեց Իտալիայում գործող բանակի հրետանու պետ։ Գլխավոր հրամանատար գեներալ Դյումերբիոնը ծեր էր, բարեհոգի, աղնիվ, բայց միանգամայն ապաշնորհ։ Նրա գլխավոր շտաբի պետը ամենևին ի վիճակի չէր լրացնելու այն, ինչ պակասում էր գլխավոր հրամանատարին։ Արդեն երեք տարի շարունակ այստեղ՝ Նիցցայից հյուսիս գտնվող բարձր լեռներում (Մերձծովյան Ալպեր), զուր տեղը կրակում էին հրացաններով. զինվորները ցրված էին ամայի ժայռերի մեջ, որտեղ մեռնում էին քաղցից։

Գեներալ Բոնապարտի անունը բոլորի շուրթերին էր։ Ոչ ոքի մտքով չէր անցնում ծաղրել այդ ցածրահասակ, այնպես դալուկ, այնպես նվաղուն, այնպես խղճուկ մարդուն։ Նապոլեոնի անբասիր և միշտ հարգանքի տրամադրող վարքագիծը բարձրացրեց նրա հեղինակությունը բանակի աչքին։ Շուտով տեղի ունեցավ Սաորջոյի ռազմական օպերացիան, և զինվորները նրա մեջ հայտնագործեցին արտակարգ մարդուն, փառք տենչացող և հանրապետությանը հաղթանակ պարգևելու փափագով տոչորվող սրտին։

1 Նապոլեոնի հուշերը, հ. I, էջ 1։

Երբ Նապոլեոնը ժամանեց Նիցցա, նրա համհարզներն էին Մյուրոնը և Դյուրոկը։ Հրետանու պետն առաջարկեց գործողությունների մի պլան, որն ընդունվեց ռազմական այն խորհրդում, որին ներկա էին Կոնվենտի կոմիսարներ Ռոբեսպիեռ-կրտսերը* և Ռիկորը*, գեներալներ Դյումերբիոնը, Մասսենան, Ռյուսկան և ուրիշներ։ Խնդիրն այն էր, որպեսզի շրջանցվի Սաորջոյի չարաբաստիկ դիրքը, որը վաղուց արդեն կասեցնում էր ֆրանսիական զորքերի առաջխաղացումը։ Նրանք սկսեցին առաջ շարժվել 1794 թվականի ապրիլի 6-ին, այն բանից մեկ օր հետո, երբ հանրապետության հիմնադիրներից մեկը՝ մի մարդ, որի հավասարը չէր տեսել հետագայում Եվրոպայում կատարված հեղափոխություններից և ոչ մեկը՝ Դանտոնը, մահապատժի ուղարկվեց ախոյանի կողմից, որին այդ հպարտ հոգին չափազանց արհամարհում էր։

Այսպիսով, հեղափոխությունն արդեն բավական հեռու էր գնացել այն պահին, երբ Նապոլեոնն սկսեց դրանում դեր խաղալ. եռանդի ժամանակաշրջանը կվերջանա եռանդի պահանջմունքի հետ։

Ապրիլի 8-ին Մասսենան գրոհով գրավեց Օնելին իշխող բարձունքները. այդ քաղաքի նավահանգստում գտնվում էին անգլիացիների՝ ավստրիացիների ու պիեմոնտական զորքերի այդ գործուն և չափազանց ճարպիկ դաշնակիցների նավերը։

Ապրիլի 29-ին Մասսենան մտավ Սաորջո. մայիսի 8-ին նա գրավեց Տենդի լեռնանցքը, և հաջորդ օրը Իտալական բանակը վերջապես կապ հաստատեց Ալպիական բանակի հետ։

Այսպես, Իտալական բանակը, հրետանու երիտասարդ գեներալի պլանին հետևելով իրականացրեց այն, ինչին ապարդյուն ձգտել էր երկու տարի շարունակ։ Հանրապետության զինվորները գրավեցին Մերձծովյան Ալպերի վերին լեռնաշղթան. նրանք գրավեցին յոթանասուն թնդանոթ, երկու ամրոց՝ Օնելը և Սաորջոն, գերի վերցրին չորս հազար զինվոր։

Գլխավոր հրամանատար Դյումերբիոնը միանգամայն անկեղծորեն գրել է Կոնվենտի ռազմական կոմիտեին. «Գեներալ Բոնապարտի տաղանդին եմ պարտական այն հմուտ զորաշարժերի համար, որոնք մեզ հաղթանակի հասցրին»։

Նապոլեոնը խիզախեց ավելի ընդարձակ պլան առաջարկել, քան այն, որ հենց նոր իրականացվեց հաջողությամբ՝ Կոնիի տակ

Ալպիական բանակը միացնել Իտալականի հետ, որը ֆրանսիական հանրապետությանը կտար Պիեմոնտը և կօգներ առանց մեծ ջանքերի հասնելու Պո գետին։ Սակայն չհաջողվեց համաձայնություն գալ Ալպիական բանակի գլխավոր շտաբի հետ. հարկ կլիներ երկու բանակն էլ դնել մի զորավարի հրամանատարության ներքո, իսկ չէ որ ամեն մեկը զողում է իր տեղի համար։

Գեներալ Դյումերբիոնը, որը հեռու էր հրետանու իր պետին նախանձելուց, հիանում էր նրա ձիրքով և մեծ ջանասիրությամբ սկսեց իրականացնել երրորդ պլանը, որի շնորհիվ Իտալական բանակը հասավ Սավոնային և Ջեայի դարպասներին։

Սաորջոյում տարած հաղթանակից հետո բանակում իմացան, որ ավստրիական դիվիզիաներից մեկը մտադիր է գրավել Բորմիդայի ափին գտնվող Դեգոն և այնտեղից գնալ միանալ անգլիական դիվիզիային, որը պետք է ափ իջներ Վադոյում։ Միանալով՝ այդ զորքերը պետք է գրավեին Սավոնան։

Հարկավոր է կանխել այդ միացումը։ Հրետանու երիտասարդ գեներալը, որն օրուգիշեր ուսումնասիրում էր տեղանքը, առաջարկեց գրավել Սան-Ջակոմո, Մոնտենոտտե, Վադո բարձունքները՝ այդպիսով բանակի աջ թևն առաջ շարժելով ընդհուպ մինչև Ջենովա։ Ջենովայի սենատի թշնամանքը նույնքան ակնհայտ էր, որքան և ստորին դասակարգերի հայրենասիրությունը, որոնք, սակայն, կարգին հարստացել էին՝ հաց մատակարարելով ֆրանսիացիներին։

Գեներալ Դյումերբիոնն ընդունեց այս պլանը։ Առաջ շարժվելով Բորմիդայի հոսանքով, նա ներխուժեց Պիեմոնտ և, իջնելով հարթավայր, թիկունքից սպառնաց ավստրիական բանակին, որն անհապաղ սկսեց նահանջել դեպի Դեգո։ Հետապնդվելով գեներալ Ջերվոնիի կողմից, ավստրիացիներն արագորեն նահանջեցին դեպի Աքվի՝ թողնելով Դեգոն և իրենց բոլոր պահեստները։ Ֆրանսիական բանակը սրընթաց անցավ Մոնտենոտտեի և Միլեզիմոյի ապագա մարտադաշտերով, որոնք Նապոլեոնին վիճակված էր մեկ տարի հետո փառավորել ամբողջ աշխարհով մեկ. ֆրանսիական բանակն անցավ Ապենինները և նորից տեսավ ծովը. բայց այժմ, իջնելով ծովափնյա շերտի վրա, այն բանի վրա, որ այս երկրում անվանում են «ափ» կամ «արևմտյան Ռիվիերա», նա կտրեց բոլոր հաղորդակցություններն անգլիացիների ու

ավստրիացիների միջև, վախ ներշնչեց Ջենովայի արիստոկրատիային և քաջալերեց հայրենասերներին։

Այսպիսիք էին գեներալ Բոնապարտի առաջարկած երրորդ պլանի արդյունքները։

Իտալիայում գործող բանակի արտասովոր տեղաշարժերը փակուղու առջև կանգնեցրին կոալիցիայի մասնակիցներին. նրանք հաստատ համոզված էին, որ կոչնչացնեն Հանրապետությունը։ Հենց այդ օրերին, այն մարդու առաջին քայլերի ժամանակ, որը պետք է նրանց սովորեցներ վախենալ Ֆրանսիայից, ստորագրվեցին (1794 թվականի ապրիլի 14-ին և 19-ին) ընդդեմ Հանրապետության Ավստրիային, Պրուսիային, Սարդինիային, Հոլանդիային և Անգլիային ամուր միավորող պայմանագրեր։ Անգլիան, որն առավել մեծ չափով էր տնօրինում այն ազատությունը, որի բուռն պոռթկումը Ֆրանսիայում այդպիսի վախ էր ներշնչել թագավորներին, և որն այդ ազատության շնորհիվ, որ ինքը ձգտում էր ճնշել, լուսավորությամբ, ինչպես նաև հարստությամբ գերազանցում էր մյուս երկրներին, շուտով սկսեց վճարել ողջ կոալիցիայի ծախսերը և ղեկավարել այն։

Ի տարբերություն գերմանացիների, անգլիացիները գիտեն ժամանակի արժեքը. նրանց ուշադրությունն աննպատակ չի թափառում։ Ընդ որում, այդ տարիներին նրանք ֆրանսիական զորավարի դեմ կռվելու արժանի մարդ ունեին (Նելսոնը*)։ Նրա նման Նելսոնը սիրում էր նորամուծություններ անել և ատում էր իր պետերին։ Ծառայության մեջ իր առաջադիմությամբ նա ամբողջովին պարտական էր Նապոլեոնի ներշնչած վախին։

Գերմանացիները միայն մի իսկական գնդապետ ունեին՝ էրցհերցոգ Կառլոսը. բայց նա էլ կարծես թե սպառել էր իր շնորհքները, երբ հարկավոր էր դրանք գործադրել Նապոլեոնի դեմ՝ պաշտպանելով Նորիքյան Ալպերը։ Մեծ Սուվորովն Իտալիա եկավ միայն չորս տարի անց, և ավստրիացիների մանր վեճերը նրան խանդարեցին Ֆրանսիա ներթափանցելու։ Եթե միապետների արքունիքներում վխտացող ողորմելի մարդկանց նախանձը չխանգարեր Նելսոնին և Սուվորովին ազատորեն ու փոխադարձ համաձայնությամբ գործելու, Ֆրանսիան, թերևս, կկործանվեր. բայց մեծ մարդկանց ըստ արժանվույն գնահատում են նրանց մահից հետո միայն։

Այն գրոհների ժամանակ, որոնցով ուղեկցվեց դեպի Լոանո

կատարված կարճ արշավանքը, Բոնապարտը մեծ քաջություն դրսևորեց։ Սակայն, ինչպես նշում էին ավելի տարեց գեներալները, նա դեռ երբեք թշնամու կրակի տակ գումարտակ չէր ղեկավարել։ Երիտասարդ գեներալն ուզում էր, որ այդ հաջողություններն օգտագործվեն ամրացված ճամբար Ջևայի՝ պիեմոնտացիների դիմադրության կենտրոնի գրավման համար։ Այդտեղից հեշտ էր առաջ շարժվել դեպի իտալական հարթավայրերի (Պոյի հովիտ) խորքերը։ Բայց ներխուժման այդ պլանը չափից ավելի համարձակ թվաց Փարիզի ռազմական կոմիտեին, որին այն ներկայացրեց Նապոլեոնը։

Դրանից անմիջապես հետո Իտալական բանակին առընթեր Կոնվենտի կոմիսարներն ընդունեցին հետևյալ որոշումը.

«Գեներալ Բոնապարտը կուղևորվի Ջենովա, որպեսզի ֆրանսիական Հանրապետության գործերի հավատարմատարի հետ միասին Ջենովայի կառավարության հետ քննարկի իրեն տրված հրահանգներում նշված հարցերը։

Ֆրանսիական Հանրապետության գործերի հավատարմատարը պարտավոր է ճանաչել գեներալ Բոնապարտի լիազորությունները և նպաստել դրանց ճանաչմանը Ջենովայի կառավարության կողմից։

Լոանո, Հանրապետության II տարվա մեսսիդորի 25
(13 հուլիսի 1794 թվականի)

Ստորագրությունը՝ Ռիկոբ»։

Այս որոշմանը կցված էր հետևյալ փաստաթուղթը.

«Գաղտնի հրահանգներ։

Գեներալ Բոնապարտը մեկնում է Ջենովա։

1. Նա պետք է զննի Սավոնայի ամրոցը և մերձակա տեղանքը։

2. Նա պետք է զննի Ջենովայի ամրոցը և այն տեղանքը, որ անհրաժեշտ է իմանալ պատերազմ սկսելուց, որի հետագա ընթացքը դժվար է կանխատեսել։

3. Նա պետք է հավաքի բոլոր հնարավոր տեղեկությունները հրետանու և ռազմական մյուս օբյեկտների մասին։

4. Նա պետք է ապահովի Բաստիայի համար գնված և վճարված չորս հազար տակառիկների [վառոդի] նիցցա հասնելը։

5. Նա պետք է ուսումնասիրի, որքան հնարավոր է, ֆրանսիական հանրապետության ներկայացուցիչ Տիլլիի և հանրապետության մյուս գործակալների գործելակերպը քաղաքացիական ու ռազմական գործերում, որոնց վերաբերյալ մեզ մոտ զանազան բողոքներ են ստացվում։

6. Նա պետք է բոլոր միջոցները ձեռնարկի և հավաքի այն բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են կոալիցիայի նկատմամբ Ջենովայի կառավարության մտադրությունները պարզելու համար։

Կազմված և հաստատված է Լոանոյում, երկրորդ տարվա մեսիդորի 25-ին։

Ստորագրությունը՝ Ռիկոր»։

Այս հանձնարարությունը և լրացուցիչ հրահանգները ցույց են տալիս, թե հազիվ քսանհինգ տարեկան Բոնապարտն ինչպիսի վստահություն էր վայելում այն մարդկանց մոտ, որոնք խորապես շահագրգռված էին չսխալվելու իրենց լիազորների ընտրության մեջ։

Բոնապարտը գնում է Ջենովա. նա այնտեղ կատարում է իր վրա դրված խնդիրը։ Եկավ II տարվա տերմիդորի 9-ը[1]։ Տեռորի կողմնակից դեպուտատներին փոխարինում են Ալբիտը* և Սալիչետտին*։ Ա՞յն պատճառով արդյոք, որ այդ ժամանակ տիրող անկարգության հետևանքով նրանք անտեղյակ էին հրետանու գեներալին տրված հրահանգներին, թե՞ այն պատճառով, որ երիտասարդ Բոնապարտի կարիերայի փայլուն սկզբին նախանձող մարդիկ կասկածանքներ էին ներշնչել նրա դեմ՝ համենայն դեպս՝ հիմնվելով Բոնապարտի Ջենովա կատարած ուղևորության վրա, նրանք ընդունեցին հետևյալ որոշումը.

«Ֆրանսիական ժողովրդի անունից... Ազատություն, Հավասարություն։

Ալպիական և Իտալական բանակներում գտնվող ժողովրդական ներկայացուցիչները,

Նկատի ունենալով, որ Իտալական բանակի հրետանու պետ գեներալ Բոնապարտն իր խիստ կասկածելի վարքագծի և ճատկա-

1 1797 թվականի հունիսի 27-ին Հալիենը կառափնարան ուղարկեց Ռոբեսպիերին, Ջեն-Ժյուստին և նրանց բոլոր համախոհներին։

գես վերջերս Ջենովա կատարած իր ուղևորության հետևանքով բոլորովին կորցրել է իր վստահությունը, որոշում են հետևյալը.

Իտալական բանակի հրետանու պետ, բրիգադային գեներալ Բոնապարտը ժամանակավորապես հեռացվում է իր գրաված պաշտոնից։ Հիշյալ բանակի գլխավոր հրամանատարին հանձնարարվում է անձնական պատասխանատվությամբ կալանավորել նրան և ուժեղ ու հուսալի պահակախմբի հսկողությամբ ուղեկցել Փարիզ՝ Հանրության փրկության կոմիտե։ Նրա բոլոր թղթերն ու իրերը հարկավոր է կնքել. ժողովրդի ներկայացուցիչներ Սալիչետտիի և Ալբիտի կողմից տեղում նշանակված կոմիսարները կկազմեն դրանց ցուցակը. կասկածելի թղթերը ենթակա են ուղարկման Հանրության փրկության կոմիտե։

Որոշումը կայացված է Բարսելոնետտում, միասնական, անբաժանելի և դեմոկրատական ֆրանսիական հանրապետության II տարվա տերմիդորի 19-ին (1794 թվականի օգոստոսի 6-ին)։

Ստորագրությունները՝ Ալբիտ, Սալիչետտի, Լապորտ։

Իսկականի հետ ճիշտ է՝

Իտալական բանակի գլխավոր հրամանատար

Ստորագրությունը՝ Դյումերբիոն»։

Գեներալ Բոնապարտը դիմեց Կոնվենտի կոմիսարներ Ալբիտին և Սալիչետտիին հետևյալ բողոքով.

«Դուք ինձ զրկել եք պաշտոնից, կալանքի տակ առել ու կասկածելի հայտարարել։

Ինձ վարկաբեկել եք՝ առանց դատելու կամ էլ դատապարտել՝ առանց լսելու։

Հեղափոխական պետության մեջ միայն երկու կարգի մարդիկ կան՝ կասկածելիներ ու հայրենասերներ։

Երբ առաջիններին մեղադրանք են ներկայացնում, դա արվում է հանուն անվտանգության, ընդհանուր միջոցառումների կարգով։

Նրանց ճնշումը, ովքեր պատկանում են երկրորդ կարգին, սասանում է հանրության ազատության հիմքերը։ Դատավորն

իրավունք ունի դատապարտելու՝ ամենալիակատար տեղեկություններ ունենալով միայն և հենվելով փաստերի հետևողականության վրա, որը բացառում է կամայականությունը։

Հայրենասերին կասկածելի հայտարարել, նշանակում է նրանից խլել այն ամենաարժեքավորը, որ նա ունի, այն վստահությունն ու հարգանքը, որ նա վայելում է։

Իսկ ո՞ր կարգին են ուզում ինձ դասել։

Մի՞թե հեղափոխության հենց սկզբից ես մշտապես նվիրված չեմ եղել նրա սկզբունքներին։

Բոլորի աչքի առջև ես շարունակ չե՞մ մարտնչել արդյոք մե՛ր թերքին թշնամիների, մե՛ր, որպես զինվորական՝ օտարերկրացիների դեմ։

Ես հրաժարվել եմ իմ հայրենիքում գտնվելուց, լքել ունեցվածքս, ամեն ինչ զոհաբերել հանուն Հանրապետության։

Հետագայում ես ոչ առանց աչքի ընկնելու մարտնչել եմ Տուլոնի տակ, իսկ Իտալական բանակում նրա հետ արժանացել եմ այն գովեստներին, որոնք նա նվաճել է Սաորջոյի, Օնելի և Տանարոյի գրավումով։

Ռոբեսպիերի դավադրության բացահայտման պահին ինձ պահել եմ այն մարդու նման, որը սովոր է ղեկավարվել միայն սկզբունքներով։

Ինձ չի կարելի զրկել հայրենասերի կոչումից։

Իսկ ինչո՞ւ եք ինձ կասկածելի հայտարարել՝ առանց ինձ լսելու։ Ինչո՞ւ եք ինձ կալանավորել բռնակալի մահվան լուրն ստացվելուց մի շաբաթ անց։

Ինձ հայտարարում են կասկածելի, իմ թղթերը կնքվել են։

Հարկավոր էր հակառակն անել. հարկավոր էր իմ թղթերը կնքել, լսել ինձ, բացատրություններ պահանջել ինձնից և հետո միայն կասկածելի հայտարարել ինձ, եթե դրա համար հիմքեր կլինեն։

Ինձ ուզում են Փարիզ ուղարկել այն որոշման հիման վրա, որով ես դասվել եմ կասկածելիների շարքը։ Բոլորը կմտածեն, որ ժողովրդի ներկայացուցիչներն այդպես են վարվել՝ ելնելով ինչ-որ տվյալներից, և դատավորներն ինձ կվերաբերվեն սոսկ այն ուշադրությամբ, որին արժանի է այդ կարգի մարդը։

Լինելով անմեղ, հայրենասեր, զրպարտված, ես չեմ կարողանա բողոքել Կոմիտեից, ինչ միջոցներ էլ որ նա ձեռնարկի։

Եթե երեք հոգի հայտարարեն, որ հանցանք եմ գործել, ես չեմ կարողանա բողոքել այն դատարանից, որն ինձ կդատապարտի։

Սալիշետտի՛, դու ինձ ճանաչում ես. մի՞թե վերջին հինգ տարում իմ վարքագծում ինչ-որ բան ես նկատել, որը կասկածելի լինի հեղափոխության համար։

Ալբի՛տ, դու ինձ չես ճանաչում։ Քեզ չէին կարող ոչ մի արժանահավատ փաստ բերել. դու ինձ չես լսել. իսկ չէ՞ որ դու գիտես, թե երբեմն որքան հմտորեն է փսփսում զրպարտությունը։

Մի՞թե ցանկանում են ինձ հավասարեցնել հայրենիքի թշնամիներին, մի՞թե հայրենասերները պետք է անխոհեմաբար զոհաբերեն այն զորավարին, որն անօգտակար չի եղել Հանրապետության համար։ Մի՞թե ժողովրդական ներկայացուցիչները պետք է կառավարությունը դնեն անարդարացի ու անշրջահայաց լինելու անհրաժեշտության առջև։

Լսեք ինձ, ոչնչացրեք այն ճնշումը, որին ես ենթարկվում եմ, և վերադարձրեք ինձ հայրենասերների հարգանքը։

Իսկ եթե, մի ժամ հետո, մարդատյացներին պետք կլինի իմ կյանքը, ես անչափ քիչ եմ ափսոսում այն։ Ես այն շատ հաճախ եմ արհամարհել։ Այո՛, սոսկ այն միտքը, որ կյանքս դեռ կարող է օգտակար լինել հայրենիքին, ստիպում է ինձ արիաբար կրել նրա բեռը»։

Գեներալ Բոնապարտի կալանքը տևեց երկու շաբաթ. ահա այն որոշումը, որի հիման վրա նա ազատվել է.

«Ժողովրդական ներկայացուցիչները և այլն և այլն

Մանրազնին ծանոթանալով քաղաքացի Բոնապարտի թղթերին, որը դավադիր Ռոբեսպիերի մահապատժից հետո հանրային անվտանգության պահպանության նկատառումով կալանքի է ենթարկվել և այլն և այլն

որոշեցին. մինչև պարզելը քաղաքացի Բոնապարտին ազատել՝ նրան թողնելով գլխավոր շտաբում և այլն և այլն։

Կազմված է Նիցցայում, II տարվա ֆրյուկտիդորի 3-ին (1794 թվականի օգոստոսի 20-ին)։

Ստորագրությունը՝ Ալբիտ, Սալիշետտի»[1]։

---

1 Բուրիենի նոթերը, հ. I, էջ 65.

Իտալիայում գեներալ Բոնապարտը մտերմացավ Դյուրոկի հետ, որը համհարզի և հրետանու կապիտանի կոչումով նրա հետ կիսեց արշավանքի մի մասը. Բոնապարտին խիստ զգայնացնում էր այն սպաների՝ գասկոնական ձևով չափազանցված զեկույցները, որոնց ինքը հանձնարարում էր հետևել իրադարձություններին։ Դյուրոկի՝ այդ սառնասիրտ և զուսպ մարդու զեկույցների մաթեմատիկական ճշգրտությունը միանգամայն համապատասխանում էր նրա պահանջներին։ Դյուրոկը, թերևս, Նապոլեոնի ամենամտերիմ մարդն էր։ Միայն նրա համար էր Նապոլեոնը հետագայում խախտում տխրալի կատակերգության կանոնները, որոնց, կայսերական տիտղոս ընդունելով, նա հպատակեցրել էր իր կյանքը. նույնիսկ այդ ժամանակ նա պահանջում էր, որ, իր հետ միայնակ մնալով, Դյուրոկն առաջվա պես «դու»-ով դիմի իրեն։

Գեներալ Բոնապարտը արդյո՞ք տեռորի կողմնակից է եղել։ Նա միշտ ժխտել է դա։ Իր ողջ հոանդը նա նվիրաբերե՞լ է արդյոք բացառապես այս ամենազորավոր գործելակերպին ծառայելուն, թե լոկ «հարմարվել» է, մի բան, որ խիստ անհրաժեշտ էր, եթե նա չէր ուզում կործանվել։ Նա ոչինչ չի արել հանուն դրա. արդեն այն ժամանակ նա յուրացրել էր այն մեծ սկզբունքը, որ հեղափոխության ժամանակ հարկավոր է ամեն ինչ անել մասսաների համար և արտակարգ ոչինչ՝ պարագլուխների համար։ Ես չեմ թաքցնի, որ վստահության արժանի որոշ ժամանակակիցներ այլ կերպ են պատմում այն վտանգի մասին, որին ենթարկվում էր գեներալ Բոնապարտը։ Ահա նրանց վարկածը[1]։

1794—1795 թվականների ձմռանը Նապոլեոնին հանձնարարվել էր ստուգել Միջերկրածովյան ափի մարտկոցները. այդ նպատակով նա նորից եղավ Տուլոնում և Մարսելում։

Մարսելում գտնվող բանակին կցված ժողովրդական ներկայացուցիչը վախենում էր, թե չլինի հանկարծ ժողովրդական ընկերակցությունները, ավելի մեծ տաքարյունություն դրսևորելով, քան ինքը, գրավեն վառոդի նկուղը, որն առաջ օգտագործվում էր հեղափոխության առաջին օրերին մասնակիորեն ավերված Սենժան և Սեն-Նիկոլա ամրոցների մատակարարման համար։ Նա իր երկյուղներին հաղորդակից դարձրեց գեներալ Բոնապարտին. սա

1 Գեներալ Բոնապարտի կյանքը Լոանոյի ճակատամարտից մինչև վանդեմիերի 13-ը երբևիցե հատուկ ստեղծագործության նյութ կհանդիսանա։

նրան հանձնեց ատամնավոր պատի կառուցման պլանը, որը պետք է այդ ամրոցներն անջատեր քաղաքից։ Այդ պլանը, որը վկայում էր ժողովրդի նկատմամբ տածած անվստահության մասին, ուղարկվեց Փարիզ. Կոնվենտն այն կործանարար համարեց ազատության համար և գեներալ Բոնապարտին հրամայեց ներկայանալ Փարիզ՝ բացատրություններ տալու։

Դա գրեթե հավասարազոր էր մահվան դատավճռի։ Այդպես են զոհվել շատ զորավարներ։

Կոնվենտի հրամանը Նապոլեոնին հայտնեցին Նիցցայում։ Իտալական բանակին կցված ժողովրդական ներկայացուցիչները նրան տնային կալանքի ենթարկեցին՝ երկու ժանդարմի հսկողությամբ։ Դրությունն այնքանով էր վտանգավոր, որ արդեն շատ էին խոսում երիտասարդ գեներալ Բոնապարտի մասին և որ տերմիդորականներին հայտնի էին նրա բարեկամական հարաբերությունները կրտսեր Ռոբեսպիերի հետ, որը զոհվել էր իր եղբոր հետ միասին։ Գասպարենը*, որը Տուլոնից հետո շատ էր կապվել նրան, ոչինչ չէր կարող անել առանց իր երկու կոլեգաների համաձայնության։ Պ-ն Դեժենետը, խելոք մի մարդ, պատմում է[1], որ այս ծայրահեղության մեջ Նապոլեոնի համհարզներ Սեբաստիանին* և Ժյունոն մտադրվեցին սրերով կտոր-կտոր անել իրենց պետին հսկող երկու ժանդարմներին, առևանգել նրան ու տանել Ջենովա, որտեղ նա նավ կնստեր։ Բարեբախտաբար թշնամու զորքերի տեղաշարժերը տագնապ առաջացրին. վտանգի ճնշման տակ, վախենալով անհաջողություններից, որոնց համար իրենք պատասխան կտային գլխով, ժողովրդական ներկայացուցիչները Հանրության փրկության կոմիտեին գրեցին, որ բանակը չի կարող յոլա գնալ առանց գեներալ Բոնապարտի, և Կոնվենտի հրամանը չեղյալ հայտարարվեց։

Անտարակույս, Կոնվենտը ղեկավարում էր երկիրը, բայց նա հաճախ ժամանակ էր վատնում դատարկ, վերամբարձ ճառերի վրա և, դավաճաններով շրջապատված՝ ժամանակ չէր ունենում գործերի էության մեջ ներթափանցելու համար։ Բոլոր հանցագործությունները պատժվում էին մահով։ Կոնվենտի արյունոտ սխալները մասամբ արդարացվելու են սերունդների աչքին՝ շնորհիվ այն հուշագրերի, որոնք Ռեստավրացիայի ժամանակ հրա-

1 Նոթեր, հ. I։

տարակել են պարոնայք Ֆոշ-Բորելը, Բերտրան դը Մոլվիլը, Մոնգալյարը և շատ ուրիշներ։ Ինչ էլ որ լինի, չի կարելի չընդունել, որ այդ ժողովը, որին հավասարը չէին կարողացել ստեղծել ո՛չ Իսպանիան, ո՛չ էլ Իտալիան, որոնք իրենց աչքի առաջ ունեին այդ օրինակը, իսկապես փրկեց Ֆրանսիան։ Կոնվենտի հրատարակած օրենքների շնորհիվ Ֆրանսիայի բնակչությունը, որը 1789 թվականին քսանհինգ միլիոնից չէր անցնում, 1837 թվականի մոտերքը հասավ գրեթե երեսուներեք միլիոնի։

Նապոլեոնը վճռականորեն ժխտում էր, որ ինքը երբևէ եղել է տեռորի կողմնակից. նրա ասելով, ժողովրդական ներկայացուցիչներից մեկը իրեն օրենքից դուրս է հայտարարել այն բանի հիման վրա, որ ինքը հրաժարվել է իր բոլոր հրետանային ձիերը նրան տրամադրել՝ փոստային փոխադրությունների համար։ Բայց ես չգտա դրա հաստատումը։ Նապոլեոնը սիրում էր ծիծաղելի ձևով ներկայացնել Հանրապետությունը. նրան ջղայնացնում էր Հանրապետության ոչ թե ներկայիս փառքը (քանզի բոլորը նրան զրպարտում էին), այլ ապագա փառքը, որի համեմատությամբ Կայսրության փառքը մի քիչ խաբուսիկ կթվա։

Ռազմական փառքի գործերում վաղ թե ուշ նորից սկսում են դնահատել այն մեծ արդյունքները, որ ձեռք են բերվել փոքր միջոցներով։

Անտարակույս, Ուլմից մինչև Աուստերլից կատարված ռազմերթը հոյակապ է. բայց չէ՞ որ Նապոլեոնն արդեն միապետ էր, և ինչպիսի՞ վտանգի էր ենթարկվում այն ժամանակ նրա բանակը։ Ժամանակի ընթացքում Կաստիլիոնեն նորից ավելի բարձր է դասվելու։

Նիցցայում ժողովրդական ներկայացուցիչ կրտսեր Ռոբեսպիերը հիանում էր երիտասարդ, մռայլ, մտասույզ, ուրիշներից այնքան տարբեր գեներալով, որը երբեք անորոշ չէր արտահայտվում, նրա հայացքում արտակարգ խելք էր զգացվում։ Տերմիդորի 9-ից քիչ առաջ եղբոր կողմից կանչված լինելով Փարիզ, կրտսեր Ռոբեսպիերն ամեն ինչ արեց, որպեսզի Նապոլեոնին համոզի հետևել իրեն։ Բայց Նապոլեոնին դուր էր գալիս բանակի կյանքը, որտեղ նա զգում էր իր գերազանցությունը և բոլորին ստիպում իրեն ճանաչել. նա չցանկացավ հանձնվել փաստաբանների անօրինություններ։

«Եթե ես վերջնականապես չհրաժարվեի,— ասել է նա հետագայում,— ով գիտե, թե ինչի կհանգեցներ ինձ այդ առաջին քայլը, և ինչ ճակատագիր կվիճակվեր ինձ»։

Գուցե նա կխանդարեր, որ տեղի ունենա տերմիդորի 9-ը. նա կարողանում էր մարտնչել Փարիզի փողոցներում, իսկ Ռոբեսպիերի դեմ Տալիենի պայքարում չօգտագործված շատ ժամեր էին մնացել։

Ասենք, Նապոլեոնը Ռոբեսպիերին պատշաճն էր հատուցում մի տեսակետից. նա ասում էր, որ տեսել է նրա երկար նամակները՝ գրված եղբորը՝ կրտսեր Ռոբեսպիերին, որն այն ժամանակ ժողովրդական ներկայացուցիչ էր Հարավային բանակում. դրանցում նա արտահայտվել է հեղափոխական դաժանությունների դեմ և կրքոտ դատապարտել դրանք՝ ասելով, որ այդ դաժանություններն անարգում են հեղափոխությանը և կարող են նրան կործանել։

Նիցցայի բանակում կար նաև մի այլ ժողովրդական ներկայացուցիչ՝ բավականին ողորմելի մի մարդ։ Նրա կինը՝ արտակարգ սիրունիկ ու սիրալիր, կիսում էր նրա առաքելությունը, իսկ երբեմն էլ դեկավարում այն. նա ծագումով Վերսալից էր։ Ամուսինները շափազանց տարված էին հրետանու երիտասարդ գեներալով. նրանք հիացած էին նրանով և ամեն տեսակետից սիրաշահում էին, մի բան, որը նրա համար մեծ առավելություն էր, քանի որ խառնակչությունների և մատնությունների այդ ժամանակներում ժողովրդական ներկայացուցիչը մարմնավորում էր օրենքը։ Թյուրոն Կոնվենտում մեկն էր նրանցից, ովքեր վանդեմիերյան տագնապալից օրերին առավելապես նպաստեցին, որպեսզի հայացքներն ուղղվեն Նապոլեոնին. նա հիշում էր այն կարևոր դերը, որ իր աչքի առաջ Նապոլեոնը խաղացել էր բանակում։

«Ես այն ժամանակ շատ երիտասարդ էի,— ասել է Նապոլեոնն իր հավատարիմ ծառաներից մեկին,— ես երջանիկ ու հպարտ էի իմ համեստ հաջողությամբ և աշխատում էի երախտագիտություն արտահայտել ուշադրության այն բոլոր նշաններով, ինչ որ ունեի։ Հիմա դուք կտեսնեք, թե ինչի կարող է հասնել իշխանության շարաշահումը, և ինչից կարող է կախում ունենալ մարդկանց ճակատագիրը. չէ՞ որ ես ուրիշներից վատ չեմ։

Մի անգամ, երբ ես տիկին Թ.-ի հետ շրջագայում էի Տենդի լեռնանցքից ոչ հեռու գտնվող մեր դիրքերում, հանկարծակի մտքովս անցավ նրան ցույց տալ ռազմի տեսարան, և ես առա-

ջավոր պոստերին հրամայեցի գրոհ ձեռնարկել. ճիշտ է, հաղթողը մենք էինք, բայց պարզ էր, որ այդ գործողությունը չէր կարող որևէ այլ արդյունք տալ. դա զուտ քմահաճույք էր և, սակայն, մենք կորցրինք մի քանի մարդ։ Վերհիշելով այդ դեպքը, ես ամեն անգամ խիստ հանդիմանում եմ ինձ այդ արարքի համար»։

Տերմիդորյան իրադարձությունները հասցրեցին Կոնվենտի կոմիտեների կազմի լրիվ փոփոխությանը։ Հրետանու նախկին կապիտան Օբրին ռազմական կոմիտեի գլուխ անցավ (այսինքն՝ դարձավ ռազմական մինիստր)։ Հանրապետության համար առավել ահեղ վտանգի օրերին համաժողովրդական աշխարհազորը հանգեցրեց բազմաթիվ կորպուսների կազմավորման. գեներալներ էին ստեղծում ըստ անհրաժեշտության։ Բավական էր, որ սպան խիզախություն և որոշ ձիրք դրսևորի, նրան նշանակում էին գեներալ, իսկ երբեմն էլ՝ գլխավոր հրամանատար։ Բայց դրա փոխարեն պարտություն կրած գեներալները, ինչպիսի քաջեր էլ լինեին (Հուշար*, Բրյունո), անխուսափելիորեն հանձնվում էին հեղափոխական տրիբունալին։

Արտաքուստ անմիտ և ողջ միապետական Եվրոպայի ծաղրի առարկան դարձած այս սիստեմին է Ֆրանսիան պարտական իր բոլոր ականավոր զորավարներով։ Երբ պաշտոնի բարձրացումներն սկսեցին տրվել խելամտորեն և ընդ որում այդ գործին լավատեղյակ մարդու (Նապոլեոնի) կողմից, առանց բացառության գեներալներ դարձան դիմազուրկ մարդիկ՝ Նապոլեոնի համհարզները, որոնց հրամանատարությամբ նրա զորքերը 1808 թվականից մինչև 1814 թվականը շարունակ պարտություններ էին կրում (Իսպանիայում, Գերմանիայում և այլուր՝ Մակդոնալդը*, Ուդինոն*, Նեյը, Դյուպոնը*, Մարմոնը և ուրիշներ)։

Ֆրանսիայի հերոսական տարիներին սպաները շատ հաճախ հրաժարվում էին պաշտոնի բարձրացումներից։ Ոմանք այդպես էին վարվում զգուշությունից, իսկ մեծամասնությունը՝ չցանկանալով բաժանվել այն վաշտից կամ գնդից, որտեղ ծառայում էին իրենց հայրենակիցներն ու բարեկամները։ Հետագայում, մոտ 1803 թվականին, երբ խանդավառությունը փոխարինվեց միապետական եսամոլությամբ, շատերը դառնալով փառասերներ, դառնորեն զղջում էին այդ հրաժարումների համար։ Գորովազուրկ հոգիները նույնպես հրաժարվելու պատճառներ ունեին. 1793, 1794, 1795 թվականներին սպաներին ոճիկ չէին տալիս. այս-

պիսով, ոչնչով չէին փոխհատուցվում մեծ պատասխանատվության հետ կապված շատ ռեալ վտանգները։ Օբրին բանակում բազմաթիվ տեղափոխումներ կատարեց՝ ընդ որում չմոռանալով ինքն իրեն։ Նա իրեն հրետանու գեներալի կոչում շնորհեց և հովանավորում էր իր հին ընկերներից ոմանց՝ ի վնաս «թափթփուկների», որոնց նա վերացրեց։

Նապոլեոնը, որի քսանհինգ տարին նոր էր լրացել, գեներալի աստիճանով փոխադրվեց հետևակ և ուղարկվեց Վանդեա։ Նա թողեց Իտալական բանակը և մեկնեց Փարիզ՝ բողոքելու իր նկատմամբ ցուցաբերված անարդարության դեմ։

Բացատրությունն Օբրիի հետ բուռն ընդհարման վերածվեց. իր դինվորական սխրագործությունների գիտակցությամբ Նապոլեոնը ջերմորեն պաշտպանում էր իր իրավունքները. Օբրին մաղձոտությամբ համառում էր, որովհետև իշխանությունն իր ձեռքին էր. ընդ որում, մարտերում երբեք եղած չլինելով, նա չգիտեր, թե ինչ հակադրի երիտասարդ գեներալի սխրագործություններին։

— Դուք չափազանց ջահել եք,— ասաց նա,— հարկավոր է ճանապարհ տալ ծերերին։

— Մարտադաշտում արագ ես ծերանում,— առարկեց Նապոլեոնը,— իսկ ես ուղղակի այնտեղից եմ գալիս։

Տարեց և ամենևին անուն չհանած մարդը լոկ ուրախ է այն երիտասարդին վնաս հասցնելու հնարավորության համար, որն ավելին է արել, քան ինքը. Օբրին իր որոշումը թողեց ուժի մեջ։

Նապոլեոնը, նման վերաբերմունքից զայրացած, հրաժարական տվեց կամ պաշտոնանկ արվեց և, ինչպես Միքելանջելոն նման հանգամանքներում, սկսեց մտածել այն մասին, որ իր ծառայություններն առաջարկի Թուրքական սուլթանին։

Մի շատ քիչ արժանահավատ աշխատության մեջ[1] ես հետևյալ որոշումը գտա.

«Ազատություն։ Հավասարություն։

Հանրության փրկության կոմիտեն որոշում է իսկական դինվորական ծառայության մեջ գտնվող գեներալների ցուցակից հանել գեներալ Բոնապարտին՝ նկատի առնելով նրա հրաժարվելը ծառայության նշանակված վայրը մեկնելուց։

Ստորագրությունները՝ Լետուռներ* (Լամանշի ներկայացուցիչ),

---

1 Բուրիենի նոթերը, հ. I, էջ 69.

Մեղեն (Դուեի ներկայացուցիչ), Տ. Բեռլիե, Բուասսի։ Նախագահ՝ Կամբասերես»։

Սեբաստիանին և Ժյունոն երիտասարդ գեներալին ուղեկցեցին Փարիզ. նրանք երեքով մի փոքրիկ բնակարան վարձեցին դյու Մայլ փողոցում՝ Հաղթանակի հրապարակից ոչ հեռու։ Բոնապարտը պատերազմում չէր հարստացել։ Ռոճիկը, երբ այն վճարում էլ էին, նա ստանում էր արժեղրկված թղթադրամներով, և շուտով սկսեց խիստ կարիքի մեջ ընկնել։ Ենթադրություն կա, որ այդ ժամանակամիջոցում նա ինչ-որ քաղաքական բանսարկություն է արել Սալիչետտիի հետ, որը հետագայում մասնակից է եղել պրերիալի 1-ի (1795 թվականի մայիսի 20-ի) ապստամբությանը. համենայն դեպս, հաճախ է տեսնվել նրա հետ և հանդիպումների ժամանակ ցանկություն հայտնել հետը մենակ մնալու։

Մի անգամ Սալիչետտին երեք հազար ֆրանկ թղթադրամ է հանձնել գեներալին նրա կառքի արժեքի դիմաց, որը վերջինս ստիպված է եղել վաճառելու։

Հենց այն ժամանակ, երբ գանվում էր մերժված խնդրատուի աննախանձելի վիճակում, Բոնապարտն իմացավ, որ իր ավագ եղբայրը՝ Ժոզեֆը, Մարսելում ամուսնացել է մադմուազել Կլարիի՝ այդ քաղաքի հարուստ վաճառականներից մեկի աղջկա հետ։ Նման որոշումը, որն պահովում էր Ժոզեֆի հանգիստն ու բարօրությունը, ապշեցրեց եղբորը։ «Ա՜յ թե բախտավորն է այդ խորամանկ Ժոզեֆը»,— բացականչեց նա։

Բոնապարտը կազմեց ու կառավարությանը ներկայացրեց մի զեկուցագիր, որի մեջ պատրաստակամություն էր հայտնում մեկնելու Կոստանդնուպոլիս՝ Թուրքիայի ռազմական ճգնաժամին դեմ Ռուսաստանի ամրապնդելու համար[1]։ Այդ զեկուցագիրն անպատասխան մնաց։

Նապոլեոնն ստիպված եղավ ծախել ռազմական արվեստի վերաբերյալ մի քանի գրքեր, որ բերել էր Մարսելից. ավելի ուշ նա ծախեց իր ժամացույցը։ Մեծ խելքի տեր մի տիկին՝ ,որը 1795 թվականի ապրիլին ու մայիսին մի քանի անգամ հանդիպել էր

1 Բուրիենի նոթերը, հ. I, էջ 74։ Ես չեմ կասկածում, որ այս բոլոր փաստերը ժամանակի ընթացքում կպարզաբանվեն Գիր ու գրականության ակադեմիայի համար նախանշված որևէ մեկի զեկուցագրում։ Բուրիենին վերագրվող և փոքրաթիվ նշումների հիման վրա կազմված «նոթերին» խմբագիրը ստում էր, որքան կարող էր։

Նապոլեոնին, սիրով համաձայնվեց մտաբերել այդ հանդիպումները և ինձ հանձնեց հետևյալ գրառումները.

«Դա հիրավի ամենավտիտ և ամենատարօրինակ էակն էր, որ ես երբևիցե հանդիպել եմ կյանքումս։ Հետևելով այն ժամանակվա նորաձևությանը, Նապոլեոնը մինչև ուսերն իջնող հսկայական մազափնջեր, այսպես կոչված «շան ականջներ» էր կրում։ Իտալացիներին յուրահատուկ, հաճախ մի քիչ մռայլ հայացքը վատ է համատեղվում մազերի այդ առատության հետ։ Սրամիտ, կրակոտ զրուցակցի մասին ունեցած պատկերացումից շատ հեշտությամբ ես անցնում մի այնպիսի մարդու մասին եղած պատկերացմանը, որի հետ անվտանգ չէ երեկոյան հանդիպել անտառեզրին։

Հագնվելու իր ձևով նույնպես գեներալ Բոնապարտը վստահություն չէր ներշնչում։ Սերթուկը, որ նա սովորաբար կրում էր, այնքան էր մաշված և այնպիսի խղճուկ տեսք էր տալիս նրան, որ սկզբում դժվարությամբ էի հավատում, որ այս մարդը գեներալ է։ Բայց ես անմիջապես որոշեցի, որ նա խելոք կամ առնը-վազն շատ յուրօրինակ մարդ է։ Հիշում եմ, ինձ թվաց, որ նրա հայացքը նման է Ժան-Ժակ Ռուսսոյի հայացքին, որն ինձ հայտնի էր Լատուրի վրձնած հրաշալի դիմանկարից, որ ես այդ ժամանակ տեսել էի պ-ն N-ի մոտ։

Երրորդ թե չորրորդ անգամ հանդիպելով այդ գեներալին, որի ազգանունն այդպես տարօրինակ էր հնչում, ես ներեցի նրա չափից ավելի երկար մազափնջերը. նրան դրեցի գավառացու տեղ, որը մի քիչ չափազանցում է նորաձևությունը, բայց, չնայած այդ ծիծաղելի հատկանիշին, կարող է շատ արժանավոր մարդ լինել։ Երիտասարդ Բոնապարտը հիանալի աչքեր ուներ, որոնք աշխուժանում էին, երբ նա խոսում էր։

Եթե նա այդպես վտիտ չլիներ, որը հիվանդագին էր թվում և կարեկցանք ներշնչում, նրա նուրբ դիմագծերը, անտարակույս, ուշադրություն կգրավեին։ Հատկապես նրբագեղ էր բերանի գիծը։ Դավիդի աշակերտ մի նկարիչ, որը եղել էր պ-ն N-ի մոտ, ուր հանդիպել էր գեներալին, ինձ ասաց, թե նրա դիմագծերը հունական են. դա իմ մեջ հարգանք ներշնչեց նրա նկատմամբ։

Վանդեմիերյան հեղաշրջումից մի քանի ամիս հետո մենք լսեցինք, որ գեներալը ներկայացվել է տիկին Տալիենին՝ այն ժամա-

նակվա նորաձևության թագուհուն, և որ սա ապշել էր նրա հայացքից։ Դա մեզ շլարմացրեց։ Իրոք, բարենպաստ տպավորություն գործելու համար նրան միայն մի բան էր պակասում՝ այդքան աղքատիկ հագնված չլինել։ Իսկ չէ որ այդ ժամանակ, տեռորից անմիջապես հետո, հագուստին այնքան էլ մեծ նշանակություն չէին տալիս։ Հիշում եմ նաև, որ գեներալը հիանալի էր նկարագրում Տուլոնի պաշարումը կամ, համենայն դեպս, մեզ շատ էր զբաղեցնում այդ թեմայի շուրջ իր պատմություններով։ Նա շատ զրուցասեր էր և զրույցի ժամանակ շատ էր աշխուժանում. բայց օրհր էին լինում, երբ քար լռություն էր պահպանում։ Ասում էին, որ նա շոտլանդացու նման շատ աղքատ է ու հպարտ։ Նա հրաժարվում էր հեռանալ հրետազորից և գեներալի կոչումով ծառայել Վանդեայում։ «Սա իմ զենքն է»,— հաճախ էր կրկնում նա. դա մեզ շատ էր ծիծաղեցնում։ Մենք՝ շահել աղջիկներս, չէինք հասկանում, թե ինչպես կարող էր հրետանին, այսինքն՝ թնդանոթը, փոխարինել որևէ մեկի սրին։

Հիշում եմ, այն ժամանակ ուժի մեջ էր «մաքսիմումը»[1]։ Բոլոր ուտելեղենի և հացի համար վճարում էին թղթադրամներով, այդ պատճառով էլ գյուղացիները ոչինչ չէին բերում շուկա։ Երբ որևէ մեկին ճաշի էին հրավիրում, հյուրն իր հետ հաց էր բերում. երբ տիկին դը N-ը՝ կալվածքի մեր հարևանուհին, ճաշում էր մեզ մոտ, իր հետ բերում էր մի կտոր հիանալի սպիտակ հաց, որի կեսն ինձ էր տալիս։ Տան կարիքների համար մենք ծախսում էինք շաբաթական մոտ հինգ-վեց ֆրանկ։ Ես լիովին պատկերացնում եմ, որ գեներալ Բոնապարտը, որը միայն թղթադրամներով վճարվող ռոճիկով էր ապրում, խիստ կարիքի մեջ էր։ Նա ամենևին նման չէր զինվորականի՝ խիզախ սուսերամարտիկի, պարծենկոտի, կոպիտ մարդու։ Այժմ ինձ թվում է, որ նրա բերանի այնքան բարակ, նուրբ և միաժամանակ ցայտուն ուրվագծերում կարելի էր կարդալ արհամարհանք և լիակատար անտարբերություն վտանգի հանդեպ։

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացումներն աղավաղված են մի մարդու կողմից, որին Նապոլեոնը հետագայում ստիպված է եղել վռնդել ակնհայտ անազնվության համար.

[1] Այսպես կոչված մաքսիմումի վերաբերյալ օրենքը սահմանում էր գնները, որոնցից թանկ արգելվում էր վաճառել մթերային և մյուս ապրանքները։

այս մարդու շարակամ գրառումների հիման վրա ինչ-որ մի գրահրատարակչի պատվերով հորինվել են «նոթերը»։

Առավել վստահելի վկաները մանրամասն պատմում են, թե որքան աղքատ է եղել այն մարդը, որին իսկապես պատկանում է Տուլոնի գրավման և Լոանոյում տարած հաղթանակի պատիվը։ Նրանց ասելով, Տալման, որն սկսում էր իր կարիերան ֆրանսիական թատրոնում, որտեղ նրան նեղում էին հին դերասանները (ճիշտ այնպես, ինչպես երիտասարդ գեներալին հետապնդում էր նախկին կապիտան Օրրին), այն ժամանակ ձրի տոմսեր էր տալիս Նապոլեոնին, երբ հաջողվում էր ձեռք բերել։ Որպեսզի բաց չթողնեմ ոչ մի մանրամասն, ավելացնեմ, որ Նապոլեոնը, տնտեսման համար, սովորաբար հագնում էր որմզդեղնի կաշվից կարված անդրավարտիք։ Ժյունոն մի քիչ փող ուներ. նրան համոզեցին դա ներդնել Կարուսելի հրապարակում գտնվող կահույքի խանութում, և այդ փողերը կորան։

Իր մասին շատ մեծ կարծիքի տեր և անհավատալի տգեղ մի կին* ուշադրություն դարձրեց գեներալի գեղեցիկ աչքերին. այդ կինը հետապնդում էր նրան իր ծիծաղելի բարյացակամությամբ և փորձում համեղ ճաշերով նվաճել նրա սիրտը։ Նապոլեոնը փախուստի դիմեց։ Այնուամենայնիվ, քանի որ ես անսահմանորեն հարգում եմ ականատեսներին, ինչպիսի ծիծաղելի գծերով էլ որ օժտված լինեն, մեջ կբերեմ այդ կնոջ պատմությունները։

«Երկրորդ անգամ Գերմանիայից վերադառնալու հաջորդ օրը, 1795 թվականի մայիսին, մենք Բոնապարտին հանդիպեցինք Պալե-Ռուայալում, մի ոմն ժիրարդենի ընթերցասրահի մոտ։ Բոնապարտը գրկեց Բուրիենին*, ինչպես վաղեմի ընկերոջ, որին ուրախությամբ ես հանդիպում։ Մենք գնացինք ֆրանսիական թատրոն, որտեղ ներկայացնում էին «Խուլը կամ իրարանցում հյուրանոցում» կատակերգությունը։ Դահլիճում անլուսելի հոհոց էր տիրում։ Դանիերի դերը կատարում էր կրտսեր Բատիստը. նա անզուգական էր խաղում։ Ծիծաղի պոռթկումները բազմիցս ստիպում էին դերասանին ընդհատել իր խոսքը։ Միայն Բոնապարտն էր մեռելային լռություն պահպանում, մի բան, որը խիստ զարմացրեց ինձ։ Այդ ժամանակ ես նկատեցի, որ նա սառը և հաճախ մռայլ բնավորության տեր է. նրա ժպիտը կեղծ էր և երբեմն անպատեհ։ Այս առթիվ հիշում եմ, որ շուտով, մեր վերադարձից մի քանի օր հետո, մի անգամ նա համակվեց կատաղի

կենսուրախությամբ, որն ինձ վշտացրեց ու մի քիչ էլ հիասթափեցրեց։

Հմայիչ աշխույժով նա մեզ պատմում էր, թե ինչպես Տուլոնի պաշարման ժամանակ, երբ ինքը հրետաձգորի հրամանատար էր, իրեն ենթակա զորամասի սպաներից մեկի մոտ եկավ նրա կինը, որի հետ հենց նոր էր ամուսնացել և որին քնքշորեն սիրում էր։ Մի քանի օր անց Բոնապարտը հրաման ստացավ նորից գրոհել քաղաքի վրա, և այդ սպան առաջադրանք ստացավ։ Նրա կինը եկավ Բոնապարտի մոտ և արտասվելով աղաչեց այդ օրն ամուսնուն ազատել ծառայությունից։ Բոնապարտը (նա ինքն է հմայիչ ու անհոգի բերկրանքով ասել մեզ) անդրդվելի է մնացել։ Գրոհի ժամը հասավ, և այդ սպային, որը, իր իսկ՝ Նապոլեոնի ասելով, աչքի էր ընկնում արտակարգ քաջությամբ, հանկարծ համակում է մոտալուտ մահվան նախազգացումը։ Նա գունատվում է և սկսում դողդողալ։ Բոնապարտը նրան տեղափոխեց իր մոտ, և այն պահին, երբ պաշարվածները հատկապես ուժեղացրին կրակը, ասաց. «Զգուշացի՛ր, դեպի մեզ է թռչում արկը»։ Սպան,— շարունակեց նա իր պատմությունը,— մի կողմ նետվելու փոխարեն կռացավ գետնին և երկու կես եղավ։ Նապոլեոնը ծիծաղից թուլացավ[1] անվանելով մարմնի այն մասը, որ նրանից պոկվել էր։

Այդ ժամանակ մենք տեսնվում էինք գրեթե ամեն օր. նա հաճախ էր գալիս մեզ մոտ ճաշելու, իսկ քանի որ հացը քիչ էր, և սեկցիաները երբեմն տալիս էին օրական միայն երկու ունցիա հաց, ապա սովորություն էր դարձել հրավիրվածներին խնդրել՝ բերելու իրենց հացը, եթե տանտերերը չէին կարողացել փողով ձեռք բերել այն։ Բոնապարտը և նրա եղբայր Լուին, որն այդ ժամանակ նրա համհարզն էր, հեզահամբույր և սիրալիր մի պատանի, բերում էին իրենց օրապահիկի սև, թեփախառն հացը. ես պետք է, գժբախտաբար, ասեմ, որ համհարզն այն ուտում էր առանց մնացորդի, իսկ գեներալին տալիս էինք ձյունի պես

[1] Ուրախ տրամադրության այս տեսակը, որը լոկ վկայում է սեփական ճակատագրի նկատմամբ փիլիսոփայական վերաբերմունքի մասին, հաճախ է պատահում ֆրանսիացի զինվորականների մեջ և ամենևին էլ չի խոսում նրանց բնավորության վատ գծերի մասին։ Նապոլեոնը հավատում էր նախազգացումներին։

սպիտակ հաց, որը հացավաճառը թաքուն մեզ համար թխում էր այն ալյուրից, որ գաղտնի բերում էին Սանսից, որտեղ ամուսինս ֆերմաներ ուներ։ Եթե մեզ մատնեին, մենք կարող էինք կառափնարան ընկնել։

Մենք Փարիզում անցկացրինք մեկուկես ամիս, որի ընթացքում Բոնապարտի հետ հաճախ էինք թատրոն գնում և հաճախում այն հիանալի համերգներին, որ Գարան տալիս էր Սեն-Մարկ փողոցում։ Դրանք առաջին փայլուն հավաքներն էին Ռոբեսպիերի մահից հետո։ Բոնապարտի վարքագծում, այնուամենայնիվ, ինչ-որ յուրահատուկ բան կար. այսպես, նա հաճախ էր անհետանում՝ առանց մեզ որևէ բան ասելու. իսկ երբ մենք նույնիսկ չէինք կասկածում, որ նա թատրոնումն է, պարզվում էր, որ նա մենամենակ նստած է երկրորդ թե երրորդ թատերահարկի օթյակում՝ կարծես ինչ-որ բանից դժգոհ։

Նախքան Սանս գնալը, որտեղ ես պետք է առաջին անգամ ծննդաբերեի, մենք սկսեցինք փնտրել ավելի ընդարձակ և հարմարավետ բնակարան, քան Գրենիե-Սեն-Լազար փողոցի բնակարանն էր, որը մեզ համար միայն ժամանակավոր ապաստարան էր դարձել։ Բոնապարտը մասնակցում էր մեր որոնումներին։ Մեր ընտրությունը կանգ առավ Մարե փողոցի № 19-ում գտնվող մի հրաշալի նոր տան երկրորդ հարկում գտնվող բնակարանի վրա։ Նա ուզում էր բնակություն հաստատել Փարիզում, և հավանեց մեր տան դիմացի տունը։ Նա մտադիր էր այն վարձել իր քեռի Ֆեշի՝ ապագա կարդինալի և իր սովորած ռազմական դպրոցի նախկին ուսուցչի՝ ոմն պ-ն Պատրոյի հետ։ Մի անգամ նա մեզ ասաց. «Եթե իմ բարեկամների հետ բնակվեմ ձեր տան դիմացի այս տանը, ինչպես նաև կաբրիոլետ ունենամ, ես մահկանացուներից ամենաերջանիկը կլինեմ»։

Մենք մեկնեցինք Սանս, իսկ նա այդպես էլ չվարձեց այդ տունը, քանի որ ուրիշ մեծ իրադարձություններ էին հասունանում։ Մեր մեկնումի և վանդեմիերի ճակատագրական օրվա միջև ընկած ժամանակամիջոցում նա մի քանի չափազանց սրտառուչ և սիրալիր նամակներ փոխանակեց իր մի ընկերոջ հետ։ (Հետագայում դրանք գողացան. թե ինչպես՝ հետո կպատմվի։)

Երբ նույն տարվա նոյեմբերին մենք վերադարձանք, ամեն ինչ փոխվել էր։ Դպրոցական ընկերը կարևոր դեմք էր դարձել. իբրև պարգև վանդեմիերի 13-ի դիմաց, նա նշանակվեց Փարիզի

պարետ։ Մարե փողոցի տնակը փոխարինվեց շքեղ առանձնատնով՝ Կապուցիններին փողոցում, համեստ կաբրիոլետը դարձավ հոյակապ կառք, և նա ինքն էլ արդեն այն չէր. մանկության ընկերներին դեռ ընդունում էին, բայց միայն առավոտները. նրանց ճոխ նախաճաշեր էին տրվում, որտեղ երբեմն ներկա էին լինում տիկիններ, այդ թվում գեղեցկուհի տիկին Տալիենը և նրա ընկերուհին՝ հմայիչ տիկին դը Բոհառնեն, որն արդեն սկսել էր գրավել Բոնապարտի ուշադրությունը։ Նա քիչ էր հետաքրքրվում իր բարեկամներով և նրանց արդեն «դուք»-ով չէր դիմում։ Ես կհիշատակեմ նրանցից միայն մեկին՝ պ-ն դը Ռեին, որի հայրը, ս. Լյուդովիկոսի շքանշանի ասպետ, զոհվել էր Լիոնի պաշարման ժամանակ. նա ինքը, գտնվելով այնտեղ, փրկվել էր հրաշքով։ Դա հեզահամբույր, սիրալիր և թագավորի գործին նվիրված մարդ էր։ Նրա հետ նույնպես մենք տեսնվում էինք ամեն օր։ Նա գնաց իր դպրոցական ընկերոջ մոտ, բայց չէր կարող իրեն ստիպել նրան «դուք» ասելու։ Բոնապարտը երեսը շուռ տվեց նրանից, իսկ երբ նա հաջորդ անգամ եկավ, նույնիսկ չխոսեց հետը։ Նրա համար միայն մի բան արեց՝ առաջարկեց պարենավորման տեսչի խղճուկ պաշտոնը, որից դը Ռեն չէր կարող չհրաժարվել։ Նա մահացավ թոքախտից, երեք տարի անց։ Բոլոր բարեկամները ողբացին նրա մահը։

Վանդեմիերի 13-ից հետո պ-ն Բուրիենը հազվադեպ էր հանդիպում Բոնապարտին։ Իսկ 1796 թվականի փետրվարին առավոտյան մոտ ժամը յոթին հրացաններով զինված հրոսակախումբը կալանավորեց ամուսնուս՝ որպես վերադարձած վտարանդու։ Կոպտորեն նրան բաժանեցին կնոջից ու երեխայից, որն ընդամենը կես տարեկան էր։

Ես հետևեցի նրան. պահականոցից նրան տարան սեկցիա, այստեղից՝ էլի ինչ-որ մի տեղ։ Ամենուր նրա հետ ամենազայրացուցիչ կերպով էին վարվում. վերջապես երեկոյան նրան նետեցին ոստիկանական պրեֆեկտուրայի կալանատունը[1], որտեղ երկու գիշեր և մեկ ցերեկ անցկացրեց ամեն տեսակ խուժանի հետ. այնտեղ նույնիսկ քրեական հանցագործներ կային։

Նրա կինը և բարեկամները դեսուդեն ընկան՝ ազդեցիկ հովանավորներ փնտրելով. դիմեցին նաև Բոնապարտին։ Պարզվեց, որ սրա հետ հանդիպելն այնքան էլ հեշտ չէ. տիկին դը Բուրիենն իր ամուսնու բարեկամներից մեկի ուղեկցությամբ Փարիզի պարետի մոտ սպասեց մինչև կեսգիշեր։ Ամուսինը տուն չվերադարձավ։ Հաջորդ օրը վաղ առավոտյան տիկին դը Բուրիենը նորից գնաց Բոնապարտի մոտ, որին նկարագրեց, թե ինչ ճակատագիր է սպասվում ամուսնուն (այդ ժամանակներում նրան մահապատիժ էր սպառնում)։ Իր բարեկամի վտանգավոր վիճակը շատ քիչ հուզեց Բոնապարտին։ Այնուամենայնիվ, նա համաձայնվեց գրել արդարադատության մինիստր Մեռլենին։ Տիկին Բուրիենն այդ նամակով անձամբ գնաց մինիստրի մոտ։ Այս անձնավորությանը հանդիպեց սանդուղքի վրա. նա ուղևորվում էր Դիրեկտորիայի նիստի՝ ճոխ հագնված, սեթևեթելով փետուրների բազմազանությամբ և Հենրիխ IV-ի ոճի գլխարկով, որն ամենևին չէր ներդաշնակում նրա արտաքինին։ Նա անմիջապես բացեց նամակը, և քանի որ, ըստ երևույթին, գեներալը նրան նույնպիսի անքաղաքացիական էր ներշնչում, ինչ որ պ-ն դը Բուրիենի կալանքի պատճառը, նա ասաց, որ գործը հանձնված է դատախազին, որ անձամբ իրենից այլևս ոչինչ կախված չէ և այլն և այլն։

III տարում (1794) ռազմական կոմիտեի նախագահ նշանակվեց պ-ն դը Պոնտեկուլանը*. այդ պաշտոնում հարկ եղավ, որ նա կատարի այն մի շարք կարևոր պարտականությունները, որոնք դրված էին ռազմական մինիստրության վրա։ Որպեսզի գոնե մի քիչ հանգիստ լինի և իրեն զերծ պահի խնդրատուներից, նա տեղավորվել էր Տյուիլրիի պալատի Ֆլորա տաղավարի յոթերորդ հարկի մի խուլ սենյակում։

Նրան շատ էր անհանգստացնում Իտալիայում մարտնչող բանակի ճակատագիրը։ Այնտեղից ուղարկված ոչ մի նամակ, անտարակույս, չէր հասնում նրան։ Մարսելից նրան հայտնում էին, որ Իտալական բանակը քաղցած է, և վերջապես բանն այնտեղ հասավ, որ ռազմական կոմիտեն սկսեց երկյուղ կրել, թե չլինի հանկարծ մի գեղեցիկ օր ստացվի այդ բանակի կործանման լուրը։

Մի անգամ Կոնվենտի անդամ Բուասսի դ'Անգլան իր ընկերներից մեկին ասաց, որ ճանաչում է մի երիտասարդի, որին, իր՝ Բուասսիի կարծիքով, անարդարացիորեն վտարել են Իտալական բանակից՝ որպես տեռորի կողմնակցի։

---

1 Եթե չեմ սխալվում, այն ժամանակ դա կոչվում էր Կենտրոնական կալանատուն։

— Դա,— ավելացրեց նա,— մի խելացի մարդ է, որը, թերևս, կարող է արժեքավոր տեղեկություններ հայտնել։

— Նրան ուղարկեք ինձ մոտ,— ասաց պ-ն դը Պոնտեկուլանը[1]։

Հաջորդ օրը նրա մոտ՝ Ֆլորա տաղավարի յոթերորդ հարկ ներկայացավ անշափ նիհար ու խիստ տարօրինակ մի էակ, որպիսին նա երբևէ տեսել էր իր կյանքում։ Բուասսի դ'Անգլան նրան ասել էր, որ խոսքը մի գեներալի մասին է, որին կոչում են Բոնապարտ։ Բայց պ-ն դը Պոնտեկուլանը հիշողության մեջ չէր պահել այդ տարօրինակ ազգանունը, սակայն նա գտավ, որ այդքան արտասովոր արտաքինի տեր այդ մարդը շատ ողջամտորեն է դատում։

— Գրավոր շարադրեք այն ամենը, ինչ դուք ինձ ասացիք։ Զեկուցագիր կազմեք և բերեք ինձ,— ասաց նա։

Մի քանի օր անց պ-ն դը Պոնտեկուլանը, հանդիպելով Բուասսի դ'Անգլային, ասաց. «Ես տեսա այդ մարդուն, որի մասին ինձ ասել էիք։ Բայց նա կարծես խենթ լինի, այլևս չերևաց»։ «Հավանորեն նա կարծել է, թե դուք իրեն ծաղրել եք. նա ենթադրում էր, որ դուք իրեն կառաջարկեք աշխատել ձեզ հետ»։ «Եթե այդպես է, այդ գործն ուղղելի է։ Ասեք թող վաղը նորից անցնի ինձ մոտ»։ Բոնապարտը եկավ, խոժոռադեմ հանձնեց զեկուցագիրն ու հեռացավ։ Պ-ն դը Պոնտեկուլանը պատվիրեց բարձրաձայն կարդալ այն՝ մինչ իրեն սափրում էին, և այնքան ապշած էր, որ հրամայեց հասնել երիտասարդին ու նրան ետ բերել։ Բայց Բոնապարտին արդեն չգտան սանդուղքին. նա եկավ հաջորդ օրը։ Քննարկելով զեկուցագրում շարադրված փաստերը, Կոնվենտի անդամը հարցրեց. «Կհամաձայնվե՞ք աշխատել ինձ հետ»։ «Հաճույքով»,— պատասխանեց երիտասարդը և նստեց սեղանի մոտ։

Պ-ն դը Պոնտեկուլանը տեսավ, որ երիտասարդ գեներալը շատ լավ է հասկանում Իտալիան բանակի վիճակը և նրա բուն հոգսերը։ Հետևելով Բոնապարտի պլաններին, այդ բանակը գրավեց Վադոն, և նրա մատակարարումը գրեթե լիովին ապահովված էր։

[1] Մահացել է Փարիզում 1853 թվականի ապրիլի 13-ին ուշագնաց սարեկան հասակում։

«Ի՞նչ եք մտադիր անել հետագայում»,— մի անգամ երիտասարդին հարցրեց պ-ն դը Պոնտեկուլանը։

«Կգնամ Կոստանդնուպոլիս. փաղիշահը քաջ զինվորներ ունի, բայց նրան մարդիկ են պետք, որ սովորեցնեն եվրոպական ձևով կռվելը»։

Այն ժամանակ, երբ Բոնապարտն սկսեց աշխատել պ-ն դը Պոնտեկուլանի հետ, պարենային կոմիտեն, որի անդամն էր վերջինս, հազիվ էր ապահովում Փարիզի մատակարարումը՝ յուրաքանչյուր շնչին օրական երկու ունցիա հաց տալով։ Բոլոր այն պաշտոնյաները, որոնք կարողություն չունեին, գեներալ Բոնապարտի պես գտնվում էին աղետալի վիճակում։

Պ-ն դը Պոնտեկուլանը, որը բարյացակամ էր տրամադրված նրա նկատմամբ, դիմեց հրետազորի կոմիտեին՝ խնդրելով նրան նորից հրետանու գեներալ նշանակել։ Նա կտրուկ մերժում ստացավ։ «Դրա համար,— ասված էր պատասխանում,— պահանջվում են հատուկ գիտելիքներ, իսկ ձեր երիտասարդը դրանք չունի. փորձ է հարկավոր, որը նա չունի։ Այն արագությունը, որով նա կարիերա է արել, սկանդալային է։ Հայտնեցեք նրան. նա դեռ պետք է իրեն եռջանիկ համարի, որ ճետևակային բրիգադի գեներալ է»։

Յոթ ամիս շարունակ օրուգիշեր աշխատելուց հետո Կոնվենտի կոմիտեների կազմը թարմացվեց. պ-ն դը Պոնտեկուլանին փոխարինեց Լետուռները։ «Ես չեմ ուզում այդ մարդու հետ աշխատել»,— ասաց Նապոլեոնը պ-ն դը Պոնտեկուլանին։

— Նորից եմ հարցնում ձեզ. իսկ ի՞նչ եք մտադիր անել։

— Կգնամ Կոստանդնուպոլիս։

Շուտով եկավ վանդեմիերի 13-ը։ Կոնվենտին բանիմաց մարդիկ էին հարկավոր, և Նապոլեոնի համար էլ գործ ճարվեց։ Նա երբեք չէր մոռանում այն մարդուն, ով ճիշտ էր գնահատել իրեն և փրկել աղքատությունից։

Կոնսուլ դառնալով, նա պ-ն դը Պոնտեկուլանին հրավիրեց իր մոտ։

— Դուք սենատոր եք,— ասաց նա մի այնպիսի հմայիչ հայացքով, որը նա պարգևում էր այն պահերին, երբ իրեն ազատ էր համարում հետևելու իր սրտի շարժումներին։

— Այն ողորմածությունը, որ դուք ցանկանում եք ինձ անել, անիրագործելի է,— պատասխանեց պ-ն դը Պոնտեկուլանը։— Ես

ընդամենը երեսունվեց տարեկան եմ, իսկ սենատոր կարելի է դառնալ միայն քառասունում։

— Դե՛, ինչ արած, դուք կլինեք Բրյուսելի կամ ձեր հավանած որևէ այլ քաղաքի պրեֆեկտը, բայց հիշեք, որ դուք սենատոր եք և կզբաղեցնեք ձեր տեղը, երբ կհասնեք սահմանված տարիքի. ես ուզում եմ ձեզ ապացուցել, որ չեմ մոռացել, թե ժամանակին դուք ինչ եք եղել ինձ համար։

Մի քանի տարի անց պ-ն դը Պոնտեկուլանը, սենատոր դառնալով, բնակություն հաստատեց Փարիզում. նա անզգուշաբար իր բարեկամներից մեկի համար երեք հարյուր հազար Ֆրանկի երաշխավորություն տվեց. սա չկարողացավ վճարել, և պ-ն դը Պոնտեկուլանը հույժ ծանր դրության մեջ ընկավ. նա այլ ելք չուներ, քան վաճառել իր միակ կալվածքը (Պոնտեկուլանը՝ Կալվադոս դեպարտամենտում)։

— Իսկ ինչո՞ւ դուք չեք դիմում կայսրին,— հարցրեց նրա բարեկամներից մեկը։— Նա չափազանց բարեհաճ է ձեր նկատմամբ։

— Անկեղծորեն ասած, չեմ համարձակվում,— պատասխանեց պ-ն դը Պոնտեկուլանը։— Դա անքաղաքավարություն կլիներ։ Ես կայսրին և ինքս ինձ շատ տհաճ վիճակի մեջ կդնեի։

Վերջապես մի գեղեցիկ օր պ-ն դը Պոնտեկուլանը, չափազանց ընկճված կալվածքը վաճառելու անհրաժեշտությունից, կայսրից ունկնդրություն խնդրեց և նրան պատմեց իրեն պատահած դժբախտության մասին։

— Ինչքա՞ն ժամանակ է, որ դուք այդ վիճակում եք,— հարցրեց նրան Նապոլեոնը։

— Երեք ամիս, Ձերդ մեծություն։

— Ուրեմն դուք կորցրել եք երեք ամիս։ Ի՞նչ եք կարծում, մի՞թե ես կարող եմ մոռանալ այն, ինչ դուք արել եք ինձ համար։ Այսօր եկեք գնացեք գանձապահի մոտ, որը տնօրինում է իմ գահաթերթը, նա ձեզ հարյուր հազար էքյու կտա։

Անցավ ևս մի քանի տարի։ Պ-ն դը Պոնտեկուլանը ցանկացավ լինել Կոստանդնուպոլսում։ Նա ժամանեց ճիշտ ժամանակին, որպեսզի գեներալ Սեբաստիանիին օգնություն ցույց տա այն շաբաթվա ընթացքում, որը նրան հռչակ բերեց։ Վարպետորեն խաբելով, նա հիմար դրության մեջ դրեց անգլիական ծովակալին, որն ուզում էր և կարող էր գրավել Կոստանդնուպոլիսը, բայց

ոչնչի չհասավ։ Կայսրը կարգադրեց, որպեսզի պ-ն դը Պոնտեկուլանին ամենուր մեծագույն պատիվներով ընդունեն։

Այժմ տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ վանդեմիերի 13-ին, որը կրկին առաջ մղեց Տուլոնը նվաճողին։

1795 թվականի իրադարձությունները դաժան վտանգներ կանխեցին, և առողջ դատողությունը նորից իր իրավունքների մեջ մտավ. բայց տենդագին ավյունի հետ մեկտեղ մարեցին Լանդն ու խանդավառ պոռթկումները։

Այդ մեծ ժամանակաշրջանը նշանավորեցին Դանտոնի մահը, Ռորեսպիեռի անկումը և ահեղ Փարիզի կոմունայի տապալումը։ Մինչ այդ հանրապետական զգացումներն իշխում էին բոլոր սրտերում. տերմիդորի 9-ից հետո դրանք ամենուր սկսեցին թուլանալ։ Կարելի է համարձակորեն ասել, որ Դանտոնի մահը խոցեց Հանրապետության բուն սիրտը։ Նրա հոգեվարքը տևեց վեց տարի՝ մինչև բրյումերի 18-ը (1799 թվականի նոյեմբերի 9-ը)։

Հարկավոր է խոստովանել, որ ոչինչ ավելի շատ նեղություն չի պատճառում, քան արժանավորագույն դիկտատուրան։ Հենց որ կառավարությունը դադարում է անհրաժեշտ լինելուց, այն սկսում է բոլորին անհանգստացնել. պատճառն այն է, որ ժողովուրդն ուժի տեր է և որևէ նշանակություն ունի միայն այն ժամանակ, երբ զայրացած է. այդ դեպքում նրան ամեն ինչ հեշտ է թվում։ Հենց որ զայրույթը հանդարտվում է, նվազագույն զոհաբերությունն անգամ նրան անհնար է թվում։

Տերմիդորի 9-ից հետո մեկը մյուսի ետևից Կոնվենտը ղեկավարել են մի քանի կուսակցություններ, բայց ոչ մեկը չի կարողացել երկարատև գերակշռության հասնել։ Էնտուզիաստները, որոնք կարծում էին, թե անհրաժեշտ են Հանրապետության պահպանման համար, մի քանի անգամ փորձեցին վերադարձնել իրենց իշխանությունը. դա նրանց չհաջողվեց, սառնասիրտ մարդիկ հաղթող դուրս եկան։ Շուտով ռոյալիստներն սկսեցին փորձել օգուտ քաղել նրանց կիսամիջոցներից։

Այսպիսին է պետական հեղաշրջման բոլոր փորձերի, բոլոր այն նվազ հիշարժան օրերի պատմությունը, որոնք հաջորդել են տերմիդորի 9-ի արժանահիշատակ օրվան։ Սակայն, չնայած այդ հեղաշրջումից հետո հաստատված իշխանության թուլությանը, մարդիկ չհանդգնեցին լիովին հրաժարվել Դանտոնի ժամանակներում հռչակված մեծ սկզբունքներից, և նախապես դրսե-

վորված եռանդն իր պտուղները տվեց, ճիշտ այնպես, ինչպես Ռիշելյոյի եռանդը՝ կամազուրկ Լյուդովիկոս XIII-ի օրոք։

Պիշեգրյուն* նվաճեց Հոլանդիան։ Մի միապետ, հիրավի բոլորից ամենախելոքը՝ Տոսկանայի մեծ դուքս Լեոպոլդը, բարեհաճեց հաշտություն կնքել Հանրապետության հետ. Վանդեան, որը մի ժամանակ այնքան մոտ էր հաղթանակի և դրան չհասավ միայն այն պատճառով, որ ո՛չ զորավար ուներ, ո՛չ էլ արյունակից թագաժառանգ, բանակցությունների մեջ է մտնում Կոնվենտի հետ։ Այն օրից (մայիսի 31-ից) սկսած, ինչ Փարիզի կոմունան գլխավորել է հեղափոխությունը, նա ղեկավարել է պետությունը։ Այդ վիթխարի քաղաքը չափազանց հզոր է. պահպանվել է ահեղ ցնցումների պահերին Ֆրանսիայի կառավարության ընտրություն կատարելու նրա արտոնությունը։ Բայց նրա մունիցիպալիտետը մասնատեցին տասներկու մասի (տասներկու մունիցիպալ օկրուգների), և այլևս խոսք չեղավ նրա մասին։

Հիմնադրվում են կենտրոնական դպրոցները, Պոլիտեխնիկական դպրոցը։ Դա ժողովրդական կրթության պատմության լավագույն ժամանակաշրջանն էր։ Շուտով կառավարողներն սկսեցին վախենալ ժողովրդական կրթությունից և այդ ժամանակից ի վեր հարմար պատրվակով միշտ աշխատում էին վնաս հասցնել նոան։ Մեր օրերում երեխաներին սովորեցնում են, որ equus-ը ձի է նշանակում, բայց խնամքով զգուշանում են նրանց ասել, թե ինչ բան է ձին։ Չէ՞ որ երեխաներն իրենց աննրբանկատ հետաքրքրասիրությամբ վերջիվերջո կարող էին հարցնել, թե ի՞նչ բան է պաշտոնատար անձը, ավելին՝ ինչպիսի՞ն պետք է լինի այն։ Աշխատում են ցածրոգիներ դաստիարակել և կատարելագործել ուսուցման ինչ-որ հատուկ ձև, այն դեպքում, երբ ամենևին չեն դասավանդում քաղաքականություն, բարոյախոսություն և տրամաբանություն։ Բոնապարտն ինքը վախենում էր Պոլիտեխնիկական դպրոցից և հանդգնեց այնտեղ այցելել միայն Էլբա կղզուց վերադառնալուց հետո։

III տարվա ժերմինալի 12-ին (1795 թվականի ապրիլի 1-ին) եռանդի կուսակցությունը նորից փորձեց գրավել իշխանությունը։ Այդ փորձը ձեռնարկած Կոլո դ'Հերբուան, Բիլիո-Վարենը*, Բարերը*, Վադիեն* ոչ թե գիլյոտինի ենթարկվեցին, այլ արտաքսվեցին։ Իր լեհական տիրույթների համար ունեցած վախը բռնապետական, ռազմատենչ Պրուսիային ստիպեց հաշտություն կնքել

Հանրապետության հետ։ Բուն Ֆրանսիայում մահապատժի ենթարկվածների ունեցվածքը վերադարձրին նրանց ընտանիքներին։

III տարվա պրերիարի 1-ին Կոնվենտը նորից վտանգի մեջ է, ամբոխը ներխուժում է այն շենքը, որտեղ նա նիստ էր անում։ Կոնվենտի անդամ Ֆերոյի ցից հանած գլուխը մատուցում են անվեհեր Բուասսի դ'Անգլային, որը մեծարանքով խոնարհվում է իր կոլեգայի անշնչացած գլխի առջև։

Եռանդի կուսակցությունը նորից պարտություն է կրում։ Ֆրանսիան կարող էր մեծագույն վտանգի մեջ ընկնել։ Բայց թուլամորթների կուսակցությունը, հաղթանակ տանելով, բախտ ունեցավ գտնելու գեներալ Բոնապարտին և նրա հաղթանակները։

Դա երեք տարվա տարկետում տվեց։ Շուտով այդ կուսակցությունն սկսեց վախենալ գեներալից և նրան ուղարկեց Եգիպտոս։ Այդ ժամանակ, 1799 թվականին, Ֆրանսիան կործանման եզրին էր կանգնած։ Իր փրկությամբ նա պարտական է սոսկ պատահականությանը, այսինքն՝ Ցյուրիխի մոտ տեղի ունեցած ճակատամարտին և ավստրիացիների մանրախնդրությանը, որը դիպավ մոլեգին Սուվորովի ինքնասիրությանը։

Տերմիդորի 9-ից հետո, եթե կրոնական զգացումը գեթ մի քիչ ուժեղ լիներ, Ֆրանսիան բողոքական կդառնար։ Դեպի անցյալը կույր շրջադարձի հետևանքն այն եղավ, որ կաթոլիկական պաշտամունքը, իսկ դրա հետ նաև ռոյալիստական կուսակցությունը նորից իրենց տնօրինության տակ ստացան նախկինում խլված շենքերը և դրանով իսկ ձեռք բերեցին հսկայական հզորություն։ Դե եթե դիմել էին այդպիսի միջոցի, հարկավոր էր ստիպել վարձահատույց լինել կոնկորդատի կնքումով, բայց օրենքն այն զենքն էր, որով կուսակցությունները վիճարկում էին իշխանությունը. ոչ ոք չէր մտածում ապագայի մասին։

Անգլիացիները Քիբերոնում ափ են հանում մի քանի վտարանդիական գնդեր. տեղի է ունենում հին ռազմական արվեստի հետաքրքիր պայքարը նորի հետ։ Հոշը փայլուն է մարտնչում, բայց կառավարության մեջ գայլությունը կամ ժառանգական վախը հանուն իշխանության՝ հաղթում է ողջամիտ քաղաքականությանը։ Հարկավոր էր ցմահ բանտարկության դատապարտել Քիբերոնում մարտնչող բոլոր այն վտարանդիներին, որոնք նախկինում սպա-

յական աստիճանով ծառայության մեջ են եղել նավատորմում։ Երեք տարի հետո եգիպտական արշավանքը կհաջողվեր։

Անգլիացիներն իրենք, հակառակ իրենց խստասրտությանը և դառը եսամոլությանը, որոնցով պայմանավորված է նրանց հայրենասիրությունը, ամաչեցին Քիբերոնի արշավանքից։ «Անգլիական արյուն չի թափվել»,— պառլամենտում հայտարարեց Ուիլյամ Պիտը՝ ամբողջ Եվրոպայի արիստոկրատիայի այդ արժանավոր մինիստրը։ «Դա այդպես է,— նրան առարկեց Շերիդանը*,— բայց անգլիական պատիվը ծորել է բոլոր ծակոտիներից»։

Քիբերոնի աղետից[1] շատ չանցած, 1795 թվականի օգոստոսի 1-ին Իսպանիայի թագավոր Կառլոս IV Բուրբոնցին հաշտություն կնքեց Հանրապետության հետ։ Փարիզի կառավարությունը բավականաչափ հնչուն դրամ չուներ, որպեսզի այդ լուրը բերող սուրհանդակին Պերպինյանից Մադրիդ վերադառնալու ճանապարհածախս տար։ Մի քանի շաբաթ սպասելով, սուրհանդակը Պերպինյանից մեկնեց դիլիժանսով։

Կոնվենտի դեկրետով փակվեցին ժողովրդական ընկերությունները, որոնք ահեղ վտանգի պահերին անհրաժեշտ լրացում էին ծառայում կառավարություններին, բայց հանգիստ ժամանակներում անասելի նեղություն էին պատճառում նրանց։ Այլ դեկրետներով վերացվեց կասկածելիների վերաբերյալ օրենքը[2], Հռենոսը հայտարարվեց ֆրանսիական հանրապետության տարածքի սահման և, վերջապես, ֆրանսիացիների հաստատմանն առաջարկվեց III տարվա սահմանադրությունը, որը հաստատում էր Դիրեկտորիան, Ավագների խորհուրդը և Հինգհարյուրի խորհուրդը։

Ռոյալիստներին ընկճող տեռորի դադարեցումով բազմաթիվ դավադրություններ են ծագում բուն Ֆրանսիայի ներսում։ Պիշեգրյուն իր բանակը ծախում է արքայազն Կոնդեին. նա հազար ֆրանսիացի է ուղարկում Մանհեյմ, որտեղ նրանց լիակատար ջախջախում է սպասվում. փոքրաթիվ ողջ մնացածները գերի են

1 Այն անվի է ունեցել 1795 թվականի հուլիսի 19-ին։

2 Այս օրենքով տարբերում էին պարզապես կասկածելիներին և ակնհայտ կասկածելիներին։

հանձնվում։ Հռենոսյան բանակը նորից է նահանջում Հռենոսից այն կողմ. Սամբր-է-Մյոզի բանակն ստիպված է հետևել նրան։ Հայրենասեր Ժուրդանը* հայտնվում է Մորոյի և Պիշեգրյուի միջև։ Դանտոնի փրկած Հանրապետությունը նորից կործանման եզրին է, և այս անգամ նրա թշնամիները գործում են ավելի հմտորեն, իսկ նրա կառավարությանը պակասում է ոգևորությունն ու տաղանդը։

Հանրության փրկության կոմիտեն փոխարինում են հինգ հոգուց բաղկացած Դիրեկտորիայով. դրանցից առաջինը՝ Բարրասը, աշխարհիկ անառակ է և այս պատճառով էլ Փարիզում մեծ հարգանք է վայելում. Ռեբելը*՝ անշահախնդիր ու աշխատասեր այս մարդը լավ պրեֆեկտ կլիներ. Լարևելիեր-Լեպոն* սիրում է հայրենիքը և ազնիվ հայացքներ ունի. Կառնոն զեկավարում է ուսզմական գործողությունները, բայց հանդիմանությունները, որ արվում են նրան դաժանության համար, մոլորեցնում են այդ փայլուն միտքը, և նա չի գործում իր ուժերի լրիվ կարողությամբ։

Հաջորդ տարի Իտալիայում գործող բանակի տարած հաղթանակները միայն կործանումից փրկեցին այդ անզոր կառավարությանը։ Չլիներ Նապոլեոնը, 1799 թվականը կսկսվեր 1796-ին։

Այսպիսիք են վանդեմիերի 13-ի և Բոնապարտի վերելքի նախանշանակները։ Կոնվենտը 1795 թվականին երրորդ անգամ վտանգի մեջ է, և բուն ազատությունը մոտ է կործանման. կարելի է կարծել, որ Հանրության փրկության կոմիտեի վերացումով սպառվեցին ազատության բոլոր կենսաուժերը։ Ամբողջովին արժեզրկված են թղթադրամները և նույնիսկ ազգային այն հողերը, որոնց նկատմամբ ամենուր պահանջ են ներկայացնում Ֆրանսիա վերադարձած վտարանդիները։

Զորքերը դեռ մեծ հաղթանակներ են տանում, որովհետև դեռ երբեք այդքան բազմամարդ չեն եղել, բայց օրեցօր կրում են ծանր կորուստներ, որոնք արդեն հնարավոր չեն լրացնել։ Բանակներին վհատություն է համակում, և ամենավատն այն է, որ դավաճանների կողմից իրազեկ օտարերկրացիները դա տեսնում են ու հրճվում։

Այն ժամանակ, երբ Ալպերում զինվորները տառապում էին անգործությունից, երեք հարյուր հազար ֆրանսիացիներ ներխուժեցին Բելգիա և Պֆալցյան մարզ, ջախջախեցին կոալիցիայի զորքերը Տուրկուանում, Ֆլերյուսում, Կայզերսլաուտեռնում, Ուրտ,

Ռուր գետերի վրա, Հռենոսից այն կողմ շպրտեցին անգլիացիներին, հոլանդացիներին, ավստրիացիներին և պրուսացիներին, հաղթական մտան Բրյուսել, Անտվերպեն և Մաստրիխտ, սառույցի վրայով անցան Վաալ ու Մյոզ գետերը և հանդիսավորությամբ մտան Ամստերդամ, մի քաղաք, որին մի ժամանակ ապարդյուն սպառնացել են Լյուդովիկոս XIV-ը և Տյուրենը, ու գրավեցին Քյոլնը և վտարանդության նախկին գլխավոր կայատեղ Կորլենցը։ Երկու այլ բանակներ Դյուգոմիեի, Պերինիոնի* և Մոնսեի* հրամանատարությամբ երկու փայլուն հաղթանակ տանելով Ֆիգերասում և Սեն-Մարսիալում, ներխուժեցին Կատալոնիա ու Բիսկայա։ Եվ, վերջապես, հարյուր հազար մարդ մեծ ջանքերի գնով հնազանդեցրին Բրետանի և Վանդեայի ռոյալիստներին։

Ֆրանսիան հաղթանակներ է տանում ցամաքում, բայց պարտություններ կրում ծովում։ Երկրի ներսում մոլեգնում է սովը. քսանհինգ գծանավեր դուրս են գալիս Բրեստից՝ հեշտացնելու Ամերիկայից սպասվող առևտրանավերի մեծ քարավանի մուտքը նավահանգիստ։

Ծովակալ Հոուն մոտենում է քսանհինգ նավով, որպեսզի խանգարի քարավանի մուտքը նավահանգիստ։ Կոնվենտի անդամ Ժան-Բոն-Սենտ-Անդրեն* ծովակալ Վիլլարե-Ժուայոզին ստիպում է ընդունել ճակատամարտը, թեև ծովակալն իր տրամադրության տակ ուներ միայն երիտասարդ անփորձ սպաներ և Հանրապետությունն ատող ծեր կապիտաններ։ Նավաստիները քաջաբար են մարտնչում, բայց անգլիացիների խիստ կարգուկանոնը և հանգստությունը հաղթանակ են տանում ապաշնորհ ղեկավարվող խիզախության նկատմամբ։ Ֆրանսիացիք կորցնում են յոթ նավ. դրանցից մեկը գրավում է թշնամին, մյուսները խորտակվում են, Ուսսանի մոտ տեղի ունեցած ճակատամարտը շարքից հանում է օվկիանոսային նավատորմիղը, իսկ Տուլոնի հրդեհը՝ միջերկրածովային նավատորմիղը։

Այդ ընթացքում քաջ Կոստյուշկոն ապարդյուն փորձում էր պաշտպանել իր հայրենիքը։ Երկրի ներսում ձեռնարկված միջոցների վճռականությունը չի համապատասխանում զինվորների քաջությանը։ Լեհաստանը ո՛չ Կառնո ունի և ո՛չ էլ Դանտոն, և նա գադարում է գոյություն ունենալուց։

Ֆրանսիայում վրա է հասնում տերմիդորի 9-ը. Թերմիդորը հեռանում է ասպարեզից։ Հանրապետական եռանդն աստիճանաբար դադարում է կառավարությանը ոգևորելուց. ռոյալիստների մեջ հույս է ծագում գրավել իշխանությունը և ոչնչացնել ազատությունը դրա պաշտպանության համար նախանշված այն նույն մարմինների օգնությամբ, որ ազատությունն ինքը տվել է ժողովրդին։ Կառնոն հեռացավ ռազմական գործերի ղեկավարությունից, Իսպանիան և Պրուսիան հաշտություն կնքեցին Հանրապետության հետ։

Համաժողովրդական աշխարհազորը, որը Դանտոնի օրոք փրկեց Հանրապետությանը, հանգեցրեց բազմաթիվ խայտաբղետ զորամասերի կազմավորման. դրանք սկսեցին միավորել և ձեռնարկեցին կանոնավոր բանակի ստեղծմանը։

Սիեյեսի գործուն մասնակցությամբ Կոնվենտը մշակեց III տարվա Սահմանադրությունը, որը հաստատեց հինգ հարյուր անդամից բաղկացած Պալատ և, իբրև վերահսկիչ մարմին՝ երկու հարյուր անդամից բաղկացած Ավագների խորհուրդ։ Այդ խորհուրդները պետք է տարին մեկ նորացվեին անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի չափով։ Գործադիր իշխանությունը հանձնվում է հինգ հոգուց բաղկացած Դիրեկտորիային, որի կազմը նորացվում է տարեկան մեկ անդամով։

Բայց հիվանդը դեռ չէր սկսել ապաքինվել, և առողջ մարդու ռեժիմը դեռ նրա ուժերից վեր էր։ Կոնվենտը տեսավ, որ ռոյալիստները մտադիր են իրենց ձեռքը վերցնել ընտրությունները. ռեակցիայի վտանգը սպառնալից դարձավ։ Կոնվենտը երկու դեկրետ հրապարակեց, որոնք սահմանում էին, որ իր անդամների երկու երրորդը պետք է մտնի նոր ստեղծված խորհուրդների մեջ և որ վտարանդիների ազգականները չեն կարող ընտրվել օրենսդրական պոստերում։

Հեղափոխական կառավարությունը Ֆրանսիան փրկեց օտարերկրյա ներխուժումից. այն ժամանակ այդպիսի կառավարություն անհրաժեշտ էր, բայց դա դաժան անհրաժեշտություն էր։ Այն մարդիկ, որոնց հայացքները ձևավորվել էին Լյուդովիկոս XV-ի շվայտ բռնապետության ազդեցության տակ, բոլորովին չէին հասկանում ազատության առավելությունները։ Ընդ որում, այդ առավելությունները դեռ գտնվում էին սաղմնային վիճակում և ամենևին էլ չէին հիշեցնում այն ուտոպիաները, որոնց մասին երազում էին 1789 թվականին։

Ֆրանսիա վերադարձած վտարանդիները՝ Անգլիայի այդ վար-

ձու գործակալները, ռոյալիստները, օգտվեցին այն առելությունից, որ ունեին դասակարգերը տածում էին յակոբինյանների նկատմամբ, որպեսզի Փարիզի մնացած բնակչությանը ոտքի հանեն դեկրետի դեմ, որը թվում էր, թե նախանշված է այդ դասակարգերի տիրապետությունն ամրապնդելու համար։ Հարուստ բուրժուազիան, որն ստեղծել էր վանդեմիերյան շարժումը, հեռու էր այն մտքից, թե հեղափոխությունը ձգտում է իրեն դնել աղնվականության տեղը, ինչպես հետագայում դա ցույց տվեցին Նապոլեոնյան Սենատը և Լյուդովիկոս XVIII-ի ու Լուի Ֆիլիպի պերերի պալատները։

Վանդեմիերի 13-ին փարիզյան քառասունութ սեկցիաներից առնվազն երեսունը դեմ էին և՛ այդ դեկրետներին, և՛ Կոնվենտին։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ ազգային գվարդիայի իր լավ զինված գումարտակը. Անգլիայի վարձու գործակալները համախմբված էին դարձնում շարժումը, որը կապվում էր Վանդեայում կոմս դ'Արտուայի ափ իջնելու հետ։

Եթե այդ ժամանակ Սարասբուրգի դարպասների մոտ կենտրոնացված չլինեին հարյուր հիսուն հազար ավստրիացիներ, և եթե անգլիական քառասուն նավեր կանգնած չլինեին Բրեստի դիմաց, Նապոլեոնը, թերևս, կանցներ սեկցիաների կողմը։ Բայց երբ հայրենիքին ներխուժում է սպառնում, յուրաքանչյուր քաղաքացու առաջին պարտականությունն է՝ հարել նրանց, ովքեր իշխանության գլուխ են կանգնած։ Ընդ որում, որպես հեղինակություն վայելող գեներալ, Նապոլեոնը որոշակի տեղ էր գրավում զորքերի ղեկավարության մեջ։ Եթե նա անցներ խռովարարների կողմը, ստիպված կլիներ մրցակցության մեջ մտնել շաղակրատ փասաբանների՝ իր համար ամենաատելի մարդկանց հետ։

Բարրասի հրամանով Նապոլեոնն ընդունեց զորքերի հրամանատարությունը· նրա տնօրինության տակ կար քառասուն թնդանոթ ու հինգ հազար զինվոր, ինչպես նաև 1789 թվականի հազար հինգ հարյուր հայրենասերներ՝ համախմբված երեք գումարտակներում։

IV տարվա վանդեմիերի 13-ին (1795 թվականի հոկտեմբերի 4-ին) ապստամբած սեկցիաները շարժվեցին Կոնվենտի դեմ։ Սենտ-Ոնորե փողոցից դուրս գալով, զորասյուներից մեկը նետվեց գրոհի։ Նրան դիմավորեցին կարտեչով. ապստամբները

փախուստի դիմեցին։ Նրանք ցանկացան ամրանալ Սեն-Ռոշ եկեղեցու գավթում. այն ժամանակներում շատ նեղ՝ հարևան Դոֆին փողոցում Կոնվենտի զորքերը կարողացան տեղադրել միայն մի թնդանոթ և գնդակոծեցին դեռևս մարտերում չկոփված ազգային գվարդիականներին. սրանք դեսուդեն փախան՝ թողնելով մի քանի սպանված։ Կես ժամում ամեն ինչ վերջացած էր։ Զորասյունը, որն առաջ էր շարժվում Վոլտեր առափնյա փողոցի երկայնությամբ՝ Ռուայալ կամուրջը գրոհով գրավելու նպատակով, մեծ արիություն դրսևորեց, բայց չխուսափեց նույն ճակատագրից։

Ինքնին աննշան և յուրաքանչյուր կողմից երկու հարյուր զոհ էլ չպահանջած այս իրադարձությունն արտակարգ կարևոր հետևանքներ ունեցավ. այն խանգարեց հեղափոխությանը ետ-ետ գնալու։ Նապոլեոնը նշանակվեց դիվիզիոնի գեներալ, իսկ շուտով՝ ներքին բանակի գլխավոր հրամանատար։

Փարիզը՝ նորաձևության հայրենիքը, ծիծաղում էր այն եռանդի վրա, որով Նապոլեոնն արդեն երեք տարի շարունակ փրկում էր ազատությունը. դա «զոհերի պարահանդեսով» մեծապես տարվելու ժամանակաշրջանն էր։ Այդ պարահանդեսներին թույլատրում էին միայն նրանց, ովքեր կարող էին ապացուցել, որ իրենց հայրը կամ եղբայրը գլխատվել է գիլիոտինով։ Մարդկանց ձանձրացրել էին տրտմությունն ու մռայլ մտասուզությունը։ Այդ զգացումները հնացած հայտարարվեցին։

Ռոյալիստական կուսակցությունը, որը Ռոբեսպիերը որոշել էր ոչնչացնել, նորից համարձակ դարձավ և սկսեց իրեն հանդուգն պահել նրանց նկատմամբ, ովքեր իրեն փրկել էին տերմիդորի 9-ին։

Հանրապետությանը կործանում էր սպասվում։ Ճգնաժամը հասունանում էր հետևյալ պատճառով. 1791 թվականի սահմանադրությունը դադարել էր գոյություն ունենալուց՝ Սահմանադիր ժողովի դեկրետի պատճառով, որն իր անխոհեմ մեծահոգությամբ որոշել էր, որ իր անդամներից ոչ ոք չի կարող ընտրվել հաջորդ ժողովում։

Կոնվենտը հիշեց այդ սխալի մասին։ III տարվա սահմանադրությունը լրացվեց երկու օրենքով։ Դրանցից առաջինն ազդարարում էր, որ Հինգ հարյուրի խորհուրդը և Ավագների խորհուրդը պետք է երկու երրորդով բաղկացած լինեն Կոնվենտի անդամներից։ Երկրորդ օրենքը սահմանում էր, որ այս անգամ երկու խոր-

հուրդներն էլ միայն մեկ երրորդով են բաղկացած լինելու ընտրական ժողովներում անցած մարդկանցից։ Երրորդ օրենքով երկու նախորդները, որպես նոր սահմանադրությունից անբաժանելի օրենքներ, ներկայացվում էին ժողովրդի հաստատմանը։

Արտասահմանում կենտրոնացած ռոյալիստական կուսակցությունը հույսը դնում էր այն պալատների վրա, որոնք կազմված էին ռոյալիստներից կամ էլ նախկին հայրենասերներից, որոնց կհաջողվեր կաշառել, ինչպես կաշառվել էր Պիշեգրյուն։ Այդպիսով, ազատությունը ոչնչացած կլիներ այն իրավունքների օգնությամբ, որոնցով նա օժտել էր իր ժողովրդին և որոնք ձեռնտու էր արատավորել խելացի մարդկանց աչքին։

Հենց որ հրապարակվեցին լրացուցիչ օրենքները, այդ կուսակցությունը, որը կարողանում էր գործի դնել երեսպաշտությունը, սկսեց հանրապետական ձևով ամեն կերպ արտնջալ իբր Կոնվենտի կողմից ժողովրդից խլված ազատության կորստի համար։ Ինչպե՞ս. այն նույն Կոնվենտը, որի միակ կոչումն էր սահմանադրություն մշակել, համարձակվում է բռնատիրել ընտրողների ընդհանրությունը, այլ կերպ ասած՝ բուն ազգի իրավունքները։

Քառասունութ սեկցիաներից, որոնք կազմում էին Փարիզի ազգային գվարդիան և որոնցից յուրաքանչյուրը մեկական զինված, լավ հանդերձավորված գումարտակ ուներ, միայն հինգն էին հանրապետության կողմնակից. քառասուներեք սեկցիաներ ապստամբեցին, միավորվեցին և իրենց նիստերը հայտարարեցին անընդհատ։

Այդ նիստերում, որտեղ սեկցիաների անդամները ներկայանում էին զինված, աչքի էին ընկնում Լակրետել-կրտսերը*, Ռենիո դը Սեն-Ժան-դ'Անժելին, Վոբլանը, Սերիզին, Լահարպը և ուրիշներ։ Այդ քառասուներեք սեկցիաները մերժեցին լրացուցիչ օրենքները։

Հայրենասերների աչքին III տարվա Սահմանադրությունը բոլոր նախորդ փորձերից լավագույնն էր. դա մի խոշոր քայլ էր Ֆրանսիայի համար պիտանի կառավարություն ստեղծելու ճանապարհին։

Օտարերկրյա տերությունների միջամտության կողմնակիցների ղեկավարած դաղտնի կոմիտեները ոչ մի նշանակություն չէին

տալիս այն մարմիններին, որոնք իրենք մտադիր չէին պահպանելու։

Այդ կուսակցությունն իրեն շատ գրգռիչ էր պահում. նա իր թիկունքում ուժ էր զգում՝ քառասուն հազարանոց զինված ու հանդերձավորված ազգային գվարդիան։ Այդ մարդկանց մեջ շատ կային փորձված, քաջ սպաներ և վաղեմի ռոյալիստներ։ Ենթադրում էին, որ հեշտ կլինի ազգային գվարդիան խաբել և օգտագործել Հանրապետությունը տապալելու համար։

Կոնվենտը կարող էր ազգային գվարդիայի դեմ հանել երեքչորս հազար զինվորներից ոչ ավելի, դրանց էլ կարող էին կաշառել. իսկ նման դեպքում Կոնվենտի այն բոլոր անդամները, որոնք հայտնի էին իրենց համոզմունքների անսասանությամբ, հեշտությամբ կարող էին օրենքից դուրս հայտարարվել և ուղարկվել մահապատժի. կենաց ու մահու պայքար էր սպասվում։

Սեպտեմբերի 23-ին Կոնվենտը հայտարարեց, որ Հանրապետության սկզբնական ընտրական ժողովների մեծամասնությունն ընդունել է Սահմանադրությունը և լրացուցիչ օրենքները։

24-ին Կոնվենտին, իսկ մեր կարծիքով նաև ազատությանը, թշնամի մի խումբ ընտրողներ հավաքվեցին Օդեոնում։

Հոկտեմբերի 2-ին (IV տարվա վանդեմիերի 10-ին) այդ անօրինական ժողովը զինված ուժով ցրվեց։ Սկսվում է պատերազմը։ Սուրբ Թոմայի ուխտի միանձնուհիների վանքում (որտեղ հետագայում կառուցվել է Բորսայի շենքը) հավաքված Լեպելետիեի սեկցիան մյուսներից ավելի մոլեգին էր վրդովվում Օդեոնը փակելու համար. Կոնվենտը որոշեց փակել վանքը և զինաթափ անել այդ սեկցիան։

ԳԼՈՒԽ IV

1796 թվականի մարտի 27-ին գեներալ Բոնապարտը ժամանեց Նիցցա։ Իտալիայում գործող բանակում կար քառասուներկու հազար մարդ. դրանցից թշնամուն դեմ դիմաց զենքի տակ էին երեսունութ հազարը։ Ալպիական բանակը Կելլերմանի հրամանատարությամբ զբաղեցնում էր Սավոյան և Դոֆինեի լեռները՝ Բրիանսոնի մոտ։ Թշնամու ուժերը, ութսուն հազար ավստրիացիներ և սարդինիացիներ՝ կանգնած էին Մոնբլանից մինչև ջենովական ծովանոցը ձգվող գծի վրա։

Ֆրանսիական բանակն արդեն վաղուց էր անասելի զրկանքներ

կրում. նպարեղենը հաճախ չէր հերիքում. տարեկան ութ ամիս խոր ձյունով պատած Ալպերի գագաթներին գտնվող այդ զինվորները ո՛չ կոշիկ ունեին, ո՛չ էլ տաք հագուստ. Իսպանիայի հետ հաշտություն կնքելուց հետո Պիրենեյներից եկած զինվորների կեսը զոհվեց լազարեթներում և մարտի դաշտերում։ Պիեմոնտցիները նրանց անվանում էին «ցնցոտիավոր հերոսներ»։ Արդեն ամբողջ երեք տարի Իտալիայում հրացաններով կրակում էին միայն այն պատճառով, որ պատերազմ էր մղվում, բայց առանց որևէ նպատակի, կարծես խղճի մաքրության համար։ Նապոլեոնն այդ բանակում գտավ գեներալ Մասսենային, որը 1795 թվականի նոյեմբերի 2-ին գեներալ Շերերի անվանական հրամանատարությամբ Լոանոյում հաղթանակ տարավ ավստրիական բանակի դեմ, որի հրամանատարն էր գեներալ Դելինը։ Նապոլեոնը տեսավ, որ բանակը տեղաբաշխված է ամենաանմիտ ձևով. այն թառել էր Ապենինների լերկ գագաթներին՝ Սավոնայից մինչև Օրմեա։ Բանակի հաղորդակցությունը Ֆրանսիայի հետ ձգվում էր ծովափի երկայնքով, թշնամու զորքերի գծին զուգահեռ։ Եթե հակառակորդը մտքին դներ հարձակվել իր աջ թևով, կապն անհապաղ կընդհատվեր։

Նիցցայում կանգնած բանակն Ալպերն անցնելու և Իտալիա ներխուժելու համար երկու ճանապարհ ուներ։ Մեկը կտրում անցնում է ալպիական գլխավոր լեռնաշղթան Տենդի լեռնանցքի մոտ. դա Կոնիի վրայով դեպի Տուրին տանող մեծ ճանապարհն է։ Մյուսը նշանավոր «Կառնիզն» է՝ այն ժամանակ հարյուրավոր տեղերում նեղ, իրենից երեք-չորս ոտնաչափ լայնությամբ արահետ ներկայացնող ճանապարհը՝ ահռելի ուղղաբերձ ժայռերի և ծովի միջև։ Այնտեղ, որտեղ ճանապարհը մի քանի տուսուզ հեռանում էր ծովից, ուղղաձիգ վերելքները և զառիվայրերը հաջորդում էին մեկը մյուսին։ Այդ ժամանակներում այս խիստ անհարմար ճանապարհը տանում էր դեպի Բոկետի կիրճը։ Կա նաև մի երկրորդ ճանապարհ, որն Օնելից տանում է դեպի Ձևա. այն մատչելի է հրետանու համար։

Ռազմական այն գործողություններից հետո անցած ժամանակամիջոցում, որոնք 1794 թվականին ղեկավարում էր դեռևս հրետանու հրամանատար Բոնապարտը, Իտալական բանակը, իր ձեռքին պահելով Տենդի լեռնանցքը, կարող էր իջնել դեպի Կոնի, եթե համաձայնեցված գործեր Ալպիական բանակի հետ։

Հացի այն քիչ քանակը, որ ուներ բանակը, մատակարարում էին ջենովացի առևտրականները։ Բոնապարտը բանակը գտավ հետևյալ դասավորությամբ։ Մաքարի երեք հազարանոց դիվիզիան պաշտպանում էր Տենդի լեռնանցքը. Սերյուրիեի հինգ հազարանոց դիվիզիան զբաղեցնում էր Ձևայի ճանապարհը։ Մասսենայի, Օժերոյի և Լահարպի դիվիզիաները, որոնք ունեին մոտ երեսունչորս հազար մարդ, կանգնած էին Լոանոյի, Ֆինալեի և Սավոնայի մերձակայքում։ Լահարպի դիվիզիան իր առաջավոր ջոկատները տարել էր դեպի Վոլտրի, որպեսզի ահաբեկի Ջենովայի արիստոկրատիային և ապահովի հաղորդակցությունն այդ մեծ քաղաքի հետ, որին զինվորները «ստնտու» էին անվանում։

Չորս տարի շարունակ բանակի վարչական շտաբ-կայանը հանգիստ մնաց Նիցցայում։ Նոր գլխավոր հրամանատարը հրամայեց, որ այն «Կառնիզի» դժվարին ճանապարհով հետևի իրեն դեպի Ալբենգա։ Այդ վճռական միջոցառումը զարմացրեց բոլորին և հիացրեց զինվորականներին։ Չնայած այն ծայրահեղ աղքատությանը, որին մատնել էին իրենց, այդ պատանի հանրապետականները խանդավառված էին հայրենիքի և ճակատամարտերի սիրով։ Նրանք ծիծաղում էին՝ նայելով իրենց ցնցոտիներին։ Սպաներին տրվող հատկացումներն ամսական տասը ֆրանկ էլ չէին կազմում. սպաներն այնպես էին ապրում, ինչպես զինվորները, և նրանց նման էլ ոտքով էին քայլում։

Ի հատուցումն անգլիացիների կողմից ջենովական նավահանգստում ֆրանսիական «La Modeste» նավի գրավման, գեներալ Բոնապարտը Ջենովայի սենատից պահանջեց ֆրանսիական զորքերին թույլատրել անցնելու այդ քաղաքով դեպի Բոկետտայի կիրճը։ Այդ դիջումի դիմաց նա խոստացավ երբեք պատերազմական գործողությունների թատերաբեմ չդարձնել նրանց երկիրը։

Ջենովայի օլիգարխիան, որն ատում էր ֆրանսիացիներին, շտապեց նրանց պահանջների մասին հայտնել ավստրիական գլխավոր հրամանատարին։ Այդ հաղորդումը կարող էր ավստրիացիների ամբողջ ձախ թևը քաշել-տանել դեպի Բոկետտայի կիրճը։ Նման զորաշարժը, որը թշնամու գլխավոր ուժերը կկենտրոնացներ ռազմաճակատի ծայր թևերում՝ Ձևայի մոտ և Ջենովայի տակ, ֆրանսիացիների հարձակման համար կբացեր մեկուսացված կենտրոն։

Լոանոյում ջախջախված գեներալ Դելինի փոխարեն պալա-

տական խորհուրդը նշանակեց գեներալ Բոլիեին՝ գրեթե ութսուն-
ամյա մի ծերունու, որը քաջ ու ձեռներեց զորավարի համբավ էր
վայելում, բայց ընդհանրապես շատ միջակ ընդունակություններ
տեր էր։ Նրա հիսուն հազարանոց բանակը միանգամայն լիա-
կազմ էր և տեղավորված Կոնիից և Տենդի լեռնանցքի ստորոտից
մինչև Բոկետտա՝ Ջենովայից ոչ հեռու։

Այն պատճառո՞վ արդյոք, որ Ջենովայի սենատը նրան տե-
ղեկացրել էր ֆրանսիական գեներալի պահանջների մասին, թե՞
զուտ պատահականորեն, Բոլիեն իր բանակի մեկ երրորդով
շարժվեց դեպի Ջենովա՝ նպատակադրվելով գրավել այն և կապ
հաստատել Նելսոնի ու Ջերվիսի հետ, որոնք անգլիական էս-
կադրայով գտնվում էին այդ կողմերում։

Եթե Բոլիեն գեթ նվազագույն գաղափար ունենար գլխավոր
հրամանատարի անելիքների մասին, իր ողջ զորքով կշարժվեր
ֆրանսիացիների ձախ թևի դեմ, և ֆրանսիացիներն ստիպված
կլինեին հապճեպ ետ քաշել Ջենովայի մոտակայքում ունեցած
իրենց բոլոր ուժերը։

1796 թվականի ապրիլի 10-ը հռչակավոր Իտալական արշա-
վանքի սկիզբն է։ Բոլիեն անձամբ, իր ձախ թևի դյուին անցած,
Բոկետտայի կիրճով իջավ Ապենիններից։ Նապոլեոնը նրան բա-
վականություն պատճառեց՝ հնարավորություն տալով Վոլտրիի
մոտ նեղելու ֆրանսիացիների փոքրիկ առաջապահ ջոկատը, իսկ
ինքն այդ ընթացքում արագ կենտրոնացրեց իր գլխավոր ուժերը
Սասելլոյից դեպի Մոնտենոտտե շարժվող ավստրիացիների կենտ-
րոնի դեմ։ Այդ կետը պաշտպանված էր երեք ռեդուտներով, որոնք
հայտնի էին այն երդումով, որ 32-րդ կիսաբրիգադը տվել էր
գնդապետ Ռամպոնին այն պահին, երբ ավստրիացիները կատա-
ղաբար գրոհում էին դրանցից վերջինը։ Սակայն եթե գեներալ
դ'Արժանտոն հաղթեր և իջներ մինչև Սավոնա՝ ավելի լիակատար
պարտություն կկրեր. գիշերը ֆրանսիացիների բոլոր ուժերը սրընթաց
կհարձակվեին այդ կետի վրա։

Ապրիլի 12-ին ֆրանսիացիները գերակշիռ ուժերով, ճակատից
ու թիկունքից գրոհելով դ'Արժանտոյին, ջախջախեցին նրան ու ետ
շպրտեցին դեպի Դեգո։ Ֆրանսիական բանակն անցավ Ապենին-
ները։ Բոնապարտը որոշեց հարվածն ուղղել պիեմոնտցիների
դեմ և փորձ անել նրանց կտրել Բոլիեից։ Պիեմոնտցիները գեներ-
բալ Կոլլիի գլխավորությամբ գտնվում էին Ջեայի ամրացված

ճամբարում։ Գեներալ Պրովերան, ավստրիական փոքրիկ կոր-
պուսի հետ գտնվելով Կոլլիի և դ'Արժենտոյի արանքում, գրավում
էր Կոսսերիայի բարձունքները։ Բոնապարտը նրա դեմ հանեց
Մասսենայի և Օժերոյի դիվիզիաները։ Լահարպը թողնվել էր Բո-
լիեին հետևելու համար, որն անգործության էր մատնված,
ինչը մեծ սխալ էր նրա կողմից։

Ապրիլի 13-ին Օժերոյի դիվիզիան հաղթահարեց Միլլեզիմոյի
լեռնանցքները։ Ամեն կողմից նեղված ու շրջապատված Պրովե-
բան ստիպված էր ապաստան որոնել Կոսսերիայի ամրոցի ավե-
բակներում և 14-ի առավոտյան իր հրամանատարության տակ
գտնվող հազար հինգ հարյուր գրենադերների հետ զենքը վայր
դրեց։

Բոլիեն, ստացած տեղեկություններից խիստ զարմացած,
շտապեց Աքվի և անհապաղ իր զորքերի մի մասը լեռների վրայով
ուղարկեց դեպի Սասելլո։ Դ'Արժանտոն գրավեց Դեգոն. այնտեղ
Բոնապարտը, Մասսենայի և Լահարպի դիվիզիաների գլուխն անց-
ած, սրընթաց հարձակվեց նրա վրա։ Ավստրիական զորքերը
հիանալի էին մարտնչում, բայց ֆրանսիացիներն իրենց գլխավոր
հրամանատարի հմուտ զորաշարժերի շնորհիվ թվական գերակշռ-
ություն ունեին։ Թշնամին անկանոն նահանջեց Աքվի՝ թողնելով
քսան թնդանոթ և բազմաթիվ գերիներ։

Ֆրանսիացիների շահած ճակատամարտից հետո գեներալ
Վուկասովիչը, հապճեպ գալով Սասելլոյից, որպեսզի միանա
դ'Արժանտոյին (քանի որ ենթադրում էր, թե նա դեռ Դեգոյում է),
անսպասելիորեն հայտնվեց ֆրանսիացիների առջև։ Այդ խիզախ
մարդն իրեն չկորցնելով, սրընթաց գրոհեց այն ջոկատի վրա, որ
պաշտպանում էր Մալիանիի ռեդուտները, գրավեց դրանք և ահաբ-
եկված կայազորին ետ շպրտեց դեպի Դեգո։ Ֆրանսիացիներն
անակնկալի եկան, բայց քաջ Մասսենան, դրսևորելով այն տոկու-
նությունը, որն անհաջողությունների պահերին հատուկ էր նրան,
հավաքեց փախստականներին և գրեթե իսպառ բնաջնջեց Վու-
կասովիչի հինգ գումարտակից բաղկացած ջոկատը։

Ջախջախելով ավստրիացիներին, գլխավոր հրամանատարը
նորից պիեմոնտցիների դեմ ուղղեց Մասսենայի, Օժերոյի և Սեր-
յուրիեի դիվիզիաները։ Պիեմոնտցիները կարճատև հաջողություն
ունեցան Սեն-Միքելի մոտ, որտեղ նրանց դեմ մարտնչում էր

Սերյուրիեի դիվիզիան. նրանք թողեցին Ձևայի ճամբարը և վերջինվերջո ետ շպրտվեցին Ստուրայից այն կողմ։

26-ին ֆրանսիական բոլոր երեք դիվիզիաները միացան Ալբայում։ Եվս մեկ ճակատամարտ՝ և նրանք կարող էին գրավել Տուրինը, որից հետու էին ընդամենը տասը լյու։

Բայց Բոնապարտը պաշարողական հրետանի չուներ, ընդ որում պաշարումն ամենևին էլ չէր համապատասխանում ֆրանսիացիների ոգուն։ Թշնամու զորավարները չդնահատեցին այս երկու հանգամանքը։ Նրանք իրենց կործանված էին համարում։ Նրանք աչքաթող արեցին Ստուրայի հիանալի դիրքը, որին աջից պաշտպանում է Կոնի ուժեղ ամրոցը, իսկ ձախից՝ Քերասկոյի անառիկ բերդը։ Եթե Կոլլին ամրանար Ստուրայի ետևում՝ կարող էր իր զորքերն ուժեղացնել մերձակա հովիտներում ցրված հազար պիեմոնտցիներով և Բոլիեի առնվազն քսան հազարանոց զորքով։ Դաշնակիցներին բավական էին երկու օրվա վճռական, անդուլ, լարված ջանքեր՝ և դարձյալ ամեն ինչ հարցականի տակ կլիներ։ Հետո ի՞նչ, որ ֆրանսիացիները նրանց կջախջախեին։ Կողքներին Տուրինի հիանալի բերդն էր, որտեղ պարտության դեպքում կարող էր պատսպարվել ջախջախված զորքը, որի համար անհասկանալի էր ամենևին էլ չէր նշանակում բոլոր ռեսուրսների սպառում, քանի որ Ավստրիան նրան օգնության հասնելու քիչ միջոցներ չուներ։ Համենայն դեպս Տուրինն անառիկ էր պաշարողական հրետանի չունեցող բանակի համար։

Ֆրանսիացիները դեռ չէին հասցրել Ալբան գրավել, երբ պիեմոնտցի գեմոկրատները կազմակերպեցին Վերականգնման կոմիտե, որն անմիջապես Պիեմոնտի և Լոմբարդիայի ժողովրդին ուղղված կոչեր թողարկեց, որոնք սպառնում էին ազնվականներին ու քահանաներին և քաջալերում ժողովրդին։

Այդ կոչերի ներգործությունը գերազանցեց ֆրանսիացիների սպասումները. վախն ու իրարանցումը Տուրինում ծայրաստիճանի հասան։ Թագավորի խորհրդատուների մեջ ոչ մի երևելի մարդ չկար։ Արքունիքը վախեցավ պիեմոնտյան յակոբինյաններից, և Թևպետ Բոլիեն Աքվայից շարժվեց դեպի Նիցցա, որպեսզի միանա Կոլլիի հետ, նա իրեն անդառնալիորեն կործանված համարեց. Թագավորն իր համհարզներից մեկին ուղարկեց հաշտություն խնդրելու։ Իրականացան գեներալ Բոնապարտի բոլոր ցանկությունները։ Նրա լրտեսները տեղեկացրին, որ կատաղի վեճերից

հետո, որի ընթացքում թագավորի մինիստրները, մասնավորապես մարկիզ դ'Ալբարեն համառորեն պնդում էին, որ պատերազմը շարունակվի, Տուրինի արքեպիսկոպոս կարդինալ Կոստան թագավորին համոզեց հաշտություն կնքել։

Դժվար է հավատալ, որ թագավորը նախքան այդ հապճեպ քայլն անելը, չի հիշել, թե 1706 թվականին ինչպես է վարվել իր նախահայր Վիկտոր Ամեդեյը։ Եթե թագավորը, Ալպերից ետ կանչելով թագաժառանգ Կարինյանացու զորքերի մի մասը, աննահանջ դիմանար Տուրինում, Ալեսսանդրիայում և Վալենցայում՝ այն ամրոցներում, որոնց պաշարումը ֆրանսիացիների ուժից վեր էր, վերջիններս չէին կարողանա ոչ մի քայլ առաջ գնալ։ Եթե կոալիցիան հարկ համարեր ուղերվները մոտեցնել Հռենոսի ափերից, ֆրանսիացիները հեշտությամբ կարող էին դուրս շպրտվել Իտալիայից։

Բոնապարտի հանճարն իր հակառակորդներին ինչ-որ չափով զրկում էր բանականությունից և, թերևս, դա էլ ստիպեց թագավորին խայտառակ հաշտություն խնդրելու մի բանակից, որը ո՛չ հրետանի ուներ, ո՛չ հեծելազոր, ո՛չ էլ կոշիկ։ Բավական է լոկ մի պահ ենթադրել, որ այդ նույն հաղթությունները տարել են Մորոն, Ժուրդանը կամ որևէ այլ միջակ կարողությունների տեր զորավար, և անմիջապես պարզ կդառնա, որ Սարդինիայի թագավորն անձնատուր չէր լինի նրանց ողորմածությանը։

Բոնապարտը լիազորված չէր հաշտության բանակցություններ վարելու, բայց Քերասկոյի զինադադարի համաձայն նա հասավ այն բանին, որ ֆրանսիացիներին հանձնվեցին երեք՝ Կոնիի, Ալեսսանդրիայի և Ձևայի ամրոցները. թագավորը պարտավորվեց դուրս գալ կոալիցիայից։ Բոնապարտը գիտակցելով, որ դեպի Ադիջեի հովիտ առաջխաղացումը բացառապես Սարդինիայի թագավորից է կախված, կոմս դը Սեն-Մարսանին՝ Քերասկոյի բանակցություններում թագավորի ներկայացուցչին, հասկացնել տվեց, որ ֆրանսիացիները ոչ միայն չեն ձգտում խորտակել դահերն ու զոհասեղանները, այլև նույնիսկ կկարողանան, եթե դա պահանջեն իրենց շահերը, այդ հաստատությունները պաշտպանել տեղական յակոբինյաններից։ Դժբախտաբար, Դիրեկտորիան ոչ մի կերպ չէր կարող յուրացնել այդ գաղափարը, որը մի ամբողջ տարի Բոնապարտն ամեն կերպ աշխատում էր հասկանալի դարձնել նրան։

Երկու շաբաթում նա հասցրեց ավելի շատ բան անել, քան Իտալական նախկին բանակը՝ չորս արշավանքի ընթացքում։ Պիեմոնտի հետ կնքած զինադադարը նրա հարվածների տակ դրեց Բոլիեի բանակը և հատկապես՝ ամուր բազա տվեց նրա սեփական բանակին։ Եթե նա պարտություն կրեր, Ալեսսանդրիայի պատերն այժմ նրա համար հուսալի ապաստան կդառնային։ Իսկ եթե այս դեպքում թագավորի խելքին փչեր խախտել պայմանագիրը, Բոնապարտը կարող էր, պիեմոնտյան յակոբինյաններին աջակցություն ցույց տալով, նրան ստիպել դառնորեն զղջալու դրա համար։

Բայց քանի որ մեր նպատակը ոչ այնքան իրադարձությունները, որքան իրեն՝ Բոնապարտին ներկայացնելն է, ապա մեջ կբերենք անձամբ իր պատմածը այդ փայլուն կամպանիայի մասին։ Դա Եվրոպայի համար հայտնագործեց մի մարդու, որը բոլորովին նման չէ այն դժգույն անձնավորություններին, որոնք նրա կառավարություններին քրքրող հնացած օրենքների ու բարդ ինտրիգների շնորհիվ հասնում էին ամենաբարձր պաշտոնների։

Նապոլեոնի հայտնվելն իբրև գլխավոր հրամանատար մի խոշոր հեղափոխություն առաջացրեց բանակի բարքերում։ Հանրապետական խանդավառությունը նպաստեց մտերմիկ վարվեցողությանը։ Գնդապետը մտերիմ էր իր սպաների հետ։ Նման սովորույթները կարող են առաջ բերել բանակի անհնազանդությունն ու կործանումը։ Սովակալ Դեկրեսը պատմում է, որ գեներալ Բոնապարտին Իտալական բանակի գլխավոր հրամանատար նշանակելն ինքն իմացել է Տուլոնում։ Դեկրեսը նրան հաճախ է հանդիպել Փարիզում և իրեն համարում էր նրա մտերիմ բարեկամը։ «Այդ պատճառով էլ, իմանալով, որ նոր գլխավոր հրամանատարը Տուլոն կժամանի, ես անմիջապես, պարծենալով իմ կապերով, առաջարկում եմ բոլոր ընկերներիս ներկայացնել իրենց։ Ուրախ ճապարանքով գնում եմ գեներալի մոտ։ Հյուրասրահի դուռը բացվում է, ես արդեն ուզում եմ նետվել դեպի նա, բայց նրա կեցվածքը, հայացքը, ձայնը կանգնեցնում են ինձ։ Այնինչ նրա պահելաձևում վիրավորական ոչինչ չկար։ Բայց այդքանն արդեն բավական էր։ Այդ ժամանակվանից ես արդեն երբեք գայթակղություն չէի զգում անցնել այն սահմանը, որն ինձ ցույց էր տրվել»։

Ընդունելով Իտալական բանակի հրամանատարությունը, Նապոլեոնը, չնայած որ շատ ջահել էր և միայն վերջերս էր գեներալի աստիճան ստացել, կարողացավ ենթարկեցնել իրեն։ Նա բանակը հնազանդեցրեց ոչ այնքան ներողամտության դրսևորումներով, որքան իր շնորհներով։ Նա խիստ էր ու ինքնամփոփ՝ հատկապես գեներալների հետ. բանակն անասելի աղքատության մեջ էր, զինվորների սրտերում հույսը մարել էր, նա կարողացավ վերակենդանացնել այն. շուտով նրանք սիրեցին նրան. դա ամրապնդեց նրա հեղինակությունը դիվիզիոնի գեներալների աչքում։

Նապոլեոնի երիտասարդությունը պատճառ դարձավ, որ Իտալական բանակում մի յուրատեսակ սովորություն առաջանա՝ յուրաքանչյուր ճակատամարտից հետո ամենաքաջ զինվորները խորհրդի էին հավաքվում և մի նոր աստիճան շնորհում իրենց ջահել գեներալին։ Երբ նա վերադառնում էր ճամբար, ծեր բեղավորները ողջունում էին նրա նոր կոչումը։ Լոդիում նրան կապրալի կոչում շնորհվեց. այստեղից էլ՝ «փոքրիկ կապրալ» մականունը, որով Նապոլեոնին երկար ժամանակ անվանում էին զինվորների շրջանում։

ԳԼՈՒԽ V

Թոուցիկ հայացք ձգենք, թե ինչ էին անում ֆրանսիական զորքերը Գերմանիայում՝ մինչ Նապոլեոնը նվաճում էր Իտալիան։

Այն բանից հետո, երբ Պիշեգրյուն դիտավորյալ թողեց, որ ջախջախեն իր բանակի դիվիզիաներից մեկը, զինադադար կնքվեց։ Պիշեգրյուն գնաց Փարիզ և զայրույթով բորբոքեց Դիրեկտորիային այն ծայրահեղ կարիքի համար, որի մեջ նրա մեղքով գտնվում էր Հռենոսյան բանակը։ Դիրեկտորիան, չցանկանալով, որ մարտական գեներալների մեջ սովորություն դառնա իր հետ նման տոնով խոսելը, Պիշեգրյուին հայտարարեց, թե նա կարող է հրաժարվել այդ բեռից, եթե դա նրան չափազանց ծանր է թվում։

Պիշեգրյուն հրաժարական տվեց, և բանակը, ոչինչ չիմանալով իր զորավարի դավաճանության մասին, ենթադրեց, թե նրան զոհաբերել են միայն այն պատճառով, որ չափազանց ջերմորեն է պաշտպանել իրենց շահերը։

Պիշեգրյուի փոխարեն Հռենոսյան բանակի հրամանատար նշանակվեց Մորոն. զինադադարը չեղյալ հայտարարվեց։ Մորոն անցավ Հռենոսը և 1796 թվականի հունիսի 9-ին ու 10-ին երկու հաղթանակ տարավ։

Իր հերթին Սամբր-է-Մյոզի բանակը Ժուրդանի հրամանատարությամբ, Դյուսելդորֆի մոտ անցնելով Հռենոսը, առաջ շարժվեց դեպի Բոհեմիա։ Բնածին անվճռականությունի՞ց, թե՞ իր կոլեգայի նկատմամբ տածած նախանձից կամ էլ համապատասխան հրահանգների բացակայության պատճառով Մորոն չօգտագործեց Դանուբի վրա գտնվող բազմաթիվ գետանցները՝ Դոնաուվերտից մինչև Ռեգենսբուրգ։ Այդ ժամանակ էրցհերցոգ Կառլոսը ձեռնարկեց այն հմուտ զորաշարժը, որը նրան հռչակ բերեց։ Մորոյից ճողոպրելով, նա անցավ Դանուբը և միացավ Սամբր-է-Մյոզի բանակի ճնշման տակ նահանջող ավստրիական զորքերին. ապա նորից հարձակման անցնելով, 1796 թվականի հունիսի 15-ին Վեցլարի մոտ ջախջախեց Ժուրդանին և շարունակեց հետապնդել նրան ընդհուպ մինչև Հռենոսը, այն դեպքում, երբ Մորոն նույնիսկ չմտածեց ընդօրինակել հակառակորդի զորաշարժը և օգնության հասնել Ժուրդանին։

Փոխանակ նորից անցնելու Դանուբի ձախ ափը, իսկ հետո փորձ անելու միանալ Սամբր-է-Մյոզի բանակին կամ գոնե այս կամ այն կերպ գրոհել էրցհերցոգի վրա, նա համարձակություն ունեցավ նահանջելու ութսուն հազարից ավելի զինվոր ունեցող հիանալի բանակով։ Եվ, մի բացառիկ հանգամանք, որն ապացուցում է, թե ինչ արժեք ունի հասարակական կարծիքը Ֆրանսիայում՝ այդ նահանջը փառաբանվում էր, ու խելացի մարդիկ այն շատ ավելի բարձր էին դասում, քան Կաստիլիոնեի ու Արկոլեի ճակատամարտերը։ Ճիշտ է, Մորոյի բանակը, որը շատ ուժեղ էր, նահանջի սկզբում մի ճակատամարտ շահեց։ Բայց հետո Մորոն էրցհերցոգին ժամանակ տվեց նորից հավաքելու իր ուժերը։ Փարիզում այդ ութսուն հազարանոց բանակն արդեն կործանված էին համարում, երբ հանկարծ հայտնի դարձավ, որ այն Հյունինգենի մոտ գտնվող կամրջով ետ է քաշվել Հռենոսի մյուս ափը։ Բոլորը հիանում էին Մորոյով ու նրա նահանջով, և այդ հիացմունքը դեռ շարունակվում է։

Այս անօրինակ զորաշարժին հետևեց Քեհլի պաշարումը, որի ժամանակ դիվիզիոնի գեներալներ Դեգեն և Գուվիոն-Սեն-Սիրը

անմահ փառքով պսակվեցին։ Դրանցից երկրորդի հուշագրություններում կարելի է կարդալ այդ պաշարման հիանալի մանրամասնությունները։ Գեներալ Մորոյի մտքով երբեք չի անցել նորից հաղթահարել Հռենոսը և սրընթաց հարվածել էրցհերցոգի թիկունքին։

Ահա թե ինչ էին անում Հանրապետության բանակները հյուսիսում այն ժամանակ, երբ Նապոլեոնը Իտալիայում հաղթանակ հաղթանակի ետևից էր տանում։ Ահա թե ինչու ավստրիացիների Հռենոսյան բանակը կարողացավ Վուրմզերին՝ քսան հազար ընտրովի զինվորների հետ օգնության ուղարկել Ադիջեում մարտնչող ավստրիական բանակին։

Ահա թե ինչու 1797 թվականի մարտին Հռենոսյան բանակը կարողացավ երեք դիվիզիա և անձամբ էրցհերցոգ Կառլոսին օգնության ուղարկել Տալյամենտոյի մոտ գտնվող ավստրիական բանակին։

Դիրեկտորիայի 1797 թվականի սկզբի այդ գործողությունները վկայո՞ւմ են արդյոք սոսկ նրա սովորական ապիկարության մասին, թե՞, Նապոլեոնի հաղթանակներից վախենալով, նա դիտավորյալ խուսափում էր դիվերսիայից Հռենոսի շրջանում։ Ինչ էլ որ լինի, ինձ համար անբացատրելի քաշքշուկներից հետո, Դիրեկտորիան վերջապես որոշեց իր զորքերն առաջ շարժել դեպի Հռենոսի աջ ափը։ Նրանք խիզախաբար անցան գետը և արդեն հաղթանակներ էին տանում, երբ հանկարծ ավստրիական առաջապահ դիրքերից երևաց բանագնաց-ֆրանսիացի զինվորականը։ Դա գեներալ Լեկլերկն* էր, որը Գերմանիայի վրայով ժամանել էր Լեոբենից՝ իր հետ բերելով հաշտության նախնական պայմանները։ Եթե Նապոլեոնի փառքը չստիպեր զգուշանալ ազատության ճակատագրի համար, հարկ կլիներ Տալյամենտոյի հաղթահարումով Ալպերն անցնելուց հետո նրան ետ կանչել Իտալիայից և հանձնարարել Հռենոսյան բանակի հրամանատարությունը։

ԳԼՈՒԽ VI

Քերասկոյի զինադադարի կնքման հենց հաջորդ օրը Բոնապարտը, շտապելով օգտվել գեներալ Բոլիեի շփոթությունից, իր չորս դիվիզիաներն առաջ շարժեց դեպի Ալեքսանդրիա։ Այդ ընթացքում Բոլիեն, նորից նահանջելով Պո գետի մյուս ափը՝ վա-

լենցայի մոտ գտնվող կամրջով, որն այնուհետև քանդեց, իր գլխավոր ուժերով ամրացավ այնտեղ։ Ֆրանսիացի զորավարը շրջահայացորեն Սարդինիայի թագավորի հետ կնքած զինադադարի պայմանների մեջ մտցրել էր Վալենցայի մերձակայքում Պո գետն անցնելու իրավունքը. այս պարզ խորամանկությունը լիովին հաջողվեց։ Պատերազմելու հին սիստեմին հավատարիմ, Բոլիեն ենթադրեց, որ ֆրանսիացիները չեն հապաղի իրեն գրոհել ճակատից՝ Տիչինոյի վրա, այն դեպքում, երբ նրանք հնարավորություն ունեին հարվածել իր թիկունքից և այդպիսով գրավել մի ընդարձակ տարածք։ Որպեսզի ամրապնդեն նրա այդ մոլորությունը, ֆրանսիական մի փոքրիկ զորամաս ձևացրեց, թե իբր մտադիր է Պոն անցնել Կամբիոյի մոտ, իսկ այդ ընթացքում ֆրանսիական բանակը Բոլիեին արագ շրջանցեց աջից։

Նապոլեոնն ինքն էր առաջնորդում իր առաջապահ ջոկատը և մայիսի 7-ին հասավ Պյաչենցա. դիվիզիաները գնում էին էշելոններով, իրարից ոչ հեռու տարածության վրա։ Հարկավոր էր շուտ ավարտել այդ չափազանց վտանգավոր ձեռնարկումը։ Դա իսկական բնային շարժում էր. ճիշտ է, Նապոլեոնին պատսպարում էր լայնահուն գետը, բայց Բոլիեի մոտ կարող էին կամրջանավեր լինել, նա կարող էր հարվածներ հասցնել բանակի այն մասին, որը գտնվում էր Պյաչենցայում, կամ էլ՝ վերջին էշելոն հանդիսացող դիվիզիային։ Դա երիտասարդ զորավարի առաջին փորձն էր մեծ մասշտաբի ռազմական գործողություններում։

Պո գետը լայնությամբ այնքան էլ չի զիջում Հռենոսին, իսկ ֆրանսիական բանակը ոչ մի հարմարանք չուներ գետանցման համար։ Կամուրջ գցելու մասին մտածելն անգամ ավելորդ էր։ Կրկնում ենք, ոչ մի հնարավորություն չկար՝ ամեն տեսակետից։ Այդ հանգամանքն ավելի էր ամրապնդում գեներալ Բոլիեի մոլորությունը։ Ֆրանսիական զորավարի խելացնոր խիզախությունը նրա մեջ ծաղրական կարեկցանք էր առաջացնում։

Գետափ ուղարկված սպաները գրավեցին այն բոլոր նավակները, որ հաջողվեց գտնել Պյաչենցայում և նրա շրջակայքում։ Դրանք միավորեցին, և բրիգադային հրամանատար Լանը յոթ հարյուր մարդուց բաղկացած առաջապահ ջոկատով առաջինն անցավ գետը։ Մյուս ափում ավստրիացիներն ընդամենը երկու էսկադրոն ունեին. դրանք հեշտությամբ ետ շպրտվեցին, և գետանցումը շարունակվեց առանց արգելքների, թեկուզև շատ դանդաղ։ Եթե Բոնապարտը կամրջանավերի շարժակազմ ունենար, Թշնամու բանակը ջախջախված կլիներ։

Վերջապես իմանալով այն մասին, որ ֆրանսիացիները հարձակվել են Պյաչենցայի վրա, Բոլիեն մի զորաշարժ ձեռնարկեց այդ առաջխաղացումը կասեցնելու նպատակով։ Բայց փոխանակ ուժեղ հարվածներ հասցնելու ֆրանսիական այն զորամասերին, որոնց նա գտավ Պոյի ձախ ափին, այս փորձված զորավարը սահմանափակվեց կիսամիջոցներով։ Նա որոշեց իր ձախ թևը տանել դեպի Ադդա՝ ընդ որում չհրաժարվելով Տիչինոյի գծից, որտեղ մնում էր նրա աջ թևը։

Մայիսի 8-ին գեներալ Լիպտայը, որը նրա ձախ թևի հրամանատարն էր, տեղավորվեց Ֆոմբիոյում՝ ֆրանսիական առաջապահ զորամասերի դիմաց։ Կարելի էր ենթադրել, որ Լիպտային կհետևի ողջ ավստրիական բանակը։ Այդ պատճառով էլ որոշվեց անհապաղ հարձակվել այդ զորամասերի վրա։ Այդ կարևոր գրոհը անցկացվեց եռանդով. հատկապես աչքի ընկավ գնդապետ Լանը, որը դրսևորեց այն մոլեռանդությունը, այն համառությունը, որ, խոշոր ուժերի շարժումների ղեկավարման արվեստը հետագայում յուրացնելու հետ զուգակցված, նրան դարձրին ֆրանսիական բանակի լավագույն զորավարներից մեկը։ Լիպտայը գլխովին ջախջախվեց, կտրվեց Բոլիեից և ետ շպրտվեց դեպի Պիցցիհետոն։

Այդ օպերացիայի հաջորդ գիշերը Բոլիեն անձամբ եկավ այն վայրը, որտեղ նրա օգնականը հենց նոր էր պարտություն կրել։ Նրա առաջավոր ջոկատները, շտապելով իրականացնել միացումը Լիպտայի հետ, մտան Կոդոնիո, որտեղ իր դիվիզիայով կանգնած էր գեներալ Լահարպը։ Ֆրանսիացիներն առանց դժվարության նրանց ետ շպրտեցին. դրանից անմիջապես հետո Լահարպը մի փոքրաթիվ թիկնապահ խմբով ուղևորվեց հետախուզության, որպեսզի պարզի հակառակորդի ուժերը։ Երբ նա վերադառնում էր, իր զինվորները մթության մեջ կրակ բացեցին և խփեցին իրենց գեներալին. նրանք դառնորեն ափսոսացին դրա համար։

Միշտ հավատարիմ մնալով ռազմական արվեստի հին կանոններին, Բոլիեն բաժան-բաժան արեց իր հետ բերած կորպուսը. հակառակորդի թվական գերազանցությունից շփոթված, նա հասկացավ, որ ինքն այլ ելք չունի, քան կենտրոնացնել իր բանակը Լոդիի մոտ, որտեղ Ադդայի վրայով գցված կամուրջն էր։ Եթե

Ֆրանսիացիները կամրջանավեր ունենային, նրա աջ թևը, որը դեռ կանգնած էր Պավիայի մոտ, ամբողջովին կգերեվարվեր։ Այդ աջ թևի զորքերը շտապեցին անցնել Ադդան Կասսանոյի մոտ (Միլանի ետևում)։

Բոնապարտը կարող էր գրավել այդ մեծ քաղաքը, որը հսկայական տպավորություն կգործեր Փարիզում, բայց նա ավելի խելացի համարեց գրենադերական գնդերը Մասսենայի և Օժերոյի դիվիզիաների հետ առաջ շարժել Լոդիի վրա. նրա մյուս երկու դիվիզիաները պաշտպանում էին ֆրանսիացիների աջ ու ձախ թևերը։

Մայիսի 10-ին նա մոտեցավ Լոդիին. Բոլիեն արդեն իր զորքերը ետ էր քաշել Կրեմա, բայց, որպես առաջակալ զորամաս, տասը հազար մարդ՝ գեներալ Շոտտենդորֆի հրամանատարությամբ, թողել էր Ադդայի ափերը պաշտպանելու համար։ Ավստրիացիները հարկ չհամարեցին քանդել Լոդիի կամուրջը։ Հիսուն տուաղ երկարությամբ այդ կամուրջը պաշտպանում էին քսան թնդանոթ և տաս հազար զինվոր։

Բոնապարտը ճանաչում էր իր բանակը. ոչինչ չէր կարող գերազանցել այդ երիտասարդ հայրենասերների քաջությանը։ Նա որոշեց նրանց առիթ տալ հռչակվելու մի այնպիսի արարքով, որը թնդար ողջ Եվրոպայում։ Նա մտադրվեց գրոհով գրավել Լոդիի կամուրջը։ Նրա համար այդ անելն այնքանով էր հեշտ, որ, եթե նույնիսկ իրենց ետ շպրտեին, միայն մի քանի հարյուր մարդ կկորցներ։ Նման անհաջողությունը նվազագույն չափով չէր անդրադառնա ամբողջ արշավանքի ընթացքի վրա։

Սրընթաց գրոհով նա դիրքերից դուրս քշեց թշնամու գումարտակը և մի քանի էսկադրոն, որոնք գրաղեցնում էին Լոդի քաղաքը. կրնկակոխ հետապնդելով նրանց, ֆրանսիացիները հասան քաղաքից դեպի արևելք, բերդապարսպից մի քանի քայլի վրա գտնվող կամրջին։ Հակառակորդի սակրավորները չէին հասցրել քանդել այն։

Երեկոյան մոտ ժամը հինգին Նապոլեոնը հողապատնեշի ետևում հոծ շարքերով տեղավորեց իր գրենադերներին և նրանց տարավ դեպի կամուրջը։ Հակառակորդը դիմավորեց մանրագնդակի կարկտով. շարասյունում մի պահ շփոթմունք առաջացավ։ Գեներալներն առաջ նետվեցին և իրենց օրինակով ոտքի հանեցին մարդկանց։ Այս իրարանցման ժամանակ մի քանի զինվոր

կամրջի ցցերի վրայով հասան գետի մեջտեղում գտնվող կղզուն. նրանք լողացին մինչև Ադդայի երկրորդ գետաբազուկը, ծանծաղուտ գտան, անցան հակառակ ափը և հրաձգային շղթայաշարով ցրվեցին հարթավայրում՝ ձևացնելով, թե ուզում են շրջանցել ավստրիացիների գծերը։ Այդ պահին գրենադերների շարասյունը նետվեց դեպի կամուրջը. ամեն ինչ սրբելով իրենց ճանապարհին, նրանք գրավեցին թշնամու մարտկոցները և ետ շպրտեցին մոտ հարյուր քայլի վրա՝ կամրջի ետևը կանգնած ավստրիական գումարտակները։

Թշնամու զորավարը նահանջեց Կրեմա՝ կորցնելով տասնհինգ թնդանոթ և երկու հազար սպանված ու վիրավոր։ Ամեն մեկի, նույնիսկ ոչ զինվորականի համար հասկանալի այս օպերացիան բոլորին ապշեցրեց իր արտակարգ խիզախությամբ։ Ընդամենը մեկ ամսում Լոդիի կամրջի անցումը նույնքան հռչակավոր դարձավ Գերմանիայում ու Անգլիայում, որքան Ֆրանսիայում։ Դեռ մինչև հիմա էլ հյուսիսային Գերմանիայի ամենախուլ քաղաքների հյուրանոցներում հանդիպում է փայտե կոպիտ փորագրություն, որը պատկերում է այդ նշանավոր ճակատամարտը, ընդ որում, մարդիկ այդտեղ ավելի մեծ են պատկերված, քան կամուրջը։

Լոդիի ճակատամարտի անմիջական հետևանքները եղան Պիցցիհետոնի գրավումը, որի կայազորն ահաբեկվեց ֆրանսիացիների հրետանային ուժեղ կրակոցից, և Բոլիեի նահանջը դեպի Մինչո։

Բոնապարտը չկամեցավ հետապնդել նրան. չէ՞ որ արդեն մի ամբողջ ամիս ֆրանսիական զորքերն անընդհատ շարժման մեջ էին։ Նրանք ամեն ինչի կարիք էին զգում՝ հատկապես կոշիկների ու հագուստի։ Սակայն այնքան էլ անհնարին բան չէր նրանց ստիպել ևս ութ երթարշավ անելու։ Թվում էր, թե հարկավոր էր փորձել բոլոր ջանքերի գնով գրավել Մանտուան, որը Քերասկոյի զինադադարից հետո միայն ավստրիացիներն սկսեցին ամրապնդել՝ միաժամանակ պարեն մթերելով այնտեղ։ Ճիշտ է, Լոդիի ճակատամարտի հաջորդ օրը Բոլիեն կարգադրեց Մանտուայի պաշտպանության նպատակով ջրասուզել նրա շրջակայքը։ Բայց հանուն այդքան նշանակալից ավարի՝ հարկավոր էր ամեն ինչ, բացի, թերևս, միայն ճակատամարտը լրիվ տանուլ տալը, վտանգի ենթարկել, իսկ Բոլիեն այլևս ի վիճակի չէր ճակատամարտ

շահելու։ Միայն նրա հեծելազորն էր կարող վտանգ ներկայացնել։ Հետևաբար, ֆրանսիական բանակը սոսկ վտանգվում էր ապարդյուն անցում անելու Կրեմոնից մինչև Մանտուա, իսկ այդ երկու քաղաքների միջև ընկած տարածությունը մոտ երեսուն լյո էր։

Ես գիտեմ, նա, ով անձամբ լավատեղյակ չէ այն ամենին, ինչ տեղի էր ունենում տվյալ բանակում, անխոհեմ է վարվում զորավարին կշտամբելով, թե նա սիրտ չի արել հեռվից դժվարին չթվացող այս կամ այն երթը կամ զորաշարժը ձեռնարկելու։ Հաճախ առկա է անհաղթահարելի արգելքը, որի մասին զորավարը համառորեն լռում է, որպեսզի ո՛չ վհատություն առաջացնի իր զորքերում, ո՛չ էլ առույգության հորդում՝ հակառակորդի մոտ։ Բայց ուշուկես ամսվա ընթացքում Մանտուայն իշխում էր ֆրանսիական գեներալի մտքերին, և մենք կտեսնենք, թե դա ինչքան թանկ կարող էր նստել նրա վրա։

Քանի որ նպատակադրվել եմ պատկերելու ոչ այնքան իրադարձությունները, որքան իրեն՝ Նապոլեոնին, ես ընթերցողի առջև ինձ իրավացի չհամարեցի բաց թողնելու Նապոլեոնի սեփական պատմածը Քերասկոյի դինադադարին հաջորդած ռազմական գործողությունների մասին։ Ես այն այստեղ մեջ բերեցի համառոտ՝ ամեն կերպ աշխատելով խուսափել կրկնություններից։

ԳԼՈՒԽ VII

Պետք է ընթերցողին խոստովանեմ, որ ես հրաժարվել եմ ոճի ամեն տեսակ նրբագեղությունից։ Ընթերցողն ինձ կթույլատրի՞ արդյոք պատկերացում տալու այն զրկանքի մասին, որի մեջ գտնվել է բանակը, պատմելու մի դեպք, որ տեղի է ունեցել իմ բարեկամ լեյտենանտի հետ։

Բանակի ամենափայլուն սպաներից մեկը՝ պ-ն Ռոբերը, Միլան ժամանեց մայիսի 15-ի առավոտյան և ճաշի հրավիրվեց մարկիզուհի Ա.-ի մոտ, որի պալատում էլ նրան գիշերելու տեղ տվին։ Նա շատ խնամքով հագնվեց, բայց կոշիկ չուներ։ Հագինը, ինչպես սովորաբար, երբ նա որևէ նոր քաղաք էր մտնում, սպասավորի բավական լավ մաքրած հին կոշիկն էր, որի ներբանները պոկված էին ու հմտորեն կապկպված քուղերով։ Մարկիզուհին նրան չափազանց գեղեցիկ թվաց, և նա այնպես էր վախենում, թե չլինի հանկարծ ճաշ մատուցող ճոխ լիվրեով սպասավորները նկատեն իր ծայրահեղ աղքատությունը, որ ճաշն ավարտելով, ճարպկորեն նրանց ձեռքը խոթեց վեցֆրանկանոց դրամը՝ այն բոլորը, ինչ ուներ։

Պ-ն Ռոբերն ինձ երդվում էր, որ իր վաշտի բոլոր երեք սպաները միայն մի զույգ տանելի կոշիկ ունեին, որը հանել էին Լոդիում սպանված ավստրիական սպայից. այդպես էր վիճակը նաև մյուս կիսաբրիգադներում։

Անտարակույս է մի բան. մեր օրերում դժվար է պատկերացնել այն ծայրահեղ աղքատությունն ու զրկանքները, որ կրել է այն ժամանակ Իտալիայում գործող բանակը։ Մեր երիտասարդ նկարիչների հնարամիտ երևակայության ծնունդ ամենագրոտեսկային ծաղրանկարները խիստ ետ են մնում իրականությունից։ Բավական է ասել, որ այդ բանակի ամենահարուստ սպաները միայն թղթադրամներ ունեին, իսկ Իտալիայում դրանք ոչ մի արժեք չունեին։

Ինձ թույլ կտրվի՞ արդյոք ավելի կոպիտ մանրամասներ բերելու։ Բայց, արդարև, ես այնուամենայնիվ չգիտեմ, թե ինձ կհաջողվի՞ արդյոք համապատասխան ձևով հաղորդելու իմ միտքը։ Երկու սպա, որոնցից մեկը գումարտակի հրամանատար էր, իսկ մյուսը՝ լեյտենանտ (երկուսն էլ զոհվել են Մինչոյի ճակատամարտում, 1800 թվականին) 1796 թվականի մայիսին Միլան մտնելու պահին երկուսով ունեին ընկույզի գույնի մի նանկե տաբատ և երեք վերնաշապիկ։ Երբ մեկը տաբատ էր հագնում, մյուսը կրում էր համազգեստի սերթուկը՝ կրծքին պինդ կոճկած, որը ֆրակի հետ կազմում էր նրանց ողջ հանդերձանքը, ընդ որում սերթուկը և ֆրակը մի տասը տեղ կարկատած էին, և այն էլ շատ անշնորհք։ Այդ երկու սպան առաջին անգամ Պյաչենցայում ոոճիկ ստացան մետաղադրամով. նրանց տվեցին պիեմոնտական մի քանի մետաղադրամ՝ յոթուկեսական սու արժողությամբ (sette e mezzo), որով էլ նրանք գնել էին ընկույզի գույնի այդ տաբատը։ Նրանք Ադդա նետեցին մի զույգ ատլասե հնամաշ կարճ շալվար, որ մինչ այդ ունեին։ Նա, ով տվյալ պահին տաբատով չէր, սերթուկ էր հագնում վարտիքի վրայից։

Ես բաց եմ թողնում նման բնույթի մյուս մանրամասնությունները։ Մեր ժամանակներում դրանք քիչ հավանական կթվան. բանակի ծայրահեղ աղքատության հետ կարող էին համեմատվել

միաչն նրա արտակարգ քաջությունը և ուրախությունը։ Դա դժվար չէ հասկանալ, եթե հիշենք, որ բոլոր զինվորներն ու սպաները դեռ շատ երիտասարդ էին։ Դրանք ճնշող մեծամասնությամբ լանգեդոկցիներ, դոֆինեցիներ, պրովանսցիներ, ռուսիլիոնցիներ էին։ Բացառություն էին կազմում միայն բերշինյիցի մի քանի հուսարներ, որոնց քաջ Շտենգելը բերել էր Էլզասից։ Հաճախ զինվորները, նայելով արտաքինից այնպես թուլակազմ ու ջահել իրենց գեներալին, հիշում էին, որ նա, ինչ էլ որ լինի, իրենցից ամենամեծն է։ Իսկ չէ որ 1796 թվականի մայիսին, Միլան մտնելու պահին, Նապոլեոնը, որը ծնվել էր 1769 թվականին, քսանվեցուկես տարեկան էր։

Նայելով Porta Romana հոյակապ հաղթակամարի տակով անցնող երիտասարդ զորավարին, նույնիսկ ամենափորձված փիլիսոփան դժվարությամբ կկռահեր, թե ինչ երկու կիրք էին հուզում նրա հոգին. դրանք էին՝ կրակոտ սերը, որը խանդը հասցնում էր խելահեղության, և ամենասև ապերախտության ու ամենարուի անխելքության դրսևորումներով ծնված ատելությունը։

Գլխավոր հրամանատարը պետք է կարգավորեր նվաճված երկրների կառավարումը. բանակն այնտեղ թե՛ չերմ համախոհներ ուներ և թե՛ կատաղի թշնամիներ։ Դժբախտաբար, վերջիններիս թվում էին ոչ կուսակրոն հոգևորականության մեծ մասը և ամբողջ վանականությունը։ Բայց դրա փոխարեն բուրժուազիան ու ազնվականության զգալի մասը շատ համակրանքով էին վերաբերվում ազատությանը։ Դրանից երեք-չորս տարի առաջ, այսինքն՝ մինչև 1793 թվականի սարսափները, ամբողջ Լոմբարդիան հիացած էր այն բարեփոխություններով, որ ազատությունը տվել էր Ֆրանսիային։ Ժամանակի ընթացքում հանցագործությունները սկսեցին մոռացվել, և արդեն երկու ամիս շարունակ իրենց էրցհերցոգի կառավարությունը բարի միլանցիներին ջղայնացնում էր թե՛ ազատության հանդեպ ունեցած իր վախով և թե՛ նրանով, որ իր յուրաքանչյուր կոչի մեջ անիծում էր այն։ Հարկ է նկատի ունենալ, որ միլանցիները խորապես արհամարհում էին իրենց տիրակալին, որի միակ կիրքը ցորենի առևտուրն էր, ընդ որում նորին պայծառափայլության սպեկուլյացիաները հաճախ քաղցի էին մատնում բնակչությանը։

Եվ նման տրամադրության տեր այդ ժողովրդին էրցհերցոգն ուզում էր գրավել ավստրիական տան կողմը։ Զվարճալի է տեսնել, թե ինչպես բռնապետությունը դժբախտության մեջ բանականության և զգացմունքի է կոչում։ Ֆրանսիացիների մուտքը Միլան տոն էր ինչպես միլանցիների, այնպես էլ բանակի համար։

Մոնտենոտտեի ճակատամարտից ի վեր Լոմբարդիայի ժողովուրդն ամբողջ հոգով ցանկանում էր ֆրանսիացիների արագ հաղթանակը. դրանից անմիջապես հետո նրանց նկատմամբ այդ ժողովուրդը համակվեց մի այնպիսի կրքով, որն ապրում է մինչև հիմա։ Քաղաք մտնելով, Բոնապարտը տեսավ լոմբարդական՝ կանաչ, սպիտակ ու կարմիր գույների զգեստներ հագած և իր ճանապարհին զորաշար կազմած բազմամարդ ազգային գվարդիան։ Իր հաջողության հանդեպ վստահության այդ ապացույցը հուզեց նրան։ Ի՞նչ կլիներ այդ դժբախտների հետ, եթե Ավստրիան նորից գրավեր Լոմբարդիան։ Պ-ն ֆոն Թուգուտը որտե՞ղ բավականաչափ խավար բանտեր կգտներ նրանց համար, ովքեր հագել էին այդ համազգեստները՝ դերձակների, մահուդավաճառների և այլոց համար։ Ֆրանսիական գեներալներին հատկապես հուսադրեց այն, որ այդ հիանալի ազգային գվարդիայի հրամանատարն էր երկրի ամենանշանավոր մեծատոհմիկներից մեկը՝ դուքս Սերբելլոնին։ «Վիվա՛տ» բացականչությունները թնդացրին օդը, գեղեցկագույն կանայք կանգնած էին լուսամուտների մոտ. այդ հիանալի օրվա երեկոյան ֆրանսիական բանակը և Միլանի ժողովուրդն արդեն բարեկամներ էին։

Այն հավասարությունը, որ բռնապետությունը մտցնում է իր հպատակների մեջ, ժողովրդին մերձեցրեց ազնվականությանը։ Ընդ որում, իտալական ազնվականությունն ավելի շատ էր շրջվում Եբորդ դասի հետ, քան Ֆրանսիայի կամ Գերմանիայի ազնվականությունը։ Բուրժուազիայից նրան չէին բաժանում ատելի արտոնությունները, այնպիսիք, ինչպիսին է, օրինակ, ազնվականական ծագման ապացույցներ պահանջելը Ֆրանսիայում՝ սպայության աստիճան շնորհելու համար[1]։ Միլանում զինվորական ծառայություն չկար. լոմբարդցիները հարկ վճարելով ազատվում էին դրանից։ Վերջապես, Միլանի ազնվականությունը չափազանց լուսավորյալ էր։ Դրան էին պատկանում այնպիսի մար-

1 Պ-ն դը Սեգյուրի հրամանը 1784 թվականին։

դիկ, ինչպիսիք էին Բեկկարիան, Վերրին*, Մելցին և բազմաթիվ այլ նվազ նշանավոր, բայց նույնքան լուսավորյալ անձնավորություններ։ Միլանի ժողովուրդն ի բնե բարեհոգի է. ֆրանսիական բանակը քաղաք մտնելուց անմիջապես հետո ստացավ դրա յուրահատուկ ապացույցը. գյուղական շատ քահանաներ եղբայրանում էին զինվորների հետ։ Հաջորդ օրը բարձրաստիճան հոգևորականությունը նրանց խիստ նկատողություն արեց։

Այն նույն ժամանակ, երբ Նապոլեոնը հեռանում էր Լոդիից՝ հաղթականորեն Միլան մտնելու համար, նա Դիրեկտորիայից մի հրաման ստացավ, որը քիչ էր պատիվ բերում դրա անդամ՝ զորքերի տեղաշարժերը տնօրինող Կառնոյին։ Բանակը բաժանվում էր երկու մասի. Կելլերմանը* մի կեսի հետ, որն անվանվում էր Իտալական բանակ, պետք է հետևեր ավստրիացիներին Մինչիոյում. Բոնապարտը քսանհինգ հազար զինվորներով, որոնք կազմելու էին Հարավային բանակը, պետք է շարժվեր դեպի Հռոմ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դեպի Նեապոլ։ Իսկական դավաճանն էլ չէր կարող կոալիցիայի շահերի համար ավելի նպաստավոր հրաման տալ։ Ինչպե՞ս կարող էր Դիրեկտորիան չհասկանալ, որ ֆրանսիական զորքերն ստիպված կլինեն Ադիջեում մարտնչել ավստրիական կառավարության բոլոր ուժերի դեմ։ Ի՞նչ արժեք ուներ Միլանին տիրելը, քանի դեռ գրավված չէր Մանտուան։ Ամեն մի զորավար, նույնիսկ շատ ավելի հմուտը, քան Կելլերմանն է, երկու շաբաթում ետ կշպրտվեր դեպի Բոկետտա։ Բանակը բաժանել. մի՞թե դա անխուսափելիորեն չէր հանգեցնի Ֆոնտանի ճակատամարտի կրկնությանը։

Թող պատկերացնեն, թե ինչ պետք է զգար կրակոտ հոգուտեր այդ մարդը՝ նման տարօրինակ հրաման ստանալով։

Երիտասարդ զորավարը պատասխանեց հետևյալ նամակով.

«Լոդի, գլխավոր շտաբ,
IV տարվա ֆլորեալի 25 (1796 թվականի մայիսի 14)

Գործադիր Դիրեկտորիային։

Դիրեկտորիայի քաղաքացի անդամնե՛ր,

Ես հենց նոր ընդունեցի ամսույս 18-ին Փարիզից ձեր ուղարկած տուրհանդակին։ Ձեր հույսերն իրականացել են. ներկայումս ամբողջ Լոմբարդիան պատկանում է Հանրապետությանը։ Երեկ ես մի գիվիզիա ուղարկեցի Միլանի միջնաբերդը շրջապատելու

համար։ Բոլիեն իր բանակով գտնվում է Մանտուայում։ Նա կարգադրել է հեղեղել ողջ շրջակայքը. նա այնտեղ մահ կգտնի, քանի որ այդ վայրերն ամենավատառողջն են ամբողջ Իտալիայում[1]։

Բոլիեն դեռ մեծաթիվ բանակ ունի. նա արշավանքն սկսել է գերազանցող ուժերով. կայսրը նրան օգնության է ուղարկում տասը հազար մարդ, որոնք արդեն ճանապարհին են։ Ես խիստ անշրջահայաց եմ համարում Իտալիայում գործող բանակը երկու մասի բաժանելը։ Հանրապետության շահերին նույնքան հակառակ է դրա հրամանատարությունը երկու գեներալի հանձնարարելը։

Արշավանքը դեպի Լիվոռնո, Հռոմ և Նեապոլ դժվարին գործ չէ։ Դրան մասնակից դիվիզիաները պետք է էշելոններով դասավորվեն, որպեսզի հնարավոր լինի նահանջելիս գերակշռություն պահպանել ավստրիացիների նկատմամբ, որոնք, նվազագույն զորաշարժի դեպքում, կգտնվեն շրջապատման մեջ ընկնելու սպառնալիքի տակ։ Դրա համար ոչ միայն հարկավոր է, որ բանակը մի զորավար ունենա, այլ նաև ոչինչ չխանգարի այդ զորավարի տեղաշարժերին ու գործողություններին։ Ես արշավանքը վարել եմ առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու. ես ոչնչի չէի հասնի, եթե ստիպված լինեի հարմարվել մեկ ուրիշի կարծիքին։ Ես մի քանի անդամ հաղթանակ եմ տարել ուժերով ինձ գերազանցող հակառակորդի նկատմամբ, և դա՝ անհրաժեշտ ամեն ինչի լիակատար բացակայության դեպքում, քանզի, համոզված լինելով, որ դուք վստահություն եք տածում իմ նկատմամբ, ես գործում էի այնպես արագ, ինչպես մտածում էի։

Եթե դուք զանազան խոշընդոտներ հարուցեք իմ դեմ, եթե ես իմ յուրաքանչյուր քայլի մասին պետք է զեկուցեմ կառավարական կոմիսարներին, եթե նրանց իրավունք կտրվի փոխել իմ դիրքավորումները, ինձնից վերցնել կամ ինձ մոտ ուղարկել զորքեր, այլևս հաջողությունների մի՛ սպասեք։ Եթե ձեր ուժերի մասնատումով դուք թուլացնեք ձեր հնարավորությունները, եթե Իտալիայում խախտեք ռազմական մտքի միասնությունը, դուք (ես դառնությամբ եմ դա ձեզ ասում) կկորցնեք Իտալիային օրենքներ պարտադրելու ամենապատեհ առիթը։

---

1 Հեղափոխական ոճի արտահայտություն, որն անհրաժեշտ էր այն ժամանակ։ Ժողովուրդը զայրացած էր, և դրանում էր նրա ուժը։

Իտալիայում հանրապետական բանակների առկա վիճակի պայմաններում անհրաժեշտ է, որ դուք այնպիսի զորավար ունենաք, որին լիովին վստահեք. եթե դա ես չլինեմ, երբեք չեմ բողոքի. այն պաստում, որը դուք ինձ կվստահեիք, ես կկրկնապատկեի իմ ջանքերը, որպեսզի արժանանամ ձեր հարգանքին։ Ամեն մեկը պատերազմը վարում է յուրովի։ Գեներալ Կելլերմանն ավելի փորձառու է և ավելի լավ կվարի, քան ես, բայց երկուսով մենք այն շատ վատ կվարենք։

Ես կարող եմ հայրենիքին էական ծառայություններ մատուցել միայն այն դեպքում, եթե օժտված լինեմ ձեր լիակատար վստահությամբ։ Ես գիտեմ, մեծ արիություն է պահանջվում այս նամակը ձեզ գրելու համար. չէ որ այնպե՞ս հեշտ է ինձ մեղադրել փառամոլության և սնափառության մեջ։ Բայց ձեզ, որ միշտ հարգանքով եք վերաբերվել իմ հանդեպ, մի բան, որ իրավունք չունեմ մոռանալու, ես պարտավոր եմ արտահայտել իմ բոլոր զգացումները։

. . . . . .

. . . . . .

Որոշումը, որ դուք կընդունեք տվյալ պայմաններում, շատ ավելի կարևոր է ռազմական գործողությունների ընթացքի համար, քան այն տասնհինգ հազար զինվորները, որ կայսրն օգնության կուղարկեր Բոլիեին։

Բոնապարտ»։

Քանի որ այն ամենում, որ կշարադրվի այսուհետև, Լոմբարդիան և Միլանը կհանդիսանան այն բարոյական բազաները, որոնց վրա հենվելու է գեներալ Բոնապարտն իր գործողություններում, ես համարձակվում եմ հուսալ, որ ընթերցողն ինձ թույլ կտա իր ուշադրությունը մի պահ պահել այս հիանալի երկրի վրա։

1796 թվականի մայիսին ֆրանսիացիների քաղաք մտնելու պահին Միլանի բնակչությունը չէր անցնում հարյուր քսան հազար մարդուց։

Հոգ էին տարել զինվորներին հայտնելու (և նրանք դա կրկնում էին միմյանց), որ Միլանը հիմնադրել են օտոնցի գաղիացիները մ. թ. ա. 580 թվականին, որ այն բազմիցս կեղեքման են ենթարկել գերմանացիները և որ հանուն ազատության նրանց դեմ մղված պայքարում այն երեք անգամ ավերվել է։

Այս քաղաքի բնակիչներն այն ժամանակվա Իտալիայի ամենահեզաբարո մարդիկ էին. բարեհոգի միլանցիները, որոնք լոկ կյանքի բերկրանքի մասին էին մտածում, աշխարհում ոչ ոքի նկատմամբ ատելություն չէին տածում։ Այս տեսակետից նրանք խիստ տարբերվում էին իրենց հարևաններից՝ Նովարայի, Բերգամոյի և Պավիայի բնակիչներից։ Վերջիններս նույնպես հաղորդակցվել են քաղաքակրթությանն այն տասնյոթ տարիների ընթացքում, երբ նրանց կառավարել են խելացի մարդիկ, որոնք չեն ցանկացել նրանց ջղայնացնել։ Միլանի բնակիչները երբեք անտեղի շարիք չեն գործել։ Ավստրիան տիրել է այս հաճելի քաղաքին ու Լոմբարդիային միայն 1714 թվականից սկսած և, որ այժմ խիստ տարօրինակ կթվա, ամենևին չի ձգտել նրա բնակիչներին բթամիտներ դարձնել ու նրանց գոյությունը միայն ֆիզիկական պահանջմունքների հանգեցնել։

Կայսրուհի Մարի-Թերեզը Լոմբարդիան կառավարում էր խելացի ու մայրական բարեհոգությամբ։ Նա հիանալի օգնականներ ուներ՝ հանձին գեներալ-նահանգապետ կոմս Ֆիրմիանի։ Փոխանակ երկրի լավագույն մարդկանց բանտարկելու կամ աքսորելու, սա լսում էր նրանց խորհուրդները, դրանք քննարկում էր և կարողանում դրանց հետ համակերպվել։ Կոմս Ֆիրմիանը շարունակ շփվում էր մարկիզ Բեկկարիայի («Տրակտատ հանցագործությունների և պատիժների մասին» գրքի հեղինակի), կոմս Վերրիի, հայր Ֆրիզիի, պրոֆեսոր Պարինիի* և այլոց հետ։ Այս նշանավոր մարդիկ աշխատում էին Լոմբարդիայի կառավարման գործում կիրառել քաղաքատնտեսության և օրենսդրության այն հիմնական դրույթները, որոնք հայտնի էին 1770 թվականին։

Միլանի հասարակությանը հատուկ ողջամտությամբ ու բարությամբ է տոգորված կոմս Պիետրո Վերրիի «Միլանի պատմությունը»։ Ֆրանսիայում 1780 թվականի մոտերքը նման ստեղծագործություններ չէին տպագրում, և հատկապես՝ Ֆրանսիան այնպես չէր կառավարվում, ինչպես Լոմբարդիան։ Մեր այժմյան բարեկեցության մեջ մենք հաճախ ենք մոռացության տալիս այն հետապնդումները, որոնց ենթարկվել է Տյուրգոն, երբ ցանկացել է Ֆրանսիայի կոմունաների և առանձին նահանգների ներքին մաքսատների միջև հաստատված կառավարման մեջ մտցնել այն կա-

նոններից մի քանիսը, որոնք կոմս Ֆիրմիանը և մարկիզ Բեկկարիան հիմք են ընդունել Լոմբարդիան կառավարելիս։ Կարելի է ասել, որ այդ երկրում բռնապետությունն իրականացնում էին առավել լուսավորյալ մարդիկ, և հիրավի այն հետապնդում էր հպատակների ավելի մեծ բարեկեցություն։ Սակայն սկզբնական շրջանում ժողովրդի համար անսովոր էր բռնապետության այդ բարեհոգությունը, բռնապետություն, որը 1530 թվականից և Կարլոս V-ից սկսած Միլանում աչքի էր ընկնում այնպիսի՞ դաժանությամբ[1]։

Բեկկարիայի վիճակը, չնայած նրա հայացքների հաղթանակին, անվտանգ չէր. նա միշտ, և ոչ առանց հիմքի, վախենում էր այն ժամանակներում ահավոր Շպիլբերգն ընկնելուց։

Մեր ողջ ասածից հետևում է, որ քանի որ 1796 թվականի մոտերքը Լոմբարդիայում իշխանության որևէ խիստ շարաշահում չի եղել, այնտեղ հիմք չի եղել նաև արյունոտ ռեակցիայի՝ 1793 թվականի ոգուն համապատասխան տեռորի համար։

Հարկ է խոստովանել, որ բռնապետությունը խելոքացել է. նա սխալ է գործել՝ օգտվելով այնպիսի մարդկանց ծառայություններից, ինչպիսիք են Բեկկարիան և Պարինին[2]։ Առաջինի իմաստուն խրատների շնորհիվ, այն հիանալի դաստիարակության շնորհիվ, որ երկրորդի խնամակալությամբ ստացել են Միլանի բոլոր ազնվականներն ու հարուստ բուրժուազիան, նրանց իմաստուն կառավարման շնորհիվ Միլանի բնակիչները կարողացան գնահատել գեներալ Բոնապարտի կոչերի ողջ անկեղծությունը։ Նրանք անմիջապես հասկացան, որ երիտասարդ զորավարի իշխանության ներքո գիլիոտինը չի սկսի անդադար գործել հրապարակներում, ինչպես կանխագուշակում էին Ավստրիայի կողմնակիցները։ Ես մոռացա ասել, որ երբ 1793 թվականին բռնապետությունը վախ ազաց, վերադարձան նրա բոլոր հին սովորությունները, և նա ատելի դարձավ։

Այսպիսով, սկզբնական շրջանում հիացմունքն անկեղծ էր և

1 Տե՛ս Բեկկարիայի նամակները, որտեղ նա խոսում է իր սարսափների մասին։ Տե՛ս Մանձոնիի՝ «Sposi Promessi»-ում Միլանի կառավարման նկարագրությունը 1628 թվականին։

2 Տե՛ս Բեկկարիայի, Կուստոդիի, Ֆրիզիի կենսագրությունները Բետոնիի «Հարյուր մեծ իտալացիների վարքագրությունները» գրքում։

համընդհանուր։ Բացառություն էին կազմում միայն մի խումբ արիստոկրատներ և բարձրաստիճան հոգևոր անձինք։ Ավելի ուշ հիացմունքն սկսեց նվազել. պատճառը բանակի ծայրահեղ աղքատությունն էր։ Միլանի բարի ժողովուրդը չգիտեր, որ բանակի ներկայությունը միշտ էլ մեծ աղետ է։

Այլ կարծիքի են միայն սիրունիկ կանայք. նրանք ազատվում են տանջալի ձանձրույթից։ Չէ որ բանակը, որն ամբողջովին բաղկացած էր փառամոլությունից խսպառ զերծ երիտասարդությունից, ասես ստեղծված էր գլուխներ պտտեցնելու համար։ Պատահականության շնորհիվ, որը կրկնվում է միայն երկար տարիներ անց, այն ժամանակ Միլանում տասներկու-տասնհինգ բացառիկ գեղեցկության տեր կանայք կային. Իտալիայի ոչ մի քաղաքում քառասուն տարի ի վեր ոչ ոք չէր կարող մտաբերել գեղեցկուհիների նման հավաքածու։

Այդքան երկարատև ընդմիջումից հետո պատմելով այդ մասին, ես հույս ունեմ, ավա՜ղ, չափազանց հիմնավորված, որ չեմ խախտի քաղաքավարության կանոնները, եթե այստեղ խմբած հիշողություններ շարադրեմ այդ հմայիչ կանանցից ոմանց մասին, որոնց մենք հանդիպել ենք Casino della Città-ում և ավելի ուշ՝ Casa Tanzi-ի պարահանդեսներում։

Բարեբախտաբար, չափազանց գեղեցիկ այդ կանայք, որոնց որոշ դիմագծերն օտարերկրացիները կարող են գտնել Լեոնարդո դա Վինչիի «Հերոդոսուհիներ»-ում, բոլորովին անուսում էին, բայց դրա փոխարեն նրանց մեծամասնությունն աչքի էր ընկնում արտակարգ խելքով, ընդ որում՝ միանգամայն ռոմանական խելքով։

Առաջին իսկ օրերից բանակում խոսում էին այն տարօրինակ խենթության մասին, որ համակել էր գլխավոր հրամանատարի հրամանները հաղորդող և այն ժամանակ նրա սիրեցյալը համարվող գեներալին[1]։ Գեղեցկուհի իշխանուհի Վիսկոնտին սկզբում փորձում էր (այդպես են ասում) պտտեցնել իր իսկ՝ գլխավոր հրամանատարի գլուխը, բայց ժամանակին համոզվելով, որ դա հեշտ գործ չէ, նա բավարարվեց բանակի երկրորդ դեմքով, և, պետք է խոստովանել, նրա հաջողությունը կատարյալ էր։ Այդ

1 Մենք այդ միջադեպի մասին իմացանք «Ընդհանուր կենսագրությունից», հ. 58, «Ալեքսանդր Բերտիեն» հոդվածը։

մտերմությունը գեներալ Բերտիեի ողջ կյանքի միակ հետաքրքրությունն էր՝ մինչև մահ, որը վրա հասավ տասնինը տարի անց, 1815 թվականին։

Շուտով ասեկոսեներ տարածվեցին հարյուրավոր այլ, նվազ տևական, բայց նույնքան կրքոտ սիրային հափշտակությունների մասին։ Մի անգամ էլ հիշեցնենք, որ այն ժամանակ բանակում ոչ ոք չէր տառապում փառամոլությամբ. ես տեսել եմ սպաների, որոնք հրաժարվում էին առաջքաշումից, միայն թե չբաժանվեն իրենց գնդից կամ իրենց սիրուհուց։ Ինչքա՜ն շատ ենք մենք փոխվել։ Այժմ որտե՞ղ է այն կինը, որը կարող էր թեկուզ ռոպեական վարանումի հավակնություն ունենալ։

Միլանում այն ժամանակ գեղեցկուհիների թվում հիշատակում էին տիկին Ռուշեին՝ հետագայում Հանրապետության կառավարիչներից մեկը դարձած փաստաբանի կնոջը, բժշկի կին տիկին Պիետրա Գրուա Մարինիին, նրա բարեկամուհի, բարձր դասին պատկանող կոմսուհի Արե...-ին, հռոմեուհի տիկին Մոնտիին՝ ժամանակակից Իտալիայի մեծագույն բանաստեղծի կնոջը, տիկին Լամբերին, որի վրա ուշադրություն է դարձրել կայսր Ժոզեֆ II-ը և որը, արդեն տարիքն առած, դեռևս վայելչագեղության ու հմայքի տիպար էր և այդ իմաստով կարող էր մրցել նույնիսկ տիկին Բոնապարտի հետ։ Եվ որպեսզի այս թվարկումն ավարտեմ ամենահմայիչ էակի ու ամենագեղեցիկ աչքերի հիշատակումով, ինչպիսին երբևիցե առիթ եմ ունեցել տեսնելու, ես կանվանեմ, թերևս, բրեշիացի տիկին Ջերարդիին՝ գեներալներ Լեկկի եղբայրների քրոջը և դստերը բրեշիացի այն նշանավոր կոմս Լեկկիի, որի սիրո ու խանդի պատճառով գործած խենթությունները նույնիսկ Վենետիկում ուշադրություն էին գրավել։

Այդ նա է, որը մի անգամ զատկին, ծպտվելով իր սրբությամբ հայտնի մի կապուցինի փարաջայով և մորուք դնելով, թույլտվություն գնեց թաքնվելու նրա խոստովանարանում, որպեսզի լսի իր սիրուհու՝ մարկիզուհի Ս.-ի խոստովանանքը։ Այդ նա է, որը Վենետիկում, հանուն նույն մարկիզուհի Ս.-ի կատարած անլուր խենթությունների համար բանտարկվելով piombi-ում, վեց հազար ցեխին է պահ տվել բանտապետին, իսկ սա, նման գրավ ունենալով, նրան երեսունվեց ժամով ազատ է արձակել։ Բարեկամները նրա համար ձիեր էին պատրաստել. նա շտապեց Բրեշիա, ուր հասավ ձմեռային մի տոնական օր, կեսօրից հետո ժամը երեքին, երբ ժողովուրդը ժամերգությունից հետո դուրս էր գալիս եկեղեցուց։ Այնտեղ, ամբողջ քաղաքի աչքի առաջ նա մուշկետոնով՝ կրակեց մարկիզ N.-ի վրա, որը վատ կատակ էր խաղացել իր հետ, և սպանեց նրան։

Դրանից հետո նա ետ սլացավ Վենետիկ և անհապաղ վերադարձավ բանտ։ Երեք օր անց նա ունկնդրություն խնդրեց քրեական դատարանի նախագահ սենատորից։ Նա ընդունվեց և ըսկըսեց գանգատվել բանտապետի անասելի դաժան վարվեցողությունից։ Խստաբարո սենատորը կոմսին լսելուց հետո նրան հայտնեց, թե որքան էլ տարօրինակ է, Quarantia դատական կոլեգիան դիմում է ստացել, որի համաձայն նա մեղադրվում է սպանության մեջ։

— Ձերդ գերազանցությունը տեսնում է իմ թշնամիների չարությունը,— պատասխանեց կոմս Լեկկին՝ վարպետորեն ձևացրած հնազանդությամբ։— Ձերդ գերազանցությանը քաջ հայտնի է, թե մի շաբաթ առաջ ես որտեղ եմ եղել։

Մի խոսքով, կոմսին իտալական մայրցամաքի արիստոկրատիայի կողմից անչափ բարձր գնահատվող պատիվ վիճակվեց՝ խաբել Վենետիկի սենատի հիանալի ոստիկանությանը, և նա հաղթականորեն վերադարձավ Բրեշիա, որտեղից մի քանի օր հետո անցավ Շվեյցարիա։

Կոմս Լեկկիի աղջկա՝ կոմսուհի Ջերարդիի աչքերը, թերևս, ամենագեղեցիկն էին աչքերի գեղեցկությամբ փառաբանված ամբողջ Բրեշիայում։ Հոր պայծառ մտքի հետ նրա մեջ զուգակցվում էր սիրալիր զվարթությունը, անեղծ պարզությունը, որ երբեք չէր խեղաթյուրում անբնականության գեթ նվազագույն խառնուրդը։

Այդ հմայիչ կանանցից ոչ մեկը ոչ մի գնով չէր համաձայնվի ամեն երեկո չերևալ Արևելյան դարպասների ամրությունում այն ժամանակներում տեղի ունեցող Corso-ում։ Դա իսպանական հին ամրոց էր, որը քառասուն ոտնաչափ վեր էր խոյանում անտառ հիշեցնող և կոմս Ֆիրմիանի հրամանով շագանակենիներով բոլորապատված կանաչ հարթավայրի վրա։

Այդ ամրոցից քաղաքի ուղղությամբ բացվում է այգիների տեսարանը, իսկ ծառերից վեր բարձրանում է հետագայում «Բոնապարտեի վիլլա» կոչված սպիտակ մարմարակերտ, ամբողջո-

վին նրբացանց Միլանի հոյակապ տաճարը։ Այնպե՞ս համարձակորեն մտահղացված այս տաճարն աշխարհում մրցակիցներ չունի՝ բացի Հռոմի ս. Պետրոսի տաճարից, բայց ավելի ինքնատիպ է։

Միլանի շրջակայքը, եթե նայենք բոլորովին հարթ դաշտավայրի մեջտեղում վեր խոյացող իսպանական ամրոցներից, այնպես խիտ է ծառապատ, որ աչքի համար անթափանցելի համատարած անտառ է թվում։ Ամենազարմանալի պտղաբերության օրինակ հանդիսացող այս հարթավայրի ետևում մի քանի լյո տարածությունից երևում է ալպիական հզոր լեռնաշղթան, որի գագաթները նույնիսկ ամենաշոգ ամիսներին ձյունով են ծածկված։ Արևելյան դարպասների ամրությունից հայացքն ընդգրկում է Մոնտե Վիզոյից ու Մոնտե Ռոզից մինչև Բասսանոյի լեռները ձգվող այդ երկար լեռնաշղթան։ Ամենամոտ գագաթները Միլանից ընդամենը երեք լյո հեռավորության վրա են թվում, թեև իրականում հեռու են տասներկու-տասնհինգ լյո։

Շոգ ամառվա արտակարգ բերրիության և լեռների ձյունապատ գագաթների միջև եղած այդ հակադրությունն առաջացնում էր Իտալական բանակի զինվորների հիացական զարմանքը, որոնք երեք տարի շարունակ ապրել էին Լիգուրիայի լերկ ժայռերում։ Նրանք ուրախությամբ էին նայում Մոնտե Վիզոյին, որն այնպես երկար իրենց տեսադաշտում էր, իսկ հիմա ականատես էին, թե ինչպես արևը մայր է մտնում նրա ետևում։ Իրոք, ոչինչ չի կարող համեմատվել Լոմբարդիայի բնապատկերների հետ։ Հայացքը հաճույքով սահում է Ալպերի գեղեցիկ լեռնաշղթայի վրայով՝ ավելի քան վաթսուն լյո տարածություն անցնելով այն լեռներից, որ վեր են բարձրանում Տուրինի վրա, մինչև Կադորյան լեռները՝ Ֆրիուլում։ Այս դաժան, հավերժ ձյունապատ գագաթները ապշեցուցիչ հակադրություն են երանությամբ լի այն լանդշաֆտների, որ բացվում են ներքևում՝ հարթավայրում ու առաջին պլանում գտնվող բլուրներին, և ասես վարձահատույց են լինում այն անտանելի շոգի համար, որից մարդիկ փրկություն են փնտրում Արևելյան դարպասների ամրության վրա։ Իտալիայի հրաշալի արևի ճառագայթներում այդ սարերի ստորոտները, որոնց գագաթները պատած են շլացուցիչ ճերմակ ձյունով, մուգ ոսկեփայլ են թվում՝ ճիշտ ինչպես Տիցիանի բնանկարներում։ Մեզ՝ հյուսիսցիներիս համար անսովոր օդի թափանցիկության

շնորհիվ Ալպերի՝ Իտալիային նայող հեռավոր լանջերին գտնվող տնակներն այնպես պարզորոշ են երևում, որ կարծես գտնվում են ընդամենը երկու-երեք լյո հեռավորության վրա։ Տեղացիներն այդ տեսարանից հիացած երիտասարդ ֆրանսիացիներին ցույց էին տալիս Լեկկոյի սղոցը (Ռեձեգոն դը Լեկ) և ավելի հեռու դեպի արևելք՝ մի ընդարձակ ամայի տարածություն, Գարդա լճի զբաղեցրած լեռնային մի խոռոչ։ Հորիզոնի այս կետից երկու ամիս անց լավեց Լոնատոյի և Կաստիլիոնեի տակ որոտացող համազարկերի դղրդյունը, որին այնպիսի՞ տագնապով էին ականջ դնում Արևելյան դարպասների ամրությունում խռնված միլանցիները. չէ որ այնտեղ որոշվում էր իրենց ճակատագիրը։ Խոսքը ոչ միայն բոլոր այն հաստատությունների ճակատագրի մասին էր, որոնց հետ նրանք այն ժամանակ խանդավառ հույսեր էին կապում. նրանցից յուրաքանչյուրը միաժամանակ կարող էր իրեն հարց տալ. ո՞ր բանտը կնետեն ինձ, եթե ավստրիացիները վերադառնան Միլան։

Այդ ժամանակաշրջանում նրանց կրքոտ հրապուրանքը ֆրանսիացիներով՝ ծայր աստիճանի հասավ. նրանք բանակին ներեցին նրա բոլոր բռնագրավումները։

Բայց վերադառնանք Միլանի Corso-ին, որի հիանալի դիրքը մեզ ստիպեց տարվել նկարագրություններով։ Պետք է նկատի ունենալ, որ Իտալիայում անպարկեշտության գագաթնակետ է համարվում այսպես կոչված Corso-ում՝ կառքերով զբոսնելու վայրում չերևալը, որտեղ ամեն օր հանդիպում է աշխարհիկ ողջ հասարակությունը։ Մի շրջան կատարելով Corso-ում, բոլոր կառքերը շարվում էին մի դծի վրա և այդպես մնում կես ժամ։ Ֆրանսիացիներն անասելիորեն զարմանում էին այդ յուրատեսակ անշարժ զբոսանքը տեսնելով։ Ամենագեղեցիկ կանայք Corso էին գալիս բաստարդել կոչվող ցածրիկ կառքերով, որոնց մեջ նստած շատ հարմար է զբոսնողների հետ զրուցելը։ Կեսժամյա աշխարհիկ զրույցներից հետո, մթնշաղը վրա հասնելուն պես, Ave Maria-ի պահին, բոլոր կառքերը նորից ճանապարհ են ընկնում, իսկ այնուհետև տիկնայք, առանց կառքից իջնելու, պաղպաղակ են ճաշակում քաղաքի ամենանշանավոր սրճարանում. այդ ժամանակ նման սրճարան կար Corsia dei Servi-ում։

Ասված է վկա, որ այդ երիտասարդ բանակի սպաները Corso-ի ժամին ջանասիրաբար այցելում էին Արևելյան դար-

պասների ամրությունը։ Այնտեղ փայլում էին գլխավոր շտաբի սպաները. չէ որ նրանք գալիս էին ձի նստած և կարող էին մոտենալ տիկնանց կառքերին։ Ֆրանսիական բանակի գալուց առաջ Corso-ում երբեք երկու շարքից ավելի կառքեր չէին լինում. մեր ժամանակներում դրանք չորս, իսկ երբեմն էլ՝ վեց շարքով շարվում էին ամբողջ զբոսատեղի երկայնությամբ։ Նոր ժամանող կառքերը մանրավաղքով այդ վեց շարքի միջանցումով կատարում էին սահմանված շրջանը։

Հետևազորի սպաները, որոնք հնարավորություն չունեին ներթափանցելու այդ լաբիրինթոսը, անիծում էին հեծյալներին, իսկ հետո գնում նստոտում մոդային սրճարանի առջև. այստեղ նրանք կարող էին զրուցել ծանոթ տիկնանց հետ, մինչ սրանք պաղպաղակ էին ուտում։ Շատերն այդ կարճատև զրույցից հետո գիշերն էին վերադառնում իրենց զորամասերը, որոնք հաճախ գտնվում էին Միլանից հինգ-վեց լյո հեռու։

Ո՛չ մի պարգև, ո՛չ մի առաջքաշում նրանց աչքին չէր կարող համեմատվել իրենց համար այնքա՜ն նոր այս ապրելակերպի հետ։ Միլանից նրանք իրենց կացարաններն էին վերադառնում բարեկամներից ինչ-որ մեկի տրամադրած սեղիոլով։ Սեդիոլը երկու շատ բարձր անիվներով կառք է, որին լծված նիհար, արագավազ ձին հաճախ ժամում երեք լյո է անցնում։

Այդ ուղևորությունները, որ սպաները կատարում էին առանց թույլտվության, հավասարակշռությունից հանում էին Միլանում գտնվող գլխավոր շտաբին և քաղաքի պարետ գեներալ Դեպինուային։ Զորամասերում շարունակ հրամաններ էին փակցվում, որոնք անհանգիստ սպաներին սպառնում էին աստիճանազրկումով։ Բայց նրանք ոչ մի ուշադրություն չէին դարձնում այդ հրամաններին։ Դիվիզիայի հրամանատար գեներալները, բացառությամբ ծերունի Սերյուրիեի, այդ բացակայություններին մատների արանքով էին նայում։ Մի այլ սպա ձիով տասը լյո էր կտրումանցնում, որպեսզի երեկոն անցկացնի Լա-Սկալա թատրոնում՝ ծանոթ տիկնոջ օթյակում։

1796 թվականի այդ ամռանը, որը, երկամյա զրկանքներից և Սավոնայի մոտ գտնվող ժայռերի մեջ անգործ մնալուց հետո, վտանգների ու բավականությունների հիանալի զուգակցումով հմայում էր բանակը, Միլանից ամենահեռու գտնվող գնդերի սպաներն իրար հանդիպում էին Corsia dei Servi-ի սրճարանի

մոտ։ Շատերը, չունենալով գնդապետի տված և բրիգադի հրամանատարի վավերացրած անցաթղթեր, իրենց սեղիոլը թողնում էին քաղաքի դարպասների մոտ և ներս մտնում իբրև զբոսնողներ։ Պաղպաղակից հետո տիկնայք մի ժամով գնում էին տուն, թերևս, որևէ հյուր ընդունելու, իսկ հետո նորից էին հայտնվում Լա-Սկալայի իրենց օթյակներում։ Դրանք, ինչպես հայտնի է, հյուրասենյակներ էին, որտեղ յուրաքանչյուր տիկին միաժամանակ ընդունում էր ութ, իսկ երբեմն էլ տասը ծանոթ։ Ֆրանսիացի ամեն մի սպա մուտք ուներ մի քանի օթյակ։ Իսկ ամենաամոթխածները և խելահեղորեն սիրահարվածները, այդ բախտը չունենալով, մխիթարվում էին նրանով, որ զբաղեցնում էին պարտերում լավ ընտրված և միշտ անփոփոխ տեղը, որտեղից այդ քաջարի մարտիկներն իրենց պաշտամունքի առարկային էին ուղղում հույժ հարգալից հայացքներ։ Եթե ի պատասխան այդ հայացքների տիկինը հեռադիտակը հեռացնող կողմով էր մոտեցնում աչքերին, սպան իրեն շատ դժբախտ էր զգում։ Մի՞թե ուղածդ սխրանքի ընդունակ չէր այն երիտասարդների բանակը, որոնց հաղթանակը ոգևորում էր նման խենթություններ անելու։

Ուրբաթ օրերը, երբ Իտալիայում, ի հիշատակ Քրիստոսի տանջանքների, թատրոնները փակ են լինում, աշխարհիկ հասարակությունը հավաքվում է Casino dell' alberga della Città (Corsia dei Servi)-ում. այնտեղ տեղի էին ունենում պարահանդեսներ և Conversazioni-ներ։

Պետք է խոստովանել, որ մի քանի օր անց բանակի համբավը քիչ նվազեց. ֆրանսիացիների գալու պահին Միլանի գրեթե բոլոր շիշիսբեյներն[1] առիթ գտան գանգատվելու։

Շիշիսբեյների մոդան վերացվեց միայն 1809 թվականի մոտերքը՝ մի շարք բարոյական կարգի միջոցառումների օգնությամբ, որ իրականացվեց Իտալիայի թագավորի բռնատիրության կողմից։ Տիկնոջ և շիշիսբեյի միջև եղած կապերը ֆրանսիացիների համար զարմանքի մի ավելորդ առիթ էին. հաճախ նման կապերը տևում էին տասնհինգ-քսան տարի։ Շիշիսբեյն ամուսնու լավագույն բարեկամն էր, որը, իր հերթին, նույնպիսի պարտականություններ էր կատարում մեկ ուրիշի տանը։

---

[1] Իտալիայում (գերազանցապես 18 դ.) արամբի կնոջ մշտական ուղեկից։

Շատ ժամանակ անցավ, մինչև որ ֆրանսիացի սպաները գլխի ընկան, որ միլանցի ամուսնու ինքնասիրությունը ոչ միայն չի տուժում չիչիսբեյի կողմից իր կնոջը ցույց տրված ուշադրությունից, այլ, ընդհակառակը, այդ ինքնասիրությունը սաստիկ խոցված կլիներ, եթե կինը նման երկրպագու չունենար։

Այդ չափազանց տարօրինակ թվացող սովորությունը սկիզբ է առնում մի շատ լուրջ ժողովրդից՝ իսպանացիներից, որոնք իշխել են Միլանում 1526 թվականից մինչև 1714 թվականը։ Անթույլատրելի էր համարվում, որ իսպանուհին եկեղեցի գնա իր ամուսնու ուղեկցությամբ. դա կվկայեր աղքատության կամ, առնվազն, հասարակության մեջ ունեցած ցածր դիրքի մասին. հարկ է, որ ամուսինը կարևոր գործերով զբաղվեր։ Տիկինը պետք է հենվեր զինակրի ձեռքին։ Այդ պատճառով էլ բուրժուական շրջաններում, որտեղ զինակիրներ չկային, որևէ բժիշկ խնդրում էր բարեկամ-փաստաբանին իր կնոջն ուղեկցել հասարակական վայրեր, իսկ բժիշկը, իր հերթին, ուղեկցում էր փաստաբանի կնոջը։ Ջենովայի ազնվական ընտանիքներում ընդունված էր, որ ամուսնական պայմանագրում մտցվի ապագա չիչիսբեյի անունը։ Շուտով լավ վարվելակարգ դարձավ ամուրի չիչիսբեյ ունենալը, և այդ դերն անցավ ազնվական ընտանիքների կրտսեր որդիներին։ Աստիճանաբար այդ սովորությանը խառնվեց սերը, և կինն ամուսնությունից մեկ թե երկու տարի հետո սկսեց իր ամուսնու ընտրած տան բարեկամին փոխել իր ճաշակի կավալերով։

Կալաբրիայում մեր օրերում ընտանիքի մեջ ամենախելացին քահանա է ձեռնադրվում. նա կարիերա է անում և իր եղբայրներից մեկին ամուսնացնում այն աղջկա հետ, որն անձամբ իրեն դուր է գալիս։ Երիտասարդ կինը հետագայում համարձակվի չիչիսբեյ ընտրել ամուսնու ընտանիքից դուրս, հանդուգն օտարի համար պատրաստ է դիպուկ կրակոցը։

Ես հարկ համարեցի բացատրել այս խիստ սովորությունն այն պատճառով, որ դեպի Նեապոլ կատարած մեր արշավանքի ժամանակ այն առնվազն երկու հարյուր ֆրանսիացի սպայի կյանք խլեց։

Չիչիսբեյը Լոմբարդիայում լայնորեն տարածված երևույթ էր, երբ ֆրանսիական բանակը 1796 թվականի մայիսին մտավ այնտեղ, և տիկնայք դա պաշտպանում էին որպես ինչ-որ մի հույժ բարոյական բան։ Այն պարտավորությունը, որ ստանձնում է չիչիսբեյը, տևում է երեք-չորս տարի, իսկ հաճախ էլ՝ տասնհինգ-

քսան տարի։ Երկար է տևում, բայց ամեն րոպե կարող է լուծարկվել։ Անհամեմատ ավելի դժվար կլիներ բացատրել միլանցիների բարքերի անբասիր բնականությունը, զարմանալի պարզությունը։ Հյուսիսային Ֆրանսիայում ամեն մի բացատրություն միանգամայն անհասկանալի կամ նույնիսկ զայրացուցիչ կթվար։ Ճաշակով մարդիկ այդ բարքերի մասին որոշակի պատկերացում կստանան որոշ կոմիկական օպերաների լիբրետոներից. օրինակ՝ «Prova d'una opera seria»-ի առաջին տեսարանից կամ «Cantatrici Villane»-ի մի քանի տեսարաններից։

Լավ հասարակությունը գրեթե ամենուր նման է ժողովրդին. նա սիրում է որևէ կառավարություն՝ միայն մի այլ կառավարության նկատմամբ ունեցած ատելությունից։ Դա չի՞ նշանակում արդյոք, որ կառավարությունն անհրաժեշտ չարիք է։ Միլանի բարձրաշխարհիկ հասարակությունն այնպիսի զզվանք էր տածում հաստամարմին էրցհերցոգի նկատմամբ (որը, ըստ պատմածների, գաղտնի զբաղվում էր ցորենի առևտրով՝ հարստանալով անբերրիությունից կամ էլ արհեստական հացի պակաս ստեղծելով), որ խանդավառությամբ ընդունեց ֆրանսիական բանակին, որն այդ հասարակությունից պահանջում էր ձիեր, կոշիկ, հագուստ, միլիոններ, բայց թույլ էր տալիս նրան կառավարվելու ըստ իր հայեցողության։ Մայիսի 16-ից սկսած ամենուր էրցհերցոգ-փոխարքային պատկերող ծաղրանկարներ էին վաճառում. նա արձակում է տրեզակարով բաճկոնը և այնտեղից ցորեն է թափվում։ Ֆրանսիացիներին այդ նկարը միանգամայն անհասկանալի էր։

Նրանք Միլան էին եկել այնպես գջլտված, սպիտակեղենի ու հագուստի այնպիսի կարիքի մեջ, որ նրանցից միայն շատ քչերն էին համարձակվում իրենց պճնամոլի (այս բառի վատ իմաստով) նման պահել։ Նրանք ընդամենը սիրալիր էին, ուրախ և շատ ձեռներեց։

Եթե միլանցիները խենթացել էին հիացմունքից, ապա ֆրանսիական սպաները խենթացել էին երջանկությունից, և այդ արբեցումը շարունակվեց մինչև բաժանման պահը։ Անձնական հարաբերությունները նույնպես շարունակվեցին ընդհուպ մինչև ֆրանսիացիների հեռանալը, ընդ որում երկու կողմից էլ հաճախ անձնազոհություն էր դրսևորվում։ Երբ 1800 թվականին Մարենգոյից հետո բանակը վերադարձավ Միլան, որոշ զինվորականներ,

որոնց ուզում էին եա կանչել Ֆրանսիա, խենթություն ունեցան պաշտոնաթող լինելու՝ դերադասելով աղքատության մեջ ապրել Միլանում, քան հեռու գտնվել իրենց երկրպագության առարկայից։

Այստեղ տեղին է կրկնել (քանի որ դա տարօրինակ կերպով հակասում է կոնսուլության կողմից բանակում պատվաստված ոգուն), որ Միլանում դժվար էր գտնել թեկուզ երկու տասնյակ կրտսեր սպաներ, որոնց մեջ աստիճանները փառամոլական ցանկություններ առաջացնեին։ Նրանցից ամենապրոգռեսիվները հիացմունքից իրենց կորցնում էին, երբ հաջողվում էր մաքուր սպիտակեղեն և նոր լավ կոշիկներ ստանալ։ Նրանք բոլորն էլ երաժշտություն էին սիրում. շատերը, ինչպես արդեն ասվեց, մի ամբողջ լյո քայլում էին անձրևի տակ, միայն թե ընկնեին Լա-Սկալայի պարտերը։ Կարծում եմ, որ նրանցից ոչ ոք, ինչպիսի գռեհիկ, փառամոլ և շահամոլ մարդ էլ որ դարձած լինի հետագայում, չի մոռացել Միլանում իր գտնվելը։ Դա գեղեցիկ երիտասարդության լավագույն պահն էր։ Եվ այդ համընդհանուր երանությունն անդրադարձել էր բանակի ոգու վրա. այն տխուր վիճակում, որի մեջ նա գտնվում էր Կաստիլիոնեի, Արկոլեի նախօրյակին, բոլորը, բացի գիտնական-սպաներից, այն կարծիքին էին, որ հարկավոր է անել անհնարինը, միայն թե չհեռանալ Իտալիայից։

Սպասելով Դիրեկտորիայի որոշմանը (իսկ նա կարող էր այնպիսի կուրություն դրսևորել կամ էլ այնպիսի նախանձով համակվել երիտասարդ գեներալի փառքի նկատմամբ, որ կհամաձայնվեր ընդունել նրա հրաժարականը և նրան փոխարինել Կելլերմանով, Մորոյով կամ Ժուրդանով), Նապոլեոնը որոշեց փորձել Բոլիեին ետ շպրտել դեպի Տիրոլ։

Զորքերին ուղղված կոչով, որտեղ իր զինվորների մասին խոսում էր այնպիսի արտահայտություններով, որոնք ընդունակ էին կրկնապատկելու նրանց ավյունը, նա նրանց խոսակցությունների սնունդ տվեց, իսկ դա շատ կարևոր է Ֆրանսիայի երիտասարդ հայրենասերների համար։

Եթե այդ կոչը լավ է ազդել բանակի վրա, ապա է՛լ ավելի լավ ազդեցություն է գործել թշնամու վրա։ Ստորագրված լինելով այն նույն մարդու կողմից, որը հենց նոր էր անցել Լոդիի կամուրջը և գրավել Միլանը, դա Հռոմում և Նեապոլում սկիզբ դրեց ֆրանսիացու անվան հետ կապվող այն սարսափին, որն այնուհետև Նապոլեոնի շնորհիվ անչափ երկար է իշխել այնտեղ։

Գլխավոր հրամանատարի հրամանով սկսվեց Միլանի միջնաբերդի պաշարումը. դրա համար օգտագործվեցին Ալեսսանդրիայից և Տորտոնից բերված ծանր թնդանոթները։ Նապոլեոնն իր բանակը շարժեց դեպի Մինչո, իսկ ապա մայիսի 24-ին մեկնեց Լոդի։

Բայց այդ օրը բանակի թիկունքում, Պավիային հարևան բոլոր գյուղերում տագնապի ահազանգ հնչեց, և բուն Պավիան գրավվեց կղերի դրդմամբ մոլեռանդությամբ տարված տաս հազար գյուղացիների կողմից։ Եթե գլխավոր հրամանատարը նվազագույն չափով վարաներ, խռովությունը կընդգրկեր ամբողջ Լոմբարդիան։ Իսկ ինչե՞ր ասես, որ չէր անի պիեմոնտական բանակը, եթե ապստամբությունը հաջողվեր։

Ֆրանսիական կիսաբրիգադներն արդեն արշավի էին ելել և արագ հեռանում էին Պավիայից։ Քահանաները պետք է ապրստամբությունը երեք-չորս օր հետաձգեին՝ մինչև ֆրանսիական զորքերի առաջին ընդհարումները Բոլիեի զորքերի հետ։

Այս անակնկալի դեմ-հանդիման Նապոլեոնը նույնպիսի զարմանալի հատկություններ դրսևորեց, ինչ իր ամենափայլուն ճակատամարտերի ժամանակ։ Իր բանակի ընդհանուր առաջխաղացումը չընդհատելով, նա գրոհով գրավեց Պավիան և պատժեց խռովարարներին։

Կա մի պարտականություն, որի հիշատակումն իսկ կարող է դաժան թվալ։ Գլխավոր հրամանատարը պետք է երեք մարդ գնդակահարի, որպեսզի շորսի կյանքը փրկի։ Ավելին, որպեսզի փրկի իր զինվորներից մեկի կյանքը, նա պետք է գնդակահարի շորս թշնամու։ Բայց, մյուս կողմից, ավստրիական գործակալները և քահանաները, փորձելով ոտքի հանել Լոմբարդիան, շատ ճիշտ են վարվել։ Ափսոս, որ ֆրանսիացիները 1814 և 1815 թվականներին այդպես չգործեցին պրուսացիների, ավստրիացիների, ռուսների և այլոց դեմ։

Գթասրտությունը Պավիայում հանցագործություն կլիներ բանակի հանդեպ. այն հող կնախապատրաստեր սիցիլիական նոր Բրիկնային ժամերգության* համար։ Պավիայի ֆրանսիական կայազորի պարետը, ինչպես նաև քաղաքային խորհրդի անդամները գնդակահարվեցին։ Պավիան հանգստացնելու համար Նապոլեոնն

այնտեղ ուղարկեց Միլանի արքեպիսկոպոսին. դա շատ զվարճալի է։

Նապոլեոնն իմացավ, որ Դիրեկտորիան հաշտություն է կնքել Սարդինիայի թագավորի հետ։ Հաշտությունը շատ օգտակար էր, բայց բանակցությունները վարվում էին անհավատալի անշնորհքությամբ, ավելի ճիշտ՝ երեխայական ցասումով՝ ընդդեմ միապետների։ Հարկավոր էր Սարդինիայի թագավորին խոստանալ Լոմբարդիայի մի մասը և նրանից շորս-հինգ գունդ ստանալ, որոնք հենց որ միանային բանակին, իրենց խանդավառությամբ կսկսեին մրցակցել ֆրանսիական կիսաբրիգադների հետ։

Բոլիեն գրավում էր Մինչո գետի ափերը, որի արագ ընթացքը Պեսկիերայի և Մանտուայի միջև բավական ուժեղ արգելք է հանդիսանում։ Աջ թևով նա հենվում էր Պեսկիերային, Գարդա լճին և լիճը հյուսիսից շրջապատող ու Տիրոլյան Ալպերին հարող բարձր լեռներին, ձախով՝ Մանտուայի ամրոցին, որն այսուհետև պետք է բարոյական կենտրոնի նման մի բան դառնար Իտալիայում տեղի ունեցող բոլոր ռազմական գործողությունների համար։

Բանակը ցանկանում էր անցնել Մինչոն, բայց անմտություն կլիներ գրոհել երկու ամրոցների պաշտպանության տակ գտնվող թևերի վրա։ Բոնապարտը որոշեց հարվածն ուղղել կենտրոնին, բայց միևնույն ժամանակ մտադիր էր շարունակ անհանգստացնել Բոլիեին՝ Պեսկիերայի մերձակա մատույցներում։ Այդ ամրոցի թնդանոթների փողաբերանների տակ էին գտնվում այն ճանապարհները, որոնցով Բոլիեն կարող էր նահանջել դեպի Տիրոլ, և Ավստրիայի հետ հաղորդակցության ուղիները։

Մինչ Նապոլեոնը հնազանդեցնում է Պավիան և պատրաստվում նոր ճակատամարտի, արժե մի պահ մտորել այն ապրումների մասին, որ տիրել էին նրա հոգուն, որն օժտված էր այնքա՜ն կրակոտ գյուրազգացությամբ և այնքա՜ն անընդունակ էր ցրվածության, ով ահա, իբրև պարգև այն բոլոր գրեթե անհավատալի հաղթանակների, որոնք, կարելի է ասել, փրկեցին Հանրապետությունը, Դիրեկտորիան նրան դրել է հրաժարական տալու անհրաժեշտությա՜ն առջև։ Եվ ծանուցումը, որ հրաժարականն ընդունված է, կարող էր ստացվել բոպե առ բոպե։ Չէ որ Նապոլեոնի նամակն ուղարկվել էր մայիսի 14-ին։ Հարկավոր էր իմանալ, թե ինչ փութորիկներ էին անընդհատ հուզում այդ կրակոտ հոգին՝ պատկերացնելու համար դրա մեջ ծնունդ առնող այն կրքոտ մտահղացումների թեկուզ նվազագույն մասը, որոնց հաջորդում էին լիակատար վհատության ու զզվանքի բռնկումները, որոնք տակնուվրա էին անում այդ զուտ իտալական խառնվածքը։ Այս խոսքն ասելով, որը սակավ հասկանալի է նրանց, ովքեր չեն ապրել Իտալիայում, ես նկատի ունեմ Վաշինգտոնի, Լաֆայետի կամ Վիլհելմ III*-ի խոհուն, ողջամիտ հոգիներին միանգամայն հակադիր մի հոգի։

Մայիսի 30-ին Բոնապարտն իր գլխավոր ուժերով ժամանեց Բորգետտո։ Մինչոյի ձախ ափին գտնվող հակառակորդի առաջապահ ջոկատը ետ շպրտվեց և գետի մյուս ափը նահանջեց Բորգետտոյի կամրջով, որի մի հենամեջը հրկիզեց իր ետևից։ Անհապաղ հրաման տրվեց վերանորոգել կամուրջը։ Բայց թշնամու ռումբերի տակ այդ աշխատանքը դանդաղ էր առաջ գնում։ Մոտ հիսուն գրենադերներ կորցնում են համբերությունը։ Հրացանները գլխներից վեր բռնած, այդ քաջերը նետվում են Մինչոյի ջուրը հասնում է մինչև ուսերը։ Ավստրիացիներին թվաց, թե իրենց առջև նորից այն նույն ահեղ զորաստյունն է, որը հարձակվել էր Լոդիի կամրջի վրա։ Նրանք սասանվեցին, սկսեցին նահանջել դեպի Տիրոլ տանող ճանապարհը և այլևս մտքներով չանցկացրին ֆրանսիական բանակին խանգարել անցնելու Մինչոն։

Բոլիեն փորձեց ամրանալ Վիլլաֆրանկայի և Վալեջոյի արանքում գտնվող բարձունքներում, բայց իմանալով, որ Օժերոյի դիվիզիան առաջ է շարժվել դեպի Պեսկիերա, հաշվեց, որ ֆրանսիացիները, թերևս, իրենից ավելի շուտ կգրավեն Ադիջեի հովիտը և Ռիվոլիի սարահարթը՝ այդպիսով իրեն կտրելով Տիրոլից։ Նա անհապաղ նահանջեց Ադիջեից այն կողմ և Դոլչեի աջ ափի երկայնքով բարձրացավ մինչև Կալյանո։

Այս գեղեցիկ հարձակման եռուն պահին գլխավոր հրամանատարը քիչ էր մնացել, որ գերվի Վալեջոյում։ Դա նրա ռազմական կարիերայի շատ անմիտ վախճանը կլիներ։ Նահանջելով, Բոլիեն Մանտուայում թողեց տասներեք հազար մարդ։

ԳԼՈՒԽ VIII

Նապոլեոնը շատ լավ էր հասկանում, որ քանի դեռ Մանտուան գրավված չէ, կարելի կլինի ասել, որ ֆրանսիացիներն անցել են Իտալիայով մեկ, բայց չեն նվաճել։ Ավելի հեշտ բան չէր կարող

լինել, քան Բոլիեի զինվորներին հետապնդելը. նրանք այն աստիճան ընկճված էին իրենց պարտության հանկարծակիությունից ու արագությունից, որ ֆրանսիական մի գումարտակ առանց տատանվելու գրոհելով փախուստի էր մատնում հակառակորդի երեք գումարտակի։ Չնայած այդ հսկայական գերազանցությանը, որն անխուսափելիորեն կկորավեր, եթե դրանից ժամանակին չօգտվեին, Նապոլեոնը բավականաչափ ուժեղ չգտնվեց, որպեսզի նետվի Ավստրիայի խորքերը, քանի դեռ Հռենոսյան բանակը Հռենոսի մյուս ափին էր։

Այժմ, 1837 թվականին, Եվրոպայի բոլոր քաղաքակիրթ երկրների գյուղացիները և հասարակ մարդիկ քիչ թե շատ հասկացան, որ ֆրանսիական հեղափոխությունը ձգտում էր իրենց սեփականատերեր դարձնել, և դա նրանց համար հասկանալի դարձավ Նապոլեոնի շնորհիվ։ 1796 թվականին նրանց մտքերի վրա իշխում էին քահանաներն ու ազնվականները և նրանք խորապես հակված էին զայրանալու պատերազմից անրաժան ճնշումներից ու մանր անարդարություններից։ Այդ ժամանակներում ֆրանսիական բանակն ստիպված էր ջանադրությամբ պաշտպանել իր թիկունքային զորամասերը, որպեսզի իր աչքի առջև չսպանեին հիվանդներին ու ետ մնացած զինվորներին։ Նման կարգի մանր հոգսերը խիստ ջղայնացնում էին Նապոլեոնին և, ճիշտն ասած, նա այդ գործից շատ վատ էր գլուխ հանում։ Նրան պարտիզանների փորձված պարագլուխ էր հարկավոր, որը հետևեր թիկունքային զորամասերի անվտանգությանը և խստորեն պատժեր սպանությունները։

Լոմբարդիայում, որտեղ ֆրանսիացիները խոշոր բուրժուազիայի և ազնվականության զգալի մասի կողմից այնքան սիրալիր էին ընդունվել, գյուղացիները և հասարակ մարդիկ հենց նոր էին ապացուցել Պավիայում, որ իրենք բոլորը չէ, որ միատեսակ են նայում իրենց այսպես կոչված ազատարարներին։ Սարդինիայի թագավորը, Պարմի և Մոդենի դքսերը զենքը վայր դրեցին, բայց լրտեսների հաղորդումները ոչ մի կասկած չէին թողնում, որ նրանք պատրաստ են առաջին իսկ լուրջ անհաջողության դեպքում հարձակվել ֆրանսիացիների վրա։ Հռոմի կուրիան, որի իշխանության նկատմամբ ոտնձգություններ էին անում սահմանազիր ժողովի դեկրետները, նույնիսկ չէր փորձում թաքցնել իր կատաղի չարությունը։ Նեապոլը կարող էր օգնություն ցույց տալ նրան, և

որ ավելի կարևոր է, Կորսիկան գրաված անգլիացիները կարող էին վեց հազար մարդ իջեցնել Չիվիտա-Վեկկիայում կամ Անկոնում, քսան հազար իտալացի զինվոր հավաքել և օգնության գնալ Մանտուային կամ գոնե գրավել Պոյի աջ ափը։

Նապոլեոնն ուներ քառասունհինգ հազար զինվորից ոչ ավելի։ Մանտուայում կանգնած էր ավստրիական քսան հազարանոց կայազորը։ Բոլիեն, որը միացել էր տիրոլցիներին, երեսուն հազար մարդ ուներ Ադիջեի հովտում, և երեսուն հազար կոփված զինվոր էլ Հռենոսից գնում էին դեպի Ինսբրուկ՝ զորացնելու նրա բանակը։

Եթե Վենետիկում թեկուզ մեկը գտնվեր, որը նման լիներ այն մարդկանց, որոնց նա առատորեն ծնունդ էր տվել 1500 թվականի կողմերը, Անյադելլոյի ճակատամարտի ժամանակ, Վենետիկի հանրապետությունը նույնիսկ միայնակ բավականաչափ ուժեղ կլիներ ավստրիական զորքերի գերակշռությունն ապահովելու և Իտալիան ֆրանսիացիներից ազատագրելու համար։ Իսկ պատերազմի համար նա փաստարկներ ուներ, ընդ որում՝ բավականաչափ ծանրակշիռ. մի՞թե ֆրանսիացիները չէին զավթել Պեսկիերան և Վերոնան։ Մի՞թե ֆրանսիական բանակը չէր ապրում բնամթերքի բռնագրավումներով, որ խիստ ծանրացած էին բնակիչների վրա, որոնք երբեմն, փրկագին տալով, ազատվում էին դրանցից՝ պարենի մատակարարումը հանձնարարելով հրեաներին։

Բայց Մորեան կորցնելուց հետո, որը մոտ 1500 թվականին հանձնվել է թուրքերին, Վենետիկի արիստոկրատիան, այլևս եռանդի կարիք չունենալով, անձնատուր եղավ երանության։ Այդ հաճելի քաղաքը Եվրոպայում վայելքների կենտրոն դարձավ։ Այն ժամանակ, երբ Փարիզը դեռևս իրենից առևտրականների և մեկը մյուսին կողոպտող զինվորների մի բավական հետամնաց խառնամբոխ էր ներկայացնում[1], Վենետիկում արդեն կարողանում էին ճաշակով զվարճանալ։ Մինչև Լյուդովիկոս XIV-ի թագավորությունը Վենետիկը Եվրոպայի այն քաղաքն էր, որտեղ ապրելն ամենահաճելին էր։ Այն քաղաքացիները, որոնք բացահայտ չէին կշտամբում կառավարությանը, օգտվում էին շատ ավելի մեծ ազատությունից, քան Փարիզի քաղաքացիները 1715 կամ

---

[1] Բասոմպիերի՝ «Նոթերը», Կարգինալ Բեմբոյի՝ և Արետինոյի՝ նամակները։

նույնիսկ 1740 թվականներին։ Վենետիկում Unigenitus բուլլայի՞ նման ոչինչ չի եղել, և քահանաներն այնտեղ ոչ մեկի նկատմամբ չէին կարող հալածանքներ հրահրել։ Վենետիկի հանրապետությունն արիություն ունեցավ Հռոմի կուրիայի դեմ առաջադրելու շնորհաշատ մի մարդու՝ Ֆրա Պաուլո Սկարպիին, որին Փարիզում կրանտարկեին Բաստիլում[1]։

Երբ գեներալ Բոնապարտի ներխուժումը սարսափեցրեց Իտալիայի մանր իշխաններին, Վենետիկում միայն մի եռանդուն մարդ գտնվեց՝ պրոկուրատոր Պեձարոն։ Ճիշտ է, որ բոլոր սենատորներին, բոլոր ազդեցիկ ատիճանավորներին այդ յուրօրինակ մարդը միայն նախանձ ու չարություն էր ներշնչում։ Վենետիկի արիստոկրատները, անշուշտ, ամենաազուրեկաններն էին, բայց, թերևս, նաև ամենաաղքատամիտները բոլոր նրանցից, ովքեր իրենց զայրույթն էին ուղղում ֆրանսիական հեղափոխության դեմ։ Չէ որ նրանք չէին կարող անգլիական պերերի կամ ֆրանսիական արիստոկրատների նման գնել ստորին դասակարգերի ծնունդ ականավոր մարդուն և նրան ընդունել իրենց գիրկը։ Հարցրեք, թե քանի տարեկան հասակում ինչ անուն են ունեցել անգլիական բոլոր այն պերերը, որոնք եռանդ էին ցուցաբերում Նապոլեոնի դեմ մղվող պայքարում, և տեսեք, թե Ֆրանսիայում ո՞վ է պաշտպանում արիստոկրատիային։

Ֆրանսիական զորավարը, որն իր առատորեն վարձատրած լրտեսներից հիանալի իրազեկ էր ամեն ինչին, գիտեր, թե որքան փոքրոգի է Վենետիկի կառավարությունը, բայց զգուշությունը

[1] Այս ամենի մասին կարելի է հազար ապացույց գտնել կոմս Դարյուի «Վենետիկի պատմությունը» գրքում, իսկ հատկապես՝ Գոլդոնիի, Կանովայի և Ջ. Պիետրո Գոցցիի հուշագրություններում՝։ Գոյություն ունի մի հիանալի, Պլուտարքոսին արժանի ստեղծագործություն՝ «Ֆրա Պաուլո Սկարպիի՝ հանրապետության աստվածաբանի կյանքը՝ գրված նրա փոխանորդի կողմից», մի հատոր in—12°. Ֆրանսիացիներն առհասարակ այնքան տարված են իրենց սեփական մշտական գործելաձևերով, որ չեն հասկանում մյուս ժողովուրդների բարքերի մասին եղած ընդհանուր գաղտնությունները։ Նրանք այլ միջոց չունեն, քան կարդալ մասնավոր անձանց, օրինակ՝ Պիետրո Գոցցիի հուշագրությունները։ Այնտեղ ամեն ինչ այնպես մատչելի է բացատրված, որ սխալվելու հնարավորություն չկա. երջանկության ետևից վազելն այն ձևով, ինչ ձևով ամեն օր տեղի էր ունենալ 1760 թվականի Վենետիկում, չի կարելի շփոթել մեր փարիզյան կյանքի հետ, ինչպիսին այն եղել է տիկին դ՝Էպինեի՞ «Հուշագրությունների» ժամանակաշրջանում։

պարտադրում էր նրան այնքան էլ հույս չդնել իր բանակի դեմ բավականաչափ պատկառելի ուժի տեր տերության այդ մոլորության վրա։ Մի՞թե Անգլիան չէր կարող Վենետիկին օգնության ուղարկել Հնդկաստանում թրծված իր զորավարներից որևէ մեկին։

Վենետիկը երեք միլիոն հպատակներ ուներ, և նրա պետական եկամուտը հասնում էր երեսուն միլիոն ֆրանկի. ֆրանսիացիների հանդեպ ունեցած վախը կարող էր նույնպիսի գումարի հարկադրական փոխառություն տրամադրել նրան։ Ճիշտ է, նա ընդամենը տասներկու հազար զինվոր ուներ, որոնք բաժանված էին յոթ հետևակային և վեց հեծելազորային գնդերի, բայց փողով կարող էր ութ կամ տասը շվեյցարական գնդեր և մեծ թվով ի բնե շատ քաջ դալմատացիներ ունենալ։ Վերջապես, նրա կառավարությունը կարող էր ծով հանել քսանչորս գծանավ, իսկ իր մայրաքաղաքն անառիկ էր։

Ինչպես տեսնում եք, բավական էր, որ Նապոլեոնը բավականաչափ արագ չգործեր՝ և նրա թշնամիների մի մասը կարող էր, իրենից թմրությունը թոթափելով, նրա զորքերին ստիպել անկանոն նահանջել ընդհուպ մինչև Ալեսսանդրիայի պատերը։ Այդ հանգամանքը նա խնամքով թաքցնում էր։ Նրան հայտնի էր, որ Վենետիկի դեսպանը Փարիզում կարող էր գնել բոլոր այն նամակները, որ ինքն ուղարկում էր Դիրեկտորիային։

Արտաքուստ անխռով հանգստությամբ նա կարողացավ իր անհուսալի դաշնակիցներին և նույնիսկ հակառակորդներին հարգանք ներշնչել իր նկատմամբ։ Հեղափոխության շնորհիվ հռչակված բոլոր զորավարներից ոչ մեկն ընդունակ չէր իրեն այդպես պահելու։

Այն բանից հետո, երբ Բոլիեն նահանջեց Տիրոլ, Նապոլեոնն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց Մանտուայի վրա. պաշարման այն փոքրաթիվ թնդանոթները, որ Իտալական բանակը կարող էր հավաքել, այդ ժամանակ օգտագործվում էին Միլանի միջնաբերդի դեմ և հարկ եղավ սահմանափակվել Մանտուայի պաշարումով։ Բայց որպեսզի հաջողությամբ պսակվեր թեկուզև սովորական պաշարումը, հարկավոր էր գրավել Վերոնան և Ադիջեի հոսանքը՝ ամբողջը պաշարած զորքերի գրաված դիրքի այդ բանալիները։ Ջուր էր պրովեդիտոր Ֆոսկարելլին մտացածին փաստարկներ ներկայացնում, որպեսզի ֆրանսիացիներին ետ

պահի Վերոնայի վրա հարձակվելուց։ Հունիսի 3-ին Մասսենան գրավեց այդ քաղաքը, որը գտնվում է Միլանից երեսուներկու, Վենետիկից քսանհինգ և Տրիենտից տասնվեց լյո հեռավորության վրա. Վերոնայում կա Ադիջեի վրա գցված երեք քարե կամուրջ և մի հուսալի բերդապատնեշ։

Եթե Մանտուան այնպիսի ամրություն լիներ, ինչպես Լիլը, Իտալիայում գործող բանակը չէր կարողանա միաժամանակ և՛ պաշարել այն, և՛ պաշտպանել պաշարումը։ Բայց երջանիկ պատահականությամբ, որը շտեսնված լավ էր փոխհատուցում ֆրանսիացիների փոքրաթվությունը, Մանտուայի համար պատվար հանդիսացող ճահճացած լճերը կայազորին այլ ելք չէին թողնում, քան հինգ հողաթմբերը, որոնցից 1796 թվականին միայն մեկը՝ բերդը կա Ֆավորիտ պահակակետի հետ միացնողն էր պաշտպանված ամրոցի կողմից։ Նապոլեոնի հրամանով ֆրանսիական զորքերը գրոհեցին կայազորի վրա, նրան արագ ետ շպրտեցին դեպի ամրոց, իսկ այնուհետև, հողաթմբերի ծայրին կառուցված մի քանի հողե ամրությունների պաշտպանությամբ, Նապոլեոնին հաջողվեց չորս հազար զինվորով փակել տասներկու հազար ավստրիացիների ճանապարհը դեպի Պո։ Ամրոցը պաշարելու համար նույնպես առնվազն չորս հազար զինվոր էր հարկավոր։ Սերբյուրիեն՝ շրջահայաց, դաժան, աննկուն մի զորավար, որը երբեք ուժից վեր պատասխանատվություն չէր վերցնում, նշանակված էր շրջափակման ղեկավար և ութ հազարանոց զորքի հրամանատար։ Ադիջեի ներքին հոսանքում, Լենյանոյի մոտերքում կանգնած Օժերոն պաշտպանում էր պաշարողներին։

ԳԼՈՒԽ IX

Բոլիեի՝ Տիրոլ նահանջելու պահին Նեապոլի թագավորը վախեցավ և զինադադար խնդրեց. Նապոլեոնը շատ ուրախ էր դրա համար, քանի որ զինադադարը համապատասխանում էր իր հետագա պլաններին։

Դիրեկտորիան երեխայաբար ատում էր Հռոմի պապին, և այդ ատելությունը, ինչպես ցույց տվեցին հետագա վրիպումները և 1799 թվականի անհաջողությունները, նրան զրկում էր ողջամիտ քաղաքականություն վարելու ընդունակությունից։

Չպետք է մոռանալ, սակայն, որ Բոնապարտն ստիպված էր

ենթարկվել իր կառավարության կրկնակի հրամաններին, այդ պատճառով էլ նա հանդգնեց շարժական զորասյունը նետել Անկոնա այն հաշվով, որպեսզի անհրաժեշտության դեպքում անհապաղ վերադարձվի Մինչո։ Նա մտածում էր, որ Օժերոն կկարողանա առանց որևէ վտանգի ենթարկվելու առաջանալ Մանտուայից հարավ՝ մինչև Բոլոնիա։

1796 թվականի հունիսի 19-ին Բոնապարտը ժամանեց այս քաղաքը, որն այնքան արժանի էր մի օր Իտալիայի մայրաքաղաքը դառնալու։ Նա այնտեղ կրթված ու եռանդուն մարդիկ գտավ։ Եթե ամբողջ թերակղզին զարգացման նման աստիճանի վրա գտնվեր, այժմ անկախ և տանելի կառավարվող պետություն կլիներ։

Իրենց ազատարարին Բոլոնիայի բնակիչները խենթ հիացմունքով դիմավորեցին. նրանք անհապաղ երեք հազար մարդուց բաղկացած ազգային գվարդիա ստեղծեցին, և շուտով այդ գվարդիան արդեն քաջաբար մարտնչում էր ավստրիացիների դեմ[1]։

Ֆերրարան գրավվեց, իսկ Պյաչենցայից եկող զորասյունը ներխուժեց Տոսկանա։ Այս հաջողությունները, որոնք ուղեկցվում էին առիթին հարմար դատարկախոսությամբ, խուճապ առաջացրին Հռոմի կուրիայում. սա շտապեց զինադադար խնդրել, որը և ստորագրվեց հունիսի 24-ին Ֆոլինիոյում։ Ֆրանսիական բանակը հսկայական գերազանցություն՝ Անկոնայում կայազոր պահելու իրավունք ստացավ. նա այլևս առիթ չուներ վախենալու, որ անգլիացիներն այնտեղ մի քանի հազար մարդ կիջեցնեն և դրանով իսկ կփոխեն իրավիճակը։

Հռոմը զիջեց Բոլոնիա և Ֆերրարա լեգատությունները և խոստացավ փող վճարել։ Այսքան չափավոր պայմանները ամենևին էլ Դիրեկտորիայի սրտովը չէին։ Բայց, ինչ էլ որ լինի, իշխանության այդ մարմնի անիմաստությունը պատճառ դարձավ մի համարձակ ձեռնարկի, որը հաջողությամբ պսակվեց։

Օժերոն շտապեց գրավել իր նախկին պահակային դիրքերն Ադիջեի ներքին հոսանքում. նախապես նա ցրել էր չորս հազար գյուղացիների, որոնք հոգևորականության սադրանքով ապստամբել էին Լուգոյում, որի համար ես նրանց ամենևին էլ չեմ կըշ-

---

[1] Պատասխան փարիզեցիներին, որոնք ծիծաղում են իտալացիների քաջության վրա։

մամբում. օտարերկրյա զավթիչների դեմ ուղղված ամեն մի ապստամբություն օրինական գործ է և յուրաքանչյուր ժողովրդի առաջին պարտականությունը։ Նման խռովություններ են բռնկվել կայսերական ավատական տիրապետություններում՝ Ապենինների Պիեմոնտին նայող լանջերին գտնվող, Ջենովայի Հանրապետության մեջ մտցված փոքրիկ մարզերում։ Նովիի և Բոկետայի արանքում գյուղացիները, ջոկատներ կազմելով, սպանում էին զորամասերից ետ մնացած զինվորներին։ Լանը ջախջախեց այդ ջոկատները և ոչնչացրեց դրանց գլխավոր հենակետ Արքվատոն։ Սխալն այն էր, որ պատանդներ չվերցրին։

Կատարելով Դիրեկտորիայի ցանկությունը, Նապոլեոնը գրավեց Լիվոռնոն։ Այդ օպերացիան կատարվեց բոլորի համար այնքան արագ ու անսպասելի, որ եթե ֆրանսիացիները երկու ժամ շուտ գային, նավահանգստում քսան անգլիական նավ կգրավեին։ Ֆրանսիական զորքերն անտեսել էին, որ նախքան արշավի ելնելը, հարկավոր էր սպասել Լիբեչիոյից փչող քամուն։ Անգլիական բոլոր ապրանքները և անգլիացիներին պատկանող գույքը բռնագրավվեցին, ինչը հարստացրեց Փարիզից ուղարկված բազմաթիվ գանձագողներին։

Տոսկանայի մեծ դուքս Ֆերդինանդը մի տարի առաջ ստանձնած՝ չեզոքության պարտավորությունը կատարում էր անբասիր ազնվությամբ, որը եվրոպական մյուս միապետները Հանրապետության նկատմամբ համարում էին ավելորդ։ Այդ պատճառով էլ գեներալ Բոնապարտն առիթն օգտագործեց նրան իր հարգանքն արտահայտելու. նրա մոտ՝ Ֆլորենցիա եկավ առանց որևէ պահակախմբի։ Նա չվախեցավ այն դատաստանից, որ երեսուն ամիս անց էրցհերցոգ Կառլոսի հուսարները Ռաշտադտում տեսան Ռոբերջոյի և մյուս լիազոր ներկայացուցիչների նկատմամբ։

Զորավարը նեղություն քաշեց անձամբ բացատրելու մեծ դքսին, որ այն ժամանակ անգլիացիների իշխանության տակ գտնվող Կորսիկայի դիմացի կարևոր նավահանգիստ Լիվոռնոյի դիրքը այդ քաղաքի գրավումը ֆրանսիական բանակի անվտանգության համար դարձնում էր անհրաժեշտ։

Բոնապարտը ճաշում էր մեծ դքսի մոտ, երբ սուրհանդակը լուր բերեց Միլանի միջնաբերդի անձնատուր լինելու մասին. կայազորը զենքը վար էր դրել հունիսի 29-ին։ Դրանով իսկ հրետանային շարժակազմ ազատվեց Մանտուայի պաշարման համար. ամրոցի դիմաց սկսեցին խրամատներ փորել հուլիսի 18-ին։ Այնտեղ զորքերի հրամանատարն առաջվա պես Սերյուրիեն էր. դժբախտաբար, նա չէր կարող ցերեկվա կիզիչ տոթից ուժասպառ իր զինվորների անզգուշության դեմն առնել։ Հուլիսն էր. երիտասարդներն անհոգ վայելում էին գիշերային զովության հաճույքը և հարյուրներով հիվանդանում՝ Մանտուայի ճահիճների կործանարար գոլորշիները շնչելով։

Բանակի մնացած մասը դիտակետեր էր գրավում Ադիջեի և Գարդա լճի ափերին։ Մասսենայի տասնհինգ հազարանոց կորպուսը կենտրոն էր կազմում Ռիվոլիում և Վերոնայում. գեներալ Սորեն չորս հազարով գրավում էր Սալոն՝ Գարդա լճի արևմտյան ափին գտնվող այդ փոքրիկ քաղաքը։ Վեց հազար մարդուց բաղկացած պահեստազորը տեղավորված էր աջ թևի և կենտրոնի միջև։ Եվ, վերջապես, աջ թևը՝ Օժերոն, իր ութ հազարով գտնվում էր Լենյագոյի մոտ։

Այս հմտորեն կանխամտածված տեղաբաշխման շնորհիվ գրեթե հրամանատարը, որը գիտեր, որ շրջապատված է բացահայտ ու թաքնված թշնամիներով, հնարավորություն ուներ ներքին կենտրոնացնող շարժումների օգնությամբ իր ողջ բանակն արագ համախմբել Մինչոյի այս կամ այն ափին՝ նայած թշնամին կհարձակվի Սալոյո՞վ, թե Ադիջեի հովտով։ քանզի բոլորի համար պարզ էր, որ ավստրիական բանակը առաջիկայում կփորձի ազատագրել Մանտուան։

ԳԼՈՒԽ X

Մենք հիմա կանցնենք ռազմական հրաշալի գործողությունների պատմությանը, բայց որպեսզի ընթերցողն ի վիճակի լինի զգալու դրանց ողջ վեհությունը, ես թախանձագին խնդրում եմ նրան նայել Գարդա լճի քիչ թե շատ հաջող քարտեզին։

Այդ լճի ափերը՝ հոյակապ անտառների և մարմանդ ջրերի իրենց ցայտերանգությամբ պատկանում են ամբողջ աշխարհի ամենահմայիչ բնապատկերների թվին, և Իտալական բանակի ջահել զինվորներն ամենևին անտարբեր չէին դրանց գեղեցկությունների նկատմամբ։ Հյուսիսում, Ռիվայի կողմում, լիճը նեղանում է՝ կորչելով բարձր լեռների մեջ, որոնց գագաթները ծածկված են հավերժական ձյունով, իսկ գեղատեսիլ Սալո քա-

գաքի դիմաց տարածվում է նրա առնվազն երեք լյո լայնությամբ հրաշալի ջրային հարթությունը. այնտեղ ճամփորդը կարող է հայացքով ընդգրկել ավելի քան տասը լյո տարածություն՝ Դեզենձանոյից մինչև հարավային ափը, որտեղով անցնում էր Բրեշիայից դեպի Վերոնա տանող ճանապարհը։

Լճի ափերը և նրա շրջակա բլուրները պատած են հոյակապ ձիթենիներով, որոնք այս երկրամասում հասնում են զգալի բարձրության, իսկ հարավային, զառիվայր դեպի լիճն իջնող, հյուսիսային քամուց պաշտպանված բլուրներում վեր են խոյանում հզոր շագանակենիները։ Այստեղ աճող գեղեցիկ նարնջենիների մուգ սաղարթները սքանչելիորեն առանձնանում են լիճը շրջապատող թեթև, թափանցիկ մշուշով պատած լեռների ֆոնի վրա։

Սալոյի դիմաց լճի արևելյան կողմից վեր է բարձրանում բուսականությունից զուրկ մի հսկայական կլոր լեռ, որը և, կարծեմ, առիթ է տվել այն անվանելու Մոնտե-Բալդո։ Այդ լեռան ետևում լճից դեպի աջ և նրանից որոշ հեռավորության վրա խոր կիրճում հոսում է Ադիջե գետը, որը հռչակվել է այն ճակատամարտերով, որոնց մասին մտադիր ենք պատմելու։

Այստեղ՝ Ադիջեի, Մոնտե-Բալդոյի և Գարդա փոքրիկ քաղաքի (որից լիճն ստացել է իր անունը) միջև գտնվող սարահարթում կամ հարթ բարձունքում, հաջորդ տարվա հունվարին տեղի ունեցավ Ռիվոլիի հռչակավոր ճակատամարտը։

Անտառապատ և արգավանդ բլուրները, որոնք լճի հարավային կողմում Դեզենձանո փոքրիկ քաղաքը բաժանում են Լոնատոյից, թերևս, աչքի համար ամենահաճելին ու ամենաինքնատիպն են անտառներով պսակված իր գեղատեսիլ բլուրներով հռչակավոր ամբողջ Լոմբարդիայում։ Ameno բառը կարծես ստեղծված է այդ հմայիչ լանդշաֆտների համար։

Դեզենձանոյի բլուրներից, որոնցով վեր է գալարվում դեպի Բրեշիա տանող ճանապարհը, կարելի է զմայլվել լճին ու նրա ափերին նայող տեսարանով։ Ճամփորդն իր ոտքերի տակ տարբերում է Կատուլլոսի գովերգած և մեր օրերում դեռևս իր դարավոր ծառերով սքանչելի Սերմիո հրվանդանը։ Ավելի հեռվում, քիչ դեպի աջ, Վերոնայի ուղղությամբ տեսանելի է Պեսկիերա ցածլիկ ու սև, մռայլ ամրոցը, որն ասես կառուցված է իբրև ջրաղացի շլյուզ այն տեղում, որտեղ Մինչոն սկիզբ է առնում լճից։ 1796 թվականին այն պատկանել է վենետիկցիներին. իր ժամանակին վախենալով Կամբրեյան լիգայից*, նրանք քսան միլիոն ֆրանկ են ծախսել դրա կառուցման համար։

Հեռվում, Բրեշիա տանող ճանապարհին, ուրվագծվում է Լոնատոյի եկեղեցու սպիտակ սրածողը։ Ավելի հարավում նկատելի է Կաստիլիոնեն՝ անբերրի, քարքարոտ հարթավայրի մեջտեղի ձորակում տեղավորված անբարետես փոքրիկ քաղաքը։ Սա լճի շրջակայքում հրապուրանքից զուրկ միակ անկյունն է։

Կաստիլիոնեի և Լոնատոյի ետևում, այլ խոսքերով ասած, լճից արևմուտք հոսում է Կիեզե գետակը, որն ամռանը փոթորկոտ հոսանքի է վերածվում նույնիսկ կարճատև տեղատարափից։ Այն ցած է իջնում Ալպերից, լճին զուգահեռ, և ավստրիացիները բազմիցս գրոհել են ֆրանսիական բանակի ձախ թևի վրա՝ շարժվելով նրա ափերի երկայնքով։ Իսկ ետ շպրտվելիս սովորաբար աշխատում էին թաքնվել Գավարդոյի շագանակենիներով ծածկված լեռներում։

Ինչքան էլ որ սպաներն առարկեին, զինվորները հեռանում էին գյուղացիական տներից, որտեղ նրանք տեղավորվել էին օթևանելու. նրանք տեղավորվում էին բացօթյա, ծառերի տակ, որ այնքան շատ են Գավարդոյում և մերձակայքում։ Հաճախ մի ամբողջ վաշտ տեղավորվում էր հսկայական շագանակենու տակ, իսկ հաջորդ առավոտյան մի քանի զինվորներ արդեն տանջվում էին տենդից։ Չի կարելի ասել, թե դա Մանտուայի հարթավայրի նման վատառողջ տեղանք է, բայց անցումը ցերեկային անտանելի տոթից գիշերվա զովին, որն ավելի էր ուժեղանում Ալպերից փչող քամուց, չափազանց կտրուկ էր ֆրանսիացիների առողջության համար։

Այն ամսին, երբ լճի ափին գտնվելը հատկապես հաճելի էր՝ օգոստոսյան կիզիչ տոթի օրերին, նրա շրջակայքում գտնվող երկու փոքրիկ քաղաքները՝ Լոնատոն և Կաստիլիոնեն, հավերժ անմահացան իրենց անունները կրող ճակատամարտերով։ Տարվա այդ ժամանակ հովիտներն ու հարթավայրերը եգիպտացորենի անծայրածիր պլանտացիաների տեսարան էին ներկայացնում. այս հողերում եգիպտացորենը հասնում է ութ կամ ինը ոտնաչափ բարձրության, իսկ ցողուններն այնպես փարթամ են աճում, որ կարող են հեշտացնել թշնամու անակնկալ հարձակումը։ Բացի այդ, հարթավայրերում և բլուրներում մեծ քանակությամբ քսան-երեսուն ոտնաչափ բարձրությամբ վիթխարի ծփենիներ են

աճում. դրանք հյուսապատված են մի ծառից մյուսը տարածվող խաղողի վազերով, որը լանդշաֆտին խիտ անտառի տեսք է տալիս։ Ամռանը մարդու հայացքը հաճախ չի կարող մեծ ճանապարհից որևէ կողմի վրա հարյուր քայլից ավելի թափանցել։

Լճի մերձակա գյուղերի սիրունիկ գեղջկուհիները գուրգուրանքով էին ընդունում ջահել, կենսուրախ, միանգամից շատ ամիսների համար ոռճիկ ստացած զինվորներին։

Կարելի է ասել, որ այդ ժամանակ բանակում բազմաթիվ թեթևամիտ արարքներ կատարվեցին, բայց ոչ մի ստորություն։ Գարշելի հափշտակությունները Փարիզից խմբերով ժամանած և իրենց Բարբասի աղգականներ ներկայացնող ամեն տեսակ աստիճանավորների գործն էին։ Բարբասի հովանավորության տակ գտնվող գեներալ Բոնապարտի համար հարմար չէր խիստ պատժել նրանց։ Առանց այն էլ գլխավոր հրամանատարը մի շարք հարցերում տարակարծիք էր Դիրեկտորիային։ Մի՞թե ինքը պետք է նաև խանգարեր հարստանալու Դիրեկտորիայի անդամների զարմիկներին։

Այդ պարոնները փառահեղ խենթություններ էին անում ի պատիվ պրիմադոննաների, քանի որ ֆրանսիական բանակի գրաված քաղաքների մեծ մասում կոմիկական օպերային խմբեր կային։ Գրոն*, որն այդ ժամանակ մանրանկարներ էր անում և շատ սիրված էր բանակում, որտեղ նա, թերևս, ամենահանդուգն մարդն էր, նկարում էր այդ գեղեցկուհիների դիմանկարները։

Կարելի է ասել, որ բանակը երբեք այնքան կենսուրախ չի եղել, ինչպես մայիսի 15-ին Միլան մտնելու պահից սկսած մինչև նոյեմբեր՝ Արկոլեի ճակատամարտի սկիզբն ընկած ժամանակահատվածում։ Պետք է նաև խոստովանել, որ կարգապահությունը շատ թույլ էր. հանրապետական հավասարությունը սաստիկ խախտում էր հարգանքն աստիճանավորների նկատմամբ, և սպաներին սոսկ առարկության ենթարկվում էին միայն մարտի ժամանակ, բայց դա քիչ էր մտահոգում նրանց. իրենց զինվորների նման նրանք լոկ զվարճությունների մասին էին մտածում։ Ամբողջ բանակում թերևս միայն գլխավոր հրամանատարն էր անտարբեր թվում հաճույքների նկատմամբ, թեև այն գժբախտ կիրքը, որ նրա նկատմամբ տածում էր այդ ժամանակի ամենանշանավոր և ամենահմայիչ դերասանուհին, ոչ ոքի համար գաղտնիք չէր։

Լոնատոյից առաջ Նապոլեոնը բոլոր ճակատամարտերում իրեն դրսևորեց որպես երկրորդ աստիճանի հիանալի զորավար։ Պոյի գետանցումը Պյանչենցայի մոտ սրընթաց էր, Լոդիի կամրջի անցումը վկայում է փայլուն խիզախության մասին։ Բայց ֆրանսիական բանակին դեռ երբեք կործանում չի սպառնացել։ Ճիշտ է, Պիեմոնտի հարթավայրերում քիչ էր մնացել, վտանգավոր վիճակի մեջ ընկնի, բայց Տուրինի արքունիքը շտապեց փրկել նրան՝ կապերը խզելով Բոլիեի հետ և զինադադար խնդրելով Քերասկոյում։

Բոլորովին այլ բնույթի են այն ռազմական գործողությունները, որոնք մենք հիմա կշարադրենք։ Եթե Նապոլեոնը չհաղթեր Լոնատոյում և Կաստիլիոնեում, բանակը ջախջախված կլիներ։ Նրա երիտասարդ զինվորներն ընդունակ չէին լինի հաղթահարելու ամբողջովին նահանջներից ու անընդհատ ընդհարումներից բաղկացած անհաջող պատերազմի դժվարությունները, և նա ինքն էլ չէր կարողանա նրանց ղեկավարել։ Ահա միակ, ընդ որում կարևոր հատկությունը, որը պակասում էր նրա ռազմական հանճարին։ 1814 թվականի նրա կամպանիան Ֆրանսիայում ամբողջովին հարձակողական էր. Վաթերլոոյից հետո նա բոլորովին հուսալքվեց. 1813 թվականին Ռուսաստանից նահանջելուց հետո պետք է որ նա ամեն կերպ մնար Օդերի գծում։

Կարելի է ասել, որ նրա տեղում 1796 թվականի հուլիսի 29-ին Հանրապետության ուրիշ ոչ մի զորավար չէր կարողանա դիմանալ։ Ավստրիացիները շրջանցել էին նրա բանակի ձախ թևը և միևնույն ժամանակ գերակշռող ուժերով գրոհում էին ճակատից։

Մենք հետևողականորեն կպատմենք Կաստիլիոնեի, Արկոլեի և Ռիվոլիի ճակատամարտերի մասին, որոնք Նապոլեոնին դասեցին մեծագույն զորավարների առաջին շարքը։ Կաստիլիոնեի և Ռիվոլիի ճակատամարտերի համար բնորոշ է պլանի համարձակությունը. Արկոլեում այդ արժանիքին միացավ նաև զարմանալի հաստատակամությունը մանրամասների հմուտ կատարման գործում։

Ոգու արտակարգ կայունությունը, որ Նապոլեոնը դրսևորեց երկու տարբեր դեպքերում՝ չսասանվելով ո՛չ Լոնատոյի, ո՛չ էլ Արկոլեի առաջ, թերևս, հանճարեղության ամենահիանալի արտահայտությունն է, ինչպիսին կարելի է հանդիպել ամբողջ նոր պատմության մեջ։ Եվ, նկատի ունեցեք, դրանում ամենևին էլ չի դրսևորվել սահմանափակ խելքի հուսահատությունը։ Ո՛չ, դա

իմաստուն մարդու որոշում էր, որին անխուսափելի ահեղ վտանգը չի զրկում պարզ, միանգամայն որոշակի տեսնելու, թե դեռ էլի ինչ կարելի է ձեռնարկել։ Սա այն արարքներից է, որոնց նույնիսկ շողոքորթությունը չի կարող խեղաթյուրել, քանի որ աշխարհում ավելի վեհ ոչինչ չկա. միաժամանակ դա մեկն է այն արարքներից, ճիշտն ասած, միակ արարքն աշխարհում, որն արդարացնում է բռնապետությունը՝ ինչպես այն իրականացնողի տեսակետից, այնպես էլ նրանց աչքին, ովքեր դա հանդուրժում են։

Հաննիբալի, Կեսարի, Ալեքսանդրի մասին ունեցած մեր պատկերացմանը պակասում է մի բան. մենք բավականաչափ հանգամանորեն չգիտենք նրանց պատմությունը, որպեսզի դատենք, թե նրանք երբևիցե հասե՞լ են արդյոք այնպիսի ողբալի վիճակի, ինչպես Նապոլեոնը՝ Արկոլեի նախօրյակին։

Մոնտենոտտեի, Միլեզիմոյի ճակատամարտերում և Լոդիի կամրջի վրա Նապոլեոնն անձամբ էր իր դիվիզիաները մարտի տանում։ Հիմա, երբ վտանգը հարյուրապատիկ մեծացել էր, և երբ անուշադրությունը, սխալմունքը, ոչպեսական թուլությունը կարող էին առաջ բերել ամբողջ բանակի կործանում, նա ստիպված եղավ գործողության մեջ մացնել խոշոր ուժեր՝ երբեմն իր տեսադաշտից շատ հեռու։ Առնվազն նա պետք է ունենար գեներալներ, որոնց կարողանար ապավինել[1]։ Բայց, դժբախտաբար (մի բան, որ մեծացնում է նրա փառքը), թերևս, միայն Մասսենան էր արժանի իրականացնելու նման առաջնորդի պլանները։ Լանը, Մյուրատը, Բեսիերը, Լասալը բանակում էին, բայց ստորին պաշտոններ էին զբաղեցնում։

Լոնատոյի և Կաստիլիոնեի օպերացիաներին, ասես դրանց վեհասքանչ գեղեցկությունն ընդգծելով, նախորդել են իրադարձություններ, որոնք ամենքը ծանր պարտություն համարեցին և որոնք այդ օպերացիաների շնորհիվ հաջողվեց շտկել։

Հակառակորդը հանկարծակի գրավեց Բրեշիան, և Միլանում բոլորը, նույնիսկ ֆրանսիացիների ամենակրքոտ համախոհները կարծում էին, որ բանակն անդառնալիորեն կործանված է։

Պ-ն ֆոն Թուգուտը, որը ոչ առանց հիմքի անհանգստացած

[1] Այնպիսիք, ինչպես, օրինակ, Կլեբերը, Սեն-Սիրը կամ Դեզեն, որն Արկոլեի ճակատամարտի ժամանակ Տիրոլում հրամանատար էր Վորուայի փոխարեն։

էր Նապոլեոնի հաջողություններով և Մանտուային սպառնացող վտանգով, որոշեց ֆրանսիացիներին հակադրել նոր բանակ և նոր զորավար։ Այդ պատճառով էլ Բոլիեին փոխարինելու համար Մանհեյմից քսան հազարանոց ընտրովի զորքի գլուխն անցած հայտնվեց մարշալ Վուրմզերը։

Վուրմզերը, որը ծնվել էր Էլզասում ազնվական ընտանիքում, ավստրիական բանակում պաշտոնավարել է հիսուն տարի. նա աչքի էր ընկել Յոթնամյա և Թուրքական պատերազմներում։ Այսպիսով, նրան փառք էր վիճակվել կռվելու Ֆրիդրիխ Մեծի և Նապոլեոնի դեմ։ 1793 թվականին նա ճեղքել է հակառակորդի գիծը Վայսենբուրգի մոտ, 1795 թվականին ջախջախել է Պիշեգրյուին Հեյդելբերգում և ներխուժել Պֆալցյան մարզ. նա դեռևս եռանդով լի հին հուսար էր։

1796 թվականի հուլիսի վերջին օրերին Տրիենտում կենտրոնացած ավստրիական բանակի ուժերը հասան վաթսուն հազարի, իսկ Նապոլեոնը կարող էր դրա դեմ հանել միայն երեսունհինգ հազար։ Եվրոպայի ողջ արիստոկրատիան իր հայացքը հառել էր Իտալիային. նա հաստատ հավատացած էր, որ ֆրանսիական բանակը կջախջախվի։

Վուրմզերը զուր ժամանակ չէր վատնում. երեսունհինգ հազարանոց բանակի գլուխ անցած, նա զուրս եկավ Տիրոլից՝ շարժվելով Ադիջեի հովտով, որը, ինչպես մենք տեսանք, ձգվում է Գարդա լճի արևելյան ափին զուգահեռ և նրանից անջատված է Մոնտե-Բալդոյով։ Քվազդանովիչը քսանհինգ հազարանոց կորպուսով լճի արևմտյան ափի երկայնքով առաջ շարժվեց դեպի Սալո և Բրեշիա։

Վերոնայում հուլիսի 29-ի երեկոյան ու այնուհետև գիշերը Նապոլեոնը լուր ստացավ, որ նախօրյակին, առավոտյան ժամը երեքին Մասսենան ուժերով անհամեմատ իրեն գերազանցող թշնամու ճնշման տակ թողել է Լա-Կորոնա կարևոր դիրքը Ադիջեի ափին և որ տասնհինգ հազար ավստրիացիներ Սալոյում հանկարծակի գրոհել են գեներալ Սորեի դիվիզիայի վրա, որը, վճռական հանդամանքներում անհրաժեշտ սառնասրտություն չդրսևորելով, նահանջել է դեպի Դեզենձանո՝ փոխանակ պաշտպանելու Բրեշիան։

Այն ժամանակ հայտնի զորավարներից ամեն մեկը, եթե Նապոլեոնի վիճակում գտնվեր, իրեն կործանված կհամարեր, իսկ

նա հասկացավ, որ հակառակորդը, բաժանելով իր ուժերը, դրանով իսկ իրեն հնարավորություն է տալիս սեպվելու իր բանակի երկու գլխավոր զանգվածների միջև և զատ-զատ գրոհելու դրանց վրա։

Բայց անհրաժեշտ էր անհապաղ համարձակ որոշում ընդունել. ահա՛ այն արժանիքը, առանց որի չի կարելի զորավար լինել։

Այստեղից էլ, ի դեպ, երևում է, թե ինչու այդպես հեշտ է պատերազմի մասին խելոք բաներ գրել և ճիշտ ուղիներ նշել՝ նախապես խելամտորեն կշռադատելով դրանք։

Հարկավոր էր ամեն գնով խանգարել Վուրմզերին՝ Մինչոյում միանալու Քվազդանովիչի հետ, քանի որ այդ դեպքում նրա դրոհն անդիմադրելի կլիներ։ Նապոլեոնն արիություն ունեցավ վերացնել Մանտուայի պաշարումը՝ խրամատներում թողնելով մեծ տրամաչափի հարյուր քառասուն թնդանոթ։ Դա նրա ողջ ծանր հրետանին էր։

Նա հանդգնեց դատել այսպես և հավատալ իր դատողությանը. «Եթե ես ջախջախվելու եմ, ապա ինչի՞ս է պետք պաշարողական շարժակազմը։ Հարկ կլինի անմիջապես այն թողնել։ Իսկ եթե ինձ հաջողվի ջախջախել թշնամուն, ապա ես նորից Մանտուայի ափակ կգտնեմ իմ թնդանոթները»։ Կար նաև երրորդ հնարավորությունը՝ ջախջախել հակառակորդին և ի վիճակի չլինել շարունակելու Մանտուայի պաշարումը, բայց այդ դժբախտությունն այնքան մեծ չէր լինի, ինչքան Իտալիայից քշվելը։

Ըստ երևույթին, Նապոլեոնը ցանկանում էր բարոյապես ներգործել իր գեներալների վրա, նրանց հնարավորություն տալ իրեն ճանաչելու, և անձամբ ավելի մոտիկից ծանոթանալ նրանց. նա ռազմական խորհուրդ հրավիրեց։ Կիլմենը և գիտնական-գեներալներն արտահայտվեցին նահանջելու օգտին. յակոբինյան Օժերոն, ազնիվ ավյունով համակված, հայտարարեց, որ չի հեռանա, մինչև որ իր դիվիզիան չմարտնչի թշնամու հետ։

Բոնապարտը նրանց ասաց, որ, նահանջելով, իրենք կկորցնեն Իտալիան, որ անհնար կլինի նորից տասը հազար զինվոր բերել Սավոնայի ժայռերը, որ իրոք հանրապետության բանակը շափազանց թույլ է ավստրիական բանակի ընդհանրական ուժերին դիմադրելու համար, բայց կարող է զատ-զատ ջախջախել նրա երկու գլխավոր զանգվածներից յուրաքանչյուրը։ Իսկ, բարեբախտաբար, այդ հզոր զորամասները դեռ երեսուն թե քառասուն ժամվա ընթացքում անջատված կլինեն Գարդա լճի շրջերով։

Հարկավոր էր արագ նահանջել, շրջապատել թշնամու զորամասը և դեպի Բրեշիա իջնելով՝ գլխովին ջախջախել, ապա վերադառնալ Մինչո, հարձակվել Վուրմզերի վրա և նրան ետ շպրտել Տիրոլ։ Բայց այս պլանն իրականացնելու համար անհրաժեշտ էր քսանչորս ժամում վերացնել Մանտուայի պաշարումը. չէր կարելի ուշացնել թեկուզ վեց ժամ։ Բացի այդ, հարկ էր առանց նվազագույն քաշքշուկի անցնել Մինչոյի աջ ափը՝ թշնամու զորքերի երկու գլխավոր զանգվածների կողմից ֆրանսիական զորքերի շրջապատումը կանխելու համար։

Այդ ընթացքում ամուսնու ետևից Վերոնա եկած տիկին Բոնապարտը ցանկացավ Դեզենձանոյի և Բրեշիայի ճանապարհով վերադառնալ Միլան, բայց թշնամին հասցրել էր կտրել այդ ճանապարհը։ Այսպիսով, նա հայտնվեց ավստրիական ուղեկալներին շատ մոտիկ և նրանց պարեկների շրջանում։ Նա կարծեց, որ ամուսինը զոհվել է, շատ արցունք թափեց և վերջապես վերադարձավ Միլան, բայց շրջանցելով Լուկկայով։ Այն հարպալից ընդունելությունը, որ ցույց էին տալիս ամենուր, մի քիչ սփոփեց նրան։

Հուլիսի 30-ի երեկոյան Մասսենայի և Օժերոյի դիվիզիաները պահեստազորի հետ գնացին դեպի Բրեշիա, բայց այդ քաղաքին տիրող ավստրիական դիվիզիան փութով դուրս եկավ այդտեղից, որպեսզի գրոհի Նապոլեոնի վրա, և արդեն մոտեցել էր Լոնատոյին։ Հուլիսի 31-ին գեներալ Դալլեմանը փոփոխական հաջողությամբ տեական ճակատամարտից հետո վերստին գրավեց Լոնատոն։ 32-րդ հետևակային գունդն այստեղ անթառամ փառք վաստակեց. դրա հրամանատարն էր քաջ գնդապետ Դյուպյուին (հետագայում արդեն գեներալի աստիճանի հասած, սպանվել է Կահիրեում). դա Լոնատոյի առաջին ճակատամարտն էր։

Ֆրանսիական բանակը տեղավորված էր Կիեզում։ Քվազդանովիչը լեռնային անցումներով նահանջեց դեպի Գավարդո։ Օգոստոսի 1-ի առավոտյան ժամը տասին Օժերոյի դիվիզիան Նապոլեոնի գլխավորությամբ մտավ Բրեշիա։

Ավստրիացիների գործերը դեռ այնքան էլ վատ չէին, բայց Նապոլեոնի այդքան խիզախորեն մտահղացված պլանը խափանելու համար Վուրմզերն ամենայն հապճեպությամբ հուլիսի 31-ին

Պեսկիերայի մոտ պետք է անցներ Մինչոն։ Նա կարող էր առանց որևէ դժվարության հասնել Լոնատո և միանալ Քվազդանովիչին. այդ ժամանակ ֆրանսիական բանակին ուրիշ ոչինչ չէր մնա, քան անհապաղ վերադառնալ Տիչինո կամ Պյաչենցա, իսկ այնուհետև Վուրմզերն արդեն կարող էր Մանտուայում անարգել վայելել իր հաղթանակի հաճույքը։

Բայց փոխանակ որքան կարելի է շուտ առաջ շարժվել իր օգնականի հետ միանալու համար, Վուրմզերը զանգերի զողանջի տակ հաղթականորեն մտավ Մանտուա և միայն օգոստոսի 2-ի երեկոյան, ուղևորվելով Կաստիլիոնե, Գոյտոյի մոտ անցավ Մինչոն։ Գավարդոյի լեռներն ու անտառները հեշտացնում էին Քվազդանովիչի ետընթաց շարժումը, որը, ճիշտ է, նահանջում էր, բայց մեծ կորուստ չկրեց։

Օգոստոսի 2-ին Օժերոն վերադարձավ Մոնտե-Կիյարո, իսկ Մասսենան դիրքեր գրավեց Լոնատոյի և Պոնտե-Սան-Մարկոյի մոտ։

Նույն օգոստոսի 2-ին, երեկոյան կողմը, գեներալ Վալետը (դրանից քիչ անց աստիճանազրկված), որին հանձնարարված էր պաշտպանել Կաստիլիոնեն և Վուրմզերի առաջապահ ջոկատը հեռու պահել բանակից, թողեց Կաստիլիոնեն իր ջոկատի կեսի հետ և ներկայացավ Մոնտե-Կիյարո, որտեղ տագնապ բարձրացրեց Օժերոյի դիվիզիայում։

Օգոստոսի 3-ին այդ դիվիզիան՝ պահեստազորով ուժեղացված, շարժվեց դեպի Կաստիլիոնե. Մասսենայի դիվիզիան դեռևս կանգնած էր Լոնատոյում։

Որպեսզի Քվազդանովիչին ստիպի շարունակել իր նահանջը, ֆրանսիական զորավարը վտանգի տակ դրեց Տիրոլի հետ նրա հաղորդակցման ուղիները և գեներալ Գյուլյոյին հրաման ուղարկեց շտապ առաջ շարժվել դեպի Սալո։

Ամեն ինչ բոլորովին այլ կերպ կատարվեց, քան ենթադրվում էր։ Նապոլեոնը մտածում էր հարվածել Վուրմզերի զորքերին, իսկ դրա փոխարեն հանդիպեց Քվազդանովիչի ձախ թևին, որը, դեպի Լոնատո շարժվելով, փորձում էր նորից միանալ իր գլխավոր հրամանատարին։ Հետևելով ավստրիական մեթոդին, Քվազդանովիչն իր ուժերը բաժանեց մի քանի զորասյան։ Դրանցից մեկը Լոնատոյի մոտ հարձակվեց Մասսենայի առաջապահ զորքերի վրա. ֆրանսիացիները մարտի մեջ մտան արտակարգ կրքով և

որոշ կորուստներ կրեցին։ Բայց շուտով գլխավոր հրամանատարը դիվիզիայի հիմնական ուժերով օգնության հասնելով, վերականգնեց դրությունը, սրընթաց գրոհով գրավեց Լոնատոն և հանձնարարեց կրկնակոխ հետապնդել Քվազդանովիչի այդ զորասյանը։

Բայց թշնամու համար երջանիկ պատահականությամբ ավստրիական փոքրիկ զորասյունը, Սալո ժամանելով ավելի վաղ, քան Գյուլյոն, այնտեղ ոչ ոքի չգտնելով, որոշեց առաջ շարժվել այն նույն ճանապարհով, որով գնացել էր Մասսենայի դիվիզիայի կողմից հենց նոր ջախջախված զորասյունը։ Նա հավաքեց այդ զորասյան մնացորդները և օգնեց համախմբել դրանք։

Այդ նույն երեկոյան (օգոստոսի 3-ին) Քվազդանովիչն իր զորասյուները նորից բերեց Գավարդոյում գտնվող նրանց ելման դիրքերը։ Իսկ մինչ Նապոլեոնը, մտադրվելով գնալ Վուրմզերի դեմ, պարտության էր մատնում Քվազդանովիչին, Օժերոն Կաստիլիոնեի մոտ գրոհեց ու ջախջախեց ավստրիական մարշալի առաջապահ զորքերը։ Այդ նույն օրը և էլի երկու օր անց Օժերոն մեծ զորավար էր, որպիսին այլևս երբեք չեղավ։

Օգոստոսի 4-ին, նկատելով, որ Վուրմզերը նախօրյակին կրած անհաջողությունից հետո շատ անվճռականորեն է առաջ շարժվում, Նապոլեոնն օգտվեց այդ կարճատև դադարից, որպեսզի Քվազդանովիչի դեմ նետի Գյուլյոյին և Սենտ-Իլերին։ Այդ գեներալները կարողացան աննկատելի անցնել Գավարդոյից այն կողմ, որտեղ Քվազդանովիչի տասներկու թե տասնհինգ հազար զինվորներն էին կանգնած։ Քվազդանովիչը, նկատի առնելով թիկունքից սպասվող վտանգը, վերջապես որոշեց ետ դառնալ դեպի Ռիվա՝ լճի հյուսիսային ծայրը։

Այսպիսով, Նապոլեոնն ազատվեց այդ կորպուսից, որը նախօրյակին դեռ շատ ահեղ էր. այդ կորպուսի ուժը նույնպիսի վտանգ էր ներկայացնում, ինչպես և իր ընտրած ուղղությունը. եթե նա շարունակեր այդ ճանապարհով գնալ, կարող էր անընդհատ անհանգստացնել ֆրանսիական բանակի ձախ թևին և նրան խանգարել հասնելու Մինչո։

Ահա թե ինչպիսի հանգամանքներում (օգոստոսի 4-ի երեկոյան ժամը 5-ին), այն նույն ժամանակ, երբ Քվազդանովիչը որոշում ընդունեց նահանջել դեպի Ռիվա, տեղի ունեցավ Լոնատոյի նշանավոր հանկարծակի հարձակումը, որը ֆրանսիական բանակ-

բալին առիթ տվեց հոգու այնպիսի՞ արիություն դրսևորելու։

Երկու հազար ավստրիացիներ, որոնց գնդակահարություն էր սպառնում, բարեհոգաբար գերի հանձնվեցին. նրանք չորս թնդանոթ ունեին։

Այստեղ պարզորոշ դրսևորվում է երկու ժողովուրդների հոգևոր կերտվածքի տարբերությունը. այն նույն պահին, երբ ավստրիական երկու հազարանոց ջոկատն անձնատուր եղավ՝ նույնիսկ չմտածելով փորձել իր բախտը ճակատամարտում, Դյույոն և Սենտ-Իլերը սրընթաց գրոհեցին Գավարդոյում գտնվող ավստրիական ճամբարի վրա։ Այդ հարձակումն առաջացրեց տասներկու-տասնհինգ հազար ավստրիացիների անկանոն փախուստը։ Իսկ ավստրիացիների հարձակումը Նապոլեոնի շտաբակայանի վրա նրան ավելի շատ գերիներ տվեց, քան ինքը զինվորներ ուներ իր հետ։

Այստեղ մեր շարադրած այս բոլոր զորաշարժերը հմուտ էին, համարձակ, բայց դեռ չէին տվել վճռական արդյունքներ։ Եթե Քվեզդանովիչի գլխով տարօրինակ միտք չանցներ ավելի հեռու փախչել, քան իրեն հետապնդում էին, նա կարող էր Գարդա լճի կամ նույնիսկ Դեզենձանոյի վրայով կապ հաստատել իր գլխավոր հրամանատարի հետ։ Ավստրիական զորքերի երկու գլխավոր զանգվածները կարող էին միաժամանակ հարվածել և միմյանց մոտենալ Լոնատոյի մոտ։

Բայց նման ոչ մի բան չեղավ։ Վուրմզերը բավականաչափ ձեռներեցություն չուներ, իսկ Քվազդանովիչը՝ համարձակություն։

Ճակատամարտը, որը պետք է վճռեր ամբողջ օպերացիայի հաջողությունը, տեղի ունեցավ օգոստոսի 5-ին։

Վուրմզերն իր զորքը բաժանեց մի քանի զորասյան և վերջապես ավելի լավ բան չմտածեց, քան վճռական մարտադաշտ մտցնել ընդամենը քսանհինգ հազար մարդ։ Միայն Մասսենայի և Օժերոյի՝ պահեստազորով ուժեղացված և Բոնապարտի կողմից Կաստիլիոնեի մոտ տեղաբաշխված դիվիզիաները հասնում էին թշնամու բանակի թվին, իսկ ֆրանսիական զորավարը դեռ սպասում էր Սերյուրիեի դիվիզիային, որը պետք է դուրս գար ավստրիացիների ձախ թևի թիկունքը։

«Օգոստոսի 5-ի լուսաբացին մենք հայտնվեցինք թշնամուն դեմ-հանդիման,— գրում է Նապոլեոնը Դիրեկտորիային ուղղված

իր զեկուցագրում[1]։— Սակայն առավոտյան ժամը վեցին ամեն ինչ դեռ անշարժ էր։ Ես ամբողջ բանակին ստիպեցի մի քիչ ետ քաշվել՝ թշնամու ուշադրությունը մեզ վրա գրավելու համար»։

Ճակատամարտն սկսվեց, բայց ֆրանսիացիները չէին փորձում նեղել թշնամուն. հանկարծ հեռու հարթավայրում, Կավրիանայի կողմից, հայտնվում են Սերյուրիեի զորքերը։ Այդ ժամանակ Բոնապարտը կատաղի մարտ է սկսում իր աջ թևում և կենտրոնում։

Վուրմզերը տեսնում է, որ իրեն շրջանցել են ձախ թևից. երկյուղում է, որ իրեն կքշեն Գարդա լիճը։ Վերջապես գլխի է ընկնում, որ միայն հապճեպ նահանջը կարող է փրկել իրեն. նա անցնում է Մինչոյի մյուս ափը՝ թողնելով քսան թնդանոթ։

Բայց չէ որ նա կարող էր իր մոտ կանչել Քվազդանովիչի զորքերին և հիմնովին հաստատվել Մինչոյի վրա. նրան ոչինչ չէր խանգարում ձախ թևով հենվել Մանտուային, որի կայազորի տասնհինգ հազարանոց թարմ զորքը այժմ գործողությունների լիակատար ազատություն ուներ։

Օգոստոսի 6-ին, այն ժամանակ, երբ Մինչոյի վրա ֆրանսիական բանակի գլխավոր ուժերն աշխույժ հրաձգությամբ բևեռում էին ավստրիացիների ուշադրությունը, Մասսենան շտապ անցավ գետը Պեսկիերայի մոտ և ամբողջ թափով հարձակվեց Վուրմզերի աջ թևի վրա, որը գտնվում էր այդ ամրոցի դիմաց. հապճեպ կառուցված, հազիվ ավարտված դաշտային ամրությունները գրավվեցին սրընթաց գրոհով, և թշնամին վերջապես որոշեց նահանջել Ադիջեի հովիտը. այս գործում աչքի ընկավ գեներալ Վիկտորը։

Օգոստոսի 7-ի երեկոյան ժամը տասին Նապոլեոնը նորից մտավ Վերոնա։ Ընդ որում Վենետիկի պրովեդիտորը ամենակոմիկական դերը խաղաց. նա հավատացնում էր, որ չեզոքություն է պահպանում, իսկ իրականում երկերեսանություն էր անում, փորձում էր զորք հանել հաղթող բանակի դեմ, բայց չգտավ ոչ մի զինվոր, որը համաձայնվեր կռվել։

Վուրմզերն առաջին անգամ ցույց տվեց, որ կարող է արագաշարժ լինել. նա Ադիջեի հովտով բարձրացավ մինչև Ալպս։ Գեներալ Բոնապարտը հրամայեց հետապնդել նրան, և վերջապես

---

1 Նապոլեոնի երկերը, 4 հատոր, հրատ. Պանկուկի, 1826, հ. 1, էջ 164։

օգոստոսի 12-ին ֆրանսիական բանակը նորից տիրեց այն բոլոր դիրքերին, որ զբաղեցրել էր նախքան ավստրիական մարշալի հարձակումը։

Այդ զարմանալի հաջողությունները ձեռք բերվեցին թանկ, ամբողջ ծանր հրետանու անուղղելի կորստի գնով, որը բանակն այնպիսի դժվարությամբ էր կենտրոնացրել Մանտուայի պատերի տակ։ Սերյուրիեի դիվիզիան գեներալ Ֆիորելլայի հրամանատարությամբ նորից տեղավորվեց այդ ամրոցի դիմաց, բայց պետք չէր այլևս մտածել պաշարման մասին։ Հարկ եղավ սահմանափակվել սոսկ շրջափակումով։ Այդ գործը հանձնարարեցին գեներալ Սայուգեին։

Մարշալ Վուրմզերը վերադարձավ Տիրոլ՝ ամենևին էլ ֆրանսիացիներին ետ շշպրտելով մինչև Ալեսսանդրիա։ Նա կորցրեց տասը թե տասներկու հազար մարդ և հիսուն թնդանոթ, բայց ավելի կարևորը՝ նա զրկվեց զորքի հարգանքից։

Եթե այս զորավարի կրթությունը համապատասխաներ անձնական քաջությանը, նա կկարողանար պատերազմների պատմությունից օգտակար նախազգուշացումներ քաղել։ Չէ որ հենց այնտեղ, այն նույն վայրերում, որտեղ նա գլխովին ջախջախվեց, թագաժառանգ Էժեն Սավոյացին* 1705 թվականին կատարեց իր հիանալի արշավանքը Վանդոմի դքսի դեմ։ Այդ գեներալը, որը Լյուդովիկոս XIV-ի զորավարներից ամենակրթվածի համբավն ուներ, գրավեց Մանտուան, բայց թույլ չտվեց շրջառել իր ձախ թևը։ Արքայազն Էժենը շլված համարձակություն ունեցավ իր հետևակը ծովի նման փոթորկվող լճի ձախ ափից նավակներով Գավարդո անցկացնել։ Այդ արտակարգ զորաշարժը ամբողջ վեց օր տևեց։ Նապոլեոնին այդ ժամանակի կեսն էլ բավական կլիներ ջախջախելու այն բանակը, որ համարձակվել է իր աչքի առաջ նման փորձ կատարել։ Չի կարելի մոռանալ, որ 1705 և 1796 թվականների միջև հայտնվեց մեծն Ֆրիդրիխը, որը ռազմական արվեստ մտցրեց արագ անցումները։

ԳԼՈՒԽ XI

1796 թվականի օգոստոսի 19-ին Իսպանիայի թագավորը ֆրանսիական հանրապետության հետ կնքեց հարձակողական և պաշտպանական դաշինք։ Այդ հանգամանքը բարերար ազդեցություն գործեց Նեապոլի և Տուրինի կառավարությունների վրա։ Չի կարելի մոռանալ այն, ինչը դեռ ուժի մեջ էր. Ադիջեում պարտություն կրելու դեպքում Սարդինիայի թագավորը կարող էր ջախջախել ֆրանսիական բանակը։ Դիրեկտորիայի ապաշնորհությունն էր պատճառը, որ պիեմոնտական բանակը չէր մարտնչում Բոնապարտի հրամանատարության ներքո. այն պահպանվել էր ողջ ու անվնաս, և որևէ մի պալատական բանսարկություն բավական էր այն Բոնապարտի դեմ նետելու համար։

Հենց որ ավստրիացիները վերադարձան Տիրոլ, Վուրմզերը, իր ուժերը մի քանի գումարտակով համալրելով, նորից թվական գերակշռություն ձեռք բերեց ֆրանսիացիների նկատմամբ։ Նրան հրամայված էր ինչ գնով էլ լինի ազատագրել Մանտուան, բայց նա այնքան վատ էր պատկերացնում իր հակառակորդի բնավորությունը, որ երևակայեց, թե իբր կկարողանա դրան հասնել առանց կռվելու։

Տիրոլի պաշտպանությունը հանձնարարված էր Դավիդովիչին, որն իր տնօրինության տակ քսան հազար զինվոր ուներ։ Ինքը՝ Վուրմզերը, մնացած քսանվեց հազարով անցավ Բրենտայի ակունքների մոտ Ադիջեի հովիտը եզրապատող լեռները և ցած իջավ այս գետի երկայնքով՝ նպատակադրվելով Պորտո Լենյանոյի միջով դուրս գալ ֆրանսիական բանակի թիկունքը։

Պատահմունքին հաճելի էր, որ այն ժամանակ, երբ Վուրմզերը խորացավ Բրենտայի հովտում, հենց նոր վեց հազար օժանդակ զինվոր ստացած ֆրանսիական զորավարն ինքը շարժվի դեպի Տիրոլ։ Նա ուզում էր փորձ անել միանալու Հոենոսյան բանակի հետ։ Մի քանի ամիս դրանից առաջ, Սարդինիայի թագավորի հետ հաշտություն կնքելուց հետո, Նապոլեոնն այդ պլանը ներկայացրեց Դիրեկտորիային, բայց այդ ընթացքում Ժուրդանը պարտություն էր կրել, իսկ Մորոն, վտանգի մեջ գտնվելով, սկսել էր նահանջել և չէր կարող մտածել Տիրոլ ներխուժելու մասին։

Երբ Նապոլեոնը սեպտեմբերի 2-ին շարժվեց դեպի Ադիջեի հովիտը՝ նա չգիտեր ո՛չ Ժուրդանի կրած պարտության և ո՛չ էլ այնմասին, որ Վուրմզերը շարժվում է Բասսանոյի վրա։

Տեղի ունեցան Մորիի ու Կալյանոյի փայլուն ճակատամարտերը և Ռովերեդոյի մարտը։ Ավստրիացիները պարտություններից ոչ մի դաս չէին առել, նրանք կրկնում էին նույն սխալները։

Նրանց զորավարները ծերուններ էին. հավատարիմ պատերազմ վարելու իրենց դարն ապրած մեթոդներին, մարտնչելով մի մարդու դեմ, որը գործում էր միանգամից իր զորքի ամբողջ զանգվածով, Նրանք իրենց ուժերը տրոհում էին մանր ջոկատների։ Նոր տակտիկան առավել ևս անհրաժեշտ էր ավստրիացիներին, որովհետև ֆրանսիական բանակը, ոգեշնչված ազատության սիրով, զինվորական հպարտությամբ և իր առաջնորդի նկատմամբ տածած վստահությամբ, ուղղակի արտակարգ խանդավառություն և խիզախություն էր դրսևորում։

ԳԼՈՒԽ XII

Օգտվելով Իտալական բանակի այս երկարատև անգործությունից, որը երկու ամիս՝ 1796 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը, հանգստանում էր, որոշ մտքեր արտահայտենք։

Ես գիտակցում եմ, որ այս գրքում չափազանց հաճախ են հանդիպում ճակատամարտերի նկարագրություններ. բայց ի՞նչ անել առանց նման պատմությունների, եթե մեր հերոսը սկսել է դրանից, եթե նրա բնավորությունը մշակել է փառքի այն բերկրանքը, որ գտնում ես զինվորներին հրամայելու և նրանց հետ միասին հաղթելու մեջ։

Ճակատամարտերի մասին այս պատմություններն այնքան էլ հետաքրքրաշարժ չեն թվա, եթե խորհրդածենք հետևյալ նկատառումներից ելնելով։ Մեր այժմյան հասարակության մեջ այսպես թե այնպես անդադար խոսում են պատերազմի մասին։ Ապագայում մարտնչելու են ոչ թե որևէ երկրամասի (դա բավական անհարմար է ընդհանուր բարօրության համար), այլ Խարտիայի տիրելու կամ ուրոշակի վարչակարգի համար։ Եվ, վերջապես, համատարած երեսպաշտության այս դարում զինվորական սխրագործությունները միակն են, որ հնարավոր չէ փոխարինել երեսպաշտությամբ՝ հանուն անձնական շահի։

Այնքան էլ դժվար չէ տալ ռազմական արվեստի սահմանումը, եթե ուզում ես ճշմարտացի լինել և հրաժարվել մեծադղորդ խոսքերից։ Գլխավոր հրամանատարի համար դա այն է, որ նրա զինվորները մարտադաշտում լինեն երկուսը մեկի դեմ հարաբերությամբ։

Դրանով ամեն ինչ ասված է. դա միակ կանոնն է։ Բայց հաճախ դրա կիրառման համար ընդամենը երկու րոպե ես ունենում։

Այս դժվարությունը չի կարելի հաղթահարել խելոք դատողությունների և լավ շարադրված փաստերի նախապես կուտակված պաշարով։ Հարկ է լինում երկու րոպեում, հաճախ աղմուկի և հուզմունքի մեջ, խելացի միջոցառումներ մտածել։ Նման հանգամանքներում մարշալ Նեյը խելացի ու հստակ մտքերի մի իսկական հրաբուխ էր դառնում. սովորական իրադրության մեջ նա քիչ ու անկապ էր խոսում, նույնիսկ թվում էր, թե ամոթխածությունը նրան ստիպում է շփոթվել։

Ոգևորությունը, թերևս, անհրաժեշտ է, երբ մարդ վտանգի է ենթարկում իր կյանքը. այն անհրաժեշտ է գրենադերների կապիտանի համար, Բորգետտոյի մոտ Մինչո նետվող Դարդանի համար, բայց գլխավոր հրամանատարի համար պատերազմը շախմատի խաղ է։

Այդ գոթական դղյակի անկյունում դուք տեսնում եք մի բարձր աշտարակ. այն պսակող կղմինդրե սայթաքուն կտուրի վրա նկատում եք տանիքագործին. նա այնքան բարձր է մագլցել, որ պստլիկ է թվում. եթե վայր ընկնի՝ մահացու կջախջախվի։ Բայց այնտեղ՝ վերևում նա ժամանակ չունի իրեն սպառնացող վտանգի մասին մտածելու։ Նրա գործն է ամուր մեխել կղմինդրը, աշխատել մեխը խփելիս չկոտրել, մի խոսքով, որքան կարելի է ամուր կպցնել։

Եթե իր կղմինդրների փոխարեն նա սկսի հնարավոր վտանգի մասին մտածել, ապա օգտակար ոչինչ չի անի։

Ճիշտ այդպես էլ, բավական է որ զորավարն անձնատուր լինի թուլության և մտածի այն մասին, որ ինքը վտանգում է իր կյանքը, նա կկարողանա շախմատի իր խաղին լոկ ուշադրության կեսը նվիրել։ Մինչդեռ, պահանջվում է արտակարգ ուշադրություն, քանզի հարկ է լինում միաժամանակ և՛ ընդարձակ օպերացիաների պլաններ կազմել, և՛ կանխատեսել այն արգելքները, որոնք կարծես թե աննշան են, բայց կարող են ամեն ինչ կասեցնել։

Ահա թե ինչու Նապոլեոնի շուրջը խոր լռություն էր տիրում. պատմում են, որ ամենամեծ ճակատամարտերի ժամանակ այնտեղ, որտեղ նա էր գտնվում, չհաշված հեռու և մոտիկ թնդանո-

թաձգության դղրդյունը, կարելի էր լսել իշամեղվի թռիչքի ձայնը. մարդիկ վախենում էին հաղալ։

Գլխավոր հրամանատարը պետք է շախմատի իր խաղը լարված ուշադրությամբ վարի, և միևնույն ժամանակ նա իրավունք չունի անբոնազբոսիկ լինելու. նա պետք է դերասան լինի. ու այստեղ, ինչպես և ամենուր, կատակերգության կոպտության աստիճանը նախատեսված է այն մարդկանց մտավոր մակարդակի համար, ում համար դա խաղացվում է։

Հանրահայտ են մեծ Սուվորովի ապշեցուցիչ տարօրինակությունները։ Կատինա՞ն՝ Լյուդովիկոս XIV-ի թագավորության վերջին տարիների միակ գործիմաց զորավարը, ճակատամարտի կրակի մեջ անվրդով փիլիսոփայի տեսք էր պահպանում, մի բան, որ բոլորովին խորթ է ֆրանսիական խառնվածքին։ Այս ազգի զինվորին հարկավոր է զարմացնել ինչ-որ արտաքին բանով, նրանով, ինչը դժվար չէ նկատել. նրանց համար հարկավոր է փայլուն կատակերգակ լինել, ինչպես Մյուրատ* թագավորը (շատ նման Գրոյի՝ Էյլաուի ճակատամարտը պատկերող նկարին) կամ էլ՝ առանձնահատուկ մարդ, իր տեսակի մեջ միակը՝ ոսկեթելով նախշակարած համազգեստ և մոխրագույն սերթուկ հագած գեներալներով շրջապատված. բայց այդ մոխրագույն սերթուկը նախանշված է կատակերգության կանոններով ճիշտ այնպես, ինչպես Մյուրատի արտակարգ շքեղ փետրափնջերը, ինչպես այդ հուսարական ենթալեյտենանտի ամբարտավան տեսքը։ Իտալիայում գործող բանակում հիանում էին նույնիսկ գլխավոր հրամանատարի հիվանդոտ տեսքով։

Սերը չի տարբերում այն հանգամանքները, որոնց մեջ ծընվում է. եթե զգացմունքն առաջացել է, յուրօրինակությունը կավարտի մնացածը։

Սովորաբար քսաներկու տարեկանում մարդն ամենից շատ է ընդունակ երկու բոպեում կարևորագույն որոշումներ ընդունելու։ Կենսափորձը թուլացնում է այդ ընդունակությունը, և ինձ աներկբա է թվում, որ Մոսկվայի տակ կամ Դրեզդենի ճակատամարտից երկու շաբաթ առաջ Նապոլեոնը պակաս մեծ զորավար էր, քան Արկոլեում կամ Ռիվոլիում։

Դիվիզիայի հրամանատարի համար ռազմական արվեստն այն է, որ իր դիվիզիայով որքան կարելի է շատ վնաս հասցնի թշնամուն և ըստ հնարավորին քիչ կորուստ կրի։ Դիվիզիայի հրամանատարի տաղանդն աճում է փորձ ձեռք բերելուն համեմատ, և եթե նրա առողջությունն այնքան էլ խախտված չէ, ապա հիսունին մոտ այդ տաղանդը, թերևս, հասնում է առավելագույն ծաղկման։

Այստեղից երևում է, թե ինչպիսի անմտություն է գերագույն հրամանատարությունը դիվիզիայի ծեր գեներալներին հանձնարարելը։ Սակայն հենց այդպես վարվեց Պրուսիան Ենայում. Կալկրայտը, Մոլլենդորֆը և Բրաունշվայգի դուքսը Ֆրիդրիխի՝ դիվիզիոնի ծեր գեներալներն էին։ Ի լրումն այս դժբախտության, այդ ծեր գեներալներից ոմանք պալատականներ էին. դա նշանակում է, որ նրանք երեսուն տարի շարունակ ամեն օր զգացել են, թե ինչպես ամենաանշան բանի համար կարող են մարդու վիզը ոլորել։

Որքան կարելի է շատ վնաս հասցնելու և ըստ հնարավորին անձամբ քիչ կորուստ կրելու այս կանոնը հետևողականորեն տարածվում է բոլորի վրա՝ սկսած դիվիզիոնի գեներալից մինչև քսանհինգ մարդուց բաղկացած դասակի համեստագույն հրամանատար ենթալեյտենանտը։

Երբ ֆրանսիական գեներալը քսան հազարանոց զորքի գլուխն անցած գրոհում է տասը հազար ավստրիացիների դեմ, փույթ չէ, որ մարտադաշտից մի քանի լյո հեռավորության վրա ավստրիացիներն ունենան ևս տասնհինգ-քսան հազար զինվոր, քանի որ այդ երկրորդ կորպուսը միայն այն ժամանակ կկարողանա օգնության հասնել ֆրանսիացիների գրոհած առաջին կորպուսին, երբ այն արդեն ջախջախված կլինի։

Փորձը ցույց է տալիս, որ հաղթանակի վստահ հազար զինվորը ջախջախում է երկու և նույնիսկ չորս հազար մարդ, որոնցից յուրաքանչյուրն անհատապես շատ քաջ է, բայց կասկածում է ճակատամարտի ելքին։ Հուսարական գունդը կարող է թրերով կոտորել վեց հազար փախչող հետևակայիններ. բայց բավական է, որ սառնասրտորեն գործող հրամանատարը այդ փախստականներին հավաքի մի որևէ պատվարի մոտ, նրանց հանձնարարի կտրել ութ կամ տասը ծառ և ճյուղերով փակել հեծելազորի ճանապարհը, սա, իր հերթին, փախուստի կդիմի։

Բայց այդ բացառությունն ամենևին էլ չի հերքում հիմնական և, կարելի է ասել, միակ օրենքը, որը գլխավոր հրամանա-

տարի համար այն է, որ նրա զինվորները մարտադաշտում մարաընչեն երկուսը մեկի դեմ։

Գլխավոր հրամանատարը ղեկավարվում է ճիշտ նույն սկզբունքով, ինչ որ կողոպտիչները, երբ խաչմերուկում, տասը հոգուց բաղկացած պարեկից հարյուր քայլ հեռու երեքով հարձակվում են մի անցորդի վրա։ Դժբախտ կողոպտվողին ի՞նչ օգուտ պարեկից, որն օգնության կհասնի երեք րոպե անց։

Ամեն անգամ, երբ Նապոլեոնը կտրում էր թշնամական բանակի թևը՝ անում էր միայն այն, որ հասնում էր երկուսն ընդդեմ մեկի հարաբերության։

Ռովերեդոյում, Բասսանոյում և Տիրոլյան կամպանիայի բոլոր մարտերում հազար ֆրանսիացի միշտ պարտության է մատնել երեք հազար ավստրիացու։ Հետևաբար, հազար ավստրիացու դեմ հազար ֆրանսիացի հանելով, Նապոլեոնը հետևում էր վերոհիշյալ կանոնին։

Թևային ռազմերթի ամբողջ դժվարությունն այն է, որ եթե նույնիսկ երկու բանակի զինվորներն էլ հավասարապես արագաշարժ ու քաջ են, կարող է պատահել, որ թևանցում կատարող բանակի ութ հազարանոց կորպուսներից մեկը շրջապատվի թշնամու տասնվեց հազար հոգուց բաղկացած զորքերի կողմից։

Կարող է նույնը տեղի ունենալ պաշտպանողական գործողություններից հարձակողականին անցնելիս։ Պատկերացնենք, որ Փարիզից մինչև Հոնֆլեր Սենի ձախ ափն զբաղեցնող, պաշտպանողական դրության մեջ գտնվող բանակը մոտ ութսուն թե հարյուր պահակակետ ունի՝ յուրաքանչյուրը հարյուր մարդուց բաղկացած և երկու-երեք հազարանոց հինգ, թե վեց ջոկատ։ Հարձակման անցնելու համար ընդդեմ մի բանակի, որը գալիս է, օրինակի համար, Շարտրից, այն պետք է համախմբվի մեկ կամ առավելագույնը երկու կորպուսի մեջ։ Եթե այդ օպերացիայի համար փոքրիկ ջոկատներից ամեն մեկը գնա ամենակարճ, այսինքն՝ դրոշագծով, ապա պարզ է, որ այդ բանակը, եթե չափազանց դանդաղի իր շարժումով, իսկական թևային ռազմերթը կկատարի թշնամու աչքի առջև, իսկ դա նրան հնարավորություն կտա չորս հազար մարդով հարձակվելու երկու հազարի վրա։

Փույթ չէ, որ մարտադաշտից հինգ լյո հեռավորության վրա այդ երկու հազար զինվորները վեց հազար մարտական ընկերներ կունենան. սրանք կարող են օգնության հասնել միայն այն ժամանակ, երբ երկու հազար գրոհի ենթարկվածներն արդեն ջախջախված կլինեն, այլ կերպ ասած՝ երկու հարյուրը կլինի սպանված, վեց հարյուրը՝ վիրավոր, չորս հարյուրը՝ գերված, իսկ վեց հարյուրը գլուխները կկորցնեն կամ էլ, ռազմական լեզվով ասած, կբառոյալվեն։

Հետևաբար, Շամպիոնների դեմ ուղղված իր արշավանքում (1799) գեներալ Մակը ճիշտ է գործել. նրա միակ սխալը, երբ դուրս էր եկել Նեապոլից՝ գրոհելու Հռոմում գտնվող ֆրանսիացիների վրա, այն էր, որ նա երևակայեց, թե ինքը զինվորներ ունի։ Ելնելով այս ենթադրությունից, վեց հազար նեապոլցիներ գրոհեցին երեք հազար ֆրանսիացիների վրա. գլխավոր հրամանատարն անգամ անկարող եղավ ավելին անելու։

Մի հանգամանք խառնաշփոթություն է մտցնում պատերազմի մասին եղած բոլոր դատողություններում. արդի լեզուներում նույն «բանակ» բառը նշանակում է և՛ այն զորքը, որն այնպես է կենտրոնացված, որ մեկ ժամ հետո կարող է ճակատամարտ տալ, և՛ այն զորքը, որը երկար մնալու համար ցրված է քսան լյո տարածության վրա։ Այսպես, օրինակ, բանակ է կոչվում մոտավորապես հետևյալ կերպ դասավորված հարյուր հազար զինվորը. քսան հազարը՝ Էտուալ հաղթակամարի մոտ, քառասուն հազարը՝ Բուլոնյան անտառում, քսան հազարը՝ Բուլոնում և քսան հազարը՝ Օտոյում. կամ նույնքան զինվորը՝ ցրված Բուլոնի և Ռուանի արանքում գտնվող բոլոր գյուղերում։

Ակնհայտ է, որ երկրորդ բանակը կկարողանա ճակատամարտ տալ միայն այն դեպքում, երբ կենտրոնացվի մի տեղում. բայց որպեսզի այն լրիվ հավաքվի երկու քառակուսի լյո տարածության վրա մի այնպիսի տեղում, ինչպիսին Բուլոնյան անտառն է ու դրա շրջակայքը, նախ անհրաժեշտ է քսանչորս ժամ ժամանակ, երկրորդ՝ գլխավոր հրամանատարը պետք է նախօրոք նրան ապահովի սննդամթերքով կամ էլ այդ փոքր տարածության վրա հարյուր հազարի չափ օրապահիկ կենտրոնացնի։

Այստեղից, իմիջիայլոց, հետևում է, որ ավստրիացիներին հարկադրական տեղաշարժ անելու ստույգ միջոցն այն քաղաքի վրա հարձակվելն է, որտեղ գտնվում են նրանց պարենամթերքի պահեստները. ավստրիական բանակի համար այդ քաղաքը միշտ էլ այն է եղել, ինչ Մանտուան գեներալ Բոնապարտի համար 1796 թվականի վերջին՝ բոլոր մտածմունքների առանցքակետը։

Երեսուն տարին մեկ, նայած թե թշնամուն ջախջախելու համար որ հանձնարարագրին է մոդայի պատճառով առավելագույն ուշադրություն նվիրվում, ռազմական արվեստի տերմինները փոխվում են, և անգետը երևակայում է, թե, իբր, փոխելով անունները, ինքը սկսել է ավելի կատարյալ մտածել[1]։

Մեզ հայտնի են Նապոլեոնի հիանալի դատողությունները Հաննիբալի, Տյուրենի, Ֆրիդրիխ II-ի, Հուլիոս Կեսարի և այլոց արշավանքների մասին։ Նապոլեոնը բավականաչափ վստահ էր իր մտքերին՝ լիակատար պարզությամբ արտահայտվելու համար։ Կարդալով այդ դատողությունները, հասկանում ես ռազմական արվեստի մասին եղած ճոռոմ արտահայտությունների մեծ մասի ողջ ծիծաղելիությունը։

ԳԼՈՒԽ XIII

Նապոլեոնը հոկտեմբեր ամիսը նվիրեց Իտալիայի ներքին գործերին։

Վուրմզերի ներխուժման վտանգը աշխուժացրեց Հռոմի կուրիայի հույսերը, և նա դադարեց կատարել Ֆոլինիոյի զինադադարի պայմանները։ Այդ վտանգավոր ուժը հնազանդ պահելու համար հարկ էր լինում բանակցությունները վարպետորեն զուգակցել սպառնալիքներին։ Քսան ամիս անց կարդինալ Ռուֆֆոն Կալաբրիում ցույց տվեց, թե ինչպիսի հրաշքներ կարող է գործել հմտորեն նպատակաուղղված կրոնական մոլեռանդությունը[2]։

Մանտուայի կայազորն ապահովելով նախապես մթերված պարենով, Մոդենի կառավարությունը դրանով իսկ լկտիաբար խախտեց զինադադարի պայմանները։ Ֆրանսիացիք գրավեցին Մոդենը։ Ռեջոյի հայրենասերներն իրենք կատարեցին իրենց հեղափոխությունը։

Հարց առաջացավ Ֆրանսիայի տիպի հանրապետություններ ստեղծելու մասին։ Ֆրանսիական զորավարի առաջարկությամբ և նրա կողմից խելացիորեն գումարված կոնգրեսի հետևանքով

[1] Նույն բանն է նկատվում բուժելու արվեստում։

[2] Տե՛ս Կոլետտի «Նապոլի պատմությունը 1735-ից մինչև 1815 թվականը» շատ ճշմարտացի աշխատությունը։

Բոլոնիան և Ֆերրարան կազմեցին մի հանրապետություն։ Մի երկրորդը ստեղծվեց Ռեջոյում։ Այս երկու հանրապետությունները, որոնք ի հիշատակ հռոմեական դավառների հին անունների ստացան «Ցիսպադանյան» անունը, շատ կարճ գոյատևեցին։ Բոնապարտը ձգտում էր ստեղծել այդ պետությունները միայն հանուն իր բանակի շահերի. ավելի վեհ նկատառումներ նրան թույլ չէին տալիս Բարբասի ու Ռոբելի և իրենց՝ իտալացիների նախապաշարմունքները։ Այդ ժամանակներում Իտալիայի ամեն մի քաղաք ատում և արհամարհում էր իր հարևան քաղաքին. դատելով ըստ ամենայնի, այդ իրավիճակն ստեղծվել է դեռևս նախքան հռոմեացիների կողմից Իտալիայի նվաճումը և մի քիչ մեղմացել միայն Իտալական թագավորության գոյության շրջանում՝ 1802 թվականից մինչև 1815 թվականը։ Դեռ մինչև այժմ էլ այդ ատելությունն Իտալիայի ազատության կամ առնվազն անկախության ամենաուժեղ խոչընդոտն է։

Խրախուսելով սակավակյաց հանրապետությունների կազմավորումը, Նապոլեոնը միաժամանակ սիրով կպահպաներ ազնվականների և հոգևորականության որոշ արտոնությունները, քանի որ ամենից առաջ ցանկանում էր, որ Ադիջեի առաջիկա կռիվների ժամանակ այդ երկու զորավոր դասակարգերն իրեն դեմ չլինեն։ Հանրապետական բանակի անհաջողությունները Գերմանիայում նրան ստիպում էին սպասել, որ այդ վճռական պայքարը կսկսվի շատ մոտ ապագայում. բայց նրա կողմից մեծագույն անզգուշություն կլիներ երիտասարդ հայրենասերների հետ, որոնցից բաղկացած էր իր բանակը, խոսել որևէ այլ բանի մասին, քան զուտ դեմոկրատիան։

Միլանցիների խանդավառությունը պաղեցնում էր այն շատ հիմնավոր երկյուղը, թե չլինի հանկարծ հաշտություն կնքելուց հետո իրենց վերադարձնեն Ավստրիայի իշխանության ներքո՝ դրանով նրան փոխհատուցելով Բելգիայի կորուստը։ Քաղաքական ազնվությունից դրդված, գեներալ Բոնապարտն աշխատում էր որքան կարելի է ավելի քիչ վարկաբեկել այդ մարդերի բնակչությանը, որը սոսկալի տառապանքներ կկրեր, եթե Ավստրիան երբևիցե հնարավորություն ստանար նրան պատժելու ֆրանսիացիների նկատմամբ տածած սիրո համար[1]. այդպես վարվելով,

[1] Աքսորումները Բոկկա դի Կատտարո՝ 1799 թվականին։ 1801 թվականին

նա հետևում էր Դիրեկտորիայի կարգադրություններին, որն այս միակ անգամ ողջամտություն էր ցուցաբերել։

Վերին Իտալիայի այս ամբողջ ցուցադրովի քաղաքական կարգավորման իսկական նպատակն էր՝ սնուցել այդ երկրամասի բնակիչների ինքնասիրությունը և Լոմբարդիային դրդել մի քանի վարձու գնդեր կազմելու։ Ենթադրվում էր, որ այդ գնդերը Պոյի հովտի հանրապետությունների ազգային գվարդիայի հետ մեկտեղ կապահովեն կարգը նվաճված մարզերում, որի շնորհիվ ֆրանսիական կայազորի մի մասը կարող է այլ կերպ օգտագործվել։

Իտալիայի մնացած մարզերը բանակին ոչ մի լավ բան չէին խոստանում։ Բանակցությունները Նեապոլի հետ ձգձգվում էին. Պիեմոնտի քաղաքականությունն անկայուն էր թվում։ Զարմանալի էր, թե ինչպես է, որ Վիկտոր-Ամադեյ թագավորը չի նկատում, որ իր գրությունը միանգամայն համընկնում է 1705 թվականին ստեղծված վիճակի հետ, երբ նրա նախահայր Կառլոս II-ը դուրս եկավ Լյուդովիկոս XIV-ի՝ Ադիջեում գտնվող զորքերի դեմ և ջախջախեց նրանց։

Հանկարծակի վախից ուշքի գալով, պապն արդեն չէր մտածում հաշտություն կնքելու մասին։ Ջենովայի սենատը, հոգնելով ֆրանսիական զորքերը պահելու համար կատարվող բռնագրավումներից, խրախուսում էր այն խռովությունները, որ մեկ-մեկ բռնկվում էին Ջենովայի տարածքի մեջ մտցված կայսերական ավատական տիրույթներում։

Ինչ վերաբերում է Վենետիկին, ապա նա խորապես ատում էր ֆրանսիական հանրապետությանը. նա հնարավորություն ուներ վիթխարի վնաս հասցնելու բանակին, բայց նրան հավասարապես պակասում էր և՛ լուսավորությունը, և՛ արիությունը։ Ֆրանսիայի բախտից Վենետիկում արդեն չկային այնպիսի մարդիկ, ինչպիսիք են Մորոզինին*, Դանդոլոն*, Ալվիանոն*։ Նրանց ողորմելի հետնորդները նույնիսկ չէին նկատում, որ սեփական ձեռքում են պահում իրենց անչափ սարսափ ներշնչող այդ բանակի ճակատագիրը։

---

* ես ականատես եմ եղել Բրեշիա արտաքսվածների վերադարձին։ Նրանց բանտարկության շատ հետաքրքրական պատմությունը տե՛ս դժբախտ Ապոստոլիի* գրքում (Նշվ. աշխ.)։ 1821 թ. Շպիլբերգի մասին տե՛ս Սիլվիո Պելլիկոյի «Le mie Prigioni» գրքում։

Այնտեղ, ինչպես և ամենուր, ծեր Եվրոպան չէր կարող Հանրապետությանն այլ բան հակադրել, քան խորամանկությունն ու դավաճանությունը։ Ֆրանսիայի սահմաններից դուրս այլևս գոյություն չուներ կամքի ուժ. բացառություն էին կազմում միայն Պիտը և Նելսոնը։ Թերևս հենց այդ պատճառով էլ Անգլիան, որը քիչ էր շահագրգռված մայրցամաքի հին միապետությունների պայքարով ընդդեմ Հանրապետության, վերջիվերջո դարձավ կոալիցիայի առաջնորդը, քանզի ես չեմ կարող հավատալ, որ 1796 թվականին անգլիական արիստոկրատիան ռադիկալներից վախենալու որևէ բան ուներ։ Ինչ էլ որ լինի, Անգլիան մինչև օրս էլ վարձահատույց է լինում այն բավականության համար, որով նրա արիստոկրատիան քառասուն տարի առաջ հագուրդ է տվել իր հպարտությանը. գոյացել է հսկայական պետական պարտք, որի համար հարկավոր է տոկոսներ վճարել։

Ֆրանսիայի բնակչությունը, որն այն ժամանակ քսանհինգ միլիոն էր, այժմ (1837) հասել է երեսուներեք միլիոնի. ժողովուրդն այնտեղ սեփականատեր է դարձել, ձեռք բերել բարեկեցություն, բարոյականություն և զվարճություններ. մինչդեռ տասնհինգ միլիոն անգլիացիներից տասը միլիոնն ստիպված է օրական տասնչորս ժամ աշխատել, որպեսզի քաղցից չմեռնի փողոցում։ Այսպիսով, Անգլիան այժմ Եվրոպայի միակ երկիրն է, որտեղ դեռևս զգալի են հեղափոխության դեմ մղած պայքարի առաջացրած աղետները, իսկ Ֆրանսիան աճում ու բարգավաճում է, չնայած նրա անվստահությանը, թե ինչպիսի կառավարություն կունենա 1847 թվականին։

Որպեսզի քիչ թե շատ տանելի դարձնի նրանց դրությունը, ովքեր սեփականություն չունեն, անգլիական արիստոկրատիան ստիպված է հրաժարվել իր արտոնություններից, նա հարկադրված է անխուսափելի ապստամբության սպառնալիքի տակ ավելի շատ ազատություն տալ։ Ահա, ինձ թվում է, մի ահեղ պատասխան պ-ն Պիտին. հավանաբար մոտ ապագան նույնպիսի պատասխան է պատրաստում պ-ն Մետեռնիխին։

1796 թվականի հոկտեմբերին Նապոլեոնը գլխավորապես ուշխատում էր երկարաձգել այն թմրությունը, որի մեջ գտնվում էր Վենետիկը. նրա այդ ձեռնարկին դիմադրում էր պրոկուրատոր Պեձարոն, որը համառ խնդրանքների և անթիվ ստորացումների գնով համոզեց ազքատամիտ սենատին սլավենական միլիցիայի

հավաքագրում հայտարարել և պատրաստել նավատորմիզ՝ ծովալճակները պաշտպանելու համար։

Հռոմի կուրիայի վարքագիծը դառնում էր անտանելի, և Բոնապարտն արդեն մտադիր էր շարժվել Հռոմի վրա, բայց ավստրիական զորքերի առաջխաղացումը նրան ստիպեց զբաղվել բացառապես այն բանով, ինչ պետք է տեղի ունենար Ադիջեում։

Դեռևս հրաժարվելով հասկանալ Իտալիայում տիրող իսկական իրավիճակը, Դիրեկտորիան պապին ներկայացրեց հաշտության պայմանագրի նախագիծ, որը պարունակում էր վաթսունչորս հոդված. նման պայմանագիր Դիրեկտորիան կարող էր պարտադրել նրան, երբ իր զորքերը ճամբար դնեին Ցանիկուլում"։

Այդ հանդգնությունը բանակի համար տխուր հետևանքներ ունեցավ. Հռոմի կուրիան հաշտությունը համարեց չկայացած, և ռազմատուգանքի վճարման համար նախատեսված փողերը չմուծվեցին։

Ինչորյա, քառասունժամյա աղոթքները, պատարագները, թագավորները՝ ամեն ինչ գործի դրվեց ագետ ու կրքոտ ժողովրդի ատելությունը բորբոքելու համար, որը հետագայում հիանալի զինվորներ տվեց Ֆրանսիային։ Կոնետաբլ Կոլոնն իր հաշվին գինեց մի հետևակային գունդ, իշխան Ջուստինիանին՝ հեծյալ գունդ։ Այսպիսով, հաջողվեց գինել ութ հազար մարդ։ Հետագայում մենք կպատմենք այդ բանակի ծիծաղելի ճակատագրի մասին։

Հանրապետական բանակի դրությունը մի քիչ լավացավ Նապոլի հետ հոկտեմբերի 10-ին կնքված հաշտության պայմանագրի շնորհիվ. Նապոլեոնը Կառնոյին համոզեց, որ անհրաժեշտ է կընքել այդ հաշտությունը։ Դիրեկտորիայի մնացած չորս անդամները շատ դժկամ տվեցին իրենց համաձայնությունը։ Լարևելիեր-Լեպոն ազնիվ և ուղղամիտ մարդ էր. Ռեբելը զուրկ չէր վարչական ընդունակություններից, բայց կարելի է ասել, որ Դիրեկտորիան երբեք ոչինչ չի հասկացել իտալական գործերից։

Սարդինիայի զառամյալ թագավորը մեռավ. նրա փոխանորդ Կառլոս-Էմանուիլը միության առաջարկին պատասխանեց Լոմբարդիան իրեն զիջելու խնդրանքով։ Դիրեկտորիայի անդամները պետք է նրան խոստանային այդ գավառի գոնե մի մասը և հնարավորություն տային Նապոլեոնին չորս միլիոն բաժանելու նոր թագավորի պալատականներին։ Նրանք դրան չհամաձայնվեցին։

Դիրեկտորիայի անդամները կարծես թե եռանդագին նախապատրաստում էին մի ահավոր իրադարձություն, որը քիչ էր մնում տեղի ունենար Արկոլեի մոտ։ Նրանք համառորեն հրաժարվում էին ընդունել, որ բավական է Պիեմոնտի քաղաքականությունը փոխելը, որպեսզի ֆրանսիական բանակը՝ չունենալով ո՛չ գործողությունների բազա, ո՛չ էլ նույնիսկ նահանջի գիծ, խիստ վտանգավոր դրության մեջ ընկնի։

Ադիջեում ամենամեծ դժվարությունների պահին Նապոլեոնը Ջենովայի դռժի մոտ ուղարկեց իր համհարզին, որին հանձնարարված էր մի շարք պահանջներ ներկայացնել և պահանջել դրանց բավարարումը՝ սպառնալով մերժումի դեպքում շարժվել Ջենովայի վրա։ Ջենովայի արիստոկրատիայի մեջ չգտնվեց մեկը, որ մերժեր համհարզին, և հոկտեմբերի 9-ին Ջենովան ստորագրեց հաշտության պայմանագիր, որի համաձայն իրեն դնում էր ֆրանսիական հանրապետության տնօրինության տակ և պարտավորվում չորս միլիոն վճարել։

Կայսերական ավատական տիրույթների գյուղացիները նվազ կամազուրկ գտնվեցին, քան այդ արիստոկրատիան. ատելությունը նրանց արիություն ներշնչեց. երկրորդ անգամ ապստամբություն բռնկվեց, բայց այն ճնշվեց արագաշարժ խմբի կողմից։

Կորսիկացիները դժգոհ լինելով անգլիացիներից, որոնք իրենք էին իրենց մոտ՝ կղզի կանչել, նրանց գնդակոծում էին հրացաններով. անգլիացի գեներալը գրավեց Պորտո-Ֆերրայոն։ Նապոլեոնը շատ հմտորեն էր նախապատրաստել գեներալ Ջենտիլիի արշավախումբը. չնայած թշնամու պահականավերին, նա 1796 թվականի հոկտեմբերի 12-ին մի խումբ զինվորներով ափ իջավ Կորսիկայում։ Մի քանի օրում Ջենտիլին կղզուց քշեց անգլիացիներին և ֆրանսիացի վտարանդիներին։

Այսպիսին էր Նապոլեոնի քաղաքական գործունեությունը 1796 թվականի սեպտեմբերի 15-ին Սան-Ջորջոյի ճակատամարտից մինչև Կալդիերոյի անհաջող գրոհը՝ նույն թվականի նոյեմբերի 12-ին։ Դիրեկտորիան, որը, թերևս, թաքուն ցանկանում էր նրա պարտությունը, ցույց չէր տալիս ոչ մի աջակցություն։ Դժվար չէ պատկերացնել, որ նրա նամակագրությունն այդ ապաշնորհ ու անբարյացակամ կառավարության հետ անկեղծության օրինակ չէր։

ԳԼՈՒԽ XIV

Նապոլեոնը խուսափում էր աննշան առիթներով զայրացնել Դիրեկտորիային։ Նրա բանակում անամոթաբար գողանում էին ինչպե՛ս բնակչությունից բնամթերքի բռնագրավումների ձևով ստացվող պաշարներից, այնպե՛ս էլ դրամական ռազմատուգանքներից։ Այդ գործերը տնօրինող մարդկանց Նապոլեոնին պարտադրել էր Դիրեկտորիան, և նրանք իրենց ներկայացնում էին իբրև Դիրեկտորիայի անդամների ազգականներ կամ սիրեցյալներ։ Գեներալ Բոնապարտը, որը հաճախ էր ստիպված խախտել առաջնակարգ կարևորության հարցերի վերաբերյալ Փարիզից ստացած անմիտ կարգադրությունները, չէր ուզում ընչին առիթներով գժտվել Դիրեկտորիայի հետ։ Իրոք, բանակի համար ի՞նչ նշանակություն ուներ այն, որ Բարրասի մի որևէ զարմիկ գրպանել է երկու-երեք հարյուր հազար ֆրանկ։ Կարևորն այն է, որ Նապոլեոնին երկու-երեք հազար մարդ օգնական ուժեր ուղարկեին։

Արդեն այն ժամանակ Նապոլեոնի գլխով չէր կարող չանցնել նրա կողմից հետագայում իրականացված՝ գլխավոր գանձապահի պաշտոն սահմանելու միտքը, որի գանձարկղում պետք է հավաքվեին բոլոր ռազմատուգանքները։ Այդ գանձարկղից ոչինչ չպետք է տրվեր առանց գլխավոր գանձապահ կամ գլխավոր ինտենդանտ կոչվող բարձրագույն պաշտոնատար անձի ստորագրության։ Այն գեկույցներից, որ գլխավոր հրամանատարն ուղարկում էր Դիրեկտորիային, երևում է, որ նա այդ կարևոր պաշտոնի համար շնորհալի և անբասիր ազնիվ մարդ էր գտել՝ գանձապահ Բուանոյին։ Հետևաբար, այդ գերատեսչությունն ստեղծելը շատ դյուրին գործ էր։ Բայց, նախ՝ գեներալ Բոնապարտը բազմաթիվ թշնամիներ կվաստակեր, երկրորդ՝ Փարիզում Դիրեկտորիան արտակարգ կարիքի մեջ էր և դրամական մեծ դժվարություններ էր զգում։ Հարկերը պետական գանձարան էին մուծվում զուտ թղթադրամներով, որոնց արժեքը հնչուն դրամով դրանց անվանական արժեքի մեկ հարյուր հիսուներորդ մասն էր կազմում։ Դիրեկտորիան ստիպված էր թղթադրամից անցնել մետաղադրամի։ Դիրեկտորիայի անդամներից ոչ մեկն այնքան գիտակ չէր քաղաքատնտեսությանը, որպեսզի վստահեր իրերի զարգացման բնական ընթացքին և ըմբռներ, որ մեծ ազգը, որին միշտ փող է հարկավոր ամենօրյա փոխանակության և առևտրական գործարքների համար,

պահանջվող ամբողջ ժամանակ անխուսափելիորեն կվստահի այն գրամին, որ կմտցնի կառավարությունը։

Դիրեկտորիան գտնում էր, որ իրեն առավել քան անհրաժեշտ է այն վարկը, որ տալիս էին շրջապատող գործարար մարդիկ։ Նա համոզված էր, որ առանց նրանց Ֆրանսիան կկործանվի։

Բարրասը հովանավորում էր այդ գործարար մարդկանց մեծ մասին։ Նրանք Իտալիա էին գալիս Դիրեկտորիայի հանձնարարություններով։ Բարրասի շնորհիվ Նապոլեոնը նշանակվեց գլխավոր հրամանատար. վանդեմիերի 13-ի հիշարժան օրը նա անվանապես Բարրասի ենթակայության տակ էր, և հենց այդ օրից էլ սկսվեց նրա բարձրացումը։

Երբ Դիրեկտորիայի անդամներն իրենց միջև բաշխում էին պարտականությունները, Բարրասն իր տնօրինության տակ վերցրեց բանակների անձնակազմը, իսկ Կառնոն՝ դրանց տեղաշարժերի ու արշավանքների պլանների ղեկավարումը։

Միայն Դիրեկտորիայի հովանավորությունից օգտվող գանձագող աստիճանավորները չէին, որ դժվարացնում էին գլխավոր հրամանատարի աշխատանքը։ Իտալիայում գործող բանակի համար խոչընդոտ էին նաև գլխավոր հրամանատարի հետ շարունակ թշնամություն անող կառավարական կոմիսարները։ Այդ կոմիսարները, որոնք ժամանակին եղել էին ժողովրդի ներկայացուցիչներ, լավ էին հասկանում, թե իրենք ինչպիսի կարևոր դեր են խաղացել բանակում հեղափոխական կառավարության օրոք։ Այն տարիներին նրանք իրենց մի որոշումով գեներալին հեռացնում էին հրամանատարությունից և հանձնում հեղափոխական դատարանին, որը սովորաբար նրան մահապատժի էր դատապարտում։

Դատելով ըստ ամենայնի, Իտալական բանակին առընթեր կառավարական կոմիսարները լուծում էին զորքերի տեղաբաշխման հետ կապված հարցեր. օրինակ, նրանցից էր կախված կիսաբրիգադը գործող բանակ, թե Լիգուրիայի որևէ ամրոց՝ կայազորային ծառայության ուղարկելը։ Ըստ երևույթին, այդ կոմիսարներն էլ մեծ չափով տնօրինում էին նաև ռազմատուգանքների հաշվին արվող դրամական մուտքերը, որ բանակը գանձում էր իտալական մանր իշխանիկներից։ Նապոլեոնի նամակագրությունից երևում է, որ նրանք իրենց թույլ էին տալիս հրամաններ

հրապարակել, որոնք մեծ հարկեր էին գնում Իտալական բանակի դիվիզիոնային գեներալների վրա[1]։ Նապոլեոնը, իհարկե, իր գեներալներին արգելում էր ենթարկվել այդ հրամաններին։

Այդ կոմիսարների անուններն էին՝ Գարրո և Սալիչետտի։ Դրանցից երկրորդը բացառիկ խորաթափանց մարդ էր. հետագայում նա դարձավ Նեապոլի «ֆրանսիական» թագավորներից մեկի պրեմիեր մինիստրն ու ոստիկանության մինիստրը։ Նա մահացավ՝ իր ենթականերից ինչ-որ մեկի կողմից թունավորվելով։ Ավելի վաղ՝ դավադիրները փորձել էին պայթեցնել նրա պալատը։

Նապոլեոնի քաղաքականությունը նրան թույլ չէր տալիս անձնատուր լինել ցասման պոռթկումներին, որ նրա մեջ առաջացնում էին Դիրեկտորիայի հովանավորությունից օգտվող ոստիճանավորների ու մատակարարների հափշտակությունները և իր բանակի ֆինանսների ծայրահեղ քայքայված վիճակը։ Էլ ավելի քիչ էր նա հանդգնում գանգատվել կառավարական կոմիսարներ Գարրոյի և Սալիչետտիի գործողություններից։

Դիրեկտորիան նրա մոտ ուղարկեց ինչ-որ մի գեներալի՝ հանձնարարելով գաղտնի հետևել նրան և ամեն ինչի մասին տեղեկացնել իրեն։ Նապոլեոնը կարող էր հեշտությամբ մեծ վտանգների ենթարկել գեներալ Կլարկին, որին տրված էր այդ յուրահատուկ հանձնարարությունը։ Նման գործելակերպը միանգամայն կհամապատասխաներ իտալական հինավուրց բարքերին։ Բայց Նապոլեոնը, որը հոգու խորքում երբեմն նման հակումներ էր զգում, կարողացավ դրանք ենթարկել բանականության իշխանությանը. նա գերադասեց իր կողմը տրամադրել գեներալ Կլարկին, որը հետագայում գործիք դարձավ նրա կառավարության, ինչպես նաև հետագայում՝ Լյուդովիկոս XVIII-ի կառավարության ձեռքին։

1797 թվականի կամպանիայի վերջում Դիրեկտորիան ստիպված եղավ Նապոլեոնի հետ բանակցություններ վարել՝ ինչպես հավասարը հավասարի հետ, և դրա համար ուղարկեց պ-ն Բոտտոյին՝ Բարրասի սիրեցյալին։

Ճիշտն ասած, Դիրեկտորիայի անդամները սոսկ քաղքենիներ էին, որոնց միավորում էին ամեն տեսակ մանրիկ կրքերը, իսկ

1 Նապոլեոնի երկերը, հրատ. Պանկուկի, հ. I։

Բոնապարտը մեծ մարդ էր։ Բայց չի կարելի մոռանալ, որ վերջիվերջո նա տապալեց թե՛ Դիրեկտորիան և թե՛ բուն Հանրապետությունը, և որ Դիրեկտորիայի անդամները նրա նկատմամբ ամենևին էլ չդրսևորեցին այն ողջ դաժանությունը, որ նրանց պարտավորեցնում էր պարտականությունը։

Ընթերցողը, հավանաբար, մտածում է, որ «ռեստավրացիաներից» Ֆրանսիայի կրած բոլոր ձախորդությունների պատճառները հարկավոր է որոնել այն գործողություններում, որ Նապոլեոնը կատարել է 1805 թվականին, ավստրիական առաջին արշավանքից հետո։

Բայց Նապոլեոնն ամենևին էլ չէր նախատեսում Ռեստավրացիա. նա միշտ միայն յակոբինյաններից է վախեցել։ Իր ընդհանուր կրթության ծայրահեղ անբավարարության պատճառով նա չէր կանխատեսում այս կամ այն իրադարձության պատմական հետևանքները։ Փոխանակ դրանք ստոնասրտորեն կշռադատելու, նա հստակ պատկերացնում էր այն բոլոր վտանգները, որոնց կարող էր ինքը ենթարկվել, և իր մեծ հոգում գտնում պատասխանը՝ «ինչ լինելու է, թող լինի»։

Կարելի է ասել, որ Նապոլեոնի ձեռնարկած այն բոլոր միջոցառումները, որոնք ամենից շատ են նպաստել Բուրբոնների վերադարձի հնարավորությանը, թելադրվել են բացառապես նրա ռազմական բնազդով և յակոբինյանների կողմից իրեն պատճառած վախից ազատվելու ցանկությամբ։

Ավելի ուշ նրա գործողությունները դեկավարել է երեխայական փառասիրությունը, միապետների աղնիվ դասին իրեն արժանի ցույց տալու ցանկությունը, դաս, որի մեջ ինքը վերջերս էր ոտք դրել։ Եվ, վերջապես, այն արտակարգ գթասրտությունը, որն իր անկման անմիջական պատճառն է հանդիսացել, նա դրսևորել է՝ որովհետև չի ցանկացել հանդիմանության առիթ տալ, թե ինքը, իբր, թույլ ու դաժան թագավոր է։

Ահա թե ամբողջ աշխարհն ինչ էր կարող տեսնել Իտալիայում 1796 թվականի նոյեմբերի սկզբին։ Նապոլեոնը, որը պետք է հակահարված տար վաթսուն հազարանոց բանակին, իր տնօրինության տակ ընդամենը երեսունվեց հազար զինվոր ուներ, որոնք հոգնել էին ինը հաղթական ճակատամարտերում և հսկայական անցումներում. ընդ որում ամեն օր բազմաթիվ զինվորներ հիվանդանում էին Մանտուայի շրջակայքում մոլեգնող տենդով, որն

ուշ աշնանը կործանարար էր առողջության համար։ Եվ, սակայն, այդ վայրերն անհրաժեշտ էր գրավել։ Բոնապարտն իր դրության մասին գրեց Դիրեկտորիային, որին ցավով հայտարարեց, թե Հանրապետությունը կկորցնի Իտալիան։

ԳԼՈՒԽ XV

Երկու ամիս շարունակ, 1796 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը, ֆրանսիական բանակի գլխավոր ուժերը դիտակետեր էին գրավում Բրենտայում և Ադիջեում։ Մանտուան պաշարող զորքերը խիստ տառապում էին տենդի համաճարակից։ Հոսպիտալները լեփ-լեցուն էին, զինվորները մեծ խմբերով դուրս էին գալիս շարքից. հիվանդների թիվը հասնում էր տասնհինգ հազարի· անձամբ գլխավոր հրամանատարի առողջությունը սաստիկ երկյուղ էր ներշնչում։ Մեկ ուրիշ զորավարի հրամանատարության ներքո այդ բանակը վաղուց ետ շպրտված կլիներ մինչև Ալեսսանդրիա, իսկ թերևս՝ մինչև Վար։

Օժանդակ զորքերը չափազանց դանդաղ էին ժամանում։ Ընդհակառակը, բարոն Թուգուտը դարմանալի ակտիվություն էր դրսևորում. նա ուզում էր, ինչ գնով էլ լինի, մի անգամ էլ փորձել ազատագրել Մանտուան։ Իտալիայում գտնվող ավստրիական բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց մարշալ Ալվինցին. նրա օգնականներն էին Քվազդանովիչը և Դավիդովիչը։

Թերևս, ընթերցողը հիշում է, որ Բասսանոյի մոտ պարտություն կրելուց հետո Քվազդանովիչը, ի վիճակի չլինելով իր գլխավոր հրամանատար Վուրմզերի ետևից անցնել Բրենտան, նահանջեց դեպի Գորից. նրա ուժերը հասցվել էին մոտ քսանհինգ հազար մարդու։ Գեներալ Դավիդովիչի մոտ նորից քսան հազարի չափ զորք հավաքվեց։—

Չի կարելի չհիանալ կայսերական ռազմական խորհրդի կամ մինիստր Թուգուտի (ես չգիտեմ, թե հատկապես որ մեկի) հաստատակամությամբ ու վճռականությամբ։ Ինչ՞ր ասես, որ չէր անի Նապոլեոնը, եթե նրան պաշտպաներ նման մի կառավարություն։ Բայց նրա փառքն այնքան մեծ չէր լինի, և ֆրանսիական ժողովուրդը չէր կարողանա մշտապես հպարտանալ, որ ծնվել է մի մարդ, որը հանդգնել է չնահանջել Արկոլեի ճակատամարտի նախօրյակին։

Գլխավոր հրամանատար Ալվինցին ժամանեց Քվազդանովիչի զորքերի դասավորության վայրը և վերսկսեց հարձակումը՝ Բասսանոյի վրայով ուղևորվելով դեպի Վերոնա, որտեղ նա հույս ուներ միանալ Դավիդովիչին, որը հրաման էր ստացել իջնել Ադիջեի երկայնքով։

Եթե Նապոլեոնն ընդառաջ գնար Ալվինցիին և հեռանար Վերոնայից, Դավիդովիչին հնարավորություն կտար ետ շպրտել Վոբուային, Մանտուայի տակ միանալ Վուրմզերին և այդպիսով ֆրանսիական բանակի թիկունքում կենտրոնացնել ավելի մեծ թվով զինված ուժեր, քան Նապոլեոնը կկարողանար հավաքել։

Եթե, ընդհակառակը, Նապոլեոնը որոշեր իր գլխավոր ուժերը ետ քաշել դեպի Ռովերեդո, գեներալ Ալվինցիի համար բաց կլիներ Մանտուա տանող ճանապարհը, որը, թեկուզև հակառակ կարգով կհանգեցներ նույն արդյունքին։

Եթե ֆրանսիական բանակն ամբողջովին կենտրոնացվեր Վերոնայի տակ, Ալվինցին և Դավիդովիչը կկարողանային Բրենտայի հովտով միավորվել։ Ջախջախումից խուսափելու համար ֆրանսիացիները պետք է կանխեին ինչպես այդ երկու գեներալների միավորումը, այնպես էլ դրանցից մեկնումեկի միանալը Վուրմզերին։

Խնդիրն անլուծելի էր թվում։

Վոբուայի ուժերը չափազանց աննշան էին, որպեսզի նա կարողանար պաշտպանել Տրիենտը. Նապոլեոնը նրան հրամայեց հարձակման անցնել՝ փորձելու ահաբեկել Դավիդովիչին։ Նոյեմբերի 2-ին Վոբուան որոշ հաջողություններ հասավ Սան-Միքելում՝ Ադիջեի հովտում, սակայն հաջորդ օրը ստիպված եղավ ետ քաշվել Կալիանո։ Ամսի 4-ին Դավիդովիչը մտավ Տրիենտ, և նույն օրն էլ Ալվինցիի բանակը գրավեց Բասսանոն։ Թշնամու մոտենալուն զուգընթաց Մասսենան նահանջեց Վիչենցայի վրայով և կանգ առավ Մոնտեբելլոյի մոտ։

Ավստրիական բանակի երկու գլխավոր մասերի միավորումն անխուսափելի էր թվում, բայց, բարեբախտաբար, թշնամու զորավարները շարունակում էին անջատ-անջատ գործել։ Դավիդովիչը շարժվեց դեպի Կալիանո, Ալվինցին՝ Վերոնա։

Նապոլեոնը փորձեց ջախջախել Ալվինցիին. հաջողության դեպքում նա հույս ուներ այնուհետև Բրենտայով վեր բարձրանալ և թիկունքից հարձակվել Դավիդովիչի վրա։ Մասսենայի և Օժե-

բոյի հետ նա մոտեցավ Բրենտային. թշնամին արդեն գետի մյուս ափին էր։

Նոյեմբերի 6-ին Մասսենան Կարմինյանոյի տակ գրոհեց Ալվինցիի ձախ թևի վրա, որի հրամանատարն էր Պրովերան. Օժերոն Լենովոյի մոտ հարձակվեց աջ թևի վրա, բայց հաջողությունը լիակատար չէր։ Պրովերան նորից անցավ Բրենտան, իսկ ավստրիացիների աջ թևը մոտեցավ Բասսանոյին։ Նապոլեոնին հայտնի դարձավ, որ ավստրիացիներն Ադիջեի հովտում խիստ նեղում են Վորուային։ Ահա թե նա երբ զգաց Դիրեկտորիայի խոստացած օգնական ուժերի կարիքը։ Եթե Վորուան տասը հազար զինվոր ունենար այն զինվորներից, որ հանգստանում էին Ստրասբուրգից այն կողմ, ոչինչ չէր սպառնա արշավանքի հաջողությանը։

Նման իրավիճակում հարկավոր էր հրաժարվել ընդարձակ պլաններից։ Արդեն նոյեմբերի 7-ին Նապոլեոնը, ի մեծ զարմանս տեղական բնակիչների, սկսեց նահանջել Վերոնայի ճանապարհով։ Ալվինցին հետևում էր նրան և նոյեմբերի 11-ին մտավ Վիլլանովա։ Վորուան չընդհատվող ուժեղ մարտերով շարունակում էր նահանջել և վերջապես 8-ի առավոտյան հասավ Կորոնա։

Նապոլեոնը շտապեց դեպի այդ դիվիզիան. նա կշտամբանքներ թափեց 39-րդ և 85-րդ կիսաբրիգադների վրա, որոնք թուլություն էին դրսևորել Կալյանոյի տակ։

Այդ ընթացքում բանակին ավելի ու ավելի էին նեղում. շրջապատումից խուսափելու համար հարկավոր էր, որ իրենք գրոհեն թշնամուն։

Ալվինցին իր զորքերը տեղավորեց Կալդիերոյի բարձունքներում՝ Վերոնայից երեք լյո հեռավորության վրա։ Դա Ալպերի վերջին լեռնաճյուղն էր։ Աստիճանաբար ցած իջնելով, դրանք հասնում էին Ադիջե. դրանց ստորոտով է անցնում Վերոնայից դեպի Վիչենցա գնացող խճուղին։ Խիստ թեք և խաղողի այգիներով պատած այդ բարձունքները՝ պաշտպանված մի կողմից Ադիջե գետով, մյուս կողմից՝ հարակից բարձր լեռներով, իրենցից հիանալի ռազմական դիրքեր են ներկայացնում. Ալվինցին շատ հմտորեն էր տեղավորվել դրանց վրա։ Նոյեմբերի 12-ին Նապոլեոնը գրոհեց Մասսենայի և Օժերոյի ուժերով. կյանքում առաջին անգամ նա դեն շպրտվեց թշնամու կողմից։

Վերադառնալով Վերոնա, նա տեսավ, որ իր վիճակն անհուսալի է։ Ամենուր ուժի պակաս կար, իսկ նրա բանակը, մտածելով, որ հայրենիքը երես է դարձրել իրենից, հուսալքվել էր։ Ամեն մի այլ զորավար նրա տեղ միայն կմտածեր Մինչև նահանջելու մասին, և Իտալիան կկորսվեր։ Ֆրանսիացիները, հաճախ մարտընչելով եռապատիկ ուժեղ թշնամու դեմ, նրան պարտության էին մատնում միայն այն բանի շնորհիվ, որ իրենց անպարտելի էին համարում։

Նապոլեոնի հանճարը նրան հուշեց մեծ վտանգի հետ կապված, բայց բացառիկ մի ելք, որը հաջողության դեռ ինչ-որ հնարավորություն էր թողնում։ Նա որոշեց կտրել Ալվինցիին։

Վերոնայից տեսանելի, Կալդիերոյից եկող ճանապարհին կանգնած Ալվինցիից աջ անանցանելի լեռներն էին, ձախից՝ Ադիջեն, իսկ դիմացը՝ անակնկալ հարձակումներից պաշտպանող հզոր պատերով պարսպված ամրոցը։ Հետևաբար, այն տեղանքը, որ նա զրաղեցնում էր, այսպիսով երեք կողմից փակ լինելով, Վիչենցայի կողմից միայն մի ելք էր թողնում՝ Վիլլանովայի կիրճը։

Ռոնկոյի մոտ անցնելով Ադիջեն, Նապոլեոնը սպառնում էր այդ ելքին. նա հակառակորդին ստիպեց մարտնչել ետադարձ ճակատով, որպեսզի իր համար ճանապարհ բանա։ Ընդ որում, ֆրանսիական բանակը մտել էր մի ճահճուտ տեղանք, որտեղ կարելի էր մարտնչել միայն երեք հողաթմբերի վրա. դրանցից մեկը, Ռոնկոյի մոտ սկսվելով, վեր էր բարձրանում Ադիջեի ձախ ափի երկայնքով, երկրորդը՝ գետի հոսանքն ի վար, իսկ երրորդը՝ Ռոնկոյից ձգվում էր մինչև Արկոլե գյուղը։

Այդ հողաթմբերում Նապոլեոնը, եթե ցանկանար, կարող էր սահմանափակվել պաշտպանությամբ. մարտնչողների միջև թվական հարաբերակցության հարցը վերանում էր, և, բացի այդ, նա հնարավորություն էր ստանում ծանրաշարժ գերմանացիների նկատմամբ օգտագործել ֆրանսիական զինվորի անհատական գերազանցությունը։

Այդ ճակատամարտը տևեց երեք օր՝ նոյեմբերի 15-ին, 16-ին, 17-ին, և միայն երրորդ օրվա վերջում հաղթանակ ձեռք բերվեց։ Նապոլեոնին մտահոգում էր ոչ միայն դեմուդեմ կանգնած Ալվինցիի բանակը։ Նա պետք է ամեն երեկո վերադառնար Ադիջեի ձախ ափը և աշխատեր իրեն վնասազերծել Դավիդովիչից, որը կարող էր հարվածել Մանտուային։ Հարցը միայն այն չէր, թե ֆրանսիացիները կտիրանա՞ն արդյոք ամբողջ Իտալիային, թե ոչ։

Այնքան մեծ էին այն դժվարությունները, որոնք հարկավոր էին հաղթահարել, և այնքան դրամատիկ էր գրությունը, եթե հաշվի առնենք, որ բախտախաղի էր դրված Իտալիայի մշակույթը, որը 1530 թվականից ճզմված էր ավստրիական տան կապարե գայլիսոնով, որ, հուսով եմ, ինձ թույլ կտրվի մեջ բերելու նույնիսկ ամենաանշան մանրամասնությունները։

Նապոլեոնը պաշարված Մանտուայի պատերի տակից ետ կանչեց գեներալ Կիլմենին երկու հազար զինվորի հետ։ Այդ ջոկատին նա հանձնարարեց Վերոնայի պաշտպանությունը, քանի որ այնտեղ հուսալի մարդ էր հարկավոր։ Նվազագույն վրիպումը Ալվինցիին հնարավորություն կտար միանալու Դավիդովիչին։

Մյուս կողմից, եթե Դավիդովիչը քիչ թե շատ համարձակ գործեր, կարող էր տասնինը հազարով ետ մղել Վորուային և նետվել դեպի Մանտուա կամ էլ գրոհով գրավել Վերոնան։ Այսպիսով, ֆրանսիացիների ձեռնարկած ամբողջ օպերացիայի ելքը կախված էր Դավիդովիչի հնարավոր գրոհից։

Նոյեմբերի 14-ի երեկոյան Նապոլեոնը Մասսենայի ու Օժերոյի դիվիզիաներով և հեծյալ պահեստազորով, որոնք ընդհանուր առմամբ կազմում էին մոտ քսան հազար մարդ, դուրս եկավ Վերոնայից։ Նա ցած իջավ Ադիջեի երկայնքով և գրավեց Ռոնկո գյուղը, որտեղ պատվիրեց կամուրջ գցել գետի վրայով։ Կամրջի մյուս կողմում անանցանելի ճահիճներ էին, իսկ դրանից այն կողմ՝ Ալպոնե գետակն էր, որն սկիզբ էր առնում Ալպերից և, հոսելով հյուսիսից հարավ, անցնում էր Վիլլանովայի միջով, որի միակ կամրջով Ալվինցին պարտության դեպքում կարող էր նահանջել։ Մասսենան ձախ հողաթմբով, որը Ռոնկոյից ձգվում էր Ադիջեով դեպի վեր, դուրս եկավ Պորչիլեի մոտ։ Օժերոն շարժվեց մեջտեղի հողաթմբով, որը հենվում էր Ալպոնեի վրայով գցված Արկոլեի կամրջին։ Հարկավոր էր կամուրջն անցնել, իսկ դա ոչ մի կերպ չէր հաջողվում։ Այն արիաբար էր պաշտպանում Ալվինցիի ամենաձախ թևում որպես դիտակայներ առանձնացված հորվաթների բրիգադը։ Օժերոն ետ շպրտվեց։ Հանկարծակի հարձակումը, որի վրա հույս էին դրել, չհաջողվեց։ Ալվինցին, անհանգստանալով իր թիկունքի համար, Պրովերային վեց գումարտակով Մասսենային ընդառաջ ուղարկեց Պորչիլե, իսկ ինքը, թողնելով Կալդիերոյի բարձունքները, իր գլխավոր ուժերով նահանջեց դեպի Սան-Բոնիֆացիո։

Եթե ֆրանսիական զորավարը, Ալպոնեի ձախ ափով հարձակվելով, չէր կարող հասնել Վիլլանովա, փոխարենը իր բանակը Պորչիլե տեղափոխելով, կարող էր հարվածել անմիջապես Ալվինցիի նահանջի գծին, բայց դրա համար նա պետք է գրավեր Արկոլե գյուղը, որպեսզի անվտանգ դարձներ իր աջ թևը և ծուղակ չընկներ շրջակա ճահիճներում։ Նապոլեոնը կրկնապատկեց ջանքերը, որպեսզի գրոհով գրավի Արկոլեի կամուրջը։ Ֆրանսիական գեներալների մեծ մասը ծանր վիրավորվել էր զինվորներին ոգևորելու փորձեր անելիս։ Նապոլեոնն ինքը գրոհի նետվեց իր գրենադերների գլուխն անցած, որոնք, կարտեչի կարկտի հանդիպելով, նահանջում էին։ Նապոլեոնը խրվում է ճահճի մեջ. մի ակնթարթ նա գրեթե թշնամիների իշխանության տակ է, բայց սրանք չեն նկատում, թե ինչպիսի հազվագյուտ որս է ընկել իրենց ձեռքը։ Գրենադերները վազելով վերադառնում են իրենց գեներալի ետևից և նրան տանում։ Արկոլեի կամուրջը գրավելը նրանց ուժերից վեր էր։

Սակայն երեկոյան դեմ ավստրիացիները թողեցին գյուղը. նրանց նահանջի պատճառը ֆրանսիական բրիգադի մոտենալն էր, որն Ալբարեդոյի մոտ լաստով անցնելով Ադիջեն, Ալպոնեի ձախ ափով շարժվեց դեպի վեր։ Բայց թիկունքից Ալվինցիի վրա հանկարծակի հարձակվելու պահը ձեռքից բաց էր թողնված։ Նապոլեոնը վտանգավոր համարեց իր զորքերը գիշերելու համար կուտակված թողնել ճահճուտ ցածրավայրում՝ Սան-Բոնիֆացիոյի և Սան-Ստեֆանոյի միջև բացագատված թշնամական բանակի աչքի առջև։ Ընդ որում կարող էր հարձակման ենթարկվել նաև Վորուան, իսկ այդ դեպքում հարկ կլիներ գիշերն արագ երթով շարժվել դեպի Մինչո՝ կանխելու Դավիդովիչի միացումը Վուրմզերի հետ։

Այդ պատճառով էլ ֆրանսիական ողջ բանակը նոյեմբերի 15-ին նորից անցավ Ադիջեի աջ ափը։ Ձախ ափին Նապոլեոնը միայն անհրաժեշտ ուժեր թողեց կամրջի պաշտպանության համար։ Այսպես անցավ Արկոլեի ճակատամարտի առաջին օրը։ Ինչպես տեսնում ենք, այն բարեհաջող չէր ֆրանսիացիների համար։

Համոզված, որ Վորուան 15-ին հարձակման չի ենթարկվի Դավիդովիչի կողմից, Նապոլեոնը 16-ի առավոտյան նորից իր զորքերն անցկացրեց Ադիջեի ձախ ափը։ Ավստրիացիները հաս-

ցրին գրավել Պորշիլեն, Արկոլեն և Ալբարեդոն. նրանք մոտեցան կամրջին, որի մոտ կանգնած էին ֆրանսիացիները, բայց ետ շպրտվեցին։

Մասսենան գրավեց Պորշիլեն, ապա իր բրիգադներից մեկը նետելով Թշնամու դասավորության կենտրոնը, հողաթմբի վրա կտրեց հաղար հինգ հարյուրանոց զորասյան ճանապարհը և նրան ամբողջությամբ գերի վերցրեց։ Օժերոն նորից շարժվեց դեպի Արկոլե. կրկնվեց այն, ինչ եղել էր նախօրյակին՝ ֆրանսիացիները մեծ կորուստներ կրեցին, բայց չկարողացան տիրել կամրջին։ Վրա հասավ գիշերը, և Նապոլեոնը նույն նկատառումներով, ինչ նախօրյակին, բանակին հրամայեց կրկին անցնել Ադիջեն։ Դա ցույց է տալիս, որ մինչև հաղթանակը դեռ շատ հեռու էր։

Դավիդովիչը 16-ին սկսեց գրոհել Կորոնայի վրա և գրավեց Ռիվոլին։ Վոբուան համապատասխան կարգով նահանջեց Կաստելնովո։ 17-ի լուսաբացին ֆրանսիացիները նորից մոտեցան կամրջին։

Այն պահին, երբ պետք է սկսվեր գետանցը, կամրջանավերից մեկն սկսեց սուզվել։ Այդ դժբախտ պատահարը կարող էր ամեն ինչ կործանել։ Բարեբախտաբար, վնասվածքը արագ վերացրին։ Անցնելով Ադիջեն, բանակն ավստրիացիներին նորից ետ շպրտեց դեպի Պորշիլե և Արկոլե։ Բայց ճակատամարտի այդ երրորդ օրը Ալպոնեի վրայով գցված՝ ճակատագրական Արկոլեի կամրջի գրոհը վարում էր միայն մի կիսաբրիգադ. հարկավոր էր Թշնամուն գայթակղելով տանել դեպի ֆրանսիացիների զբաղեցրած հողաթմբերը։ Մասսենան մյուս կիսաբրիգադն անձամբ էր տանում դեպի Պորշիլե։ Դիվիզիայի մնացած մասը մնում էր պահեստազորում, կամրջի մոտ։

Օժերոյի դիվիզիան Ալպոնեի վրայով կամուրջ գցեց այնտեղ, որտեղ այդ գետակը թափվում էր Ադիջե. նա այնուհետև պետք է հարձակվեր ավստրիացիների ձախ թևի վրա և այդպիսով Արկոլեն գրավեր թիկունքից։

Արկոլեում ավստրիացիներն օգնական ուժեր ստացան։ Ֆրանսիական կիսաբրիգադի հրամանատար գեներալ Ռոբերը սպանվեց, և նրա զինվորներն ավստրիացիների ուժեղ ճնշման տակ նահանջեցին գրեթե ընդհուպ մինչև Ադիջեի կամուրջը։ Բայց թշնամին չափից դուրս տարվեց հետապնդումով. հենց այդ էր ուզում ֆրանսիական զորավարը։ Իր հաջողությամբ հպարտ, ավստրիացիների հոծ զորասյունը գրոհ տվեց Մասսենայի դիվիզիայի գլխավոր ուժերի վրա։ Եղեգնուտում դարանակալած կիսաբրիգադը ճիշտ ժամանակին թևից հարվածեց այդ զորասյանը և նրան պատճառեց երեք հազար սպանվածների ու վիրավորների կորուստ. ողջ մնացածներն անկանոն փախան դեպի Արկոլեի կամուրջը։ Վրա հասավ վճռական պահը։

Ալպոնեն անցնելով, Օժերոյի դիվիզիան վերջապես հայտնվեց ձախից ճահճին դեմ առած ավստրիացիների ձախ թևի դիմաց։ Նապոլեոնը հանձնարարեց Լենյագոյի կայազորի հրամանատար սպային շրջանցել այդ արգելքը և թիկունքից գրոհել ավստրիացիների թևի վրա։ Քանի որ այդ ջոկատի հրետանին դեռևս լռում էր, Նապոլեոնը պատվիրեց մի խելամիտ սպայի երկու տասնյակ հեծյալներով և մի քանի փողհարներով եղեգնուտի միջով դուրս գալ ավստրիական թևի ծայրամասը։

Ասես գետնի տակից բուսած այս մի բուռ քաջերը սրընթաց նետվեցին ավստրիացիների վրա. Թշնամու հետևակը վերջապես կորցրեց ինքնավստահությունը։ Օգտվելով հակառակորդի շփոթությունից, Օժերոն ուժեղ գրոհ ձեռնարկեց։ Այդ ժամանակ Լենյագոյի կայազորի ութ հարյուր հոգին վերջապես հայտնվեցին ավստրիացիների նույն ձախ թևում, և սրանք հապճեպորեն նահանջեցին դեպի Սան-Բոնիֆացիո։ Այդ հաջողությանը հասնելով, Մասսենայի դիվիզիան անցավ այժմ արդեն լրիվ անպաշտպան ճակատագրական կամուրջը և դուրս եկավ Արկոլե ու Սան-Գրեգորիո։

Ալվինցիի մոտ զորաշարքում մնացել էր տասնհինգ հազար մարդուց ոչ ավելի, և նա չհանդգնեց դիմելու մի երկրորդ ճակատամարտի։ Վերջիվերջո նոյեմբերի 18-ին նա նահանջեց դեպի Մոնտեբելլո և դրանով իսկ իրեն պարտավորված ճանաչեց։ Ֆրանսիացիների կորուստները քիչ պակաս էին, բայց նրանց հաջողվեց Կալդիերոյից քշել Ալվինցիին, և հիմա նրանք կարող էին առանց արգելքի գործել Դավիդովիչի դեմ։

Այդ զորապետը, մի ամբողջ շաբաթ զուր կորցնելով Կորոնայի ամրության առջև, նոյեմբերի 16-ին ի վերջո գրոհեց Վոբուայի վրա։ Նոյեմբերի 17-ին ֆրանսիական գեներալը Պեսկիերայի մոտ նահանջեց Մինչոյից այն կողմ, և 18-ին Դավիդովիչը հասավ մինչև Կաստելնովո։

Նապոլեոնի զորքն այնքան քիչ էր, որ Ալվինցիին հետապնդելու

համար կարող էր առանձնացնել միայն իր հեծելազորային պահեստազորը. մնացած բոլոր զորամասերը Վիլլանովայից անմիջապես շարժվեցին դեպի Վերոնա, ուր մեր զինվորները հաղթականորեն մուտք գործեցին Վենետիկյան դարպասներով երեք օր անց այն դեպքից, երբ գաղտնի թողել էին քաղաքը՝ դուրս գալով Միլանյան դարպասներից։

Վերոնայից Օժերոն լեռնային անցումներով շարժվեց դեպի Դոլչե, որպեսզի կտրի Դավիդովիչի նահանջի ճանապարհը, որին ճակատից սպառնում էին Վորուան և Մասսենան։ Միայն հապճեպ նահանջելով դեպի Ռովերեդո, ավստրիական զորավարը, որը երեք օր շարունակ իր ձեռքին էր պահում ֆրանսիական բանակի ճակատագիրը, կարողացավ խուսափել լիակատար ջախջախումից։ Նրա վերջապահ զորքը մեծ կորուստներ կրեց։

Տեսնելով, որ իրեն հետապնդում է միայն հեծելազորը, Ալվինցին վերադարձավ Վիլլանովա։ Բայց Նապոլեոնն արդեն հասցրել էր Դավիդովիչին ջախջախել և մտադիր էր նորից Վերոնայից դուրս գալ Ադիջեի ձախ ափը։ Ալվինցին, կտրված լինելով, չհանդգնեց պահել դիրքերը և նահանջեց Բրենտայից այն կողմ։ Եթե նա համառություն ցուցաբերեր, կարող էր նորից ճակատամարտ տալ և խիստ նեղություն պատճառել Նապոլեոնին։

Արտակարգ զգուշությունից կամ, ավելի շուտ, բարոյական արիության պակասի պատճառով ի բնե այնքան խիզախ Վուրմզերն այն ժամանակ, երբ Ադիջեում լարված պայքար էր ծավալվել, և գերակշռությունը շատ քիչ բանից էր կախված, հանգիստ նստած էր Մանտուայում։ Ձեռնամուխ լինելով իր գործողություններին, Ալվինցին հաշվեց, որ Մանտուա կհասնի ամսի 23-ից ոչ շուտ և առաջարկեց Վուրմզերին մինչև այդ օրը հարձակումներ չգործել։ Բայց այդ ժամանակ Կիլմենն արդեն վերադարձել էր իր դիրքերը, և ամրոցը շրջափակող զորքերը հեշտությամբ ետ շպրտեցին պաշարվածներին։

Մինչ Իտալիայում տեղի էին ունենում այս իրադարձությունները, Բեռնադոտը ութսուն հազարանոց զորքով, իր դիմաց ունենալով ընդամենը քսանհինգ հազար ավստրիացիների, երկու ամիս շարունակ անգործ էր (նոյեմբեր և դեկտեմբեր)։ Սա ի՞նչ զորավար է, սա ի՞նչ կառավարություն է։

ԳԼՈՒԽ XVI

Իր կյանքի վերջում Նապոլեոնն ուրվագծեց Իտալական բանակում իր հրամանատարության ներքո ծառայած գեներալների բնութագրերը։ Մենք մեջ կբերենք այդ նկարագրերը՝ լրացնելով մի քանի գծերով։

Խոսքը Բերտիեի, Մասսենայի, Օժերոյի, Սերյուրիեի և Ժուբերի մասին է։ Երեք գեներալներ, որոնք տաղանդով չէին զիջում Մասսենային, այդ ժամանակ դեռ չէին հասցրել դիվիզիայի հրամանատարներ դառնալ. ես նկատի ունեմ Լանին, Դյուֆոյին և Մյուրատին։ Դառն, որի վրա այն ժամանակ ծիծաղում էին, քանզի նրան հատուկ էին սառնասրտությունը, զգուշությունը և համառությունը՝ գծեր, որոնք սովորաբար ֆրանսիացիների մոտ բացակայում են, ինչպես նաև Լասալը, դեռ բարձր աստիճաններ չունեին։ Կիլմենը կարող էր բանակի դիվիզիայի ամենաականավոր հրամանատարներից մեկը դառնալ, բայց նա շարունակ տկար էր։

Այս բոլոր գեներալները հավասարաչափ քաջ էին, բայց յուրաքանչյուրի խառնվածքը նրանց քաջությանը յուրահատուկ երանգ էր տալիս։ Սակայն ռազմական գործողությունների ընթացքում, որի մասին մենք կպատմենք, այդ զորավարներից մեկը պաշտոնաթող արվեց վախկոտության համար, իսկ մյուսն արժանի էր դրան իր թեթևամտության պատճառով։

Ինչ՞ր ասես, որ չէր կատարի Նապոլեոնը, եթե այդ տարիներին իր զեկավարության տակ ունենար գեներալներ Դուվիոն-Սեն-Սիրին, Դեզեին, Կլեբերին և Նեյին, իսկ գլխավոր շտաբի պետը Բերտիեի փոխարեն Սուլտը լիներ։

Բերտիեն մոտ քառասուներկու տարեկան էր. նա ծնվել է Վերսալում. հայրը Լյուդովիկոս XV-ի, ապա Լյուդովիկոս XVI-ի տեղանքագիր-ինժեներն էր, գծում էր նրանց որսի կալվածքների քարտեզները։ Երիտասարդ տարիներին Բերտիեն լեյտենանտի աստիճանով մասնակցել է Անգլիայի դեմ Ամերիկայի մղած պատերազմին. երբ սկսվեց հեղափոխությունը, նա թագավորի հատուկ ողորմածությամբ արդեն գնդապետ էր։ Նա Վերսալում եղել է ազգային գվարդիայի հրամանատարը, որտեղ իրեն դրսևորել է որպես յակոբինյան կուսակցության կատաղի թշնամի։ Նշանակվելով Վանդեայում գործող հեղափոխական զորքերի գլխավոր

շտաբի պետ, վիրավորվել է այնտեղ։ Ֆերմիդորի 9-ից հետո Ալպիական բանակում նա դարձավ Կելլերմանի գլխավոր շտաբի պետը և նրա հետ գնաց Իտալիա։ Իտալական արշավանքում նրա ծառայությունն այն էր, որ բանակի համար ընտրեց Բորդեատոյի պաշտպանական գիծը, որը թշնամին չէր կարող հաղթահարել։ Թերևս, սա ստրատեգիական միակ գաղափարն է, որը երբևիցե անցել է նրա մտքով։

Երբ Նապոլեոնն ընդունեց Իտալական բանակի հրամանատարությունը, Բերտիեն խնդրեց իրեն գլխավոր շտաբի պետ նշանակել. այդ պահից ի վեր նա անփոփոխ գրավում էր այդ պաշտոնը։ Հետագայում մենք կտեսնենք, թե նա 1805 թվականին ինչ չափով է նպաստել բարոյալքմանը, որքանով է մեղավոր այն բանում, որ սպաների սրտերում փառքի սերը փոխարինվի նասիրությամբ։

1796 թվականին նա հսկայական եռանդ դրսևորեց, որը հետագայում սպառեց. այդ ժամանակ, առանց իր կաբինետային աշխատանքին որևէ վնաս հասցնելու, նա ուղեկցում էր գլխավոր հրամանատարին նրա բոլոր շրջագայություններում և հետախուզություններում։ Ամբողջ օրը Նապոլեոնի կառքում անցկացնելով այն բոլոր հնարավոր զորաշարժերի քննարկումով, որ կարող էր ձեռնարկել բանակը, ընդ որում երբեք չէր համարձակվում խորհուրդներ տալ, մինչև որ իրեն չէին հարցնում այդ մասին, նա ճշտորեն մտքում պահում էր այն ամենը, ինչ որոշում էր գլխավոր հրամանատարը, և, շտաբ վերադառնալով, համապատասխան կարգադրություններ էր անում։ Նա կարողանում էր չափազանց պարզորոշ պատկերացնել զորքերի ամենաբարդ տեղաշարժերը, տեղանքի պայմաններում հեշտությամբ էր կողմնորոշվում քարտեզի վրա, արագ ու պարզորոշ հանրագումարի բերում հետախուզության արդյունքները և հարկ եղած դեպքում կարող էր հիանալի գծել զիրքերի դասավորությունը։ Հենց անվճռական ու խանդավառ կրակոտությանը խորթ նրա բնավորությունը՝ զուգակցված անբասիր քաղաքավարության և ձիրքի միջակության հետ, թերևս, նրան արժանացրել էր գլխավոր հրամանատարի համակրանքին։

Կար ժամանակ, երբ հին վարչակարգի մարդիկ, նախանձով համակված և չիմանալով, թե ինչպես նվաստացնեն գեներալ Բոնապարտի ապշեցուցիչ հաղթանակները, պնդում էին, թե իբր Բերտիեն նրա մենտորն է եղել և կազմել է նրա ռազմական գոր-

ծողությունների պլանները։ Բերտիեն շա՜տ վախեցավ այդ խոսակցություններից և արեց ամեն ինչ, որպեսզի վերջ տա դրանց։ Բոնապարտը բարձր գնահատեց նրա վարքագիծը։ Ընդհանուր առմամբ, առօրյա կյանքում լինելով խստականոն, Բերտիեն սիրալիր ու քաղաքավարի էր և միանգամայն ողորմելի՝ արտասովոր իրադարձություններում։ Մենք բազմիցս առիթ կունենանք վատ արտահայտվելու նրա մասին։

Մասսենան բոլորովին այլ մարդ էր՝ իսկական բնության զավակ։ Նա ոչինչ չգիտեր՝ նույնիսկ ուղղագրություն, բայց ոգու կայունություն ուներ. նրան խորթ էր վհատությունը։ Թվում էր, թե դժբախտությունը ոչ միայն չէր թուլացնում, այլ ընդհակառակը, ուժեղացնում էր այդ անվեհեր հոգու եռանդը։ Ծնված լինելով աղքատության մեջ, նա շարաբաստիկ հակում ուներ դեպի գողությունը և Հռոմում իր զորքերը ստիպված էին վռնդել նրան։ Բայց նրա քաջությունն ու ձիրքն այնպիսին էին, որ, չնայած այդ սոսկալի արատին, որի զոհերն էին դառնում զինվորները, նրանք անկարող էին նրան չսիրել։ Նա միշտ իր հետ որևէ սիրուհի էր մանածում. սովորաբար դա լինում էր այն բնակավայրի ամենագեղեցիկ կինը, որտեղ գտնվում էին նրա հրամանատարության տակ գործող զորքերը։ Հենց որ իր համհարզներից որևէ մեկը դուր էր գալիս սիրուհուն, նա միշտ աշխատում էր այդ համհարզին անխուսափելի մահվան ուղարկել։

Նա հմայում էր իր սրամտությամբ, երբ իրեն անկաշկանդ էր զգում, բայց հարկ էր լինում ներողամիտ լինել նրա սխալ դարձվածների նկատմամբ։ Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը Մասսենայի գերեզմանի վրա դրված կիսանդրին հաղորդում է նրա գծերը։

Ծնված լինելով Նիցցայում, նա ավելի շատ իտալացի էր, քան ֆրանսիացի։ Նա երբեք ազատ ժամանակ չի ունեցել, որպեսզի թեկուզ մի քիչ զբաղվի իր կրթությամբ։ Պատանի հասակում ֆրանսիական զինվորական ծառայության է մտել թագավորական-իտալական գնդում։ Արագ աչքի ընկնելով, նա վաղ դարձավ դիվիզիոնի գեներալ։ Նրա խիզախությունը, կնամոլությունը, ամբարտավանության լիակատար բացակայությունը, զինվորների հետ վարվելու կոպտավուն մտերմավարությունը՝ այս ամենը պետք է որ դուր գար մարտիկներին. նրա բնավորության մեջ շատ գծեր կային, որոնք պատմությունը վերագրում է Հենրիխ IV-ին։

Իտալական բանակում նա ծառայել է գլխավոր հրամանատարներ Դյուգոմիեի, Դյումերբիոնի, Կելլերմանի և Շերերի հրամանատարության ներքո։ Մասսենան պնդակազմ էր ու անխոնջ։ Օրուգիշեր նա չէր իջնում ձիուց՝ վարգելով լեռների ու ժայռերի մեջ. նման ռազմական գործողություններում նա հատկապես հմուտ էր։ 1799 թվականին Ցյուրիխի ճակատամարտում տարած հաղթանակով նա փրկեց ամենուր պարտություններ կրող Հանրապետությանը։ Չլիներ Մասսենան, ահեղ Սուվորովը Ֆրանշ-Կոնտե կմտներ այն պահին, երբ ֆրանսիացիներին ձանձրացրել էր Դիրեկտորիան, իսկ թերևս՝ նաև ազատությունը։

Նապոլեոնի ասելով, Մասսենան վճռական էր, քաջ, անվեհեր՝ լի փառասիրությամբ ու հպարտությամբ. նրա բնորոշ գիծը համառությունն էր. նա երբեք չէր հուսահատվում. արհամարհում էր կարգապահությունը և քիչ էր ուշադրություն դարձնում վարչական գործերին։ Նա բավականաչափ վատ էր կազմում հարձակման զորադասավորումը։ Այն մարդկանց հետ զրուցելիս, որոնց չէր վստահում, նա շոր ու նվազ հետաքրքիր մարդ էր թվում, բայց թնդանոթային առաջին կրակոցի դեպքում, ռումբերի ու վտանգների մեջ նրա միտքը պարզություն և ուժ էր ստանում։ Բանակում հաճախ կարծում էին (և ես՝ նույնպես), թե Նապոլեոնը մի քիչ նախանձում էր նրան։

Օժերոն ծնվել է Սեն-Մարսո արվարձանում (Փարիզում), հեղափոխության սկզբում եղել է սերժանտ։ Երբ այն բռնկվեց, նա գտնվում էր Նեապոլում, ուր ուղարկվել էր տեղական զինվորներին շարավարժություն սովորեցնելու։ Պ-ն դը Պերիգորը՝ Ֆրանսիայի դեսպանորդը Նեապոլում, նրան կանչեց իր մոտ, տասը լուիդոր տվեց և ասաց. «Վերադարձեք Ֆրանսիա, այնտեղ դուք կարիերա կանեք»։ Նա ծառայում էր Վանդեայում, իսկ գեներալի աստիճանն ստացել էր Արևելյան Պիրենեյների բանակում։ Երբ Իսպանիայի հետ հաշտություն կնքվեց, նա իր դիվիզիան բերեց Իտալական բանակ։ Ֆրյուկտիդորի 18-ին Նապոլեոնը նրան ուղարկեց Փարիզ, ուր նա եկավ թանկարժեք զարդերով պճնված։

Նապոլեոնը հիշատակում է այն մասին, որ Դիրեկտորիան Օժերոյին նշանակել է Հռենոսյան բանակի գլխավոր հրամանատար։ Օժերոն բոլորովին չէր կարողանում իրեն պահել, նրա մտահորիզոնը սահմանափակ էր, անդաստիարակ էր ու ծայրահեղորեն անուս, բայց կարողանում էր կարգ ու կարգապահություն պահպանել իր զինվորների մեջ, որոնք սիրում էին նրան։

Հարձակման ժամանակ նա հետևողական ու մտածված էր գործում։ Նա վարպետորեն էր տեղաբաշխում իր զորասյունները, հմտորեն գասավորում պահեստազորը, քաջաբար մարտընչում. բայց այդ ամենը միայն մեկ օր էր տևում։ Հաղթում էր, թե պարտվում՝ երեկոյան կողմ շատ հաճախ վհատության մեջ էր ընկնում, որը կարելի է բացատրել կա՛մ նրա բնավորության յուրահատկություններով, կա՛մ էլ նրա մտքի անբավարար խորաթափանցությամբ ու շրջահայացությամբ։

Նա հարեց Բաբյոֆի կուսակցությանը։ Իր հայացքներով, եթե առհասարակ այդպիսիք ուներ, նա նման էր ծայրահեղ անարխիստներին։ 1798 թվականին նշանակվեց Օրենսդրական կորպուսի դեպուտատ, մասնակցում էր Մանեժի բանսարկություններին և հաճախ դրանցում ծիծաղելի դեր խաղում։

Սերյուրիեն, որը ծնվել էր Էն դեպարտամենտում, հեղափոխության սկզբում հետևակային գնդի մայոր էր. նա պահպանել էր իսկական մայորի վարքաձևերը և խստությունը. շատ պահանջկոտ էր կարգապահության հարցում և արիստոկրատի անուն էր հանել, որի պատճառով, հաճախ, հատկապես առաջին տարիներին, ճամբարներում վտանգի էր ենթարկվում։ Որպես զորավար, չէր հանդգնում որևէ բան վերցնել իր վրա, և նրա բախտը չէր բերում։

Նապոլեոնի ասելով, Սերյուրիեն շահել է Մոնդովի ճակատամարտը և գրավել Մանտուան. նրան մեծ պատիվ է վիճակվել՝ նրա առջևով իր զորքով շարանցել է մարշալ Վուրմզերը։ Սերյուրիեն քաջ էր, արհամարհում էր իր անձին սպառնացող վտանգը։ Նա ավելի նվազ եռանդուն էր, քան Մասսենան կամ Օժերոն, բայց նրանց գերազանցում էր բարոյական արժանիքներով, իր քաղաքական հայացքների խոհեմությամբ և բարեկամության մեջ իր հավատարմությամբ։ Խառնվածքով այս գեներալը խորթ էր այն երիտասարդ հայրենասերներին, որոնց հրամանատարն էր ինքը։

ԳԼՈՒԽ XVII

Բասսանոյի և Սան-Ջորջոյի ճակատամարտերից հետո վերադառնալով Միլան, Նապոլեոնն զբաղվեց այն բանով, ինչ ինքն

անվանում էր պատերազմ գողերի դեմ։ Հեշտ վաստակի այս ասպետները, որոնցով միշտ առատ է Փարիզը, այն ժամանակ օգտագործվում էին Բարրասի հովանավորությունից, որը նրանցից իր համար արքունիքի նման մի բան էր սարքել։ Լսելով Իտալիայի հարստությունների մասին, նրանք հեղեղեցին այս գեղեցիկ երկիրը։ Նրանց հաջողվեց հեշտությամբ տեղավորվել բանակի վարչությունում։ Կառավարական կոմիսարներ Գարրոն և Սալիչետտին տնօրինում էին նվաճված մարզերից գանձվող ռազմատուգանքները։ Որոշ չափով նրանք տնօրինում էին նաև զորքերի բաշխումը։ Նրանց ենթակա էին պարենավորման ու փոխադրումների գործերը վարող մատակարարներն ու կապալառուները։ Այդ կոմիսարներից էր ամբողջովին կախված բանակի ոռճիկի վճարումը։ Եվ, վերջապես, այս կոմիսարները գրեթե լրիվ բռնատիրել էին բոլոր այն պարտականությունները, որ բանակում սովորաբար կատարում է գլխավոր գանձապահ-կոմիսարը կամ գլխավոր ինտենդանտը։

Այն ժամանակ, երբ Սամբր-է-Մյոզի զորքերում և Հոենոսյան բանակում թագավորում էին աղատությունը, հանրապետական խստությունն ու ազնիվ աղքատությունը, Իտալական բանակի սպաներին և նույնիսկ հասարակ զինվորներին համակել էր պերճության ու վայելքների կիրքը։ Այն ժամանակվա այդ բանակների մասին ամենից լավ կարող էին պատկերացում տալ մի կողմից՝ ազնիվ Դեզեն, որը երբեմն նույնիսկ համազգեստ չուներ և թույլ էր տալիս, որ հափշտակեն իր ունեցած-չունեցածը՝ ընդհուպ մինչև կոքերը, իսկ մյուս կողմից՝ գեներալ Օժերոն, որը միշտ ներկայանում էր մատներն ու կուրծքն ադամանդազարդ։

Լավ հագնված, կուշտ, գեղեցիկ իտալուհիների կողմից գրկաբաց ընդունվող զինվորներն Իտալիայում ապրում էին իրենց բեֆին, ոչ մի բանի կարիք չէին զգում։ Սպաներն ու գեներալներն իրենց բաժինն ունեին ընդհանուր բարգավաճման մեջ. նրանցից ոմանք սկսեցին հարստություն կուտակել։

Ինչ վերաբերում է մատակարարներին ու կապալառուներին, ապա նրանք ի ցույց էին հանում պերճությունը, որն առավել ևս ապշեցուցիչ էր, քանի որ վերջին տարիներին մարդիկ կորցրել էին պատկերացումը նման ապրելակերպի մասին։ Սպաներին ամենից շատը դիպչում էր այն հանգամանքը, որ այդ սպեկուլյանտների

թալանած փողերը նրանց արժանացնում էր ամենափայլուն երգչուհիների բարեհաճությանը։

Այդ ժամանակ Բոնապարտը, ջղայնացած բանակում տարածված լուրերից, որոնք նույնությամբ հաղորդվում էին նրան (ոչ մի զորավար երբեք այդքան լավատեղյակ չի եղել ամեն ինչին), որոշեց ստուգել բոլոր պայմանագրերը և առևտրական մյուս գործարքները, որ Հանրապետությունը կնքել էր մատակարարների հետ։ Իտալական արշավանքի սկզբում, երբ Դիրեկտորիան բոլորովին չէր օգտվում վարկից, գանձատունը դատարկ էր, և կառավարության աղքատությունն այն աստիճանի էր հասել, որ այդ վիճակի զարմանալի մանրամասների մասին հանգամանալից պատմությունը կարող է միայն ստիպել ընթերցողին հավատալու դրանց։ Այսպես, օրինակ, այն օրը, երբ Դիրեկտորիան հաստատվեց Լյուքսեմբուրգյան պալատում, ստիպված էր բարապանից փոխարինարար վերցնել սեղան, գրապարագաներ և մի կապոց նամակի թուղթ։ Հետագա ամեն ինչը համապատասխանում էր այս սկզբին։

1796 թվականի հունվարին Հանրապետության կառավարությունն անչափ երջանիկ էր, երբ գտնվեցին համարձակ սպեկուլյանտներ, որոնք համաձայնվեցին զբաղվել մատակարարումներով. նա պատրաստ էր ուղածդ գինը վճարելու նրանց։

Պայմանագրով մատակարարների օգտին վերապահված հրակայական շահույթները պետք է փոխհատուցեին վճարման խիստ անհուսալիությունը։ Մատակարարների նկատմամբ ունեցած բնազդական ատելության մեջ Նապոլեոնը համառորեն հրաժարվում էր դա հասկանալ[1]։ Քանի որ Իտալական բանակի հաղթա-

[1] Այն դեպքերում, երբ կառավարությունը չի կարող իր գործակալներին ստիպել գործելու անշահախնդրության զգացումով, հարկավոր է դիմել անձնական շահի ուժին։ Իսկ չէ որ կապալառուները, մատակարարները և այլք, զորքերում ընդհանուր ծաղրանքի առարկա լինելով և այն ժամանակներում զուրկ մենամարտելու իրավունքից, փառասիրական մղումներից չէ, որ բանակ էին գալիս։ Այս միտքը Մոսկվայից նահանջելիս իմ ներկայությամբ արտահայտել է իշխանն ինքը՝ գլխավոր ինտենդանտը։ Մատակարարների նկատմամբ Նապոլեոնի ատելության պատճառը մարտերում նրանց վարքագիծն էր. կրքոտ սիրելով Ֆրանսիան, նա խորապես տառապում էր, որ նրա զավակների մեջ այդպիսի վախկոտներ կային. Կաստիլիոնեի ճակատամարտին նախորդած նահանջի ժամանակ այդ մարդկանցից մեկը փախավ առանց հետ նայելու, փոստակառքով սլացավ հիսուն լյո և, Ջենովա հասնելով, վախից մեռավ։

նակներից հետո վարկը վերականգնվում էր, մատակարարներին վճարվող գներն սկսեցին չափազանց բարձր թվալ։ Այդ մարդկանց հսկայական շահույթները սպաներին ու զինվորներին զայրացնում էին։ Ոչ ոք չէր մտածում այն մասին, որ պայմանագրի կնքման պահին ոչ մի վստահություն չկար, որ պայմանավորված գումարները կվճարվեն։ Այդ շահույթները կատաղեցնում էին Բոնապարտին, և նրա զայրույթը ծայրահեղության էր հասնում։ Կարելի է ասել, որ դա նրա կանխակալ կարծիքներից մեկն էր, այնպես, ինչպես նրա ատելությունը Վոլտերի հանդեպ, յակոբինյաններից վախենալը և հակումը դեպի Սեն-Ժերմեն արվարձանը։

Դիրեկտորիային հասցեագրված նամակներից երևում է, որ Նապոլեոնը երբեք չէր ուզում հասկանալ, որ ընդհանուր ծաղրանքի ենթակա և հաճախ իր իսկ կառավարության կողմից կողոպտվող մատակարարն[1] իր գործով է զբաղվում ոչ հանուն փառքի։ Նա մատակարարներին կշտամբում էր, որ վտանգի օրերին փախել են բանակից։ Նա Դիրեկտորիայի անդամներին խորհուրդ էր տալիս եռանդուն, ազնվության մեջ փորձված մարդիկ ընտրել, և մտքովն էլ չէր անցկացնում, որ նման մարդիկ չէին ցանկանա այդ իշամեղվի բույնը խցկվել։ Իր զայրույթի մեջ գլխավոր հրամանատարը հասնում էր մինչև կոլեգիա հիմնելու պահանջը, որն օգտվելով երդվյալների դատարանի իրավունքներից, կկարողանար միայն բարոյական համոզմունքով պատժել փաստերով չապացուցված զանցանքները։ Այդ ժամանակից սկսած, Նապոլեոնը ատելություն էր տածում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր բանակում տնօրինում էին զինվորների պարենային մատակարարումը։ Հետագայում մենք կտեսնենք, թե ինչպես բանականության փաստարկներին չենթարկվող այս զգացումը մեծագույն դժբախտությունների պատճառ դարձավ[2]։

Ստորև բերվող նամակն ավելի լավ, քան կարելի էր ասել այդ առթիվ, ցույց է տալիս գլխավոր հրամանատարի գործելակերպը մատակարարների նկատմամբ։ Բանն այնտեղ էր հասել, որ Հանրապետությունը կառավարող Դիրեկտորիայի անդամներ կոչվող ողջախոհ բուրժուաները կարող էին իրենց կողմից Իտալական բանակում գործի դրված հովանավորյալների և ազգականների հաղորդումներից պատկերացնել, թե իրը գլխավոր հրամանատարը սեփական շահի համար ուզում է իր ձեռքը վերցնել մատակարարումները։ Նման հանցագործությունն այնպիսիներից էր, որոնք Նապոլեոնին ամենամեծ սարսափ էին ներշնչում։ Կարելի է ասել, որ նրա աչքին դա անմիջապես հաջորդում է Պիշեգրյուի չարագործությանը, որը կազմակերպել էր սեփական զորքերի պարտությունը։

Գեներալ Բոնապարտը բախտ ունեցավ հանդիպելու մի այնպիսի զինվորական կոմիսարի, որը հսկայական բանակը պարենով ապահովելու խիստ բացառիկ հմտությունը զուգակցում էր իսկական հանրապետական ազնվության հետ (պ-ն Բուանո)։ Նա կարող էր նրան գլխավոր գանձապահ նշանակել և պահանջել, որ Դիրեկտորիան հաստատի այդ նշանակումը, բայց գերագույն կարգի նկատառումներով ստիպված էր խնայել խաբեբաներին և Բարրասին, որը հովանավորում էր նրանց։

ԳԼՈՒԽ XVIII

ԳԵՆԵՐԱԼ ԲՈՆԱՊԱՐՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԴԻՐԵԿՏՈՐԻԱՅԻՆ

Այն ընթերցողին, որը ժամանակ չունի, ես առաջարկում եմ բաց թողնել ստորև զետեղված տասներկու նամակները։ Դրանք պաշտոնական զեկույցներ են, որոնք Իտալական բանակի գլխավոր հրամանատարը ուղարկել է Դիրեկտորիային։ Նախ ես քաղվածք արեցի դրանցից՝ բավական համառոտ, թեև այնտեղ որոշ լրացուցիչ նկատառումներ մտցրի, որոնք Նապոլեոնը չէր կարող մեջ բերել, բայց հետո, այդ քաղվածքը համեմատելով նամակների տեքստի հետ, տեսա, որ այն ամենևին չի հաղորդում դրանց բնույթը։ Նապոլեոնը պատկանում է այն մարդկանց թվին, որոնց գրածն անհնար է կրճատել, որովհետև նրանց խոսքերն իրենց զգացմունքներն են արտահայտում։ Այդ նամակներում նա շատ քիչ է ստում. դրանցում նա նույնիսկ զայրույթ չի արտահայտում Դիրեկտորիայի դեմ, որը նրա մեջ ատելության հետ խառը խո-

---

[1] Լոդեա քաղաքի մահուդավաճառները, մոտ 1808 թվականին։

[2] Զգալի չափով կարելի է հենց այդ կույր ատելությանը վերագրել այն աղետները, որոնք ուղեկցեցին Մոսկվայից կատարվող նահանջին։ Մարշալ Դավուն (մի մեծ մարդ, որը դեռ չի գնահատված ըստ արժանվույն) հիանալի էր կազմակերպել իր կորպուսը. դա հանցանք համարվեց նրա համար։ Ահա Նապոլեոնի խոշոր սխալներից մեկը։

ին արհամարհանք էր առաջացնում։ Նապոլեոնը, որն ամենևին էլ հակված չէր տարվելու անիրականանալի երազներով ու շափազանցություններով, Կաստիլիոնից հետո սկսեց իրեն համեմատել բոլոր նրանց հետ, ովքեր շրջապատում էին իրեն ինչպես ռազմական, այնպես էլ վարչական գործունեության մեջ։ Նա սկսում էր իրեն մեծ մարդ զգալ, և այդ բերկրանքը ճնշում էր մնացած ամեն ինչը։ Նրա արտասովոր կյանքում սերունդների հիշողության մեջ ապրելու բուռն ցանկությունը գերիշխում էր ամեն ինչի վրա։ Այդ ցանկությունը լոկ կարճ ժամանակով դուրս մղեց այն բուռն զգացմունքը, որ նրան ներշնչում էր Ժոզեֆինան։ Ես կարծում եմ, որ Ռիվոլիի ճակատամարտի ժամանակ այդ կրակոտ սերն արդեն ետ էր մղվել երկրորդ պլան։ Այդպես ասելով, ես չեմ հիմնվում ինձ հասած որևէ մտերմական խոստովանության վրա։ Երբ խոսքը վերաբերում էր Ժոզեֆինային, Նապոլեոնը ոչ ոքի թույլ չէր տալիս նայելու իր սրտի խորքը։ Բայց մի միջադեպ, որը ներկայումս հնարավոր չեմ համարում մեջ բերելու, ապացուցում է, որ Ռիվոլիի ժամանակներում նույնիսկ խանդն ի վիճակի չէր վերակենդանացնելու և մոլեգնության հասցնելու այդ զգացմունքը, որը 1796 թվականի մարտին այդպիսի իշխանություն ուներ նրա հոգու վրա։

Որոշելով ընթերցողին ներկայացնել այդ տասներկու նամակները, ես գլխավորապես ելնում էի այն բանից, որ նա կարող է առանց ափսոսալու բաց թողնել դրանք, եթե այնքան հիացած չէ գլխավոր գործող անձով, որպեսզի ցանկանա կարդալ։ Դրանց մեջ հիմնականում շարադրված են միայն այն նկատառումները, որոնց գծով գլխավոր հրամանատարը հաջողության հույս ուներ կամ էլ վախենում էր անհաջողություններից։ Բայց նրան հայտնի էր, որ Դիրեկտորիայի աստիճանավորները լիակատար հնարավորություն ունեին այդ նամակները վաճառելու անգլիական գործակալներին կամ այն դեսպանորդին, որին Վենետիկի հանրապետությունը պահում էր Փարիզում։ Եվ Նապոլեոնը ոչ մի րոպե չի մոռանում այդ վտանգի մասին, երբ գրում է կառավարությանը, որից կախված էր իր համար հսկայական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի, մասնավորապես օժանդակ ուժերի հարցի լուծումը, որի կարիքը բանակը խիստ զգում էր 1796 թվականի օգոստոսից սկսած մինչև 1797 թվականի փետրվարի 1-ը։

Սակայն, եթե ընթերցողը նույնիսկ չկարդա էլ Դիրեկտորիային հասցեագրված այդ տասներկու նամակները, դա նրան չի խանգարի հասկանալու Ռիվոլիի ճակատամարտը, որով ավարտվեց Արկոլեի մարտը, հասկանալու Մանտուայի անձնատուր լինելը, Տալյամենտոյի ճակատամարտը և էրցհերցոգ Կառլոսի ադեստալի նահանջը, որը Նապոլեոնի ուժերին գրեթե հավասար բանակ ունենալով, չկարողացավ կասեցնել ֆրանսիացիների անցումը ձյունապատ Ալպերով։

Մենք տեսնում ենք, որ Եվրոպան Նապոլեոնից դեռ չի ընդօրինակել մեծ պատերազմի արվեստը. անհասկանալի է, թե ինչպես Ավստրիան հաշտություն կնքեց Լեոբենում՝ փոխանակ կլիմանի նման մի խիզախ զորավարի գլխավորությամբ տասը հազար մարդ օգնության ուղարկելու Վենետիկին։ Չէ որ Տրիեստից մինչև Վենետիկ ընդամենը երկու օրվա ճանապարհ է։ Ահա այն նկատառումներից մեկը, որոնց մասին Նապոլեոնը ջանադրաբար լռում է Դիրեկտորիային գրած իր նամակներում։

Տալյամենտոյի ճակատամարտից մինչև Լեոբենն ընկած ժամանակամիջոցում ճակատագիրը Նապոլեոնին ի վերուստ ուղարկեց այն, ինչ նրան մերժել էր Արկոլեի ճակատամարտի երրորդ օրը, երբ նա այնպե՞ս արժանի էր այդ պարգևին։

Այդ տասներկու նամակները տեղադրելու համար մենք օգտվում ենք Արկոլեից մինչև Ռիվոլին տևած 58 օրերի ժամանակահատվածից։ Եթե վարչական ու քաղաքական մանրամասնություններով լի այդ նամակներն ավելի վաղ մեջ բերվեին՝ կընդհատեին այն ահեղ դրամայի նախապատրաստման պատմությունը, որի հանգուցալուծումը, մարշալ Ալվինցիի անվճռականության հետևանքով, վրա հասավ Արկոլեի ճակատամարտի երրորդ օրը։

ԳԼՈՒԽ XIX

Ահա թե ինչպիսին էր իրադրությունը 1796 թվականի դեկտեմբերին։ Հանրապետության ներքին կյանքը համեմատաբար հանգիստ էր։ Բոլոր կուսակցությունների հայացքներն ուղղված էին ռազմական գործողությունների թատերաբեմին, Քեհլին և Ադիջեին։ Նայած թե ինչպիսի լուրեր էին ստացվում բանակներից, կառավարության հեղինակությունը և ուժը մե՛րթ աճում էր, մե՛րթ նվազում։ Հաղթանակներից վերջինը, որ ձեռք բերվեց Արկոլեում, շանթահարեց ֆրանսիացիների երևակայությունն իր

ռոմանտիկությամբ, գեներալ Բոնապարտի հոգու անօրինակ ուսկունությամբ և այն մահացու վտանգով, որին նա ենթարկվել էր, երբ Արկոլեի կամրջի մոտ խրվել էր ճահճի մեջ։

Սակայն հանճարի և արիության այդ հրաշքներն ամենևին վճռականություն չէին ներշնչում Իտալիային տիրելու համար։ Հայտնի էր, որ Ալվինցին օժանդակ ուժեր էր ստացել և որ Հռոմի պապը զինվում է։ Ջարակամները հավատացնում էին, որ Իտալական բանակը հյուծված է, որ, անօրինակ պատերազմական գործողությունների դժվարություններից ուժասպառ, ինչ-որ տարօրինակ հիվանդությունից հալումաշ նրա գլխավոր հրամանատարն արդեն ի վիճակի չէ ձի հեծնելու։ Մանտուան դեռ գրավված չէր, և հունվար ամիսը կարող էր երկյուղալի լինել։

Այդ ժամանակ Ֆրանսիայում թագավորում էր մամուլի ազատությունը, այլ կերպ ասած՝ մարդիկ այնքանով էին ազատ, որքանով դա թույլ էր տալիս ընդհանուր անփորձությունը։ Երկու կուսակցությունների լրագրերն էլ անձնատուր էին լինում կրքոտ բառագեղումների։ Հեղափոխության սկզբից ընդամենն ութ տարի էր անցել. երեսնամյա մարդիկ ձևավորվել էին Լյուդովիկոս XVI-ի անկայուն միապետության և «Հանրագիտարանի» ազդեցության ներքո, իսկ հիսուն տարեկանները՝ տիկին Դյուբարրիի և Ռիշելյոյի այլասերված միապետության ազդեցության ներքո։

Ինչքան մոտենում էր գարունը՝ ընտրությունների ժամանակը, հակահեղափոխականների լրագրերն աշխատում էին գրգռել հասարակական կարծիքը և տրամադրել իրենց օգտին։ Վանդեայում կրած պարտությունից հետո ռոյալիստները մտադրվեցին օգտվել ազատության բարիքներից՝ այն ոչնչացնելու համար. նրանք ուզում էին տնօրինել ընտրությունները։

Դիրեկտորիայի անդամները գիտեին այդ մտադրությունների մասին և վախենում էին, բայց նույն չափով սարսափելով Ֆրանսիան կառավարող և տեռորի ժամանակ նրան ոգեշնչող հայրենասերներից, նրանք հետևում էին «ոսկե միջինի»[1] քաղաքակա-

1 1850 թվականին այս արտահայտությունը, թերևս, անհասկանալի թվա. այն նշանակում է մի կառավարություն, որն ուզում է կառավարել ժողովրդին՝ հենվելով ամենամիջակ, ուժեղ կրքերից զուրկ քաղաքացիների վրա կամ էլ, ավելի ճիշտ, հենվելով այդ միջակ քաղաքացիների ստոր կրքերի ու հարստանալու ձգտման վրա։ Դիրեկտորիայի ոսկե միջինը հավասարաչափ խորշում էր ինչպես ռոյալիստական, այնպես էլ հանրապետական կուսակցությունների տա-

նությանը։ Լրագրերի մոլեգնությունը նրանց տագնապ էր ներշնչում. նրանք վերհիշում էին այն բուռն կրքերը, որ ի հայտ եկան հեղափոխական կառավարության ժամանակների Ֆրանսիայում։ Դիրեկտորիայի անդամներից ոչ ոք օժտված չէր քաղաքական բավականաչափ խորաթափանցությամբ, որպեսզի հասկանար, որ իրենց երկյուղ պատճառող այդ կրքերն այժմ ննջել էին և կարող էին արթնանալ միայն շոշափելի փաստերով, և ոչ թե լրագրերի դատարկ ճամարտակություններով։ Ըստ երևույթին, քանի դեռ ողջ կլինեն գրաքննության ռեժիմի օրոք ծնված մարդիկ, Ֆրանսիայի կառավարություններին վիճակված կլինի շափազանցված վախ տածել մամուլի հանդեպ և, ի պատասխան իրենց դեմ ուղղված զվարճախոսությունների, վիրավորվածի տեսք ընդունել, դրանով իսկ ուժեղացնելով ծաղրանքի ներգործությունը։

Ահաբեկված Դիրեկտորիան Հինգ հարյուրի խորհրդից և Ավագների խորհրդից խնդրեց հրապարակել մամուլի ազատության շարաշահումները պատժող օրենքներ։ Դրա դեմ սկսեցին առարկել, Դիրեկտորիային մեղադրեցին, որ նա մտադիր է սահմանափակել առաջիկա ընտրությունների ազատությունը. մերժեցին այն օրենքների հրապարակումը, որ նա խնդրում էր։ Միայն երկու որոշում ընդունվեց. առաջինն ուղղված էր մասնավոր անձանց հասցեին եղած զրպարտանքի դեմ. երկրորդը վերաբերում էր լրագրավաճառներին, որոնք բացականչում էին ոչ թե լրագրերի անունները, այլ հոդվածներից կորզած առանձին արտահայտություններ, որոնք իրենց կոպիտ կրքոտությամբ հիշեցնում էին «Հայր Դյուշենին»[1] և վախեցնում Դիրեկտորիային։ Օրինակ, փողոցներում պամֆլետ վաճառելով, լրագրավաճառները բղավում էին. «Մեզ վերադարձրեք մեր միրիագրամները և գրողի ծոցը գնացեք, եթե չեք կարող ժողովրդին երջանկացնել»։ (Հարկ է հիշեցնել, որ Դիրեկտորիայի անդամների ռոճիկները փիլիսոփա-

զանգավոր մարդկանցից և վեհանձն հոգիներից։ Դիրեկտորիային կողմնակից էին միայն նրանք, որոնց աչքում բարձր ռոճիկն ամենաժանրակշիռ քաղաքական փաստարկն է, ապա՝ երկչոտ մարդիկ, որոնց միակ կիրքը վախն է, և, վերջապես՝ վաճառականներն ու արդյունաբերողները, որոնք կառավարությունից չէին պահանջում, որ այն արդարացի, լուսավորյալ, ազնիվ լինի, այլ միայն մի բան էին տենչում՝ որ այն, թեկուզ բռնապետական ճնշման գնով, որին կուզենայի կաչանքը Շպիլբերգում կամ էլ սիբիրյան աքսորը, մի տասը տարով հանգստություն ապահովի, որի ընթացքում կարելի էր կարողություն դիզել։

յորեն նշվում էին հացահատակի որոշակի չափի՝ այսպես կոչված «միրիագրամներիս» արժեքով)։

Դիրեկտորիան ցանկացավ պաշտոնական օրգան ունենալ։ Հինգ հարյուրի խորհուրդը համաձայնություն տվեց. Ավագների խորհուրդն ընդդիմացավ դրան։

Բրյումերի 3-ի նշանավոր օրենքը, որը կրկին քննարկման էր ենթարկվել վանդեմիերին, բուռն վիճաբանություններից հետո ուժի մեջ թողնվեց. աջ դեպուտատները ձգտում էին վերացնել այն հոդվածը, որի համաձայն վտարանդիների ազգականներին չէր թույլատրվում հասարակական պաշտոններ գրավելու, իսկ հանրապետականները հատկապես դա էին ցանկանում պահպանել։ Երրորդ կատաղի զրոհից հետո հանրապետականները հաղթեցին. որոշվեց, որ այդ հոդվածը կմնա ուժի մեջ։ Միայն մի կետում օրենքը փոխվեց։ Մինչ այդ հեղափոխության ժամանակ կատարված քաղաքական հանցագործությունների համար ընդհանուր ներումը չէր տարածվում այն անձանց վրա, ովքեր դատապարտվել էին վանդեմիերի 13-ի առնչությամբ։ Այդ իրադարձությունը (թեև նման կարգի ելույթներ հետագայում բազմիցս կրկնվել են) այժմ արդեն չափազանց հեռավոր էր թվում, որպեսզի իմաստ ունենար ներում շնորհել դրա մասնակիցներին, որոնք փաստորեն առանց բացառության անպատիժ էին մնացել։ Այժմ ներումը կիրառեցին նաև վանդեմիերյան հանցագործությունների նկատմամբ՝ այդպիսով դրանք հավասարեցնելով զուտ հեղափոխական արարքներին։

Մենք տեսնում ենք, որ Դիրեկտորիային և հանրապետության III տարվա սահմանադրության բոլոր ջատագովներին, չնայած որոշ մոլեգին հայրենասերների և հակահեղափոխությանը ծախված բազմաթիվ մարդկանց վայնասուններին, հաջողվեց իրենց կողմը պահպանել զույգ խորհուրդների մեծամասնությունը։

Արիոլեի ճակատամարտի լուրը, որը փոխարինելու եկավ վարդագույն հույսերին, շշմեցրեց Վիեննայի օլիգարխիային։ Բայց վախը պարզամիտ գերմանացիներին իրենց ոչ հատուկ եռանդ ներշնչեց։ Նրանց հսկայական մեծամասնությունը երևակայում էր, թե իբր ֆրանսիացիներն ամենուր իրենց ետևից դիլիոտին են քարշ տալիս, և նույնիսկ մանր բուրժուազիային, որն այս երկրում այնքան ճնշված է արիստոկրատիայի կողմից, հանրապետականների մուտքը Վիեննա՝ շարիքներից ամենաահավորն էր թվում։ Ամբողջ ժողովուրդը որոշեց շարունակել պայքարը և հանուն Ալվինցիի գլխավորած բանակի ուժեղացման չտեսնված զոհաբերությունների դիմեց[1]։

Վիեննայի կայազորը փոստաձիերով ուղևորվեց Տիրոլ։ Կայսրը հրամայեց նոր հավաք անցկացնել քաջարի հունգարացիների (ավստրիական թագավորող տան դժգոհ ստրուկների) մեջ։

Վիեննայի բնակիչները, որոնք ջերմորեն սիրում էին իրենց կայսր Ֆրանցին, չորս հազար կամավոր տվեցին։ Հետագայում այդ անփորձ քաղաքացիներից հազար ութ հարյուրը զոհվեցին իրենց պոստում՝ մի արարք, որի մասին մարդիկ հաճախ են խոսում, բայց որն այդ միամիտ գերմանացիներն իրոք կատարել էին։ Նրանք դա խոստացել էին կայսրուհուն, երբ սա իրենց էր հանձնում անձամբ իր ձեռքով ասեղնագործած դրոշը։ Պայատական ռազմական խորհուրդը կամ, թերևս, պ-ն Ֆոն Թուգուտը՝ Հոհենոսյան բանակից մի քանի հազար ավստրիական լավագույն զինվորներ վերցրեց։

Այդ եռանդի շնորհիվ, որը հիրավի հիանալի էր հին օլիգարխիայի ներկայացուցիչների համար (այդ ժամանակ Վիեննայում իշխում էին երկու հարյուր ընտանիքներ), Ալվինցիի բանակը քսան հազար օժանդակ զինվոր ստացավ և հասցվեց ավելի քան վաթսուն հազարի։ Հանդուգն ու վերակազմված այդ բանակում շատ քիչ նորակոչիկներ կային։

Գեներալ Բոնապարտին դա լուրջ երկյուղ էր ներշնչում, բայց նա նաև այլ առիթ ուներ անհանգստանալու։ Փարիզում արիստոկրատները, քահանաները, վտարանդիները և բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին մեր զորքերի նվաստացումը, պատմում էին,

---

[1] Թղթական գործերում ավստրիական կառավարությունը 1796 թվականի մայիսից մինչև Լեոբենը՝ 1797 թվականի ապրիլի 18-ը, իրեն հիանալի էր պահում։ Իր եռանդով այս կառավարությունը ինքն չէր վիճում հանրապետականին, թեև նրան չէին էլ ոգեշնչում այն կրքերը, որոնք խանդավառել էին ֆրանսիացիներին 1793 և 1794 թվականներին։ Բայց ո՞ւմ ծառայությունն էր այդ եռանդը։ Մեր բարոն Ֆոն Թուգուտի՞, թե պալատական ռազմական խորհրդի։ Հայտնի չէ։ Ահա մարին ու հրապարակայնությանը թշնամի կառավարություններին բաժին ընկնող արդար հատուցումը։ Այն էլը, որ նրանց թույլտվությամբ տպագրվում է, հերյուրանք են համարում, և նույնիսկ նրանց ամենագիտակցի արարքներն անհայտ են մնում. carent quia vate sacro։

որ նա մեռնում է անհայտ հիվանդությունից։ Նա իրոք որ ծանր հիվանդ էր. ձի հեծնելը նրանից վիթխարի լարում էր պահանջում, որին հետևում էր ուժերի լիակատար անկումը։ Բարեկամները ենթադրում էին, որ նա թունավորված է. անձամբ նրա գլխով նույնպես անցնում էր այդ միտքը։ Քանի որ հիվանդությունն անբուժելի էր թվում, նա շարունակում էր կատարել իր պարտքը՝ քիչ մտածելով իր առողջության մասին։ Այդ վեհ հոգին հիշում էր հայտնի ասացվածը՝ Decet imperatorem stantem mori (զորավարը պետք է ոտքի վրա մեռնի)։

Արկոլեի ճակատամարտի պահին նա շատ վատ էր զգում իրենկարճատև Լեռենյան արշավանքի ժամանակ, իրեն փոքր-ինչ լավ զգաց, և հանգիստը Մոնտեբելլոյում վերականգնեց նրա ուժերը։ Ապա նրա վիճակը նորից վատացավ, և միայն մի քանի տարի անց Կորվիզարը (մեր դարի ամենանշանավոր բժիշկներից մեկը, ամենաքիչ քծնող և երեսպաշտին ամենաշատ ատող մի մարդ, ինչպիսին կարելի է միայն երևակայել) կարողացավ ախտորոշել Նապոլեոնի հիվանդությունը, իսկ այնուհետև՝նաև բուժել։

Տուլոնի մոտ Նապոլեոնը տեսնելով, որ իր մարտակոցներից մեկը դադարեցրել է կրակը, վազեց այնտեղ։ Նա միայն մեռյալների գտավ. բոլոր հրետաձիգները զոհվել էին անգլիական արկերից։ Նապոլեոնը որոշեց անձամբ լցնել հրանոթը և վերցրեց փարատոցը։ Այնպես պատահեց, որ նրանից առաջ այդ փարատոցը ոռնել էր քոսով հիվանդ հրետաձիգ-նշանառուն. շուտով Նապոլեոնի մարմինը ծածկվեց քոսակեղով։ Բնականից արտակարգ մաքրասեր լինելով, նա արագ ազատվեց դրանից, բայց հենց դա էլ վատ էր. հարկավոր էր, որ հիվանդությունն իր բնական ընթացքով զարգանա։ Ոչ խսպառ ոչնչացած հարուցիչը անցավ ստամոքսին։ Մանտուայի մոտակայքի ճահճուտներում օթևանելու ժամանակ նա վարակվեց նաև տենդով։ Շուտով լրիվ ուժասպառ եղավ, որը նրա բանակին հուսահատության մեջ գցեց, իսկ ռոյալիստներին՝ հիացմունքի։

Եվ այդ վիճակում Իտալական արշավանքի վերջին ճակատամարտերից մեկի ժամանակ նա մեկը մյուսի ետևից երեք ձի սատակեց ուժասպառ արեց։ Այտերը փոս էին ընկել, և դեմքի մեռելային գունատությունն է՛լ ավելի էր ուժեղացնում անբարեհաճության այն տպավորությունը, որ թողնում էր նրա կարճ հասակը։ Վտարանդիները նրա մասին ասում էին. «Նա այնպես դեղնած է, որ հաճելի է նրան նայելը»,— և խմում էին ի սեր նրա մոտալուտ մահվան։

Միայն աչքերից և դրանց սևեռուն ու թափանցող հայացքից էր կարելի ճանաչել մեծ մարդուն։ Այդ հայացքն էլ հնազանդեցրել էր բանակը, որը ներում էր նրա խղճուկ տեսքը, դրա համար ավելի շատ սիրում նրան։ Հիշենք, որ այդ բանակն ամբողջովին բաղկացած էր հեշտությամբ ոգևորվող երիտասարդ Հայրենասերներից։ Նրանք իրենց «փոքրիկ կապրալին» հաճախ համեմատում էին վեհապանծ Մյուրատի հետ և նախապատվությունը տալիս այդ ժամանակ արդեն այդպիսի փառք նվաճած այդ նվաղուն մարդուն։ Արկոլեից հետո երիտասարդ զորավարի ֆիզիկական ուժերը կարծես թե սկսել էին մարել, բայց հոգևոր ուժը նրան այնպիսի եռանդ էր տալիս, որ օրեցօր ավելի ու ավելի զարմանք էր հարուցում. մենք կտեսնենք, թե նա ինչեր արեց Ռիվոլիում։

ԳԼՈՒԽ XX

Կալյանոյում, Բրենտայում և Արկոլեում բանակի կրած ծանր կորուստներից հետո Նապոլեոնն ամենաթախանձագին ձևով խնդրում էր Դիրեկտորիային օժանդակ ուժեր ուղարկել, որոնք իրեն անհրաժեշտ էին դիրքերը պահպանելու համար։ Դիրեկտորիան նրան ուղարկեց վեց հազար մարդ՝ միաժամանակ քսանհինգ հազարն օգտագործելով Իռլանդիա ափհանումի փորձ կատարելու համար։ Ավելի ճիշտ կլիներ այդ քսանհինգ հազարն Իտալիա ուղարկել, ջախջախել Ավստրիան, նրա հետ հաշտություն կնքել, իսկ հետո արդեն դեսանտ իջեցնել Իռլանդիայում, բայց Դիրեկտորիան բոլորովին չէր կարողանում կառավարել, և ընդ որում նախանձում էր Նապոլեոնի հաջողություններին։

Արկոլեում տարած հաղթանակը թնդաց ամբողջ Ֆրանսիայում։ Սկսեցին հասկանալ, թե այն ժամանակ ինչից էր կախված Իտալիայի ճակատագիրը։ Ձիջելով հասարակական կարծիքի պահանջներն, Դիրեկտորիան հայտնեց գլխավոր հրամանատարին, որ նրա տնօրինության տակ կուղարկի Բեռնադոտի և Դելմասի փառապանծ դիվիզիաները՝ հանելով Հռենոսյան բանակից։ Սպասելով այդ զորքերի ժամանմանը, որոնք, չնայած ձմռանը, պետք է անցնեին Ալպերը, Նապոլեոնը դեկտեմբերն օգտագործեց Վենետիկն անվտանգ դարձնելու համար։ Վենետիկյան հին արիստո-

կրատիան, որն այնքան ահեղ էր միջին դարերում, դեռևս մեծ խելքի տեր էր, բայց կորցրել էր ողջ եռանդը։ Ավելի ու ավելի ճնշվելով իր տարածքում տեղի ունեցող պատերազմի լծից, Վենետիկյան հանրապետությունն ուժեղացնում էր իր սպառազինությունը։

Եթե նա համաձայներ հետևել ֆրանսիական զորավարի խորհուրդներին, ամենայն հավանականությամբ մինչև հիմա էլ գոյություն կունենար, բայց սնափառությունից, հարստությունից և արդեն մի դար տևող անգործությունից թուլացած զառամյալ ծերունիներին դժվար էր հասկանալ երիտասարդ զորապետի խորհուրդների իմաստությունը, որը նրանց ջղայնացնում էր իր արագ գործողություններով։ Նրանք այն աստիճան զուրկ էին որևէ հուսահատությունից, որ նրան համարում էին մոլի հանրապետական, մի մարդ, որը, հույս չունենալով իրենց դաշնակիցներ դարձնել, ձգտում է ամեն տեսակ անախորժություններ պատճառել իրենց։ Բրեշիայում, Բերգամոյում, Կրեմայում հիմնված հայրենասիրական ընկերությունները Վենետիկի տիրույթներում դեմոկրատական ոգի էին տարածում։ Իր կողմից Վենետիկն ուժեղ թափով զինվում էր և առատորեն փող մատակարարում Բերգամյան լեռներում ապրող մոլեռանդ գյուղացիներին։ Բերգամո քաղաքի պոդեստա Օտտոլինին կաշառեց երեսուն հազար այդպիսի լեռնականների։

Բոնապարտը որոշեց ձեռնարկել, թե իրը ոչինչ չի նկատում և ամեն տեսակ բացատրություններ հետաձգեց մինչև Մանտուայի գրավումը։ Բայց այնուհանդերձ Բերգամոյի ամրոցը, որտեղ գտնվում էր վենետիկյան կայազորը, նա գրավեց այն պատրվակով, թե դա բավականաչափ պաշտպանված չէ ավստրիացիների հնարավոր հանկարծակի հարձակումից։ Լոմբարդիայում և Ցիսպադանյան հանրապետությունում նա առաջվա պես խրախուսում էր ազատության ոգին՝ սանձահարելով Ավստրիայի կողմնակիցներին ու հոգևորականությանը և չափավորելով դեմոկրատական կուսակցության ավյունը։ Նա պահպանում էր Սարդինիայի թագավորի և Պարմի դքսի հետ առերևույթ բարեկամությունը։ Նա գնաց Բոլոնիա, որպեսզի այնտեղ ավարտի բանակցությունները Տոսկանայի մեծ դքսի հետ և դրանով ահաբեկի Հռոմի կուրիային։ Իր ժամանակին Տոսկանայի դուքսը չորս հարյուր զատական զորք էր հաղորդել յակոբինյանների դեմ՝ իր հպատակների թվից, թեև,

ինչպես ինձ թվում է, նրա տիրույթներում երբեք յակոբինյան ոգի չի եղել։ Բայց շուտով այդ փիլիսոփա-միապետն իմաստուն որոշում ընդունեց՝ հաշտվել ֆրանսիական հեղափոխության և նրա հետևանքների հետ։

Ինչպես մենք տեսանք, հանրապետական զորքերը գրավեցին Լիվոռնոն։ Բանակի ֆինանսական ադմինիստրացիայի և Լիվոռնոյի առևտրականների միջև սուր վիճաբանություններ ծագեցին։ Խոսքն անգլիական վաճառականների կողմից Լիվոռնո՝ վաճառակատարման (վաճառքի համար պահպանման) ուղարկված ապրանքների մասին էր։ Ըստ սովորության, տոսկանյան վաճառականները կանխավճարներ տվեցին անգլիացիներին։ Բայց հետո այդ ապրանքները բռնությամբ խլվեցին նրանցից և խիստ վնասով վաճառվեցին առևտրական ընկերակցության կողմից, որը, գլխավոր հրամանատարի հաշվարկներով, բանակից արդեն գողացել էր հինգ-վեց միլիոն ֆրանկ։

Նապոլեոնը համաձայնության մեջ մտավ մեծ դքսի հետ, որոշվեց, որ երկու միլիոն կանխիկ վճարելու դեպքում ֆրանսիացիները կթողնեն Լիվոռնոն։ Գլխավոր հրամանատարին ձեռնտու էր այն, որ այդ համաձայնության շնորհիվ պետք է աշատվեր Լիվոռնոյում գտնվող փոքրիկ կայազորը։

Այս բորբոքուն և միաժամանակ խոհուն գլխում ծնվող բազմաթիվ մտքերի մեջ մենք նշենք հետևյալը. Նապոլեոնը որոշեց պատնեշ կանգնեցնել պապի և պաշարված Մանտուայի միջև։ Մի՞թե անգլիացիները չէին կարող չորս հազար մարդ ափհանել Անկոնայում կամ Չիվիտա-Վեկկիայում։ Բոնապարտը մտածեց Բոլոնիայում և Ֆերրարայում (Ցիսպադանյան հանրապետությունում) կազմված երկու ջոկատները միավորել Լիվոռնոյի կայազորի հետ և, դրանց ավելացնելով ևս երեք հազար մարդ, այդ ուժերը սրընթաց նետել Ռոմանիա և Անկոնյան սահմանամերձ մարդ։ Պապական մարդի այդ երկու նահանգի գավթումը հնարավորություն կտար կալանք դնել հարկերից ստացվող մուտքերի վրա և այդ ճանապարհով բռնագանձել չվճարված ռազմատուգանքը, և հատկապես՝ անհնարին կդարձներ Վուրմզերի բանակի միացումը պապի զորքերին։

Հաշտություն կնքելու դեպքում կարելի կլիներ Ավստրիային վերադարձնել Լոմբարդիան և հզոր հանրապետություն կազմավորել՝ Մոդենայի, Բոլոնիայի և Ֆերրարայի մարզերին միացնելով

Ռոմանիան, Անկոնյան սահմանամերձ մարզը և Պարմի դքսությունը։ Այս դեպքում Հռոմը, ի հաճույս իսպանական թագավորի, կտային Պարմի դքսին, իսկ ինչպես Ավստրիայի, այնպես էլ Իսպանիայի աջակցությունից զրկված պապին կարելի կլիներ տեղավորել որևէ մի կղզում, օրինակ՝ Սարդինիայում։

Բոնապարտն սկսեց ի կատար ածել իր պլանը. երեք հազարանոց ջոկատով նա ժամանեց Բոլոնիա՝ սպառնալով պապի գահին։ Բայց Հռոմը երկյուղի չմատնվեց. Վիեննայի նվիրակ Ալբանին տեղեկացրեց, թե իր աչքի առջև ինչպիսի հրաշքներ էր գործում ավստրիական կառավարությունը՝ կազմավորելով թվով հինգերորդ բանակը։ Հռոմի կուրիան զորք էր հավաքում՝ հույս ունենալով Պոյի ստորին հոսանքում կապվել Վուրմզերի հետ, և ցանկություն հայտնում, որ ֆրանսիական զորավարն է՛լ ավելի խորանա իր տիրապետություններում։

Պետական քարտուղար կարդինալը հետևյալ կերպ էր շարադրում ռազմական գործողության իր պլանը։ «Եթե հարկ լինի,— ասում էր նա,— սրբազնագույն հայրը կհեռանա Հռոմից և մի քանի օր կանցկացնի Տերրաչինում՝ Նեապոլի թագավորության հենց սահմանի վրա։ Ինչքան շատ առաջ շարժվի Բոնապարտը՝ հեռանալով Ադիջեից, այնքան մեծ վտանգ կներկայացնեն նրա համար նահանջն ու դրա հետ կապված աղետները, և այնքան ավելի բարեհաջող կլինի սուրբ գործի հաջողության հավանականությունը»։

Այս դատողությունն ավելի քան խելամիտ էր։ Բայց Նապոլեոնն ամենևին մտադիր չէր հեռանալ Մանտուայից։ Բոպե առ բոպե սպասելով հակառակորդի նոր հարձակմանը, նա աչալուրջ հետևում էր Ադիջեին։

1797 թվականի հունվարի 8-ին նա իմացավ, որ թշնամին ռազմաճակատի ամբողջ գծով գրոհել է իր առաջավոր դիրքերի վրա։ Նա իր երկու հազար զինվորով անհապաղ վերադարձավ Պոյի մյուս ափը և շտապեց Վերոնա։ Ալվինցին ավելի քան քառասուն հազար զինվոր ուներ. նա գնում էր օգնության հասնելու Մանտուային, որտեղ քսան հազար զինվոր կար, որոնցից առնվազն տասներկու հազարը զենքի տակ էր։

Չորրորդ անգամ Իտալիայում գործող բանակը պետք է մարտնչեր Մանտուային տիրելու համար։ Բեռնադոտի և Դելմասի դիվիզիաները, որոնց սպասում էին Հոհենսոի ափերից, չժամանեցին, այնինչ Ալվինցին նորից անցավ հարձակման։

Բանակն ղբաղեցնում էր իր սովորական դիրքերը։ Սերյուրիեի դիվիզիան կանգնած էր Մանտուայի դիմաց, Օժերոյի դիվիզիան՝ Ադիջեի ափին, Վերոնայից մինչև Լենյագո և ավելի հեռու, Մասսենան՝ Վերոնայում, Ժուբերը, չորրորդ դիվիզիայի գլուխն անցած՝ Կորոնայում և Ռիվոլիում, մի գյուղում, որն իր անվան անմահությամբ պարտական է Իտալիայում Բոնապարտի շահած մեծ ճակատամարտերից վերջինին։ Այս չորս դիվիզիաներից յուրաքանչյուրում մոտ քսան հազար մարդ կար։ Գեներալ Ռեյը չորս հազարանոց պահեստազորով գտնվում էր Դեզենձանոյում։

Հակառակորդն առաջ էր շարժվում երեք ուղիներով՝ Ռովերեդոյի, Վիչենցայի և Պադուայի վրայով, այսինքն՝ միաժամանակ գրոհում էր ֆրանսիական բանակի և՛ կենտրոնը, և՛ երկու թևերը։ Նապոլեոնը որոշեց իր դիրքերը պահպանել այնքան ժամանակ, մինչև պարզի, թե վճռական հարվածը որ կողմից է սպասվում։

1797 թվականի հունվարի 12-ին Վիչենցայից հարձակվող զորասյունը մոտեցավ Վերոնային և Մասսենայի առաջավոր պահակախմբերին ստիպեց նահանջել. դիվիզիայի մյուս զորամասերն օգնության եկան գրոհի ենթարկվածներին։ Դուրս գալով դեպի Սան-Միքել, նրանք ետ շպրտեցին թշնամուն՝ մեծ կորուստ պատճառելով։ Գլխավոր հրամանատարը հաստատապես եզրակացրեց, որ ավստրիացիների գլխավոր ուժերն այստեղ չեն։

Հաջորդ օրը կեսօրից հետո նա իմացավ, որ գեներալ Ժուբերը, որի վրա ճակատից գրոհում էին հակառակորդի գերակշիռ ուժերը, իսկ երկու թևերից նեղում բազմաթիվ ջոկատներ, ստիպված է եղել առավոտյան թողնելու Կորոնայի դիրքերը (Ադիջեի և Մոնտե-Բալդո լեռան արանքում, որից այն կողմ Գարդա լիճն է)։ Ժուբերը ետ քաշվեց դեպի Ռիվոլի, որտեղից ենթադրում էր շարունակել նահանջը դեպի Կաստելնովո։ Այլևս կասկած չկար. պարզ էր, որ երկու զորասյունն էլ՝ այն, որ շարժվում էր Վիչենցայից, և այն, որ ուղևորվում էր դեպի Ադիջեի ստորին ավազանը, հանձնարարություն ունեին դիվերսիաներ կատարելու, որպեսզի հեշտացվի Ադիջեի հովտով ցած իջնող զորքերի հիմնական ուժերի առաջխաղացումը։ Այդ զորքերն էլ պետք է ընդդիմանային բանակի գլխավոր ուժերին։

Նապոլեոնը դուրս եկավ Վերոնայից՝ իր հետ վերցնելով Մասսենայի գրեթե ամբողջ դիվիզիան։ Երկու հազար մարդ թողնվեց Վերոնայում՝ կասեցնելու համար Վիչենցայից եկող զորասյան գրոհը։ Ռեյը հրաման ստացավ Սալոյից շարժվել դեպի Ռիվոլի, որտեղ նշանակված էր բոլոր զորամասերի հավաքը։ Նապոլեոնը կռահեց, որ, հավատարիմ պատերազմ վարելու ավստրիական եղանակին, մարշալ Ալվինցին Ադիջեի հովտով շարժվող կորպուսը բաժանել է մի քանի ջոկատի։ Այստեղից նա եզրակացրեց, որ, գրավելով Ռիվոլիի բարձունքը, որտեղ խաչավորվում են այդ լեռնային տեղանքն ակոսող արահետները, ինքը դրանով իսկ հնարավորություն կստանա հոծ զանգվածով գործելու անհաղթահարելի արգելքներով անջատված առանձին զորասյուների դեմ։

Այս հաշվարկը հիմնավորված էր, բայց քիչ մնաց խափանվի։ Ֆրանսիական բանակը չափազանց փոքրաթիվ էր, որպեսզի ամենուր հակահարված տար չտեսնված արագությամբ հարձակվող թշնամուն։ Նապոլեոնը շարունակ գտնվում էր գնդակների տարափի ներքո։ Իր ճակատամարտերից ոչ մեկում նա այդպես երկար չէր մնացել հրաձգության տակ։ Այդքան փոքրաթիվ այդ բանակը, հավանաբար, ոչնչացված կլիներ, եթե կորցներ իր գլխավոր հրամանատարին։ Օժերոն երբեք չէր համաձայնի ենթարկվել Մասսենային։ Լանը գեն բարձր կոչում չուներ, և, բացի այդ, ավագության կործանարար օրենքի պատճառով հրամանատարությունը, թերևս, անցներ գեներալ Սերյուրիեին։

Նապոլեոնը Ժուբերին հրամայեց ինչ գնով էլ լինի Ռիվոլիի մոտ դիմանալ մինչև իր գալը։

Դուրս գալով Բասսանոյից, նպատակ ունենալով բարձրանալ Բրենտայի երկայնքով ու ներխուժել Ադիջեի հովիտը, Ալվինցին Պրովերային ութ հազար զինվորով ուղարկեց Լենյագո, իսկ Բայալիչին հինգ հազարով՝ Վերոնա։ Նա ինքը մոտավորապես երեսուն հազար հոգու գլուխ անցած Ռովերեդոյով դուրս եկավ դեպի Կորոնա։ Հետո նա գուտ գերմանական մի միաք հղացավ՝ այդ փոքրիկ կորպուսը բաժանել ևս վեց զորասյան, այն դեպքում, երբ հարկ էր, որ իր զորքը գործողության մեջ մտցնի երեսունութ հազարանոց հոծ զանգվածով. մնացած հինգ հազարը բավական կլիներ հակառակորդին Ադիջեի հովտում անհանգստացնելու համար։ Այն ժամանակ, երբ Ալվինցիի վեց զորասյուներից երեքը՝ ընդհանուր առմամբ տասներկու հազար մարդ, նեղում էին Ժուբերին ճակատից, գեներալ Լյուդինյանը չորս հազարանոց ջոկատով անցավ Գարդա լճի ծայրամասը՝ Մոնտե-Բալդոյից արևմուտք։ Լյուդինյանը հույս ուներ իր չորս հազարով շրջանցել Ֆրանսիացիների ձախ թևը։

Քվազդանովիչը ութ հազար հոգուց բաղկացած հինգ ջոկատով, որոնք պետք է գրոհեին հակառակորդի աջ թևի վրա, առաջ շարժվեց Ադիջեի աջ ափի երկայնքով ձգվող ճանապարհով։ Նկատենք, որ հրետանին և հեծելազորը հնարավորություն չունենալով լեռնային անանցանելի արահետներով հետևել իրենց զորասյուներին, Ադիջեի երկայնքով ձգվող հիանալի ճանապարհով գնում էին Քվազդանովիչի զորասյան հետ։ Եվ, վերջապես, որևէ խրոնվածքից խուսափելու համար Վուկասովիչը չորս հազար հոգուց բաղկացած վեցերորդ զորասյունով Ադիջեի ձախ ափով գնաց գետի հոսանքն ի վար։

Եթե ընթերցողը ցանկանա իրեն հաշիվ տալ այդ պլանի տարօրինակության մասին, աշխարհագրական հանգամանալի քարտեզի օգնությամբ կկարողանա համոզվել, որ բազմաթիվ անհաղթահարելի բնական արգելքների պատճառով այդ զորասյուներից ոչ մեկը չէր կարող հաղորդակցվել հարևան զորասյան հետ։

Եթե սկսենք թշնամու աջ թևից, ապա Մոնտե-Բալդոյի կատարն արգելափակում էր ամեն տեսակ հաղորդակցություն լճի երկայնքով առաջ շարժվող Լյուդինյանի շարասյան և կենտրոնի երեք շարասյուների միջև. վերջիններս, իրենց հերթին, Սան-Մարկոյի անառիկ գագաթներով անջատված էին Քվազդանովիչի զորասյունից, որտեղ գտնվում էին հրետանին ու հեծելազորը. և, վերջապես, Քվազդանովիչի ու Վուկասովիչի միջև Ադիջեն գետն էր։

Այսպիսով, թշնամու՝ գործողության մեջ մտցվող բոլոր զորասյուներն ընթանում էին լեռնային ճանապարհներով և առանց հրանոթների, այն դեպքում, երբ Ռիվոլիի բարձունքում կենտրոնացած ֆրանսիական բանակը կարող էր այդ զորասյուները մեկը մյուսի ետևից գնդակոծել նույնիսկ տասներկու ֆունտանոց թնդանոթներով։ Բոնապարտի հանճարն արտահայտվեց այն բանում, որ նա հանդգնեց կռահելու նման տարօրինակ պլանը։ Այդ պլանի հաջողությանը հակառակորդը կարող էր միայն այն դեպքում հույս ունենալ, եթե ավստրիական բոլոր զորասյուները միանգամից հայտնվեին և լիովին համաձայնեցված գործեին։

Երբ գիշերվա ժամը մեկին մոտ ստացավ իր գլխավոր հրա-

մանատարի հրամանը, Ժուբերն արդեն արագորեն նահանջում էր։ Նա անհապաղ վերադարձավ Ռիվոլիի մոտ գտնվող իր դիրքերը, որոնք Թշնամին, բարեբախտաբար, դեռ չէր հասցրել գրավել։ Կեսգիշերից հետո, մոտ ժամը երկուսին, այդտեղ հայտնվեց Նապոլեոնը։ Հրաշալի լուսնկա գիշեր էր. ավստրիական գիշերակացքի կրակներն արտացոլվում էին Մոնտե-Բալդոյի գագաթները պատած ձյան վրա, և Նապոլեոնը կարող էր իր աչքով համոզվել, որ Թշնամին իրարից անջատ հինգ կայան ունի։

Հունվարի 14-ի առավոտյան Ժուբերի դիվիզիայի գլխավոր ուժերը Կապրինոյի և Սան-Ջովանիի վրայով դուրս գալով դեպի Սան-Մարկո, գրոհեցին Թշնամու զորքերի կենտրոնը։ Օստերիայի ետևում գտնվող դաշտային ամրություններում տեղավորված կիսաբրիգադը պաշտպանում էր նրա աջ թևը։ Նրա խնդիրն էր՝ կանգնեցնել Քվազդանովիչին. հավանական էր համարվում, որ նա կփորձի Ադիջեի ափերից, որտեղ գտնվում էին իր ուժերը, բարձրանալ Ռիվոլիի սարահարթը։ Արագ երթով մոտեցող Մասսենան հրաման ստացավ իր ձախ թևից հանել մի կիսաբրիգադ Լյուզինյանին կասեցնելու համար, քանի որ ենթադրում էին, որ նա կաշխատի համապատասխան շարժումով լճի ափերից վեր բարձրանալ դեպի սարահարթ։

Ժուբերը կատաղաբար էր մարտնչում, բայց ավստրիացիներն արտակարգ քաջությամբ էին հակահարված տալիս. սա այն ճակատամարտերից մեկն էր, որն ամենից շատ է պատիվ բերում նրանց։ Ֆրանսիացիների ձախ թևը, Թշնամուց նեղվելով, անձնատուր եղավ։ Դա տեսնելով, աջ թևը, որի հրամանատարն էր գեներալ Վիալը, նույնպես նահանջեց. բարեբախտաբար, 14-րդ կանոնավոր գունդը զարմանալիորեն դիմանում էր կենտրոնում և դրանով իսկ ժամանակ տվեց վերականգնելու իրավիճակը։ Նապոլեոնը Մասսենայի հենց նոր ժամանած զորասյան գլուխն անցած, շտապեց Ժուբերի ձախ թևը։ Թշնամին ետ շպրտվեց, և ձախ թևը նորից գրավեց Տրոմբալորի բարձունքները։

Այդ նույն ժամանակ մյուս տեղերում գործերը վատթար ընթացք ստացան։ Ավստրիացիները, Սան-Մարկոյի բարձունքներից իջնելով, աջ թևում սաստկապես հետապնդում էին ֆրանսիացիներին։ Քվազդանովիչը գրավեց Օստերիայի դաշտային ամրությունները. Ադիջեի հովտի խորքերից դուրս եկած նրա զորությունն արդեն բարձրանում էր դեպի Ռիվոլիի սարահարթը տանող լանջով. մյուս կողմից տեսանելի էր Լյուզինյանը, որը Աֆֆիի վրայով շարժվում էր դեպի ֆրանսիացիների թիկունքը։

Այսպիսով, ֆրանսիական բանակը շրջապատված էր։ Նապոլեոնն ամենևին չշփոթվեց։ Նա բոլոր ջանքերը ներդրեց Քվազդանովիչին ետ շպրտելու համար։ Վերջինս միայն մի ճանապարհ ուներ՝ խոր լեռնադոգի միջով, որը մեր մարտկոցներն ամեն կողմից գնդակոծում էին։ Հենց որ Քվազդանովիչի զորասյան գլուխը երևաց բարձունքում, երկու թևերից նրա վրա գրոհեց հետևակը, իսկ ճակատից՝ հեծելազորը, որին մարտի էր տանում խիզախ Լասալը (հետագայում սպանվեց Վագրամում)։ Թշնամին ճզմվեց և ետ շպրտվեց դեպի լեռնադոգ։ Նրա շարքերում խուճապ սկսվեց, իսկ երբ Ադիջեի երկայնքով ձգվող, ավստրիացիներով ողողված ճանապարհին ֆրանսիական ռումբը պայթեցրեց լիցքարկղը, խուճապն ու սարսափը ծայրաստիճանի հասան. հետևակը, հեծելազորը, հրետանազորը խառնափնթոր նահանջեցին Ինկանալեից այն կողմ։

Քվազդանովիչից ազատվելով, Նապոլեոնը կարող էր մտածել այն մասին, թե ինչպես օգնի Վիալին՝ Ժուբերի աջ թևի հրամանատարին, որը հապճեպորեն նահանջում էր։ Նրան հետապնդելով, ավստրիացիները ցիրուցան եղան. այն երկու հարյուր հեծյալները, որ Նապոլեոնը նետեց նրանց դեմ, լիակատար խուճապի մատնեցին նրանց, որը (անհավանակա՞ն բան) համակեց ամբողջ կենտրոնը։ Ալվինցիին հաջողվեց միայն Տասսոյի մյուս կողմում նորից հավաքել փախստականներին։

Դեռ մնում էր Լյուզինյանը։ Լուրջ դիմադրության չհանդիպելով, այդ գեներալը տեղավորվեց Պիպոլո լեռան վրա՝ նպատակադրվելով վերջնականապես կտրել ֆրանսիական բանակի նահանջի ուղիները։ Բայց դրա համար պահանջվում էր, որ այն նախապես ջախջախվի։

Լյուզինյանի դեմ Նապոլեոնը հանեց Մասսենայի դիվիզիայի մի մասը, որը դիմացավ ճակատամարտին մինչև Ռեյի գալը։ Երբ, վերջապես, Ռեյի զորասյան գլխամասը Օրցայի վրայով դուրս եկավ Լյուզինյանի թիկունքը, սա, իր հերթին, շրջապատվեց։ Նրա չորս հազարանոց ջոկատը ոչնչացվեց. նա Մոնտե-Բալդո վերադարձավ ընդամենը մի քանի հարյուր զինվորներով։

Ճակատամարտը շահված էր. այն, ինչ դրան հետևեց, թերևս, ավելի մեծ հիացմունքի է արժանի։

Ռիվոլիի ճակատամարտի հենց երեկոյան, այն պահին, երբ գեներալների հրամանով հաշվում էին ավստրիական գերիներին և երբ անվանական կանչի ժամանակ յուրաքանչյուր բրիգադ համոզվում էր, թե ինչպիսի վիթխարի կորուստներ է կրել, Նապոլեոնն իմացավ, որ Պրովերան, ճեղքելով Օժերոյի դիվիզիայի կենտրոնը, որը փոքրիկ ջոկատներով դասավորվել էր Ադիջեի ամբողջ հոսանքի երկայնքով, հունվարի 13-ի երեկոյան անցել է այդ գետը. Պրովերան շարժվում էր դեպի Մանտուա՝ նպատակ ունենալով ֆրանսիացիներին ստիպել վերացնելու պաշարումը։ Նապոլեոնը հույս ուներ, որ Ժուբերը միանալով Ռեյի հետ, բավականաչափ ուժեղ կլինի, որպեսզի կարողանա հաշիվ տեսնել Ալվինցիի զորքերի մնացորդների հետ. նա նորից Մասսենայի դիվիզիայի հետ անհապաղ առաջ շարժվեց դեպի Ռովերբելլա, ուր հասավ 15-ի երեկոյան. 14-ին Օժերոն, որը հասցրել էր նորից համախմբել իր դիվիզիան, սրընթաց հարձակվեց Պրովերայի վերջապահ ուժերի վրա և մեծ կորուստներ պատճառեց դրանց։

15-ին Պրովերան մոտեցավ Մանտուային։ Նա ենթադրում էր քաղաք մտնել Սան-Ջորջո արվարձանով, բայց պարզվեց, որ ֆրանսիացիներն այն գրավել ու վերածել են ամրացված ճամբարի։ Նրան չհաջողվեց կապ հաստատել ամրոցի հետ։

ՖԱՎՈՐԻՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

1797 թվականի հունվարի 16-ին առավոտյան ժամը հինգին Պրովերան գրոհեց Ֆավորիտի դիրքի վրա, իսկ Վուրմզերը՝ Սան-Անտոնիոյի։ Շնորհիվ այն օժանդակ ուժերի, որ բերեց գլխավոր հրամանատարը, Սերյուրիեին հաջողվեց պաշտպանել երկու դիրքերն էլ։ Վուրմզերը վերադարձավ ամրոց։

Պրովերան, որի վրա ճակատից գրոհում էր Սերյուրիեն, ձախ թևից՝ Սան-Ջորջոյի կայազորը, իսկ աջից՝ Մասսենայի դիվիզիայի մնացորդների գլուխն անցած, ինքը՝ Նապոլեոնը, խիստ ծանր դրության մեջ ընկավ. այն ավելի բարդացավ նրանով, որ նրա թիկունքը դուրս եկավ Օժերոյի դիվիզիան։ Իր մոտ մնացած հինգ հազար մարդու հետ նա զենքը վայր դրեց։

Վերջին տասը ամսում գեներալ Պրովերան երկրորդ անգամ դիմեց դժվարին դրությունից դուրս գալու նման եղանակի։ Երբ

Նապոլեոնը լիովին կռահելով թշնամու զորավարին, իր համար պարզեց նրա ողջ ապաշնորհությունը, վերջինս այնուհետև երբեք առիթը ձեռքից բաց չէր թողնում նրան երկինք բարձրացնելու՝ որպես վտանգավոր հակառակորդի, որի հետ պատվաբեր է մարտնչելը։ Այս պարզ խորամանկությունը միշտ հանգեցնում էր այն բանին, որ նրա դեմ էին հանում հենց այդ գեներալին[1]։

Նույն ժամանակ, երբ Նապոլեոնը հաղթում էր Ֆավորիտի ճակատամարտում, Ժուբերը գործում էր իր փառապանծ պետին արժանի եռանդով։

Լյուզինյանի զորասյան ջախջախումը և Քվազդանովիչի նահանջը դեպի Ռիվալտա, Ալվինցիին և նրա կենտրոնական կորպուսին զրկեցին փրկության որևէ հույսից։ Հունվարի 15-ին Ժուբերին, որն արտակարգ արագությամբ երկու զորասյուն նետեց դեպի Ալվինցիի երկու թևերը, հաջողվեց դրանք շրջառել. նահանջի ուղիներից կտրված և Կորոնայի վիհերին սեղմված ավստրիական զորքերը գրեթե ամբողջովին ոչնչացվեցին՝ չհասցնելով հասնել Ֆերրարա։ Մոտ հինգ հազար մարդ զենքը վայր դրեց։

Իր բանակի կեսից ավելին կորցնելով, մարշալ Ալվինցին դրա մնացորդներն անցկացրեց Գիավե գետի մյուս ափը՝ Տիրոլի պաշտպանության համար թողնելով միայն մոտ ութ հազար մարդ։ Ավստրիական վերջապահ զորքերն ամենուր ջախջախվեցին, և, վերջապես, փետրվարի սկզբին ֆրանսիական բանակը նորից գրավեց այն դիրքերը, որ զրաստեցրել էր Արկոլեի ճակատամարտից առաջ. Ժուբերը՝ Լավիսում, Մասսենան՝ Բասսանոյում, Օժերոն՝ Ջիդադելլայում։ Վենետիկն իր բոլոր զինված ուժերով մնաց ֆրանսիական բանակի աջ թևի ետևում։

Այսպիսին էր Ռիվոլիի նշանավոր ճակատամարտը, որտեղ երեսուն հազար ֆրանսիացիներ, մարտնչելով մի շատ քաջ բանակի դեմ, քսան հազար մարդ գերեվարեցին։ Ֆրանսիական բանակը չտեսնված էր մարտնչում։ Հանրապետական կիսաբրի-

---

[1] 1 տարվա նիվոզի 29-ի (1797 թ. հունվարի 18-ի) զեկույցը։

Գլխավոր հրամանատարից՝ Դիրեկտորիային։

... Թշնամու շարքերում անկարգություն և շփոթմունք էին տիրում. հեծելազորը, հրետանին, հետևակը՝ բոլորը խառնվել էին իրար. ոչինչ ի վիճակի չէր կանգնեցնելու սեղեղ 57-րդին։ Այդ պահին հարգարժան գեներալ Պրովերան ցանկություն հայտնեց հանձնվելու և այլն և այլն։

դաղներն իրենց արագությամբ գերազանցեցին Կեսարի փառաբանված լեգիոններին։

Այն զինվորները, որոնց Նապոլեոնը հանել էր Վերոնայից և որոնք հունվարի 13-ին կռվում էին Սան-Միքելի տակ, ամբողջ հաջորդ գիշերը քայլեցին դեպի Ռիվոլի, 14-ին մինչև ուշ գիշեր մարտնչեցին լեռներում, 15-ին վերադարձան Մանտուայի տակ, իսկ 16-ին ստիպեցին անձնատուր լինել գեներալ Պրովերային։

Նապոլեոնը, որն այդ ժամանակ ուժասպառ էր եղել հիվանդությունից, որոշեց այդ բոլոր դժվարություններից հետո հանգստանալ Վերոնայում։

ԳԼՈՒԽ XXI

Մինչոյի ճակատամարտի ժամանակ Բոնապարտը պատահաբար հանդիպեց մի երիտասարդ ֆրանսիացի բնանկարչի, որն ուրվանկարներ էր անում Դարդա լճի շրջակայքում։ Գեներալը՝ շրջապատված շինծու խանդավառ կամ էլ իրենց անկեղծորեն ապրած հիացմունքը չափազանցնող երիտասարդներով, ապշել էր նկարչի բացառիկ ողջամտությամբ ու բարեհոգությամբ, որին կարծես ոչինչ չէր կարող հուզել, և նա ոչ մի բանից չէր զարմանում։ Բացի դրանից, նա լավ կազմվածք և շատ հաճելի դեմք ուներ։ Այդ տարիներին Նապոլեոնն ամենից շատ ատում էր գասկոնյան ձևի զեկուցները, որոնք ամեն ինչ վարդագույն էին ներկայացնում։ Նա երիտասարդ նկարչին հաճախ էր ճաշի հրավիրում և ուզում էր նրա ճակատագիրը կապել իր սեփականի հետ։ Ոչ միայն Բերտիեն, այլ նաև Նապոլեոնն ինքը, որը հաճախ էր երկար զրուցում պ-ն Բիոջիի* հետ, նրան հասկացնել էին տալիս, որ, եթե ցանկանա, կարող է շուտով սպայական աստիճան ստանալ և նախանձելի կարիերա անել։ Երիտասարդը, որը քաջություն էր դրսևորել Գավարդոյի վրա կատարված անսպասելի հարձակման ժամանակ, իր սովորական պարզամտությամբ գեներալին պատասխանեց, որ ամենևին էլ չի դատապարտում զինվորականներին, որ նրանց մասնագիտությունը, անշուշտ, պետքական ու շնորհակալ է, բայց ընդհանուր առմամբ, իր կարծիքով, կոպիտ զբաղմունք է, որի մեջ մարդն իրեն դրսևորում է վատ կողմից, և ինքը ոչ մի գնով չէր ցանկանա դրան նվիրել իր կյանքը։

Մի ամբողջ ամիս անցկացնելով գլխավոր հրամանատարի կայանում, ընդ որում Նապոլեոնն այդ ժամանակամիջոցում արտակարգ ուշադիր էր նրա նկատմամբ, նկարիչը հրաժեշտ տվեց գեներալին և շարունակեց իր շրջագայությունը Իտալիայում։

Արկոլեի ճակատամարտից քիչ առաջ Նապոլեոնը Ֆլորենցիայում ֆրանսիական հանրապետության դեսպանորդին նամակ գրեց՝ խնդրելով քսան լուիդոր տալ պ-ն Բիոջիին, որը, ըստ իր ունեցած տեղեկությունների, վերադարձել է այդ քաղաքը, և իր անունից խնդրել գալ գլխավոր հրամանատարի կայանը։

Նկարիչն իրեն հատուկ անվրդովությամբ պատասխանեց, որ Ֆլորենցիայում ինքն անհետաձգելի գործեր ունի, և որ նկարչի իր զբաղմունքի համար ապարդյուն այդ ուղևորությունը կխանգարի իր պլաններին։ Դեսպանորդը նրան ցույց տվեց Նապոլեոնի նամակը, նրա ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, թե գլխավոր հրամանատարն ինչպիսի գովասանքով է արտահայտվում նրա մասին, կշտամբեց նման հրավերից հրաժարվելու համար և այլն և այլն։ Մի խոսքով, նա այնպես ջանաց, որ պ-ն Բիոջին մի վետուրինո վարձեց և առանց շտապելու ուղևորվեց դեպի գլխավոր հրամանատարի՝ Վերոնայում գտնվող կայանը՝ ճանապարհին ուրվանկարելով պատահած գեղատեսիլ բնապատկերները։ Նա Վերոնա ժամանեց Ռիվոլիի ճակատամարտից քիչ անց և չափազանց սիրալիր ընդունվեց։

— Եթե դուք ուզում եք սպա դառնալ,— նրան ասաց Նապոլեոնը,— այժմ ազատ շատ տեղեր կան. ես ձեզ կվերցնեմ ինձ մոտ։

— Մի՞թե դուք չեք տեսնում,— ավելացրեց այստեղ գտնվող գեներալ Բերտիեն,— որ գլխավոր հրամանատարը իր վրա է վերցնում ձեր բարեբախտության գործը։

— Ես ուզում եմ նկարիչ լինել,— պատասխանեց երիտասարդը,— իսկ պատերազմի այն բոլոր արհավիրքները, որ հենց նոր տեսա, այն բոլոր ավերածությունները, որ նա, բնականաբար, առաջացնում է, և որի համար ոչ ոք մեղք չունի, ինձ ամենևին չեն ստիպել փոխելու իմ կարծիքն այդ կոպիտ զբաղմունքի մասին, որի մեջ դրսևորվում է մարդու վատթարագույն կողմը՝ վայրագության հասնող անձնական շահը, որը հանգեցնում է այն բանին, որ լեյտենանտն առանց ափսոսանքի տեսնում է, թե ինչպես իր կողքին զոհվում է իր մտերիմ ընկեր կապիտանը։

Նապոլեոնն այդ տեսակետը վիճարկում էր փիլիսոփայական փաստարկներով. նա նկարչին պահեց մինչև գիշերվա ժամը եր-

կուտը։ «Ես դեռ երբեք չեմ հանդիպել այդպես լավ խոսող մարդու»,— հետագայում ասել է պ-ն Բիոջին։

Մյուս օրը նրան ճաշի հրավիրեցին. այդպես եղավ նաև հաջորդ օրերին։

Չնայած իր բնածին անդրդվելիությանը, նկարիչը բարեկամական զգացմունքով տոգորվեց Նապոլեոնի նկատմամբ և, վերջապես, մի անգամ երեկոյան համարձակվեց նրան հարցնել, թե ինչու չի փորձում հիմնովին բուժվել, որպեսզի հաղթահարի թույնի ներգործությունը, որը, ինչպես ենթադրում էին, քայքայում է նրա առողջությունը՝ մեծ վտանգի ենթարկելով Հանրապետությունը։

Բերտիեն նշաններով հասկացնել տվեց երիտասարդ նկարչին, որ գլխավոր հրամանատարը չի սիրում խոսել այդ թեմայի շուրջը։ Բայց, ի մեծ զարմանս գլխավոր շտաբի պետի (գեներալ Բոնապարտը, երբ երկուսով էին լինում, նրա հետ վարվում էր այնպես, ինչպես մանր ատիճանավորի հետ, և Բերտիեն միայն այն ժամանակ էր համարձակվում արտահայտել իր կարծիքը, երբ դա համառորեն պնդում էին, մի բան, որը շատ հազվագեպ էր պատահում), Նապոլեոնն սկսեց այդ հարցը փիլիսոփայորեն և շատ հանգամանալից քննարկել։

— Անշուշտ, թույներ գոյություն ունեն։ Բայց գոյություն ունի՞ արդյոք բժշկություն։ Եթե բժշկությունն իսկական գիտություն լիներ, արդյո՞ք ինձ հանգստի չէր պարտադրի։ Բայց մի՞թե կարող է հանգստություն լինել ինձ համար։ Ենթադրենք, թե ես, արհամարհելով իմ պարտականությունը, հրամանատարությունը հանձնեմ Իտալիան բանակի գեներալներից որևէ մեկին, իսկ ինքս գնամ Միլան կամ Նիցցա։ Մի՞թե իմ արյունը չի եռա մարտերի ռազմադեկույցներից, մարտեր, որոնց մասին ես հեռվից հեռու սխալ կդատեի՝ ենթադրելով, որ չի արվել այն ամենը, ինչ կարելի էր անել այդպիսի քաջ զորքերով։ Հիվանդության մահճում, Միլանում թե Նիցցայում, ես հարյուրապատիկ ավելի ուժեղ կտանջվեի, քան այստեղ, որտեղ, առնվազն, երբ իմ զորքերը հաջող են տերաբերված և գործակալները զեկուցներ են ներկայացնում, ես կարող եմ հանգիստ քնել։ Եվ առհասարակ ի՞նչ արժեք ունի մարդը, եթե զրկվել է ինքն իրեն հարգելուց։ Ի՞նչ արժեք ունի գլխավոր հրամանատարը, որը կոծի կամ ստամոքսի ցավերի պատճառով անկողին է մտնում ինչ-որ մի տեղ՝

թիկունքում, հենց այն նույն պահին, երբ նրա քաջ գրենադերներն առանց մտածելու զոհվելու են գնում։ Եվ ի՞նչ նվաստացուցիչ ճակատագիր, եթե բարբեռները մտքներին դնեն այնտեղ իմ վերջը տալ։ Ո՛չ, բժշկություն չկա, իսկ եթե այդ գիտությունը նույնիսկ այնպես ստույգ լիներ, ինչպես ամենակատարյալ տակտիկան, մարդը պարտավոր է իր պարտքը կատարել. գրենադեր լինի, թե գլխավոր հրամանատար՝ նա պետք է մնա այնտեղ, որտեղ նրան դրել է ճակատագիրը և այլն և այլն։

Նապոլեոնը երիտասարդին բաց թողեց միայն գիշերվա ժամը երկուսին։ Հաջորդ երեկոներից մեկում նրան ասաց.

— Քանի որ այդպես համառորեն ուզում եք նկարիչ մնալ, լավ կանեիք, եթե ինձ համար նկարեիք Ռիվոլիի ճակատամարտը։

— Ես մարտանկարիչ չեմ,— պատասխանեց պ-ն Բիոջին,— ես սոսկ բնանկարիչ եմ։ Երբեմն, ձեզ հետևելով, ես թեթևակի նկատել եմ ծխի քուլաներ, զինվորական անվերջանալի շարքերի տեսարաններ, բայց ես չափազանց քիչ եմ ուսումնասիրել այդ բոլորը, որպեսզի հանդգնեմ դրանք պատկերել կտավի վրա։ Ես կարող եմ հաջողության որոշ հույսով պատկերել միայն այն, ինչ ինձ քաջածանոթ է։

Նապոլեոնը փորձեց տարհամոզել նրան, բայց նկարիչն անբեկանելի պնդեց իր ասածը։

— Դե՛ լավ,— ի վերջո ասաց գեներալը,— ինձ համար նկարեցեք Ռիվոլիի բարձունքը, մերձակա լեռները և այն կողմում՝ աջից, հովտի խորքում հոսող Ադիջե գետը այնպես, ինչպես ես դրանք տեսել եմ, երբ կաղմել եմ դրոհի պլանը։

— Բնանկարն առանց սաղարթի շատ տխուր տեսարան է,— առարկեց պ-ն Բիոջին, որը բոլոր զինվորականներից բարձր էր գնահատում միայն գլխավոր հրամանատարին և ամենևին տրամադիր չէր երկար մնալ բանակում,— այն նկարելն ինձ նույնքան քիչ բավականություն կպատճառի, որքան ձեզ, գեներալ, այն դիտելը։ Բնանկարն առանց սաղարթի կարիք է զգում, որ այն աշխուժացնեն բնորոշ մանրամասները և մեծ ճակատամարտերի հզոր կրքերը, որոնք ես չեմ կարողանում հաղորդել. շատ եմ ափսոսում, որ չեմ կարող նկարել ձեզ համար։

— Դե՛ լավ, զուք այն կնկարեք այնպես, ինչպես ինքներդ համարում եք համարեք, իսկ Բերտիեն ձեզ պահակախումբ կտա։

Գծելով տեղանքի պլանը՝ ձախից Մոնտե-Բոլդոն, դիմացը՝ Սեն-Մարկո բարձունքը, աջից՝ Ադիջեն, գեներալ Բերտիեն պատկերեց ճակատամարտի ընթացքը։

Այս հանպատրաստից գծված ուրվանկարի օգնությամբ գրույցով ու վեճով տարված Նապոլեոնը Բերտիեի հետ աշխատում էր նկարչին բացատրել զորքերի շարժման հետևողական զարգացումը, որը մենք շարադրեցինք վերևը։ Նկարիչը ոգևորվեց այդ փառապանծ գործերով, որոնց մասին, իր ասելով, պատմվում էր չափազանց պարզությամբ և առանց նվազագույն վերամբարձության։ Նապոլեոնը որոշ պաթոս դրսևորեց միայն այն ժամանակ, երբ սկսեց խոսել յուր պարտքի և թունավորման վտանգի նկատմամբ լիակատար անտարբերության մասին։

Անշուշտ, Նապոլեոնը հույս ուներ ստանալ մարտանկարը։ Այլապես, ասում է պ-ն Բիոջին, ինչո՞ւ պետք է նա այդպես պարզորոշ շարադրեր զորաշարժերը, և հատկապես՝ համազգեստների տարբերությունները։ Ահա աջից հրետանիկներն իրենց տասներկու ֆունտանոց հրանոթներով սլանում են Ադիջեի հովտի խորքը՝ ամբարձներ թափելով Քվազդանովիչի սպիտակ համազգեստով զինվորների վրա, որոնք փորձում են բարձրանալ սարահարթը. ահա Լասալի հրամանատարությամբ մարտնչող կանաչ համազգեստով դրագունները և այլն և այլն։

Բաժանվեցին գիշերվա ժամը երկուսն անց։

Հաջորդ առավոտյան Բերտիեն պ-ն Բիոջիի մոտ ուղարկեց չորս բանիմաց գրենադերների, որոնք պատկանում էին այն կիսաբրիգադներից մեկին, որոնք հատկապես աչքի էին ընկել Ռիվոլիի ճակատամարտում։ Դրանց պաշտպանությամբ պ-ն Բիոջին ճանապարհ ընկավ։ Նա սիրով զրուցում էր այդ գրենադերների հետ։ Իրենց առողջ դատողությամբ նրանք, նկարչի ասելով, հիշեցնում էին իրենց գլխավոր հրամանատարին։ Զրույցի ժամանակ այդ հիանալի երիտասարդները բացառիկ դյուրընթացություն էին դրսևորում։

Գիշերեցին մի գյուղում. հաջորդ առավոտյան պ-ն Բիոջին նրանց հետ շրջեց մարտադաշտում։ Երբ թեքվեցին ձախ, նա շարունակեց ճանապարհը՝ ավելի ու ավելի խորանալով դեպի Գարդա լիճն իջնող կիրճը։ Հանկարծ գրենադերները, որոնցից երկուսը գնում էին առջևից, կանգ առան. նրանցից մեկը, որ մնացել էր նկարչի հետ, ասաց.

— Քաղաքացի, մեզ հրամայված է քեզ պահպանել։ Այդ պատճառով էլ, ամենևին չսահմանափակելով քո գործողությունները, մենք քեզ ուղեկցելու ենք ամենուր, ուր էլ որ գնաս, բայց եթե դու դեռ էլի պետք է իջնես դեպի լիճ, քեզ կհյուրասիրեն հրացանի կրակոցներով։ Այս վայրերի գյուղացիները կատաղի են։

Պ-ն Բիոջին պատասխանեց, որ ինքն ուզում էր դեպի լիճն իջնել զուտ հետաքրքրությունից՝ տարված լանդշաֆտի գեղեցկությամբ։ Նա գրենադերների հետ վերադարձավ Ռիվոլի գյուղը։ Իր նկարի համար ելակետ ընտրեց բոլորովին վերջերս արիով ավերված ցածր պատի մոտ գտնվող վայրը։ Գրենադերները հետևում էին նրա գործողություններին և, կարծես, ի կատարումն իրենց տրված հրամանի, որոշել էին ոչ մի քայլ չհեռանալ նրա նկարակալից։ Մի ժամ հետո նրանցից մեկն ասաց նրան.

— Այստեղ քեզ ոչ մի վտանգ չի սպառնում։ Այստեղից երեք հարյուր քայլի վրա սպանվել է մեր կապիտանը. նա հիանալի մարդ էր։ Եթե քեզ պետք չենք, մենք կցանկանայինք մի անգամ էլ տեսնել այդ վայրը։

Մի քանի րոպե անց պ-ն Բիոջին, տեսնելով, որ չորսն էլ կանգնել ու լարված ուշադրությամբ նայում են գետնին, թողեց աշխատանքը և մոտեցավ. նրանց աչքերում արցունքներ նկատեց։

— Ահա այստեղ են սպանել մեր խեղճ կապիտանին։ Հավանորեն նա թաղված է մերձակայքում։

Զինվորներն սկսեցին սվիններով փորփրել հողն այն տեղերում, որտեղ փխրուն էր թվում, և հանկարծ լուռ իրար նայեցին. նրանք ճանաչեցին իրենց կապիտանին, որի կուրծքը ծածկված էր հաղիվ երեք մատնաչափ հաստությամբ հողի շերտով։ Ջնայած իր սովորական սառնությանը, պ-ն Բիոջին, հուզված, մի ժամից ավելի քայլեց նրանց հետ։ Նրանք նկարչին ցույց տվեցին, թե ինչպիսի ռազմերթեր ու հակառազմերթեր է կատարել իրենց վաշտը նախքան կապիտանի սպանվելը։

Պ-ն Բիոջին նրանց հետ երեք օր անցկացրեց Ռիվոլի գյուղի շրջակայքում։ Նա մարտադաշտում զանազան ուրվանկարներ արեց՝ մտածելով, որ դրանով բավականություն կպատճառի գլխավոր հրամանատարին։ Ընդ որում նա շատ հաճույք էր զգում իր չորս գրենադերների ընկերակցությունից և այլևս ուժեղ հակակրանք չէր տածում ռազմական գործի նկատմամբ։

— Ըստ էության,— ասել է նա 1837 թվականին,— ես չէի սիրում միայն սպաներին, իսկ գլխավոր հրամանատարը և գրենադերներն ինձ շատ դուր էին գալիս։

Վերադառնալով Վերոնա, նա վեց շաբաթ աշխատեց իր նկարի վրա։ Գլխավոր հրամանատարն առաջվա պես նրան շատ սիրալիր էր ընդունում։ Նա նկարչին առաջարկեց ամեն օր իր մոտ գալ մթնշաղին, երբ այլևս չէր կարելի աշխատել, և պ-ն Բիոջին հաճախ էր ճաշելու պահում։

Մի անգամ երեկոյան, ճաշից հետո, հյուրասրահը, որտեղ սպասում էին պ-ն Բիոջին և մի քանի գնդապետներ, մտավ գեներալ Բերտիեն։ Նա ջղայնացած հարցրեց.

— Ի՞նչ եք անում այստեղ, պարոնայք։ Այստեղ ձեր տեղը չէ։ Հեռացե՛ք։

Ապա, տեսնելով, որ պ-ն Բիոջին, մի քիչ շփոթված, շտապում է դուրս գալ գնդապետների հետ, Բերտիեն դիմեց նրան.

— Մնացե՛ք։ Այն, ինչ որ ասացի, ձեզ չի վերաբերում. գլխավոր հրամանատարը միշտ ուրախ է ձեզ տեսնելու։ Դուք, հավանաբար, ինքներդ էլ դա նկատում եք. նա ձեզ նստեցնում է իր կողքին, զրուցում ձեզ հետ։

Բերտիեի խոսքերում որոշ սրտնեղություն էր զգացվում. չէ որ նրա, ինչպես և մյուս բոլոր զինվորականների հետ Նապոլեոնը երբեք չէր զրուցում, այլ միայն չոր տոնով հարցեր էր տալիս։ Բերտիեն նման էր մանր ատիճանավորի, որին հանձնարարված է կարգադրություններ հաղորդել։

— Դժվար է պատկերացնել,— ասում է պ-ն Բիոջին,— թե ինչքան շատ մարդիկ էին ամեն օր ընդունելության գալիս գլխավոր հրամանատարի մոտ։ Դրանց մեջ կային շատ պերճաշուք կանայք, քահանաներ, աղնվականներ, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ։ Նա առատորեն վճարում էր նրանց, և դրա շնորհիվ ամեն ինչ գիտեր։

Պ-ն Բիոջին ապշեցնում էր այն հանգամանքը, որ գլխավոր հրամանատարն իր բոլոր գեներալներին, նույնիսկ առավել նշանավորներին պատկառելի հեռավորության վրա է պահում. եթե նա երկու-երեք խոսքն էր ասում նրանցից որևէ մեկին, դա ողորմածություն էր համարվում, և ողջ երեկոյան նրանց խոսակցության նյութը դա էր։

— Ոչինչ չէր կարող ավելի գայթակղիչ լինել, քան այն դիրքը, որ ինձ առաջարկում էին,— ասում էր պ-ն Բիոջին։— Հարկավոր էր փառասիրություն ունենալ. եթե ես համազգեստ հագնեի, գլխավոր հրամանատարը, անտարակույս, անմիջապես կդադարեր խոսել ինձ հետ, իսկ եթե նրա մտքով անցներ շարունակել մեր զրույցները, ինչպիսի՜ նախանձ կհարուցեր դա։

Գլխավոր հրամանատարը սիրով էր զրույցի բռնվում զինվորների հետ. նա միշտ նրանց հետ խոսում էր պարզ ու խելացի՝ աշխատելով ճիշտ տրսալ նրանց միտքը։ Նա հաճախ երկար զրուցում էր պ-ն Բիոջիի հետ։ Զրուցակցին նայելու նրա սովորության մեջ, հատկապես ուշ երեկոյան, ինչ-որ շատ հաճելի բան կար, և նա միշտ անբասիր կերպով քաղաքավարի էր։ Արվեստի մեջ նա նրբազգացությամբ շատ բան էր բացահայտում. նա բնավ ոչինչ չէր կարդացել այդ բնագավառից. պատահում էր, որ Միքելանջելոյին էր վերագրում Աննիբալե Կարաչչիի նկարները։

Այդ ժամանակ Գրոն նկարում էր Նապոլեոնի դիմանկարը՝ այն, որտեղ նա պատկերված է գրոշը ձեռքին, Արկոլեի կամուրջն անցնելու պահին։ Դա այդ ժամանակվա նրա միակ դիմանկարն է, որը նման է իրեն։ Գլխավոր հրամանատարը, սուրը կողքից կախ, սլանում է առաջ. այս կտրուկ շարժումից սրի դաստապանածոպը մի քիչ տեղաշարժված է։ Որքան էլ տարօրինակ է, Բերտիեն, որը գիտեր նկարել, Գրոյին հարցրել է, թե ինչու ծոպը կախ վիճակում չէ։ «Շատ պարզ պատճառով»,— ասաց Նապոլեոնը և բացատրեց պատճառը։

— Գրոն,— ավելացրեց պ-ն Բիոջին,— բոլոր նկարիչներից միակն է, որ համարձակվել է պատկերել այդ ժամանակ կրծքի ծանր հիվանդությունից տառապող գլխավոր հրամանատարի աչքերի տակի կապտությունները։ Շրջապատողներին մի քիչ հանգստացնում էր միայն այն ընդարձակ շրջագայությունների միտքը, որ նա կատարում էր դրեթե ամեն օր, և դրանց սրընթացությունը։ Ապշեցուցիչ էր նրա հայացքը՝ սեռուոն ու խոր, ամենևին ոչ ոգեշունչ և բանաստեղծական։ Երբ նա զրուցում էր որևէ կնոջ հետ կամ իր զինվորներից լսում որևէ մեկի անձնվեր արարքի մասին, այդ հայացքը դառնում էր անսահման քնքուշ։ Ընդհանուր առմամբ,— ասում էր պ-ն Բիոջին,— դա արտակարգ խառնվածքի տեր մարդ էր։ Նրա գեներալներից ոչ մեկը գոնե մի քիչ նման չէր նրան։ Լեմարուան հմայիչ արտաքին ուներ, որը

վկայում էր այդ մարդու մեղմության, օրինավորության, բարեկիրթ լինելու մասին, բայց նա չէր կարող համեմատվել իր պետի հետ. Մյուրատը գեղեցիկ էր ձիու վրա, սակայն դա կոպիտ գեղեցկություն էր. Դյուֆոն խելոք էր, բայց միայն Լանն էր երբեմն հիշեցնում գլխավոր հրամանատարին։

Նրան շրջապատում էր խոր ու լուսակյաց հարգանքը, նա բացարձակապես իրեն հավասարը չուներ, և բոլորը դա զգում էին։ Վերոնայի բոլոր գեղեցկուհիներն աշխատում էին նրան հանդիպել Վենետիկի պրովեդիտորի՝ նախկին դեսպանորդի և շատ նշանավոր մեծատոհմիկի մոտ, որը, սակայն, գլխավոր հրամանատարի ներկայությամբ երեխա էր թվում։

Երբ Ռիվոլիի սարահարթը պատկերող նկարն ավարտվեց, դեներալը գոհ մնաց։ Բնականությամբ և մեղմ երանգներով դա հիշեցնում էր Կլոդ Լորենի կտավները։ Նապոլեոնն առատորեն վճարեց նկարչին։ Պ-ն Բիոջին վերադարձրեց վեց լուիդոր այն քսանհինգից, որ ստացել էր Ֆլորենցիայում՝ ասելով, որ այդ փողերը չի ծախսել։

Մենք ոչ մի բառ չենք փոխել պ-ն Բիոջիի պատմածի մեջ. ներկայումս նա բոլորովին մեկուսացած՝ ապրում է Բռնատանի մի փոքրիկ քաղաքում։

ԳԼՈՒԽ XXII

1797 թվականի մայիսի 12-ին Մեծ խորհուրդը դոժի նախագահությամբ որոշեց ցրել կառավարությունը։ Մայիսի 16-ին չորս հազար ֆրանսիացիներ գրավեցին Վենետիկը։

Վենետիկցիների սիրալիրությունը, նրանց հասած արտակարգ դժբախտությունը, փիլիսոփայի հարցասիրությամբ ներշնչված՝ աշխարհում ամենակենսուրախ այս ժողովրդի հետաքրքրությունը[1],— այս ամենը մեզ ստիպում է խորապես ափսոսալ Նապոլեոնի ընդունած որոշման համար։ Եթե նա կարողանար այլ կերպ վարվել, Վենետիկի հանրապետությունը, թերևս, դեռ մինչև օրս էլ գոյություն կունենար և Ավստրիայի արճճի լուծն այնքան էլ ծանրորեն չէր ճզմի դժբախտին։ Պ-ն ֆոն Մետեռնիխը Շպիլբերգ չէր

[1] Տե՛ս 1832 թվականին մահացած բանաստեղծ Բուբատիի ստեղծագործությունները. օրինակ՝ «Էլեֆանտեիդա» սատիրան։

ուղարկի ամենանշանավոր իտալացիներին։ Սակայն չի կարելի չխոստովանել, որ ֆրանսիական զորավարի վարմունքը միանգամայն օրինական էր։ Նա արեց այն ամենը, ինչ հնարավոր էր, որպեսզի պահպանի Վենետիկը, բայց նա գործ ուներ շափազանց հիմար մարդկանց հետ։

Ֆրանսիացիների կողմից Վենետիկի օկուպացումով ավարտվում է Նապոլեոնի կյանքի բանաստեղծական և միանգամայն ազնիվ ժամանակաշրջանը։ Այնուհետև նա ինքնապահպանության նպատակով ստիպված էր միջոցներ ձեռնարկել և գործողություններ կատարել, որոնք, թեև միանգամայն օրինական էին, արդեն չեն կարող կրքոտ խանդավառության առարկա լինել։ Այդ գործողություններում մասամբ երևում է Դիրեկտորիայի ստորությունը։

Այսպիսով, դրանով ավարտվում են Նապոլեոնի հերոսական ժամանակները։ Ես շատ լավ եմ հիշում այն խանդավառությունը, որ նրա ջահել փառքն առաջացնում էր բոլոր ազնիվ սրտերում։ Ազատության մասին մեր պատկերացումները դեռ հարբստացած չէին, ինչպես հիմա, խարդախ արարքների ոչ վաղուցվա անցյալի փորձով։ Մենք բոլորս պնդում էինք. «Տա՜ աստված, որ Իտալական բանակի երիտասարդ գլխավոր հրամանատարը Հանրապետության գլուխ անցնի»։

Ֆրանսիացու համար հեշտ չէ ըստ արժանվույն գնահատել մտածված և խորապես հիմնավորված գործողությունները՝ միակ գործողությունները, որոնք հաճախ հաջողությունների են հասցնում. իր հերոսի մեջ նա ուզում է տեսնել պատանի ու խիզախ գծեր և, ինքն էլ դա չգիտակցելով, նրա վրա է փոխադրում ապագայական իդեալների մնացուկները։ 1798 թվականին մարդիկ հակված էին մտածելու, որ դեներալ Բոնապարտը ճակատամարտերը շահում է այնպես, ինչպես, գավառային գրողների կարծիքով, Լաֆոնտենը գրել է իր առակները՝ առանց մտածելու։

Երբ հայտնի դարձավ, որ Նապոլեոնը Փարիզում է և որ ներկայացել է Դիրեկտորիային, բոլորը մտածում էին. «Նրանք կթունավորեն նրան»։ Այդ միտքն սկսեց մթագնել այն խանդավառությունը, որ ներշնչում էր Իտալիայում գործող բանակի զորավարը։ Փարիզում նա կլանված էր այն մտքով, թե ինչպես խուսափի

[1] Սիլվիո Պելլիկոյի, Բորսիերիի, Անդրիանի և այլոց «նոթերը»։

Դիրեկտորիայի դավերից։ Նրա փառքի հերոսական շրջանն անցել էր։

Եգիպտական արշավանքի լուրն ամրապնդեց հավատը նրա ձիրքի հզորության նկատմամբ, բայց նսեմացրեց այն պատկերացումը, որ մենք ունեինք հայրենիքի հանդեպ նրա խանդավառ սիրո մասին։ Հանրապետությունը, ասում էինք մենք, այնքան հարուստ չէ, այնքան հաջողությամբ չի տնօրինում իր գործերը, որպեսզի Եգիպտոս ուղարկի իր ունեցած լավագույնը։ Նապոլեոնը համաձայնեց գլխավորել այդ ձեռնարկը երկու հնարավորության՝ մոռացված կամ էլ թունավորված լինելու վախից։

Բայց վերադառնանք ճակատամարտերին. մենք շարադրեցինք, և գրեթե ամենուր իր իսկ՝ Նապոլեոնի խոսքերով, Մոնտենոտտեի, Միլլեզիմոյի, Դեգոյի, Լոդիի, Լոնատոյի, Կաստիլիոնեի, Ռովերեդոյի, Բասսանոյի, Սան-Ջորջոյի, Արկոլեի, Ռիվոլիի, Ֆավորիտի, Տալյամենտոյի, Լարվիսի ճակատամարտերը։

Մենք շատ ավելի համառոտ կպատմենք Եբերեխի, Բուրգեբի..., Վաթեռլոոյի մասին։

Ճակատամարտի ընթացքը ռազմական արվեստի տեսակետից շարադրելու համար պահանջվում է հիսուն էջ. այն որոշ չափով մատչելի ներկայացնելու համար՝ քսան էջ։ Դժվար չէ տեսնել, որ կարելի էր ճակատամարտերով լցնել այս ամբողջ գիրքը։ Ընդ որում, ամեն մի ընթերցող, որը որոշ պատկերացում ունի երկրաչափության մասին, սիրում է ճակատամարտերի վերաբերյալ կարդալ Գուվիոն դը Սեն-Սիրի, Նապոլեոնի, Ժոմինիի գրքերում, այն հեղինակների ստեղծագործություններում կամ հուշագրություններում, որոնք իրենց նեղություն են պատճառել ուշադրությամբ համադրել ռազմական տեղեկագրերը և կռվող երկու կողմերի հորինածները։

ԳԼՈՒԽ XXIII

Նապոլեոնը վախենում էր յակոբինյաններից, որոնց նա ոչ միայն զրկել էր իշխանությունից, այլ նաև ամենօրյա զրպարտանքից։ Նա ոստիկանություն ստեղծեց նրանց հսկողության տակ պահելու համար։ Նա խիստ ցանկություն ուներ աքսորել բոլոր պարագլուխներին, բայց նման միջոցառումը կխոչընդոտեր հասարակական կարծիքը և երկար ժամանակով կհետաձգեր Նապոլեոնի

կողմից նպատակադրված միասնության ստեղծումը։ Նույնիսկ պարագլուխներին աքսորելուց հետո նրան չէր լքի վախը շարքային յակոբինյանների նկատմամբ. նրա կարծիքով այդ մարդկանցից երկու տասնյակ բավական էր դավադրություն սարքելու և իր կյանքը վտանգի ենթարկելու համար։

Յակոբինյանները, թերևս, միակ մարդիկ էին, որոնց Նապոլեոնը երբևիցե ատել է։ Եգիպտոսից վերադառնալով, նա տեսավ, որ իսկական իշխանությունը Սիեյեսի (որին նա յակոբինյան էր համարում) ձեռքին է. ես ասում եմ իսկական, քանի որ Դիրեկտորիան շարունակում էր գոյություն ունենալ միայն այն պատճառով, որ դեռևս չէր գտնվել մեկը, որը մահացու հարված հասցներ նրան. և Սիեյեսը կարող էր որևէ մեկ այլ գեներալի այնպես օգտագործել, ինչպես օգտագործել է Նապոլեոնին։

Առողջ դատողությամբ Նապոլեոնը հարկ համարեց յակոբինյաններին հսկելը վստահել մի նախկին յակոբինյանի։

Նա կարծում էր, թե Ֆուշեին գրավել է իր կողմը (ինչում սխալվում էր)։ Նա նրան հանձնարարեց.

առաջին՝ բարձր պաշտոնների նշանակել բոլոր այն յակոբինյաններին, որոնք օժտված էին անտարակուսելի արժանիքներով.

երկրորդ՝ երկրորդական պաշտոնների նշանակել բոլոր այն յակոբինյաններին, որոնք իրենց գործունյա խառնվածքով և հայրենիքի նկատմամբ ունեցած խանդավառ սիրով կարող էին վտանգավոր դառնալ.

երրորդ՝ անել այն ամենը, ինչ կարող էր հաճելի լինել մնացած յակոբինյաններին։

Այսպիսով, Նապոլեոնն աշխատում էր առաքինի խանդավառությունն աստատախիլ անել եսասիրության օգնությամբ։ Նա անհրաժեշտ էր համարում, որ յակոբինյանները որքան հնարավոր է ավելի շատ զբաղված լինեն իրենց նոր պաշտոններում։ Նրանցից ամենահանդուներին Ֆուշեն պետք է ասեր. «Թողեք որ ես գործեմ։ Մի՞թե ինձ չեք ճանաչում։ Մի՞թե դուք չգիտեք, թե ես ինչի եմ ձգտում։ Հավատացեք, ես գործում եմ կուսակցության ամենամեծ բարօրության համար։ Իմ դիրքն ինձ հնարավորություն է տալիս տեսնելու, թե ինչի են ընդունակ զինվորները. ես ուշադիր հետևում եմ նրանց յուրաքանչյուր շարժումին։ Հենց որ ելույթի հնարավորություն լինի, ես ձեզ կզգուշացնեմ։ Եվ այլն և այլն։

Ֆուշեին հանձնարարված էր շարունակել շփվել յակոբին-

յանների հետ և տեսնվել նույնիսկ նրանց հետ, ովքեր անձամբ առավել թշնամաբար էին տրամադրված իր նկատմամբ։ Այլապես նա ինչպե՞ս կարող էր հետևել նրանց գործողություններին։ Շատերի վերաբերյալ կարևոր էր իմանալ, թե նրանք որտեղ են անցկացնում ամեն մի գիշերը։ Ֆուշեին հանձնարարված էր հետևել, թե նրանց սրտերում որքան է արմատավորվում ենամությունը, իսկ հատկապես նրանց, որոնց մեջ դեռ եռանդ ու ավյուն է պահպանվել, հնարավորություն տալ իրենց դրսևորելու։

Ռոյալիստական կուսակցությունն օգտվում էր Նապոլեոնի բարեհաճությունից։ «Այս մարդիկ միակն են, որ կարողանում են ծառայել»,— ասաց նա, երբ պ-ն դը Նարբոնը նրան հանձնեց եռանկյունի գլխարկի ծալվածքում դրված նամակը։ Եթե Նապոլեոնը ցանկանար, իրեն կշրջապատեր բացառապես Սեն-Ժերմեն արվարձանին պատկանող մարդկանցով։

Նրանք, որոնց կայսրը որոշ չափով մերձեցնում էր իրեն, միամտորեն զարմանում էին, որ նա այդպես խնայում է հեղափոխական կուսակցությանը, որը բացահայտ դերիշխում էր Թեկուզ և Պետական խորհրդում, որն այն ժամանակ, անտարակույս, Կայսրության ամենաազդեցիկ քաղաքական մարմինն էր։ Այն, ինչ տեղի էր ունենում Սենատում և Օրենսդրական կորպուսում, լոկ ծիսակատարություն էր։

Այդ մերձավորները՝ նախկինում ռոյալիստական կուսակցության հետևորդները, կուսակցություն, որի մասին արդեն ասվեց, կայսեր հետ խոսելիս միշտ վախենում էին նրանից և երբեք չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է կայսրը որևէ բանից վախենալ։

Սկզբում նա շատ էր վախենում առհասարակ բոլոր յակոբինյաններից։ Հետո, երբ առաջին վախը հանդարտվեց, սկսեց մեծապես վախենալ Ֆուշեից և փորձում էր նրան փոխարինել սկզբում պ-ն Պասքիեով, իսկ ավելի ուշ՝ գեներալ Սավարիով՝ Ռովիգոյի դքսով։ Բռնատիրության պատրաստակամություն, արիություն, եռանդ՝ այս ամենը Սավարին ուներ, բայց, միշտ բանակում ծառայելով, նա բոլորովին չէր ճանաչում յակոբինյաններին։ Նույնիսկ Պասքիեն նրանց շատ վատ էր ճանաչում։

Որքանո՞վ էր Ֆուշեն խաբում կայսրին։

ԳԼՈՒԽ XXIV

Կայսրը պարտվեց երկու պատճառով.

Նախ՝ այն նախապատվության պատճառով, որ նա թագադրվելուց հետո սկսեց տալ միջակ մարդկանց.

Երկրորդ՝ կայսեր պարտականությունները գլխավոր հրամանատարի պարտականությունների հետ զուգակցելու պատճառով։ 1813 թվականի հունիսի 18-ին Լայպցիգի տակ տեղի ունեցած ճակատամարտի նախօրյակին նա ամբողջ գիշերը վատնեց կայսեր պարտականությունների կատարման վրա. նա զբաղվում էր Իսպանիայի վերաբերյալ հրամաններ թելադրելով՝ փոխանակ նահանջի պլան մշակելու, որը հաջորդ օրը շհաջողվեց՝ կարգուկանոնի բացակայության պատճառով։ Բերտիեն, ըստ սովորության, ոչինչ չէր նախատեսել, ոչինչ չէր համարձակվել վերցնել իր վրա։ Օրինակ, էսլեր գետի կամրջի տեղամասում հրամանատարությունը հարկավոր էր հանձնարարել կայսեր հանձնակատար սպաներից որևէ մեկին, որը կորոշեր, թե երբ է հարկավոր պայթեցնել կամուրջը։

Լայպցիգի մերձակայքում հարյուր հիսուն հազարանոց բանակը ջախջախվեց երեք հարյուր հազարանոց բանակի կողմից. այստեղ արդեն ամեն մի արվեստ և զորաշարժ անտեղի էր։

Հարյուր հիսուն հազարանոց բանակը բաղկացած էր հոգնածությունից ուժասպառ երիտասարդ զինվորներից. նրանց հրամանատարներն էին հոգնատանջ գեներալները, որոնք, իրենց հերթին, կատարում էին հանճարեղ մարդու հրամանները, որն ավելի շատ զբաղված էր իր կայսրության, քան իր զորքի մասին մտածելով։

Թշնամու զորքերի գլխավոր հրամանատարը՝ աշխարհիկ հասարակության մեջ բավական հաճելի մի մարդ, բանակի զեկավարի դերում ապաշնորհ էր։ Ընդ որում նրան խիստ նեղում էր երկու միապետների ներկայությունը. իրենց պալատականների ճնշման տակ նրանք շարունակ փորձում էին ուղղել նրա թույլ տված սխալները։ Սիրալիր իշխան Շվարցենբերգի լիակատար ապաշնորհությունը և դրա հետևանքով տիրող անկարգությունը հիմք են տալիս մտածելու, որ եթե թշնամին գործ ունենար միայն իր խնդրով զբաղված՝ Իտալական բանակի զորավարի հետ, ֆրանսիական զորքը կփրկվեր։ Բայց դրա համար նաև հարկա-

Ինչ էր գլխավոր շտաբի եռանդուն պետ, որն ընդունակ լիներ արագ հնարամտություն դրսևորելու և պատրաստ լիներ անհրաժեշտության դեպքում իր վրա վերցնելու զոնե երկրորդական նշանակության միջոցառումները. մի խոսքով՝ Բերտիեի ճիշտ հակադրությունը։ Այդ ժամանակաշրջանում հանդիպելով Բերտիեին, մենք հանձին նրա տեսանք միանգամայն ուժասպառ մարդու։ Իր տիրակալի նման, նա ամբողջովին կլանված էր իր նոր տիտղոսի հոգսերով. վախենալով նսեմացնել իր փայլը, նա նամակներում խուսափում էր արտակարգ քաղաքավարի դարձվածներից։ Այդ մեծատոհմիկը հասցրել էր այնպես վատնել իր ուժերը, և այնքան հոգնած էր, որ երբ գալիս էին կարգադրությունների համար, նրան հաճախ գտնում էին բազկաթոռին փռված և ոտքերը սեղանին դրած. նա ոչ մի խոսքով չէր պատասխանում, այլ միայն շվշվացնում էր. այդ միանգամայն անգործունյա հոգու միակ շարժումը վառ արտահայտված անբարյացակամությունն էր այն գեներալների նկատմամբ, որոնք եռանդ ու կամքի ուժ էին դրսևորում՝ հատկություններ, որ օրեցօր ավելի սակավ էին հանդիպում բանակում։ Հարկ կա՞ արդյոք բացատրելու, որ մենք չենք խոսում քաջության մասին։ Քաջ էին բոլորը, և լավ հայտնի է, որ այն զորապետները, որոնք ռազմադաշտում ոչ մի եռանդ չեն դրսևորում և այնքան են վախենում իրենց համբավը կորցնելուց, որ չեն հանդգնում հարձակման տանել գեթ մի գումարտակ, մատծում են անձնական մեծ խիզախությամբ փոխհատուցել այն, ինչ իրենց պակասում է։

Եթե կայսրը սիրում էր իրեն շրջապատել սենեկապետներով, որոնց նրբին շարժումները վկայում էին, որ նրանք պատկանում են Սեն-Ժերմեն արվարձանին, ապա իշխան Բերտիեն բացահայտ նախապատվությունը տալիս էր վայելչագեղ հագնված և վարվելակարգի նրբագույն երանգները կատարելապես իմացող սպաներին։

Կարելի է պնդել, որ իշխան Բերտիեն եղել է ֆրանսիական բանակի աղետների ավելի քան կեսի անմիջական պատճառը, սկսած Էլյաուի ճակատամարտից, որտեղ նրա մեղքով կորպուսներից մեկը (Մարշալ Բեռնադոտը) անգործության էր մատնված։

Ուժասպառ մարդու այդ հոգնածությունը հանգեցրեց այն բանին, որ արշավանքների ժամանակ զորքերը խոնվում էին միևնույն ճանապարհներում, միևնույն գյուղերում, իսկ դա հրեշավոր

անկարգություն էր առաջացնում, որն ավելի ու ավելի էր մեր դեմ տրամադրում տեղի ի բնե շատ բարի ու ազնիվ բնակիչներին։

Եթե 1805 թվականին այդ անկումը նկատելի էր միայն նրանց համար, ովքեր իրադարձությունները մոտիկից էին դիտում, ապա պատճառն այն էր, որ կայսրը բախտ ունեցավ Ցյուրիխում հանդիպելու Մասսենայի բանակի նախկին գլխավոր գանձապահ կոմս Դարյուի հետ։ Գործի մեջ ապշեցուցիչ ճշտապահ և աշխատասեր այս մարդը երկչոտ էր այն ամենում, ինչ քաղաքականությանն էր վերաբերում, և ամենից առաջ ատում էր յակոբինյաններին, որոնք տեռորի ժամանակ նրան բանտարկել էին։ Դարյուին շնորհելով գլխավոր ինտենդանտի կոչում, Նապոլեոնը նրան հանձնարարեց գլխավոր շտաբի պետի պարտականությունների զգալի մասը։ Բերտիեի տնօրինությանը մնացին միայն զորքերի տեղաշարժերը, բայց դա էլ նրա ուժերից վեր էր։

Կոմս Դարյուն աշխատում էր անմիջապես կայսեր հետ, բայց լինելով չափազանց փորձված և հատկապես չափազանց զրաղված մարդ, որպեսզի փորձ անի պայքարի մեջ մտնել գլխավոր շտաբի պետի հետ, նրան զեկուցում էր մի ամբողջ շարք միջոցառումների մասին՝ դրանք ներկայացնելով նրա քննարկմանը։ Հաճախ կոմս Դարյուն այս կամ այն առաջարկին պատասխանում էր հետևյալ խոսքերով. «Ես կիմանամ նեղատելի իշխանի կարգադրությունները (ինչպես հայտնի է, դա գեներալ Բերտիեի նոր տիտղոսն էր)։

Կոմս Դարյուի տնօրինության տակ էին՝

1. Պարենավորումը։
2. Բանակի ֆինանսները։
3. Ինտենդանտությունների բաժանված՝ նվաճված երկրների կառավարումը։

Ինտենդանտները նշանակվում էին Պետական խորհրդի աուդիտորների թվից։ Ինքնին հասկանալի է, պարենի մատակարարումը և նվաճված երկրների կառավարումն անխուսափելի ու սերտ կապի մեջ էին զորքերի տեղաշարժերի հետ։ Կոմս Դարյուն մշտապես խորհրդակցում էր իշխանի՝ գլխավոր շտաբի պետի հետ, և համարձակություն ուներ նրան ասել ճշմարտությունը իսկական, հաճախ ոչ հաճելի իրավիճակի մասին։

Բանակի աղետները, որոնք արդյունք էին մանրամասնությունների նկատմամբ լիակատար անուշադրության, զայրույթի

սուր բռնկումներ էին առաջացնում կոմս Դարյուի մեջ, որը բանակում հայտնի էր իր խստությամբ։ Կոմս Դարյուն համարձակվում էր հակահարված տալ մարշալներին (այդ դարաշրջանում չլսված մի բան)։ Նա չափազանց աղնիվ էր, այդ պատճառով էլ կայսրը նրան յոթանասուն հազար ֆրանկի ռենտա տվեց, իսկ նոր տարվա օրերին միշտ նա տասը հազար ֆրանկի ռենտա էր նվիրում նրան։

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Բոնապարտի անունը Ստենդալն առաջին անգամ լսել է 1796 թվականին Իտալական բանակի ապշեցուցիչ հաղթանակների վերաբերյալ եղած հաղորդումների կապակցությամբ։ Մենք չգիտենք, նա կարդացել է արդյոք երիտասարդ գլխավոր հրամանատարի անչափ հմտորեն կազմված ռազմական տեղեկագրերը, բայց պետք է իր հիշողության մեջ պահեր արդեն ռազմական փառքի լուսապսակով շրջապատված այդ անունը։ 1799 թվականին, մոտենալով Փարիզին, Ստենդալն իմացավ բրյումերի 18-ի հեղաշրջման մասին և ուրախ էր, որ «երիտասարդ գեներալ Բոնապարտը դարձել է Ֆրանսիայի թագավոր»։ 1800 թվականին ֆրանսիական բանակի ետևից Ստենդալն անցավ Սեն-Բեռնարը և մտավ Իտալիա։ Միլանում նա իմացավ Մարենգոյի ճակատամարտի առաջին կոնսուլի նոր վճռական հաղթանակի մասին, և շուտով մտավ նրա բանակը որպես Վեցերորդ դրագունյան գնդի ենթալեյտենանտ։

Պաշտոնաթող լինելով, Ստենդալը 1803—1804 թվականներին շատ է զբաղվել ինքնակրթությամբ։ Մոնտեսքյոյի, Հելվեցիուսի և Ալֆիերիի, պետության տեսաբանների, լուսավորիչների և, այսպես կոչված, բոնատիրության դեմ մարտնչողների ստեղծագործությունների ընթերցասիրությունն իր պտուղները տվեց, և այն պահին, երբ Նապոլեոնն իր գլխին կայսերական թագ դրեց, Ստենդալը մոլի հանրապետական էր։ Թագադրության խորհրդանշանակ գործողության մեջ կրոնն ու միապետությունը վերականգնող Պիոս VII-ը և Նապոլեոն Բոնապարտը նրան թվացին երկու խարեբաներ, որոնք իրար հետ դաշն էին կնքել ազատության դեմ պայքարելու համար։

Երեք տարի անց Ստենդալը նորից բանակում է՝ այս անգամ արդեն որպես ինտենդանտ։ Նա իր շրջապատի նման արբեցած է ռազմական այն փառքով, որով Նապոլեոնը պսակում է Ֆրանսիան, և նրանց նման համակված է փառասիրությամբ։ Ջահել ինտենդանտը «հաշտվում» է կայսեր հետ՝ նրա պատերազմներն ու հաղթանակները դիտելով իբրև պետական կյանքի ամենասովորական ու բնական գործողություններ։ Բայց շփումը զինվորականների հետ, գրասենյակային աշխատանքը, երթային կյանքի տառապանքները և վիթխարի ավերումների այն տեսարանները, որոնք կարող էր տեսնել պատերազմական գործողությունների ժամանակ, շուտով նրա մեջ զզվանք առաջացրին իր գործունեության նկատմամբ։ Նապոլեոնի անկումը նա ընդունեց առանց որևէ հուզմունքի։ Միա՛ն Բուրբոնների գահակալման հետ սկսված անմիտ ռեակցիան նրա մեջ խոր զայ-

բույթ առաջացրեց և ստիպեց վերադնահատել տապալված կայսեր կերպարն ու պատմական դերը։

1817 թվականին, Միլանում մի քանի տարի ապրելուց հետո, նա մեկնում է Ֆլորենցիա. նախ՝ Գրենոբլ, իր քրոջ գործերով, ապա՝ Փարիզ, և այստեղ էլ գառնությամբ ականատես լինում ռեակցիայի հաղթանակին։ Պայքարող միապետականները հայհոյում են հեղափոխությունը, նրա ժառանգությունն ու գործիչներին և, հատկապես՝ Նապոլեոնին, որին համարում են «հեղափոխության գավակ»։ 1817 թվականի նոյեմբերին, Միլան վերադառնալով, Ստենդալը որոշում է գրել Նապոլեոնի կենսագրությունը՝ իրական փաստերը վերականգնելու և նրան պարսավողներին պատասխանելու համար։ Նա տեղնուտեղը գործի է անցնում՝ մատչելիով թարգմանել ու մեկնաբանել «Էդինբուրգյան հանդեսի» բնաբանակ հոդվածը (1816 թվականի դեկտեմբեր), որի մեջ բնութագրվում էր Նապոլեոնի քաղաքական կյանքը[1]։ Աշխատանքն արագ էր առաջ գնում։ Ստենդալն իրեն հետաքրքրող իրադարձությունների մասին սկսեց կարդալ այլ ստեղծագործություններ՝ Լ. Դ. Միշոյի ժամանակակիցների կենսագրական բառարանը, արքա դը Պրադտի գիրքը՝ իսպանական իրադարձությունների մասին և այլն։ Նա արագորեն ավարտված գլուխները և միլանյան իր բարեկամներին խնդրեց քննադատական դիտողություններ անել գրվածքի վերաբերյալ։ Այնուհետև 1818 թվականի հունվարի 12-ին հանկարծակի դադարեցնում է այդ աշխատանքը՝ գա բացատրելով իր առողջական վիճակով։

Նույն թվականին, Գրենոբլ կատարած իր հաջորդ ուղևորության ժամանակ, նա գնում է տիկին դը Ստալի՝ նոր լույս տեսած «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության գլխավոր իրադարձությունների մասին» հեղինակու գիրքը։ Այն կարդալով, նա ցասումով լցվեց։ Կայսրությանը նվիրված գլուխներում տիկին դը Ստալը խստորեն հանդես էր գալիս Նապոլեոնի ռեժիմի դեմ, նրա դեսպոտիզմի, զինվորականության և ստրկամտության այն ոգու դեմ, որ նա արմատավորել էր ֆրանսիական հասարակության մեջ։ Ստենդալն այդ գիրքն ընդունեց որպես Բուրբոնների ռեակցիոն կառավարման գովաբանություն և որոշեց շարունակել իր սկսած «Նապոլեոնի կյանքը», որպեսզի ըստ արժանվույն պատասխանի «պարսավագրին», ինչպես նա անվանեց տիկին դը Ստալի «Մտորումները»։ Դա մայիսի վերջին թե հունիսին էր։ Օգոստոսի կեսին նա ընդմիշտ ընդհատեց աշխատանքը՝ հավանորեն համոզվելով, որ իրեն չի հաջողվի ձեռագիրը հրատարակել։ Իրոք, Ռեստավրացիայի առաջին տարիներին նման գրքի երևան գալը կարող էր լուրջ անախորժությունների պատճառ դառնալ թե՛ հեղինակի և թե՛ հրատարակչի համար։ Իր թեմային նա անդրադարձավ քսան տարի հետո միայն։

1836 թվականին, արձակուրդ գալով Փարիզ, որտեղ պետք է երեք տարուց ավելի մնար, Ստենդալը որոշեց գրել «Հուշեր Նապոլեոնի մասին» գիրքը։ Հին ձեռագիրը մնացել էր Միլանում, դուցե և նա մոռացել էր դրա մասին։ Ֆրանսիայում գրությունը խիստ փոխվել էր։ Նապոլեոնը մեծ հարգանք էր վայելում և նույնիսկ կառավարությունը կարծես բարեհաճորեն էր վերաբերվում կայսեր

[1] Հոդվածը տպագրվել էր Բուրբոնի՝ «Նամակներ Ս. Հելենե կղզուց» հոդվածի առթիվ։

պաշտամունքին։ Կայսրության մասին երևացին բազմաթիվ լուրջ աշխատություններ՝ նյութեր, փաստաթղթեր, ուսումնասիրություններ։ «Նապոլեոնյան առասպելը», որ ծագել էր 1820-ական թվականների սկզբին, տարածվեց Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում։ Ծնունդ առավ բոնապարտիստների կուսակցությունը, որը երբեմն սերտորեն միավորվում էր հանրապետական կուսակցության հետ։ «Հուշեր Նապոլեոնի մասին» գրքում Ստենդալն ուզում էր պատմել այն իրադարձությունների մասին, որոնց ինքն անձամբ որոշ մասնակցություն է ունեցել որպես գրագողության սպա, ինտենդանտ և թագապատկան գույքի տեսուչ։ Սակայն հսկայական գրական ձեռնարկի դժվարությունները, որը պետք է մի քանի հատոր կազմեր, նյութի առատությունը, պատմական պրոբլեմների բարդությունը, ըստ երևույթին, նրան վախեցրին։ Ընդ որում, նա տարվեց մյուս աշխատություններով՝ «Տուրիստի նոթերով», ապա՝ «Պարմի մենաստանով»։ Ստենդալը գրքի վրա աշխատանքը դադարեցրեց 1837 թվականի հունիսին։ Նրա «Հուշեր Նապոլեոնի մասին», ինչպես և ուրիշ շատ գործեր, մնացել են անավարտ։ Պատմությունը նա հասցրել է մինչև ֆրանսիական զորքերի կողմից Վենետիկի օկուպացումը (1797 թվականի մայիս), այսինքն՝ մինչև այն պահը, երբ ավարտվում է Նապոլեոնի կենսագրության այն շրջանը, որը Ստենդալն անվանում է «հերոսական»։

Այն աղբյուրները, որոնցից 1837 թվականին օգտվել է Ստենդալը, ավելի բազմաթիվ են ու ավելի գիտական։ Դրանք են՝ Նորվենի «Նապոլեոնի պատմությունը» (հ. 1, 1827), Վալտեր Սկոտի «Նապոլեոնի պատմությունը (1827 թվականի ֆրանսիական թարգմանությունը), ռազմական գործի հայտնի մասնագետ Ժոմինիի «Նապոլեոնի քաղաքական ու ռազմական կյանքը» (1827), Թիերիի «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը», Բուրիենի «Հուշերը», հատկապես Լասկազի «Հուշամատյան Ս. Հելենեից» (1823) և գեներալներ Գուրգոյի ու Մոնտոլոնի կազմած՝ «Նապոլեոնի հուշագրությունները» (1822—1827)։ Անշուշտ, այս աղբյուրներից և ոչ մեկը գիտական որևէ արժանահավատություն չունի. դրանք գրեթե բոլորն էլ ցատագովական են, և ավելի շուտ՝ բոնապարտիստական կրքոտ պրոպագանդայի միջոց են, քան պատմական հետազոտություններ։ Սակայն շատ տեսակետից դրանք համահնչուն էին Ստենդալի հայացքներին։

Նյութեր հավաքելով, իր աղբյուրներից ամբողջական էջեր արտագրելով, թարգմանելով անգլիական հոդվածներ, հակառակորդների՝ ժայրահեղ ռոյալիստների, սահմանադրականների և նույնիսկ բոնապարտիստների հետ բանավիճելով, Ստենդալը հիմնավորում էր ոչ միայն Նապոլեոնի իր ըմբռնումը, այլև նաև իր քաղաքական հայացքները։ Նա ինքը բազմիցս իրար է հակադրել Նապոլեոն-մարդուն և Նապոլեոն-հասարակական գործչին։ Արդեն «Իտալիայի նկարչության պատմության» ձոնում նա խոսում էր այն մասին, որ, հիանալով Նապոլեոնով, չի կարող հանդուրժել «գաստիարակության նրա համակարգը»։ Ստենդալը միշտ բարձր է գնահատել եռանդը։ Իտալական վերածնունդի մեջ նրան հետաքրքրում էին բուռն կրքերը, որոնք նա հաճախ նույնացնում էր հոգու ուժի և խառնվածքի եռանդի հետ։ Նա Նապոլեոնին համեմատում էր XV դարի կոնդոտիերների հետ, որոնք ինչ-որ արկածային վեպերի հերոսների էին հիշեցնում։ Անշուշտ, նրան հրապուրում էր եռանդուն իշխանությունը, որն ի վիճակի էր ժողովրդին քաղաքական մեծ գործողություններ հանելու և սխրագործության ոգեշնչելու։ Բայց

միաժամանակ, ինչպես իր դարաշրջանի բոլոր լիբերալները, Ստենդալն ատում էր այդ արտակարգ նանդուն տիրակալի բռնակալությունը, քանզի այն ճնշում է ժողովրդի նախաձեռնությունը և առաջ բերում ազգի հոգեկան ազքատացում։ Ահա թե ինչու Ստենդալն անսահմանորեն հիանում է գեներալ Բոնապարտով՝ հանձին նրա տեսնելով ժողովրդական հերոսին, հեղափոխական ազգի առաջնորդին և հեղափոխության պաշտպանին, իսկ կայսր Նապոլեոնի մեջ տեսնում է քաղաքականությունն իր փառամոլության շահերին հպատակեցնող բռնակալին։

Նապոլեոնի գործունեության նման մեկնաբանման մեջ առանձնապես լուրջ ոչինչ չկար. Ստենդալը գնում էր լիբերալ ավանդույթի հունով, որն իր արտահայտությունն էր գտել դարաշրջանի շատ փաստաթղթերում։

Անշուշտ, Բոնապարտին չի կարելի դիտել իբրև ազգի շահերի արտահայտիչ՝ ո՛չ Նախքան բյումերի 18-ը, ո՛չ էլ դրանից հետո։ Ակնհայտ է, որ «Բոնապարտ-ազատարարը», ինչպես նրան անվանում էին 1796 թվականի իտալացիները, լիովին չարդարացրեց այն հույսերը, որ նրա վրա դնում էին իտալացի հայրենասերները։ Անտարակույս է նաև, որ իտալական ժողովուրդը ֆրանսիական բանակին դիմավորեց ոչ այնպիսի խանդավառությամբ, ինչպես ասում է Ստենդալը. Իտալիայում գտնվելու սկզբնական շրջանի նրա օրագրերն ու նամակները բավական հստակ վկայում են դրա մասին։ Պատմական իրադարձությունների, կայսրին զեկավարած շարժառիթների, քաղաքական ուժերի տեղաբաշխման, Ռուսաստանի պատմական դերի, 1812 թվականի պատերազմի և այլ հարցերի գնահատման մեջ Ստենդալը հաճախ չարաչար սխալվում է։ Դա բացատրվում է և՛ նրա գրքերի բանավիճական բնույթով, և՛ փաստագրությունների պակասությամբ, և՛ Նապոլեոնին արդարացնելու միտումով՝ նրա գործունեությունը հակադրելով իր ժամանակի կառավարությունների ապաշնորհությանը։ Այն իրադարձությունները, որոնց մասին նա խոսում էր, ամենևին անցյալի գիրկը չէին անցել, գրանք դեռևս պահպանում էին իրենց քաղաքական սրությունը, իսկ Ստենդալը գրում էր ոչ այնքան պատմական, որքան բանավիճական երկ։

Բայց իրադարձությունների ըմբռնման ու մեկնաբանման այս լուրջ սխալներից բացի, Ստենդալի գրքերում հանդիպում են նաև այլ, ավելի մանր, փաստական, նույնիսկ թվական սխալներ, որոնք պետք է որ հայտնի լինեն ամեն մի գրագետի։ Նա շփոթում է Նապոլեոնի՝ Փարիզի դպրոց ընդունվելու, Մարենգոյի ճակատամարտի, Կոնկորդատի ստորագրման, Էյլաուի ճակատամարտի և այլնի թվականները։ Այստեղ արտահայտվում է և՛ հիշողության պակասը, որին Ստենդալը հաճախ է ապավինում, և՛ մանրամասների մանրակրկիտ ուսումնասիրությունն անտեսելը։ Սակայն, չպետք է մոռանալ, որ Նապոլեոնի մասին Ստենդալի երկու գիրքն էլ լոկ առաջին սևագիր տարբերակներ են, որոնք պետք է հետագա մշակման և ստուգման ենթարկվեին։

Ստենդալը հաճախ է քննադատում իր հերոսին։ Նա հանրապետական երիտասարդ գեներալին իդեալականացնում է գլխավորապես նրա համար, որպեսզի ցույց տա կայսեր սխալները։ Կայսրության կործանումը նա բացատրում է նրանով, որ Նապոլեոնը դավաճանել էր հեղափոխական ավանդույթներին։ Ֆրանսիական բանակը Բեռլին մտավ Մարսելիեզի հնչյունների ներքո, իսկ զորքերի գլուխն անցած, գեներալական համազգեստով գնում էր հենց նոր թաղագրված կայսրը։ Այդ զարմանալի տեսարանը Ստենդալին դրեթե խորհրդանշական է

թվում։ Եվ Բոնապարտը հազիվ էր գահ բարձրացել, երբ սկսում է «սխալներ» գործել։ Նապոլեոնը պետք է գերմանացիներին պարգևեր երկպալատ սիստեմ և լիբերալ սահմանադրություն, այլ դեպքում նրանք երես կթեքեին իրենց թագավորներից և ի դեմս Ֆրանսիայի կտանեին բնական դաշնակցի։ Բայց միապետ դառնալով, Նապոլեոնը պետք է ամենուր պահպաներ միապետական սկզբունքը։ Թշնամանալով տիրակալների հետ, նա չբարեկամացավ ժողովուրդների հետ։ Հեղափոխական ավանդույթներից հրաժարվելը նրան անխուսափելի պարտության մատնեց։ Նապոլեոնը «արժանի էր դարձել» Ս. Հելենային՝ հասարակական կարծիքի և ապագայի խոսքի հետևանքով։ Նա չէր հասկանում, որ արքունիքը չի կարող որոշել ժողովրդի ճակատագիրը և որոշել ժողովրդի վերաբերեն։ Նա սխալվեց իսպանական իրադարձություններում։ Սխալվեց նաև Ռուսաստանի դեմ մղվող պայքարի հարցում։ Նրա այս և այլ սխալների պատճառն այն է, որ չուզեց մնալ «հեղափոխության զավակ»։

Այսպիսին է Ռեստավրացիայի դարաշրջանում մտածված ու մշակված և իր ժամանակի Եվրոպայի ողջ քաղաքական փորձի հետ սերտորեն կապված՝ Ստենդալի ընդհանուր կոնցեպցիան։ Մոլի բոնապարտիստները Նապոլեոնին համարում էին Նոր Պրոմեթեոս, որն առնանել է երկնային կրակը, որպեսզի պարգևի մարդկանց, և որի համար էլ պատժվել է շար ուժերի կողմից։ Ստենդալի համար այդ ուսանելի ճակատագրի նման մեկնաբանությունն անհնար էր։ Ս. Հելենի կալանավորը, չնայած իր ողջ վեհությանը, արժանի պատիժ է կրել այն բանի համար, որ ոչնչացրել է ազատությունը, որին «կոչված էր պաշտպանելու»։

Ստենդալն այս տեսակետը հետևողականորեն անցկացնում է Նապոլեոնի մասին գրած իր երկու գրքում։ Նման գիրք ընդունելով, Նապոլեոնի այս երկրորդագուն, որը պնդում է, որ կայսրին սիրել է իր ողջ կյանքի ընթացքում, և նույնիսկ այդ մասին գրել իր դամբանագրերից մեկում, լրիվ հակասության մեջ էր մտնում «Նապոլեոնյան առասպելի» հետ։ Նա բնավ չի ընդունի բռնապետության չատագով և ժողովրդապետության թշնամի բռնապարտիզմի գաղափարները։ «Նապոլեոնի կյանքը» և «Հուշեր Նապոլեոնի մասին» ստեղծագործությունները այդ գաղափարներին ուղղակի հակադիր ինչ-որ բան են պնդում և, ըստ էության, բանավիճում բռնապարտիզմի հետ։ Ժամանակի պայմանները թույլ չտվեցին, որ այդ բանավեճն ավելի սուր և որոշակի ձևեր ընդունի։

«Նապոլեոնի կյանքը» գրքի որոշ գլուխներ 1854 թվականին տպագրել է Ռ. Կոլմբը՝ որպես Ստենդալի մատնավոր նամակներ։ 1898 թվականին Ժան դը Միտոին «Նապոլեոն» գրքում հրապարակել է այդ նույն գրքի մի քանի նոր հատվածներ։ «Հուշեր Նապոլեոնի մասին» գրքից հատվածներ են տպագրվել հանդեսներում, մասնավորապես՝ «Revus des Deux Mondes»-ի 1855 թվականի համարներում։ Թե՛ մեկ և թե՛ մյուս ստեղծագործության լրիվ տեքստը տպագրվել է Շամպիոնի հրատարակությամբ 1929 թվականին։ Այդ հրատարակությունից էլ կատարված է սույն թարգմանությունը։

Ռ. ՌԵՐԳՈՎ

ՀԱՎԵԼՎԱԾ

I. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԿՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Նապոլեոնը ծնվել է Աջաչիոյում . . .	15 օգոստոսի 1769 թ.
Նրա թվականներն ասում են, որ նա ծնվել է 1768 թ. փետրվարի 5-ին։ Ճշմարտանմա՞ն է արդյոք, որ նա եղել է պ-ն դը Մաբբյոֆի տղերքների որդին։	
Ընդունվել է Բրիենի ռազմական դպրոցը	1779 թ.
Ընդունվել է Փարիզի ռազմական դպրոցը	1783 թ.
Ստացել է հրետանային 4-րդ գնդի լեյտենանտի աստիճան . .	1 սեպտեմբերի 1785 թ.
Դառնում է կապիտան (քսաներկուսակես տարեկան հասակում) . . .	6 փետրվարի 1792 թ.
Գումարտակի հրամանատար . .	19 հոկտեմբերի 1793 թ.
Շտաբի գեղապետ, բրիգադի հրամանատար . . .	դեկտեմբեր 1793 թ.
Դյուգոմիեն նրան նշանակում է բրիգադի գեներալ Տուլոնում . .	6 փետրվարի 1794 թ.
Պաշտոնաթող արվելով 11 տարվա տերմիդորի 9-ին (1794 թ. հուլիսի 27-ին), նա Փարիզում տեղ չի գտնում և, ինչպես հավատացնում են, թուլությունն է խնդրում Արևվիլը մեկնելու։	
Կոնվենտի զորքերի հրամանատարն է՝ ընդդեմ ապստամբած սեկցիաների IV տարվա վանդեմիերի 13-ին (1795 թ. հոկտեմբերի 5-ին). ներքին բանակի հրամանատար Բարրասի օգնականն է	5 հոկտեմբերի 1795 թ.
Դառնում է դիվիզիոնի գեներալ . .	16 հոկտեմբերի 1795 թ.
Նշանակվում է ներքին բանակի գլխավոր հրամանատար	26 հոկտեմբերի 1795 թ.
Ամուսնանում է Ժոզեֆինայի հետ։	
Նշանակվում է Իտալական բանակի գլխավոր հրամանատար . . .	23 փետրվարի 1796 թ.
Իր փառապանծ Իտալական արշավանքներն ավարտում է Լեոբենի նախնական հաշտության պայմանագրով։ Չկա մի այլ զորավար, որի կյանքում այդպիսի տասնչորս ամիս եղած լինի . . .	18 ապրիլի 1797 թ.
Նշանակվում է արևելքին բանակի գլխավոր հրամանատար	9 դեկտեմբերի 1797 թ.
Նշանակվում է Արևելքում գործելու համար նախանշված բանակի գլխավոր հրամանատար . . .	ապրիլ 1798 թ.
Տուլոնից մեկնում է Եգիպտոս . .	19 մայիսի 1798 թ.
Սիրիական արշավանք. նահանջ այնտեղից	20 մայիսի 1799 թ.
Մեկնում է Եվրոպա	1799 թ.
VIII տարվա բրյումերի 18-ի և 19-ի օրերը	9 և 10 նոյեմբերի 1799 թ.
Դառնում է առաջին կոնսուլ, VIII տարվա ֆրիմերի 22	13 դեկտեմբերի 1799 թ.
Մարենգոյի հակատամարտը, VIII տարվա ֆլորեալի 24	14 մայիսի 1800 թ.
Դժոխային մեքենայի պայթյունը, IX տարվա նիվոզի 3	24 դեկտեմբերի 1800 թ.
Հաշտություն Լյունեվիլում, IX տարվա պլյուվիոզի 20	9 փետրվարի 1801 թ.
1802 թ. հունվարի 15-ին (X տարվա նիվոզի 25) պապի հետ կնքված կոնկորդատի հրապարակումը .	18 ապրիլի 1802 թ.
Պատվո լեգիոնի շքանշանի հիմնումը, X տարվա ֆլորեալի 29 . . .	19 մայիսի 1802 թ.
Նշանակվում է ցմահ կոնսուլ, X տարվա տերմիդորի 14	2 օգոստոսի 1802 թ.
Քաղաքացիական օրենսգրքի հրապարակումը, XI տարվա ֆլորեալի 30 .	20 մայիսի 1803 թ.
Մորոյի, Պիշեգրյուի և Ժորժի դավադրությունը	1804 թ.
Էնղիենի դքսի մահապատիժը, XII տարվա վենտոզի 30	21 մարտի 1804 թ.
Դառնում է Ֆրանսիայի կայսր, XII տարվա ֆլորեալի 28	18 մայիսի 1804 թ.
Քաղաքրվում է Պիոս VII-ի կողմից, XIII տարվա ֆրիմերի 2 . .	2 դեկտեմբերի 1804 թ.
Իրեն հռչակում է Իտալիայի թագավոր, XIII տարվա վենտոզի 24 . .	15 մարտի 1805 թ.
Մտնում է Վիեննա, XIV տարվա բրյումերի 22	13 նոյեմբերի 1805 թ.
Աուստերլիցի հակատամարտը, XIV տարվա ֆրիմերի 11	2 դեկտեմբերի 1805 թ.

Հաշտություն Պրեսբուրգում, XIV տարվա Նիվոզի 5	26 դեկտեմբերի 1805 թ.
Հոլանդական և Նեապոլի թագավորությունների ստեղծումը . . .	1806 թ.
Էյլաուի ճակատամարտը . . .	10 փետրվարի 1807 թ.
Ֆրիդլանդի ճակատամարտը . . .	14 հունիսի 1807 թ.
Առաջին հրաժարումը Ֆոնտենբլոյում .	20 մարտի 1885 թ.
Վերադարձ էլբա կղզուց Մտնում է Փարիզ	11 ապրիլի 1814 թ.
Երկրորդ հրաժարումը . . .	27 հունիսի 1815 թ.
Մահանում է Ս. Հելենե կղզում . .	5 մայիսի 1821 թ.
Նրա աճյունի հանդիսավոր փոխադրումը Փարիզ	15 դեկտեմբերի 1840 թ.

II. ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ

Մարտեր ու ճակատամարտեր

Մոնտենոտտե, IV տարվա ժերմինալի 23	12 ապրիլի 1796 թ.
Միլլեզիմո, IV տարվա ժերմինալի 25 .	14 ապրիլի 1796 թ.
Դեզո, IV տարվա ժերմինալի 26 . .	15 ապրիլի 1796 թ.
Սան-Միքել, IV տարվա ֆլորեալի 1 .	20 ապրիլի 1796 թ.
Մենդովի, IV տարվա ֆլորեալի 3 . .	22 ապրիլի 1796 թ.
Ձինագլիոր Քերասկոյում, IV տարվա ֆլորեալի 9	28 ապրիլի 1796 թ.
Լոդիի կամուրջ, IV տարվա ֆլորեալի 21	10 մայիսի 1796 թ.
Մուրքը Միլան, IV տարվա ֆլորեալի 26	15 մայիսի 1796 թ.
Պավիայի ապատամբությունը, IV տարվա պրերիալի 5	24 մայիսի 1796 թ.
Լոնատո, IV տարվա տերմիդորի 16 .	3 օգոստոսի 1796 թ.
Կաստիլիոնե, IV տարվա տերմիդորի 18	5 օգոստոսի 1796 թ.
Ռովերեդո, IV տարվա ֆրյուկտիդորի 18	4 սեպտեմբերի 1796 թ.
Բասսանո, IV տարվա ֆրյուկտիդորի 22	8 սեպտեմբերի 1796 թ.
Սան-Ջորջո, IV տարվա ֆրյուկտիդորի 29	15 սեպտեմբերի 1796 թ.
Անհաջողություն Կալդիերոյի մոտ, V տարվա բրյումերի 22 . . .	12 նոյեմբերի 1796 թ.
Արկոլե, 1, 2, 3 օր, V տարվա բրյումերի 25, 26, 27	15, 16, 17 նոյեմբերի 1796 թ.
Ռիվոլի, V տարվա նիվոզի 25 . .	14 հունվարի 1797 թ.
Ֆավորիտ, V տարվա նիվոզի 27 . .	16 հունվարի 1797 թ.
Տալյամենտո, V տարվա վենտոզի 26 .	16 մարտի 1797 թ.
Վենետիկի գրավումը, V տարվա ֆլորեալի 27	16 մայիսի 1797 թ.

III. Պ-Ն ԴԸ ԹԱԼԵՅՐԱՆ

Պ-Ն դը Թալեյրանն արտակարգ խելոք և միշտ փողի կարիք ունեցող մարդ է եղել։ Այս իմաստով նա իսկական մեծատոհմիկ է եղել. նա բնավ չի հոգացել իր գործերի կարգուկանոնի մասին, չի դրսևորել ոչ մի ողջամտություն։

Լինելով հույժ նրբակիրթ, պատրանքներից ու ամեն տեսակ կրքերից զերծ մարդ, բացի երևելի տոհմիկի անձին վայել մեծաշուք ու փայլուն կյանքի նկատմամբ ունեցած կրքից, նա շատ առավելություններ ուներ այն կրակոտ ու կոպտավուն մարդկանց համեմատ, որոնք հեղափոխություն են կատարել։ Նկատի առեք, որ պ-ն դը Թալեյրանն իսկապես առիթ է ունեցել այդ մարդկանց հետ գործ ունենալ լոկ այն բանից հետո, երբ նրանք ծախվեցին կայսրին։ Հաղիվ թե պ-ն դը Թալեյրանը կարող էր նման գերազանցության տոն թույլ տալ Դանտոնի, Սիեյեսի, Կամբոնի նկատմամբ։ Բայց ի՞նչ մարդկանցով էր լցված Պեսա՛ան խորհուրդը 1802, 1804, 1806 թվականներին։ Մարդկանցով, որոնք փոխել էին իրենց համոզմունքները և հետագայում համաձայնվում էին կոմսի տիտղոսներ ընդունել։ Հենց այդ մարդկանց հետ էլ պ-ն դը Թալեյրանն ստիպված էր գործ ունենալ 1800 թվականից մինչև իր շնորհազուրկ լինելը։ Նա նրանց հասկանում էր հեռվից։ Մի պահ եղավ, երբ նա հաճույանում էր Բարրասին, բայց Բարրասը մեծատոհմիկ էր և աշխարհիկ շարժուձևեր ուներ, ինչը մխիթարում էր պ-ն դը Թալեյրանին։ Ընդ որում Բարրասը, լինելով շատ ապաշնորհ, զգում էր պ-ն դը Թալեյրանի խելքի կարիքը և գիտակցում էր դա։

Հիշում եմ, թե ինչպես մի գեներալ, որն օգտվում էր Տյուիլրիի պալատի բարեհաճությունից, առիթ ունեցավ այցելելու պ-ն դը Թալեյրանին։ Նրան գտավ այն պահին, երբ միանգամից երկու սպասավոր սանրում էին նրան. յուրաքանչյուրն զբաղված էր այդ հիանալի գլխի մի կողմով։ Նույնիսկ դիմափոքրին մի թեթև քսվեց գեներալին, բայց դա տհաճություն չպատճառեց նրան, քանի որ Ֆրանսիայում ուժեղ էին արիստոկրատական բարքերը։ Երկու ժամ հետո Տյուիլրիի պալատում բոլորը միայն խոսում էին իշխանի հարդարանքի մասին։ Նրա նկատմամբ հարգանքն էլ ավելի աճեց։

Եվ ինչո՞ւ թաքցնել։ Նապոլեոնը որոշ չափով բախտաստղուտի մեկն էր։ Նա պ-ն դը Թալեյրանին այնպես չէր ունկնդրում, ինչպես ամեն տեսակ էրնեստներին, դեֆերմանններին, ռնեն դը սեն-ժան դ'անժելիներին, իր Պեսա՛ան խորհրդի՝ այն ժամանակվա ամենաողջամիտ մարմնի արծիվներին։ Նապոլեոնը, սրը ցանկանում էր միապետ դառնալ և ծիծաղելի չլինել, գիտեր, որ պ-ն դը Թալեյրանը իրեն կօգնի խուսափելու այդ մեծ վտանգից՝ նրան մատնացույց անելով բաներ, որոնք Նապոլեոնը չէր կարող կատարել և որոնց մասին անհնար կլիներ հարցնել բոլոր մինիստրությունների գլուխ կանգնած մարդկանցից։

Պ-ն դը Թալեյրանն իր ազդեցությունը ոչ այնքան գործերով էր ամրապնդում, որքան խոսքերով, իսկ առավել ևս՝ մեծատոհմիկի իր վարքագծով։

Մի ամառային օր Նապոլեոնը, որն այն ժամանակ գտնվում էր իր փառքի գագաթնակետին, աշխատում էր Սեն-Կլուի՝ կողմնակի անձանց համար փակ զբոսայգու մեծ ծառերի հովանու ներքո։ Բոլոր մինիստրները Փարիզից

եկել էին Սենտ-Կլու. նրանք մեկը մյուսի ետևից իրենց թղթապանակներով մոտենում էին թղթախաղի սեղանին, որը Նապոլեոնը կարգադրել էր դնել ծառուղու ամենատվերոտ մասում։ Նա մի քանի անգամ հարցրեց պ-ն դը Թալեյրանի մասին, որին ինչ-որ կարևոր հանձնարարություն էր տրված։ Վերջապես բոլոր միհնիստրներն ազատ արձակվեցին, իսկ պ-ն դը Թալեյրանը դեռ չէր երևում։ Կայսրին հիանալի բալ մատուցեցին, և նա ակնհայտ ցրվածությամբ սկսեց ուտել։ Երկար սպասումից հետո ծառուղու վերջում կապույտով, երևում է պ-ն դը Թալեյրանը։ Նապոլեոնը զայրույթով է նայում նրան։ Իշխանը երեք անգամ խոնարհ գլուխ է տալիս։

— Դուք ինձ ստիպեցիք սպասել, պարո՞ն։

Պ-ն դը Թալեյրանը նորից է խոնարհվում, հետո ընդհուպ մոտենալով թղթախաղի սեղանին, բալ է վերցնում։

— Ձերդ մեծություն բալն ամենահրաշալին է ամբողջ կայսրության մեջ։

Այս արարքի հանդգնությունը նեմանում է նրանով, որ եթե կայսրը մտադրվեր բարկանալ, պ-ն դը Թալեյրանը սրտնեղություն չէր զգա. նա այնքան էլ զգայուն չէր վիրավորանքների հանդեպ։

Այն բոլոր ճռռոան ֆրազները, որ Փարիզում հորինում են պ-ն դը Թալեյրանի վեհ խառնվածքի, հղացումների, քաղաքական նամոզմունքների մասին, նպատակին չեն խփում. դրանք հորինում են այն մարդիկ, որոնք մտրիկից չգիտեին նրան։ Շարունակ փողի կարիք զգալով, պ-ն դը Թալեյրանն օգտվում էր ամեն առիթից՝ առաջարկելու իր ծառայությունները, և փող էր հայթայթում։

Հայտնվելով այդ վայրի գազանների, այդ մարդուկների մեջ, որոնք, ի մեծ զարմանս նրա, լցրել էին Տյուիլրիի պալատը, նա միայն մի նպատակ էր հետապնդում՝ իր համար տանելի վիճակ ստեղծել այդ վտանգավոր էակների մեջ։ Եթե իշխանի արիստոկրատական շարժումներից շլացած Ռուվիգոյի դքսի կամազրկությունը չլիներ, Թալեյրանը կալանավորված կլիներ 1814 թվականին՝ նախքան Փարիզի գրավումը, և վերջիվերջո, նրանց եռանդը կհաղթեր նրա երբագեղությանը։ Բայց այդ շրջանում Նապոլեոնն արդեն արհամարհում էր եռանդուն մարդկանց։

Պ-ն դը Թալեյրանի համար գերագույն երջանկությունը, եթե չհաշվենք միլիոն հայթայթելու և այն վատնելու բավականությունը, այդ նույն մարդուկներին հիմարացնելն էր։ Այսպես, կոնսուլության առաջին ամիսներին նա հավատացրել էր Նապոլեոնին, որ Փարիզի ժողովուրդը միապետ է համարում միայն այն տիրակալին, որը որսի է գնում։ Օգտվելով այդ փաստարկից, որին կարողացավ համոզչություն հաղորդել, Թալեյրանը Նապոլեոնի համար վարպի որս կազմակերպեց Վենսենյան անտառում։ Իրականում այնտեղ ոչ թե վարազներ էին, այլ խոզեր, որոնց երկու օր սովամահ էին արել, որպեսզի կատաղեցնեն։ Բայց երբ ոժիտաթ կենդանիներն աղմուկ լսեցին, կարծեցին, որ վերջապես իրենց համար կեր են բերել և փոխանակ փախուստի դիմելու կամ պաշտպանվելու ձիերից, սլացան ուղիղ դեպի նիզակները։ Բացի վարազներից, անտառում բաց էին թողել բազմաթիվ ձեռնասուն ճագարներ. սովամահ լինելով, նրանք թռչկոտելով մոտ էին վազում որսորդներին, որոնց անընդհատը խփում էին դրանց։

Եթե Նապոլեոնը երբևիցե ծիծաղելի է եղել, ապա հենց այդ օրը։ Պ-ն դը Թալեյրանը երանության գագաթնակետին էր։ Դա խորանում էր նաև շարունակ Նապոլեոնի հետ զրույցը շարունակելու անհրաժեշտությամբ, որպեսզի նա ոչինչ չկռահի և այս ամբողջ մտահղացումը չմեկնաբանվի վատ իմաստով։

Ուրիշները պատմում են, որ Նապոլեոնը, բրյումերի 19-ին գավթելով իշխանությունը, անվայելուչ էր համարում, որ Ֆրանսիան շարունակի Իսպանիայից ամեն ամիս մեկ միլիոն ֆրանկ ստանալ։ Նա ցանկացավ անհապաղ գրել իսպանական բանակորին և հրաժարվել այդ գումարի գանձումից։

— Բայց չէ՞ որ այնպիսի մի մարդու նամակը, ինչպիսին գեներալ Բոնապարտն է, սերունդների համար այդ փաստի հաստատումը կլինի։

— Դուք իրավացի եք։ Խոսեցեք իսպանական դեսպանի հետ։

Ցար լեգուները պնդում են, որ այդ մեծահոգի որոշումը հաղորդվել է միայն կիսով չափ և Իսպանիան շարունակում էր ամսական մեկ միլիոն վճարել, որը բաժին էր ընկնում ում որ հարկն է։

Այսպիսով, պ-ն դը Թալեյրանը ոչ մի որոշակի պլան չէր կատարել, չէր ձգտում ոչ մի վեհ նպատակի. բայց շնորհիվ այն բանի, որ քաղաքականության մեջ մտցնում էր այն երբամտությունը, որով գոյամիջոցներ էր հայթայթում իր համար, նա առանց դժվարության որոշեց, որ դաշինքն Անգլիայի հետ միակ ընդունելին է Ֆրանսիայի համար։

Պ-ն դը Թալեյրանի ճարպկությունը նրան օգնեց իսկական մեծ արդյունքների հասնել միայն Վիեննայում, երբ Վաթերլոոյից առաջ նա եվրոպական միապետներին խանգարեց վախին անձնատուր լինել և նրանց ստիպեց շտապել և «այդ մարդուն» ժամանակ չտալ ամրանալու։ Ավելի ուշ նա սրամտորեն վրեժ լուծեց Կարլոս X-ից։

Նա իր սրախոսությունների հեղինակը չէր. նրան էին վերագրում այն, ինչ անընդհատ հորինում է Փարիզը, իսկ նա ընդունում էր իր հեղինակությունը միայն երկու-երեք օր հետո, երբ դրանց հաջողությունն ապահովված էր։ «Ընդամենը մի ֆրանսիացի է ավելի» սրախոսությունը՝ ուղղված կոմս դ'Արտուայի հացեին, որը թեչ էր մնացել բարկանա, ոչ թե իշխանին է պատկանում, այլ մի խելոք մարդու, որին իշխանն էր դա պատմիրել։

Փողի կարիքը կարող էր պ-ն դը Թալեյրանին ստիպել դիմելու ինչի որ ուզես. մնացած բաներում նա շատ սիրալիր մարդ էր. նա աչքի էր ընկնում արտակարգ կոկետությամբ՝ նույնիսկ ենթականերին դիմելիս։ Միջանցքում ծառաներից որևէ մեկին հանդիպելիս նա անպայման աշխատում էր շողոքորթել և նրա վրա ազավորություն գործել։

Այս երկար կյանքի՝ բարոյական տեսակետից բաշտանական ազդեցությունը, որը հարմար կլիներ Սկապենին, կայանում է նրանում, որ ամեն մի ստիճանավոր մի հարյուր լուիզոր յուրացնելով, ամենեին չի մտածում ուժանակրության սարսափների մասին, այլ ասում է. «Ի՞նչ կա որ, ես ընգօրինակում եմ Թալեյրանին»։

Նախկին մի սպա

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԿՅԱՆՔԸ

էջ 4. Քաղվածք անգլիացի գրող Օլդրիչի «Վիլհելմ թագավորի և Մարիա թագուհու գահ բարձրանալը» լատիներեն պոեմից։

Ֆուշե Ժոզեֆ, Օտրանտի դուքս (1759—1820)— ֆրանսիական քաղաքական գործիչ, որի անունն ուխտագրժության և դավաճանության խորհրդանիշ է դարձել։ Միանգամայն բարոյազուրկ և անկգրուք մարդ լինելով, Ֆուշեն հեռանողականորեն դավաճանել է բոլոր այն կառավարություններին, որոնք Ֆրանսիայում հեղափոխության սկզբից մինչև Բուրբոնների երկրորդ restավորացիան փոխարինել են իրար։ Նրա հուշագրությունները հրատարակվել են 1829 թվականին։

Լյուսիեն Բոնապարտ— Նապոլեոնի եղբայրը (1775—1840)։ Նրան՝ որպես Հինգ հարյուրի խորհրդի նախագահի, Նապոլեոնը պարտական էր բրյումերի 18-ի պետական հեղաշրջման հաջողության համար։ Լյուսիեն Բոնապարտի հուշագրությունները հրատարակվել են 1836 թվականին։

Կոմս Ռեալի (1757—1834)՝ Հարյուր օրվա ժամանակ ոստիկանության մինիստրի հուշագրությունները չեն պահպանվել։

Ռենիո դը Սենտ-Ժան դ'Անժելի (1762—1819)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Պետական խորհրդի անդամ։ Նապոլեոնի հրաժարումից հետո մեկնել է Ամերիկա։ Օգտվելով 1819 թվականի ներումից, վերադարձել է Փարիզ։

Սիեյես Էմանուիլ-Ժոզեֆ (1748—1836)— աբբա, ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքական գործիչ։ Հայտնի է որպես 1789 թվականին հրատարակված և ազնվականության ու հոգևորականության դեմ ուղղված «Ի՞նչ է երրորդ դասը» բրոշյուրի հեղինակ։

Աբրեն Շառլ-Ֆրանսուա (1739—1824)— ֆրանսիական քաղաքական գործիչ, եղել է Ֆրանսիական հանրապետության երրորդ կոնսուլ։

էջ 5. Ստենդալը Նապոլեոնի դեմ ուղղված պատգամագիր է անվանում լիբերալ կին գրող բարոնուհի դը Ստալի «Մտորումներ Ֆրանսիական հեղափոխության գլխավոր իրադարձությունների մասին» հայտնի գիրքը, որը լույս է տեսել 1818 թվականին։

էջ 6. Պաոլի Պասկուալե (1725—1807)— կորսիկացի հայրենասեր։ 1755 թվականին կանգնում է Ջենովայի հանրապետության դեմ մարտնչող Կորսիկայի

գլուխ։ 1768 թվականին Ջենովան Կորսիկայի նկատմամբ ունեցած իր իրավունքները վաճառեց Ֆրանսիային։ 1769 թվականին ֆրանսիական զորքերը չախջախեցին Պաոլիին և նրա կողմնակիցներին։ Դրանից հետո Պաոլին մեկնեց Անգլիա, որտեղ ապրեց 20 տարի։ Նա վերադարձավ Կորսիկա, որպեսզի մարտնչի նրա անկախության համար։

Սեն-Սիր, որտեղ դաստիարակվել է Նապոլեոնի քույրը— օրիորդաց ինստիտուտ ազնվականուհիների համար (Վերսալի մերձակայքում)։

էջ 7. Մոնտեսքյո Շառլ-Լուի (1689—1755)— ֆրանսիացի լուսավորիչ-փիլիսոփա։ Նրա գլխավոր աշխատությունները՝ «Դատողություններ հռոմեացիների վեհության ու նրանց անկման պատճառների մասին», «Պարսկական նամակներ» և հատկապես «Օրենքների ոգին» մեծ ազդեցություն են գործել նախահեղափոխական Ֆրանսիայի քաղաքական մտքի զարգացման վրա։ Նա առաջադրել է սահմանադրական միապետության գաղափարը և իշխանությունը օրենսդրականի, գործադրի ու դատականի բաժանման տեսությունը։ Այս տեսությունը հիմք է ծառայել բուրժուական մի շարք սահմանադրությունների համար։

Բլանշար Ֆրանսուա (1738—1809)— ֆրանսիացի օդագնաց։ Այն պատմությունը, որ իբր Նապոլեոնը փորձել է ուժով ներս խցկվել օդապարիկի զամբյուղը, չի համապատասխանում իրականությանը։

էջ 8. ....անհետ կորել է։— Նապոլեոնի այդ աշխատությունը չի կորել։ Այն տպագրվել է 1843 թվականին «Նամակներ աբբա Ռեյնալին՝ Կորսիկայի մասին» վերնագրով։

էջ 9. Պոցցո դի Բորգո, կոմս (1764—1843)— կորսիկացի փաստաբան և քաղաքական գործիչ։ 1791 թվականին ընտրվել է Օրենսդրական ժողովի անդամ։ 1794 թվականին եղել է Կորսիկայի Պետական խորհրդի նախագահ։ 1803 թվականին անցել է ռուսական դիվանագիտական ծառայության։ Եղել է Ռուսաստանի ներկայացուցիչներից մեկը Վիեննայի կոնգրեսում, իսկ ապա ռուսական դեսպանորդ՝ Փարիզում։ Վարել է ռուս-ֆրանսիական մերձեցման քաղաքականություն։

էջ 10. «Երեք գինվորականների նախանձը Ավիենոնում»— Նապոլեոնի այս բրոշյուրն իրականում ունեցել է «Ընթրիք Բոկերում» վերնագիրը։ Բրոշյուրն ուղղված է եղել ժիրոնդիստների դեմ։

Դյուգոմիե (1736—1794)— ֆրանսիական գեներալ։ Եղել է Կոնվենտի անդամ։ 1793 թվականին Տուլոնի պաշարման ժամանակ եղել է բանակի հրամանատար։

էջ 11. Գեներալ Ս'Հարա— Ջիրլարթարի նահանգապետ։ Տուլոնի նահանգապետ է նշանակվել, երբ անգլիական էսկադրան գրավել էր այդ նավահանգիստը։ Ֆրանսիացիները նրան գերելով ուղարկել են Փարիզ, բայց շուտով նա թույլտվություն է ստացել Անգլիա վերադառնալու։

էջ 12. Տալմա Ֆրանսուա-Ժոզեֆ (1763—1826)— ֆրանսիացի նշանավոր դերասան։ Նա Նապոլեոնին ճանաչել է, երբ սա եղել է աղքատ ապա, և երբեմն փող է պարտք տվել։

Բարրաս Պոլ-Ֆրանսուա (1755—1829)— ֆրանսիական հեղափոխության գործիչ։ Դավառական քաղաքներից մեկում կոմիսար եղած ժամանակ կաշառա-

կՀբուՀյամբ և ապեկուլյացիայով մեծ հարստություն է կուտակել։ Ակտիվ մասնակցություն է ունեցել տերմիդորի 9-ի հակահեղափոխական հեղաշրջմանը։ Եղել է Դիրեկտորիայի կառավարության գլուխ։ Առաջադրել է Նապոլեոնի Բեկնածությունն Իտալական բանակի գլխավոր հրամանատարի պաստում և այակցել նրա ամուսնությանը Ժոզեֆինա Բոհառնեի հետ։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո հեռացվել է քաղաքական գործունեությունից։ Բարրասի հուշագրությունները հրապարակվել են 1895—1896 թվականներին։

Բոհառնե Ժոզեֆինա (1763—1814)— հեղափոխական տրիբունալի դատավճռով մահապատժի ենթարկված (1794) ֆրանսիական գեներալ Բոհառնեի կինը։ 1796 թվականին ամուսնացել է Նապոլեոնի հետ։ 1809 թվականին Նապոլեոնը բաժանվել է նրանից, իսկ 1810 թվականին ամուսնացել Մարիլուիզի՝ Ավստրիայի կայսեր դստեր հետ։

էջ 13. Մանտեննոտտա— իտալական գյուղ Ջենովայի մարզում։ Այստեղ ֆրանսիական զորքերը Նապոլեոնի հրամանատարությամբ առաջին հաղթանակը տարան ավստրիացիների դեմ (1796 թվականի ապրիլի 12-ին)։

Արկոլե— իտալական փոքրիկ քաղաք Վերոնայի մարզում։ Այստեղ 1796 թվականի նոյեմբերի 15—18-ը Նապոլեոնի զորքերը հաղթանակ տարան ավստրիացիների դեմ։

Ռիվոլի— իտալական գյուղ Վերոնայի մարզում։ Այստեղ 1797 թվականի հունվարի 14—15-ը զորքերը Նապոլեոնի հրամանատարությամբ հաղթանակ տարան ավստրիացիների դեմ։

«Moniteur» լրագիրը հիմնվել է 1789 թվականին։ 1794—1868 թվականներին եղել է ֆրանսիական կառավարության պաշտոնական տպագիր օրգանը։

«Annual Register»— անգլիական բուրժուապահպանողական ուղղության պարբերական հանդես, լույս է տեսել 1758 թվականից. տպագրել է պատմական, գրական և քաղաքական տեսություններ։ Խմբագիրն է եղել Էդմոն Բերկը՝ ֆրանսիական հեղափոխության մոլի թշնամիներից մեկը։

Սիսմոնդի Ժան-Շառլ-Լեոնար (1773—1842)— շվեյցարացի պատմաբան ու տնտեսագետ, «մանրբուրժուական սոցիալիզմի» տեսաբան։

էջ 14. Տոլենտինոյի հաշտությունը կնքել է գեներալ Բոնապարտը Պիոս VI պապի հետ 1797 թվականի փետրվարի 19-ին։ Հաշտության պայմանագրի պայմանների համաձայն պապը Ֆրանսիային էր զիջում իր տիրույթների մի մասը, պարտավորվում վճարել 30 միլիոն ֆրանկ, իր թանգարաններից տալ լավագույն նկարներն ու արձանները։

Մեյցի Ֆրանչեսկո, Լոդիի դուքս (1753—1816)— խոշոր կալվածատեր և Իտալիայի քաղաքական գործիչ։ Աջակցել է ֆրանսիական բանակին, նպաստել Լոմբարդիայի ազատագրմանը ավստրիական տիրապետությունից և Այսրալպյան հանրապետության հաստատմանը (1797)։ 1802-ից մինչև 1805 թվականը եղել է վերստին Իտալական հանրապետության փոխպրեզիդենտը (պրեզիդենտը համարվում էր ինքը՝ Նապոլեոնը)։

Կամպոֆորմի հաշտությունը կնքվել է գեներալ Բոնապարտի և ավստրիական լիազոր կոմս Կոբենցելի կողմից Կամպո-Ֆորմիո գյուղում 1797 թվականի հոկտեմբերի 17-ին։ Այդ հաշտության պայմանների համաձայն, Վենետիկի տիրապետություններն անցնում էին Այսրալպյան հանրապետությանը, իսկ

Վենետիկ քաղաքը՝ Ավստրիային։ Դրա փոխարեն Ֆրանսիան ստանում էր Հոնեսուով անցնող սահմանը։ Բացի այդ, Ավստրիան Ֆրանսիային էր զիջում Բելգիան և հրաժարվում Այսրալպյան հանրապետության կազմի մեջ մտած մարզերի, այդ թվում Լոմբարդիայի (Միլանի ու Մանտուայի հետ) նկատմամբ ունեցած իր իրավունքներից։

էջ 15. Լեոբենյան նախնական համաձայնությունների, այսինքն՝ Կամպոֆորմյան հաշտությանը նախորդած զինադադարը և նախնական պայմանագիրն Ավստրիայի հետ. ստորագրվել են 1797 թվականի ապրիլի 18-ին։

էջ 22. ...Հիշեցեք, որ երեսուն դար է...— Ստենդալը ճիշտ մեջբերում չի կատարում։ Նկարիչ Դրոյի նկարի մակագրությունում բերվում են Նապոլեոնի խոսքերը. «Զինվորնե՛ր, այս բուրգերի գագաթից քառասուն դար է նայում ձեզ։ Բուրգերի մոտ տեղի ունեցած ճակատամարտում 1798 թվականի հուլիսի 21-ին Նապոլեոնը ջախջախեց Մուրադ-բեյի մամլուքներին։

էջ 25. Հենրիխ V (1387—1422)— անգլիական թագավոր. թագավորել է 1413 թվականից մինչև 1422 թվականը ներառյալ։ 1415 թվականին զորքով ափ է իջել Ֆրանսիայում։ Ագենկուրի ճակատամարտը (1415 թվականի հոկտեմբերի 25-ին) Հարյուրամյա պատերազմի մարտերից մեկն է, որն ավարտվել է ֆրանսիական զորքերի պարտությամբ և անգլիացիների հաղթանակով։

Այուֆիրեն Պիեռ-Անդրե (1726—1788)— ֆրանսիական ականավոր ծովակալ, ԱՄՆ-ի անկախության համար մղվող պատերազմում մի շարք հաղթանակներ է տարել անգլիացիների դեմ։

էջ 26. Դեժենետ Ռենե-Նիկոլա (1762—1837)— ֆրանսիացի, հայտնի բժիշկ. եգիպտական արշավանքի ժամանակ ուղեկցել է Նապոլեոնին. հերոսություն է ցուցաբերել՝ օգնելով վիրավորներին ու հիվանդներին. բժշկագիտական մի շարք աշխատությունների հեղինակ է։

Ասսալինի Պիետրո (1765—1840)— բժիշկ, որն ուղեկցել է Նապոլեոնին Եգիպտոսում։ Այնտեղից վերադառնալուց հետո հրատարակել է հուշեր ժանտախտի համաճարակի վերաբերյալ։ Ստենդալը նրան հիշատակում է որպես Մյունխեն քաղաքի բնակչի, որտեղ նա, իբրև Նապոլեոնի կողմնակից թաքնվելով հետապնդումներից, ժամանակավորապես տեղափոխվել էր 1815 թվականից հետո։ Հետագայում վերադարձել է Իտալիա և դարձել կլինիկական վիրաբուժության պրոֆեսոր։

էջ 27. Դյուրոկ Ժերար-Քրիստոֆ-Միշել (1772—1813)— Ֆրիուլի դուքս, Ֆրանսիայի մարշալ, Նապոլեոնի ուղեկիցը նրա բոլոր արշավանքներում։ Սպանվել է Վուրցենի ճակատամարտում՝ 1813 թվականի մայիսի 22-ին։

էջ 28. Եգիպտոսում իր բանակը բախտի քմահաճույքին թողնելուն...— Արդարացնելով Նապոլեոնի ինքնակամ մեկնումը Եգիպտոսից, որտեղ նա իր բանակը թողել էր դժվարին պայմաններում, Ստենդալը պնդում է, որ նրա վերադարձը փրկեց Ֆրանսիան, որին Դիրեկտորիայի կառավարությունը հասցրել էր կործանման եզրին։ Դիրեկտորիան, իրոք, պարզվեց, որ անկարող է երկրում կայուն կարգ հաստատել, որին ձգտում էր խոշոր բուրժուազիան՝ երկյուղելով ինչպես մասսաների մեջ հեղափոխական տրամադրությունների վերածնունդից, այնպես էլ վտարանդի-ազնվականների սպառնալիքներից։ Բայց դրսից Ֆրանսիային սպառնացող վտանգը Նապոլեոնի վերադարձի պահին

վերացված էր, բանի որ Ֆրանսիայի սահմաններին մոտեցած Սուվորովի զորքերն ուղևորվեցին դեպի Շվեյցարիա։

էջ 29. Կլեբեր Ժան-Բատիստ (1753—1800)— հեղափոխության ժամանակների ֆրանսիական ականավոր զորավար։ Մասնակցել է եգիպտական արշավանքին։ Սպանվել է Կահիրեում՝ մամլյուքի ձեռքով։

Մենու Ժակ-Ֆրանսուա (1750—1810)— ֆրանսիական գեներալ, Կլեբերի սպանությունից հետո Եգիպտոսում գտնվող ֆրանսիական բանակի հրամանատարն էր։

էջ 31. Դը Ռիվիեր, մարկիզ (1763—1828)— ֆրանսիական գեներալ և դիվանագետ, հեղափոխության ժամանակ տարագրվել է. մասնակցել է Նապոլեոնի դեմ ուղղված դավադրությանը։ Հարյուր օրվա ժամանակ փորձել է Նապոլեոնի դեմ հանել հարավային դեպարտամենտները։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո նշանակվել է պերերի պալատի անդամ։

Նիմֆ կոտորած— Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո լիբերալ բողոքականների ջանքերով ջրդ Նիմում (Ֆրանսիայի հարավում) կաթոլիկ ռոյալիստների կողմից։

Տրեստալիոն— Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո Ֆրանսիայի հարավում գործող ռոյալիստական տեռորիստական հրոսակախմբերի պարագլուխներից մեկը։

էջ 33. Մորո Ժան-Վիկտոր (1763—1813)— ֆրանսիական գեներալ. մի շարք վայրում հաղթանակներ է տարել կոալիցիայի զորքերի դեմ։ Մեղադրվել է Նապոլեոնի դեմ ուղղված դավադրության մեջ և բանտարկվել, բայց հետո ազատվել է, մեկնել Հյուսիսային Ամերիկա։ 1813 թվականին ռուսական բանակի շարքերում մասնակցել է Նապոլեոնի դեմ ուղղված պատերազմին։

Ժուբեր Բարթելեմի (1769—1799)— ֆրանսիական բանակի գեներալ։ 1798 և 1799 թվականներին եղել է գլխավոր հրամանատար Իտալիայում։ Սպանվել է Նովի քաղաքի մոտ ռուսական զորքերի դեմ մղված ճակատամարտում 1799 թվականի օգոստոսի 15-ին։

էջ 36. Կանռն Լազար (1753—1823)— ֆրանսիական ռազմական ինժեներ և քաղաքական գործիչ, վարել է ռազմական գործեր Հանրության փրկության կոմիտեում, շատ բան է արել հեղափոխական զորքերի հաղթանակների կազմակերպման համար։ Եղել է Գիրեկտորիայի անդամ։ Բողոքել է Կայսրության ստեղծման դեմ, բայց Հարյուր օրվա ժամանակ եղել է Ներքին գործերի մինիստր։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։

Տալեն Ժան-Լամբեր (1769—1820)— ֆրանսիական քաղաքական գործիչ, եղել է Կոնվենտի կոմիսար Բորդոյում. այստեղ մեծ հարստություն է դիզել կաշառակերությամբ և հափշտակություններով. եղել է տերմիդորի 9-ի հեղաշրջման կազմակերպիչներից մեկը։

էջ 39. Կարնոթ-Նիգա (1767—1841)— ֆրանսիական գեներալ և քաղաքական գործիչ։ 1814 թվականին ծառայության է անցել Բուրբոնների մոտ։ 1815 թվականին նորից է միացել Նապոլեոնին։

Ֆերան Անտուան-Ֆրանսուա-Կլոդ, կոմս (1751—1825)— ֆրանսիացի հրապարակախոս, պատմաբան և ծայրահեղ միապետական ուղղության քաղաքական գործիչ, ազնվականության արտոնությունների մոլի պաշտպան։

Հեղափոխության ժամանակ եղել է տարագրության մեջ։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո նշանակվել է «պետական մինիստր» և փոստային գերատեսչության տիրակալ։

էջ 41. Նապոլեոնը վերացրեց այդ օրենքը, դադարեցրեց վտարանդիների ցուցակների կազմումը... — Նապոլեոնը ձգտում էր Բուրբոններից կորել հեղափոխության ժամանակ Ֆրանսիայից տարագրված ռոյալիստներին։ Նրա հրամանով Ֆուշեն սկսեց կազմել այն ռոյալիստների ցուցակը, որոնց թույլատրվում էր վերադառնալ Ֆրանսիա։ Նախնական պլանով 145 հազար վտարանդիներից վերադառնալու թույլտվություն էր տրվում 141 հազարին։ Միայն 3.673 վտարանդիներ Ֆրանսիա վերադառնալու իրավունք լատացան։ 1802 թվականի սենատական հրամանագրով հայրենիք վերադառնալ ցանկացող վտարանդին պարտավոր էր երդում տալ պետական նոր կարգին։ Դրանից հետո վտարանդիների հիմնական մասը վերադարձավ Ֆրանսիա, բայց դրվեց ոստիկանության հսկողության տակ։ Վտարանդիներից առավել հետադիմականները մնացին արտասահմանում և վերադարձան միայն 1814 թվականին՝ Բուրբոնների հետ միասին։

Մարենգոյի մոտ Նապոլեոնը հաղթական տարավ 1800 թվականի հունիսի 14-ին։

էջ 42. Ֆոքս Չարլզ-Ջեյմս (1749—1806)— անգլիական պետական գործիչ, հողային արիստոկրատիայի և դրամական վերնախավի բուրժուականացած խավերի շահերն արտահայտող վիգերի կուսակցության լիդերներից մեկը։

էջ 43. Հռոմուլոս— Հռոմի առասպելական հիմնադիրը և նրա առաջին թագավորը։

Նումա Պոմպիլիոս— հռոմեական առասպելական թագավոր, որի կառավարման ավանդույթը վերագրում է մ. թ. ա. VIII դարի վերջին և VII դարի սկզբին։

էջ 45. Ռոսբախ— գյուղ Սաքսոնիայում, որտեղ Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ը հաղթանակ տարավ դուքս դը Սուբիզի հրամանատարության տակ գտնվող ֆրանսիական և կայսերական զորքերի նկատմամբ (1757)։ Ի հիշատակ այդ իրադարձության, Ֆրիդրիխը կառուցեց հուշարձան, որն ավերեց Նապոլեոնը Ենայի մոտ տարած հաղթանակից հետո։ Դրանից հետո Ֆրիդրիխի սուրը փոխադրվեց Փարիզ։

Ֆիլիպ II— Իսպանիայի թագավոր 1555 թ. մինչև 1598 թ.։ Ֆրանսիայում տեղի ունեցած կրոնական պատերազմների ժամանակ աջակցել է կաթոլիկական լիգային։ Նիդեռլանդների բռնակալական կառավարմամբ և ինկվիզիցիայի բռնություններով ապստամբություն է առաջացրել Նիդեռլանդներում և նպաստել դրանց անջատմանն Իսպանիայից։

էջ 47. «L' Empire des Gaules» («Գաղդիացիների կայսրություն»)։— Այս չթարգմանվող բառախաղը կառուցված է նույնանուն բառերի սկզբառներով. Gaule—Գաղդիա և gaule—գավազան (Գաղդիական կայսրություն—գավազանի կայսրություն)։

Լան Ժան Մոնտեբելլոյի դուքս (1769—1809)— Նապոլեոնի առավել յնորհալի մարշալներից մեկը. ծառայությունն սկսել է իբրև զինվոր. մասնակցել է Ասպեռնի ճակատամարտում։

Մոնկ Ջորջ (1608—1669)— անգլիացի գեներալ. եղել է Սթյուարտների ռեստավրացիայի ամենագլխավոր գործիչներից մեկը (1660)։

...Նրանք սկսեցին միջոց փնտրել վրեժ լուծելու...— 1800 թվականին մի քանի մահափորձ եղավ Նապոլեոնի դեմ։ Դրանցից ամենալուրջը 1800 թվականի դեկտեմբերի 24-ի մահափորձն էր Սեն-Նիկեզ փողոցում։ Նապոլեոնն այդ մահափորձի մեջ կասկածում էր յակոբինյաններին, թեև նրանք մասնակից չէին այդ գործին։ Հարյուր երեսուն յակոբինյաններ աքսորվեցին Գվիանա։ Մահափորձը կազմակերպել էին վտարանդիները (անգլիական կառավարության աջակցությամբ)՝ նպատակ ունենալով սպանել Նապոլեոնին և իրականացնել Բուրբոնների restավրացիան։ Մահափորձի մասնակից մի քանի ռոյալիստներ մահապատժի ենթարկվեցին։

էջ 48. Ժորժ Կադուդալ (1771—1804)— բրետոնյան հարուստ ֆերմեր, 1793—1799 թվականներին Արևմտյան Ֆրանսիայում գործող հակահեղափոխական հրամանատարների (շուանների) պարագլուխներից մեկը։ Մասնակցել է 1803—1804 թվականների ռոյալիստական դավադրությանը, բռնտարկվել է ու գաստապարտվել մահապատժի։

...Ենթարկվում էին Նապոլեոնի սպանության... պլաններ...— Նապոլեոնի սպանության պլանը բացահայտվել է 1804 թվականի փետրվարին։ Ֆրանսիական վտարանդիները, Անգլիայում խմբավորվելով կոմս դ'Արտուայի շուրջը, փորձեցին Անգլիայի ու Ֆրանսիայի միջև եղած հաշտության պայմանագիրը խզելուց հետո գավադրություն սարքել Նապոլեոնի դեմ։ Դավադրությունը բացահայտվելուց հետո Նապոլեոնն իր վրիժառությունն ուղղեց գավադրությանը բոլորովին չմասնակցած Էնգիենի դքսի դեմ, որն արդեն երկու տարի էր, ինչ ապրում էր Էտինհեյմում, բադենյան տարածքում։ Ֆրանսիական գրագունների ջոկատը, խախտելով բադենյան սահմանի անձեռնմխելիությունը, ներխուժեց Բադենի տարածքը և կալանավորեց երիտասարդ դքսին։ 1804 թվականի մարտի 21-ին ռազմական դատարանի դատավճռով նա գնդակահարվեց Վենսենի ամրոցի խրամում։

էջ 51. Կելլդոնեն— գյուղ Հյուսիսային Շոթլանդիայում։ Այստեղ 1746 թվականի ապրիլի 16-ին անգլիական զորի հավակնորդ Կարլ-Էդուարդ Սթյուարտի կողմնակիցների ջոկատը չախչախվեց անգլիական զորքերի կողմից։ Ինքը՝ հավակնորդը մազապուրծ եղավ փախուստով։

Ֆրանսիական ոստիկանությունը ղեկավարում է ականավոր մի մարդ։— Սանդալը նկատի ունի Դեկազին։

էջ 52. Բոներ Ժան-Ժերար (1771—1816) — Ֆրանսիական գեներալ. Հարյուր օրվա ժամանակ եղել է Կոնդե-սյուր-էն ամրոցի հրամանատարը։ Ամրոցը գրավեցին անգլիացիները։ Որպես բանագնաց ներկայացած գնդապետ Գորդոնին Ֆրանսիացիները սպանեցին։ Դատավարության ժամանակ լսվեցավ, որ գեներալ Բոնները հրամայել է կրակել բանագնացի վրա։ Այնուամենայնիվ Բոնները գրկվեց զինվորական կոչումից և աքսորվեց։

էջ 54. Սիդնեյ Սմիթ (1764—1840)— անգլիական ծովակալ, հանրապետական, ասա՝ Նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմի մասնակից։ Մի քանի հաղթանակներ է տարել ֆրանսիական նավատորմի դեմ և ֆրանսիացիներին ստիպել հեռանալու Եգիպտոսից։

Դը Մորբեյլ մարկիզ դ'Օրսեռ (և ոչ թե դ'Օլե՛, ինչպես սխալմամբ գրում է Ստենդալը) —հռչակվել է իր ստոր արարքով. 1814 թվականին դաշնակիցների զորքերի Փարիզ մտնելու ժամանակ Պատվո լեգիոնի շքանշանը կպցրել է իր ձիու պոչին։

էջ 56. Զգուշությունից Ստենդալը կոմս դ'Արտուային անվանում է կոմս Անգուլեմա, իսկ Բերրիի դքսին՝ Բուրգունդիայի դուքս։

Ստենդալը զգուշությունից բարմակներ է անվանում Բուրբոններին։ Բարմակներ, այսինքն՝ Բարմակի՝ պարսկական նշանավոր տոհմի անդամ. VIII—IX դարերում բաղդադյան արքասան-խալիֆների արքունիքում վեզիրների պարտականություն կատարող հետևորդներ։

Բենենետի իշխան— տիտղոս, որը Նապոլեոնը տվել է Թալեյրանին։

էջ 57. Լյուդովիկոս IX— նկատի ունի Լյուդովիկոս XVIII-ին։

էջ 61. Լավալետ Անտուան-Մարի, կոմս (1769—1830)— ֆրանսիական ականավոր քաղաքական գործիչ. Նապոլեոնի կողմն անցնելու համար 1815 թվականին կալանավորվում է և դատապարտվում մահապատժի։ Մահապատժի նախօրյակին նրա կինը մուտք է գործում բանտ, նրա հետ փոխում զգեստները և հնարավորություն տալիս փախչելու։ 1822 թվականին Լավալետը ներում է արժանանում և վերադառնում Ֆրանսիա։

Մավարի, Ռովիգոյի դուքս (1774—1833)— ֆրանսիական պետական գործիչ։ 1802 թվականին եղել է գաղտնի ոստիկանության դիրեկտոր։ 1804 թվականին մերկացրել է Ժորժ Կադուդալի ու Պիշեգրյուի դավադրությունը և զեկավարել Էնգիենի դքսի դատավարությունը։ 1810 թվականին ոստիկանության մինիստրի պաշտոնում փոխարինել է Ֆուշեին։

Վիշենցայի դուքս, Կոլենկուր Արման-Օգյուստ-Լուի (1772—1821)— ֆրանսիական գեներալ և դիվանագետ. դեսպանորդ է եղել Ռուսաստանում, 1812 թվականին ուղեկցել է Նապոլեոնին Ռուսաստանում։

էջ 62. Գեներալ Մասսենա, Ռիվոլիի դուքս (1758—1817)— Նապոլեոնի մարշալներից։ 1810 թվականին առաջադրանք է ստացել Պորտուգալիայից դուրս անգլիացիներին։ Որոշ հաջողության հասնելով Պորտուգալիայում, Մասսենան ոչ մի օգնություն չստացավ և ստիպված եղավ նահանջել Իսպանիա։ Նա շնորհազրկվեց և փոխարինվեց մարշալ Մարմոնով։ Մասսենայի հուշագրությունները հրատարակվել են Փարիզում 1847—1848 թվականներին։

էջ 63. Պ-ե Լեսյուրի ստեղծագործությունը...— Լեսյուրի գիրքը, որ հիշատակում է Ստենդալը, կոչվում է «Ֆրանսիան և ֆրանսիացիները 1817 թվականին»։ Այս գրքի հաջողությունը դրդեց հեղինակին 1818 թվականից սկսել «Պատմական և համաշխարհային տարեգրքի» թողարկումը։

էջ 64. Աուստերլիցի ճակատամարտը — Նապոլեոնի տարած հաղթանակը (1805 թվականի դեկտեմբերի 2-ին) զգալի չափով բացատրվում է ավստրիական հրամանատարության սխալներով և դաշնակցային զորքերի անբարենպաստ դասավորությամբ։ Աուստերլիցի ճակատամարտը և Նապոլեոնի մուտքը Վիեննա, Ավստրիային ստիպեց համաձայնվել հաշտություն կնքելու Ֆրանսիայի հետ և դուրս գալու կոալիցիայից։

Հոկտեմբերի 16-ին Նապոլեոնը.... գրենց...— Ստենդալը սխալմամբ Նեյի ճակատամարտը թվագրում է հոկտեմբերի 16-ով (14-ի փոխարեն) և Նա-

պոլեոնի մուտքը Բեռլին, որի ակնատեսն է եղել ինքը՝ հոկտեմբերի 26-ով (և ոչ թե 27-ով)։

Վիլնյով Պիեռ-Շառլ (1763—1806)— ֆրանսիական ծովակալ։ 1805 թվականի հոկտեմբերի 21-ին Նելսոնը Տրաֆալգարում չախջախեց միացյալ ֆրանսիսպանական նավատորմիղը. դրա հրամանատար ծովակալ Վիլնյովը գերվեց։ Անգլիացիները նրան բաց թողեցին. Փարիզի ճանապարհին նա որոշեց, որ ինքը չի կարողանա արդարանալ իր կառավարության առջև և ինքնասպան եղավ։

էջ 65. Աբմինիուս— գերմանական խերուսկներ ցեղի առաջնորդ, որը հռչակվել է հռոմեական զավթիչների դեմ մղած պայքարով։ Նա հռոմեական փոխարքա Վարային գայթակղեցնելով տանում է Տեսոբուրգյան անտառ, որտեղ հռոմեացիները ենթարկվում են գերմանացիների հարձակմանը և նոր հուսահատ կռիվներից հետո չախջախվում (մ. թ. 9 թվականին)։

Վիդուկինդ (Վիտեկինդ)— սաքսերի առաջնորդը Կարլոս Մեծի դեմ նրանց մղած ազատագրական կռիվներում։ 782 թվականին Վեզեռնի աջ ափին հարձակվում է ֆրանսիական զորքի վրա և ոչնչացնում նրան։

Տուգենդբունդ («Արիության միություն»)— գաղտնի ընկերություն, որը հիմնվել է 1808 թվականին Քյոնիգսբերգում հայրենասիրաբար տրամադրված բուրժուական և ազնվականական լիբերալ մտավորականության ղեկավարությամբ։ Դրա նպատակն էր Պրուսիան ազատագրել Նապոլեոնի ճնշումից և Պրուսիայում բուրժուական որոշ բարեփոխումներ անցկացնել։ Նապոլեոնի պահանջով «Տուգենդբունդը» փակվեց 1809 թվականին, բայց շարունակեց իր գաղտնի գոյությունը մինչև 1814 թվականը։

Լանդվեր— համերկրային աշխարհազոր, որը կազմակերպվել է Պրուսիայում 1813 թվականին՝ ֆրանսիական տիրապետության դեմ պայքարելու համար։

էջ 66. Մայրցամաքային շրջափակման դեկրետը Նապոլեոնը ստորագրել է Բեռլինում 1806 թվականի նոյեմբերի 21-ին։

Գեներալ Ուիլսոնի պամֆլետը, որի մասին գրում է Ստենդալն իր ժամանագրությունում, տպագրվել է ոչ թե 1806, այլ 1817 թվականին։ Այն կոչվում է՝ «Ակնարկ Ռուսաստանի ռազմական հզորության մասին»։

էջ 67. Ռիշելյո Արման-Ժան դյու Պլեսսի, դուքս (1585—1642)— ֆրանսիական կարդինալ և պետական գործիչ, 18 տարի շարունակ կառավարել է երկիրը և նպաստել, որ այնտեղ ամրապնդվի թագավորի բացարձակ իշխանությունը։

էջ 68. Բելգարդ Անրի (1756—1831)— ավստրիական գեներալ՝ ծնունդով Սավոյայից. 1792 թվականից մասնակցել է հեղափոխական, իսկ ապա նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմներին։

էջ 69. Նաստելեր Ժան-Գաբրիել (1763—1825)— ավստրիական գեներալ, ծագումով բելգիացի. Ֆրանսիայի դեմ ուղղված պատերազմների մասնակից։ 1809 թվականին կազմակերպել է Տիրոլի պաշտպանությունը ֆրանսիական ներխուժումից։ Ֆրանսիական զավթիչների դեմ ապստամբած տիրոլյան գյուղացիների գլուխ էր կանգնած Անդրեյ Հոֆերը։

Դարյու, Պիեռ-Անտուան, կոմս (1767—1829)— Նապոլեոնի ժամանակ

ֆրանսիական բանակի գլխավոր ինտենդանտ, շնորհալի կառավարչի համբավ էր վայելում։

Նյուրնբերգում (Բավարիայում) 1806 թվականին գրավված Պալմի մոտ դատապարտվեց «Գերմանիան իր ամենախոր նվաստացման մեջ» գրքույկը։ Նապոլեոնը Բավարիայի կառավարությունից պահանջեց, որպեսզի գրքույկի հեղինակը գնդակահարվի։ Պալմը հրաժարվեց ասել հեղինակի անունը։ Նապոլեոնի հրամանով գնդակահարվեց ինքը՝ Պալմը։

էջ 70. Նեյատելի իշխան— մարշալ Բերտիե Լուի-Ալեքսանդը (1753—1815)։ Եղել է Նապոլեոնի աջ ձեռքը, նրա գլխավոր շտաբի պետը։ Նապոլեոնի կարգադրությունների ստույգ կատարողը, նա ստորադաս կոչերով է սկսական նախաձեռնությունը։

Էրցհերցոգուհին դեռ երբեմ այդպես խայտառակ չէր ամուսնացել։— Զբարդմանվող բառախաղ. civil—քաղաքացիական, si vil այդպես խայտառակ։

Ժոզեֆինայից Նապոլեոնի ամուսնալուծության պատճառը նախ և առաջ երեխաներ ունենալու ցանկությունն էր (Ժոզեֆինայից սա երեխաներ չունեցավ), որպեսզի կայսերական թագի նկատմամբ ամրապնդի իր ժառանգորդի իրավունքը։ Նապոլեոնն առաջարկություն արեց էրցհերցոգուհի Մարի-Լուիզին՝ Ավստրիայի կայսր Ֆրանցի դստերը։ Ավստրիան, որը 1809 թվականի պատերազմից հետո լիակատար կախման մեջ էր Նապոլեոնից, չհամարձակվեց մերժել այդ առաջարկը։

էջ 73. Իսպանական մենիստր Խոսեկիսը 1816 թվականին տպագրեց «Այն պատճառների շարադրանքը, որոնք դրդեցին Ֆերդինանդին 1808 թվականին ուղևորվելու Բայոնա»։

էջ 74. Ֆրանսիացի հրապարակախոս աբբա դը Պրադտը 1816 թվականին հրատարակեց «Պատմական հուշագրություններ Իսպանիայի հեղափոխության մասին» գիրքը։

էջ 79. ...Մադրիդի բնակիչները... մայիսի 2-ին ապստամբեցին։ 1808 թվականի մայիսի 2-ի ապստամբության ժամանակ Մադրիդում զոհվեց 300 մարդ՝ քաղաքացիական բնակչությունից և 150 ֆրանսիական զինվոր։

Սեվալոսի տեղծագործությունը՝ «Այն միջոցների շարադրանքը, որ Նապոլեոն կայսրը կիրառել է իսպանական թագը բռնատիրելու համար» (1814)։

էջ 81. Կարլոս V— Իսպանիայի թագավոր (1515—1555), գերմանական կայսր (1519—1556)։ Նրա օրոք իսպանական միապետությունը հզոր պետություն էր, բայց հենց նրա օրոք էլ սկսվեց դրա անկումը։

Էնրիկե II— Կաստիլիայի թագավորը (1369—1379)։

Հենրիխ IV— Կաստիլիայի թագավորը (1454—1474)։

Խուան I— Կաստիլիայի թագավորը (1379—1390)։

էջ 82. Լասսի դոն Լուիս (1775—1817)— իսպանական գեներալ, ֆրանսիական ներխուժման դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակից։ Իսպանիան Նապոլեոնյան տիրապետությունից ազատագրվելուց հետո սահմանադրական հայացքների համար պաշտոնանկ է արվել Ֆերդինանդ VII թագավորի կողմից։ 1817 թվականին փորձել է ապստամբություն բարձրացնել Կատալոնիայում, բայց անհաջողության է մատնվել և մահապատժի ենթարկվել։

Պասյիե Խուան-Դիաս, մարկիզ (1785—1815)— իսպանական գեներալ, Ֆրանսիական ներխուժման դեմ ուղղված ազատագրական պայքարի ակտիվ մասնակից։ 1815 թվականին Կորուենիե ամրոցում ապստամբություն բարձրացրեց ընդդեմ Ֆերդինանդ VII-ի բացարձակ միապետական ռեժիմի։ Ապստամբությունը պաշտպանություն չգտավ ժողովրդի կողմից, և կառավարությունը ճնշեց այն։ Պասյիեն մահապատժի ենթարկվեց։

էջ 83. Պոմբալ, մարկիզ (1699—1782)— պորտուգալական պետական գործիչ։ Ժոզեֆ I թագավորի օրոք եղել է արտաքին գործերի մինիստր, ռազմական մինիստր, իսկ ապա՝ կառավարության գլուխ։ Վարել է «լուսավորյալ բացարձակ միապետության» քաղաքականություն, պայքարել է ֆեոդալական արիստոկրատիայի, ինկվիզիցիայի, հիզվիտների դեմ։ Թագուհի Մարի I-ի գահ բարձրանալուց և ֆեոդալական հետադիմության հաղթանակից հետո պաշտոնանկ է արվել, ջատի տրվել և արտաքսվել մայրաքաղաքից։ Նրա բարեփոխությունների մեծ մասը չեղյալ հայտարարվեց։

Հիմենես Սիսներոս Ֆրանսիսկո (1436—1517)— իսպանական պետական գործիչ, մոլի հետադիմական։ 1506 թվականից դարձել է Իսպանիայի փաստական կառավարիչը, 1507 թվականից՝ կարդինալ և մեծ ինկվիզիտոր։ 1509 թվականին արշավանք է կազմակերպել դեպի Հյուսիսային Աֆրիկա, որն ավարտվել է մավրերի արյունալի կոտորածով։

էջ 87. Ֆիլիպ II-ի գահ բարձրանալու պահին...— Ոչ թե Ֆիլիպ II-ի, այլ Ֆիլիպ V-ի (1700—1746)։ Ֆիլիպ V-ը ժառանգել է իսպանական գահը, բայց ստիպված է եղել մարտնչել դրա մեկ այլ հակառակորդի՝ ավստրիական էրցհերցոգ Կարլի և նրա դաշնակիցների դեմ։

էջ 88. Սահմանգալի այն պնդումը, թե «Եվրոպայի բոլոր երկրներից Իսպանիան, բերեն, այն միակ երկիրն էր, որտեղ Նապոլեոնն առավել մեծ հիացմունք էր առաջացնում», խիստ հակասում է պատմական փաստերին։ Հենց Իսպանիայում Նապոլեոնյան տիրապետությունն առաջին անգամ հանդիպեց ժողովրդական զանգվածների հզոր դիմադրությանը, որը ֆրանսիական զորքերին այդպես էլ չհաջողվեց լիովին ճնշել։ Իսպանական արիստոկրատիայի և բուրժուազիայի միայն մի քանի խմբեր էին պաշտպանում հակալական սկսուպացիոն բանակի վրա հենվող Ժոզեֆ Բոնապարտին։

էջ 91. Աուգուստո Արգելիես (1778—1844)— իսպանական քաղաքական գործիչ, 1812—1814 թվականների կորտեսների անդամ, մասնակցել է իսպանական առաջին սահմանադրության մշակմանը։ Ֆերդինանդ VII-ի Իսպանիա վերադառնալուց հետո աքսորվել է։ 1820—1823 թվականների հեղափոխության ժամանակ եղել է ներքին գործերի մինիստր։

Էլ-Մարալ— իսպանական քաղաքական գործիչ, կորտեսների անդամ, ֆրանսիական ներխուժման դեմ 1808—1813 թվականներին ծավալված պայքարի մասնակից։

Վորենսեն Խուան-Անտոնիո (1756—1823)— իսպանական քաղաքական գործիչ, պատմաբան և հրապարակախոս։ Ժոզեֆ Բոնապարտ թագավորի օրոք եղել է Պետական խորհրդի անդամ։ Իսպանիայից ֆրանսիացիներին քշելուց հետո Վորենսենն Ժոզեֆի ետևից գնաց Փարիզ։ Նրա պատմագրական աշխատությունների մեջ աչքի է ընկնում քառահատոր «Ինկվիզիցիայի քննադատական պատմությունը Իսպանիայում» (1817), որը մեծ հաջողություն ունեցավ ազատամտորեն տրամադրված ընթերցողների մեջ։ Այդ, ինչպես նաև «Պապերի քաղաքական դիմանկարները» գրքերի համար Վորենսենն արտաքսվում է Ֆրանսիայից։

էջ 107. Մայնցի պրեֆեկտը եղել է Ժան Բոն-Սենտ-Անդրեն. Ժան Դեբրին եղել է Դու դեպարտամենտի պրեֆեկտը։

էջ 108. Դը Նուավել էտիեն-Ֆրանսուա, դուքս (1719—1785)— ֆրանսիական քաղաքական գործիչ, 1758 թվականից մինչև 1770 թվականը ներառյալ ղեկավարել է Լյուդովիկոս XV-ի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Նրա օրոք տեղի ունեցավ Ցոքնամյա պատերազմը, որի հետևանքով Ֆրանսիան կորցրեց Կանադան, Լուիզիանան և Հնդկաստանում ունեցած տիրույթները։ Այդ անհաջողությունները խախտեցին Շուազելի դիրքը և նա պաշտոնանկ արվեց։

Դյուբարրի Մարի-Ժաննա Բեկյու (1743—1793)— ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XV-ի սիրուհին. առանց քաշվելու անօրինություն էր անում արքունիքում՝ իր հաճույքի համար պետական հսկայական միջոցներ վատնելով։ 1793 թվականին մահապատժի է ենթարկվել հեղափոխական տրիբունալի դատավճռով։

էջ 109. Նամիլյար Միշել (1652—1721)— XVII դարավերջի և XVIII դարասկզբի ֆրանսիական քաղաքական գործիչ. վարել է ֆինանսների գերատեսչություն, իսկ հետո՝ ռազմական գերատեսչություն։ Երկու պաշտոններում էլ իրեն դրսևորել է որպես ապաշնորհ կառավարիչ։

էջ 110. Մասսի դուքս, Կլոդ-Ամբրուազ Ռենիե (1736—1814)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, որտեղ հարել է սահմանադրական միապետականների աջ թևին։ Կայսրության ժամանակ եղել է Պետական խորհրդի անդամ, արդարադատության մինիստր, Օրենսդրական կորպուսի նախագահ։

Աբրանտեսի դուքս Ժյունո-Անդոշ (1771—1813)— ֆրանսիական գեներալ, մասնակցել է Նապոլեոնյան շատ արշավանքների։ 1812 թվականին Ռուսաստանում տեղի ունեցած անհաջող գործողությունների համար Նապոլեոնը նրան հեռացրել է բանակից։ 1813 թվականին խելագարվել է ու մահացել։

Մարմոն Օգյուստ-Ֆրեդերիկ-Լուի, Ռագուզի դուքս (1774—1852)— Նապոլեոնյան կայսրության մարշալ (1809 թվականից)։ Մասնակցել է Նապոլեոնի գրեթե բոլոր արշավանքներին։ Մի ժամանակ կառավարել է «Իլլիրիական նահանգները»։ 1811—1812 թվականներին եղել է Պորտուգալիայում գտնվող ֆրանսիական զորքերի հրամանատար։ 1814 թվականի մարտին դավաճանել է Նապոլեոնին և Փարիզը հանձնել եվրոպական կոալիցիայի զորքերին։ Բուրբոնների restauրացիայից հետո ստացել է պերի կոչում։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխության օրերին եղել է ապստամբած ժողովրդի դեմ կռվող թագավորական զորքերի հրամանատար։ Բուրբոնների միապետության տապալումից հետո տարագրվել է Անգլիա, ապա՝ Ավստրիա։

Ֆելտրի դուքս— Կլարկ Անրի-Ժակ-Ֆիլիպ (1765—1818)— ֆրանսիական գեներալ և դիվանագետ, Նապոլեոնյան կայսրության մարշալ, 1807 թվականից

ռազմական մինիստր։ 1814 թվականին անդամ Բուրբոնների կողմը։ 1815—1817 թվականներին նորից գրավել է ռազմական մինիստրի պաստը։

Բասսանի դուքս— Մարե Ժուզ-Բեռնար (1763—1839)— Ֆրանսիական քաղաքական գործիչ, փաստաբան և հրապարակախոս. մի ժամանակ եղել է Նապոլեոնի քարտուղարը. 1811—1814 թվականներին եղել է Նապոլեոնյան կայսրության արտաքին գործերի մինիստրը։ Բուրբոնների երկրորդ restավրացիայից հետո արտաքսվել է։ 1820 թվականին վերադարձել է Ֆրանսիա։

Կոմս դը Մոնտեսմյու-Ֆեզենզակ, Էլիզաբեթ-Պիեռ (1764—1834) —Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Նապոլեոնյան կայսրության Օրենսդրական կորպուսի անդամ և մի որոշ ժամանակ՝ նախագահ, կայսերական արքունիքի սենատոր ու սենեկապետ։ Բուրբոնների restավրացիայից հետո նշանակվել է պեր։

Կոմս Սենսսակ (1752—1841)— Ֆրանսիական քաղաքական գործիչ և գեներալ։ Եղել է Օրենսդիր ժողովի անդամ։ 1792 թվականին աշխատակցել է ռազմական մինիստրությանը։ Կայսրության ժամանակ եղել է Պետական խորհրդի անդամ և ռազմական ադմինիստրացիայի մինիստր։

էջ 111. Սյուլլի Մաքսիմիլիան, դուքս (1560—1641)— Ֆրանսիական քաղաքական գործիչ, Հենրիխ IV թագավորի գլխավոր խորհրդատու, ֆինանսական գերատեսչության ղեկավար, հրետանու պետ և ամրոցների տեսուչ։

Կրեսե՛ էմմանյուել, կոմս դը Շամպոլ (1747—1809)— Ֆրանսիական քաղաքական գործիչ, եղել է Նապոլեոնյան կայսրության Պետական խորհրդի անդամ, ապա՝ կամուրջների և ճանապարհների վարչության պետ, Ֆրանսիական բանակի կառավարիչ և, վերջապես՝ ներքին գործերի մինիստր։

Կոմս Պեժան Ժան-Ֆրանսուա-էմե (1749—1824)— Ֆրանսիական գեներալ։ Նապոլեոնի օրոք եղել է ռազմական մինիստր և սենատոր։ Բուրբոնների restավրացիայից հետո ստացել է պերի կոչում։ Հարյուր օրվա ժամանակ անցել է Նապոլեոնի կողմը։

էջ 112. Կոմս Կյուրիալ, Ֆիլիբեր Ժան-Բատիստ-Ֆրանսուա-Ժոզեֆ (1776—1829)— Ֆրանսիական գեներալ։ Բուրբոնների restավրացիայից հետո ենթարկվել է նոր կառավարությանը։ Հարյուր օրվա ժամանակ անցել է Նապոլեոնի կողմը։

էջ 113. Կոմս Լոբս, Ժորժ-Մուտոն (1770—1838)— Ֆրանսիական գեներալ, Նապոլեոնյան կայսրության մարշալ։ 1813 թվականին գերեվարվել է, իսկ 1814 թվականին վերադարձել Ֆրանսիա, 1815 թվականին նորից է գերվել և հայրենիք վերադարձել 1818 թվականին։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխության ժամանակ եղել է «մունիցիպալ հանձնաժողովի» անդամ և աշակցել Օռլեանի դքսի գահակալմանը։

Կոմս Դեկրե, Դենի (1761—1820)— Ֆրանսիական ծովակալ։ 1801—1814 թվականներին եղել է ծովային մինիստր։

Մոնտալիվե Ժան-Պիեռ, դը, կոմս (1766—1823)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Նապոլեոնի օրոք եղել է պրեֆեկտ, ապա՝ Պետական խորհրդի անդամ, կամուրջների ու ճանապարհների վարչության պետ, ներքին գործերի մինիստր և, վերջապես՝ խնամակալների խորհրդի քարտուղար 1814 թվականին։

Սուլտ Նիկոլա-Ժոզեֆ, Դալմատի դուքս (1769—1851)— Նապոլեոնյան կայսրության մարշալ։ 1808 թվականին Պորտուգալիա ներխուժելու ժամանակ եղել է ֆրանսիական զորքերի հրամանատար։ 1814 թվականին ենթարկվել է Բուրբոնների restավրացիային, բայց 1815 թվականին նորից անցել Նապոլեոնի կողմը և մասնակցել Վաթերլոոյի ճակատամարտին։ Բուրբոնների երկրորդ restավրացիայից հետո արտաքսված լինելով, Ֆրանսիա է վերադարձել 1819 թվականին։ Հուլիսյան հեղափոխությունից հետո եղել է ռազմական մինիստր, իսկ 1840—1847 թվականներին՝ Մինիստրների խորհրդի նախագահ։

Դավու Լուի-Նիկոլա, Աուերշտադտի դուքս, Էկմյուլի իշխան (1770—1823)— Նապոլեոնյան բանակի մարշալ։ 1815 թվականին նշանակվել է ռազմական մինիստր և կազմակերպել Նապոլեոնի վերջին բանակը։ Բուրբոնների երկրորդ restավրացիայից հետո զրկվել է մարշալի կոչումից, բայց հետագայում հաշտվել է Բուրբոնների հետ։

Նապոլ Ժան-Անտուան (1756—1832)— Ֆրանսիական ականավոր բժիշկ, քիմիկոս և քաղաքական գործիչ։ 1793 թվականին մեծ դեր է խաղացել պաշտպանության համար վառոդի արտադրության կազմակերպման գործում։ 1798 թվականին ընտրվել է Գիտությունների ակադեմիայի անդամ։ 1800—1804 թվականներին եղել է ներքին գործերի մինիստր։

Մոլիեն Նիկոլա-Ֆրանսուա (1758—1850)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Նախքան հեղափոխությունը եղել է ֆինանսների մինիստրության աստիճանավոր։ Հեղափոխության սկզբում թողել է իր պաստը։ Ցնորիինյան դիկտատուրայի ժամանակ բանտ է նստել։ Նապոլեոնի օրոք եղել է Պետական խորհրդի անդամ, ապա՝ գանձարանի մինիստր։ Հարյուր օրվա ժամանակ նորից է գրավել իր պաստը։

Պոդեն Մարտեն-Միշել-Շառլ (1756—1841)— Ֆրանսիական պետական գործիչ։ Նապոլեոնյան կայսրության ամբողջ ժամանակամիջոցում գրավել է ֆինանսների մինիստրի պաստը։

էջ 114. Տիբոդո Անտուան-Կլեր (1765—1854)— Ֆրանսիական քաղաքական գործիչ, փաստաբան ու հրապարակախոս։ Եղել է Կոնվենտի անդամ։ Տերմիդորի 9-ի հեղաշրջումից հետո եղել է ռեակցիայի պարագլուխներից մեկը։ Կայսրության ժամանակ դարձել է պրեֆեկտ, Պետական խորհրդի անդամ։ Բուրբոնների restավրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։ Հայրենիք է վերադարձել 1830 թվականի հուլիսյան հեղափոխությունից հետո։

Լեվուայե դ'Արժանսոն Մարկ-Ռենե (1771—1842)—Ֆրանսիական քաղաքական գործիչ և հրապարակախոս։ Նապոլեոնի օրոք գրավել է պրեֆեկտի պաշտոն։ Հուլիսյան հեղափոխությունից հետո սերտորեն կապված է եղել դեմոկրատների հետ։ Իր հառերում և գրքույկներում հանդես է եկել էգալիտար (հավասարարական) հանրապետության ստեղծման օգտին։

Լեզե-Մառնեզիա Ադրիեն (1770—1814)— Ֆրանսիական քաղաքական գործիչ և հրապարակախոս։ Հեղափոխության ժամանակ գտնվել է տարագրության մեջ, բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո գրավել է պրեֆեկտի պաշտոն, իսկ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը։

Լաֆայետ Մարի-Ժան-Պոլ, մարկիզ (1757—1834)— Ֆրանսիական նշանավոր քաղաքական գործիչ և գեներալ, հանուն ԱՄՆ-ի անկախության մղված

պատերազմի, XVIII դարավերջի Ֆրանսիական հեղափոխության և 1830 թվականի հեղափոխության մասնակից։ «Լուսավորյալ վիլիսոփայության» ոգով դաստիարակված բուրժուականացած ազնվականության ներկայացուցիչ։ Հեղափոխության առաջին տարիներին եղել է Սահմանադիր ժողովի անդամ, ազգային գվարդիայի հրամանատար և մարտնչել է դեմոկրատական շարժման դեմ։ 1792 թվականի օգոստոսի 10-ի ապստամբությունից հետո փախել է Ֆրանսիայից, բայց ավստրիական իշխանությունները նրան բռնել ու բանտն նետել, ուր անցկացրել է 5 տարի։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո վերադարձել է Ֆրանսիա։ Ռեստավրացիայի ժամանակ Լոֆայետը եղել է լիբերալ կուսակցության առաջնորդներից մեկը։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխության ժամանակ դարձել է ազգային գվարդիայի հրամանատար. օգտագործել է իր ժողովրդականությունը, որպեսզի խանգարի հանրապետության հաստատումը։ Սակայն շուտով ընդհարվում է թագավոր Լուի-Ֆիլիպի հետ և պաշտոնաթող լինում։

Սեյ Ժան-Բատիստ (1767—1832)— Ֆրանսիացի տնտեսագետ և լիբերալ-բուրժուական ուղղության քաղաքական գործիչ։ Ազատամիտ հայացքների համար Նապոլեոնը նրան հեռացրել է Տրիբունատի անդամությունից։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո քաղտնտեսության պրոֆեսոր էր։

Մեռլեն դը Տիոնվիլ Անտուան-Քրիստոֆ (1762—1833)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Օրենսդիր ժողովի, ապա՝ Կոնվենտի անդամ։

Էջ 116. Կամբասերես Ժան-Ժակ-Ռեմի, Պարմի դուքս (1753—1824)— —Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Կոնվենտի և Հանրության փրկության կոմիտեի անդամ։ Դիրեկտորիայի ժամանակ եղել է արդարադատության մինիստր։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո դարձել է երկրորդ կոնսուլ։ Խմբագրել է Նապոլեոնյան «Քաղաքացիական օրենսգիրքը»։ Մեծ դեր է խաղացել Նապոլեոնի կառավարության մեջ. եղել է կայսրության արքունիքանցլեր և սենատի նախագահ։ 1814 թվականին քվեարկել է Նապոլեոնի տապալման օգտին։ Հարյուր օրվա ժամանակ նորից է հարել Նապոլեոնին։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։ 1818 թվականին հնարավորություն է ստացել վերադառնալու Ֆրանսիա։

Էջ 119. Լապլաս Պիեռ-Սիմոն (1749—1827)— Ֆրանսիացի ականավոր մաթեմատիկոս, ֆիզիկոս և աստղագետ։ Հեղափոխության ժամանակ ղեկավարել է մետրական համակարգի ներդրումը և Պոլիտեխնիկական դպրոցի հիմնադրման գործը։ Նապոլեոնից ստացել է սենատորի կոչում և կոմսի տիտղոս։ 1814 թվականին քվեարկել է Նապոլեոնի տապալման օգտին։

Ֆոնտան Լուի դը (1757—1821)— Ֆրանսիացի գրականագետ, հրապարակախոս և չափավոր-լիբերալ ուղղության քաղաքական գործիչ։ Հիմնադրել է «Mercure» լրագիրը։ Կայսրության ժամանակ դարձել է Օրենսդրական կորպուսի նախագահ, սենատոր, ժողովրդական կրթության մինիստր։ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը։

Էջ 120. Դեֆերմոն Ժոզեֆ, կոմս (1756—1831)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Կայսրության ժամանակ եղել է Պետական խորհրդի անդամ։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո արտաքսվել է, և Ֆրանսիա է վերադարձել միայն 1822 թվականին։

Անդրեոսսի Անտուան-Ֆրանսուա, կոմս (1761—1828)— Ֆրանսիական գեներալ, հեղափոխական և նապոլեոնյան կոիվների մասնակից։ Եղել է Ֆրանսիայի դեսպանը Լոնդոնում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում։ Բռնել է պատմության և աշխարհագրության վերաբերյալ մի շարք աշխատություններ։

Նոդլեն Ֆրանսուա-Բենար, մարկիզ (1766—1832)— Ֆրանսիացի դիվանագետ և քաղաքական գործիչ, եղել է դեսպան Լոնդոնում։ Կայսրության ժամանակ եղել է Պետական խորհրդի անդամ և պրեֆեկտ։

Էջ 123. Դրուհի դը Պոլինյակ (1749—1793)— Թագուհի Մարի-Անտուանետի ֆավորիտուհին, փախել է Ֆրանսիայից՝ Բաստիլի անկումից երկու օր հետո։ Պոլինյակի ամբողջ ընտանիքը սերտորեն կապված է եղել Բուրբոնների դինաստիայի հետ։

Նեկկեր Ժակ (1732—1804)— Ֆրանսիական բանկիր, տնտեսագետ և չափավոր-լիբերալ ուղղության քաղաքական գործիչ. ծագումով շվեյցարացի։ 1777—1781 թվականներին, լինելով ֆինանսական գերատեսչության ղեկավար, փորձել է մի շարք բարեփոխություններ իրականացնել (հաշվետվության կարգավորում, արքունիքի ծախսերի որոշ կրճատում, թագավորի անձնական տիրույթներում գյուղացիների անձնական ճորտային կախվածության վերացում), որպեսզի կանխի հասունացող հեղափոխությունը։ Այդ բարեփոխությունների իրականացումը հանդիպեց արքունիքի և ազնվականական վերնախավի դիմադրությանը, և Նեկկերը պաշտոնանկ արվեց։ 1788 թվականին, պետական ֆինանսների ազնտալի դրության պատճառով, նա նորից նշանակվեց ֆինանսական գերատեսչության ղեկավար։ 1789 թվականի հուլիսի 11-ին Նեկկերը պաշտոնաթող եղավ, բայց Բաստիլի գրավումից հետո նորից վերադարձվեց իշխանության։ Հեղափոխության հետագա զարգացումը նրան ստիպեց պաշտոնաթող լինել (1790 թվականին) և մեկնել Շվեյցարիա։

Ժյուրգա Անրի-Ռոբեր-Ժակ (1727—1781)— Ֆրանսիացի տնտեսագետ և քաղաքական գործիչ։ 1774 թվականին գտնելով ֆինանսների գլխավոր վերահսկիչ, Ժյուրգան մշակեց բարեփոխման պլան, որի նպատակն էր առողջացնել Ֆրանսիական էկոնոմիկան։ Ժյուրգոյի փորձերը՝ համաքարությունը վերացնելու, առևտրի ու արդյունաբերության ազատություն մտցնելու, ազնվականության որոշ արտոնությունները վերացնելու ուղղությամբ, ուժեղ դժգոհություն առաջացրին արքունիքում և բարձր դասի մեջ։ 1776 թվականին նա ստիպված էր թողնել իր պաշտոնը։

Կուանյի Մարի-Ֆրանսուա-Անրի դը Ֆրանկեսու (1737—1821)— Ֆրանսիական գեներալ։ Հեղափոխության սկզբում ասպարեզվել է։ Մարտնչել է Կոնդեի բանակում, ապա ծառայության անցել Պետերբուրգալիայում։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո վերադարձել է Ֆրանսիա և մարշալի կոչում ստացել։

Բառնավ Պիեռ-Անտուան (1761—1793)— Ֆրանսիացի լուսավորիչ-փիլիսոփա և քաղաքական գործիչ, Սահմանադիր ժողովի անդամ, չափավոր սահմանադրական միապետականների խմբի ղեկավարներից մեկը, որը, ի հակադրություն յակոբինյանների ակումբի, հիմնադրել է Ֆելյանների ակումբը։ Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ Բառնավը Հեղափոխական տribունալի դատավճռով ենթարկվել է մահապատժի։

Սուեին Ժակ-Ժոզեֆ (1758—1806)— Ֆրանսիացի քաղաքական գործիչ, փաստաբան և չափավոր-լիբերալ ուղղության հրապարակախոս։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, բայց դուրս է եկել դրա կազմից և շուտով տարագրվել։ Ֆրանսիա է վերադարձել բրյումերի 18-ից հետո։

Բարասի դ'Անգլա Ֆրանսուա-Անտուան (1756—1826)— Ֆրանսիացի քաղաքական գործիչ և հրապարակախոս։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Ակտիվ մասնակցություն է ունեցել տերմիդորի 9-ի հեղաշրջմանը։ Գրերիալի 1-ի (1795 թվականի մայիսի 20-ի) ապստամբության ժամանակ բիլ էր մնացել, որ ապստամբած ժողովուրդը սպանի նրան։ Դիրեկտորիայի օրոք եղել է Հինդ հարյուրի խորհրդի անդամ և մի որոշ ժամանակ՝ պրեզիդենտ։ Միապետականների հետ համագործակցելու մեղադրանքով դատապարտվել է աքսորի, բայց փախել է Անգլիա։ Նապոլեոնը նրան դարձրել է կայսրության սենատոր և կոմս։

Սեն-Ժյուստ Անտուան (1767—1794)— Ֆրանսիական հեղափոխության ամենաականավոր գործիչներից մեկը, Կոնվենտի և Հանրության փրկության կոմիտեի անդամ, Հռենոսյան բանակի կոմիսար, տաղանդավոր հռետոր և հիանալի կազմակերպիչ, Ռոբեսպիերի մերձավոր զինակիցն ու բարեկամը։ Տերմիդորի 9-ի հակահեղափոխական հեղաշրջումից հետո Ռոբեսպիերի հետ ենթարկվել է մահապատժի։

Կոլլո դ'Էրբուա Ժան-Մարի (1750—1796)— Ֆրանսիական հեղափոխության գործիչ, մասնագիտությամբ դերասան ու դրամատուրգ, յակոբինյան ակումբի նշանավոր անդամ։ 1793 թվականի սեպտեմբերից եղել է Հանրության փրկության կոմիտեի անդամ և պաշտպանել է Ռոբեսպիերի քաղաքականությունը։ Հետագայում հարել է էբերտիստների խմբին, որոնք Ռոբեսպիերի քաղաքականությունը համարում էին ոչ բավականաչափ հեղափոխական։ Մասնակցել է տերմիդորի 9-ի հեղաշրջմանը, սակայն շուտով դարձել է հաղթանակած հակահեղափոխության զոհը, կալանավորվել ու մահացել է աքսորում։

Ֆաբր դ'Էգլանտին Ֆիլիպ-Ֆրանսուա (1750—1794)— Ֆրանսիական հեղափոխության գործիչ, մասնագիտությամբ դերասան, թատրոնի դիրեկտոր, լիբերալ ուղղության դրամատուրգ։ Եղել է Կոնվենտի անդամ։ Նրա նախաձեռնությամբ մտցվել է նոր, հեղափոխական օրացույցը։ 1794 թվականի ապրիլին մահապատժի է ենթարկվել Դանտոնի հետ։

էջ 124. **Գոշ Լաշար** (1768—1797)— հեղափոխության շրջանում ֆրանսիական բանակի ամենաականավոր զորավարներից մեկը, որը հռչակվել է օտարերկրյա ինտերվենտների և Վանդեայի խռովարարների դեմ տարած հաղթանակներով։

Միշո Ժոզեֆ-Ֆրանսուա (1767—1839)— Ֆրանսիացի պատմաբան, հեղինակ «Խաչակիրաց արշավանքների պատմություն», «Խաչակրաց արշավանքների գրադարան» և ռեակցիոն-կղերական ոգով գրված մի շարք այլ ստեղծագործությունների։ Նրա եղբայրը՝ Լուի-Գաբրիել Միշոն (1772—1858), որը նույնպես մոլի միապետական էր, հրատարակել է բազմահատոր «Համաշխարհային կենսագրություն» և «Ժամանակակիցների կենսագրություն» գրքերը։

էջ 125. **Մալլե Կլոդ-Ֆրանսուա** (1754—1812)— Ֆրանսիական գեներալ, հանրապետական։ 1812 թվականի հոկտեմբերին Նապոլեոնի մահվան գուսարը։
Համաձայնվում ոչ

և ժամանակավոր կառավարություն կազմելու մասին կեղծ պրոկլամացիաներ տարածելով, իր կողմը գրավեց երկու զորամաս և կալանավորեց ոստիկանության մինիստր Սավարիին։ Դատվել է ու գնդակահարվել։

Վիկտոր Կլոդ Պերրեն, Բելլյունի դուքս (1766—1841)— Կայսրության մարշալ, Նապոլեոնյան արշավանքների մասնակից։ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը։ 1821 թվականին նշանակվել է ռազմական մինիստր։

Սժերո Պիեռ-Ֆրանսուա-Շառլ, Տրևիզի դուքս (1757—1816)— Կայսրության մարշալ։

էջ 126. **Մոլե Լուի-Մատիե, կոմս** (1781—1855)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Հեղափոխության ժամանակ ապրել է Շվեյցարիայում։ Իր «Հաշվետվություն բարոյականության և քաղաքականության մասին» (1806) գրքի շնորհիվ, որն ապացուցում էր Նապոլեոնյան ռեժիմի անհրաժեշտությունը, շատ արագ առաջ գնաց, ստացավ կոմսի տիտղոս և արդարադատության մինիստրի պաշտոն։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո եղել է ծովային մինիստր։ Հուլիսյան միապետության ժամանակաշրջանում եղել է արտաքին գործերի մինիստր և մի որոշ ժամանակ՝ կառավարության գլուխ։

Ռոլան դը լա Պլատիեր, Ժան-Մարի (1734—1793)— Ֆրանսիական քաղաքական գործիչ և հրապարակախոս։ Եղել է բուրժուազիայի չափավոր-հանրապետական թևի շահերն արտահայտող ժիրոնդիստների կուսակցության առաջնորդներից մեկը։ 1792 թվականին եղել է արդարադատության մինիստր, իսկ միապետության տապալումից հետո՝ ներքին գործերի մինիստր։ Թագավորի մահապատժից հետո պաշտոնանկ է արվել։ Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ թաքնվել է, հեռակա կարգով դատապարտվել մահապատժի և ինքնասպան եղել։

էջ 129. **Մադմուազել Ժորժ, Մարգարիտա-Ժոզեֆինա Վեմմեր** (1787—1867)— Ֆրանսիական հայտնի դերասանուհի, Ռուսաստանում առաջին անգամ ելույթ է ունեցել 1808 թվականին։

էջ 131. **Դը Սեգյուր Լուի-Ֆիլիպ, կոմս** (1753—1830)— Ֆրանսիական քաղաքական գործիչ և դիվանագետ։ Հեղափոխությունից առաջ եղել է դեսպան Պետերբուրգում։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, ապա դեսպան՝ Բեռլինում։ Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ թաքնվել է։ Կայսրության ժամանակ եղել է սենատոր և Նապոլեոնյան աբքունիքի արարողապետ։

էջ 132. **Դը Նարբոն Լուի, կոմս** (1755—1813)— Ֆրանսիական գեներալ և դիվանագետ։ Հեղափոխության սկզբում եղել է ռազմական մինիստր։ Միապետության տապալումից հետո տարագրվել է։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո վերադարձել է Ֆրանսիա։ 1812 թվականին Ռուսական արշավանքի ժամանակ ուղեկցել է Նապոլեոնին որպես նրա համհարզ։

էջ 133. **Դեսայուս դը Տրասի Անտուան-Լուի-Կլոդ, կոմս** (1754—1836)— Ֆրանսիացի հրապարակախոս, փիլիսոփա, տնտեսագետ և քաղաքական գործիչ։ 1792 թվականին տարագրվել է, բայց հետո վերադարձել է Ֆրանսիա ու կալանավորվել։ Իր ստեղծագործություններում («Դաստիարակության տարրեր», «Տրակտատ կամքի ու նրա գործողությունների մասին», «Մեկնություններ Մոնտեսքյոյի օրենքների ոգու» և այլն) արտահայտել է բուրժուազիայի և ազնվականության պահպանողական շրջանների շահերն ու ձգտում-

ները, արդարացրել աշխատավորների կապիտալիստական շահագործումը։

Էջ 140. Սյուշե Լուի-Դարբրիել, Ալբուֆերի դուքս (1770—1826)— Նապոլեոնյան կայսրության մարշալ։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո նշանակվել է պեր։ 1815 թվականին անցել է Նապոլեոնի կողմը. երկրորդ ռեստավրացիայից հետո հեռացվել է պերերի կազմից, բայց 1819 թվականին նրա այդ կոչումը վերականգնվել է։

Կազդ-Դասսիկուր Շառլ-Լուի (1769—1821)— Ֆրանսիացի հրապարակախոս, բժիշկ ու դեղագործ։ 1809 թվականին մասնակցել է Ավստրիայի դեմ մղված պատերազմին իբրև Նապոլեոնի առաջին դեղագործ։

Էջ 141. Արդարացնելով Նապոլեոնյան Ֆրանսիայի 1812 թվականի ագրեսիան ընդդեմ Ռուսաստանի, Ստենդալը պնդում է, որ այդ պատերազմը ձեռնարկվել է այն նպատակով, որպեսզի Ռուսաստանին հնարավորություն չտրվի «Միջին Սվրոպա ներխուժելու»։ Այդ պնդումը միանգամայն հակասում է պատմական իրողությանը։ «Նապոլեոնի բոլոր պատերազմներից 1812 թվականի պատերազմը,— իրավացիորեն նկատում է Ե. Վ. Տարլեն,— առավել բացահայտ իմպերիալիստական պատերազմ էր՝ առավել անմիջականորեն թելադրված ֆրանսիական խոշոր բուրժուազիայի շահերով»։

Էջ 144. ...Ճարկ էր, որ նա այնտեղից հեռանար հոկտեմբերի 1-ին... Ստենդալի այն պնդումը, որ եթե Նապոլեոնն իր բանակով Մոսկվայից հեռանար հոկտեմբերի 1-ին և ոչ թե 19-ին՝ գեռ կարող էր շահել պատերազմը, քննադատության չի դիմանում։ Այդ 18 օրերը ոչինչ չէին կարող փոխել ֆրանսիացիների համար խիստ անբարենպաստ դասավորված ուժերի հարաբերակցության մեջ։

Էջ 145. Նեյ Միշել, Էլխինգենի դուքս (1769—1815)— XIX դարասկզբի ֆրանսիական բանակի ամենաականավոր զորավարներից մեկը, Նապոլեոնյան կայսրության մարշալ։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո գնդակահարվել է Հարյուր օրվա ընթացքում Նապոլեոնի կողմն անցնելու համար։

Գուվիոն-Սեն-Սիր Լորան (1764—1830)— Ֆրանսիական գեներալ։ 1812 թվականին ստացել է մարշալի կոչում։ 1817—1819 թվականներին գրավել է ռազմական մինիստրի պաշտոնը։ 1818 թվականին ռազմական բարեփոխություն է անցկացրել, որի էությունը սահմանափակ զինվորական ծառայություն մտցնելու մեջ էր։

Էջ 148. 1813 թվականի մայիսի 2-ին Լյուցենի ճակատամարտով սկսվեց Նապոլեոնի ամառային արշավանքը Սաքսոնիայի տարածքում։ Համառ և արյունահեղ մարտերից հետո դաշնակցային բանակները նահանջեցին Էլբայից այն կողմ, և ամբողջ Սաքսոնիան նորից գրավեցին ֆրանսիացիները։

Բաուցենի (Վուրցենի) ճակատամարտն սկսվել է 1813 թվականի մայիսի 20-ին և տևել երկու օր. շարքից դուրս է եկել 30 հազար մարդ, այդ թվում 12 հազար ֆրանսիացի։

Զինադադարն անհրաժեշտ էր։— 1813 թվականի հունիսի 4-ին Ավստրիայի միջնորդությամբ Նապոլեոնի և կոալիցիայի միջև կնքվեց Պլեսվիցկի զինադադարը՝ մինչև հունիսի 28-ը։ Այնուհետև այն երկարացվեց։ Պրագայում գումարված հաշտության կոնգրեսը որևէ արդյունքի չհասավ։ Նապոլեոնը չէր համաձայնվում ոչ մի զիջման. նա մերժեց իրեն առաջարկված հաշտության

պայմանները, թեև բացի Ֆրանսիայից, նրան էին թողնում նաև Իտալիան։ 1813 թվականի աշնանային արշավանքն սկսվեց օգոստոսի վերջին։ Օգոստոսի 27-ին Նապոլեոնը վերջին մեծ հաղթանակը տարավ Դրեզդենի մոտ։ Նոյեմբերի 16—19-ը Լայպցիգի մոտ տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ, որն ավարտվեց ֆրանսիական զորքերի լիակատար պարտությամբ։ Լայպցիգի ճակատամարտից հետո Նապոլեոնը կորցրեց իր բոլոր դաշնակիցներին։

Էջ 150. Գրեգուար Անրի (1750—1831)— Ֆրանսիական հեղափոխության ականավոր գործիչ, քահանա, հետագայում՝ եպիսկոպոս։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել հոգևորականության քաղաքացիական կառուցվածքի մշակմանը։ Կոնվենտում առաջիններից մեկն է պահանջել հանրապետության հռչակումը։ Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ եղել է ժողովրդական լուսավորության կոմիտեի անդամ։ Եղել է Նապոլեոնյան կայսրության սենատոր և կոմս։ Հռչակվել է հանուն նեգրերի ստրկության վերացման մղած իր պայքարով։ Ռեստավրացիայի ժամանակ հարել է լիբերալ կուսակցությանը։ Հետադիմականներն ատում էին նրան։ Հոգևորականությունն արգելել է նրա թրիստոնեական թաղումը։

Լանժյուինե Ժան-Դենի (1753—1827)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, որտեղ հարել է սահմանադրական միապետականների խմբին։ Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ թաքնվել է հետապնդումներից։ Տերմիդորի 9-ից հետո վերադարձել է Կոնվենտ։ Նապոլեոնը նրան դարձրեց սենատոր և Կայսրության կոմս։ Ռեստավրացիայի ժամանակ եղել է պերերի պալատի անդամ։

Կարաֆիս Պիեռ-Ժան-Ժորժ (1757—1808)— բժիշկ, գրականագետ և փիլիսոփա, որը հեղափոխության ժամանակ մեծ դեր է խաղացել բժշկական կրթության վերակառուցման գործում։

Լենուար-Լարոշ Ժան-Ժակ, կոմս (1749—1825)— Ֆրանսիացի իրավաբան և պահպանողական-միապետական ուղղության քաղաքական գործիչ, եղել է Նապոլեոնյան կայսրության սենատոր։

Վոլնեյ Կոնստանտեն (1757—1820)— Ֆրանսիացի գրող, դիտնական (արևելագետ) և լուսավորիչ, առաջադիմական բուրժուազիայի գաղափարախոս՝ ֆեոդալական կարգերի դեմ նրա մղած պայքարում։ 1790 թվականին լույս է ընծայել կրոնի և եկեղեցու՝ որպես հետադիմության պատվարի դեմ ուղղված «Փլատակներ կամ մտորումներ պետությունների մեջ հեղափոխությունների մասին» գիրքը։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ, յակոբինյան դիկտատուրայի ժամանակ բանտ է նստել։

Էջ 153. Շառլ Հենրիխ-Ֆրիդրիխ-Կառլ, բարոն (1757—1831)— պրուսական քաղաքական գործիչ։ 1807—1808 թվականներին, լինելով մինիստր-պրեզիդենտ, անցկացրեց մի շարք բարեփոխություններ, որոնք ուղղված էին ֆեոդալական կարգերի մասնակի վերացմանը՝ պրուսական միապետության ամրապնդման և ֆրանսիական տիրապետության դեմ ուղղված պայքարի նախապատրաստման նպատակով։ Նապոլեոնի պահանջով պաշտոնաթող է արվել ու արտաքսվել Պրուսիայից։

Գնեյզենաու Ավգուստ, կոմս (1760—1831)— պրուսական բանակի ֆելդմարշալ։ Նապոլեոնի պահանջով հեռացվել է բանակից։ Հետագայում վերա-

դարձել է բանակ։ Վաթերլոոյի ճակատամարտում եղել է պրուսական զորքերի շտաբի պետ։

էջ 157. Նատիլիոնի կոնգրեսը տեղի է ունեցել 1814 թվականի փետրվարի 5-ից մինչև մարտի 19-ը ներառյալ։ Այս կոնգրեսում որոշվեց Նապոլեոնին առաջարկել այն սահմանները, որ Ֆրանսիան ունեցել է 1792 թվականին, այսինքն՝ առանց Բելգիայի, Հոլանդիայի, Սավոյայի և Հռենոսի ձախ ափի։ Նապոլեոնը հրաժարվեց ընդունել այդ պայմանը. նա դեռևս հույս ուներ, որ իրեն կհաջողվի ջախջախել կամ պառակտել կոալիցիան։

էջ 158. Առնդտ Էռնստ-Մորից (1769—1860)— գերմանացի բանաստեղծ, պատմաբան, հրապարակախոս և պրոֆեսոր։ Նրա դասախոսությունները, գրքույկները և բանաստեղծությունները նշանակալից դեր են խաղացել Տիլզիտի հաշտությունից հետո Գերմանիայում ազգային վերելքի նախապատրաստման, Նապոլեոնի տիրապետության դեմ ուղղված պայքարի պրոպագանդման գործում։

էջ 159. Նա հրաժարվեց հարյուր հազարանոց Իտալական բանակից...— Սանդղալի սխալը. արքայազն Էժենը չէր կարող Նապոլեոնին 100-հազարանոց բանակ առաջարկել, քանի որ նա Իտալիայում ընդամենը 40 հազար մարդ ուներ։

էջ 161. Նիվոզի 3-ի դժոխային մեքենան— մահափորձ Նապոլեոնի դեմ 1800 թվականի դեկտեմբերի 24-ին։

էջ 164. ...պարանով զետին տապալել Վանդոնի հուշասյան վեր խոյացող արձանը։— Նապոլեոնյան բանակի հաղթանակներին նվիրված հուշասյան հիմքը Վանդոնի հրապարակում դրվել է 1806 թվականի օգոստոսի 25-ին. կառույցն ավարտվել չորս տարի հետո։ Դրա գագաթին դրվել է Նապոլեոնի վիթխարի բրոնզե արձանը։ Լյուդովիկոս XVIII-ը հրամայեց հանել այդ արձանը և վերաձուլել Հենրիխ IV-ի ձիարձանի համար։ 1833 թվականին Նապոլեոնի արձանը վերականգնվեց։ 1871 թվականի Փարիզի կոմունայի ժամանակ Վանդոմի հուշասյունը տապալվեց որպես միլիտարիզմի խորհրդանիշ. 1875 թվականին այն նորից վերականգնվեց։

Պիտրոլ Էժեն-Ֆրանսուա-Օգյուստ, բարոն (1774—1854)— ռեակցիոն-միապետական ուղղության ֆրանսիական քաղաքական գործիչ։ Հեղափոխության ժամանակ տարագրվել է։ Եղել է կոմս դ'Արտուայի մերձավոր խորհրդականը։ Ակտիվորեն մասնակցել է Բուրբոնների restավրացիային 1814 թվականին։

էջ 165. Աբբա Սկապեն— նկատի ունի Թալեյրանին, որը մի ժամանակ եղել է աբբա, իսկ հետո՝ եպիսկոպոս։ Սկապենը ստահակ ծառա է հին կատակերգությունում։

Շվարցենբերգ Կառլ-Ֆիլիպ, իշխան (1771—1820)— ավստրիական ֆելդմարշալ։ Նապոլեոնի Ռուսական արշավանքի ժամանակ նրա բանակում եղել է XII կորպուսի հրամանատար։ 1813 թվականին, հակաֆրանսիական կոալիցիային Ավստրիայի միանալուց հետո, դարձավ կոալիցիայի զորքերի գլխավոր հրամանատարը։

էջ 168. Լենե Ժոզեֆ-Անրի-Ժոաշեն (1767—1835)— ֆրանսիացի փաստաբան և քաղաքական գործիչ։ Կայսրության օրոք եղել է Օրենսդրական կորպուսի անդամ։ 1813 թվականին հանդես է եկել Նապոլեոնի բռնապետական և

զավթողական քաղաքականության դատապարտմամբ։ Բուրբոնների restավրացիայի ժամանակ եղել է դեպուտատների պալատի նախագահ և մի քանի անգամ՝ մինիստր։ Պատկանել է սահմանադրական royalիստների կուսակցությանը։

Ֆոժերզ Պիեռ-Ֆրանսուա (1767—1836)— ֆրանսիացի քաղաքական գործիչ և փաստաբան։ Հեղափոխության ժամանակ եղել է ժիրոնդիստների կողմնակից։ 1813 թվականին Օրենսդրական կորպուսում հանդես եկավ Նապոլեոնի քաղաքականության դատապարտմամբ։ Հարյուր օրվա ընթացքում եղել է ներկայացուցիչների պալատի փոխնախագահ։

էջ 170. Սուամ Ժոզեֆ (1760—1837)— ֆրանսիական գեներալ, նապոլեոնյան պատերազմների մասնակից։ 1814 թվականին դավաճանեց Նապոլեոնին։

էջ 174. Խոսելով կանցլերի մասին, Սանդղալը նկատի ունի դերկոմս Դամբրեին (1760—1829), որն այդ պաշտոնը գրաղեցրել է Բուրբոնների restավրացիայի առաջին տարիներին։

Կառլոս IX— ֆրանսիական թագավոր (1560—1574) Վալուա դինաստիայից։ Գահ է բարձրացել իր եղբոր՝ Ֆրանսուա II-ի մահից հետո։ Փաստորեն նրա օրոք երկիրը կառավարել է մայրը՝ Եկատերինա Մեդիչին, որը և եղել է թագավորի ու նրա արքունիքի՝ 1572 թվականի օգոստոսի 24-ի գիշերը (Բարթուղիմեոսյան գիշեր) կազմակերպած բողոքականների (հուգենոտների) մասսայական կոտորածների գլխավոր ոգեշնչողը։ Ընդ որում, ոչնչացվեց մի քանի հազար մարդ։ Դրա հետևանքը եղավ քաղաքացիական պատերազմի ուժեղացումն ազնվականության մեծամասնության աջակցությունը վայելող կաթոլիկների և ազնվականության մի մասի ու որոշ շրջանների առևտրական բուրժուազիայի պաշտպանած հուգենոտների միջև։

էջ 174. Լամբրեխտս Շառլ-Ժոզեֆ-Մատիե (1753—1823)— չափավոր-լիբերալ ուղղության ֆրանսիական քաղաքական գործիչ։ Դիրեկտորիայի օրոք եղել է արդարադատության մինիստր։ Սենատում բվեարկել է Կայսրության հաստատման դեմ. ակտիվորեն մասնակցել է Նապոլեոնի տապալմանը։

Դարա Դոմինիկ-Ժոզեֆ (1749—1833)— չափավոր-լիբերալ ուղղության քաղաքական գործիչ, փաստաբան ու հրապարակախոս։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ 1792 թվականին եղել է արդարադատության մինիստր, 1793 թվականին՝ ներքին գործերի մինիստր։ Ժիրոնդիստներին աջակցելու համար բանտարկվել է։ Կայսրության ժամանակ եղել է սենատոր։ Բուրբոնների restավրացիայից հետո ենթարկվել է հալածանքների։

Բենժամեն Կոնստան (1767—1830)— ֆրանսիական ականավոր գրող, հրապարակախոս և քաղաքական գործիչ, XVIII դարավերջի և XIX դարի առաջին երրորդի բուրժուական լիբերալիզմի գլխավոր տեսաբաններից մեկը, ծագումով շվեյցարացի։ Հարյուր օրվա ժամանակ անցել է Նապոլեոնի կողմը։ 1819 թվականին եղել է դեպուտատների պալատի անդամ։ Գլխավորել է առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի լայն շրջանների շահերն արտահայտող լիբերալ կուսակցության ձախ թևը։ Մեծ ժողովրդականություն է վայելել Բ. Կոնստանի ուսմունքն անհատական ազատությունների (անձի ազատության, ժողովների ազատության, մամուլի ազատության և այլնի) մասին։ Սակայն, պայքարելով անձի ազատության համար, Բ. Կոնստանը նկատի ուներ միայն

բնակչության ունեցած և կրթված խավերը։ Աշխատավոր զանգվածներին նա զրկում էր քաղաքական իրավունքներից։ Լինելով ազնվականական հեղափոխության հակառակորդ, Բ. Կոնստանը չափանցանց համակրանքով է վերաբերվել 1830 թվականի հուլիսյան հեղափոխությանը, որն իշխանության գլուխ կանգնեցրեց խոշոր բուրժուազիային։ Նոր թագավորը նրան նշանակեց Պետական խորհրդի նախագահ։

էջ 176. Պանուրգյան նոա— մի գիրված Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուելից»։ Պանուրգը, ընդհարվելով ոչխարների հոտի տիրոջ հետ, նրանից գնեց մի ոչխար և նետեց ծովը։ Նրա հետից սլացավ ողջ հոտը և խեղդվեց։ «Պանուրգյան հոտ» հասկացությունը կիրառվում է այն անձանց առնչությամբ, որոնք գործում են կույր նմանողության զգացումով։

էջ 179. Մորի Ժան-Սիֆֆրեն (1746—1817)— ֆրանսիացի քահանա (աբբա) և պահպանողական-միապետական ուղղության քաղաքական գործիչ։ 1789 թվականին եղել է Սահմանադիր ժողովի անդամ։ 1791 թվականին ստացել է կարդինալի կոչում։ Նապոլեոնի օրոք նշանակվել է Փարիզի արքեպիսկոպոս, բայց պապի կողմից չի հաստատվել։

էջ 180. Թիշեյրն Արման-Էմանյուել-Դյուպլեսսի, գուքս (1766—1822)— —սահմանադրական-միապետական ուղղության ֆրանսիական քաղաքական գործիչ։ Հեղափոխության ժամանակ տարագրվել է Ռուսաստան։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո վերադարձել է Ֆրանսիա։ Երկու անգամ եղել է կաբինետի գլուխ։ Առաջին անգամ մինիստր եղած ժամանակ (1815—1818) Թիշեյրն պայքարել է ծայրահեղ միապետականների (ուլտրառոյալիստների) դեմ և պաշտպան կանգնել 1814 թվականի սահմանադրական խարտիային։ 1820 թվականի սկզբին վերադառնալով իշխանության գլուխ, փորձել է մերձենալ միապետականների հետ, անցկացնել կալվածատիրական ազնվականության ազդեցությունն ուժեղացնող ընտրական նոր օրենք, խիստ միջոցառումներ ձեռնարկել լիբերալ մամուլի և լիբերալ պրոֆեսորների դեմ։ Ընդունած գրան, 1821 թվականի դեկտեմբերին Թիշեյրն պաշտոնանկ է արվել և փոխարինվել կոմս Վիլլելով՝ ծայրահեղ միապետականների գրածոյով։

էջ 183. Գյուիտոն-Մորվո Լուի-Բեռնար (1737—1816) — ֆրանսիացի ականավոր գիտնական (ֆիզիկոս ու քիմիկոս) և քաղաքական գործիչ։ Եղել է Օրլեանցի ժողովի և Կոնվենտի անդամ, Յակոբինյան դիկտատուրայի ժամանակ գիտական առաջավոր մասնագիտությունը որոշ այլ ներկայացուցիչների հետ (Մոնժ, Բերթոլե և ուրիշներ) ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմական արդյունաբերության կազմակերպման գործին։ 1796 թվականին բնաբվել է Գիտությունների ակադեմիայի անդամ։ Որոշ ժամանակ եղել է Պոլիտեխնիկական դպրոցի դիրեկտոր։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո ենթարկվել է հալածանքների։

Մոնժ Գասպար (1746—1818)— ֆրանսիացի ականավոր գիտնական (մաթեմատիկոս), Գիտությունների ակադեմիայի անդամ։ Ակտիվորեն մասնակցել է հեղափոխությանը. եղել է չափերի ու կշիռների տասնորդական համակարգի մշակման հանձնաժողովի անդամ, ծովային մինիստր, յակոբինյան ակումբի անդամ։ Եղել է Պոլիտեխնիկական դպրոցի հիմնադիրներից ու ղեկավարներից մեկը։ Մտերմանալով Նապոլեոնի հետ, մասնակցել է եգիպտական արշավանքին։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո վտարվել է Գիտությունների ակադեմիայից։

Ռեղնիեր Պիեռ-Լուի (1754—1835)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի անդամ և Սենի դեպարտամենտի գատախազ։ Եղել է Իսպանիայի թագավոր Ժոզեֆ Բոնապարտի Պետական խորհրդի անդամը և ֆինանսների մինիստրը։

Լականալ Ժոզեֆ (1762—1845)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Կոնվենտի անդամ, որտեղ ղեկավարել է ժողովրդական կրթության կազմակերպումը։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո վտարվել է Գիտությունների ակադեմիայից և տարագրվել ԱՄՆ։ 1832 թվականին վերադարձել է Ֆրանսիա։

Դավիդ Ժակ-Լուի (1748—1825)— ֆրանսիացի ականավոր նկարիչ, 1789— —1794 թվականների հեղափոխության ակտիվ մասնակից։ Եղել է Կոնվենտի և յակոբինյան ակումբի անդամ։ Նրա լավագույն նկարներից է «Մարատի մահը» կտավը (1793)։ Կայսրության ժամանակ նկարել է Նապոլեոնին փառաբանող մի շարք նկարներ ու գիմանկարներ։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո հեռացվել է Գիտությունների ակադեմիայից և արտաքսվել Ֆրանսիայից։

Դ'Ալամբեր Ժան (1717—1783)— ֆրանսիացի ականավոր փիլիսոփա և մաթեմատիկոս, XVIII դարի «լուսավորական փիլիսոփայության» խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։ Եղել է Գիտությունների ակադեմիայի անդամ։ Դիդրոյի հետ խմբագրել է «Հանրագիտարանը»։

Դյուպլը Շառլ-Պիեռ (1704—1772)— լուսավորության դարաշրջանի ֆրանսիացի գրականագետ, փիլիսոփա և պատմաբան. Գիտությունների ակադեմիայի անդամ։

Դյուրաք— ֆրանսիական գեներալ և քաղաքական գործիչ։ 1815 թվականի ներկայացուցիչների պալատում վճռաբար հանդես է եկել Բուրբոնների ռեստավրացիայի դեմ՝ ապացուցելով, որ այդ գիտատիան անհամատեղելի է ֆրանսիական ժողովրդի շահերի հետ, քանի որ վայելում է նրա կատաղի թշնամիների աջակցությունը։

Բեղակ Պիեռ-Ժոզեֆ (1761—1837)— ֆրանսիական քաղաքական գործիչ. Նապոլեոնյան կայսրության Օրենսդրական կորպուսի և ներկայացուցիչների պալատի անդամ Հարյուր օրվա ժամանակ։

Սյուար Ժան-Բատիստ-Անտուան (1733—1817)— ֆրանսիացի գրականագետ և պահպանողական-միապետական ուղղության հրապարակախոս։ Նապոլեոնի կողմից նշանակվել է ֆրանսիական ակադեմիայի քարտուղարի պաշտոնում։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո դարձել է մոլի ռոյալիստ։

էջ 185. Հեղափոխության ժամանակ բռնագրավված, բայց չվաճառված հողերը վտարականներին վերադարձնելու մասին օրենքը հրապարակվեց 1814 թվականի դեկտեմբերի 5-ին։ 1825 թվականի ապրիլի 27-ին հրապարակվեց նախկին վտարանդիներից բռնագրավված ու վաճառված հողերի դիմաց նրանց մոտ մեկ միլիարդ ֆրանկ (նրանք ընդամենը ստացան 830 միլիոն ֆրանկ) վճարելու վերաբերյալ օրենքը։

էջ 186. Բերտրան Անրի-Գրասիեն, կոմս (1773—1844)— ֆրանսիական

գեներալ, հանրապետության և կայսրության պատերազմների մասնակից, եղել է Նապոլեոնի համհարզը և հոֆմարշալը։ Ուղեկցել է Նապոլեոնին դեպի Էլբա և Ս. Հեղինե կղզիները։ Հուլիսյան հեղափոխությունից հետո եղել է դեսպատատների պալատի անդամ։

Կոստյուշկո Տադեուշ (1746—1817)— Լեհաստանի 1794 թվականի ազգային ազատագրական ապստամբության առաջնորդ։

էջ 191. Դրուռ, կոմս (1774—1847)— ֆրանսիական գեներալ, Նապոլեոնյան պատերազմների մասնակից. բազմաթիվ ճակատամարտերում եղել է հրետանու հրամանատար։

Կամբրոն Պիեռ-Ժակ-Էտիեն (1770—1842)— ֆրանսիական գեներալ, XVIII դարավերջի և XIX դարասկզբի պատերազմների մասնակից։ Վաթերլոոյում եղել է գվարդիայի զորամասերի հրամանատար և մեծ արիություն է դրսևորել. ծանր վիրավորվել է, գերվել ու տարվել Անգլիա։

էջ 195. Լաբեդուայեր Շառլ-Անժելիկ, կոմս (1786—1815)— ֆրանսիական ազա, Նապոլեոնյան պատերազմների մասնակից։ Հարյուր օրվա ժամանակ անցել է Նապոլեոնի կողմը, մարտնչել Վաթերլոոյում։ Պերերի պալատում հանդես է եկել Բուրբոնների ռեստավրացիայի դեմ։ Դատապարտվել է մահապատժի և գնդակահարվել։

էջ 196. Մարշան Ժան-Գաբրիել, կոմս (1765—1851)— ֆրանսիական գեներալ, XVIII դարավերջի և XIX դարասկզբի պատերազմների մասնակից։ Մեծ ակտիվություն է դրսևորել 1814 թվականին կոալիցիայի զորքերի ներխուժման դեմ մղվող պայքարում։ Հարյուր օրվա ժամանակ հրաժարվել է անցնել Նապոլեոնի կողմը։

էջ 204. Դեկազ Էլի, դուքս (1790—1880)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Ծառայել է հոլանդական թագավոր Լուի Բոնապարտի արքունիքում։ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը և դարձել Լյուդովիկոս XVIII թագավորի սիրեցյալը։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո եղել է ոստիկանության պրեֆեկտ, մի որոշ ժամանակ՝ ներքին գործերի մինիստր. պատկանել է սահմանադրական ռոյալիստների կուսակցությանը։ 1820 թվականի սկզբին ուլտրառոյալիստների պահանջով հանվել է կաբինետի ղեկավարի պաշտոնից և դեսպան նշանակվել Անգլիայում։

ՀՈՒՇԵՐ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՄԱՍԻՆ

էջ 208. Սալվանդի Աշիլ, կոմս (1795—1856)—ֆրանսիական քաղաքական գործիչ, գրող և հրապարակախոս։ 1816 թվականին տպագրել է օկուպանտների դեմ ուղղված «Կոալիցիան և Ֆրանսիան» պամֆլետը։ 1824 թվականին լույս տեսած Սալվանդիի «Դոն Այոնսոն կամ Իսպանիան. ժամանակակից պատմություն» վեպն ազգակալի հաջողություն ունեցավ։

Մարշանդի Լուի-Անտուան (1782—1826)— ֆրանսիական քաղաքական գործիչ և գրականագետ։ Գրել է ութ հատորանոց «Բանաստեղծական Գաղիա» աշխատությունը, որի մեջ հոսում ոճով վերապատմել է Ֆրանսիայի պատմության որոշ իրադարձություններ։

Միշել դը Մոնտեն (1533—1592)— ֆրանսիացի փիլիսոփա, հանրահայտ

«Փորձերի» հեղինակը։ Մոնտենը հրապարակել է նրա՝ «1580 և 1581 թվականներին Եվեյցարիայի ու Գերմանիայի վրայով դեպի Իտալիա կատարած ուղևորության օրագիր» աշխատությամբ։

Գրեգիդեետ դը Բրոսս Շառլ (1709—1777)— ֆրանսիացի իրավաբան և գրող, իտալական ուղևորություններին նվիրված՝ «Նամակներ Իտալիայի մասին» գրքի և «Նամակներ Հերկուլանումի մասին» ստեղծագործության հեղինակ։

էջ 209. Ամոնտե Պիեռ-Էդուարդ (1762—1826)— ֆրանսիացի պատմաբան և գրականագետ։ Իմիջիայլոց, նրա գրչին են պատկանում Նապոլեոնի թագադրությանը, ֆրանսիական գինվորների կյանքին և Հռոմի թագավորի ծննդին նվիրված մի շարք գրքույկներ։

էջ 214. Թալեյրանի... նոթերը հրապարակվել են միայն 1891—1892 թվականներին։

էջ 216. Կոնդրեգացիա— հնատրիմական-միապետական ուղղության կիսաաշխարհիկ կազմակերպություն, որը Բուրբոնների ռեստավրացիայի ժամանակաշրջանում մեծ ազդեցություն ուներ արքունիքում ու կառավարության մեջ։ Կոնդրեգացիայի գլուխ էին կանգնած հիզվիտական ուխտի անդամներ և նախկին վտարանդի ազնվականներ։

էջ 218. Մարկիզուհի դը Պոմպադուր (Ժաննա-Անտուանետա-Պուասսոն), (1721—1764)— Լյուդովիկոս XV-ի սիրուհին, որը հսկայական ազդեցություն ուներ պետական գործերում, իր քմահաճույքով նշանակում և հանում էր մինիստրներին։ Հետագայում «Պոմպադուր» բառը դարձավ անզուսպ կամայականության հոմանիշ։

Դուքս դը Ռիշելյո Արման (1696—1788)— ֆրանսիական քաղաքական գործիչ, որը հայտնի էր իր անբարոյականությամբ։

էջ 219. ...մի քանի հատոր էլզևիրյան հրատարակություններ...— այսինքն՝ «Էլզևիր» տառատեսակով տպագրված

էջ 220. Միրաբո Օնորե-Գաբրիել Ռիքետի, կոմս (1749—1791)— ֆրանսիական հեղափոխության նշանավոր գործիչ, «երրորդ դասի» ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը 1789 թվականի Գլխավոր շտաբներում, հիանալի հռետոր։ Հետագայում ծախվեց արքունիքին, որը վճարեց նրա պարտքերը։

էջ 222. Պիտ Ուիլյամ (1759—1806)— անգլիական պետական գործիչ, երկու անգամ եղել է կառավարության գլուխ։ Մոլի ռեակցիոներ և ֆրանսիական հեղափոխության թշնամի։ Եղել է տերությունների հակաֆրանսիական կոալիցիայի գլխավոր կազմակերպիչներից մեկը։ Նրա օրոք Ֆրանսիան պատերազմի մեջ մտավ Անգլիայի դեմ (1793 թվականի փետրվարի 1-ին)։ Հետագայում Պիտը վճռական պայքար մղեց նաև Նապոլեոնյան զավթողական քաղաքականության դեմ։

Ֆրիդրիխ Սաքսեն-Կոբուրգի դուքս (1737—1815)— ավստրիական ֆելդմարշալ։ Մի ժամանակ եղել է հակաֆրանսիական կոալիցիայի զորքերի հրամանատար։

էջ 223. Դեգն Լուի-Շառլ (1768—1800)— ֆրանսիական գեներալ, եգիպտական արշավանքի մասնակից։ Սպանվել է Մարենգոյի ճակատամարտում։

էջ 228. Դեղապետ Բուտաֆոկո (1730—1806)— ծագումով կորսիկացի.

եղել է Կորսիկայի ներկայացուցիչը 1789 թվականի Գլխավոր շտաբներում։ Ֆրանսիայի հետ Կորսիկայի միացման ջատագով։ Պաոլին Բուոնաֆոկոյին դավաճան էր հայտարարել։

էջ 229. Կոնտի Լուի-Ֆրանսուա (1717—1777)— ֆրանսիական արքայազն Բուրբոնների դինաստիայից, Իտալիայում, Գերմանիայում, Բելգիայում Լյուդովիկոս XV-ի մղած պատերազմների մասնակից։ Լյուդովիկոս XVI-ի օրոք եղել է պալատական վերնախավի առաջնորդներից մեկը և դեմ է արտահայտվել ամեն տեսակ բարեփոխության։

էջ 232. Պլուտարքոս— մ. թ. I—II դարերի հույն գրող, անցյալի հերոսական անձնավորությունների վարքագրությունների հեղինակ։ Պորցիա ուտիկցի Կատոնի դուստրը, Բրուտոս-կրտսերի կինը՝ խիզախ հռոմեուհու կերպար, որը պատրաստ էր հարկ եղած դեպքում բաժանել ամուսնու ճակատագիրը։ Կոռնելիա— Սցիպիոն Աֆրիկացու դուստրը, Տիբերիոս և Կայոս Գրակքոսների մայրը։

Ռոլան Մանոն-ժաննա (1754—1793)— մինիստր Ռոլանի կինը, ազդեցիկ դեր է խաղացել ժիրոնդիստների շրջանում։ Իշխանությունը յակոբինյանների ձեռքն անցնելուց հետո մահապատժի է ենթարկվել։

Սֆորցա Ֆրանչեսկո-Կոնդոտիեր, փոխնիփոխ ծառայել է Միլանին, Ֆլորենցիային, Վենետիկին. 1450 թվականին տիրել է Միլանին, որտեղ կառավարել է 15 տարի։ Նիկոլո Պիչչինինոն (1388—1444) սկզբում ծառայել է Միլանին, ապա՝ Ֆլորենցիային, հետո նորից անցել Միլանի կողմը։ Կոնդոտիեր Կաստրուչչո-Կաստրականին (1281—1328) ծառայել է Անգլիայի ու Ֆրանսիայի զորքերում։ Հետագայում դարձել է Լուկկայի կառավարիչ։

Վիլլանի Ջովաննի (1275—1348)— իտալացի պատմաբան, հեղինակը «Ֆլորենցիայի պատմությունը» հայտնի ժամանակագրության, որը որպես պատմական աղբյուր մեծ արժեք է ներկայացնում։

Մուրատորի Լոդովիկո-Անտոնիո (1672—1750)— նշանավոր պատմագիր, Միլանի գրադարանի գրադարանավար, Իտալիայի պատմության վերաբերյալ ժամանակագրությունների և նյութերի հսկայածավալ ժողովածուի հրատարակիչ։

էջ 236. Ֆեշ ժոզեֆ (1763—1839)— Նապոլեոն I-ի քեռին, արքեպիսկոպոս և կարդինալ։ Տպագրվել է Բուրբոնների ռեստավրացիայից հետո։

էջ 237. Դը Սեմոնվիլ Շառլ-Լուի, մարկիզ (1754—1839)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Հեղափոխության ժամանակ դիվանագիտական հանձնարարություններ է կատարել։ Կայսրության օրոք ստացել է սենատորի կոչում։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո նշանակվել է պերերի պալատի քարտուղար։

էջ 241. Բեյլ Պիեռ (1647—1706)— ֆրանսիացի հայտնի պատմաբան և քննադատ, ֆրանսիական լուսավորական փիլիսոփայության ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը։

Հելվեցիուս Կլոդ-Ադրիեն (1715—1771)— ֆրանսիացի հայտնի մատերիալիստ-փիլիսոփա։

էջ 242. Լոկրե ժան-Գիյոմ, բարոն դը Բուասսի (1758—1840)— ֆրանսիացի նշանավոր իրավաբան։ Նապոլեոնի օրոք եղել է Պետական խորհրդի քարտուղար, մասնակցել է նոր օրենսգրքերի մշակմանը։

էջ 243. Դելոլմ ժան-Լուի (1740—1806)— ժնևյան փաստաբան, անգլիական պառլամենտարիզմի երկրպագու, «Անգլիայի սահմանադրությունը» գրքի հեղինակ։

Բեկկարիա Ջեզարե, մարկիզ (1738—1794)— իտալացի նշանավոր իրավաբան և հրապարակախոս, «Հանցագործությունների և պատիժների մասին» (1764) հայտնի տրակտատի հեղինակ, որտեղ արտահայտվում է խոշտանգումների և մահապատժի դեմ։

Բենթամ Երեմիա (1748—1832)— անգլիացի փիլիսոփա և իրավաբան, որը տվել է բարոյականության վերաբերյալ օգտապաշտական ուսմունքի տեսական հիմնավորումը (ուսմունք գործնական օգտավետության մասին՝ որպես բարոյականության հիմքի)։

էջ 245. Ստենդալի պնդումը, թե իբր Նապոլեոնը չի իմացել ո՛չ ուղղագրություն, ո՛չ լատիներեն, ո՛չ էլ պատմություն, հերքում են նորագույն ուսումնասիրությունները։

Կոնդե Լուի ժոզեֆ, արքայազն (1736—1818), հեղափոխության ժամանակ եղել է 1792 թվականին Ֆրանսիա ներխուժած (ավստրո-պրուսական զորքերի հետ) վտարանդի ազնվականների շտաբների հրամանատարը։

էջ 248. Կարոն Օգյուստեն-ժոզեֆ (1774—1822)— ֆրանսիական բանակի գնդապետ, նապոլեոնյան պատերազմների մասնակից։ Գնդակահարվել է Բուրբոնների կառավարության դեմ ուղղված դավադրություններին մասնակցելու համար։

Ֆոշե Սեզար և Կոնստանտեն եղբայրներ— ֆրանսիական բանակի գեներալներ։ 1815 թվականին, Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո, գնդակահարվել են ռազմական դատարանի դատավճռով։

Կոմս դ'Արտուա (1757—1836)— ֆրանսիական արքայազն՝ Բուրբոնների դինաստիայից, Լյուդովիկոս XVI-ի և Լյուդովիկոս XVIII-ի եղբայրը։ Մոլի հեղադիմական. Բաստիլի անկումից երկու օր հետո փախել է Ֆրանսիայից և գլխավորել ազնվականական վտարանդիությունը. եղել է հեղափոխական Ֆրանսիայի դեմ ուղղված ռազմական ինտերվենցիայի կազմակերպիչներից մեկը։ 1824 թվականին, Լյուդովիկոս XVIII-ի մահից հետո, դարձել է թագավոր՝ Կարլոս X անունով։ 1830 թվականի հուլիսին Կարլոս X-ի հեղադիմական քաղաքականությունը հանգեցրեց հեղափոխության, որը վերջ տվեց Բուրբոնների միապետությանը և Կարլոս X-ին ստիպեց փախչելու արտասահման։

Ֆոշ-Բորել— Լյուդովիկոս XVIII-ի գաղտնի քաղաքական գործակալը, հուշագրությունների հեղինակ, որոնք հրապարակվել են 1830 թվականին 4 հատորով։

Պերտրան դը Մոլվիլ Անտուան-Ֆրանսուա, մարկիզ (1744—1818)— ֆրանսիական քաղաքական գործիչ, կառավարական կարևոր պաշտոն է գրավել Լյուդովիկոս XVI-ի օրոք, հեղինակ է նրա թագավորության վերջին տարիների մասին գրված հուշագրությունների և ծայրահեղ հեղադիմական ոգով շարադրված «Ֆրանսիական հեղափոխության պատմության»։

էջ 249. Բրաունշվայգի դքսի՝ ավստրո-պրուսական զորքերի գլխավոր հրամանատարի մանիֆեստը հրապարակվեց 1792 թվականի հուլիսի 25-ին

Կոբլենցում գտնվող նրա գլխավոր բնակատեղում։ Այդ մանիֆեստում Բրաունշվայգի դուքսը Ֆրանսիական ժողովրդից պահանջում էր լիակատար հնազանդություն թագավորական իշխանությանը և սպառնում դիմադրության նկատմամբ ամենախիստ միջոցներով ավերել Փարիզը։ Բրաունշվայգի դուքսը հույս ուներ իր մանիֆեստով ահաբեկել Փարիզի բնակչության հեղափոխական զանգվածներին, բայց արդյունքն այլ եղավ։ Հենց որ Փարիզում մանիֆեստը հայտնի դարձավ, զայրույթի վրդովմունք առաջացրեց մասսաների մեջ։ 1792 թվականի օգոստոսի 10-ին բռնկվեց ժողովրդական ապստամբություն, որն ավարտվեց թագավորական պալատի գրավումով և հանգեցրեց միապետության տապալմանը։

Էջ 250. ...երբ 1794 թվականին, Տուլոնի պաշարման ժամանակ...— Ստենդալը սխալմամբ Տուլոնի պաշարումը վերագրում է 1794 թվականին։ Իրականում հիշյալ ճակատամարտը տեղի է ունեցել 1793 թվականի դեկտեմբերի 17-ին։

Ռու և Բյուշեզ— «Ֆրանսիական հեղափոխության պառլամենտական պատմությունը։ Ազգային ժողովների օրագիր 1789 թ. մինչև 1815 թ.» (Փարիզ, 1834—1838, 40 հատոր) փաստագրական հրատարակության հեղինակներ։

Էջ 251. Պիյեր Կլոդ-Անտուան (1763—1832), հայտնի է Կոտ դ'Օրի Պրիյոր անունով— ֆրանսիական հեղափոխության գործիչ, Օրլեանցի ժողովի անդամ, իսկ այնուհետև՝ Կոնվենտի անդամ։ Լինելով Հանրության փրկության կոմիտեի անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմական գործերի ղեկավարությանը։

Կոտ դ'Օրի Պրիյորին հարկ է տարբերել Մառնի Պրիյորից, որը նույնպես Կոնվենտի և Հանրության փրկության կոմիտեի անդամ էր։

Դյուբուա-Կրանսե Էդմոն-Լուի-Ալեքսիս (1747—1814)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ, հարել է յակոբինյաններին։ Իրականացրել է հեղափոխական բանակի բարեփոխություն, որն արտահայտվել է կանոնավոր զորամասերը կամավորների ջոկատների հետ միավորելու մեջ։

Էջ 253. Ռոլեն Շառլ (1661—1741)— ֆրանսիացի պատմաբան և մանկավարժ, բազմահատոր «Հին պատմություն» և «Հռոմի պատմություն» գրքերի հեղինակ։

Էջ 256. Արբա դը Վերտ (1655—1735)— «Հեղափոխությունների պատմությունը Պորտուգալիայում» և «Հեղափոխությունների պատմությունը Շվեդիայում» գրքերի հեղինակ։

Էջ 257. 1794 թվականի հունվարի 14-ին Նապոլեոն Բոնապարտն ստացավ բրիգադային գեներալի աստիճան։

Էջ 258. Ռոբեսպիեռ-կրտսեր Օգյուստեն-Բոն-Ժոզեֆ (1763—1794)— յակոբինյանների առաջնորդ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի եղբայրն ու գինակիցը։ 1793—1794 թվականներին բազմիցս ուղևորվել է գավառներ և ռազմաճակատ՝ որպես Կոնվենտի կոմիսար։ Տուլոնի պաշարման ժամանակ մտերմացել է Նապոլեոն Բոնապարտի հետ և նպաստել նրա առաջքաշմանը։ Տերմիդորի 9-ի հեղաշրջումից հետո մահապատժի է ենթարկվել իր եղբոր հետ։

Ռիկոր Ժան-Ֆրանսուա (1760—1820)— ֆրանսիական քաղաքական գործիչ, Կոնվենտի անդամ։ Եղել է Տուլոնը պաշարած բանակի կոմիսարներից մեկը, բանտարկվել է Բրյումֆի ապստամբության գործով, բայց արդարացվել է։ Բուրբոնների երկրորդ ռեստավրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։

Էջ 260. Նելսոն Հորացիո (1758—1805)— անգլիական ծովակալ, հանրապետական, իսկ ապա նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ Անգլիայի մղած պատերազմների մասնակից։ 1798 թվականին Աբուկիրի ծովախորշում ոչնչացրել է ֆրանսիական այն նավատորմիղը, որը Նապոլեոնի բանակին հասցրել էր Եգիպտոս։ 1805 թվականի հոկտեմբերի 21-ին Տրաֆալգարի հրվանդանամ Նելսոնը ջախջախեց ֆրանսո-իսպանական նավատորմիղը, բայց ինքն էլ զոհվեց ճակատամարտում։ Այդ ճակատամարտը նապոլեոնին ստիպեց վերջնականապես հրաժարվել Անգլիայում դեսանտ իջեցնելու պլաններից։

Էջ 262. Ալբիտ Անտուան-Լուի (1750—1812)— ֆրանսիական քաղաքական գործիչ, Օրլեանցի ժողովի և Կոնվենտի անդամ, Կոմիտարի պարտականություններ է կատարել գավառներում։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո ծառայել է ռազմական մինիստրությունում։ Զոհվել է 1812 թվականի Ռուսական արշավանքի ժամանակ։

Սալիշետի Քրիստոֆ (1757—1809)— ֆրանսիական քաղաքական գործիչ, կորսիկացի։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Եղել է Կոնվենտի կոմիսարներից մեկը Տուլոնը պաշարած բանակում, նպաստել է Նապոլեոնի առաջքաշմանը։ 1806 թվականից մինչև իր մահը եղել է Նեապոլի թագավոր Ժոզեֆ Բոնապարտի ռազմիականության մինիստրը և ռազմական մինիստրը. Մյուրատի օրոք պաշտոնանկ է արվել։

Էջ 267. Դասպարեն Բոմա-Օգյուստեն (1750—1793)— ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Օրլեանցի ժողովի և Կոնվենտի անդամ, Կոնվենտի կոմիսարներից մեկը Վանդեայում և ապա՝ Տուլոնը պաշարած բանակում։

Սեբաստյանի Օրաս դը լա Պորտա, կոմս (1775—1851)— ֆրանսիական գեներալ, կորսիկացի։ Մասնակցել է 1796—1797 թվականների Իտալական արշավանքին։ Որոշ ժամանակ եղել է դեսպան Թուրքիայում և ղեկավարել Կոստանդնուպոլսի պաշտպանությունն ընդդեմ անգլիական նավատորմիղի։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխությունից հետո եղել է արտաքին գործերի մինիստր։

Էջ 270. Հուլար Ժան-Նիկոլա (1740—1793)— ֆրանսիական գեներալ։ Հեղափոխական պատերազմների ժամանակ եղել է նախ Մոզելյան բանակի, իսկ հետո Հյուսիսային բանակի հրամանատարը, մի շարք հաղթանակներ է տարել և անգլիացիներին ստիպել վերացնել Դյունկերկի պաշարումը։ Մայնցը հանձնելու համար մահապատժի է ենթարկվել։

Մակդոնալդ Ժակ-Էտիեն-Ժոզեֆ-Ալեքսանդր (1765—1840)— ֆրանսիական գեներալ։ 1809 թվականին Նապոլեոնից ստացել է մարշալի կոչում և Տարենտի դքսի տիտղոս։ Բուրբոնների ռեստավրացիայից հետո նշանակվել է պեր։

Ուդինո Շառլ-Նիկոլա (1767—1847)— ֆրանսիական գեներալ։ Մասնակցել է Նապոլեոնյան բազմաթիվ արշավանքներին։ 1809 թվականին Նապոլեոնից ստացել է մարշալի կոչում և Ռեջիոյի դքսի տիտղոս։ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը։

Դյուպոն (1765—1840)— Ֆրանսիական գեներալ, Նապոլեոնի օրոք ծառայել է Իսպանիայում և անձնատուր եղել Բայլենում։ Դրա համար դատվել է ու բանտարկվել։ Բուրբոնների restauրացիայից հետո նշանակվել է ռազմական մինիստր. այդ պաշտոնում ծայրահեղ հաճկատարություն է դրսևորել ազնվականական հին վերնախավի և նախկին վտարանդիների առջև։

էջ 271. Լեռուռներ Շառլ-Լուի-Ֆրանսուա-Օնորե (1751—1817)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Օրլեանցիր ժողովի և Կոնվենտի անդամ, Դիրեկտորիայի կառավարության անդամ և մի որոշ ժամանակ՝ նախագահ։ Նապոլեոնի օրոք եղել է պրեֆեկտ և Հաշվային պալատի խորհրդատու։ Բուրբոնների երկրորդ restauրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։

էջ 272. Խոսելով մեծ խելքի տեր մի տիկնոջ մասին, Ստենդալը նկատի ունի մարշալ Ժյունոյի կնոջը՝ դքսուհի դ'Աբրանտեսին, Նապոլեոնի կառավարման վերաբերյալ հուշագրությունների հեղինակին։

էջ 275. «Իր մասին շատ մեծ կարծիքի տեր և անճոխատալի տգեղ մի կին»՝ Բուրիենի կինը։

Բուրիեն Լուի-Անտուան (1769—1832) — Ֆրանսիական քաղաքական գործիչ և գիվանագետ։ Որոշ ժամանակ եղել է Նապոլեոնի քարտուղարը, ապա՝ Ֆրանսիայի գիվանագիտական ներկայացուցիչը Համբուրգում։ Բուրբոնների restauրացիայից հետո նշանակվել է ոստիկանության պրեֆեկտ։

էջ 277. Վանդեմիերի 13 (1795 թվականի հոկտեմբերի 5)— միապետականների կողմից Փարիզում բարձրացված հակահեղափոխական խռովություն. ճնշվել է Կոնվենտի զորքերի կողմից, որոնց ղեկավարում էր Նապոլեոնը։

էջ 279. Պոնտեկուլան Լուի-Գուստավ, կոմս դը Դուլսե (1764—1853)— չափավոր լիբերալ ուղղության ֆրանսիական քաղաքական գործիչ։ Կոնվենտում հարել է ժիրոնդիստներին։ Նապոլեոնի օրոք եղել է սենատոր։ 1814 թվականի ապրիլին դավաճանել է Նապոլեոնին։

էջ 284. Պիշեգրյու Շառլ (1761—1804)— Ֆրանսիական գեներալ և քաղաքական գործիչ։ Դավաճանել է Ֆրանսիային և գաղտնի հարաբերություններ մեջ մտել ազնվականական վտարանդիության ներկայացուցիչների հետ։ Ֆրյուկտիդորի 18-ի (1797 թվականի սեպտեմբերի 4-ի) հեղաշրջումից հետո, որն ուղղված էր միապետականների դեմ, աքսորվեց Կայեննա. այնտեղից փախել ու միացել է վտարանդիներին։ 1804 թվականին մասնակցել է Նապոլեոնի դեմ ուղղված դավադրությանը. այդ նպատակով ծածուկ ժամանել է Փարիզ, բայց բռնվել է ոստիկանության կողմից և շուտով բանտախցում գտել են մահացած վիճակում։

Բիլիո-Վարեն Ժան-Նիկոլա (1756—1819)— Ֆրանսիական քաղաքական գործիչ, եղել է Կոնվենտի անդամ։ Մասնակցել է տերմիդորի 9-ի հեղաշրջմանը։ Հակահեղափոխության հաղթանակից հետո աքսորվել է Գվիանա։

Բարեր Բերտրան (1755—1841)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Հարել է յակոբինյաններին, բայց հետո հեռացել է Թերմիդորից։ Նապոլեոնի գաղտնի խորհրդական՝ արտաքին քաղաքականության գործերով։ Restauրացիայից հետո արտաքսվել է։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխությունից հետո վերադարձել է Ֆրանսիա։

Վադիե Մարկոս (1736—1828)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Տերմիդորի 9-ի հեղաշրջումից հետո ենթարկվել է հալածանքների. որպես Բարյոֆի դավադրության մասնակից, չորս տարի բանտ է նստել։ Բուրբոնների restauրացիայից հետո արտաքսվել է Ֆրանսիայից։

էջ 286. Ներիդան Ռիչարդ Բրինսլի (1751—1816)— անգլիացի անվանի գրող, դրամատուրգ և քաղաքական գործիչ։ Պատկանել է վիգերի («չափավոր լիբերալների») կուսակցությանը և եղել է իր ժամանակի ականավոր պատգամավորական հռետորներից մեկը։

Այստեղ և այնուհետև Ստենդալն իրադարձությունների մասին պատմում է ամենեին ոչ այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ որ դրանք տեղի են ունեցել։

էջ 287. Թուրգան Ժան-Բատիստ (1762—1833)— Ֆրանսիական գեներալ։ 1794 թվականի հունիսի 26-ին Ֆլերյուսում փայլուն հաղթանակ է տարել ավստրիացիների դեմ։ Նապոլեոնի օրոք ստացել է մարշալի կոչում և կոմսի տիտղոս։ 1830 թվականի հուլիսյան հեղափոխությունից հետո եղել է արտաքին գործերի մինիստր։

Մերել Ժան-Բատիստ (1747—1807)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ. հարել է յակոբինյաններին, բայց հետո հեռացել է նրանցից։ Եղել է Դիրեկտորիայի կառավարության անդամ։

Լարեվիեր-Լեպո Լուի-Մարի (1753—1824)— Ֆրանսիացի գիտնական (բուսաբան) և քաղաքական գործիչ։ Եղել է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի անդամ։ Հարել է ժիրոնդիստներին։ Եղել է Դիրեկտորիայի անդամ։ Կայսրության հռչակումից հետո հրաժարվել է երդում տալ Նապոլեոնին և վտարվել է Գիտությունների ակադեմիայից։

էջ 288. Պերինիոն Դոմինիկ, կոմս (1754—1818)— Ֆրանսիական գեներալ, հեղափոխական պատերազմների մասնակից։ Նապոլեոնից ստացել է մարշալի կոչում և կոմսի տիտղոս։ 1814 թվականին անցել է Բուրբոնների կողմը։

Մոնսե Ռոզ-Ադրիան-Ժանեն, կոմս (1754—1842)— Ֆրանսիական գեներալ, հեղափոխական և նապոլեոնյան պատերազմների մասնակից։ 1801 թվականին նշանակվել է ժանդարմերիայի առաջին տեսուչ։ 1804 թվականին ստացել է մարշալի կոչում։ Հարյուր օրվա ժամանակ անցել է Նապոլեոնի կողմը։

Ժան-Բոն-Սենտ-Անդրե (1749—1813)— Ֆրանսիական քաղաքական գործիչ։ Նշանակվել է ժանդարմերիայի առաջին տեսուչ։ 1804 թվականին ստացել է Ֆրանսիայի ռազմածովային ուժերի ամրապնդման աշխատանքները։ Նապոլեոնի օրոք եղել է Մայնցի պրեֆեկտ։

էջ 292. Լակրետել-կրոսեր Ժան-Շառլ-Դոմինիկ (1766—1855)— Ֆրանսիացի պատմաբան և հրապարակախոս, Ֆրանսիական հեղափոխության, կոնսուլության և կայսրության մասին սահմանադրական-միապետական ոգով գրված մի շարք աշխատությունների հեղինակ։

էջ 303. Վուրմզեր Դագոբեր-Չիզմունդ, կոմս (1724—1797)— ավստրիական ֆելդմարշալ։ 1792—1796 թվականներին եղել է Ֆրանսիայի դեմ գործող Հանոսյան բանակի հրամանատարը։ Նապոլեոնի Իտալիական արշավանքի ժամանակ երեք անգամ չախչախվել է ֆրանսիական զորքերի կողմից, զրկվել

հրամանատարությունից և նշանակվել Հունգարիայի գեներալ-նահանգապետ։

Ակիլերկ Վիկտոր-Էմանուել (1772—1802)— ֆրանսիական գեներալ, հեղափոխական պատերազմների մասնակից, այնքի է ընկել Տուլոնի գրավման ժամանակ։ Մասնակցել է Նապոլեոնի Իտալիան արշավանքին։ Մտերմանալով Նապոլեոնի հետ (ամուսնացել է նրա քույր Պոլինի հետ), մասնակցել է բրյումերի 18-ի հեղաշրջմանը։ Ֆրանսիական էքսպեդիցիոն զորքերի գլուխ անցած, գրավել է Սան-Դոմինգո կղզին, որտեղ դաժան հաշվեհարդար է տեսել ֆրանսիական զավթիչների դեմ կռվող նեգրական բնակչության հետ։ Այնտեղ էլ մեռել է տենդից, որից և ոչնչացել է ֆրանսիական բանակի մեծ մասը։

էջ 312. Վերրի Պիետրո, կոմս (1728—1797)— իտալացի նշանավոր անտեսագետ և քաղաքական գործիչ. մի շարք վարչական պաշտոններ է գրավել Լոմբարդիայում և աշակցել այնտեղ ֆինանսական որոշ բարեփոխություններ անցկացնելուն։

Կեյլերման Ֆրանսուա-Քրիստոֆ (1735—1825)— ֆրանսիական գեներալ։ Հեղափոխության ժամանակ եղել է այն բանակի հրամանատարը, որն ավստրիական զորքերին պարտության մատնեց Վալմիում (1792 թվականի սեպտեմբերի 20-ին) և կասեցրեց նրանց առաջխաղացումը դեպի Փարիզ։ Բրյումերի 18-ի հեղաշրջումից հետո դարձել է սենատոր, նշանակվել հեծելազորի տեսուչ. 1804 թվականին ստացել է մարշալի կոչում և Վալմիի դքսի տիտղոս։ Կայսրության ժամանակ եղել է պահեստի զորքերի հրամանատար։

էջ 315. Պաերիեի Ջուզեպպե (1729—1799)— իտալացի երկիմաստաբան-բանաստեղծ, որը մերկացրել է Միլանի վերնախավի ցոփակեցությունը և կաթոլիկական հոգևորականության հեգնամիտությունը։

էջ 316. Մանձոնի Ալեսանդրո (1784—1873)— իտալացի բանաստեղծ ու վիպասան, լիբերալ ռոմանտիզմի ներկայացուցիչ, Իտալիայի ազգային-ազատագրական շարժման մասնակից։

էջ 327. Սիցիլիական իրիկնային ժամերգություն— ազգային ապստամբություն Սիցիլիայում ֆրանսիական տիրապետության դեմ, որը բռնկվել է Պալերմոյում 1282 թվականի մարտի 30-ին։ Այն վերջացավ նրանով, որ ֆրանսիացիների մեծ մասը ջախջախվեց, մյուս մասը փախավ կղզուց։

էջ 329. Վիլհելմ III Օրանցի (1650—1702)— Հոլանդական հանրապետության շտատհալդեր (տիրակալ), իսկ 1689 թվականից՝ Անգլիայի թագավոր, գահի կոչված, այսպես ասած, 1688 թվականի «փառապանծ հեղափոխության» ժամանակ։ Հակոբ II Ստյուարտի տապալումը և Վիլհելմ III-ի գահակալումը նշանակում էին պարլամենտական ռեժիմի ամրապնդում Անգլիայում։

էջ 331. Բասոմպիեր Ֆրանսուա, բարոն (1579—1646)— ֆրանսիական մարշալ։ Թողել է հուշագրություններ, որոնք լույս են տեսել 1665 թվականին։

Բեմբո Պիետրո (1470—1547)— իտալացի կարդինալ և գրող։

Արետինո Պիետրո (1492—1556)— իտալացի բանաստեղծ, սիրային սոնետների և մի քանի կատակերգությունների հեղինակ։

էջ 332. Բուլլա (պապական կոնդակ) 1713 թվականի Unigenitus-ը երկարատև կատաղի երկպառակությունների առարկա դարձավ յանսենականների և ճիզվիտների միջև։

Իտալացի անվանի դրամատուրգ Կառլո Գոլդոնիի (1707—1793) «Հուշագրությունները» երևան եկան 1784—1787 թվականներին։ 1826 թվականին սկսվել են տպագրվել հայտնի արկածախնդիր Կազանովայի (1725—1798) հուշագրությունները։ Ինչ վերաբերում է իտալացի դրամատուրգ կոմս Պիետրո Դոցցիին (1720—1806), ապա Ստենդալը, քսա երևույթին, նրան չփոթել է Կառլո Դոցցիի՝ կատակերգությունների և 1797 թվականին հրապարակված նշանավոր հուշագրությունների հեղինակի հետ։

Տիկին դ'Էպինե Լուիզ-Ֆլորանս (1726—1783)— ֆրանսիացի գրող, գրական սալոնի տիրուհի, Ժ.-Ժ. Ռուսսոյի հովանավորուհին։

էջ 339. Կամբրեյան լիգա— գերմանական կայսր Մաքսիմիլիան I-ի, պապ Հուլիոս II-ի, ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XII-ի և իսպանական թագավոր Ֆերդինանդ Կաթոլիկականի՝ 1508 թվականի դեկտեմբերի 10-ին Կամբրե քաղաքում կնքված դաշինքը Վենետիկի հանրապետության դեմ պայքարելու համար։ Պատերազմը դաշնակիցների համար հաջող սկսվեց, բայց նրանց միջև եղած երկպառակությունները շուտով հանգեցրին լիգայի քայքայմանը։

էջ 340. Դրո Անտուան-Ժան (1771—1835)— ֆրանսիացի նշանավոր գեղանկարիչ, Դավիդի աշակերտը։ Ստեղծել է Նապոլեոնյան պատերազմների առանձին դրվագները պատկերող նկարների շարք. այդ նկարներում իդեալականացված են Նապոլեոնը և նրա բանակը։

էջ 350. Քազանովանց Էժեն Սավոյցի (1663—1736)— նշանավոր զորավար և դիվանագետ, Ավստրիական կայսրության ֆելդմարշալ։ Սրընթաց հարձակման տակտիկայի կողմնակից։ Էժեն Սավոյցու հաղթանակներից մեկը ձեռք է բերվել 1683 թվականին Վիեննայի մոտ թուրքերի դեմ մղված ճակատամարտում։

էջ 354. Մյուրատ Ժոաշեն (1767—1815)— ֆրանսիական գեներալ։ Մտերմանալով Նապոլեոնի հետ և ամուսնանալով նրա քույր Կարոլինի հետ, մասնակցել է բրյումերի 18-ի հեղաշրջմանը։ Կայսրության օրոք ստացել է մարշալի կոչում. 1808 թվականից մինչև 1814 թվականը եղել է Նեապոլի թագավորը, գլխավորել է Նապոլեոնի բանակի հեծելազորը։ 1815 թվականին Նեապոլում նորից իշխանության տիրանալու փորձ անելու ժամանակ բռնվել է ու գնդակահարվել։

էջ 355. Ֆրիդրիխ — Նկատի է առնվում պրուսական թագավոր Ֆրիդրիխ II-ը (1740—1786)։

էջ 360. Ապոստոլի Ֆրանչեսկո— վենետիկյան քաղաքական գործիչ. 1799 թվականի ռեակցիայի ժամանակ կալանավորվել է ու արտաքսվել։ Ապրել է Հունգարիայում։ Վերադառնալուց հետո լույս է ընծայել մի անստորագիր գրքույկ, որի մեջ պատմել է իրեն բախտակից ընկերների տառապանքների մասին։

Մորոզինի Ֆրանչեսկո (1618—1694)— վենետիկյան զոժ, որն անուն է հանել իր ռազմական ձիրքերով։

Դանդոլո— մի քանի զոժեր տված վենետիկյան ընտանիք։

Ալվիսանո Բարթոլոմեո— վենետիկյան զորավար։

էջ 362. Յանիկուլ— այն յոթ բլուրներից մեկը, որոնց վրա տեղավորված է Հռոմը (Տիբրի աջ ափին)։

էջ 389. «Հայր Դյուշեն» («Pere Duchesne»)— հեղափոխական-դեմոկրատական լրագիր, որը հրատարակում էր Էբերը. սկսել է լույս տեսնել 1790 թվականին և փակվել Էբերի մահապատժից հետո՝ 1794 թվականի մարտին։

էջ 391. Թուգուտ Իոհան-Ամեդեյ, բարոն (1734—1818)— ավստրիացի գիվանագետ, արտաքին գործերի մինիստր։ 1801 թվականին ստիպված է եղել պաշտոնաթող լինելու։

էջ 404. Այստեղ Ստենդալը պ-ն Բիոշի է անվանում ֆրանսիացի նկարիչ Դիդիե Բոգեին (1755—1839), որն իր կյանքի մեծ մասն Իտալիայում է անցկացրել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԿՅԱՆՔԸ

Առաջաբան 4

Գլուխ I— Բոնապարտի ծնունդը: Նրա ընտանիքը: Բրիենի կոլեջը: Ռազմական դպրոցը: Նա վերադառնում է Կորսիկա 5

Գլուխ II— Բոնապարտի գործողությունները Կորսիկայում . . . 9

Գլուխ III— Տուլոնի պաշարումը: Բոնապարտը վերադառնում է Փարիզ: Ամուսնությունը Ժոզեֆինայի հետ 10

Գլուխ IV— Իտալական արշավանք 13

Գլուխ V— Բոնապարտը և Վենետիկի հանրապետությունը . . . 15

Գլուխ VI— Բոնապարտը և Դիրեկտորիան 16

Գլուխ VII— Բոնապարտի քաղաքական հայացքները 18

Գլուխ VIII— Բոնապարտի կերպարը 19

Գլուխ IX— Բոնապարտի վերադարձը Ֆրանսիա 21

Գլուխ X— Եգիպտական արշավանք 21

Գլուխ XI— Եգիպտական արշավանք (շարունակություն) . . 22

Գլուխ XII— Եգիպտոսում Բոնապարտի գործողությունների արդարացումը 24

Գլուխ XIII— Եգիպտոսում Բոնապարտի գործողությունների արդարացումը (շարունակություն) 26

Գլուխ XIV— Վերադարձը Ֆրանսիա 28

Գլուխ XV— Ընդունելությունը Ֆրանսիայում 29

Գլուխ XVI— Բոնապարտի հայացքները բրյումերի 18-ի նախօրյակին . 30

Գլուխ XVII— Սիեյես 32

Գլուխ XVIII— Բրյումերի 18 34

Գլուխ XIX— Ֆրանսիայի դրությունը բրյումերի 18-ի նախօրյակին . 36

Գլուխ XX— Բոնապարտի դիկտատուրան 38

Գլուխ XXI— Ֆրանսիայի վերափոխումը 40

Գլուխ XXII— Կոնկորդատ: Նապոլեոնի օրենսգիրքը . . . 41

Գլուխ XXIII— VIII տարվա սահմանադրությունը: Արտաքին քաղաքականությունը 42

Գլուխ XXIV— Դժոխային մեքենան 47

Գլուխ XXV— Պիշեգրյուի դավադրությունը: Կապիտան Ռայի գործը . 48

Գլուխ XXVI— Պիշեգրյուի դավադրությունը (շարունակություն) . . 52
Գլուխ XXVII— Էնգիենի դքսի մահը 54
Գլուխ XXVIII— Էնգիենի դքսի մահը (շարունակություն) . . . 57
Գլուխ XXIX— Էնգիենի դքսի մահը (շարունակություն) . . 58
Գլուխ XXX— Բոնապարտը և Բուրբոնները 60
Գլուխ XXXI— Էնգիենի դքսի մահը (շարունակություն) . . . 61
Գլուխ XXXII— Անգլիա ներխուժելու պլանը 62
Գլուխ XXXIII— Պրուսական կամպանիան 64
Գլուխ XXXIV— Նապոլեոնը և Ալեքսանդր I-ը 66
Գլուխ XXXV— Վագրամի կամպանիան 68
Գլուխ XXXVI— Իսպանիայի մասին 71
Գլուխ XXXVII— Ժամադրություն Բայոնայում 77
Գլուխ XXXVIII— Ժամադրություն Բայոնայում (շարունակություն) . 78
Գլուխ XXXIX— Ապստամբություն Մադրիդում: Կարլոս թագավորի հրաժարականը: Իսպանիայի դրությունը . . . 79
Գլուխ XL— Իսպանիայի նկատմամբ Նապոլեոնի գործողությունների համեմատությունն անգլիացիների գործողությունների հետ Նապոլեոնի նկատմամբ 85
Գլուխ XLI— Բայոնայի ժողովը: Ժոզեֆ Բոնապարտին Իսպանիայի թագավոր հանչելը: Պատերազմը Իսպանիայի դեմ . . . 86
Գլուխ XLII— Պատերազմը Իսպանիայի դեմ (շարունակություն) . 97
Գլուխ XLIII 101
Գլուխ XLIV— Կառավարումը 102
Գլուխ XLV— Բասսանի դուքսը 104
Գլուխ XLVI Դարձյալ կառավարման մասին 105
Գլուխ XLVII— Դարձյալ կառավարման մասին (շարունակություն) . 107
Գլուխ XLVIII— Մինիստրների մասին 109
Գլուխ XLIX— Դարձյալ մինիստրների մասին 111
Գլուխ L— Պատվո լեգիոն 114
Գլուխ LI— Պետական խորհրդի մասին 115
Գլուխ LII— Արմանիֆի մասին 122
Գլուխ LIII— Բանկի մասին 135
Գլուխ LIV— Դարձյալ բանկի մասին 139
Գլուխ LV— Բուսսստանի դեմ ուղղված պատերազմի պլանը . . 140
Գլուխ LVI— Պատերազմը Բուսսստանի դեմ 141
Գլուխ LVII— Նանանը Բուսսստանից 147
Գլուխ LVIII— Լայպցիգ 148
Գլուխ LIX— Ներքին գործեր: Ապստամբություն Հոլանդիայում . . 150
Գլուխ LX— Նապոլեոնի մեծավորների ապաշնորհությունը . . 151
Գլուխ LXI— Ազգային գվարդիայի ստեղծումը: Համընդհանուր հոգեծածություն 153
Գլուխ LXII— Ազգային գվարդիայի զորատեսը Տյուիլրիի պալատի բակում (1814 թվականի հունվարի 24-ին) 155
Գլուխ LXIII— Մտորումներ Փարիզի մասին 156

Գլուխ LXIV— Շատիլիոնի կոնգրեսը 157
Գլուխ LXV— Ֆրանսիական կամպանիան 158
Գլուխ LXVI— Դաշնակիցների հարձակումը Փարիզի վրա . . 159
Գլուխ LXVII— Փարիզի գրավումը 162
Գլուխ LXVIII— Դաշնակիցների մուտքը Փարիզ 163
Գլուխ LXIX— Թալեյրանի բանարկությունները 164
Գլուխ LXX— Կայսեր մինիստրների ապաշնորհությունը . . . 165
Գլուխ LXXI— Զրույցներ իշխան Թալեյրանի մոտ 166
Գլուխ LXXII— Նապոլեոնը ետ է քաշվում Ֆոնտենբլո . . . 168
Գլուխ LXXIII— Մարմոն 169
Գլուխ LXXIV— Նապոլեոնի տապալումը 171
Գլուխ LXXV— Սահմանադրություն: Լյուդովիկոս XVIII-ի մինիստրները 172
Գլուխ LXXVI— Լյուդովիկոս XVIII-ի կառավարության սխալները . 173
Գլուխ LXXVII— Մինիստրների սառարաշրությունը . . . 176
Գլուխ LXXVIII— Խարտիա 177
Գլուխ LXXIX— Խարտիայի խախտումները 178
Գլուխ LXXX— Խարտիայի խախտումները (շարունակություն) . . 181
Գլուխ LXXXI— Խարտիայի խախտումները (շարունակություն) . 182
Գլուխ LXXXII— Վերադարձ հին կարգուկանոնին 183
Գլուխ LXXXIII— Ազգային ուսեցվածքը 184
Գլուխ LXXXIV— Նապոլեոնն էլբա կղզում 186
Գլուխ LXXXV— Վերադարձ էլբա կղզուց 186
Գլուխ LXXXVI— Դատողություն Նապոլեոնի մասին 201
Գլուխ LXXXVII— Եզրափակում 204

ՀՈՒՇԵՐ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՄԱՍԻՆ

Հրատարակչին 208
Ինչո՞ւ եմ ես ընթերցողի մտքերին այդպիսի ընթացք տվել . . 209
Առաջաբան 210
Գլուխ I— Հասարակական կարծիքի վիճակը Ֆրանսիայում 1794 թ.: — Դուրսիկան, նրա բարքերը, նրա պայքարը Ջենովայի և Ֆրանսիայի դեմ:— Զուգաձեռ Պաոլիի և Նապոլեոնի միջև:— Բոնապարտ ընտանիքը:— Պարոնայք դը Մարբյոֆը և դը Նարբոնը:— Նապոլեոնը Բրիենում 221
Գլուխ II— Նապոլեոնը Վալանսում:— Նրա կրթության անբավարարությունը:— Նրա սխալները քաղաքականության մեջ:— Ծառայությունը Օքսոնի կայազորում:— Առաջին գրական փորձը:— Ավինիոնում նա տպագրում է «Ընթրիք Բոկերում» վերնագրով գրքույկը: Ֆրանսիական հեղափոխությունը: Դրան ինչպես են նայում արտասահմանում:— Քաղաքական հուզումներ և խռովություններ երկրի ներսում:— Կոնվենտի եռանդը:— Նապոլեոնն ազգային գվարդիայի գումարտակի

պետ Կորսիկայում:— Նա հրետանու պետի կոչումով ժամանում է Տուլոնի տակ գործող բանակը 239
Գլուխ III— Իտալական բանակի բրիգադային գեներալ Նապոլեոնը կարևոր հանձնարարությամբ ուղևորվում է Ջենովա:— Նրան կալանավորում են. նա փայլուն կերպով հերքում է մեղադրանքը:— Նա ժամանում է Փարիզ, որտեղ նրան պաշտոնանկ են անում:— Նա խիստ կարիքի մեջ է:— Մի կնոջ նոթերը Նապոլեոնի մասին:— Մեկ այլ կնոջ նոթերը: — Նապոլեոնի հարաբերությունները պ-ն դը Պոնտեկուլանի հետ:— Ընդհանուր նկատառումներ Ֆրանսիայի դրության մասին:— III տարվա պրերիալի 1-ը (1795 թ. մայիսի 20):— Ափնանում Քիբերոնում:— III տարվա սանձանադրությունը:— Նովային նակատամարտ Ռիսսանի մոտ:— IV տարվա վանդեմիերի 13 (1795 թ. հոկտեմբերի 5) 257
Գլուխ IV— Նապոլեոնը, Նիցցա ժամանելով, 1796 թվականի մարտի 27-ին ընդունում է Իտալական բանակի հրամանատարությունը:— Այդ բանակի ծայրահեղ աղքատությունը:— Նապոլեոնը Ջենովայի սենատից պահանջում է փոխհատուցել ֆրանսիական հետախուզանավի զավթումը:— Դելինի փոխարեն Իտալիայում գործող ավստրիական բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում Բոլիեն:— Կամպանիան սկսվում է 1796 թվականի ապրիլի 10-ին:— Մոնտենոտտե:— Միլլեզիմա:— Դեզո:— Սան-Միկել:— Մոնդովի:— Ձիհադադար Քերասկոյում 293
Գլուխ V— Դատողություններ Գերմանիայում գործող ֆրանսիական զորքերի վիճակի և գործողությունների մասին 1796 թվականին:— Պիշեգրյու:— Մորո:— Ժուրդան 301
Գլուխ VI— Լոդիի կամրջի անցումը 303
Գլուխ VII— Իտալական բանակի ադետալի վիճակը:— Նապոլեոնի՝ 1796 թվականի մայիսի 14-ի համակը Դիրեկտորիային:— Միլան, Լոմբարդիա, բնակիչների բարքերը և նրանց վերաբերմունքը ֆրանսիացիների նկատմամբ:— Ապստամբություն Պավիայում:— Բոնապարտը հեռանում է Միլանից մայիսի 24-ին:— Մայիսի 30-ին ֆրանսիական բանակն անցնում է Միջնոն:— Բոլիեն նահանջում է Ադիջեի մյուս ափը 308
Գլուխ VIII— Խորհրդածություններ Իտալիայում գործող ֆրանսիական բանակի բարոյական վիճակի մասին:— Վենետիկը, նրա բարքերը, նրա կառավարությունը:— Մասսենան Վերոնա է մտնում 1796 թ. հունիսի 3-ին:— Գեներալ Սերյուրիեին հանձնարարված է Մանտուայի պաշարումը 329
Գլուխ IX— Բոնապարտը Բոլոնիա է մտնում 1796 թվականի հունիսի 19-ին:— Ձիհադադարի կնքում Ֆայենցայում հունիսի 24-ին:— Անկոնայի և Լիվոռնոյի գրավումը:— Հուլիսի 1-ին Բոնապարտը Ֆլորենցիայում այցելում է Տոսկանայի մեծ դքսին: . . . 334
Գլուխ X— Գարդա լճի և նրա շրջակայքի նկարագրությունը:— Ֆրանսիական զինվորների կենսուրախությունը:— Նապոլեոնի ռազմական հանճարը զարգանում և աճում է ամենավտանգավոր հանգամանքներում: Վուրմզերի փոխարեն Իտալիայում գործող ավստրիական զորքերի գլխավոր հրամանատար է նշանակվում Բոլիեն:— Նապոլեոնն ստիպված է հանել Մանտուայի պաշարումը:— Տիկին Բոնապարտը ինչ է մտնում, որ գերվի ավստրիացիների կողմից:— Հանկարծակի հարձակում Լոնատոյի մոտ:— Կաստիլիոնեի նակատամարտը . . 337
Գլուխ XI— Ռովերեդոյի նակատամարտը 350
Գլուխ XII— Ռազմական արվեստի մասին 352
Գլուխ XIII— Մոդենայի գրավումը ֆրանսիացիների կողմից:— Բոլոնիան և Ֆերրարան կազմում են Ցիսպադանյան երկու հանրապետություններից մեկը, Ռեջիոն՝ մյուսը:— Բոնապարտի գործողությունը Սան-Ջորջոյի նակատամարտից մինչև Կալդիերոյի գրոհը:— Գեներալ Ջենտիլին ափ է իջնում Կորսիկայում 1796 թվականի հոկտեմբերի 19-ին: 358
Գլուխ XIV— Բոնապարտի դժվարությունները զանձագողերի պատճառով, որոնք Իտալական բանակում գրավում էին վարչական պաշտոնների մեծ մասը:— Դիրեկտորիան գեներալ Կլարկին ուղարկում է գլխավոր շտաբ, որպեսզի հետևի Նապոլեոնի գործողություններին: . 364
Գլուխ XV— Արկոլեի նակատամարտը: 368
Գլուխ XVI— Գեներալներ Բերտիեի, Մասսենայի, Օժերոյի, Սերյուրիեի բնութագրերը 377
Գլուխ XVII— Նապոլեոնի վերադարձը Միլան 1796 թվականի սեպտեմբերի 19-ին:— Նրա խոր ատելությունը մատակարարների նկատմամբ . 381
Գլուխ XVIII— Գեներալ Բոնապարտի նամակները Դիրեկտորիային . 385
Գլուխ XIX— Արկոլեից մինչև Ռիվոլի (1796 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 1797 թվականի հունվարի 14-ը):— Ֆրանսիայի քաղաքական կացությունը, տարբեր կուսակցությունների գործելակերպը, Դիրեկտորիայի անհարակությունը:— Արկոլեի նակատամարտի պատճառով Վիեննայում առաջացած սարսափը. Ավստրիան հերդնում է բոլոր ջանքերը, որպեսզի բույլցնի այդ նակատամարտի հետևանքները:— Ենթադրում են, որ Նապոլեոնին ուժասպառ է անում ինչ-որ բույնի ներգործությունը, չնայած ուժեղ տանջանքներին, նրա եռանդը գնալով աճում է:— Նրա հիվանդության ծագումը 387
Գլուխ XX— Հեղափոխական խմորումներ Վենետիկի հանրապետության մայրցամաքային մարզերում:— Ռիվոլիի նակատամարտը:— Ֆավորիտի նակատամարտը: 393
Գլուխ XXI— Ֆրանսիացի երիտասարդ նկարիչ Բիոջին. նրա բնավորության պարզությունն ու վեհանձնությունը 404
Գլուխ XXII— Նապոլեոնի կյանքի հերոսական ժամանակաշրջանի վախճանը 412
Գլուխ XXIII— Յակոբինյանները և Ֆուշեն 414
Գլուխ XXIV— Նապոլեոնի անկումը:— Բերտիե:— Կոմս Դարյու . 417
Պատմագրական տեղեկանք 421
Հավելված 426
Ծանոթագրություններ 432

ՍՏԵՆԴԱԼ

ՆԱՊՈԼԵՈՆ

СТЕНДАЛЬ

НАПОЛЕОН

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван—1985

Խմբագիր՝ Հ. Հ. Ենլեֆյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Ե. Բեկոյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ռ. Կարապետյան

ИБ 4043

Հանձնված է շարվածքի 25. 02. 1985 թ.։
Ստորագրված է տպագրության 11. 06. 1985 թ.։
Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ տպագրական № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 26,04 պայմ. տպագր., հրատ. 24,15 մամուլ+12 ներդիր։
Պատվեր 568։ Տպաքանակ 50000։ Գինը՝ 2 ռ. 40 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.